ՈՒՂՂԱԿԻ ԴԱՎՈՅԱՆ

Հանելուկ է հավերժական
Կամ առեղծված անթերի —
Մարդը խավար մի զանգված է,
Բայց նման է կանգեղի —
Տրորվում է իր մթի մեջ,
Սակայն լույս է չառաջում
Ուստանում է մութն անընդհատ
Լույսը — ավա՜ղ — բարակում։





ԱԶԱՄԻԿ ԱՎԱՅԱՆ

ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐ

ԵՐԵՎԱՆ
«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
1987

ԳՄԴ. 84 Հ7—5
Դ 246

Ն ԽՍՀ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄ

156158

Դավոյան, Ռ. Ն.
Դ 246 *Ընտիր երկեր։ [Բանաստեղծություններ] /Ռազմիկ Դավոյան.— Եր.։ Սովետ. գրող, 1987.— 608 էջ։*

Հատորն ամփոփում է բանաստեղծ Ռազմիկ Դավոյանի ավելի քան քսանհինգ տարում գրած լավագույն բանաստեղծություններն ու պոեմները, որոնցից շատերը տարբեր ժամանակներում արժանացել են մրցանակների։

Հատորն ամբողջական պատկերացում է տալիս բանաստեղծի գրական վաստակի մասին։

Դ $\frac{4702080200\ (60)}{765\ (01)\ 87}$ 16 87 «S» Հ7—5

© «Սովետական գրող» հրատարակչություն, ձևավորման համար, 1987

Կեղեվը բաց արա

◆

Բաց քո կեղևը, ծա՛ռ,
Ա՛ռ ինձ կեղևիդ մեջ...

•

Անցան օրեր մեկ-մեկ,
Անցան օրեր զույգ-զույգ,
Ճաշակեցինք և սեր,
Եվ տառապանք, և սուգ։

Հոգնեցրին ինձ արդեն
Օրերը լայն ու նեղ,
Հոգնեցրին ինձ արդեն
Մեղավոր ու անմեղ,
Հոգնեցրին ինձ արդեն
Տխրությունն այս ցանցառ,
Եվ կարոտներն այս խեղճ,
Դե բա՛ց կեղևդ, ծա՛ռ,
Ա՛ռ ինձ կեղևիդ մեջ։

Ա՛ռ ինձ կեղևիդ մեջ.—
Այս անծաղիկ դարում
Ես կձուլվեմ քեզ հետ՝
Որպես փոքրիկ գարուն։

Որպես թաքուն թախիծ,
Տերևներիդ խորքում
Ես կփայլեմ տխուր
Ու կմտնեմ խոր քուն։

Ու հողմերը թե գան՝
Ինձ խլեն քո ձեռքից,
Ես կարթնանամ, ծա՛ռ իմ,
Կրորոտանք մեկից։

Ես կձգվեմ քեզ հետ,
Ես կճկվեմ քեզ հետ
Ու հողմերի ձեռքից
Ես կփրկվեմ քեզ հետ։

Ու մի թաքուն գիշեր,
Երբ բոլորը քնեն,
Ես քեզ կախարդական
Բառեր կրկրկնեմ.

Կերթանք կամաց-կամաց,
Կելնենք թաքուն-թաքուն,
Ու քնի մեջ նրան
Կդարձընենք անքուն։

Նրա երազի մեջ
Կախարդական մի ծառ

Մարդկային ձև կառնի,
Կշնկշնկա կամաց
Եվ մարդկային լեզվով,
Որպես լեգենդ պայծառ,
Կբարբառի նրան
Անհո՜ւն, կորած մի սեր
Եվ մի կարոտ անծայր։

Հետո կամաց-կամաց,
Ցավով մեր շողշողուն,
Որպես կորած տեսիլք,
Մենք կթաղվենք հողում։

Երեկ տխուր, այսօր ուրախ,
Ալիքի պես ծափ եմ տալիս,
Երեկ՝ դեպի անհայտություն,
Այսօր դեպի ափ եմ գալիս։

Լուռ ժպտում եմ փոքր ու մեծին
Կամ ծիծաղում խենթի նման,
Ինձ բաշխում եմ ավազներին
Անապատի գետի նման։

Ինձ բաշխում եմ անմնացորդ,
Իմ ժպիտներն ո՞ւր են տանում,—
Ծիծաղիս մեջ ամեն անցորդ
Հոգնած հոգին է լվանում։

Վաղը երբ որ մշուշ լինի,
Եվ արցունքներ ծնվեն ցավից,
Գուցե մեկը փոքրիկ մի կայծ
Ետ բերի ինձ իմ ծիծաղից։

ԻՄ ՇՈՒՌ ԵՐԳԵՐԸ

Ինձ ասում են հաճախ, թե ծուռ են իմ երգերը,
Միևնույն լռությունը, նույն թախիծը հաճախ
Կոտրատվում են ջարդված իմ տողերի
Թանձր գունախաղում։

Ծո՛ւռ են իմ երգերը,—
Ծուռ են, որովհետև նրանք աճում են քարերի մեջ
Եվ քարերի բույրն են
Տխուր մեր աչքերի անապատին մաղում։

Ոմանք բութ քարերով ծռել են իմ երգերը,
Ոմանք բութ հայացքով
Իմ գույները դարձրել են փոշի,
Ոմանք երգս են թաղում,
Ոմանք՝ աճյունները ջարդված իմ տողերի,
Ոմանք թաղածներն են կրկին թաղում։

Փոսկ ես.— Սասնա ծուռ եմ.—
Իմ զորավոր ձայնից դատարկվել է ժայռը,
Ես մտել եմ այնտեղ
Եվ պատմության քարե երկանքների վրա
Համբերության ոսկե հատիկներն եմ աղում։

ՆԱՐԵԿԱՑՈՒՑ ՀԵՏՈ

Ծառից տերևը ներքև ծուրուրաց,
Ինչպես վրձինից երանգը կաթեր,
Եվ մայթի վրա նկարեց տերև։

Քամին բիբերիս վրայով սուրաց,
Իսկ արևն ելավ ու լճի խորքում
Նկարեց սառը աշունքվա արև։

Ես լճի ափին վանք նկարեցի,
Վանքի մի խցում՝ թափթփված երգեր,
Թելն էլ զանգակի լեզվակը բռնեց,
Որ զանգի. «ծրլը՛նգ»,— աշուն է եկել։

◆

Արևն անջատեց ծառից
Նրա ստվերը,
Էությունը նրա,
Ու խփեց մայթին,
Որ կապույտ էր մի քիչ ու սև էր։
Իսկ ծառը նայեց խոնարհ
Ու զարմացած.
Նա ինքն իրեն այդպես
Երբևէ տեսե՞լ էր։

◆

Փողոցը նրա համար է,
Որ անցնեն տրամվայները՝
Իրենց կմախքացած կոնքերն օրորելով,
Եվ մեքենաներն անցնեն, իհարկե,
Երբեմն էլ մարդկանց տրորելով։

◆

Քամին գլորում է պահածոյի տուփը
Փողոցն ի վեր, ի վար.
Զրրը՜նգ, զրրը՜նգ, զրրը՜նգ...
— Աշխա՜րհ, քո մեջ ի՞նչ կա, բացել եմ քո խուփը,—
Կրկնում է անվերջ կյանքը ժխտող քամին
Եվ սուլելով տանում.
Աղբակույտի մեջ է նետում տուփը։

◆

Ձեր կուրծքը ցավում է, մայթեր։
Ձեր խեղճ կողերը փշրված են
ու կարկատված նորից,
Եվ ձեր սիրտը, որ խորն է թաքնված,
Հառաչում է միշտ այդ անհայտ խորից։
Եվ ձեր կուրծքը շատ ցավում է,
մայթեր,
Ես այդ զգում եմ իմ... ոտքերից։

◆

Ստվերներ է քշում քամին դեպի քաղաք.
Հետո ինքն իրենով գլորվելով գալիս,
Բերում է մի ծուղրուղու,
Որ կանչել է գյուղում մի աքաղաղ,
Բերում ու փշրում է ականջիս տակ
Որպես խաղված, խզված
Ու հին ձայնապնակ։

ԵՐԿԻՐ

Այս գիշեր ես լուռ պառկել եմ հողին
Եվ ունկնդրում եմ բաբախյունը քո հարաբախ սրտիս։
Այն, ինչ լսում եմ՝ նման է ստի,
Բայց հավանական մի սուտ, որի մեջ
Անգամ իմ սրտի հարվածները կան։

◆

Կա աշխարհում բանձրիկ մի Հայաստան աշխարհ,
Որն իր լաջվարդ, լազուր լեռներն ունի,
Եվ իր դաշտերն ունի— ասես նշխար։
Երկիրն այս հին է,
Նաև լեռնապատ,
Առասպելապատ,
Առասպելներ, որ իրար պահող են
Կամ իրարամերժ։
Կա աշխարհում բանձրիկ մի Հայաստան աշխարհ։
Եվ կլինի հավերժ։

◆

Երեկ հանդիպել եմ
Բանաստեղծ իմ ընկերոջը
Եվ նրա սիրելի, նրբիրան քրոջը։
Եղբայրը ասում էր, որ դատարկ ես դու, աշխարհ,
Եվ քո փորի մեջ են խրված քո ոտները,
Իսկ քույրը կրկնում էր, թե գիժ է եղբայրը,
Ինչպես բոլոր-բոլոր պոետները։

◆

Երկինքը սփրթնել է։
Ու հողը ճաքել է ցրտից։
Այս աշունը աշուն է և հին է բյուրապատիկ,
Այս աշունը աշուն է իր նոր օրորներով։
Ես քայլում եմ հանդարտ, հատիկ-հատիկ՝
Սև մայթերի դեղին ժպիտը տրորելով։

ԶՎԱՐԹՆՈՑ

Ինչպես բոլոր լավերն այս աշխարհում,
Քեզ էլ տառապանքով ստեղծեցին,
Հետո լցրին խունկով, բույրով արևարյուն,
Հետո լցրին լույսով արեգնածին։
Հետո ավերեցին չստեղծողներն օտար։
Միշտ էլ կատակում է փիլիսոփա կյանքը...
Ուրիշների համար՝ դու պատմության վթար,
Իսկ ինձ համար... մնաց միայն տառապանքը։

◆

Զվարթնոցն է նորից, ավերակներ,
Եվ աշուն է նորից, խորին աշուն,
Նույն պահակն է նորից, նրա կողքին՝
Դեղին մի շուն։
Տերևները նորից թափառում են
Դատարկ հնձաններում,

Եվ հին մի ռոմանս երգում կտրատելով.
«Օ, կյանք, այս ի՞նչ ես դու...
Ներո՜ւմ... ներո՜ւմ... ներո՜ւմ...»։

◆

Քամին՝ մելանխոլիկ ջութակահար,
Քամին՝ դեղնաշշուկ, քամին՝ նարինջ,
Ամեն վայրկյան այստեղ՝ Զվարթնոցում,
Եվ ավերիչ է, և արարիչ։
Ավերում է դեղին շիրմաթմբեր,
Ստեղծում է նորը հեռվում մի քիչ,
Քամին՝ սարսա՜փ-սարսո՜ւռ, քամին՝ թմբի՜ր,
Քամին՝ նարի՜նջ-նարի՜նջ...

◆

Դեղին տերևներն հավաքել քամին,
Խորանն է լցրել տաճարի,
Հետո սուլում է մենավորի պես,
Մենավորի պես ինքն իրեն ասում,
Թե հիմա կրա՜կ, կրա՜կ կճարի,
Կրակ կվառի ու կտաքանա...

Արևն իջել է և կիսակործան խորանի խորքում
Այն հին, հեթանոս հուրն է բորբոքում։

◆

Երկու փոքրիկ շնիկներ,
Մի արու, մի էգ,
Լուսին էին գլորում
Տանիքներով թեք։

Խաղում էին իրար հետ
Մի տիրոջ բակում,
Իրար հետ նույն ամանից
Ջուր էին լակում։

Մի օր եկավ մի ծանոթ
Ու տարավ էգին.—
Պատեց վիշտը անամոք
Արու շնիկին։

Նա թափառում էր, լալիս,
Փնտրում էր էգին,
Էգը քնել էր հանգիստ
Նոր տիրոջ շեմքին։

ԱՄԱՌ

Երանի օձիք ունենայի,
որ պատռեի հիմա—
Իսկ իմ հագին միայն իմ բրոնզագույն մաշկն է։
Նրանից ազատվելը անհնար է կարծեմ։

Թափթփված ձյունների նման
Ճերմակ սագերը ննջում են
սև ցանկապատների տակ
Եվ կարմիր— կտուցային տենդի մեջ
Երազում են
շո՜գ,
շո՜գ,
շո՜գ,
Ամառնային կրակ։

Դա ցանկապատից այն կողմ
վազող ջրի կարոտն է,
Որ նրանց չունեցած ուղեղը նեղում է
մոլորությամբ։

ԱՅՐՎԱԾ ՇՈՒՐԹԵՐ

Իմ շուրթերին երբեք չի հասնում
Ծխախոտիս պլպլուն կրակը.—

Իմ շուրթերն այրված են։

Նրանք հասկանում են արևի լռությունը,
Համբույրի կարոտը,

Եվ կարոտի լռության հանդեպ
Հրդեհվող իմ լռությունը։
Նրանք հասկանում են
Այս անձև,
Այս թանձր լռության բոցի մեջ
Իրենց ձևավոր, ներդաշնակ թրթռոցը։

Իմ շուրթերն այրված են։

◆

Մարդկային երթը օրորվում է ծույլ
Երկար, անսահման դարերի միջում.—
Ես աշխարհ եկա մենակ ու տխուր
Ու լուռ կանգնեցի շարասյան վերջում։

Անվերջ տառապած, ճմրթված ու հին,
Անթիվ ձեռքերում քրքրված արդեն՝
Ինձ փոխանցեցին ծիծաղի մի լաթ,
Որ տխրությունից իմ հոգին սրբեմ։

◆

Օրերն ընկնում են ձյունների պես՝
Ճերմակ ու կապույտ մշուշ հագած,
Ընկնում են անդարձ, անդառնալի,
Ու մեղմիկ սարսուռ-ծլնգոցով
Փչում է օրերի սառը քամին՝
Սառցակալում են օրերն ընկած։

Թեթև թեքվում է մեջքը թեթև,
Ու սայթաքուն է քայլքը, դառնում
Անխուսափելի անկումի հետ,
Ինչպես մանուկների աղաղակներ՝
Քամին հուշերի ձայնն է խառնում։

Ճամփան դառնում է անմեկնելի,
Անհորիզոն ու անծայր, անվերջ.—
Ծակվում է մի տեղ սառցե երկիրը,
Ու մարդն ընկնում է հավերժի մեջ։

Քամին ծառերի չորցած կողերից
Բվվոց է հանում,
Բուքն անտառների մռունչն է փռում
Մայթերի վրա,
Եվ անապատան մի տխրություն կա,
Որ կծկվում է օձիքների մեջ.—

Հավիտենության կանչը լսելիս
Քանդվում է հոգին,
Եվ թվում է ինձ,
Թե մեր մարմինը ոչ թե հողից է,
Այլ՝ արցունքներից։

Անսահման անուշ քնքշություններով
Երկնքի ճերմակ հողերը թափվում
Եվ հողագնդի խոր փոսերի մեջ

Թաղում են փոքրիկ տնակները մեր։
Թաղում են ճերմակ պատարագների
Եկեղեցական մի փոքրիկ ծեսով,

Իսկ մենք ժպտում ենք,
Միշտ էլ ժպտում ենք
Զյան տաքությունով ապրելու հույսով։

◆

Զյուներն սպիտակ շրթունքների պես
Իջան ինձ վրա,
Ծածկեցին մարմնիս վերքերը բոլոր,
Եվ ինձ պատմեցին աստղերի մասին
Եվ կրկնում էին, թե աստղեր չկան,
Իսկ ես մոլորված հիանում էի
Մութի մեջ հանգչող
Նրանց սպիտակ թրթռումներով։
Նրանք ինձ ասին, թե աստղեր չկան
Եվ լալիս էին տաք համբույրներում
Եվ կրկնում էին, թե աստղեր չկան,
Նրանց մորմոքը չէի հասկանում։

Եվ նրանք ասին, թե մահ էլ չկա,
Մեռնում ես, կրկին հարություն առնում,
Ես հավատացի, և մի պահ միայն
Անգոյությանը տվեցի կյանքս
Եվ այլևս ետ չվերստացա։

... ՈՒ ՎԵՐԱԴԱՐՁ

Մեծ կամուրջների ուսերին դրված
Փողոցների սև ու սառած դիեր։
Սյունաշարքերի տխուր պատարագ։
Եվ դիակների երկու կողմերում

Վառվող մոմերի շշուկն եմ լսում,
Ես՝ մենավորիկ կեսգիշերային մի հուղարկավոր,
Ես քարշ եմ տալիս փողոցների դին
Թռչող շենքերի լաբիրինթոսում։

◆

Արդեն հիշելն իսկ դժվար է
Ձեր Պեգասին, հույնե՛ր,
Քանզի նա այսօրվա մեր թռիչքը չուներ,
Մեր սլացքը չուներ,
Լոկ իր սլացքի մեջ մեր հիացմունքն ուներ։
Բայց և...
Անհնար է մոռանալը
Ձեր Պեգասին, հույնե՛ր։

◆

Տիեզերական մեր մեծ թռիչքներում
Կա խինդ համապարփակ,
տիեզերական,
Եվ կա հաղթանակի հաճույք
չվայելած,
Եվ ժամանակ՝ ընդդեմ ժամանակի
ելած։
Եվ մտածում եմ միշտ,
Թե գուցե կա նաև
Տիեզերական վիշտ։

◆

Արևամուտը...
Ինքը՝ արևն է, արդեն քրքրված։

Ես խոնարհվել եմ ստվերիս վրա։
Այս իմ ստվերը
Ասես ածխացած իմ «ես»-ի՝
Իմ առջև դրված։

◆

Ոչ աստղեր, ոչ լուսին երկնքում,
Ներքևում խշշոցն է զայրագին,
Իմ կողքին աղջիկը իմ սիրած
Վարսերը նետել է իմ դեմքին։
Եվ ինչ-որ երազկոտ հոգիներ
Նետվում են ծովի մեջ, որ նավեն,
Իսկ ջարդվող ալիքներն ափերին
Դառնում են մետաքսե ժապավեն։

◆

Ապրում ենք իրար հետ, ապրում ենք,
Դու՝ քո խոհերով, ես՝ իմ,
Գգվում ենք, իրար հետ համբուրվում ենք,
Սիրո՞ւմ ենք իրար, ասի՞մ...
Լուսինը արծա՞թ է, ոսկի՞ է,
Թե՞ պլատին է ամենաթանկ,
Կարևորն այն է, որ լուսին է,
Եվ չի մեռնելու անհիշատակ։

◆

Դու ինձ գրկեցիր ամուր և ամուր,
Ինչ-որ կյանք առան երազը, սուտը,
Մեր միջև մութը ճմլվեց, ճչաց,
Եվ աչքերիս դեմ փշրվեց մութը։
Փշրվեց, ընկավ մեր ոտքերի դեմ,
Իսկ մենք նայեցինք համր ու զարմացած,
Թե ինչպես այդքան աստղեր, երազներ
Երկնքից հանկարծ շառաչել են ցած։

◆

Կապույտ լուսինը դարձավ շողարձակ,
Եվ գիլ ու գլոր, և գիլ ու գլոր.
— Գլորվեց, ընկավ գիրկդ համարձակ։

Մարմարեղենը համբուրեց կուրծքդ
Եվ դողաց ինքը, և դու դողացիր.
— Ես ապրում էի մի սառը ձանձիր։

Ծառերից պոկված ստվերները սև
Զգվեցին գայթող վեղարների պես.
— Ես տամուկ ձեռքս երկարեցի քեզ։

Ապա ոտքերս քայլեցին անխոս,
Մութն ալիք-ալիք առջևս էր հոսում,
Եվ ծուլագնա «զրրը՞նգ» հա «զրրը՞նգ».
— Գիշերապահի երգն էր աղերսում։

◆

Ես կանգնած էի, դու գնում էիր.
Եվ աչքերս էին լուռ խոնավանում,
Եվ իմ բիբերը՝ սևությամբ փայլող,
Արցունքով թրջվում,
Ավելի էին արդեն սևանում։

Քամին՝ քո չքնաղ համբույրը շրթին,
Ծիծաղում էր ու շուրջս թևածում,
Իսկ թարթիչներս բիբերիս վրա
Արցունքն կապույտ քող էին գործում։

◆

Ճերմակ գիշերներ, բարի գիշերներ,
Գիշերներ վշտի, կարոտի, լացի,
Իսկապես մի քիչ անէ ու անգո,
Իսկապես լրիվ, լրիվ կանացի։
Իսկապես. դուք ի՞նչ պիտի լինեիք
Առանց աղջկա, առանց սիրածի։

◆

Շուշանը նստել է պատուհանում
Կուրծքը կիսաբաց
Ու նայում է ցած։
Ես կանգնել եմ ներքևում, մայթին,
Վերև եմ նայում հիացած։
Ու մտածում եմ. ինչ չքնաղ ես, Շուշան,
Քո իրանով թեթև, քո կրծքով կիսաբաց՝
Երկնքին ու հողին միացած։

◆

Հազար երանի և հազար ափսոս
Այս խրախճանքին ու վայելումին,
Այս ափսոսանքին,
Նրա չերկարող հավերժությանը,—
Հազար երանի և հազար ափսոս։

◆

Գիշերը խորանում է։
Տերևների վրա ծանրանում են ցողի կաթիլները
Եվ աչքերիցս գլորվում են ցած։

◆

Ուռած, արցունքաթաց կոպեր՝
Վարագույրներ ծանր,
Որ իջնում եք հլու,
Որ իջնում եք ինչ-որ ճշմարտության
Հրապույրը մենակ վայելելու։

◆

Պառկած եմ ահա,
Եվ հրապույրդ ըմպում եմ անհագ.
Եվ կրծքիս վրա կռացել ես դու
Այն խորհրդավոր զգացմունքի պես,
Որ ունենում եմ մենակ ժամանակ։

◆

Ինչ-որ բամբասանք են գտել
Եվ գլորում են իրար
Այս գիշեր հովերը,—
Աչքերդ հառել ես վրաս,
Եվ լուսնի վրա
Տեսնում եմ ես իմ ստվերը։

◆

Եվ անցնում է այսպես պահը, ժամանակը։
Մարում է լուսինը։
Ձեռքերս դողում են քո թույլ հպումի զորությունից,
Մշուշոտ տենդի մեջ վառվում են աչքերդ,
Ինչպես իր ծխով քողարկված կրակը։

◆

Սրնգահար լուսնի կապույտ սրնգահար,
Դե լուսինը վայր բեր իմ ծնկներին,
Դու նվագիր հանդարտ ու տրտմասույզ.—
Ես մատներս խառնեմ լուսնի վարսերի մեջ,
Այնքան, մինչև ձուլվեն ու դառնան լույս։

◆

Ես չէի կարող չհաշտվել արդեն
Խաբեությանդ,
Եվ խաղաղ եմ կարծես, արդեն խաղաղ։
Ինչ-որ մեկը ծուլորեն ծամում է մի երգ
Ու գիշերը դարձնում միապաղաղ։

◆

Տերևը ընկնում է։
Լուսինը հեռանում է ձանձրույթով։
Եվ մարում են արդեն իմ ուժերը։

Ինձ կորցնելը հեշտ է քեզ համար,
Միայն թե... չկորցնես այս գիշերը։

◆

«Աշունը տխուր լալիս է դրսում».
Սովորական խոսք, սովորական երգ։
— «Ծառերը մահվան շնչից են մրսում».
Հնացած թախիծ ու հնացած վերք։
— «Աղջիկը մերժեց, որ նորը ճարի».
Գերագույն ցավեր, հնացած երազ—
Հնի պես գալիս, աշնան հանճարի
Մռայլ թախիծը իջնում է վրաս։

◆

Օրերս անցան իրար ետևից
Կամ իրար հեծած,
Ես, որ իշխողն եմ նրանց ընթացքի,
Գլորվեցի ցած։

... Ի՜նչ տխուր է այս պատմությունը հին
Եվ ինչ խորազդու.
Բոլորն իմացան, որ սիրում եմ քեզ,
Չիմացար լոկ դու։

◆

Փակում եմ աչքերս,
Փակում եմ շուրթերս,
Եվ փակում եմ ինձ ինքս իմ մեջ,
Որ ներսում պահեմ կարոտ ու հառաչ։
Դու հպվում ես ինձ,
Եվ բոլոր փակերս դողում են
Շոյանքիդ զորության առաջ։

ԻՄ ԱՉՔԵՐԸ

Նախապես դուք իմ աչքերը չէիք,
Ուրիշինն էիք,
Դուք աչքեր չէիք,
Դուք նման էիք դեմքը զարդարող
Երկու մեծ խալի։
Դուք իմ աչքերը դառնալու համար
Տառապել եք շատ,
Եվ իմ աչքերը մնալու համար
Տառապեք էլի։

◆

Իմ կապույտ արցունքները
Կախվում են իմ սև բիբերից,
Որպես դժվար ծնվող պտուղն իմ աչքերի։
Կախվում են, ինչպես հոգսը,
Եվ ինչպես թեթևացումն հոգսի,
Եվ աչքերիս լույսն է արդեն շաղվում.—
Իմ կապույտ արցունքները իմ սև բիբերից
Կախվում են առանց հենարան,
Ինչպես որ լույսն է լույսից կախվում։

◆

Ծանր են իմ աչքերը,
Երկրագնդի նման ծանր ու հին,
Երկրագնդի նման հոգնած,
Երկրագնդի նման լքված,
Եվ ծանր են, ինչպես
Կարոտի կանչն ամենահին։

◆

Երբ տխրում եմ ես,
Կոպերս դառնում են թավշե,
Աչքերս դառնում են թավշե,
Եվ ձայնս դառնում է թավշե,
Ու թավիշ արցունք է կաթում
Օրերիս տխրության վրա։

◆

Աշնանային օրը
Շուրթերի պես թախծից ճեղք է տալիս
Տանիքների վրա։
Ի՞նչ կարոտ կա, աստված,
Օդը անհագորեն ճմռող ձեռքերի մեջ,
— Չէ՞ որ տերևները... գուցե զո՞ւր են մեռնում։

ԵՍ ՏԵՍԱ

Դրար վրա դարսված մի քանի գիրք,
Վրան լուցկու՝
տարիներով դատարկ մի տուփ,
Կողքին՝
գլուխը թեք մի լուսամփոփ—

Եվ մի անսեռ կապիկ,
Որ այդ գրքերի, լուցկու, լուսամփոփի
բարձրությունից
Պարանոցը դեպի ետ ծռած,
Վայրենի ծիծաղով քրքջում է
Իմ անցյալի
Եվ Իր ներկայի վրա։

◆

Ծառերի դեղին խշշոցը
Թափվում է մայթերին
Մարգարտահատիկ անձրևի պես,
Եվ քամին քշում է,
Տանում այդ խշշոցը՝
Մանրատված ու ձիգ,
Ինչպես մարդկային խոհերը՝
Հնացած, բայց գեղեցիկ։

◆

Կան մարդիկ, որ զորեղ են
Ու չարության հանդեպ՝ անքեն։—
Իմ շուն, դու մի կծիր
Օտար շնիկներին,
Նրանք մոռացված երգերի
Թափառող արձագանք են։

◆

Մարդու հոգում կյանքը
Իր կնիքն է դնում։
Ես այս երկրի վրա
Ծիծաղեցի,
Դեպի լուսին արձագանքի ետևից եմ գնում։

◆

Եվ գետն իր պատրանքը թրթռուն
Տանում էր խավարում թաղելու—
Եվ քամին գույնզգույն շշուկներ
Տանում էր ձորերում կախելու,—
Մի խեղդվող ճիչերի ծաղկեփունջ,
Մի խեղդված կարոտի սկահակ—
Արցունքս նետեցի ամպերին՝
Ջորացած շուրթերիս շաղելու։

◆

Ցուրտ էր կյանքը, ցուրտ էր ու պաղ,
Չկար ոչինչ երգի համար,
Կար լոկ ցավի, կարոտների,
Տանջանքների մի տոթ ամառ։

Ցուրտ էր կյանքը, ցուրտ էր ու պաղ,
Ամառվա մեջ՝ ձմռան մի օր,
Որ զնգզնգում էր թախծալի
Աշունների ստվերներով։

Ցուրտ էր կյանքը, ցուրտ էր ու պաղ.—
Կար լոկ մի դեմք մարդահալած՝
Երազների վրա անթաղ,
Կարոտների վրա մեռած։

◆

Ինձ մի թաքցրեք հովհարների տակ,
Մի հայտնաբերեք ինձ կրկեսներում.
Գինետների գաղջ մշուշի մեջ
Գգվանքի փայլ եմ ես ձեր աչքերում։

Մի ձեռք ինձ անհայտ, մութ ոլորտներից
Անդուլ թմրության խարույկ է բերում.—
Նա ինձ թաքցրեց հովհարների տակ
Եվ հայտնաբերեց ինձ կրկեսներում։

ԱՇՈՒՆ

Աշո՛ւն, ինչո՞ւ եկար
Իմ քնքշության պահին...
Այգին թափո՛ւր-թափո՛ւր,
Այգին՝ աշնանային։
Այգին տխրեց այնպես,
Տխրեց լոկ մի օրում,
Ու տերևներն անտես,
Տխրություն են ծորում։
Աշունն ելավ հետո
Այգուց մտավ քաղաք,
Շրջեց ամեն մայթով,
Կպավ ամեն պատով,
Մինչև ննջեց խաղաղ
Ինչ-որ սրտում մի ծեր,
Ուր տարիներ առաջ
Իր հետքերն էր գծել։

◆

Ջրասույզ երկինք ու սուզված հուշեր.—
Այս գիշեր որտե՞ղ թաղենք մեր հոգսը,
Այս գիշեր թաղված հոգսերի կողքին
Մեր հոգսը որտե՞ղ թաղենք այս գիշեր։

Լճի երկինքը մաքուր աստղերի,
Անպաճույճ լուսնի մեհյան է կապույտ,
Լճի երկնքի անտառների մեջ

Մեր հոգնած, հոգնած երկինքը կախենք՝
Տրտմությամբ, սիրով,
Առավոտ կելնի արեգակն արդար
Եվ կպարուրի մեզ մեր հոգսերով։

ԵՂԵՐԵՐԳ

Ո՞ւր է այն թշվառ
Թռչունների չուն,
Որով իմ բախտն էր
Գուշակում գնչուն։
«— Նրանք գնացին՝
Սուր կտուցներով
Կտցահարելու
Ծառից կախվածին»։

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

Նա խուլ, համր, անձայն
Արարչության մեջ էր ապրում երկար.—
Ինչ-որ անհայտության, տարտամության խորքում
Լիքն էր միրաժներով,
Կարծես չկար
Եվ կար։
Եվ չգիտեր՝ ինչպե՞ս հավատա ինքն իրեն,
Զայնին,
Լռությանը,
Խոսքին,
Տագնապներին,
Հետո մի «Այբ» հանկարծ ճառագելով եկավ՝
Ադամանդե մի մեծ շղթա ձեռին։
Շղթան տեղ-տեղ հալվում, դառնում էր լույս,
Հետո ինչ-որ կիսատ և անորոշ բառեր.—
Նա տագնապում էր խիստ, հունցում էր այդ լույսը,
Զև էր տալիս, ոգի և դարձնում էր գրեր։

Հետո փաթաթում էր սիրով, խանդով, թախծով,
Այն բոլորով, ինչ որ Տերը իրեն տվեց,
Հետո հավատում էր ձայնին, խոսքին, ցավին,
Իր մեծ Լուսյանն ու Տագնապներին իր մեծ։

Խուլ դարերի միջով,
Ինքն իր ցավ ու վեճով,
Տառապելով գալիս, փռում է լույս՝
Այն ոգեղեն շղթան,
Ոսկեղենիկ շղթան,
Որից քաշքշում են ամեն ծուռ ու վայրի,
Որից քաշքշում են
Ամեն թուրք ու շեյթան,
Որից ոչ մի օղակ չի նետվում դուրս։

◆

Ծառը ծառ էր ծնվել,
Ապրում էր ծառ,
Լիքն էր ամառներո՞վ, աշուններո՞վ, սիրո՞վ.—
Դատարկ անկյունները լցված էին
Կապույտ ստվերներով ու երկնքով անծայր։

Բողբոջել էր ծառը,
Ուռել-բողբոջել էր,
Որ՝ ուր որ է, ահա, պիտի ճաք տա,
Պայթի
Ու դառնա երգ,
Քամին եկավ հանկարծ,
Քշեց երկինքները ծառի անկյուններից,
Հետո բողբոջները շոյեց մեկ-մեկ,
Հետո փսփսուքով համոզում էր ծառին,
Թե՝ դու ծառ ես ծնվել,
Խուլ ու համբր մի ծառ,
Թե՝ իզուր է,
Լավ չէ,

Մի դառնա երգ։
Ու ձեռքերը հենած խավարի թաց կողին,
Ծառը մի խուլ ճչաց,
Եվ առաջին հերթին
Դարձավ անհուն մի երգ՝
Հենց իր՝ քամու շրթին։

Քամիները բոլոր, քամիները բոլոր,
Ինձ թվում է թաքուն
Ամեն տարի մի օր,
Սուր-սուրալով, կամ թե
Փափուկ թավալգլոր,
Հավաքվում են մի տեղ
Քամիները բոլոր։
Եվ աշխարհի վրա, և աշխարհի վրա
Քարանում է հանկարծ
Հողը հազարամյա,
Ու քարերը քարե
Շնիկներ են դառնում,
Տիեզերքում մի մեծ
Լռություն է հառնում,
Ասես հողը մեկից
Երկինք է համբառնում։
Ուռուցիկ են դառնում
Եվ ծովերը բոլոր,
Օվկիանոսներն ամեն,
Որ խորքերից իրենց անհուն տագնապներիր
Մի ձայն, մի շշնջյուն,
Մի հառաչանք քամեն։
Եվ ուռուցիկ, կապույտ ջրերն իրենց վրա
Բարձրացնում են ճերմակ
Առագաստներ անթիվ,
Որոնք քամով լցված,
Ուռչում են անընդհատ

Ու լուռ քարանում են
Զսուրալու խանդից։
Եվ ուռուցիկ, թավշե շրթունքների վրա
Բառն ուռչում է՝ որպես
Բողբոջն ամենամեծ,
Եվ չի հիշում ոչ ոք,
Ոչ մեկը չի հիշում,
Թե ո՞վ իրենց այդպես
Համբույթյանը գամեց։

Եվ լարումի ցավից
Կտրատվելով անլուր,
Հանկարծ տիեզերքում Բանաստեղծն է ճչում,
Եվ սուրում են ծովում
Առագաստներ անթիվ,
Եվ պոկվում են շուրթից
Հնչյունները կպչուն,
Եվ լսվում է՝ ինչպես
Հողի ամեն հյուլե
Արձագանք է հնչուն։

Նա ճչում է այդպես
Եվ ինքն արդեն չկա,
Նա ցրվում է կյանքի
Աչքերի մեջ ագահ,
Եվ նա չի էլ լինի,
Չի հայտնվի, մինչև
Այդ մեծ, սարսափելի
Լռությունը չգա։

◆

Ամպերն իջել ահա ճերմակ կտուցներով
Նոր արթնացող հողի բույրերն են հոտոտում,
Փափուկ ծիծաղի պես ալի՜ք-ալի՜ք-ալի՜ք,
Օրորվում են դանդաղ Թարթառ գետի հովտում։

Ու դաշտն անիրական երազներ է ծնում,
Թե ուր որ է, ահա, քեզ կգրկի ծածուկ,
Կփաթթի մաքուր մշուշների քողով,
Բաց կարձակի բոլոր կարոտներդ անձուկ։

Նա կբացի ահա քո մարմինը փակված,
Եվ դուրս կգան բոլոր տագնապներդ թաքուն,
Եվ մենավոր մի ծառ, թեկուզ և գլխատված,
Կտեսնես, թե ինչպես, միայն հենց քեզ համար,
Իր նոր, անկոտրելի ճյուղն է ճառագայթում։

Եվ խաբկանքը ահա հալիլում է կամաց,
Մշուշն ինքը իրեն դաշտի ծայրն է հրում,
Թրթռում է դաշտը մերկ աղջկա նման
Եվ լուռ գալարվում է կանաչ սարսուռներում։

Եվ թվում է, ահա, արդեն քանի տարի
Դու ընկած ես այդտեղ, հենց այդ դաշտի եզրին
Որպես անպետք արոր կամ որպես հին գութան,
Եվ քո աչքի առջև
Արեգակը դանդաղ բացումն է կատարում
Իշխանական դիրքով մենավոր մերկ ծառի
Եվ նրա մե՜ծ, անհո՜ւն, անծա՜յր ողբերգության։

Ճակատագրի դառնության միջով
Ես մարդուս անհուն ցավին եմ նայում,
Մայրամուտի պես հրահալ եմ ես
Եվ մայրամուտի նման անկայուն։
Նայում եմ.— սիրտս կծկվում է ահից,
Ապա ցրվում է արահետներում,
Եվ նա, որ ձեռքս բռնել էր ամուր,
Ինձ իր տրտմության ծաղիկն է բերում,
Ասում է՝ նայիր շեկ բլուրներին,
Կիսված են նրանք, սիրտն է քրքրված,

Կիսել են, այո՛, սակայն չգիտեմ,
Չգիտեմ ինչու, հավատում եմ, որ
Ամեն կեսի մեջ մի սիրտ է դրված։
Չգիտեմ ինչու՝ հավատում եմ, որ
Երբ որ գետերի ջրերն են կիսում,
Գետը իր սիրտը չի կորցնում բնավ,
Ամեն մի կեսով մի սիրտ է հոսում։
Եվ եթե հողը դարեր ու դարեր
Եվ վայրագորեն մաս-մաս են անում,
Ինձ թվում է, թե ամեն մասի մեջ՝
Մնում է այնքան զորավոր մի սիրտ,
Որ նեղվում է իր փոքրիկ սահմանում։

Ճակատագրի դառնության միջով
Նայում եմ մարդու ցավերին անլուր.
Խեղճ մարդու կրծքում մի սիրտ է դրված
Եվ հազար կողմից բզկտվում է լուռ։
Եվ հազար ձևով մասնատվում անվերջ
Ցավը ցավով է նորոգվում դարձյալ,
Եվ մի հարվածով, մի բիրտ հարվածով
Անհետանում են ներկա ու անցյալ։
Անհետանում ու կրկին հողի մեջ
Գտնում են իրար թրթիռով, դողով.—

Մարդկանցով որքան որ հողն է ծածկված,
Այդքան էլ մարդիկ ծածկված են հողով։

Աշխարհը լիքն է կործանումներով,
Աշխարհը լիքն է տագնապով վայրի,
Մարդասիրության խենթ սամումներով
Մարդիկ քանդում են տունը աշխարհի։

Բառը, տանջանքից խուլ թպրտալով,
Արյունոտվում է շուրթերին իմ տաք,

Երբ որ տեսնում եմ՝ մագիլ է պահված
Իրար գուրգուրող աղավնիների
Փետուրների տակ։

Հիրավի, ե՞րբ է սկսվել անվերջ
Այս խառնությունը.
Մարդը իր ցավը ե՞րբ է ճանաչել.—
Տանջանքը գուցե ծնվեց այն պահի՞ն,
Երբ համբ շունը սովորեց հաչել։

Առաջին վիշտը աշխարհի վրա
Չէր կարող մենակ, ուզում էր ընկեր,
Նրա մեջ վշտի տենչանքն էր եռում,—
Վշտերի հոտը քշում ենք հիմի
Դեպի անանուն, անսահման հեռուն։

Եվ այդ վշտերի անսահման հոտին
Տե՛ր իմ, ի՞նչ տանջանք, Կայենն է հովիվ.—

Եվ կա մի վիշտ էլ, որ այդ Կայենին
Գիտենք Աբելի մահվան շնորհիվ։

Շոշափեմ ձեռքով և տեսնեմ աչք,
Որ իմ մեջ չկա արնադավ Կայեն,
Մոլեռանդորեն իջած ծնկաչոք՝
Պագանեմ երկիր, առ աստված— հայեմ։

Ապակու մեջ ահա ծառերն են օրորվում,
Ապակու մեջ երկինքն իր փեշերն է կախել,
Ապակու մեջ ես իմ պատկերին եմ նայում
Եվ չգիտեմ ինչու, ինձ թվում է՝ իմ մեջ
Աճեցրել են ինչ-որ անիրական վախեր։

Այն, ինչ բնությունը տվեց ինձ իր ոգուց,
Ապակու մեջ ահա իր փեշերն է կախել,
Այն, ինչ բնությունից գողացել են մարդիկ,
Նվաճել են իբրև՝ ազատությամբ մղված՝
Տարել են իմ միջից, իմ հոգուց են քաղել։

Եվ քանի որ լիքն է տիեզերքը համայն,
Բնության մեջ չկա տարածություն ազատ,
Ինչ որ գողացել են մարդիկ բնությունից՝
Տեղը կամ վախով են լցրել ու ձանձրույթով,
Կամ ամեն մի թանկ բան մնացել է կիսատ։

Փողոցներում ահա, ուր օդ չկա վաղուց,
Վախով շրջապատված ծառերն են օրորվում,
Ճնճղուկները փոքրիկ սարսափներ են կարծես,
Կիսատ կարոտների մորճիկներին նստած,
Անվերջ կորուստների տագնապն են հոլովում։

ՇՈՒՆԸ

Երբ որ մարդկությունը խաղաղ կեսգիշերին
Մայր էր մտել քնի գորգերի մեջ նախշուն,
Կատաղորե՜ն, երկա՜ր ու ձանձրալի հաչեց մի շուն,
Մի շուն, որ հաչոցում իր երկար ու չնչին
Բոլորովին չուներ երկրաշարժի տագնապ,
Ողբերգություն, մի ցավ կամ կործանում վերջին...

Նա ուղղակի այդպես հաչում էր մերթ հոգնած,
Ու մեկ-մեկ էլ թեթև կամ պաթետիկ շեշտով...
Հետո կամաց-կամաց ուրիշ թաղի շներ
Միացան այդ որբին
Նախ՝ առանձին, հետո՝ դասակով ու վաշտով։

Մոլեգնորեն այդպես նա հաչում էր երկար,
Որ իր հոգին զարթնող ամբոխի մեջ սուզեր—
Եվ նա գոհ էր, դա էր ցանկացածը կարծես,

Ուրիշ որևէ բան դժվար թե նա ուզեր.—
Կամ պիտի հավատանք պատմությանն այս մաքուր·
Եվ կամ թե մտածենք,
Որ շունն ուներ թախիծ, կարոտներ ու հույսեր,
Ուներ ողբերգություն և երազներ վսեմ,
Արթնացնում էր, որ նոր մի խորհուրդ տա կյանքին.—
Կյանք, որ նվնվում էր և ձանձրալի, և խեղճ.—
Մի՞թե ողջ մարդկության բառերն այս թանկագին
Այդքան հեշտ ու հանգիստ, այդքան անփութորեն
Կարող են ամփոփվել մի անծագում, մի որբ
Խեղճ ու կրակ շան մեջ։
Մինչ ես կեսգիշերին մտքերս էի թերթում,
Նրա ձայնը չքվեց փողոցից ու բակից,
Ուրիշ ցեղակիցներ նրան գուցե կերա՞ն,
Եվ այս երգը ծնվեց և մարդկության համար,
Եվ այդ որբի համար, և մեր բախտի համար,
Եվ ինձ համար թաքուն ափսոսանքից։

◆

Գիշերվա մեջ կժերն իրար
Շշնջում են կավե խոսքեր,
Եվ կենդանի շշուկներից
Կավե շուրթերն են դալկանում,

Հողի խորունկ շերտերի մեջ
Ջնջվում են ջրի հոսքեր,
Եվ կարոտը կծկվելով,
Հեռու սարերն է բարձրանում։

Վե՜ր կաց, վե՜ր կաց, քնած մանուկ,
Կախարդանքից խոր գիշերի.
Տե՜ս, կավի ձայնն է թանձրանում,
Օղակների մեջ կժերի։

Երգը հանգչում է քիչ առ քիչ
Աստղերի խուլ կայծկլտոցով,

Էլ ոչ մեկը չի տալու քեզ
Կարոտների բույրը խոցող։

Ոչ մեկը քեզ չի տալու բախտ,
Ոչ սե՛ր, ոչ խի՛նդ ու ոչ թախի՛ծ,
Մի բուռ հավատ, մի քիչ աստված,
Ոչի՛նչ, ոչի՛նչ, բացի վախից։

Վե՛ր կաց, վե՛ր կաց, քնած մանուկ,
Կախարդանքից խոր գիշերի,
Տե՛ս, կավի ձայնն է քարանում
Օղակների մեջ կժերի։

ՀԱՅՐԵՆ՝ ՄՀԵՐԻՆ

Դու կաց, արեգակ, դու կաց,
Ես գնամ ծովե-ծով ընկնեմ,
Ծովե-ծով լուսնյակը ման գամ,
Եվ նրա բոլորակ ականջին
Քո ոսկյա բառերը կրկնեմ։

Դու կաց, արեգակ, դու կաց,
Արեգակ մանուկս է քնած,
Ծովե-ծով լուսնյակը ման գամ,
Մանկանս ճոճք անեմ կապույտ,
Որ այդ քո ծիծաղկուն մատներով
Ձեռ տաս ու շարթնանա հանկարծ։

ՁԵՋ

Դուք,
Որ բանաստեղծ եք
Եվ հավատքի քրմեր,
Որ ամենից շատ հավատում եք
Ձեր երգի ամենազոր ուժին,

Ապա եղեք հզոր,
Ապա եղեք վսեմ,
Ապա թույլ մի տվեք,
Որ օտար մակույկները նավերի հավակնությամբ
Նավեն ձեր հավատքի վրա։
Դուք,
Որ բանաստեղծ եք,
Ձեր հավատքը,
Որ կարող է ուռչել
Լայնամռունչ հուզվող կրծքի նման.—
Դուք թողնում եք,
Որ նա—
Ձեր հավատքը
Այդպես մնա ուռած
Եվ— չպայթի։

ՏԵՍԻԼՔՆԵՐ

Արորով ինձ հողից հանեցին,
Ինձ հողում ինչո՞վ են թաղելու...
Հոգնել է իմ կյանքի նժույգ-ձին՝
Չի՛ թռչում, չի՛ գնում, չի՛ թռչում՝
Հողմերից երազներ քաղելու։

Չի՛ տեսնում ոչ ոքի, ոչ մի բան
Եվ, ափսո՛ս, ոչ մեկին չի կանչում.—
Կյանքը լուռ մեռնում է հավիտյան,
Եվ նրա շիրիմին ոսկեցող,
Ոսկեցող տեսիլքն է կանաչում։

Ես վայրի աստղերով զարդարված՝
Ճչում եմ խոսքերով խաթարված,
Որ կյանքը կորչում է անհետ,
Տեսիլքներն ապրում են հավետ,
Տեսիլքներն ապրում են վտարված։

Տեսիլքներ ծաղկում են ամենուր
Ձեռքերում մի անհայտ տրտմության,—
Եվ քիչ-քիչ մեռնում է կյանքն, ավա՜ղ,
Մաս առ մաս տրվում է հողմերին,
Տեսիլքներն ապրում են հավիտյան։

Ապրում են սերունդներ աշխարհում,
Գալիս են, գնում են ու չկան,
Եվ մեկի համար, որ չգիտենք,
Տեսիլք ու ցնորք ենք հավիտյան։

Մենք մեկի համար, որ չգիտենք,
Տեսիլք ու ցնորք ենք անմեկին,
Գալիս ենք, անցնում ենք ու չկանք,
Զուլվում ենք հողին ու երկնքին։

Երկինքը տեսիլք է մի անծիր,
Եվ հողը տեսիլք է կորստի,
Աստղերը երգում են անձանձիր,
Որ մեկն իր կարոտը չըսրտի։

Ճերմակ բարձերի խլության մեջ
Խուլ տկտկում է սիրտս վախից.—
— Քեզ ո՞վ է տվել այդքան տագնապ,
Քեզ ո՞վ է տվել այդքան թախիծ։

Քեզ ո՞վ անիծեց՝ անհունի մեջ
Ցավի ձեռքերը գուրգուրելու,
Եվ նրա առջև ծունկի եկած
Հառաչելու և աղոթելու։

Քեզ ո՞վ օրհնեց, որ ցավը հավետ
Քո լույս ձեռքերը արյունոտի,
Որ դու չթողնես նրան հանկարծ,
Որ զորանալով, մեծանալով
Նա քո մարմինն էլ պատառոտի։

Ի՞նչ ես թողել դու, ի՞նչ երազներ,
Ի՞նչ կարոտների, ցավերի բերդ,—
Ո՞վ է կանչում քեզ, ով է կանչում,
Որ տարրալուծի անհունի հետ։

Նա՞, որ արցունքիդ քողը հագավ
Ու քո աչքերի մշուշը հեզ,
Եվ հեռացավ ու... և հեռացավ
Ճիշտ երազի և սուտ աստղի պես։

Լռում եմ.
Ձայնս երկինք են տանում
Սիրո թափանցիկ, տխուր ձեռքերով,
Սև գիշերն իմ մեջ զնգզնգում է խոր
Անապատների կարմիր զանգերով։

Կարմիր զանգերի լեզվակները շեկ
Շեկ ավազների ձայնով ահարկու
Պատռում են իմ այս լռությունը մերկ։

Սիրած տեսիլքի շուրթերով կարմիր
Իմ արյան ձայնն է ականջիս հասնում.—
Ընկնող աստղերին ասում եմ՝ աստղեր
Եվ ուրիշներին անհասկանալի
Երգերին դարձյալ երգեր եմ ասում։

Կորած ծովերիս ասում եմ՝ ծովեր,
Իմ կորած ծովեր՝ ասում եմ կրկին,
Իմ խուլ ցավերին ասում եմ՝ ցավեր,
Երկիր եմ ասում իմ կորած երկրին։

Կորած օրերիս ասում եմ՝ օրեր,
Որբեր, ասում եմ, ձեր ցավն ինձ կերավ,
Ախր, ի՞նչ անեմ ես ձեզ հետ, որբեր,
Անիրավ սիրո որբեր անիրավ։

Եվ համր այսպես, ու խուլ, ու կորած,
Կորած հույսերիս ասում եմ՝ հույսեր,
Անհունության մեջ կախված ձեռքի մեջ
Կծկվում է սիրտս,
Եվ կորած սիրուն ասում եմ՝
Իմ Սեր։

ԱՆՏՈՒՆ ՈՒՂԵՎՈՐՆԵՐ

Մի սրտամաշ կանչով օրորվելով անվերջ,
Հետևելով իրենց սարսափահար ներուն,
Սև ցուլերի նման, մթին գիշերվա մեջ,
Վագոնները փութով իրար պոզահարում
Ու գնում են առաջ անիրական ձայնով,
Ասես պիտի կորչեն անհայտ այս աշխարհում։

Վագոններում նստած ուղևորներ անթիվ,
Իրենց առօրեական հոգսերի մեջ թաղված,
Կամ ծամում են երգեր, կամ խմում են գինի,
Կամ իրար են նայում հայացքներով շաղված,
Կամ քնում են և կամ իրար ընդմիջելով
Լիրբ, վավաշոտ, տխուր պատմություններ պատմում՝
Մի կերպ կյանք են դարձնում կյանքը աղավաղված։

Թանձրանում են դանդաղ լույսերը թո՞ւյլ, դեղի՞ն,
Հորանջում են ծխով մոխրամանները բաց,

Դոներն իրար վրա աղմուկներ են դարսում,
Ներս է մտնում ահա ուղեկցողը հարբած,
Նրա համար ոչինչ չկա այս աշխարհում,
Եվ աչքերը ասես նժույգներ են արնոտ՝
Մութ հոնքերի ծալվող աղեղներով թամբած։

Ու փնտրում են նրանք, այդ աչքերը վայրի
Անտոմս ուղևորներ, մարդիկ, որոնք հիմա
Դրամ պիտի դնեն դեղին ձեռքերի մեջ,
Եվ նա պիտի առնի,
Ծոմվելով ժպտա
Ու գոհանա, գնա։

Թանձրանում են դանդաղ լույսերը թո՜ւյլ, դեղի՜ն,
Հորանջում են ծխով մոխրամանները բաց,
Դոները խուլ դարձյալ աղմկում են մի քիչ,
Հեռանում է դանդաղ ուղեկցողը հարբած։

Ու էլ չկան արդեն անտոմս ուղևորներ.—
Հիմա բոլորն արդեն օրինավոր որբեր,
Հիմա բոլորն արդեն հավասար են իրար,
Եվ էլ չկան ինչ-որ հարազատներ, խորթեր.—
Հիմա բոլորն արդեն վայրի այս թափորին
Եվ ճորտեր են, և տեր։

Անտո՜ւն ուղևորներ, անտո՜ւն ուղևորներ,
Ոչ ոք չի հարցնում ձեզ, թե դուք ո՞ւր եք գնում,
«Անտո՜ւն ուղևորներ, անտո՜ւն ուղևորներ»՝
Վագոնների չորուկ չիկրտոցն է կրկնում,—
Անհայրենիք, անտուն կրակների նման
Ինչո՞ւ այս աշխարհի անկյուններն եք ցրվում։

Ո՞ւր եք գնում արդյոք, ոչ ոք չի հարցնում ձեզ,
Եվ դուք կուչ եք գալիս անհայտության վախից,
Ձյունների մեջ ընկած արյան կաթիլի պես,
Կարծրանում եք՝ որպես մի ահարկու թախիծ։

Եվ սրտամաշ կանչով օրորվելով անվերջ,
Հետևելով իրենց սարսափահար ներուն,
Սև ցուլերի նման, մթին գիշերվա մեջ,
Վագոնները փութով իրար պոզահարում,
Ու գնում են առաջ անիրական ձայնով՝
Ասես պիտի կորչեն անհայտ այս աշխարհում։

ՄԵՂՈՒՆ

Երկիրը շո՞գ, քրտնա՞ծ պտտվում էր անվերջ,
Օդը զարհուրելի ժանգահոտ էր բուրում,
Ու տնքում էր կյանքը՝ ցավագնորեն հոգնած,
Երկաթի հոսք տանող անծայր փողոցներում։
Ու տնքում էր կյանքը։
Ու չեմ հիշում ոչինչ։
Ու մշուշը դեղին՝
Ուղեղիս մեջ քնած,
Փոշու հատիկներով գուրգուրում էր բառեր՝
Խեղդող կարոտների զառանցանքով գնած։
Ճկկում էին բառեր։
Ու չեմ հիշում ոչինչ։
Ճկկում էին քնատ ճնճղուկների հանգույն,
Պատեպատ էր խփվում
Մի փուչ իմաստություն՝
Օրերի մեջ տկար,
Եվ կյանք կոչվող անմիտ մի եռուզեռ անգույն։

Ու փողոցներն ահա,
Երկաթի հոսքն անփայլ,
Ու ես մայթի վրա՝
Անմիտ, զառանցական,
Իբրև հավատարիմ իմ օրերի ոգուն՝
Կապում էի իրար
Իմ անցյալն ու ներկան։
Ու տոթը սև, դեղին, կարմիր կայծկլտոցով
Կտցահարում էր իմ երազները թաղված,

Ու մի մեղու,
Ահա,
Անձայն ու անբզզոց,
Աջ ու ձախ էր ճոճվում՝
Օդում կախված։
Մեղուն։
Օդում կախված։
Այնպես։
Առանց ձայնի։
Անհեթեթ էր կարծես,
Զարմանալի անմիտ,
Զարմանալի փափուկ։
Ասված իմ, ի՜նչ մեղու,
Որ թևերը զնգան,
Ու նա ձայն չհանի։

Ու ես սիրո տամուկ բառեր էի փնտրում,
Որ ազատվեմ այդ շոգ մեղկությունից նսեմ,
Ես ինձ տանում էի խորքը անտառների,
Որ մի շշուկ,
Մի ձայն,
Կամ մի շրշյուն լսեմ։
Ուզում էի ամպեր,
Հեռաստաններ մաքուր,
Ու գետերի խշշոց,
Ու խոտերի սոսավ,
Եվ ինձ թվաց նույնիսկ ինչ-որ ակնթարթում,
Ինչ-որ մի բան սրտի՞ս, թե՞ ականջիս հասավ։

Սակայն երկիրը շոգ,
Պտտվում էր անվերջ,
Մեքենաներն էին փողոցն ի վեր կանգնած.
Եվ, ո՜վ զարմանք,
Մեղուն բեռնաթափը ծակեց,
Ծակե՛ց,
Անցա՛վ մեղուն
Ու մի հազար դար էլ այն կողմ գնաց։

Երկիրը շո՜գ,
Քրտնա՜ծ,
Պտտվում էր անվերջ,
Օդը զարհուրելի ժանգահոտ էր բուրում,
Ու տնքում էր կյանքը՝ ցավագնորեն հոգնած,
Երկաթի հոսք տանող անծայր փողոցներում։

◆

Անձրևից ծեծված, հողմից հալածված,
Ծակ տրեխներով գնում էր Աստված,
Ինքը երկնքից իր արտասուքով,
Իր կյանքը, ճամփան պատել էր սուգով։

Ինքը գնում էր թևթև ու ներհուն,
Որպես սկիզբն ու վախճանը կյանքի,
Ինքը տանում էր իր մերկ ձեռքերում
Բախտ արարելու
Իր կախարդական լեզվակը զանգի։

Եվ գնում էր նա
Լքված ու մենակ աշխարհի կողմից,
Եվ ոչ ոք, ոչ ոք չէր կանչում նրան,
Որ ապաստան տա անձրևից, հողմից։

Եվ նույն ժամանակ աշխարհից այս չար,
Պարզված երկնքի անհունները մութ,
Բյուրավոր ձեռքեր իրենց Աստծուց
Աղերսում էին գորովանք ու գութ։

◆

Փղոսկրե անիվներով
Հեռանում է բախտն օրեցօր,
Մթնում է դեմքն արեգակի,
Խամրում է հավքը ոսկեցոլ։

Թիթեռների թևերի մեջ
Մի գունագեղ ձայն է հանգչում,
Որ այսօրվա մայրամուտին
Պիտի մեռնի մարմնիս խաչում։

Եվ գողգոթան ինձ ի՞նչ՝ թե ով
Կզարդարի ծաղիկներով,
Ինձ ինչ, թե ո՞վ,
Ինձ ինչ, թե ո՞վ,
Կմնա միշտ, մշտահոլով,
Կմնա, որ աշխարհն արար
Դարձընի խուլ, անգույն քարայր։

Ո՞ւր են վազում ծեր ու ջահել,
Մարդկանց այս ի՞նչ է պատահել,
Որ մեղքի բույն այս աշխարհում
Ոչ մեկը չի ապաշխարում։

Ինձ գարնան մի օր դրին անկողին,
Շուրջս շարեցին երազներս ողջ,
Շողշողուն մտքեր
Կրակների պես շարեցին հողին
Եվ համբուրեցին ձեռքերս դողդոջ։
Նրանք գնացի՞ն, կորա՞ն, չքացա՞ն,
Եվ հայտնվեցին, ինչպես հեքիաթում,
Ես ճերմա՞կ, ճերմա՞կ սավանների մեջ
Մոխրացել էի մի ակնթարթում։

Անվերջ կործանվող գահերի միջով
Իմ մոխիրներին
Մոտենում էր լուռ մի անհուն թափոր,
Նրանք բոլորը անաչք ու անձայն՝
Մաքուր արցունքով շաղախեցին ինձ
Եվ ինձ դարձրին Արցունքի Սափոր։

◆

Ժայռերի կրծքից բվվոց էր գալիս,
Վրանների տակ հազում էր քամին,
Գլուխներն իրենց թաթերին դրած,
Գամփռները խուլ գոմռում էին։

Ճերմակ տանիքներ կային ձմեռվա,
Ու փոքրիկ, տաքուկ տնակներ կային,—
Մթնում մարմրող ծույլ խարույկներից
Գայլի աչքեր էր փախցընում քամին։

◆

Մաղվում է ցած
Անձրևը մե՜ղմ, մեղմ ու դանդաղ՝
Իմ հուշերի հովիտներում,
Իմ զոհերի վրա անթաղ։

Իմ հուշերի հովիտներում
Նրանք մեկ-մեկ սյուներ ծխի,
Ոլորվում են անձրևի մեջ
Ու հեկեկում են դառնաղի։

Անձրևի հետ լռում են լուռ,
Ինչ-որ վերջին աղոթք անում,
Ոսկեթիկնոց ու ոսկեխույր
Աշնան հեռուն են սլանում։

Ուր որ փոքրիկ մի գյուղից դուրս
Առնում է խոր նինջն իր անփույթ
Հառաչների, արցունքների
Ու ցավերի մի հողմակույտ։

Հավաքվում են նրանք այնտեղ,
Գալարվում լուռ հառաչանքով.—
Ոչ ոք նրանց չի կանչում տուն,
Նրանք ինձ են կանչում հերթով։

Այդ ձայները լսում եմ ես
Հավերժության խուլ խորքերից,
Նրանք սուզվում են հողի մեջ
Եվ հողից դուրս թողնում են ինձ։

Մաղվում է ցած
Անձրևը մեղմ, մեղմ ու դանդաղ՝
Մեն-միայնակ
Մի մեռածի վրա անթաղ։

◆

Ու գարնան հետ տխրությունով թափանցիկ,
Ու կարոտով անմեղսունակ որբերի
Գնում էինք դեպի սարերը հեռու,
Դեպի հեռու օթևաններն ամպերի։

Ու տրտմության բողբոջներով պայթուցիկ,
Ու մանկության տեսիլքներով անհամար
Ալպիական մանուշակներ՝ զանգակներ,
Ղողանջյունով իջնում էին սարն ի վար։

Ճչում էին վայրի բադերը խելառ,
Ճչում էին գագաթնասույզ լճերում,
Եվ օրերի տագնապների ձայնը մառ
Արձագանքով խեղդվում էր այդ ճիչերում։

Ազատության դռները բաց ու ազատ,
Ազատության խաղաղությամբ օրորուն,
Ճոճվում էինք աղբյուրների ղողանջով
Ազատության նարգիզաբույր օրերում։

Մտերմության կարոտները թևավոր
Ճախրում էին կապտաշշուկ եթերում.—
Պառկո՞ւմ էինք,
Քնո՞ւմ էինք,
Չկայինք՝
Ճնճղուկների ծլվլոցից
Հյուսած քողի ետևում։

Մեր խոհերին, մտքին տիրակալ է մի ձեռք,
Եվ մեկն իր անդունդն է քաշքշում մեզ համառ,—
Ժամանակի մասին հորինում ենք մի երգ՝
Մի տրտմություն, մի ցավ փարատելու համար։

Մենք լսում ենք նրա դոփյունն անբռնելի,
Եվ օրերի վազքը՝ սրարշավ ու հաղթող,
Եվ մանկորեն, անզոր դողդողում ենք էլի
Անփույթ ժամանակի ձեռքերի մեջ անդող։

Նրա անծայրածիր, անհուն փափկության մեջ
Տեղավորում ենք մեր վայրկյանները կոպիտ,
Նրանք հողմերի հետ թռչում կայծկլտալով
Եվ մարում են անդարձ տխրության մեջ կոկիկ։

Փափո՛ւկ երազներով, փափո՛ւկ երազներով
Հարմարվելով արդեն կորուստների ցավին,
Կորցրածի ետքից երբեք չհասնելով,
Գորշությամբ ենք փոխում կարոտների ծավին։

Ի՜նչ երգերի կրակ,
Ի՜նչ բույրերի կարոտ,
Օ՜, ի՜նչ տենչանքների կայծկլտոցներ հանգան,
Եվ ի՜նչ Սիրո Որբեր պիտի ծնվեն էգուց,
Որ մեր կորուստներն ու կարոտները ցանկան։

Նրանք պիտի անցնեն,
Նրանք պիտի գնան,
Շփոթվածի քայլքով,
Մոլորվածի նման։
Եվ Հավատի փոշին,
Ճերմակ եղյամ որպես,
Պիտի պատի նրանց,
Հորիզոնը և քեզ։

ԵՍԵՆԻՆ

Տառապանքում կա ձայն,
Եվ ձայնի մեջ կա լույս,
Եվ լույսի մեջ ոգի.—
Եվ ոգու մեջ ահա դու կանգնած ես մենակ
Որպես տրուբադուրը չթվարկված զորքի։

Բարի՜, եղբայրորե՜ն ինձ ասում ես՝ ապրիր,
Թող բուքը քեզ երբեք չհալածի,
Թող չծեծի՜ քամին, մտրակ չիջնի՜ վրադ,
Ոչ ոք քեզ ճորտության
Համար թող չվարձի,
Ասում ես ինձ՝ ապրիր ուրախ ու երջանիկ,
Առանց հարստության, առանց փառք ու գանձի,
Ասում ես ինձ՝ ապրիր անխարդավ ու աննենգ,
Ասում ես ինձ՝ ապրիր,
Ապրիր՝ որպես բույրը ցորեն հացի,
Եվ մեկ-մեկ էլ կրկնիր՝ «Եղբայր ենք մենք»։

Ոչի՜նչ, ասում ես դու։ Մի՜ տառապիր, ոչի՜նչ,
Լեռները չեն չոքում քամիների վախից.—
Եվ օրորվում ես դո՜ւ,
Եվ շնչշնկում ես դո՜ւ,
Որպես տափաստանի մի անկյունում բուսած
Հավերժական թախիծ։

Ոչի՜նչ, ասում ես դու, ոչի՜նչ, ոչի՜նչ, ոչի՜նչ,
Տե՛ս, չի եղել ոչի՜նչ, չի լինելու ոչի՜նչ,
Մի պուտ եղբայրություն պահիր կրծքիդ խորքում,
Եվ չեն մթնի երբեք աչքերդ ջինջ։

Ես հավատում եմ քեզ, երբ նայում եմ ցավիդ
Եվ հավատում եմ քեզ, երբ նայում եմ ահիդ,
Եվ քո խաչը ահա ես տանում եմ հլու.—
Եվ չգիտեմ՝ վաղվա խաչերի մեջ
Մեր խաչն ո՞վ է արդյոք շալակելու։

Ոչի՜նչ, ասում ես դու, մի՛ տառապիր, ոչի՜նչ,
Լեռները չեն չոքում քամիների վախից.—
Եվ օրորվում ես դո՜ւ,
Եվ շնչշնկում ես դո՜ւ,
Որպես տափաստանի մի անկյունում բուսած
Հավերժական թախիծ։

◆

Ես հիշում եմ ծովը,
Խաղաղությունը մեծ,
Ադամանդներ կեղծող իր խաղերը լույսի,
Նրա ոգին, որ մերկ ալիքների վրա
Կարող է շողշողալ, ինչպես սիրտը ուզի։

Եվ այդպես է ծովը՝
Երջանկորեն հանգիստ,
Տարտամ, անիրական ու տրտմորեն բարի,
Նա իր խորքում մի մեծ հանգիստ է պահպանում,
Որ իր Ոսկե Զկան կյանքը չխանգարի։

Ոսկե Զուկը ծովի
Բախտն է հավերժական,—
Եվ երբ հանկարծ ծովի խուլ խորքերն են խառնում,
Եվ երբ գողանում են նրա բախտը ոսկե,

Ծովը անհունորեն ընդվզում է մեկից՝
Ալիքները սրված դաշույններ են դառնում։
Ընդվզում է այդպես
Եվ պատրաստ է քայլել
Տիեզերքով՝ որպես հսկա զորաբանակ.—
ՏԵՐԵ՛Ր, ՄԻ ԳՈՂԱՑԵՔ ԲԱԽՏԸ ԺՈՂՈՎՐԴԻ,
ՏԵՐԵ՛Ր, ԴՈՒՔ ՉԿՆԻԿԻՆ ՅՈՒՅՑ ՄԻ ՏՎԵՔ ԴԱՆԱԿ։

Հավատացեք, եթե
Ծովն է ալեկոծվում,
Ապա ինչ-որ մի տեղ թաքուն ու տմարդի
(Օ, գուցե թե նաև առանց հասկանալու),
Գողացել են Ոսկե Բախտը ժողովրդի։

◆

Իմ սրտում ասեղներ կան ցցված,
Տառապանքի սուտակե ասեղներ,
Եվ ասեղներ կապույտ,
Որ տեր-աստծո նման կարոտն է արձակում
Հայոց աստվածների բարձունքներից։

Իմ սրտում ասեղներ կան,
Որոնք օր ու գիշեր
Գործելով հորինում են
Տառապանքի դեղին, դեղնամշուշ մի երգ։

Եվ դու զարմանում ես՝
Թե ինչպե՞ս է փոված
Ասեղնագործ անծայր մի մեղեդի
Քո տաք ճանապարհի դեղին փոշու վրա։

Քո թափանցիկ ոտքերը
Տրորում են փափուկ այդ մեղեդին—
Եվ ասեղներ փայլուն,
Ծակծկելով սիրտս,

Իմ սրտի թելերից հյուսում են
Ասեղնագործ մի երգ։
Ժամանակի բոլոր ասեղները
Մեխված են իմ սրտում։

Դու գալիս ես, որ մեկ-մեկ
Հանես այդ ասեղները,
Կամ մի վերջին ասեղ մխրճես իմ սիրտը։
Իմ սրտում ասեղները արևի ճառագայթներ են,
Քրքրված արշալույս եմ պահում ես իմ կրծքում։

ՄԵՌԱԾՆԵՐԻ ԱՇՏԱՐԱԿ

Մեռածների թիվը աշտարակ է բարձր,
Որտեղ ապրում ենք մենք
Մեր չիզված հոգու մենակությամբ։

Ծնվողները ճերմակ երամներով
Բարձրանում են երկինք։

Ժամանակի բոլոր աստվածները
Իրենց ոտքերի տակ
Բարձրացնում են այդ սև աշտարակը,
Բարձրացնում են այնտեղ,
Ուր մութ հոգիների խլությունն է երգում,
Բարձրացնում են կյանքի ցավոտ մի տքնությամբ
Ու խուլ ճարճատյուն է լսվում տիեզերքում։

Մեռածների թիվը բարձր աշտարակ է,
Որ թե Բաբելոնի աշտարակի նման փլվի հանկարծ՝
Բոլոր ժպիտները,
Բոլոր արքաները,
Բոլո՜ր, բոլո՜ր, բոլո՜ր աստվածները կթափվեն
ցած,—

Աստվածատիպ այրեր կելնեն անդունդներից,
Աստվածատիպ երգեր կփայլակվեն մթում՝
Որ ստեղծեն դարձյալ Աշտարակ ու Աստված։

◆

Սփոցների տակին պահված սեղանների վրա
Ժամանակը բախտի խաղաթուղթն է բացում.—
Խառնակույտ է՝
Քամին
Անհնազանդ երգով լցված գավաթներից
Հանում է դեմք,
Գլուխ,
Մի պղպջակ-արկած,
Եվ ամեն մի բացվող խաղաթղթի տակին
Պարտվողների անշունչ մի բանակ է պառկած։

◆

Մեզ խտուտ են տալիս.—
Ծիծա՜ղ, ծիծա՜ղ, ծիծա՜ղ։
Ծիծաղ մարդուն, հողին, ջրին,
Քանզի այդպես է միշտ՝
Ծիծաղը դարձնում է մեզ ապակի,
Եվ ցավի մի հարվածով
Մեզ փշրելը դառնում է զարմանալի դյուրին։

◆

Մեր հոգիներն անլույս ու կույր լապտերներ են,
Ճոճվում են՝
Առաստաղից ներքև դատարկության,
Զգտնումի վայելքն օրորելով։—
Պատերի մեջ թաղված,
Թախծից ժանգոտվում են
Լույսի կոճակները։

◆

Կանգնած չեն տանիքները—
Նրանք նստած են պատերի վրա։

Կանգնած չեն պատերը—
Նրանք նստած են հողի վրա։
Եվ հողը նստած է մեռածների մարմինների վրա։

◆

Պատերը պտտվում են շուրջս։
Զարմացած երգերը մեխվել են սյուների նման։
Թախիծը երկինք է դարձել,
Ապրելու երգեր է հանկերգում։

Փշրեցեք ձեր ներսում եղած պատերը,
Եվ ազատ,
Եվ ավեր մի աշխարհ կունենաք ձեր հոգում։

◆

Կեսօր է։ Միջօրե։ Ու մարդիկ
Ավազին փռվել են այս տապին։
Իսկ անցնող ծովայինն, իհարկե,
Անտեղի, իզուր է կատակում...
Մի փոքրիկ աղջնակ ծովափին
Փշրվող ալիքն է հավաքում։

◆

Դեռ առավոտ է, և ցողն ու շաղը
Ծաղկաթերթերին ժպտում են, լալիս
Մի ալիք ճեղքում է շամանդաղը,
Մյուսը... կարելով է գալիս։

Ես ծովի ափին նստել, կարդում եմ
Լի-Բոի տաղը՝ աշնան մասին,
Եվ անցորդները տեսնում են հանկարծ
Ինձ՝ առանց պատճառ մեղմ ժպտալիս։

◆

Թռիր, քամի, շտապ անապատի վրա,
Տներ չկան այնտեղ, փողոցներ ու մայթեր,
Որ խանգարեն քեզ ու քո ընթացքը վայրի,
Ծիծաղելով ասեն քեզ անտուն ու անտեր։
Միայն պատմիր այնտեղ մի քիչ կյանքի մասին
Կոմիտասը երգիր, սուլիր Վագներ,
Թռիր շտապ, քամի, անապատի վրա,
Չէ՞ որ դու սիրում ես ավերակներ։

ԵՍ ԾՆՎԵԼ ԵՄ

Ես ծնվել եմ,
Պիտի շռայլորեն ապրեմ,
Ապրեմ երկրիս բախտով,
Ապրեմ ձեզնով,
Ինձնով,
Ապրեմ, քանի դեռ կամ։
Իսկ թե պետք է մեռնել
Դավանանքի ճշմարտության համար,
Այդ դեպքում հավատը կուզեկուզ թող չգա
Մեր ետևից,
Մեր կոխած հողում տրորվելով
Եվ երբեմն իմաստուն,
Հաճախ անիմաստ մեր խոսքերից
Օրորվելով։

Ես ծնվել եմ։
Պիտի շռայլորեն ապրեմ...
Իմ հավատը։

◆

Ես մի ամբողջ գիշեր
առավոտվա մասին մտածեցի։
Կանաչ մասրենու մեջ
զարմանալի աշնան մեռած թփեր կային։
Մի մենավոր կաղնի՝
ժայռակողին,
մի հին,
մի խաչքարի առջև,
կատակերգակ տեսքով ողբերգություն խաղաց։—
Մի խաչքարի ստվեր—
ու մի խաչքար՝ թաղված։
Մի մեծ կաղնու ստվեր—
ու մի կաղնի թաղված։
Մի հեթանոս երկինք—
անդալուզյան արևից տաք.
Օ՜, դու արևի մեջ վառված իմ Հայրենիք։

◆

Մի բեկոր ժայռ պոկեմ,
Մի կտոր լերկ արև
Եվ ծամելով քայլեմ այս լեռներով։

Նայեմ գազանների խոնավ աչքերի մեջ,
Տեսնեմ արցունքների բնազդային ծնունդ
Ժայռերի մեջ մեխված երազների համար—
Ննջեմ գազանների տաքուկ թևերի տակ,
Նրանց սառն աչքերից սառը մի ջուր խմեմ—
Ու թե ոչինչ չկա իմ գոյության համար,

Մի բեկոր ժայռ պոկեմ,
Մի կտոր լերկ արև
Եվ ծամելով քայլեմ այս լեռներով։

ԵՐԵԿՈ

Ճոճվեցին լապտերներդ։
Շներդ համբուրվելով անցան։
Կատուները թախծից կծկվեցին
տանիքներիդ վրա։
Երգերդ չերգված վերջացան։
Սանդուղքներից կախված ստվերները
ելան վե՜ր,
իջան ցա՜ծ,
հոգնեցի՜ն,
քարացա՜ն։—
Սև նարնջի պես քամեցի ես գիշերդ,
Եվ ափիս մեջ մնաց դեղին մի արշալույս։

Մի քիչ բարձր,
ցածր
տանիքների վրա
թափվում է անձրևը։

Կարմիր, դեղին, ճերմակ
տանիքների վրա
թափվում է անձրևը։

Մի քիչ բարձր,
ցածր
դամբարանների վրա
թափվում է անձրևը։

Մի քիչ բարձր,
ցածր
լռության մեջ
ու կիսախուփ ու փակ աչքերի մեջ
թափվում է անձրևը։

Թափվում է...

Ապրում է մեկը հեռու,
Հեռավոր մի ինչ-որ կղզում,
Լսում է նեգրական երգեր
Եվ հետո Գերշվին է լսում։
Եվ հետո նայում է ծովին
Եվ հետո լռում է տարբեր,
Իսկ հետո, գլուխը քարը,
Սիրում է մի քիչ հարբել։
Եվ հետո նստում, քո լեզվով
Հայկական երգեր է գրում...
Այս հեքիաթը, Ջորջի, ամեն օր
Կրկնվում է հեռու քո երկրում։

Բաց, դուռդ բաց արա,
Բնազդն ինձ շուռ տվեց կանաչների վրա.
Ծառի արմատներից
Պաղ խշշոց էր ելնում նրա մարմնով վերև
Եվ թափվում էր տաք-տաք տերևներից։

Բաց, դուռդ բաց արա.—
... Հետո ձմեռ եկավ
Ու ճերմակ խուփ դրեց
Կապույտ խշշոցներով քլթքլթացող
Ծառաշխարհի վրա։

Բաց, դուռդ բաց արա,
Ձեռքերդ դիր վրաս,
Եվ թաղիր ինձ հողում,
Որպես արձագանքով լցված անհուն կարաս։

◆

Ինչ-որ տեղ հիմա,
Ինչ-որ ժայռերի տաք ողնաշարում
Պահել են գուցե սև ադամանդներ։

Դողդոջ ձեռքերով
Բռնելով մութի պարանը հոսուն,
Քայլում եմ անքուն գիշերվա միջով
Եվ հանգույցներ եմ արձակում անվերջ
Սև-ադամանդե շղթաների մեջ
Կանգնեցընելով լուսեղեն մի սյուն։

Մութ հանգույցների անվախճան գիշեր,
Իմ պայծառ սիրո հաղթության երազ.—
Ո՞ւր էր, թե կայիր,
Ո՞ւր էր՝ ծաղկավոր շորերդ հագիդ
Կանգնեիր ուղիղ իմ ճանապարհին
Եվ ամփոփեիր թևերդ վրաս
Ծիածանագույն կամարների պես,
Որտեղից պիտի ես ներս մտնեի
Որպես ուխտավոր ու հավատացյալ
Եվ քո սեփական խորանի խորքում
Համբուրեի... քեզ։

ԱՅԴ ԲՈԼՈՐԸ ՎԵՐՀՈՒՇ Է

Եթե ձյուն է գալիս,
Եթե սպիտակ ձյան մեջ
Սև մեքենաներ են պառկած
Իմ պառկած սիլուետի նման,—
Այդ բոլորը— վերհուշ է։

Եթե իմ դեմքի մազը
երբեմն աղվամազ է,

Եթե ոտքերս երբեմն ծուռ են,
Քայլելիս սայթաքում եմ ես,
Այդ բոլորը— վերհուշ է։

Եթե լացել եմ ես քեզ համար,
Եվ արցունքներիս մեջ կապույտ
կրակներ են եղել,—
Այդ բոլորը — վերհուշ է։

Իսկ ինձ համար— ուշ է,
Իսկ քեզ համար— ուշ է։

Ծառերի մեջ գլորվող լուսնի ետևից
Գլորվում է թևավոր մանուկների մի խումբ։

◆

Դո՛ւ,
Գտնված երգ,
Որ ամբողջ մի գիշեր
Թափառեցիր ինձ հետ փողոցներով փափուկ,
Մենք իրար հետ անցանք
այս աշխարհի բոլոր պատուհանների միջով
Ու դռների միջով անցանք,
Անցանք բազմատեսակ հրաշք—
գաղտնիքների միջով,
նաև ճշմարտության միջով անցանք.—
Անցանք բոլոր աղջիկների վերմակների տակով,

Աշնան գույների մեջ մոլորեցինք իրար,
Մոլորվեցինք աշնան դեղիններում,
Հետո գտանք իրար,
Հետո նվաղեցիր դու շուրթերիս վրա,
Որպես գիշերային մեր մեղքերի ներում։
Հետո կաթիլ-կաթիլ դու կաթեցիր ներքև իմ
շուրթերից,

Դու ծաթեցիր ներքև՝
Ռեկլամների կտրուկ լույսով բանված,
Եվ անտեղյակ նրանց միշտ մարմրող կյանքին—
Ու հեռացա ես քեզ մայթի վրա թողած,
Գիշերային լքված իմ սեր,
Իմ գտնված, գիշերային իմ կին։

◆

Իմ ձայնը՝ անմարմին, անգլուխ,
Իմ ձայնը՝ դողդոջուն շրթունքներ.—
Ակունքներից ծնվող մառախուղի նման
Իմ ձայնը փնտրում է քո մանրիկ ականջները։
Եվ մատներս՝ աննյութ ու թափանցիկ,
Եվ մատներս՝ տխուր ճառագայթներ,
Փնտրում են, որ փակեն քո մանրիկ ականջները,
Որ փակեն,
Չլսես
Զարհուրանքը ձայնիս,
Մոռանաս կարոտի արևոտ առասպելը։
Եվ այնժամ քո սրտից,
Ինչպես խուլ անձավից,
Կլսես աչքերիս մռունչը անձրևոտ.—
Կդողա մարմինդդ,
Կդողան շուրթերդ,
Եվ շուրթերիդ վրա՝
Ակունքներից ծնվող մառախուղի նման,
Իմ ձայնը կդառնա ցող,
Ու... կդողա։

ՀԱՍՄԻԿԻՆ

Երբ ուրիշ կլինեն օրերն արդեն,
Երբ ցնդած կլինեմ ցնորքի պես,
Բիբերիդ խոնավ ճանապարհով
Ես անակնկալ կմտնեմ ներս։

Մի օր իմ դարձի անհույս պահին
Կբացես դուռն՝ իմ հուշի դիմաց,
Կդողան մատները քո երկնային,
Կդողան սերերը մատներիդ մեջ,
Չկորցրած ու չգտնըված։

Դու մեղմ կթեքվես իմ տողերին,
Ինչպես որ լքված հուշն են կարդում,
Եվ մի կողմ թողած խոհ ու տարիք,
Մի կապո՜ւյտ-կապո՜ւյտ ակնթարթում
Կհառաչես դու հազար անգամ,
Ինչպես հազար կողմից խուժող ալիք։

Քեզ ընդառաջ, ոնց կապույտ միրաժ,
Իմ պատկերով իմ ձայնը կգա՝
Լքված խոհերից ու աշխարհից,
Հասմի՜կ, Հասմի՜կ, Հասմի՜կ,— խո՜ւլ կզնգա։

Եվ հնչյունները մանրահատիկ
Քո ամեն ներվից կարձագանքվեն,
Եվ ես կլցվեմ կողերիդ մեջ,
Որ անդառնալի փակվե՜մ, փակվե՜մ։

Եվ ես չեմ ելնի էլ ոչ մի օր,
Ոչ մի ակնթարթ չեմ լքի քեզ,
Քո կողերի մեջ կննջեմ խոր
Սիրահարի ու մեռյալի պես։

Եվ ոչ մի աղետ, ոչ մի մրրիկ
Ինձ քո կողերից էլ չի հանի,
Ավեր աշխարհում կշրջենք մենք,
Որպես առասպելից պոկված քամի։

◆

Ես քոնն եմ հիմա, ես քոնն եմ, քոնն եմ,
Քո մարմարակերտ թևերինն եմ ես,
Քո սև մազերի թելերինն եմ ես,
Քո մարմնի բոլոր ձևերինն եմ ես,
Եվ ուզում եմ, որ ինձ հիմա գրկես,
Գրկես ու այնպես սեղմես քո կրծքին,
Որ էությանդ ձուլվի իմ հոգին։
Եվ ես մոռանամ, որ աշխարհը կա,
Կան ուրիշ կանայք, կան ուրիշ երգեր
. . . . . .
Եվ կան այդ կանանց գուրգուրող ձեռքեր։

◆

Չկա՛,
Չի՛ լինի,
Էլ չի՛ լինելու
Իմ սիրո համար
Հին ոգեշնչման տանջանքը անսուտ։
Ուրիշ մի սեր է թպրտում հիմա
Իմ կորած սիրո կորստյան համար։—
Սակայն օրերս էլ չեմ դարձնելու
Տառապանք ու սուգ՝
Ինքնապաշտպանման փշերը վրան.—
Ես հնարել եմ մի գետ՝ Արտասուք,
Եվ վախենում եմ կորցրնեմ նրան։

Ես հնարել եմ մի գետ— Արտասուք—
Եվ վախենում եմ կորցրնեմ նրան,
Իմ գետի վրա ղողանջում է լուռ
Իմ հին օրերի ցոլքը հուրհրան,
Գետիս ափերին թավշե հիրիկներ
Օրոր են ասում բույրով անանուն,
Գետիս ափերին ոսկե իլիկներ

Երգերիս համար
Ծաղկաթերթերից
Թելեր են մանում—
Իմ գետը այսպես գնում հանդարտիկ,
Ինքն իր հետ անգամ չի ուզում խոսել,
Գետիս ափերին շրջում են մարդիկ
Եվ արարում են տառապանք ու սեր։

Եվ աղերսում են փրկության լույսեր,
Եվ երազում են ցոլքը աստղերի,
Եվ ծաղկեցնում են անծաղիկ հույսեր,
Որ իրենց ցավին ամոքում բերի։

Անծաղիկ հույսեր, անծաղիկ երազ,
Եվ համատարած ծաղկած լռություն,—
Իմ գետը այսպես գնում հանդարտիկ,
Գնում է դեպի անսահմանություն։

Իմ գետի խորքում իմ աչքերը զույգ
Սիրո մարգարիտ փնտրելով կորան,—
Ես արարել եմ մի գետ— Արտասուք—
Եվ վախենում եմ կորցընեմ նրան։

Ոչինչ չի լինում աշխարհում այնպես,
Ինչպես որ գետը մենավոր ու ծույլ,
Ինքն իր հառաչից խլացածի պես
Անվերջ քերում է իր ափերը ծուռ։

Աննկատ ցավով քերում է անվերջ
Անհավատալի մի մեծ տրտմություն.—
Անհայտ ճամփեքով, անանուն մի գետ
Գնում է դեպի անսահմանություն։

ԲԱՌԸ

Ինչպես արևի շողը բռնելով,
Կենդանանում է թրթուրը քնած
Եվ խլրտում է տաքուկ փոշու մեջ,
Այդպես Հանճարի ճառագայթի տակ
Արթնանում Բառը
Եվ տաք խլիրտով
Շարժվում է դեպի հավիտենություն։

Զգացմունքների խեղդող ալիքից
Բառն ինքը, ահա,
Խոստովանանքի համար է ծնվում,
Ու թեև նրան մանրում են մարդիկ
Շահատակության շուկաների մեջ,
Սակայն ինչ-որ տեղ՝
Հոգու ծալքերում իմաստունների,
Ապրում է Բառը և անվերջ թրթվում։

Հավատամքը— Սեր,
Տառապանքը— Սեր...

Ես նստել էի
Բառի մենավոր քարանձավի մեջ,
Եվ Բառը հազար տխուր աչքերով
Լալիս էր վրաս,—
Ես չգիտեի,
Որ դու մոմերդ կվառես մի օր՝
Բառի խորքերը լուսավորելու,
Եվ լռության մեջ կթողնես, գնաս։
Ես չգիտեի...
Եվ Բառը հիմա քայլում է հոգնած
Բառերի անծայր քարավանի մեջ,
Եվ տխուր է նա, ձանձրացած մի քիչ
Եվ աննվաճ է, և քնքշորեն խեղճ։

Եվ ինձ թվում է՝ նրա ստվերը
Բոլոր կողմերից
Քշում են վայրի ուրուրներ հազար.—
Գիշակերների՞, անտաղանդների՞ ստրուկն է Բառը,
Նա Հանճարին է միայն հավատար։

Եվ քանի դու կաս, ամեն գարնան հետ,
Ինչպես արևի շողը բռնելով
Կենդանանում է թրթուրը քնած,
Եվ խլրտում է տաքուկ փոշու մեջ,
Այդպես Կարոտիս ճառագայթի տակ
Արթնանում Բառը
Եվ տաք խլիրտով
Շարժվում է դեպի հավիտենություն։

Ջրերը կակաչներ են ուտում,
Խոհերը քանդվում են գուղձերով.
Անցնում են քամիները կապույտ՝
Հուշերի տաղնապներ հնձելով։

Մանուկներն՝ աչքերում թիթեռներ,
Ծաղկավոր ցուլեր են քշում դաշտ,
Բզեզներն արթուն են ամեն օր,
Գագաթներն հավքեր են ձյունապաշտ։

Անանուն ցավերի ճամփորդներ՝
Ջրերը կակաչներ են ուտում.—
Գիշերով մենք սերը կորցրինք,
Ցերեկով փնտրում ու չենք գտնում։

Դու կաս, հիմա դու կաս,
Ես ճանաչում եմ քեզ,
Եվ թողնում եմ, որ իմ
Աչքերի մեջ երգես,
Եվ թողնում եմ, որ իմ
Շրթունքներով ճչաս,
Եվ թողնում եմ, որ ինձ
Ճանաչես ու խղճաս։
Եվ թողնում եմ, որ ինձ
Դու վերստին երկնես,
Եվ թողնում եմ, որ ինձ
Բառերի փունջ մեկնես։

Քեզ ամեն ինչ այդպես
Թույլ եմ տալիս, սե՛ր իմ,
Քեզնով ես ինքս ինձ
Բույր եմ տալիս, սե՛ր իմ։

Բույր եմ տալիս ես ինձ,
Քեզնով գույն եմ տալիս,
Իմ մեջ աշխարհն ամբողջ
Շուռումուռ եմ տալիս։
Եվ քո հուշի դիմաց
Ես պեծկլտում եմ դեռ,
Ինչպես թաց մթի մեջ
Հանգչող լապտեր։

Ոչինչ չեմ հասկանում տագնապներից սրտիս,
Սրտիս թրթիռներից ոչինչ չեմ հասկանում,
Մեկ նայում եմ ծովի տրտմությանը փափուկ,
Մեկ լսում եմ ծովից վերադարձող քամուն.

Եվ իմ սրտից, սրտիս տագնապներից անմիտ
Ոչինչ չեմ հասկանում, ոչինչ չեմ հասկանում։
Իմ ուղեղի անծայր միրաժի մեջ ընկած,
Հստակ պատկերների իմացությամբ անզոր,
Կույր աշխարհի հզոր անեզրության առաջ
Ես՝ անհեթեթ, անմիտ, տառապում եմ այսօր—
Էլ ո՞վ արդյոք ինձ նոր երազանքներ կտա՝
Իմ աննշմար աստղի ճառագայթին հասնող։

Ո՞վ կտա ինձ, էլ ո՞վ...
Ինքս ինձ օրորելով,
Քնեցնում եմ ծովի կապույտի մեջ անծիր,
Եվ ես՝ կարոտների մի մանրամաղ թանձիվ,
Ես ալիքից ալիք թռչկոտում եմ հերթով՝
Ինձ քարշ տալով լուսնի խոնավ արահետով։

Ոչինչ չեմ հասկանում տագնապներից սրտիս,
Ոչինչ չեմ հասկանում.—
Սեր իմ, քո անունը վրաս սարսուռների
Ոսկեդեղին մշուշ— մղեղներ է մանում,
Սեր իմ, քո աչքերը իմ շարշարված հոգուց
Համր թռչունների երամներ են հանում,
Նրանք ճայերի պես ալիքներիս միջից
Կարոտներիս ոսկե ձկնիկները մեկ-մեկ
Կտցում են ու տանում։

Ո՞ւր են տանում, սակայն, սեր իմ, ո՞ւր են տանում,
Ո՞ւր կարող են տանել,
Երբ ամեն ինչ հիմա ամուր շղթաներով
Բանտված է իմ հոգու մութ զնդանում,
Երբ ամեն մի թողած հառաչանքիս դիմաց
Հազար արձագանք եմ ետ ստանում։

Եվ ես հիմա նստած այս հեռավոր ափին,
Զրիմյան այս այրված ու ձանձրալի հեռվում,

Խրախճանքի եկած ամբոխների միջով
Քո հեռավոր ու պարզ տեսիլքին եմ մերվում։
Եվ շողի պես խոնավ շրթունքներիդ վրա
Պսակում եմ բառերն անմեկնելի լույսով,
Եվ ապրում եմ այսպես՝ անհեթեթ ու անմիտ՝
Ինչ-որ դատարկ մի օր էլ չապրելու հույզով։

◆

Ես ամեն օր քեզ հետ զրուցում եմ թաքուն
Եվ ամեն օր քեզ հետ կռիվ ու վեճ ունեմ,
Եվ ամեն օր այսպես տառապում եմ, սե՛ր իմ,
Չէ՞ որ մտածում եմ, որ ես էլ վերջ ունեմ։

Անբնական մի վերջ՝ հիմար մի տագնապից,
Հիմար մի տագնապի անբնական չափից,
Իմ ու այս աշխարհի անբնական կապից,
Ամեն կողմից գլխիս,
Երազներիս թափվող
Անմարդկային ցավից, անմարդկային լափից։

Անբնական մի վերջ, սե՛ր իմ, անբնական,—
Դու, որ կարող էիր թավշե մի ժպիտով
Բոցավառել իմ գորշ ու տաղտկալի ներկան
Եվ որ կարող էիր գուրգուրանքի ստով
Լցնել իմ մեջ կյանքի ուժը տիտանական,—
Դու հեռացար այնպես փափուկ ու բնական,
Այնպես անփութորեն և մտերիմ այնքան,
Այնքան մտերմորեն— և լուռ, և անհուզում,
Որ ես հիմա ցավից խորտակվել եմ ուզում։

Մի՛ տագնապիր, մի՛ լար և մի՛ ասա, թե դու
Հետո ճամփաներ ես փնտրել վերադարձի,
Իսկ դու գիտե՞ս ինչ է ցավը խորտակվածի,
Եվ կորուստը՝ արդեն կորուստ տված մարդու։

Պիտի ելնեմ հիմա, մառախուղի միջով
Պիտի գնամ ինչ-որ անհայտ ճամփորդության,
Եվ դա չի լինելու խռովածի տագնապ.
Կամ միամիտ մարդու քմայք անփորձության։

Պիտի գնամ, ի՞նչ կա։ Դու էլ պիտի գնաս,
Որպես փափուկ մշուշ կամ կարոտի մի հով,
Պիտի գնաս մենակ, անվերադարձ, անփույթ,
Սակայն, ավաղ, ուրիշ,
Ուրիշ ճանապարհով։

ԵՍ ԱՅՍՏԵՂ ՉԵՄ ՀԻՄԱ

Լիալուսնի նման մաքուր և սպիտակ,
Լիալուսնի նման կապույտի մեջ դրված,
Շուրջը հազար գույնի ծաղկող աստղավարդեր,
Շուրջը հազար խոհի ալիքներ են փլված...
Այսպես ծովն է կապույտ,
Եվ սեղանն է ճերմակ,
Աղի բյուրեղներն են շողում անփույթ,
Եվ մատներով իր պաղ
Պատառաքաղն ահա ափսեն է ճանկռոտում,—
Ես այստեղ չեմ հիմա,
Ես այստեղ չեմ հիմա—
Ես ինձ փչեմ հիմա՝
Խլածաղկի նման կփշրվեմ օդում։

Աննյութեղեն, անցավ, ճառագայթի նման,
Ինչպես առու բացես փոքրիկ ամբարտակից.
Միտքդ ինձ այստեղից, աբանց որ զգայի,
Ինձ ծայրեծայր քշեց, տարավ իմ հատակից։

Շուրջս հազար գույնի ծաղկող աստղավարդեր-
Շուրջս հազար խոհի ալիքներ են փլված,
Լիալուսնի նման մաքուր և սպիտակ
Իմ դեմ ահա կլոր մի սեղան է դրված։
Ես նայում եմ, գիտեմ,
Ու ես չկամ հիմա,
Ուզում եմ լաց լինել,
Բայց զգում եմ, որ՝ չէ,
Մոլոր ուլի նման
Կրմկրկամ հիմա,
Կբառաչեմ ցավից,
Սակայն ցավը չկա,
Առանց ակունք, անցավ, արցունքն էլ որտեղի՞ց-
Էլ որտեղի՞ց կգա։

Ուզում եմ լաց լինել,
Ու խշշում եմ կամաց,
Խշխշում եմ աշնան խաշամի պես,
Ինչպես...
Ավա՜ղ, խշխշում է սիրտը քամած։

Քո ձեռքի մեջ քամած,
Քո ձեռքերով քամած,—
Այդ «Քո» հիշողության հայտնության դեմ ահա
Ես մնում եմ անզոր, լուռ, կարկամած։

Ու նստած եմ թեև,
Թեև պաղ մատներով
Պատառաքաղն ահա ափսեն է ճանկռոտում,
Բայց այստեղ չեմ հիմա,
Ես այստեղ չեմ հիմա,
Ես ինձ փչեմ հիմա՝
Խլածաղկի նման կանհետանամ օդում։

◆

Ես իմ մանկության հանդերին կանաչ,
Ծառ ու ծաղկունքին խուլ շշնջալով
Ասում էի, թե՝ սեր կբերեմ ձեզ,
Եվ կրծքիս խորքում
Բառերը անուշ զնգզնգում էին
Հեռու-հեռավոր ճամփա գնացող
Խոլ նժույգների զանգակների պես։

Ես ասում էի՝ սեր կբերեմ ձեզ,
Կբերեմ, որքան աշխարհն ունենա.—
Խոտերն անշշուկ խոնարհվում էին
Եվ ծաղիկները ժպտում էին լուռ,
Եվ ջրերն իրենց տագնապները հին
Անրջանք էին դարձընում մաքուր։

Ես ասում էի՝ սեր կբերեմ ձեզ,
Եվ թիթեռները մեղմ երանությամբ,
Համբուրում էին խոտերը դալար,
Եվ թռչունները ոսկե կտուցով
Ջուր էին բերում
Իրենց սիրասուն ձագերի համար։
Հետո անձրևներ եկան դառնաղի.—
Թարձր շենքերի խուլ պատերի տակ
Կծկվեց ցրտից տրտմությունն իմ խեղճ,
— Սերն ի՞նչ էր անում, սերն ո՞ւր էր արդյոք,—
Ու լացեց սիրտս հորդաբուխ ու տաք
Իմ պատառոտված կոշիկների մեջ։

Լացեց, ու թեև հեռու հանդերում
Խոտերը վշտից սև չկապեցին,
Բայց նրանց երգը գուցե թե տխրեց,
Թե մարդիկ ահա դարձյալ խաբեցին։

◆

Սուտ էր տառապանքն իմ համր ու թաքուն,
Սուտ էին բոլոր երազներս խեղճ,
Սուտ էին բոլոր գիշերներս անքուն՝
Սև-սև նիզակներ՝
Մխրճված իմ մեծ երջանկության մեջ։

Սուտ էր հայացքիդ տրտմությունն անքող,
Եվ կարոտներիս տագնապն անանուն,
Ճերմակ ձեռքերիդ սրսփումը խուլ,
Եվ շրթունքներիդ մրմունջներն անհուն։

Սուտ էին։ Չկար։ Ու չէին եղել,
Ախ, մի՞թե սուտ էր ամեն ինչ, սե՛ր իմ,
Մի՞թե հավիտյան տանջանքը բյուրոց
Դամբան է դառնում նրանց հույսերին։

Աշխարհում միլիոն ստեր կան, որոնց
Հարկավոր են ճիշտ բույն ու օրորոց։

Ցավը խնդության դռներն է բախում
Եվ բույն է դնում երջանկության մեջ,
Նրա սաղմերը աշխարհ են փոխում,
Ապականելով մեր բախտը անվերջ։

Աշխարհում միլիոն սուտ ցավեր, որոնց
Հարկավոր են ճիշտ բույն ու օրորոց։

Սուտն ամեն վայրկյան հետևում է, որ
Ճշմարտությունը իրեն օրորի.—
Ճշմարտությունը՝ մի վայրկյան, մի օր,
Հավերժ ու ճիշտ է սուտը բոլորի։

Եվ համատարած այդ ստի տակից
Ճշմարտությունն է ցավի պես ծաղկում.—
Սուտ էին բոլոր տագնապներս անքեն,
Սուտ էին բոլոր գիշերներս անքուն։

◆

Մոռացման քանի՞ պատնեշ կա մեր մեջ,
Որ դու ես դրել,
Որ տրտմության ու կարոտի ճամփով
Նորից ետ չգաս.—
Պատնեշ են, այո՛,
Բայց բոլորն այնքան մոտ ու մտերիմ,
Եվ մեռնելու չափ թափանցիկ ու պարզ,
Որ ես չգիտեմ՝ պատնե՞շ են դրանք,
Թե՞ կախարդանքի օղակներ ու խազ,
Ես սովորական տառապո՞ղ եմ մի,
Թե՞ տառապանքի քավության նոխազ։

Եվ ահա քեզ հետ խոսում եմ երկար,
Դու ոչ մի բառիս չես պատասխանում,
Բառերը օդում կախվում են խեղդված
Պատնեշների ձույլ անդորրության մեջ,
Եվ դարձյալ ես քեզ կանչում եմ, կանչում...
Ի՞նչ անեմ, սե՛ր իմ, խզվել է ձայնս,
Եվ կոկորդիս մեջ
Անապատների փշերն են աճում,
Եվ ողնաշարս ճռճվում է ծանր
Ուղտերի հեռու քարավանի պես.—
Աչքերս խոնավ անձկությամբ ճայի
Փոթորիկների ոգին են կանչում,
Որ գան ու սրբեն անապատս ինձնից՝
Իմ ավազներին կեր չդառնամ ես.—

Եվ սակայն նորից իմ դեմ կանգնում է
Մեր փոքրիկ, փոքրիկ հավիտենության
Վայրկյանը վերջին,
Եվ ես հանգչողի խուլ հանդարտությամբ
Ականջ եմ դնում
Նշենիների բողբոջման շնչին.—
Ծաղկում են բոլոր նշենիները,
Բալենիները հրավառվում են

Աղավնափետուր կայծկլտումներով,
Եվ կակաչները բռնկվում են հիր,
Ու ողջ աշխարհը լցնում են բույրով։

Եվ ինձ թվում է՝ ուր որ է, ահա,
Պատնեշներ ծակող
Քո ուրախության ճիչը կլսեմ,
Բայց այդ վայրկյանին խլանում եմ ես,
Եվ չքանում է պատրանքը վսեմ։

Եվ չքանում է ողջը, ինչ որ կար,
Ինչ որ եղել էր ճիշտ չեղածի պես,
Իմ կոկորդի մեջ անհուն և անվերջ
Անապատների փշերն են աճում,
Եվ քո դառնությամբ բզկտվում եմ ես
Այս համատարած անդորրության մեջ։

ԶԱՅՆԵՐԸ

Զայները գուցե չե՞ն մեռնում բնավ,
Զայները գուցե բարձրանում են վեր,
Մանուկների պես
Խաղում են փափուկ ամպերի վրա,
Հետո դառնում են աստղային հովեր։
Եվ ազատվելով մարդու կապանքից,
Երջանկանում են տխուր հրճվանքով,
Մարդն ազատվում է իր տառապանքից,
Եվ տիեզերքը լցվում է կյանքով։

Զայները գուցե չե՞ն մեռնում բնավ,
Գուցե պահվում են ջրերի խորքում,
Գուցե մտնում են խեցիների մեջ
Մարգարտանալու տենչանքով զնգուն։
Եվ կախարդական ձկների տեսքով
Գուցե աշխարհ են գալիս վերստին,
Ապրում են դարձյալ, կորչում են դարձյալ՝
Կյանք տալով այս նոր խաբկանքին, ստին։

Եթե ձայները չեն մեռնում բնավ
Ապրում են ու դեռ
Ապրելու տենչ են տալիս օրերին,
Հազար օրհնությո՜ւն, հազար երանի՜
Եղեգների մեջ հնչող ձայներին։
Հազար օրհնությո՜ւն, հազար երանի՜
Շուշանների մեջ շնչող ձայներին,
Եվ հազար թախիծ ու հազար տագնապ
Գուժկանների մեջ ննջող ձայներին։

Եվ քանի որ դու շուշան ես կապույտ,
Եվ քանի որ դու եղեգ ես, օ, քույր,
Եվ եթե ես ձայն ունեմ ապրելու
Թող քո մեջ զնգա իմ ձայնը մաքուր։
Թող քո մեջ ննջի, քո մեջ շնկշնկա,
Թող քեզ աստղային հովերով լցնի,
Գուցե մոլորվի, գուցե հեկեկա՝
Թե մեկը քեզնից հառաչանք փրցնի։

Ձայները գուցե չե՛ն մեռնում բնավ,
Ձայները գուցե ծաղկում են անվերջ,
Երբ մենք բոլորս ձայնել ենք արդեն
Տիեզերական խաղաղության մեջ։
Ձայնել ենք։ Եվ էլ ոչ մեկս չկանք,
Եվ ողջ աշխարհը դարձել է ահա
Ավեր ձայների ծաղկավառ մի գորգ.—

Թեև ձայները չեն մեռնում բնավ,
Բայց նրանց կյանքն էլ ակնթարթ է լոկ։

◆

Իսկ ես, մշուշներում քնած փոքրիկ մանուկ,
Անօգնական, անզեն։ Մենակության վախից
Տեսնում էի միայն մատները քո երկար,
Եվ իջնում էր վրաս ասպատակող թախիծ։

Լսում էի միայն արձագանքդ հեռու,
Որ փշրում էր տխուր աղաչանքս խաչե.
Սակայն աշխարհով մեկ փռված կրակներիս
Կայծերն հիմա շուրջդ սաղմոսներ են երգում.—
Սե՛ր իմ, վերջիվերջո, ասված կա, չէ՞։

◆

Առավոտը հանդարտ սար ու ձոր էր լցվում.
Մուժը քլթքլթում էր մատների տակ նրա.—
Ճերմակ ժանյակներով կապույտ ցողի նման
Նստել էիր փոքրիկ կոճղի վրա։

Ո՞ւր գնայի, ասված, ո՞ւր փնտրեի ես քեզ՝
Այդքան մաքուր ու նենգ, այդքան չար ու բարի։—
Ճերմակ ժանյակներդ արձակեցիր մեկ-մեկ,
Ձեռքդ առաջ բերիր և ասացիր՝ արի։

Մոտեցիր ինձ, ասիր, շոյիր ցողը կապույտ,
Ինչ որ հասնում է քեզ, առ ու գնա.—

Ու ես փախա հետո... ու չքացա հետո...
Ու գնում եմ այդպես մինչև հիմա։

◆

Սերդ խեղդում էր ինձ, սերդ խեղդում էր ինձ—
Ես թափառում էի անտեղ, անտուն,
Խուլ հառաչում էի տառապանք ու ցավից,
Ինքս արցունքների հեղեղ էի խեղդում։

Հետո տարան, ավա՜ղ, ինձ առան ու տարան
Որդեգրված որբի, տանջանքի պես,
Հիմա սերը դրկին խեղդում է ինձ, սե՛ր իմ,
Եվ ես կամաց-կամաց խեղդվում եմ, տե՛ս։

ԼԻԼԻԹԻՆ

Լիլիթն աղջիկ է մի փոքրիկ,
Լիլիթն ունի ձեռքեր կաթի,
Կայծկլտում է խարույկի պես
Մշուշների մեջ հեքիաթի։

Ծիծաղում է ամպերի մեջ
Զրնգոցով աստեղնային.
Ու ծաղկում են աչքերի մեջ
Հին դարերի սերերը հին։

Լիլիթն աղջիկ է մի փոքրիկ,
Լիլիթն ունի բառեր սաթե,
Իմ ճակատի վրա փռված
Ա՜խ, նա մշուշ է արծաթե։

Ինչքան որ կա սեր
Աշխարհում այս հին,
Բոլորը անդարձ
Տրվել են մահին։

Ու մահվան ձեռքում
Նստել ենք սաստված՝
Դու՝ փոքրիկ աղջիկ,
Ես՝ մի մեղկ աստված։

◆

Քո լռությունը՝ հեռու և մոտիկ
Ճերմակ շուշաններ կդարձընեմ ես,
Եվ քո մազերի փափուկ թախիծով
Կլցնեմ կյանքս տրուբադուրի պես։

Կլցնեմ, կերթամ, կբերգեմ անվերջ
Ճանապարհների փոշիները տաք։—
Իմ սև լռություն, ողջ կյանքս պիտի
Խեղճ Պետրարկայի սոնետների պես
Այրեմ քո փխրուն ոտիկների տակ։

◆

Քո տառապանքը դու տարար քեզ հետ,
Ինձ մենակ թողիր աշխարհիս վրա.—
Ու լուռ դարերի ոտնակոխ սրտով
Ես այս աշխարհի ցավերն եմ սգում։
Աշխարհի ցավով տառապելու մեջ
Քո ցավը, հոգի՜,
Քո տառապանքը,
Քեզ ունենալու
Հարստությունն եմ կրծքիս տակ զգում։

Տուք սայեր

◆

Կանաչ դաշտերը փափուկ
թաթախված են լույսի մեջ,
մայրամուտի լույսի մեջ՝
ծիրանագույն շշուկով,
և բլուրները խոնարհ
ծվարել են հույսի մեջ,
որ ծփում է լանջն ի վար՝
անմահության պարզ շուքով։

Գետը դանդա՜ղ, համրաշա՜րժ,
համրամրմո՜ւնջ, համրատե՜ս,
ներծծվում է վայելքով
տաք մարմրնի մեջ հովտի,
հոսում է մեղմ, աստղերից
երկիր իջած լույսի պես
և բորբոքում է մարդու
պատրանքները սնոտի։

Եվ մի թռչուն անհայտից
մեխվում է պարզ օդի մեջ՝
ասես գիշերն օրվա դեմ
իր սև նետն է արձակում,
շուտով լույսը կհալվի,

կանհետանա գետի մեջ,
կմեծանա թռչունը՝
ծածկի հովիտը ծաղկուն։

Եվ իրոք որ՝ մի՞թե նա
պիտի ծածկի ամեն բան,
և մի տարտամ, անորոշ
անհայտության մատնի մեզ,
թե ոչ, լույսը, հայտնի է,
միշտ գտնում է իր ճամփան՝
նա ներծծվում է բոլոր
մարմիններից, նյութից ներս։

Նա ներծծվում է բոլոր
մարմիններից, նյութից ներս,
հետո աշխարհ է գալիս՝
գոյացնելով ուրիշ լույս,
շնչում են տաք թրթիռով
ծաղիկները նուրբ ու հեզ,
և աղոթք են մրմնջում
գագաթները երկնասույզ։

Հետո կրկին ամեն բան
դանդաղ մարում է, մարում,
այսինքն՝ լույսը դանդաղ
ներծծվում է նյութից ներս,
— Այս մի գիշերն էլ քնենք
էս օրհնված աշխարհում,
և սպասենք, թե մահը
ե՞րբ է վրա տալու մեզ։

◆

Կան անթիվ աստղեր և մոլորակներ,
և ծիրկաթիններ՝ անթիվ ու մաքուր,
հողմեր կան վայրի,
բորբ արեգակներ,
կան աստղեր, որոնք պտտվում են կույր,
կույր անգիտությամբ Տիեզերքի մեջ
վխտում են անթիվ սամումներ ագահ.—
Տիեզերքն իր մեջ առել ամեն բան,
ամեն բան իր մեջ, իր մեջ է առել,
և ինքը... չկա։

Ներդաշնակության քաղցր բխումով,
իրար գգվելու անվերջ հարությամբ
աշխարհ են գալիս անթիվ սերունդներ՝
տաք երազներով, տաքուկ բարությամբ,
մաքուր մխանքով ցանում են հունդեր,
սիրո հունդեր են շաղ տալիս ագահ.—
Սերն իր մեջ առավ Տիեզերքն անգամ,
ամեն-ամեն բան Սերն առավ իր մեջ,
և ինքը... չկա։

Մարդը՝ բողբոջը բնության ոգու,
և Տիեզերքի ճառագայթն անբիծ,
Մարդն աշխարհ գալով քաղցր բխումով,
անմիտ շեղվել է Բնության ճամփից,
փոխանակ ինքը ապրի Սիրո մեջ
և Տիեզերքում ապրի արևկա.—
իր մեջ ճզմել է Սեր ու Տիեզերք,
Տիեզերքն ամբողջ խառնել է իր մեջ,
և ինքը... չկա։

ՏԱՌԱՊԱՆՔԻ ԾԱՌ

Թե տառապանքը մաքրում է մարդուն,
ինքը ինչո՞ւ է այդքան անմաքուր,
թե նա բացում է աչքերը մարդու,
ինչո՞ւ է ինքը անթափանց ու կույր։

Եվ այդպես անմիտ, այդպես կուրորեն,
այդքան անզգույշ, այդքան աննկուն
ծվարում է նա պարզ աչքերի մեջ
և արմատներ է արձակում հոգում։

Եվ արձակելով արմատները սև,
փարթամանում է, ծաղկում է անվերջ
և սկսում է ժպտալ, ծիծաղել
մեռնող մաքրության մահիճների մեջ։

Մենք ընտելանում նրա ժպիտին,
հարգում ենք նրան կես-կատակ, կես-լուրջ,
և քարանում է հոգին քիչ առ քիչ
նրա զորացող արմատների շուրջ։

Բարձրանում է նա, անվերջ բարձրանում՝
թանձր ստվերում կորցընելով մեզ,
և նրա ցավից կծկվում, կարծրանում
և մթագնում է մաքրությունը հեզ։

Ես այս բոլորը չեմ ասում, որ մենք
ապրենք իբրև թե առանց տառապանք.—
տառապանքն ինքը ծնվում է մեզ հետ
և կյանքում մեզ հետ քայլում է անկանգ։

Մեզ հետ օրերը թերթում է մեկ-մեկ,
և մենք շարժվում ենք նրա կրակով,
ուզում ենք փախչել, սակայն ապրում ենք
Նրա օրենքով ու նրա կարգով։

Միայն թե ինչպե՞ս հարազատանում,
հաշտվում ենք նրա ուժին տիրակալ՝

Նրանից մահվան հաբեր ստանում
և ծափ ենք տալիս նրան մենք երկար։

Եվ մեր խեղճությանն ապավինելով,
դարձնում ենք նրան մեծ հպարտություն,
էլ չենք ծիծաղում, այլ նրա միջից
քամում ենք անվերջ տխրություն ու թույն։

Սնում ենք նրա արմատները սև,
Հարգում ենք նրան բոլորովին լուրջ՝
մինչև ամեն բան մեռնի, քարանա
նրա զորացող արմատների շուրջ։

Ես ոչ մեկին չեմ տվել մոռացության մշուշին,
Անթեղել եմ, չեմ թաղել ծնված ոչ մի զգացում,
Խոնարհությամբ եմ նայում և անցյալին, և հուշին,
Որ ապրում են մարդկության և ծիծաղում, և լացում։

Լցված է կյանքս անտակ խորհուրդներով անմնկին,
Հնչյուններով, բառերով՝ գեղեցիկ ու բզկտված,
Այս խելահեղ քաոսում հավատում եմ լոկ երգին,
Եթե վեր եմ բարձրանում, միշտ նայում եմ դեպի
ցած։

Միշտ նայում եմ դեպի ցած, քանզի այնտեղ է
վերջին
Հանգրվանը անցյալի, ապագայի, այսօրի,
Այնտեղ է փառքը վերջին, այնտեղ է հուշը վերջին,
Թուլությունը տկարի, զորությունը հզորի։

Նրանք, որ անց են կացել, նրանք իմ մեջ են հիմա,
Եվ նրանք, որ պիտի գան, նրանք իմ մեջ են հիմա։
Մեկն աղմկում է վհատ, մյուսը լռում է հզոր,
Եվ ինչպես միշտ, ապրում են իրար կողքի կյանք
ու մահ։

◆

1

Ուռիները տաք թախիծ են քամում
ջրերի վրա։

Այդ ուռիներին
և այդ ջրերին հասնելու համար
ինձ հարկավոր չէ ոչ մի նվաճում։

Իսկ թախիծն արդեն
տարիներ ի վեր իմ մեջ է աճում,
այդ ուռիների
և այդ ջրերի թախիծը մաքուր,
որ լվանում է ժամանակները
երկրային կյանքի ճղճիմ ախտերից,
լվանում է նա,
անկախ տաք ու պաղ եղանակներից,
անկախ մարդկային
բոլոր բախտերից։

Ինչպես հոսանքը լարերի միջով
ձգվում է հեռու,
և ապա նրանց ծայրերին մի տեղ
ծաղկում է մեկից,
այդպես ջրերի
և ուռիների թախիծը գալիս,
անտեսանելի, ամենաթափանց
լարերով գալիս,
և իմ սրտի մեջ,
իմ հոգու խորքում
տխրության խոշոր
ծաղիկ է տալիս։
Նա իմ մեջ թախծի
վարդեր է թափում,

և ես ոչ մի տեղ
և ոչ մի բանի ետևից արդեն
էլ չեմ շտապում։

2

Ուռիները տա՞ք թախիծ են քամում
ջրերի վրա։

Եթե արթնանամ ես այս թմբիրից,
ինձ համար զգեստ կարեք ամպերից,
որ ես համբառնամ խորքը անհունի,
քանի որ անտեր այս պատմությունը
ոչ սկիզբ ունի,
ոչ վախճան ունի։

Ուռիները տա՞ք թախիծ են քամում
ջրերի վրա։

ՀԵՔԻԱԹԻ ԳՈՐԳ

Ես լուռ պառկել եմ խոնավ խոտին,
աչքերս բաց են, հոգիս՝ անկիրք,
նայիր աչքերիս, նայիր ու տես՝
հեքիաթի գորգ եմ ուզում, երկի՛նք։

Հեքիաթի գորգ եմ ուզում, նայի՛ր,
որ սավառնում է քո անհունում,
հեքիաթի աղջիկ, որ գորգի հետ
փափուկ թախիծ է վրաս մանում։

Գորգը գունագեղ փրփուրի պես
մանում է թախիծ, մանո՛ւմ, մանո՛ւմ.—
դրանով դու ես անմահանում,
դրանով ես եմ անմահանում։

Նթե հավատամ ես քո ձայնին,
քո կապույտին ու ոգուն քո պերճ,
ուրեմն՝ հիմա բաց աչքերով
ես ապրում եմ քո հեքիաթի մեջ։

Քո ամպերի հետ լուռ սահելով
և պտտվելով քո երկրի հետ,
մեխված մնում եմ այսպես տեղում,
մնում եմ՝ իբրև չարձակված նետ։

Հեքիաթի գորգ եմ ուզում, երկի՛նք,
որ թափառում է քո անհունում,
հեքիաթի աղջիկ, որ գորգի հետ
փափուկ թախիծ է սրտիս մանում։

◆

Փաթաթվեմ աշնան թափանցիկ օդով,
և սահեմ աշնան տերևների հետ
Հայրենի երկրի դաշտ ու արոտով։

Տեսնեմ, որ ոչինչ չի փոխվել կրկին,
որ Հայրենական ամեն թուփ ու քար
կարոտ են իրենց երգչին ու երգին։

Եվ աշնանն անգամ ծաղիկները հեզ
պայծառությամբ են նայում աշխարհին,
որ այնպես տխուր գուրգուրում է քեզ։

Որ այնպես տխուր գուրգուրում է քեզ
և հավատում է այնպես սրտագին,
որ իր թախիծը դու պիտի երգես։

Քանի որ հոգիդ լցրել է թախծով,
և ինքն է տերը իր պարգևածի.—
— Գոհանամ առ քեզ, Տեր, քո տվածով։

Չէ՞ր լինի, որ ինձ մի ծաղիկ տայիր,
որ աշնան մեջ էլ ծաղկեր ու ժպտար,
որ սիրեր նա ինձ, գուրգուրեր, գթար,
և դու էլ թավի՜շ, թավի՜շ ժպտայիր։

Փաթաթեիր մեզ թափանցիկ օդով,
որ մենք սահեինք տերևներիդ հետ
քո հեքիաթային դաշտ ու արոտով։

ԵՐԱԶԱՆՔԻ ԱՆԻՎ

Քո ճաղերի միջից երևում է երկինք,
հեռաստաններ, հեռու հորիզոններ,
որտեղ
նյութը կորցընելով կշիռն իր անիմաստ
և առնելով թևեր,
ճախրում է թեթևորեն
գունավորված, չքնաղ երկնքի մեջ՝
ուրիշների և մեր։

...Ծոռում են անիվները փողոցների փոշում՝
իրենք իրենց բեռից
հոտելով թույն ու քաղց,
նրանք իրենց վազքում
ասֆալտի տա՜ք, փափո՜ւկ զառանցանքն են
հիշում
և հոգնությունը օրերի՝
մռայլ ու դժնաթախծ։

Նրանց ճռինչի մեջ բաբախյունն է դարի
և ընչաքաղց ոգու մռայլ ու անհաղորդ
տագնապն ամենատենչ,
այդ նրանք է, որ ջնջել են
բոլոր սահմանները Բարու-Զարի,
Նրանք է, որ պնդեցին,

Թե բարության սաղմը
կարող է և ապրել չարության մեջ։

Եվ լինելով այդպես
դաժանորեն բարի,
և ճզմելով չքնաղ երազանքը փխրուն,
նրանք որոշում են ուղղությունը դարի,
և չեն մտաբերում իրենց խեղճ զոհերին,
և չեն ողբում նրանց
կամ չեն տխրում։

Կամ չեն ուզում լինել
սենտիմենտալ ու թույլ,
այնքան, որ, ո՞վ ծիծաղ,
տրվեն երազանքին,
նրանք իրենց ծանր, դղրդացող աղմուկը
պարտադրել են կյանքին
և ընդունում են լոկ շեփորներ ու ծնծղա։

Թմբկահարիր ահա որքան կուզես,
թմբկահարիր սիրտդ զիլ ու հնչուն,
թմբկահարիր այնպես, որ գեթ մի զարկ,
քո երազող ու թույլ սրտի մի զարկ
կարողանա հնչել շարժիչների ճիչում։

Մինչդեռ դու կաս կրկին,
Երազանքի՜ Անիվ,
պտտվում ես փափուկ
և տանում ես սայլակն այն՝ սպիտակ,
որ մանկական քնի շնչով է առլեցուն
և երկնքով կապույտ,
լիքն է խոտի բույրով,
գույնով ծաղիկների,
լիքն է ապագայով
և լռությամբ ցնծուն։

Քո ճաղերի միջից երևում է երկինք,
և քեզ առաջ տանող միակ շարժիչը, տե՛ս,
մայրական սիրտն է, որ
թպրտում է քեզ պես,
քեզնից առաջ ընկած,
գծում է քո ճամփան,
քո ետևից գալիս—
քո նահանջն է կանխում,
և իր հույսը տված քո ընթացքին,
երազանքներն ամեն իր ողջ կյանքի
քո հուսալի, փայլուն ճաղերին է կախում։

Եվ դու պտտվում ես
կյանքի ամենաթանկ, աննյութեղեն բեռով.—

— Երազանքի՞ Անիվ—
սակայն ո՛չ այն,
ո՛չ այն,
որ մեզ տանում է վեր
նյութի սանդուղքներով։

ԱՆԶՐԵՎ

Հողը փափկում է անձրևից,
թուղթն է փափկում անձրևի տակ.—
անձրևում են գիշեր ու տիվ
իմ սիրելու աչքերը փակ։
Սիրտս այնպես է բաբախում,
հողն է ցնցվում ոտքերիս տակ։

Նայում եմ պաղ հորիզոնին՝
անհո՞ւն, անհո՞ւն և անվախճան.—
ի՞նչ է պատկերն այս անիմաստ,
որ պիտի գան մարդիկ այսպես,
իրենք իրենց պիտի խղճան,

և հետո լուռ կորչեն անհետ
հորիզոնի դեմ անվախճան։

Պիտի խոսեն, պիտի ճչան,
պիտի երգեն սեր, ցավ ու վիշտ,
և կրկին լուռ կորչեն անհետ
հորիզոնի դեմ անվախճան։

Սակայն կրկին հավատալով
Մեծ խորհրդին, բախտի հովին,
ուզում եմ երգ շնորհաբերել
ինձ այս աշխարհը բերողին։

Հողը փափկում է անձրևից,
թուղթն է փափկում անձրևի տակ,
փափուկ հողից, փափուկ թղթից
ծնվում են մեր երգերը տաք,

Որ մեր մեկ օրը զարդարվի
թիթեռների գունախաղով,
և չլինի կյանքը լցված
լոկ տխրությամբ ու լոկ վախով,
և հրաժեշտը կյանքի հետ,
և հրաժեշտը կյանքի հետ,
միշտ զարդարվի տխուր «ախ»-ով։

Ա՜խ, ինչ երկա՜ր ու անդադրում
երկինքը իր սիրտն է պատռում...

◆

Ինձ փաթաթեք երկնքով,
գլխիս՝ ամպե սաղավարտ,
տվեք երախը քամու,
որ ինձ տանի հեռավոր
անհայտ ծիրերը երկնի՝
գտնեմ երգերս անավարտ։

Ձեռքիս աստղե գավազան,
կթափառեմ օրնիբուն,
Խորած գառներս բոլոր
կժողովեմ բերեմ տուն։
Նրանց ձայնը կլսեմ,
շնչառությունը կզգամ,
կշոշափեմ, կտեսնեմ,
Նրանց ցավը կսգամ։
Կրկին կօրհնեմ ես նրանց
ոգին մաքուր, ոգին սուրբ,
որ իմ կյանքը դարձրին
անկրկնելի մի ասուպ։
Նրանք կյանքս դարձրին
անկրկնելի մի ասուպ,
և դարձրին իրական
կարոտները հավերժ սուտ։

Եվ երբ անցնեն տարիներ,
և ամեն բան դառնա հուշ,
հուշի վրա էլ իջնի
մոռացության թանձր մուժ,
ես նրանց հետ միասին,
անցած սիրո բևեռով,
կիջնեմ երկիրն այս չքնաղ՝
նրանց թավիշ թևերով։

ՈԳԵՂԵՆ ՀԱՑ

Հին ու հեռավոր ասպետների պես
ինձ տանջանքների խորքը նետեցի,
գաղջ պատնեշների հոտին խառնված,
մոտենում է ինձ
քաղցր բուրմունքը ոգեղեն հացի։

Դեղին բլուրներ ճչում են հիմի,
Նրանց տագնապը հիացնում է մեզ.—

ո՞ւմ եմ որոնում,
ի՞նչ եմ որոնում
և ինչպե՞ս է, որ դեռ ապրում եմ ես։

Առաջին օրս տառապանքի մեջ,
և երկրորդ օրս՝ նորից տառապանք,
և երրորդ օրս տառապանքի մեջ,
և չորրորդ օրս՝ նորից տառապանք։
հինգերորդ օրս տառապանքի մեջ,
վեցերորդ օրս՝ անհուն տառապանք,
ո՞ւր է տանջանքի կիրակին, Տե՜ր իմ,
հիմա աշխարհում ի՞նչ լույս է արդյոք,
ի՞նչ ձայներ են, որ մտնում են անձավ,
...առաջին օրս տառապանքի մեջ,
և վերջին օրս՝ տառապանք ու ցավ։

◆

Մարդիկ աշխարհը ծաղկեցնում արյամբ,
վիշտ ու հառաչանք ծածկում են գույնով,
մեկտեղ ծիծաղում, առանձին լալիս,
խեղդում են իրար միևնույն արյունով։

Քամին աշխարհի մեծ խառնարանում
խառնում է իրար
հույս ու հառաչանք, տրտմություն ու վիշտ.—
իմ խուլ ցավերով տառապողն անգամ
Ցավերիս Ցավին անտեղյակ է միշտ։

◆

Աստրծո նման խաղաղ պահիր քեզ,
աստրծո նման եղիր բարեսիրտ,
Նրա պես եղիր հավասարատես
և ծաղկեցրու նշխարը լույսիդ։

Աստրծո նման եղիր գթառատ,
շուրջդ բարություն ու սեր սերմանիր,
Ձեռքդ տար զգույշ, և հոգիներից
չարի, պղծության արմատը հանիր։

Հանիր, քանի դեռ ուշ չէ հավիտյան,
քանի դեռ ցավ կա հոգում բզկտված,
և հավատ, որ քեզ էլ հավատան,
և հավատա, որ խեղճ են ու լքված։

...Քո լեռան վրա չի ծաղկում ոչինչ,
քո լեռն՝ ամայի, և հուզումդ՝ մերկ,
լուսնի տակ շփոթ մի՛ կանգնիր այդպես,
Մի՛ սարսռեցրու կարոտներդ մեղկ։

Եվ թե քեզ ուտեն, դու մի՛ վշտանա,
մի՛ տրտմիր ցավով, այլ լոկ իմացիր,
որ զեռունները մարմինդ կերան՝
նրանք, որ միայն ապրում են հացիվ։

Եվ թեև սուտ է,
թեև չի լինի,
սակայն հավատա կրկին ու կրկին,
որ քո մասունքը նրանց մեջ մի օր
աշխարհ կբերի Հրաշք-մանուկին։

Եվ հավատալով բաշխիր քեզ, օրհնյա՛լ,
մատուցվիր՝ ինչպես սերն է մատուցվում.—
Ոգեղեն խոսքը և լույսն ասաղերի
ահա գալիս են, քո մեջ ագուցվում։

ՕԴԸ

Կախվել է կապույտում
արտույտը իր թելից,
զրնգուն ծիծաղ է
ծավալվում եթերից։

Արտույտը ի՞նչ գիտի,
թե օդում ինչե՞ր կան.—
ապրող ու մեռնողի
հառաչ ու ճիչեր կան,

Փշրված հույսերի
գունավոր խիճեր կան,
արցունքի չթափվող,
հինավուրց լճեր կան,

Պատկերներ, որոնց մեջ
քայլում ենք ամեն օր,
մի տեղ է, որտեղ մենք
փայլում ենք ամեն օր։

Ճոճվում ենք, նա մեզ հետ
Ճոճվում է թախծալի,
շարում է մեր առջև
պատկերներ բաղձալի։

Սիծաղը ցողում է
մեր բոլոր ափերին,
և հեշտ է հարմարվում
մեր բոլոր չափերին։

Մեզանից պղտորվում,
սնում է ինքը մեզ,
իր մաքուր թարմությամբ
զինում է ինքը մեկ։

Լռում ենք—մեզ համար
խորքեր է բաց անում,
խոսում ենք, մեր ձայնը
մեր դեմ է բարձրանում։

...Եվ լռեք, մի՛ ասեք,
ախ, մարդիկ դաժան են,
կարող է մեզ օդը
գդալով բաժանեն։

Եվ, իբր, հենց այնպես,
խնդալով բաժանեն,
ծիծաղով, կատակով,
թնդալով բաժանեն,

Չթողնեն ինձ ու քեզ
կախվելու մեր թելից,
մի օր էլ ինձ ու քեզ
զնդանով բաժանեն։

ԱՆՍԱՀՄԱՆ ԼԵՌԸ

Ես քեզ չեմ ասելու ոչ գգվալից խոսքեր,
չեմ խոսելու
քեզ հետ
աղոթքներով վերջին,
դու՝ Անսահման մի լեռ,
ես՝ լոկ մի շշնջյուն,
որ խառնըված է քո
ամենօրյա շնչին։

Դու՝ Անսահման մի լեռ,
Դու՝ Արարատ,
իսկ ես
քիչ է մնում քո դեմ
արձանանամ այսպես
ու ոչ մի բառ չասեմ,
չասեմ ոչ մի հնչյուն.—
չէ՞ որ լեռն Անսահման
միլիոն տարին մեկ է
հրաբուխով ճչում։

Այնքան մաքուր ես դու
այսօր
և այնքան պարզ,
կապույտի մեջ այնպես
անսահման ես հառնել,
որ ուզում եմ քեզ պես
լինել մեծահոգի,
քեզ պես ներել նրանց,
ովքեր քո անունը,
մեծությունը,
փառքը
իրենց չնչին խոսքի
ցավերին են խառնել։

Այնքան մաքուր ես դու
այսօր
և այնքան պարզ,
կապույտի մեջ այնքան
անսահման ես կանգնած,
որ թվում է կյանքի,
լույսի,
երջանկության
շող ու շռայլն ամբողջ
քո խորքում է փակված։

Մինչդեռ, ո՞վ իմանա,
դարերի ինչ ցավեր
և ինչ տագնապներ են
աճում հոգուդ խորքում,
որ անսահման դարեր
անվերջ պիտի եռան,

և ո՞վ կհասկանա,
թե ի՞նչ անմեկնելի
ցավերով է ապրում
Անսահմանը լեռան։

◆

Մութն օրորվելով
նստում է ծառին.—
ծառն ինքը արդեն
մասնիկն է մութի։

Մութն օրորվելով
նստում է բառին.—
բառն ինքը արդեն
մասնիկն է մութի։

Մութն օրորվելով
կուլ տվեց տարին.—
ախ, տարին ինքը
մասնիկն է մութի։

Խոստովանանքս
ծանր է ավելի,
քան ծանրությունը
իմ լուռ ամոթի։

ՕՐՈՐՈՑԱՅԻՆ

«Այսօր էլ ցավում է իմ սիրտը,
այսօր էլ տխուր եղանակ»—
չեմ ուզում, որ ներեք մեղքերս,
չեմ ուզում ինձանից նեղանաք։

Հարբած եմ հնամյա գինու պես,
հարբած եմ միրաժով երեկվա,
հարբած եմ անսահման գիշերով,
հատ ու կենտ աստղերով ցերեկվա։

Ճոճվում եմ մուժի պես անիմաստ,
կգնամ, ձորերը կլցվեմ,
որ մի օր ջերմանամ արևով
և ապա հողի մեջ ներծծվեմ։

Ես տեսա գույները ձեր շքեղ,
ես տեսա խրախճանքը ձեր մեծ,
և, ինչ ցավ՝ մի տխուր եղանակ
անսահման իմ թախիծը մեղմեց։

Մի տխուր, հնամյա եղանակ
այն հեռու դարերից դուրս պեղված,
որի մեջ մի բոբիկ հովվուհի
երգում էր շուրթերով մղեղված։

Երգում էր մեղմորեն ու հանգիստ,
երգում էր իր կարոտը թաքուն.—
այդ երգը ես հիմա լսեցի
մեն-մենակ մեկնըված ծմակում։

Եվ հետո խմեցի թունդ գինին,
որ շռայլ արևով ես լցվեմ,
բայց հիմա ճոճվում եմ մուժի պես,
որ հետո հողի մեջ ներծծվեմ։

Եվ ի՞նչ են գույները ձեր շքեղ,
և ի՞նչ է խրախճանքը ձեր մեծ,
երբ տխուր այդ փոքրիկ մեղեդին
անսահման իմ թախիծը մեղմեց։

«Այսօր էլ ցավում է իմ սիրտը,
այսօր էլ տխուր եղանակ»...
չեմ ուզում, որ ներեք մեղքերս,
չեմ ուզում ինձանից նեղանաք։

◆

Եթե ամեն ինչ մեր ճանապարհին
ի վերուստ այսքան հստակ է դրված,
ինչո՞ւ է կյանքը այսքան դժվարին,
և հոգին՝ այսքան մութ ու գրգռված։

Օրերն ինչո՞ւ են տրտմորեն անմիտ,
և մարդիկ այսքան տագնապոտ ու չար,
և իրար հանդեպ ճղճիմ ու նվաստ,
և բախտի հանդեպ տրտմորեն անճար։

Ինչո՞ւ է այդպես,
ի՞նչ գաղտնիք կա, Տե՛ր,
հավիտենական քաոսիդ խորքում,
դու արարում ես մի՞թե լոկ ճորտեր,
որոնք քո դեմ են անվերջ բողոքում։

Կամ քո գթության աղերսողն են խեղճ,
կամ քո զայրույթի ստրուկն են հլու,
նրանք չեն ապրում գորովանքիդ մեջ
առանց քո ճորտի ճորտը լինելու։

Ինչո՞ւ է այսպես,
ի՞նչ գաղտնիք կա, Տե՛ր,
ի՞նչ դև ես դրել մարդկանց սրտերում,
մեկը մյուսին դարձընում ես կեր,
հետո դժոխքիդ համար մթերում։

Տանում ես նրանց, ձուլում ես կրկին
ուրիշ ձուլվածքով, սակայն նույն կավից,
և տառապում են նրանք քո ձեռքին
ուրիշ սրտերով, սակայն նույն ցավից։

...Իմ ցավերի մեջ լուռ տապակվելով,
ես իմ օրերը ապրում եմ համառ,
հողից պոկվելով,
հողին հակվելով՝
արվեստի անսուտ հրճվանքի համար։

◆

Անցանք թեթև
ու տրտմորեն
անմիտ անցանք,
անցանք՝ որպես
մութ օրերի
մռայլ հանցանք։

Անցանք տխուր
երազելով,
օրերի դեմ
կակազելով,
կյանքի թելին
ուլունքների
նման անգին
շարելով մեր
օրերը որբ
ու տրտմագին։
Հիմա էլ ո՞վ
գուրգուրելով
պիտի կրծքին
տանի հպարտ
ուլունքաշարն
այդ շափյուղա,
հիմա էլ ո՞ւմ
կրծքի վրա
տրտմությունն այդ
պիտի շողա...

◆

Արի, զավակս, արի, սիրելիս,
աբա, քեզ տանեմ ավետյաց երկիր,
ազատեմ կյանքդ չարքերի ձեռքից,
դրախտի երկիր տանեմ քեզ, արի։

Թաթիկներդ անուշ դիր կրծքիս վրա
և ինձ ողողիր աչքերիդ լույսով,
այնտեղ պիտի մենք քրքջանք ազատ,
և պիտի ազատ ապրենք երկուսով։

Նայիր աչքերիս երկար ու երկար,
նայիր մեղմորեն ու նայիր անհագ՝
դու պիտի փակես քո ձեռքով նրանք
և կրկին մնաս հավիտյան մենակ։

Արի, զավակս, արի, սիրելիս,
արի քեզ տանեմ դրախտի երկիր,
ազատեմ կյանքդ չարքերի ձեռքից,
և դու ինձ դառը հոգսերից փրկիր։

ՃԱՌԱԳԱՅԹԻ ԿՅԱՆՔ

Երբ ճառագայթը ճեղքում է մութը
առանց որևէ դիմադրության,
հետո շերտ առ շերտ բացում է հերթով
բոլոր ծալքերը թանձր լռության,
ինձ թվում է, թե այդ ես եմ այդպես
լցված տաքությամբ կորած բարության,
այդ ես եմ այդպես թեթև ու հանգիստ
բացում ծալքերը քնած բնության։

Նրա հետ մեկտեղ հայտնագործելով
լեռներ, հովիտներ, դաշտեր ու ձորեր,
նրա հետ մեկտեղ ժպտում եմ նրան,
որ շողերի հետ «քելեր ու ցոլեր».—
օծում եմ նրան երկնային ցողով
և ինձ գցում եմ լճեր ու ծովեր,
որ մարգարիտներ լույս աշխարհ բերեմ
և նրա քայլերին վայելող ձոներ։

Եվ երկիրն ամբողջ, ժպիտներ ու լաց
Նրա հետ մեկտեղ հայտնագործելով,
չորացնում եմ ես աչիկները թաց
Նրա ջերմությամբ և նրա ձեռով։
Նրա ետևից վազում եմ խելառ
և խոտերի մեջ գալարվում թեթև,
փնտրում եմ սիրո ստվերը փափուկ,
հետո ննջում եմ ստվերի ետև։

Եվ ամբողջ մի օր լուռ թափառելով,
անթիվ ձայներ եմ լույս աշխարհ հանում.
Ձայներ, որոնք լուռ տանջվել են անվերջ
գիշերվա մթին ապաշխարանում։
Գուրգուրում նրանց, շոյում եմ տաքուկ,
նրանց հավատը լուռ նորոգելով,
ապրում եմ մի ողջ հավիտենություն՝
հավիտենության հիմնը ոգելով։

Եվ ծերանում եմ հոգնած, վաստակած,
ճառագայթի հետ ծերանում եմ ես
և պատրաստվում եմ նրա հետ շիկնած
«բարի գիշերս» շշնջալու ձեզ։

Սակայն երբ նորից փչում է քամին,
և կծկվում է աշխարհը ցրիվ,
ուզում եմ վազել նրա ետևից,
քանի դեռ մութն ինձ չի ծածկել լրիվ։

◆

Ամպը քարի ճեղքով
կիրճի մեջ է լցվում,
իսկ երկնքում այնքան
ամպե կիրճեր, այնքան
հառաչներ ու ճիչեր,
այնքան ձորեր մթին
և վարդագույն խաչեր,

որ ամպն ասես հոսում
երկնի եկեղեցուց,
պարուրում է ձորում
կանգնած եկեղեցին։

Ուխտավոր է։ Մի քիչ
հանգիստ կառնի այնտեղ,
կմլմլա մի քիչ
պատերի մեջ անձուկ,
հետո ոգեկոչման
առաջին իսկ կանչից
նա կհիշի իրեն՝
նա կդառնա արցունք։

◆

Ես ամեն անգամ իմ հավատի մեջ
կրկին ամրանում,
և բախտիդ հանդեպ
իմ արյան միջից
հավատարմության խոսքեր եմ քամում.—
քանի որ, իրոք, քեզ հավատալով,
ինձ եմ հավատում,
քեզ նվիրվելով՝
նվիրվում եմ ինձ,
քո տառապանքը քեզնից զատելով՝
ինձնից եմ զատում,
և ժպիտիդ պես
ծաղկում եմ ինքս իմ նվիրումից։

Չեմ ուզում լինել ես քո մարգարեն,
քանի որ ինքդ ապրում ես կարծեմ
առանց մարգարե,
և դեմքդ ամբողջ— պատկերդ խոհուն—
մարգարեների դեմքեր են քարե,
և միտքդ ամբողջ
մարգարեական խոկում է ներհուն.—

այնքան բազմածալ,
այնքան բազմանիստ,
որ քարերդ անգամ,— իմաստուն քարեր,—
որ քարերդ անգամ իրար չեն ներում։
Ես նստել էի պատուհանիդ դեմ
և լսում էի նրանց հինավուրց
որոտմունքը խուլ,
նրանց ահռելի դղիրդը քարե,
և տեսնում էի, որ այդ տարերքում
կարող է կորչել ամեն մարգարե,
որ գուրգուրելով քո դեմքն անճանաչ՝
պիտի քեզ կոչի ներդաշնակության,
գրկիդ մեջ ծիծաղ ցանելուց առաջ։

Ես նստել էի պատուհանիդ դեմ
և լսում էի արարմունքներիդ
որոտմունքները երկիր-երկնային՝
սպասելով լո՜ւյս,
անսահման մի լո՜ւյս,
և պարզ ու հստակ տեսնում էի, որ
քո ներսում քնած Արևներ կային,
և քո Աստղերը,
քո մեծ Աստղերը
շողշողում էին պատուհանից դուրս։

◆

Մայր մտնող արևին ասացի՝
Դու վաղը նորից ես ծնվելու,
և վաղը քո շքեղ ծնունդին
շողարձակ երգեր են ձոնվելու։

Կձոնվեն,
և դու էլ ժպտալով,
կարծես թե ոչ մի բան չգիտես,
կսահես կամարով քո կապույտ
ամենից զորավոր երգի պես։

Սակայն դու
այն բոլորն, ինչ թողիր
գիշերվա փափկամութ քողի տակ,
չե՛ս տեսնի էլ երբեք, չե՛ս գտնի
պտտվող քո ճամփին բովանդակ։

Ձեմ ասում,
թե դու էլ ինձ նման
կարոտի ափսոսանք ունենաս,
ի՞նչ արժե աշխարհը քեզ համար,
գեղեցիկ ու տխուր պատկերն այս։

Ի՞նչ արժեն տանջանքներն այս անմիտ,
ի՞նչ արժեն օրերն այս հոլովվող,
երբ դու կաս, եղել ես, կլինես,
իբրև լույս,
իբրև օդ,
իբրև հող։
Ձես լսի շշուկը շուրթերի,
որ վերջին ցոլքովդ շիկացած
ողջ գիշեր դողացին կարոտից,
և այդ խեղճ կարոտը հեկեկաց։

Ձե՛ս լսի,
դու վերին զորավոր,
չե՛ս լսի,
դու հզոր առաքյալ,
և ոչինչ չի լինի լսելու,
երբ նորից ուզենաս աշխարհ գալ։

Եվ կրկին չեղածը լսելով,
դու վաղը նորից ես ծնվելու,
և կրկին քո շքեղ ծնունդին
շողարձակ երգեր են ձոնվելու։

Դու հզոր,
դու վերին առաքյալ,
ամեն օր դու լքող ու լքյալ։

◆

Վերին ոլորտներից,
կապույտներից անհուն
անտես աշխարհների
ծիրից եթերային,
հոգուս խորքը մի տաք
մեղեդի է սահում,
որ հունցում է լույսով
մարմինն իմ մարդկային։

Ինձ հունցում է լույսով,
փխրեցնում է նա ինձ,
տաքուկ սարսուռներով
անջատում է մահից,
ծաղկեցնում է սիրտս
ճերմակ լոտոսներով,
ոչ չկորչեմ հանկարծ
անմիտ բորբոսնելով։

Աշխարհ գալուս համար՝
միայն մի ակնթարթ,
և գնալուս համար՝
միայն մի ակնթարթ.—
զույգ սյուներ են սրանք՝
կապույտ ու սև,
սրանց միջև կյանքս
երկար սպասումի
մի հայացք է անթարթ։

◆

Ի՞նչ կա, կնստենք ամեն օր այսպես
և նույն հարցերը կտանք ու կառնենք,
այրվող շուրթերով նույն քուրայի մեջ
վառվող մտքերը իրար կխառնենք։

Կխոսենք երկար, կլռենք կրկին,
ոչ մեկի համար բախտ չենք գուշակի,
մեր լուռ աչքերից լուռ կբարձրանա
տրտում շամանդաղ, կարոտի շոգի։

Եվ կդժգոհի այն կյանքը մեզնից,
որի համար մենք լույսաշխարհ եկանք,
այսինքն՝ որ ոչ եղանք աղորիք,
ոչ ոսկեհատիկ աղացող երկանք։

Սակայն վերստին ապրում ենք ու կանք,
մեր մեջ ծաղկում են վարդեր ու քրքում,
քանի որ հույսը ապրում է մեր մեջ
և իր պատյանը երբեք չի լքում։

Չհավատալով խաբկանքին խոսքի,
չհավատալով վերին ատյանին,
զոհաբերելով օրերը ոսկի՝
մենք մեզ զոհում ենք Հույսի պատյանին։

Սնում ենք անվերջ պատյանն այդ սիրուն,
տալիս ենք օդին, որ չժանգոտի,
վրան ցանում ենք օծանելիքներ,
շոյում, լվանում, կապում ենք գոտի,

ադամանդներով զարդարում նրան,
արժեք ենք տալիս, բայց արի ու տես,
որ վերջիվերջո, ժամանակի հետ
մի կողմ ենք նետում անպետք իրի պես։

Նետում ենք դեպի պարզ անգոյություն,
որ ճանաչում ենք հոտից ու գույնից,
և Հույսն այնտեղից լողում է աշխարհ՝
կրկին ծնվելով անգոյությունից։

Գիտակ լինելով հոսքին այս տարտամ,
աշխարհում անթիվ կատարվածներին,
մենք ամեն անգամ նոր հույս ենք տալիս
հույսի պատճառով խաթարվածներին։

Եվ կյանքի չքնաղ գեղեցկության մեջ
թեև ոչ մեկին բախտ չենք գուշակի,
բայց մեր աչքերից կծխա անվերջ
կարոտի թախիծ և հույսի շոգի։

Օրվա այն պահերին,
երբ մշուշն է իջնում,
երբ որ թուլանում է օրը պրկումներից՝
ամեն տեսակ հոգսի,
գործարքների,
կրքի,
երբ որ տղամարդիկ,
կարծես ուրիշ տեղից հենց նոր վերադարձած,
ուրիշ վերհուշներից բռնկվելով կրկին,
մարգարեանում են իրենց կանանց համար՝
թե այս վերջիններս երբեք մարդ չեն դառնա,
և որ կանայք, այնքան իբրև ներողամիտ,
իրենց անջրանցիկ հայացքներով
սպանում են իրենց տղամարդկանց
անհոգեբան; փոքրիկ զորությունը չնչին,
երբ որ տղամարդկանց
աղաղակը՝ հանուն ճշմարտության
խլանում է օրվա աղմուկներում,
կամ էլ իրենց կանանց մուշտակներում փափուկ,
օրվա այն պահերին,
երբ որ մանուկները ունեն լրիվ աշխարհ,
քանի որ ծնողները իրենց հետ են արդեն,
ես իջնում եմ դանդաղ
խորքերն այն լռության,
որ ծնվել եմ լոկ ես պաշտպանելու համար։

Եվ իջնում եմ այդ ողջ աղմուկներով,
հոգսով,
գործարքներով,
կրքով անպտղաբեր,
փողոցների վրա աշնան տերևների
անհրապույր, վերջին սվսվոցով
և աշունով
անգամ մի ամառվա շիվի,
որը հասցրել է ընդամենը, գիտե՞ք,
երկու-երեք տերև ճառագայթել երկիր,
և որ հիմա արդեն աշուն ունի,
այսինքն թե՝ նա էլ տեսավ անքննելին,
այսինքն թե՝ նա էլ
ՈՒՆԻ ԿՈՐՈՒՍ.—
ահա այս բոլորով և ժպիտով նրանց,
ովքեր ժպտացել են իրար և ինձ համար,
մենակ ես իջնում եմ խորքերն այն լռության,
որ ծնվել եմ լոկ ես պաշտպանելու համար։

Այնտեղ— այդ լռության հնձանի մեջ
դատարկում եմ բոլորն՝ ինչ-որ տարա
և քամում եմ բոլորն՝ ինչ ունեի,
հետո խոհի քարե երկանքները հսկա
դնում դրանց վրա
և լուռ սպասում եմ
ուրիշ հնչյունների։

Այո՛, ուրի՛շ, ուրի՛շ,
բոլորովին ուրի՛շ...
սպասում եմ ԵՐԳԻՆ,
սպասում եմ համակ լսողություն դարձած,
որ, ուր որ է, հիմա
պիտի ծնվի վերքից
այն դալարուկ շիվի,
որ ձմռան դեմ կանգնած, դողդողալով,
ճանաչում էր իմաստն, անքննելին,

ճանաչում էր մահվան խորհուրդը մեծ,
որով դառը կյանքն էլ
քաղցր երգ է դառնում։

Հաջորդ գարնանն այդ նույն շիվի մոտով
ես անցնում եմ խորին խոնարհությամբ՝
քանի որ նա արդեն
ապրեց մի կյանք,
իսկ ես բռնկված եմ միակ մայրամուտով։

Եվ նրա մոտ այնպես թեթև եմ ես նայում
օրվա աղմուկներին, հոգսին՝ չնչին բաներ,
Ես կարող եմ ապրել
Նրա ստվերի մեջ,
և կարող է ապրել ամբողջ մի ժողովուրդ՝
եթե ապրում է նա։

Օ, լռության հնձան...
երբ այդ ամեն բանից
զուլալ երգն է քամվում
կաթիլ-կաթիլ,
ես նայում եմ նրա շողշողանքին մաքուր,
ես խմում եմ նրա զրնգոցը լուսե,
որով պիտի հոգիս փրկվի և համբառնա.—
չքանում են բոլոր
աղմուկները պատիր,
և նույնիսկ այն, որ լուրջ տղամարդիկ
մարգարեանում են իրենց կանանց համար՝
թե այս վերջինները երբեք մարդ չեն դառնա։

ԾՆՈՒՆԴ

Մշուշ, մառախուղ և տանջամահ
երազանքների շղթա անվերջ՝
մանուշակագույն ու գորշ ու պաղ
բլուրների և դաշտերի մեջ։

Քամին սրտիցդ փուխր աշնան
տերևների հոծ երամ պոկում,
լցնում է դատարկ պարկը հույսիդ,
և մորմոքում է, և ամոքում։

Հսկա վիհեր են շուրջդ այսօր,
որոնք լցված են լոկ մի գույնով,
ամենուր թանձր գորշությունն է
հոսում քո փայլուն երկրի հունով։

Երկինքը փակ է, արեգակին
չես տեսնի անգամ փակ աչքերով,
լցված է շուրջը հալածական
միտքը շարշարող մութ քաջքերով։

Բայց գոնե մի տեղ պիտի կանգնի՞
հուսահատության հոսքը առատ.—
...և հանկարծ երկնի պատռվածքից
դանդաղ ծնվում է Լյառն Արարատ։

ԱՆԵԼԱՆԵԼԻ ՓԱԽՈՒՍ

Քեզ թվում է, թե
անվերջ փախչում ես դժբախտությունից,
փախչում ես կյանքի ցավից ու թույնից,
և դժբախտության անվերջ անհեթեթ
և անվերջ անմիտ անմտությունից։

Եվ թվում է քեզ,
թե այդ խելահեղ վազքն իր վախճանը
կունենա մի օր,
կհանգստանաս արտերի նման,
կհանգստանաս ծաղիկների պես,
մինչև վախճանը կգա մեղմօրոր
և թույլ տրտմությամբ կպարուրի քեզ։

Օ՜, ի՜նչ հոյակապ վախճան կլինի,
քանի որ այդպես վերջավորվելով,
կդառնաս խաղող, կդառնաս գինի,
և լույսի նման միշտ հոլովվելով,
կմնաս հյուլեն անծայր-անհունի։

Բայց դու,
փախչելով դժբախտությունից,
չես էլ մտածում,
որ դա հենց քոնն է,
որ քեզ հալածում...
և դարձնում է քեզ իր ճորտն ու գերին,
որ երբե՜ք, երբե՜ք
չի հալածելու նա ուրիշներին,
նա դուրս չի գալու երբեք իր հունից,
կամ ուրիշների ինչի՞ն է, թե դու
փախչում ես հենց քո դժբախտությունից։

Ուրեմն՝ գնա ճանապարհը քո,
և այրիր կյանքդ՝ որպես տխուր ջահ.—
դժբախտությունդ գալիս է քեզ հետ,
միայն թե այնպես գուրգուրիր նրան,
որ սիրտդ, սիրտդ ցավից չճչա։

Եվ որ վախճանը հենց այնպես լինի,
որ դառնաս խաղող, որ դառնաս գինի.—
և լույսի նման միշտ հոլովվելով,
հոլովվես՝ իբրև հյուլեն անհունի՝
քո ցավերի հետ վերջավորվելով։

Բաբախյունն այնպես հեշտ է հասկանալ,
բաբախյունն այնպես հեշտ է ընկալել՝
քո չքնաղ կրծքի վանդակը փոքրիկ
կարկտահարում են ծովային քարեր։

Ալիքներն ուժգին բախում են ներսից,
ալիքների մեջ խեղդվում են բառեր.—
բաբախյունն այնպես հեշտ է հասկանալ,
բաբախյունն այնպես հեշտ է ընկալել։

Խեղդված բառերի գերեզմաններին
իմ մեջ շարված են մամռապատ քարեր։
Իմ ներսում հիմա
մամուռ է աճում,
որ ալեկոծել չես կարող բնավ
և ոչ էլ գոնե կարող ես վառել։

Այդ մամուռների վրա թևաբեկ
հիշողությունն է ճայի պես ճչում՝
քո կորած կյանքի հիշողությունն է
սրտիդ բաբախի ամեն մի հնչյուն։

Այնտեղ, հրաշալի պարտեզներում
լողում է հովը մեղմ՝
իմաստունի ձեռքին,
որ կարծես թե լինի մի թափանցիկ աշուն,
իմաստունի ձեռքին,
որ դրված է ողորկ ձեռնափայտի վրա,
փսփսալով կյանքի մի ներդաշնակ շարժում։

Փափուկ, ինչպես միտքը,
որում կարելի է
նորածընի թավիշ մարմինը փաթաթել,
և որ ազատվել է
կյանքի դիմադրության կարծրությունից,
հովը շուլալվում է
աշնանային փխրուն արևի հետ,
և միասին նրանք
ազատում են գույներն ամռան թանձրությունից։

Այնտեղ,
հրաշալի պարտեզներում
ողորկ ձեռնափայտը հենարանն է կյանքի,
այն սպառվող կյանքի,
որ մղվում է դեպի
խորքերն իր մանկության,
իսկ այնտեղից այնկողմ՝
դեպի Անէություն։

Դեպի պայծա՜ռ, չքնա՜ղ, մաքո՜ւր անէություն։

Ո՜չ,
մահ չկա բնավ։

Այսքան փխրուն, փափուկ արևի հետ,
այսքան անիրական հովի թավիշ թևին,
այսքան հրաշալի պարտեզներում,
այսքան երկար, դժվար կյանքից հետո
էլ մահ չկա բնավ,
կա ետադարձ փոքրիկ ճամփորդություն՝
դեպի մանկությունը,
ապա դեպի դրախտ,
և այնտեղից արդեն՝
դեպի անէություն։

ԻՍԿ ՆՐԱՆՔ ԱՅՆՏԵՂ ԵՐԳՈՒՄ ԵՆ ԴԵՌ

Մեր ջահելության բորբ օրերին,
երբ որ Պուշկինն անգամ թվում էր սառ,
երբ գորշ առօրյան ծածկում էինք
երազանքներով հազար-հազար,
այն հեռավո՜ր, հեռուստ՜ւ, բորբ օրերին,
տերևների նման անմեղ ու խեղճ,
շրշում էինք վարձու նկուղներում,
գինու, ծխի, մոմի բուրմունքի մեջ։

Երգում էինք խոնավ, տխուր երգեր,
ապա երազների փայլով ներհուն
շրջում էինք նեղլիկ փողոցների
թաղարներով ծածկված նկուղներում։
Եվ հայացքներում մեր մշուշոտ
ծխում էր կնոջ կարոտը բորբ,
և մնում էինք կրկին լքված,
և մեր կարոտը մնում էր որբ։

Այդպես անցնելով օրերն անտես
և մեզ կոփելով հազար կողմից,
կարծր մի թախիծ թողեցին մեզ
երազանքների կապույտ հողմից։
Կարծր մի թախիծ թողեցին մեզ,
և ոչինչ չկա զարմանալի,
որ երգերն այսօր շրջում են խեղճ
նկուղների մեջ դաժան դարի։

Նրանք շրջում են կարոտը հին
և թրթռում են մոմի հանգույն,
բայց նրանց անտես թրթիռի մեջ
բոց նժույգներ են խելառ վարգում։
Նրանք թռչում են հողմի նման,
և նկուղների վրա բառով
դեռ դիմանում է ինչ-որ մի կերպ
մեր կարծրությունը երերալով։

Իսկ նրանք այնտեղ երգում են դեռ
և հաղորդվում են ոգու լույսով,
և նրանք այնտեղ հերքում են դեռ
մտքի ամլություն և ոգու սով։

◆

Վայրկյանները ջարդված ծառեր են—
կախվել են օդի մեջ։

Վայրկյաններն արցունքի զրնգուն կաթիլներ են—
մեր ծանր ոտքերի տակ
տափակում են նրանք,
ու դառնում են աշուն՝
նախշուն կամ ոչ նախշուն։

Անցնող տարիները
կտրված մատներ են մեր ձեռքերի վրա.—
անցնող տարիները
կտրված ձեռքեր են,
կտրված ծառեր են.—
մենք քանի՞ ձեռքեր ենք կորցրել աշխարհում։

Ասում են՝ չի եղել,
ասում են՝ չունեինք.—
մենք մի սիրտ ունեինք,
դարձրինք դամբարան,
և մեր սիրտը հիմա լիքն է այնքան,
որ օդ չկա անգամ աճյունների համար։

Մենք քանի՞ ձեռքեր ենք
կորցրել աշխարհում։

◆

Հին դարպասների գոց աչքերի դեմ
մի ծեր կատու էր մլավում հոգնած.—
փակ դարպասների, ծեր կատուների
աղջամուղջի մեջ
խուլ զառանցում էր քաղաքը քնած։

— Ախ, թե բացվեին դարպասները դոց,
և այն աշխարհը շպրտվեր կատուն...

մի ծեր աքաղաղ ծուղրուղու կանչեց,
և մի բանտարկյալ հառաչեց բանտում։

ՊԱՐԻՍՊՆԵՐ

Պարիսպների տակով քայլում եմ ես,
ու երբ կանգ է առնում իմ մարմինը հոգնած,
պարիսպները քայլում են իմ վրայով։

Իմ գլուխը ինձնից բարձրանում է ահով,
ստվերացած,
դժգույն,
գլորվում է պարիսպների
գլուխների վրա ատամնավոր։

Նա նայում է շուրջը՝ աչքերը փակ,
ու խելահեղ վազքից ընդարմացած
թե ուզում է ընկնել
պարիսպներից այն կողմ,
ինչ-որ անհայտ ձեռքով կտրվում է հանկարծ
ու հայտնվում ուղիղ ոտքերիս տակ։

Շուտով շոգ ամառ կգա վերստին,
կապույտ ջրերը դանդաղ կօրորվեն,
կանաչ թփերում, ստվերների մեջ
հոգնած հովերը լուռ կմոլորվեն։

Եվ կարծես թղթե սագեր ու բադեր,
որ մանուկներն են շինել տետրերից,
դանդաղ կսահեն ջրերի վրա՝
ազատված ծանր քայլելու բեռից։

Շուրջը կլցվի անուշ բուրմունքով,
կյանքը կդառնա լոկ շնչառություն,
կքանդվեն պրկված նյարդերը բոլոր,
չի շարժվի տեղից ոչ մի չարություն։

...Հավատամ խոսքիս և ննջեմ մի քիչ,
շոգ ուղեղս տամ կապույտ ջրերին.—
խոսքն այն դեպքում է լինում ամոքիչ,
երբ դիմանում է իր ծանր բեռին։

Նա դիմանում է իր ծանր բեռին,
իսկ ես իմ բեռին էլ չեմ դիմանում,
դրա համար էլ սառույցի միջից
տոթակեզ ամռան պատկեր եմ հանում։

◆

Երբ մանկությունդ
թողնում ես հեռու սարերի վրա,
երբ մանկությունդ թողնում ես մենակ
հեռու լեռների լանջերին փափուկ,
նա հովերի հետ խաղում խուսափուկ,
նա աստղերի հետ զրուցում անհագ,
հետո հոգնելով մենակությունից,
դանդաղ սուզվում է կրծքի մեջ լեռան։

Նա լուռ սուզվում է կրծքի մեջ լեռան,
ինչպես լեռնաբուխ ակունքները ջինջ,
որ լուրթ հեքիաթներ հոլովում աննինջ,
անհուն խորքերից հանում են խոսքեր
պարզ ու պաղպաջուն,
որոնցով հետո քո ամբողջ կյանքում
քո մանկությունը դու ետ ես կանչում,
իսկ նա՝ միայնակ,
նա՝ տրտում, անքուն,
դանդաղ սուզվել է կրծքի մեջ լեռան։

Ես ետ եմ եկել, որ գտնեմ նրան։
Գտնեմ։ Բայց որտե՞ղ կարող եմ գտնել.—
ակունքը այնպես ամուր է փակված,
սպի է կարծես,
լոկ շուրջը, իբրև պարզ հիշողություն,
քարերն են քրտնել։
Թփերը երկար մազարմատներով,
քարերի վրա ուժը վատնելով,
հասնում են նրան,
քանի որ նրանց տերևներն ահա
շողում են կանաչ, ծանոթ արցունքով։

Ես նայում եմ լուռ, խոր ակնածանքով,
թե ինչպես նրանք ցույց են տալիս ինձ
այն դժվար, խորունկ ճանապարհը, որ
գնում է դեպի այն խորքերը խոր,
ուր որ միայնակ, մի խեղճ մանկություն,
պարզ ու պաղպաջուն ակունքների հետ
դանդաղ սուզվել է կրծքի մեջ լեռան։

Ես իմ մեղքերին իբրև թողություն
շշնջում եմ այն խոսքերը մաքուր,
որ շրթունքներիս
դեռ ծաղկում են, կան՝
իբրև անմոռաց հին հիշողություն։

Իսկ ակունքները կբացվեն կրկին,
երբ աշխարհ կգան նոր բանաստեղծներ
այս եզերքներում,
և մանկությունը կխաղա դարձյալ
աստղ ու հովի հետ.—
միայն թե նորից մենակ չմնա,
քանի որ նրան լքողներն իրենց
երբեք չեն ներում։

◆

Ուրախության ի՜նչ անսահման կարոտ,
ի՜նչ ծիածաններ իմ հոգու խորքում,
ինչ երազներ կան, ինչ պայծառ դեմքեր,
քնքշությունների ի՜նչ սերեր անքուն։

Եվ սրանց համար ծաղկում է իմ մեջ
կատարելության մի անհուն թախիծ.—
և սեղմում են ինձ կրքերը չնչին,
բոլոր կողմերից, աջից ու ձախից։

Եվ սեղմում են ինձ կրքերը չնչին,
և լցնում են ինձ ընդվզման բոցով.—
թախիծն ուզում են սպանել իմ մեջ
չնչին խոսքերի սուտ կրակոցով։

Եվ խլացնում են խնդությունն իմ մեջ.—
ես էլ կարող եմ հավետ կարկամել՝
երբ որ ուզում են կոպիտ ձեռքերով
իմ նրբին սրտից թախիծը քամել։

ՏԻՐԱՄԱՅՐ ՄԱՐԻԱՄ

Ով դու սուրբ Մարիամ, մայր Քրիստոսի,
մայր երազների, մայր ծլող հույսի,
ակունք բարության, գանձատուն լույսի.—
ամեն առավոտ,
առավոտ ծեգին
հեռու երկնքի ամպե դաշտերում,
ամպեղեն շորեր կապած քո մեջքին
և ոտաբոբիկ, լույսի պես թեթև
դու փնտրում ես քո կորած մանկիկին։ —

Եվ գտնում ես դու,
ուզում ես իջնել,
բայց երկրի վրա իջել է արդեն
գիշերն ահարկու։

Օրորում ես քո կորած մանկիկին.—
երկրի և երկնի սահմանագծում
հոգնած ննջում ես՝ գանձդ քո ձեռքին։

Զարթնում աստղերի արծաթ շշունջից,
նա դուրս է թռչում քո գրկի միջից,
և խառնվում է ինքն էլ աստղունքին։

Չէ՞ որ, ով Մարիամ, ով Աստվածամայր,
քո Որդուն մի օր խաչել են մարդիկ,
իր մեծ Հավատի,
մեծ Ճշմարտության,
մեծ Սիրո համար։

Եվ կրկին հաջորդ առավոտ ծեգին
դու փնտրում ես քո կորած մանկիկին,
և երկարում է ճանապարհդ այսպես
ու դու չես հասնում, չես հասնում դու մեզ։

ՍԱՐԴԸ

Մեր անքուն բարեկամները
ոստայն են հյուսում մեզ համար,
անքուն
և անտրտունջ,
նույնիսկ ձայն չեն հանում,
որ չխախտվի իրենց անդուլ սևեռումը։
Մեր անքուն բարեկամները,
սևեռուն բարեկամները
ամեն օր և ամեն ժամ
ոստայններ են հյուսում մեր մտքերի համար։

Իրենց բարակ, փխրուն ոտքերին օրորվելով,
փափուկ, ինչպես մութը՝ բռան մեջ ճզմրված
և բռան մեջ ճզմած
մութի նման տձև,
նրանք լույսի միջով
քայլում են լուռ, անձայն,
և մեր շուրջը
փափուկ
ոստայն են հորինում՝
իրենց մաղձը երկրին հոլովելով՝
իբրև փափուկ մետաքս,
իբրև մի բան,
որի
ավերման մեջ անգամ
ձայնի նշույլ չկա։

Ես այդ սարդին տեսա քարերի մեջ.—

Լուսնի լույսը, այդ պաղ ջերմությունը,
այդ մտերմիկ, փափուկ հայացքը կեսգիշերին.
որ ես
սկսել եմ սիրել՝
իբրև միակ մաքուր ժառանգություն
իմ խեղճ
ապ ու պապից,
լուսնի լույսը ահա,
որ կարող է մերվել
հողին, քարին, թփին,
մութին անգամ,
լրիվ անջատված էր
այդ սև անիրավից։

Նա մտել էր լուսնի սահմանները՝ ասես
միայն նրա համար,
որ ինձ ցույց տա՝ ինչպես
կարելի է անցնել ուղիղ լույսի միջով
և չկպչել լույսին։

Կարող է և փոքր-ինչ զավեշտական հնչել,
սակայն այդ սարդուկի սուզանավը անձայն
իջել էր հատակը լուսնի ճերմակ ծովի
և սահում էր ինչ-որ տարօրինակ, անդեմ
տարածության խորքում.—
այս խոսքերով, ահա, ես չեմ ուզում ասել,
թե սարդ չկա,
Նրա գոյությունը
ես չեմ հերքում,
ոչ էլ ուզում եմ ես,
որ դուք այդ սարդուկին նմանեցնեք
ձեր շուրջն ապրող մարդկանց,
ոչ էլ ուզում եմ ես,
որ անեծքով բանաք
օրհնանքների համար
կարոտների անդուլ սպասումից
ձեր շուրթերը ճաքած,
ոչ էլ ուզում եմ, որ այս բոլորը հանկարծ
համարեք խենթ կատակ,
ոչ էլ ուզում եմ, որ
ինձ հավատաք։

Բայց սարդը կա,
և դեռ իր պատյանում
անծայր ու անսահման սարդոստայն է մանում։
Նա մեր շուրջը
փափուկ
ոստայն է հորինում
սևեռումով ագահ,
իրեն մաղձը երկրին հոլովելով,
իբրև փափուկ մետաքս,
իբրև մի բան,
որի
ավերման մեջ անգամ
ձայնի նշույլ չկա։

ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆ— 1

Քայլիր մի գիշեր, և երկու գիշեր,
և այնքան, որքան կարող ես քայլել,
գուցե այն աստղը կհայտնաբերես,
որ մարդկանց համար բնավ չի փայլել։

Գնա մի տարի, և երկու տարի,
և այնքան, որքան կարող ես գնալ,
և գնա նույնիսկ այն դժնի պահին,
երբ որ քայլելն է թվում անհնար։

Քայլիր մի տարի, և միլիոն տարի,
մինչև որ հասնես նախապապերիդ,
մի գնահատիր ոչ անցած ճամփադ,
և ոչ էլ չնչին արժեքը բեռիդ։

Եվ եթե հասնես նախապապերիդ,
ուրեմն՝ մոտ ես և ապագային.—

քեզանից առաջ, նրանք շատ առաջ,
բյուր դարեր առաջ ճամփա են ելել։
և նրանք են, որ մոտիկ են արդեն
ապագաներին բոլոր նոր ու հին։

Եվ եթե հանկարծ քո ճանապարհին
նախապապերիդ դու չհանդիպես,
ուրեմն՝ սխալ ճամփով ես գնում,
և ոչ մի հրաշք չի՛ փրկելու քեզ։

ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆ— 2

Մարդիկ, ծնվելով աստղային լույսից,
Ոգու հետ մեկտեղ մայր հողը մտան,
որ մայրը իրենց լույս աշխարհ բերի՝
մայր բնության մեջ՝ պայծառ ոգու տան։

Եվ աշխարհ եկան՝ պարզ, անգիտակից,
լցված մաքրությամբ, սիրով երկնային
ազատության հետ ազատ ճախրելով,
ազնվության հետ բազմելով գահին։

Սակայն ոգու մեջ անհասկանալի
ինչ-որ սարսուռներ, մղումներ կային,
և կավն սկսեց թպրտալ տենդով՝
ելնելու համար գահը երկնային։

Եվ կամաց-կամաց՝
սանդուղք առ սանդուղք,
և կամաց-կամաց՝
հարկ հարկի վրա,
արդարության դեմ քրտինք թափելով,
ձգտեցին ելնել տաճարը նրա։

Սանդուղքներ դրին,
շարեցին հարկեր,
սուր մագիլներով կառչելով ելան,
գերազանցեցին հասակը ծառի,
գերազանցեցին բարձունքը լեռան։

Մղվեցին, ելան տենդագին հևքով,
ինչպես գազանն է հաճույքից հևում,
ելան, և սակայն չհասկացան, որ
ազատությունը մնաց ներքևում։

Մշուշով լցված հայացքը նրանց
կույր իշխանության մղումն էր գերում,
և չէին տեսնում, որ խիղճը մաքուր,
արդարությունը մնաց ներքևում։

Ազնվությունը մնաց ներքևում,
լույս բարությունը մնաց ներքևում,
նյութի սանդուղքով մղվեցին վերև,
սերը խեղդվում էր արյան հերկերում։

Եվ նա, ով հիմա աշխարհ է գալիս,
մղվում է դեպի սանդուղքը նյութի,
սարսափեցնում է աշխարհ եկողին
սուրբ արդարության պատկերը հուսքի։

Եվ այնպես է նա աստծո տված
խորամանկ խաղով նրբին շրջանցում,
որ թվում է թե՝ խիղճ, արդարություն
գազան են վայրի, մարդ են հալածում։

Իսկ ինքը, տեսեք, գնում է դեպի
ակունքը ոգու, տունն ազատության.—
ազատություն է բերելու նա ձեզ՝
ազատությունը հավերժ լռության։

ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆ— 3

Նախ դարպասները փակեցին նրանք,
հետո դռները կողպեցին ամուր,
պատուհանները փակեցին արագ,
ապա փակեցին աչքերն իրենց կույր.—
և հոգում բացվեց մի մեծ երազանք,
որ վաղը պիտի աչքերը բացեն,
դռները բացեն,
բեռները բարձեն,
և դարպասները բացեն աղմուկով,
և քշեն դեպի կույր անհայտություն՝
դեպի Նիրվանա,
կարոտի եդեմ,
բայց երբ տեղ հասնեն—
մթնած կլինի,
կմնան կանգնած
ուրիշ ձեռքերով
ուրիշ տեղ փակված
դարպասների դեմ։

ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆ— 4

Հաճախ ինքնամոռաց, անակնկալ,
առանց ճիգ ու ջանքի,
թեթև, սահուն,
ես մտնում եմ ինչ-որ բառերի մեջ
և կորչում եմ ինչ-որ
բառերի մեջ անհուն՝
ինչպես որ աղմուկը փողոցներից,
դանդաղ ներծծվելով շենքերի մեջ,
փաթաթվում է փափուկ վերմակներով
և խլանում։

Ախ, աղմուկը, այո՛,
որ ծնվելով չոր ու բութ բառերից,
վերջը բառերով է հանգստանում։

Շենքերի մեջ, փափուկ վերմակներում...—
Ես մտնում եմ այդպես բառերի մեջ
և դառնում եմ միայն շնչառություն.—
ոչ մի ավելորդ բան
կամ ավելորդ շարժում,
ոչ աղմուկ կա,
ոչ խոսք,
ոչ շարություն,
ոչ արարքներ ճարպիկ,
ոչ էլ խեղճ ու կրակ անճարություն...
զարմանալի բան է՝
կա ոչ անխղճություն
և ոչ էլ խիղճ,
չկա ոչ չարություն
և ոչ էլ ճիշ.—
կա լոկ անծայրածիր
գոյությունը բառի,
իմ սիրելի, կա քո
գոյությունը բարի,
որ ոչ մի բան,

ոչինչ,
ոչ մի ձևով,
ոչ մի անակնկալ հանկարծությամբ
չի շոշափի կամ թե չի խանգարի։
Եվ ես՝ ոչ մեղավոր,
ոչ էլ անմեղ,
խլանում եմ քո մեջ
գոյության մեջ անհուն,
ինչպես որ աղմուկը փողոցներից,
դանդաղ ներծծվելով շենքերի մեջ,
փաթաթվում է տաքուկ վերմակներով
և խլանում։

ՋՐԻ, ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ՍԱՆԴԱՐԱՄԵՏԻ ՄԱՍԻՆ

Ջուրը՝
խորհուրդը պարզ
ուրիշ մի աշխարհի,
քարերի մեջ շողում
և թափվում է քարին.—
հետո ձորում հանդարտ
հոսում է պարզ մի գետ,
մի գետ՝ լցված կյանքով աշխարհային։

Աշխարհային, այո՛,
քանի որ, տե՛ս, ահա,
ձորի եզրին կանգնած եկեղեցին
երակներդ այդ ի՞նչ խորհուրդներ է լցնում,
և ի՞նչ պաշտամունք է տալիս փոքր ու մեծին։

Սակայն, ահա ջուրը,
որ թափվում է քարին.—
քարը՝ մաքուր զմրուխտ՝
դրված աչքիդ առաջ.—
այդ ինչպե՞ս է քամվում այդքան կապույտ ջրից
այդքան հրաշալի, խելահեղ մի կանաչ։

Այդ ինչպե՞ս է քամվում այդքան կապույտ ջրից
այդքան աստվածային, այդքան զմրուխտ կանաչ,—
գերեզմանի քարերն այդ կանաչի մասին
հիշողություն ունեն՝ եկեղեցու առաջ։

Եկեղեցու առաջ,
ուր հովերը հիմա
ներծծվում են նրա մարմրնի մեջ քարե,
սարսռում են պատերն այդ պաղ թափանցումից,
և աղոթք են ասում՝
անխոսք, անմարդարե։

Ի՞նչ բվվոց է, և ի՞նչ
տագնապ ունի իր մեջ.—
ասես զարհուրելի աղերս է աղեկեզ.—
եկեղեցու տակ է Սանդարամետն անշուշտ,
որ կենդանները այսքան հստակ հասնում են մեզ։

◆

Ինչպե՞ս թե՝ չունեցանք։

Լապտերն առաստաղից հուշում է մեզ
կախաղանի ձևն ու մեր մարմրնի գույնը...

Ինչ-որ բան նվաճեցինք դարձյալ
ու... մնացինք նույնը։

◆

Տեր աստվածը պատահաբար
անց կացավ մեր փողոցով,
մեկից դարձա նշանավոր՝
ճռճռոցով, զնգոցով։

Նա իր ձեռքը գլխիս դրեց
արքայությամբ երկնային,
իսկ ես երգեր էի գրում,
որ չէր սազում իր գահին։

Ասաց՝ ի՞նչ է, մարդիկ իրենց
տիրոջն էլ չե՞ն ճանաչում.—
և ես տեսա, որ երգիս մեջ
իմ տիրոջ գույնն է աճում։

Տեր իմ, տեր իմ, թող զայրույթը
չճարճատի
տերունական խոսքիդ մեջ.—
— Ես ծառան եմ, ո՞վ է տերը՝
չհասկացա մինչև վերջ։

Քեզ ասում են, թե դու
ստեղծել ես աստված,
քեզ ասում են, թե դու
արարել ես դևին,
նվաճել ես երկիրն անրջանքով տարտամ
և թռչում ես առաջ՝ ապագայիդ թևին։

Քեզ ասում են, թե դու՝
անմեկնելի հրաշք,
տիրակալն ես ամեն
հզորության, ուժի,
ամեն բանից առաջ
ամեն ինչի համար
միակ գանձատունն ես
քո պատմության հուշի։

Քեզ ասում են, թե դու՝
արարիչդ միակ,

գեղեցկորեն հզոր,
գեղեցկորեն վսեմ,
դո՜ւ ես, դո՜ւ ես ահա ձայնատարն այն մաքուր,
որից պիտի սիրո մրմունջները լսեն։

Քեզ ասում են, թե՝ դու...

դու ջախջախված, հոգնած
լող ես տալիս ահա երազներիդ ճահճում,
քեզ բռնում են անթիվ մժղուկները հոգսի
և քեզ հազար ձևով նույն խաչին են խաչում։

Քարշ են տալիս նրանք քո մարմինը հոգնած
գծերի մեջ անմիտ, փողոցներով անքուն...

...տրամվայների երկար մագնիսները հերթով
կանգառներից մարդկանց ջարդոնն են հավաքում։

Մետաղակուռ մտքերն այսօր իրենց ձեռքով
մեր մեջ երեկվա պարզ ակունքներն են փակում...

...տրամվայների երկար մագնիսները հերթով
կանգառներից մարդկանց ջարդոնն են հավաքում։
Եվ խելագար վազքով, կրքերի մեջ անմիտ
երակներում արյան նժույգներն են վարգում...

...տրամվայների երկար մագնիսները հերթով,
տրամվայների երկար մագնիսները հերթով...
...տրամվայների երկար մագնիսները հերթով...
տրամվայների...
երկար...
մագնիսները...
հերթով
փողոցներից մարդկանց ջարդոնն են հավաքում...

«ՄՌԱՅԼ ԵՐԳԵՐԸ ՔՈ...»

«Մռայլ երգերը քո, ստվերներով լեցուն,
որ չեն շիկնում կյանքի ճառագումից,
ի՞նչ կորուստ են արդյոք նրանք հեծում,
և ի՞նչ գրգիռներ են առնում, ումի՞ց։

Մռայլ երգերը քո, ախ, բարեկամ...
այդ ի՞նչ տագնապներ են քեզ հալածում,
նայիր շուրջդ՝ որքան հրաշքներ կան,
ամեն քայլի վրա, ամեն հարցում։

Նայիր շուրջդ, նայիր...»
— Բարեկամներ,
մի քիչ հեռու կանգնեք իմ երգերից,
որ ես տարբերեմ դեմքերը ձեր,
ձեր փսփսուքներն իմ վերքերից։

Դուք այնքան մոտ եք կանգնում երգին,
որ ձեր ստվերները թանձրանալով
ծածկում են երգս և այնտեղից
վախեցնում են ձեզ՝ ձանձրանալով։

Դուք մի քիչ հեռու կանգնեք երգից՝
նրա բխումը վայելելու.—
մինչ դուք փորում եք ակունքը պարզ՝
երգը փախչում է ձեզնից հեռու։

Մինչ նրա զուլալ ակունքներում
ստվեր է փնտրում ձեր ստվերը խեղճ,
երգն աղբյուրի պես փախչում հեռու
և զրնգում է հանդերի մեջ։

ԴՐԱԽՏԻ ԵՐԿԻՐ

Դրախտի երկիր, անհուն դրախտ,
մեծ երազների փոքրիկ օրրան,
քո մեջ ծնվեցին քաղցր հույսեր
և քո վիհերում անդարձ կորան։

Դու նրանց տվիր կյանք ու ոգի,
դու նրանց տվիր թևեր հզոր,
շնչառությունը քո մեղկ շոգի,
քո կարոտների ցոլքը բոսոր,
և նրանք ելան գոտեմարտի,
սակայն չհասան մինչև կեսօր։

Դրախտի երկիր, անհուն դրախտ,
այս ի՞նչ թախիծ է իջել վրադ,
քո հերոսներին— քո հույսերին
մատնել ես նյութի դաժան սրին...
Եվ քո զոհերով բեռնավորված,
բեռան տակ մինչև հողը կորված,
գնում ես դեպի անհայտություն,
տանելով քեզ հետ թախիծ ու թույն։

Ահա իջնում է թանձր գիշեր
քո հովիտներին փոքրիկ ու խեղճ,
սակայն վառվում են խենթ ու խելառ
պայծառ աստղերդ երկնքիդ մեջ։
Վառվում են նրանք, վառվո՜ւմ, վառվո՜ւմ,
Նրանք՝ աչքերը խոր ցավերիդ,
քո կորուստների հուշն են նրանք
և արմատները նոր ծառերիդ։

Դրախտի երկիր, անհո՜ւն դրախտ,
անհուն դրախտի հուշ ու պատկեր,
դու կորուստներ ես տվել անհուն
և կուտակել ես անհուն պարտքեր,
շտապիր թվել գալիքներիդ,

շտապիր թվել անուն-անուն՝
որ պիտի սրբեն ճակատդ սեգ
և պիտի մարեն պարտքերդ անհուն։

Դրախտի երկիր, անհո՜ւն դրախտ,
ես օրորվում եմ քո տաք մահճում,
և ուղեղիս մեջ, հոգուս, սրտիս
խանձված խոհեր են լուռ կանաչում։
Ա՜խ, շնկշնկում են նրանք փափուկ
և ազատվում են թախծի բեռից.—
Նրանց մրմունջն ինձ քուն կբերի
և քեզ կհանի քո թմբիրից։

Դրախտի երկիր, անհո՜ւն դրախտ,
մեծ օրհնություն քեզ և... փոքրիկ բախտ։

ՆԱՄԱԿՆԵՐ ՀԱՍՄԻԿԻՆ

1

Գիտե՞ս հիմա, Հասմի՛կ,
հեռվում այս հյուսիսի
խոշոր փաթիլներով ձյուն է տեղում,
թափվում է ցած՝ որպես խտացումը լույսի,
և ծածկում է հողը՝
խորհրդավոր, ներհուն։

Ճերմակ կեչիները խառնըվելով ձյունին,
իրենց ասեղնագործ կատարներն են ճոճում,
Ճնճղուկները մրսած կոցահարում ձյունը
և մի թփից մյուս թփի մեջ են կորչում։

Նրանք հասկանում են
թրթռումը ձյունի,
նրա ճերմա՛կ,
հպա՜ռտ,

փխրո՜ւն լռությունը,
բայց մեր սիրտը նրանց մաքրությունը չունի,
և մեզ համար ինքը՝ սառնությունն է ձյունը։

Ես նստում եմ մենակ
պատուհանի դիմաց,
երկար նայում եմ լուռ
փայտե տնակներին,
ինչպես սոված մեկը իր ցուրտ խոհանոցում
օրեր անվերջ նայի դատարկ պնակներին։

Դատարկ,
որովհետև
ես կարոտում եմ ձեզ՝
քեզ,
Մհերին,
տունը
և Ազատին,
այս էլ քանի՜ անգամ
ես կարոտում եմ ձեզ,
և չի փոխարինում
ոչինչ հարազատին։

Անթիվ ագռավներ կան սև լարերին նստած,
ինչպես մեր հին, բարի գյուղի ճանապարհին,
կռկռում են նրանք.—
մորս խոսքն եմ հիշում՝
«Այս անգամ էլ աստված թող կատարի բարին»։

Եվ ես հավատում եմ՝
կկատարվի բարին,
միայն սիրտը երբեք չկասկածի.—
հովիտներ են փռվում սրտի ճանապարհին,
երբ նա պատրաստվում է վերադարձի։

Իմ սիրելի՜ Հասմիկ,
կեչիների ծխում,

(ախր, նրանք ճերմակ ծուխ են դարձել հիմա)
երազների կապույտ ստվերներ են լողում
կորած Հանճարների շիրիմների վրա։

Դեռ ապրում են նրանց
տնակները թափուր
և նայում են հեռուն ձյունաքողի միջով.—
իզուր պիտի այդպես լուռ սպասեն երկար,
իզուր պիտի ապրեն կորածների շնչով։
Ահա տխրում եմ ես,
և դեռ դա էլ իզուր,
«իզո՜ւր, իզո՜ւր» ինձ հետ
դու կրկնիր անվերջ.—
ես ինձ փաթաթում եմ կարոտներով հզոր
և թույլ ընկղմվում եմ գիշերվա մեջ։

2.

Երեկ երեկոյան մառախուղ էր ու մութ,
երեկ երեկոյան լապտերները հանգան,
սենյակներից մեկ-մեկ հավաքվեցին մարդիկ,
իրար գլխի եկան,
ինչպես տների մեջ՝
հին, գեղջկական։

Նրանք հավաքվեցին հոլում հարմարավետ,
և մութի մեջ միայն ձայներ էին լսվում.—
ձայնը վախ է ցրում.— ճշմարտություն է հին.—
և ես զգում էի,
թե ինչպես է մութը
պաղ դեմքերին քսվում։

Նրանք խոսում էին դեսից-դենից բաներ,
նաև քննում էին հատկությունը սեռի,
և նրանց մեջ նույնպես կային բանբառակներ,
որ խոսքերով լպիրշ
կսմթում են փափուկ
տեղերն աղջիկների։

«Կոտեջներում հիմա մութ է սարսափելի,
Օ՛, ինչ զարհուրելի թանձր մութ է այնտեղ,
մենակների համար՝ տասնապատիկ անգամ,
մենակների համար
չկա լուսավորող
ոչ մի կանթեղ»։

«Լուռ կնստես այնտեղ,— խոսում էր մի աղջիկ,—
և կհիշես աստղեր և անհամար թվեր,
և կսկսես հաշվել— նախ աստղերը մեկ-մեկ—
և անշշուկ կգան
И белочки будут стучаться в дверь.

«И девушки будут стучаться в дверь»—
հառաչելով կրկնեց մի պատանի,
«ես կհաշվեմ նրանց աստղիկները բոլոր
և կստանամ սիրո
աներկրային ձևեր
և անհամար թվեր...»։
Այդպես ռոմանտիկ զրուցելով երկար,
նրանք ելնում էին մութի մռայլ ցանցից,
բայց մութի հետ այնքան մտերմացան,
որ դեռ լույսը չեկած,
թաքուն փախան լույսից,
լուսաբացից։

3

Իմ սիրելի Հասմիկ,
հիմա հոգնած եմ ես,
հոգնած՝ ինչպես հողը,
ինչպես հոգնած հոգին,
գերեզմանին նստած փոշին արևակեզ,
տխրությունը՝ իջած հնամենի երգին։

Նրանք հրդեհում են
իմ ուղեղը հոգնած

այս մոխրադեմ ու պաղ երկնքի տակ,
արեգակը ասես մոխիրներում կորած
կանթեղ լինի,
երբեք
չի երևում հստակ։

Այդպես աչքերի մեջ
մի անորոշ միրաժ,
մի մոխրավուն, ասես վաղուց մեռած կարոտ,
մարդիկ ձյունների մեջ ման են գալիս մենակ,
ամբարելով ինչ-որ դաժանության վառոդ։

Օ, ես հասկանում եմ
տխրությունը մարդկանց,
ամեն մեկն էլ ունի անդառնալի կորուստ.—
գուցե ձմե՞ռն է դա,
գուցե կգա գարո՞ւն,
և ամեն ինչ գուցե կարգավորվի վերուստ։

Եվ ամեն ինչ գուցե
դառնա այնքան փափուկ,
որ բախումից անգամ շշուկ չառաջանա,
թե չէ մեր խեղճ հոգուց ելնող ամեն հնչյուն
ասես ձայն չէ, այլ խուլ հառաչ է նա։

Տե՛ս, ասացի՝ «հառաչ»
և հիշեցի կրկին
ագռավներին՝ նստած լարերին սև,
նրանք մեր հին, բարի գյուղի ճանապարհին
որքան անդառնալի կորուստներ են տեսել։
Եվ այդ կորուստների
ահից այդպես լայկված,
կռկռում են միայն չարագուշակ ու խուլ,
նրանք պապիս պապի հառաչանքն են լսել
և իմ արցունքներն են տեսել բուռ-բուռ։

Սակայն ես չեմ ուզում,
որ դու տխրես հիմա,
արցունքներով ոչինչ չի փոխվում մեր կյանքում,
միայն եթե լույս կա արցունքների վրա,
նրանք շողշողում են ադամանդի հանգույն։

Եթե տխրություն կա
արցունքների խորքում,
նրանք կջերմացնեն մոտիկ-մտերիմին,—
ես իմ արցունքներից մատանի եմ սարքում,
որ դու հագնես փխրուն քո մատներին։

4

Ահա գիշերն իջավ
և խավարով պատեց,
պատեց աշխարհն ամբողջ,
այն, որ տեսնում եմ ես,
գիշերն ուրիշ ինչո՞վ
մեզ կարող էր պատել,
գուցե մի քնքշությա՞մբ՝
մելամաղձիկ ու հեզ։

Մի քնքշությա՞մբ գուցե,
իմ սիրելի Հասմիկ,
որ ես թաքցընում եմ
օրվա լույսից, բառից.—
ահա դու նստել ես
իմ սեղանի առջև
և մետաքս ես մանում
անտանելի դժվար իմ կապարից։

Իմ կապարից՝ մետաքս՝
հենց իմ կյանքի համար,
այն, որ բնավ երբեք չեմ ունեցել,
որի երազանքը

Իմ սրտի մեջ, Հասմիկ,
օդում, ջրում անթիվ
կարոտներ է հեղձել,

Այնքան մոտիկ ես դու,
այնքան տեսանելի,
որ ես ամաչում եմ
այս բառերը գրել.
Իմ պատճառով այնքան
զսպել ես արցունքներդ,
Իմ պատճառով այնքան
տանջանքներ ես կրել,

այնքան ցավեր, որոնք
առանց ինձ էլ կային,
որ քեզ համար հիմա
ես եմ բերում սակայն,
որ անկյուն են փնտրում՝
բույն դնելու համար
սրտերի մեջ մեղմ ու կարեկցական։

Դու լավ գիտես դրանք,
ինքդ՝ ցավի ծնունդ,
և օրերդ հաճախ
ցավի մեջ են անցել,
Հասմի՛կ, մենք կարող ենք
նվեր բերել մարդկանց
Արդարության ցավի
բյուրեղափայլ գանձեր։

Ազնվության ցավի
ադամանդներ շքեղ,
սիրո ցավի մաքուր,
թախծապարուր հովիտ,
երազանքի անհուն,
անծայրածիր երկինք,
որ հագեցում բերի
գեղեցկության սովին։

Ահա նայում եմ ես
պատուհանին խավար,
(իրավ, ի՞նչ է միտքը,
արդյոք թևեր ունի՞),
իմ մեջ պայթած հողմը
ինձ քշել է հյուսիս,
մինչև այս բքախեղդ
ծայրն անհունի։

Բայց ես քո պատկերը
այնքան պարզ եմ տեսնում՝
խավարի մեջ նստած
անզարդ լույսի հանգույն,
որով զարդարված է
իմ բույնն աշխարհի մեջ՝
աստծուն տեսանելի
և մարդկանցից թաքուն։

Հասմի՛կ, կամաց-կամաց
ես հանգչում եմ ահա,
փոխարկվելով փափուկ,
փխրուն զգացմունքի,
և այս անծայրածիր
երկիրն ակոսելով
քո նուրբ շրթունքներին
փոխարկվում եմ երգի։

Կամ գոնե ես այդ եմ
ուզում այս վայրկյանին։
Ոչ տրտմություն,
ոչ բախտ,
ոչ ցավերի գանձեր,
Ընտրելով այս երկրում
ինչ-որ մի ժամանակ
իմ գոյության համար
հրաշալի մի ձև։

Պերեդելկինո

ԲԵՆԻՍ

Թե այդ իրիկուն
Բենիսը բեմում պարած չլիներ,
Թե այդ իրիկուն տված չլիներ
մարմինը կրքի հեղեղին վայրի,
կհավատայի ես նրա ձայնին,
որ այնպես մեղմիվ ու տնավարի
իր հայրենի տան
փափուկ թախիծն էր արձանագրում
փափուկ ծալքերում կիսախավարի։

Դյուկ Էլինգտոնի ցեղից մի տղա,
ստեղների հետ խոսելով տխուր,
երգում էր մի հին, բարի մեղեդի,
Դյուկ Էլինգտոնի ցեղից մի աղջիկ
շոյում էր նրա գանգուրները խիտ,
և թանձրանում էր ծուխը կարոտի։

Ջոր խշխշոցով
շամպայնն էր խշշում բաժակների մեջ.—
այդ ձայնը բնավ նման չէ ծովի
խշշոցին փափուկ,
և Բենիսն ահա խմում խուսափուկ
և Իռլանդիայի դաշտերի մասին
շշնջում էր մեղմ, հեքիաթի խոսքեր,
և Իռլանդիայի լեռների մասին,
ձորերի մասին և անտառների
խոսքեր էր ասում, որ պոկված էին
հայրենի երկրի կարոտի հովից.
— Վիկինգներն այնտեղ, հասկանո՞ւմ եք, սը՛ր,
վիկինգներն այնտեղ
ջրահարսեր են գողանում ծովից։

Իսկ չէ՞ որ ահա նստած են նրանք,
որ աչքով անում,
նայում են նրա ազդրերին ճերմակ.

և աչքով անում,
հպվում են նրա ազդրերին փափուկ.—
Բենիսը կրկին
խմում խուսափուկ,
կրկին խոսում է
հայրենի երկրի դաշտից ու ձորից.—

— Վիկինգներն այնտեղ, հասկանո՞ւմ եք, սը՛ր,
վիկինգներն այնտեղ
ջրահարսեր են գողանում ծովից։

Եվ հետո դանդաղ
նրանք խմեցին մինչև լուսաբաց,
մինչև ծուխն առավ իր ծալքերի մեջ
անկյուններն ամեն «Կրեյզի հորս» բարի
կրկին ռիթմերը խելագարվեցին.—
Բենիսը կրկին հանձնեց հուսահատ
մարմինը կրքի հեղեղին վայրի,
և կարծես նա չէր,
այդ նա չէր բնավ,
որ այդպես մեղմիվ ու տնավարի
իր հայրենի տան
փափուկ թախիծն էր արձանագրում
փափուկ ծալքերում կիսախավարի։

Բեյրութ

ՍԻԴՈՆԻ ԴՈՒՍՏՐԵՐ

Օ՛, Սիդոնի դուստրեր,
օ՛, Սիդոնի դուստրեր,
մայրամուտում հալվող փաթիլների նման
օրորվում եք կապույտ մշուշների խորքում,
բիբլիական սիրո կաթիլների նման
գլորվում եք անփույթ
մշուշների խորքում։

Օ՜, Սիդոնի դուստրեր,
ձեր քաղաքում հիմա,
ձեր «էգ» ծովի ափին,
ձեր անսահման փափուկ
ու մերկ ծովի ափին
ձեր կրքերն է խառնում
հայուհին այս փոքրիկ
մատներով իր նրբին...

Օ՜, Սիդոնի դուստրեր,
դուք ճեմում եք դանդաղ
Միջերկրական ծովի ալիքների միջով,
բայց ոչ իբրև այն սուրբ Քանանացին,
այլ ծովի մեջ փլված հին քաղաքի վրա-
շաղ եք տալիս անփույթ
նախնադարյան շշուկն ու կանացին։

Ձեր մերկ ոտքերի տակ,
ձեր ոտքերի, որոնք
կապույտի մեջ օծված
ալիքներ են ճերմակ,
հանգչում են լուռ, խաղաղ
խաչակիրներն իրենց անհուն փառքով։

Որտեղ փառքն է հանգչում,
այնտեղ լռությունն է՝
փառքի հանդեպ խորին ակնածանքով։

Լռություն է։
Խաղաղ։
Մտքի շարժումն անգամ աղմուկներ է հանում։
Օ՜, Սիդոնի դուստրեր,
ալիքների միջով,
գժվելու չափ կապույտ ալիքների միջով
մայրամուտը ձեզնից ինչ-որ բույր է տանում։

Տանում է, որ գիշերն ուղեղներում անթիվ,
ջարդված մարմիններում ու ջղերում հոգնած
ձեր թուխ, ճառագայթող տենդը վառի...
Արդեն գնում եմ ես,
ես չեմ կարող մնալ,
և դուք իմ շուրթերին
հողմից, բույրից, ցավից
փոխարկվում եք բառի։
Իսկ ես իմ ողջ կյանքում
բառեր եմ քարշ տալիս,
ամեն տեսակ բառեր,
ամեն գույնի, ձևի,
սակայն այսօր նրանք հոգուս հովիտներում
փոխարկվում են փափուկ, տաք անձրևի։

Այդ անձրևից ոչինչ ինձ չի պատսպարում
անգամ ամերիկյան շքեղ «օթոն»,
որով սլանում ենք
խաղաղության միջով,
որով փախչում ենք մենք լռությունից,
և իր ահաբեկիչ աղմուկով ու ճիչով
Բեյրութը մեզ դուրս է բերում գերությունից։
Նա մեզ, այո՛, դուրս է բերում գերությունից՝
լռության ու պայծառ խաղաղության,
և ինչպես որ մարդը փախչի ծերությունից,
այդպես փախա սիրուց,
բնության հետ անվերջ ներհյուսվելուց,
սրտի ցանկությունից,
մտքի մանկությունից,
ամեն ինչից փախա,
ծովի աստվածացնող,
կապույտ շնչից փախա,
սիրո միջով՝ դեպի
կործանումը սիրո,

ԵՒ բնության միջով՝
դեպի կործանումը մայր բնության։

Այնտեղ ձին էր կանգնած։
Խոտի դեզն էր բուրում։
Այնտեղ կարող էին շատ մանուկներ ծնվել։

Սիղոն

◆

Փափուկ տխրությունը
գորշ պատերն է շոյում
ու վայում է քամին։
Նույն հանգերով, ինչ որ
հազար տարի առաջ.—
ի՞ինչ անեզր թախիծ
աշնան հով ու ծովում,
ի՞ինչ տխրություն դեղին բարդիների
կատարներին կանաչ։

Սակայն որքան էլ որ
թախիծը խիտ լինի,
աշնան տխրությունից
ոչ ոք չի մահացել.—
սիրո մասին մի երգ,
որքան էլ բիրտ լինի,
օրորում են դանդաղ
թթենիները ծեր։

Եվ ձեռքերում նրանց
դեղին-դեղնափրփուր,
ԵՒ ձեռքերում նրանց՝
լցված օդով,
շողշողում են սիրո
զգեստները պուրպուր՝

ցողված անմահության
անուշ հոտով։

Եվ կթափվեն նրանք,
զգեստներն այդ պուրպուր,
հենց այս գիշեր նրանք
կիջնեն հողին,
որ ինձ համար՝ սիրուց
խենթացածիս համար
դառնան սիրո փափուկ,
տաք անկողին։

Նրանք կիջնեն դանդաղ,
տխուր ծյուրուրալով,
ինչպես որ թախիծն է
սրտին իջնում վայրի,
և ես նրանց բույրով
կծածկեմ քեզ, սե՛ր իմ,
և քո կրծքի վրա
կապրեմ հազար տարի։

Ես կբերգեմ քեզ հետ,
որ աշունը լռի,
շուրջը մնա միայն
շքեղ ոսկին.—
հետո, սե՛ր իմ, գիտե՞ս,
պիտի որ մենք լռենք,
որ մեր լռությունը
հաղթի խոսքին։

Ու մինչ տերևները
աշնան անուշ ոսկով
ուրիշ ջահել, եկող
աշունների համար
այս մեր սիրո մասին
հուշեր գրեն,
ես քեզ մի անգամ էլ

Կհամբուրեմ, սե՛ր իմ,
որ քեզ ինձ թագուհի
թագադրեմ։

Փափուկ տխրությունը
գորշ պատերն է շոյում,
ու վայում է քամին
նույն հանգերով, ինչ որ
հազար տարի առաջ.—
ի՞ինչ անեզր թախիծ
աշնան հով ու ծովում,
ի՞ինչ տխրություն դեղնած բարդիների
կատարներին կանաչ։

ԾՈՒՂԱԿ

Ես, որ ծուղակի ստվերից անգամ
դողում եմ, ինչպես ժայռը կայծակից,
այդ օրը խելքս գլխիցս գնաց,
և ես՝ անխելքս,
ծուղակ սարքելուն դարձա հանցակից։

Ես անապատում շրջում էի լուռ,
դրանից պարզ բան չկա աշխարհում,
ես նման էի մեկին, որ գիտի
մեղքերն աշխարհի,
որ խոր լռում է և ապաշխարում։

Եվ հանկարծ փափուկ, թույլ մի տրտմություն
իմ ապաշխարող մարմինը ձաղկեց,
և ես պապակված հողի պես մեկից
քանդվեցի հանկարծ,
և սիրտս, սիրտս քնքշորեն ծաղկեց։

Ծաղկեց իմ սիրտը,
և անապատի խորքերից աղի

գետեր հանեցի ես արևերես,
շուրջս փռեցի ծաղկավառ գորգեր,
որ մեռած հողի դեմքը ծիծաղի։

Անթիվ արտույտներ բաց թողի օդում,
որ ճռվողելով երկինք բարձրանան։
Եվ անապատի աստղերը դժգույն
արևներ դարձրի,
որ հողին կաթի անուշ մանանան։

Եվ խելառ վազքով սուրացի դեպի,
դեպի հեռավոր ոստանը իմ խեղճ,
ուր որ մի թռչնակ բանտված էր վաղուց
տխուր գիտության
և ջազ-բանդերի շղթաների մեջ։

Նա հեռու մի օր
ազատել էր ինձ կապանքից սիրո,
թողնելով փոքրիկ հարազատություն,
և պարգևեցի ես նրան մի մե՜ծ,
մի ավելի մե՜ծ,
մե՜ծ ազատություն։
Ես նրան թողի ազատության մեջ,
և նա՝ չքնաղը բոլոր հարսերից,
բոբիկ վազում էր առուների մեջ,
քրքջում խելառ
և կայծակներ էր թափում վարսերից։

Բայց ամեն քայլին շղթայվում էր նա,
ամեն շարժումով սեր էր խոստանում,
ասես այլևս այն «փրկիչը» չէր,
որ սիրո ցավից
ազատել էր ինձ իմ խեղճ ոստանում։

Եվ նա օդի պես ծփում էր շուրջս
և մշուշի պես պարուրում էր ինձ,
անհուն քնքշությամբ խեղդում էր շունչս,

ԵՒ կպչում էր ինձ՝
Ինչպես կրակն է կպչում լամպարից։

Եվ իմ էության լույսն սպառելով,
Թմրեցնում էր ինձ սիրո բառերով,
ԵՒ տաք մարումի երգեր էր երգում.—
Մոռացության մեջ,
Մոռացության մեջ
Մենք հատնում էինք մեր սիրո մեղքում։

ՇՇՈՒԿԻ ՆՄԱՆ

Ինչպես շշուկն է արձագանք տալիս
Քար լռության մեջ,
այդպես այս տղմոտ,
Գաղջ աղմուկներում
Ես որոնում եմ
Փոքրիկ լռություն։

Փոքրիկ,
Բայց այնքան հստակ լռություն,
որ կարողանամ լսել ինքս ինձ,
որ կարողանամ այդ լռության մեջ
Ինքս ինձ զգալ
Իբրև մի ամբողջ,
Մեծ լրիվություն։

Թե ոչ, ես այսպես
Ամեն ինչի հետ ճակատ եմ տալիս,
Ամեն ճիչի հետ փշրվում եմ ես,
Ամեն կանչի հետ
Իմ ողջ էությամբ
Խոժոռվում եմ ես,
Բայց և ողջ կյանքս կատակի տալիս,
Հիմարի նման անցնում եմ այսպես...
Անցնում եմ՝ աչքս միշտ ճանապարհի՝
Որ ինչ-որ մի տեղ պիտի լինեմ ես,

որ ինչ-որ մի տեղ մի բան կա բարի,
որ դա մի բանն է հենց իմ երազած,
որ եթե հանկարծ
մեռնեմ չտեսած,
ուրեմն՝ ապրել եմ ինքըս ինձ կիսած։
Ուրեմն՝ ապրել եմ փշրանքների մեջ,
առանց մի անգամ ամբողջանալու,
և մի՞թե երբեք չի կարող լինել
այդպիսի մի բան՝
առանց ջանալու,
առանց աղերսանք
կամ խեղճանալու։

Ես որոնում եմ փոքրիկ լռություն,
որտեղ պիտի ես ծիծաղեմ անձայն,
ինչպես աստղերն են ծիծաղում վերից,
պիտի հավատամ՝
առանց ճչալու,
և պիտի սիրեմ՝
առանց քեզ, ի՛մ սեր, և ինձ խղճալու։
Եվ հետո պիտի թաղվեմ ես անձայն,
ինչպես մշուշն է մաղվում ծերպերից՝
հովիտների մեջ լուռ լճանալու։

Մի՞թե ես այդպես չեմ վերջանալու։

Լուսինը, լուսինը մարեց,
ամպերը մթնելով անցան,
արևը փափուկ ծիծաղեց
և զանգակ ցողերի վրա
կամարեց շքեղ ծիածան։

Ես, վերջին ահավոր մի ճիգով
արմատս քաշելով իմ հողից,

Եկել եմ հանդերի երգով,
հանդերի շշուկով ու հեքով՝
հորինված արևից ու ցողից։

Կտրվել հողից ու ջրից,
կտրվել հանդերից իմ կանաչ,
եկել եմ՝ ծաղիկդ դառնամ,
որ մեկ օր քո դեմքին նայելով՝
թառամեմ ոտքերիդ առաջ։

◆

Այն բակը, որտեղ ապրում էիք դուք
և դեռ հիմա էլ ապրում եք կրկին,
և որ փակված էր բարձր շենքերով,
որ հասնում էին հեռու երկնքին,
և որ փոքր ու մեծ անցուղիներից
գալիս-գնում էր կյանքը խուժելով,
այդ բակը ահա դատարկվում մեկից,
Լուսնի Բացատ էր դառնում գիշերով։

Դառնում էր, այդպես... Լուսնյակի Բացատ,
և փափկում էին քարերը մեկից,
օրորվում էին խոտերը փափուկ,
և փափուկ երգ էր շաղվում երկնքից։
Պատուհաններից կախվում էին ցած
գլուխներ, որոնք գլուխներ չէին,
շոգից խոնջացած զանգերի նման
սպասում էին դրախտի քամուն,
որ պատարագի ձայներ հնչեին։

Այդ բակը
այդպես
դատարկվում մեկից,
Լուսնի Բացատ էր դառնում գիշերով.—
Լուսնյակ նա ապրում էր լուսնյակի վրա,

Թիթեռ—աստղերի պարսեր քշելով։
Եվ հավաքում էր թանկագին աստղեր,
և հավաքում էր ձայներ դրախտի,
որ մի օր նվեր տա նրան, որին
համարում էր տերն իր չքնաղ բախտի։

Ուզում էր ողջը տալ նրան, որի
անսահման սիրո տիեզերքի մեջ
կարող էր այդպես ապրել երջանիկ,
կարող էր աստղեր հավաքել անշեջ,
կարող էր, և իր կարողությանը
ասես ոչ մի չափ ու սահման չկար...
բայց մի օր,
ի՞նչ էր,
սայթաքեց հանկարծ,
լուսնյակից ընկավ
Բացատը Լուսնի
ու դարձավ... խաչքար։

Այն բակը, ուր խուլ անցուղիներից
գալիս-գնում է կյանքը խուժելով,
մայրամուտի հետ դատարկվում մեկից,
Լուսնի Բացատ է դառնում գիշերով։

Պատուհաններից կախվում են զանգեր,
և գիշերային աղոթք են անում,
իսկ նա լսում է ձայնը իր սիրո
տիեզերքի մեջ ու հանգստանում։

ՓՈԹՈՐԻԿ

Ես ուզում էի
չհիշել ոչինչ,
ես ուզում էի
համրանալ մեկից,
ավազների պես լռել հավիտյան,

ազատված մտքի զենքից ու զորքից,
ավազների պես
փռվել ծովափին՝
խշշոցների մեջ հավիտենական,
բայց քամիները գալիս ցամաքից
և գնում էին
ծովի լայնարձակ ազատության մեջ·
կորչում ինքնակամ։

Նրանք ծերպերից փախչելով խելառ,
ալիքների հետ գգվում թախծալի,
և գնում էին
անհույս ու մենակ
դեպի հեռավոր խորքերն անցյալի։

Եվ խառնվում էր ամեն ինչ իրար՝
մութ տագնապների
կրակով լիզված,—
երկինքն արևի պայծառությունը
կորցնելու ցավից
լալիս էր հուզված,
և լեռները մութ ուրվապատկերով
իրենց խորքերում
լուռ պրկում էին
տագնապի,
հույզի
մթին երակներ,
և ծովը անհուն ալեբախությամբ
արթնացընում էր քնած կրակներ։

Ես ուզում էի չհիշել ոչինչ,
ես ուզում էի
համբանալ մեկից,
ավազների պես
շպրտված ափին,
ազատված մտքի զենքից ու զորքից։

Ես ուզում էի պատկերդ միայն,
պատկերդ պահել
իմ աչքերի մեջ,
ինչպես ծովափնյա քարերն են պահում
պատկերը ծովի,
ես ուզում էի լոկ քնքշանքներիդ
հետքերը պահել իմ լռության մեջ,
ինչպես շուրթերն են պահում հետքերը
համբույրի ցավի...

Սակայն ամեն ինչ խառնվում իրար
և կրկին ուրիշ պատկեր էր առնում,
երկինքն այնպես էր լալիս խելագար,
ծովը այնպես էր խփում ափերին,
քամին այնպես էր վայում կատաղի,
որ կարծես վերջին մեծ կործանումի
սարսափն էր այդպես շուրջս սավառնում։

Եվ արտասուքի անհամար գետեր
տիղմ էին խառնում
կապույտին ծովի։
Նրա կապույտին
խառնում էին տիղմ
և մաքրության՝
գորշ աղտեղություն,
իմ սրտին նրանք,
իմ տխուր սրտին
փաթաթում էին
մի անտանելի ու գարշ սեղմություն։

Եվ այդպես ծովը՝
կապույտը,
ոգին
դանդաղ մեռնում էր իմ աչքերի դեմ։

Իսկ ես
այդ հսկա աճյունի առաջ,

(աճյուն, որի մեջ
տեղավորվում են անցյալն ու ներկան
և հուզումների տագնապն ամեհի),
կանգնել էի լուռ,
և ոչ մի շշուկ,
և ոչ մի հառաչ։
Ես կարծես մեկից քարացել էի։

Ես գիտեմ,
ծովը
կծնվի նորից,
Ես գիտեմ,
երկինքն
էլ լաց չի լինի,
Բայց ես
գնացած
կլինեմ արդեն.—
ինձ մեկը ափից վերցրած կլինի,
նետած կլինի խորքերն անհունի։

Ղրիմ

ԶՄԵՌԱՅԻՆ ՀԵՔԻԱԹ

Թանձր մառախուղ իջավ քաղաքին,
և ճնճղուկները կորան մշուշում,
երևի նրանք չեն եղել բնավ,
երևի նրանց ոչ ոք չի հիշում...

Ցուրտ մառախուղ է իջել քաղաքին.—
այս սև ու երկար լարերը օդում
ձայներ են բռնում մառախուղի մեջ
և տագնապները իրար են զոդում։

Իսկ ճնճղուկները ծխնելույզներում,
տաքացընելով թևիկներն իրենց,
հարբում են գարնան տաք երազանքով.—

Փակ գուցե գարուն չի՞ եղել բնավ,
գուցե այդ նրանց փոքրիկ սրտի մեջ
մա՞հն է խլրտում ջերմ ահազանգով։

Գուցե թե մահը այդպես է գալիս,
որ նրանց փոքրիկ սիրտը չարյունի,
չէ՞ որ աննշան այդ մարմընի մեջ
տեղավորված է թռիչքն անհունի։

Տեղավորված է պատկերն անհունի.—
նրանց թևերը լցված են օդով,
սառչում է օդը նրանց թևերում,
և կոտորվում են բոլորը հերթով։

Նրանց թևերը լցված են օդով,
ինչպես, սիրելիս, իմ տկար հոգին
լցված է փափուկ, տաք հառաչանքով.—

Դու ամեն անգամ այնպիսի ծանր
ձմեռ ես դնում իմ կրծքի վրա,
որ հառաչներ են ելնում այնտեղից՝
ներծծված սիրո անհուն տանջանքով։

Թանձր մառախուղ իջավ քաղաքին,
ես այդ մուժի մեջ ճնճղուկ եմ կորած,
ես էլ եմ փոքրիկ պատկերն անհունի.—

Եթե ինձ հիմա գտնես, սիրելիս,
տաքուկ քնքշությամբ պարուրիր դու ինձ,
որ կրծքիդ վրա սիրտս չարյունի։

◆

Լույս է թափվում շուրջս,
լույս է թափվում շուրջս՝
փափո՜ւկ, անբռնելի՜, խայտաբղե՜տ,
լույս է թափվում շուրջս,
լույս է թափվում շուրջս՝
անհունորեն առատ և անաղետ։

Սահում է նա թեթև
երակներիս միջով
շշուկներով, շուքով երանելի,
փափուկ կլթոցներով
(ոչ աղմուկով, ճիչով),
շնկշնկում է իմ մեջ հազար ձևի։

Եվ այդ փափուկ լույսը
քիրտ աշխարհի վրա
թևածում է սիրո
անկաղապար հանգով.—
Մի ակնթարթ միայն
հաղորդակից եղա
մեծ խորհրդին սիրո,
և մնացյալ կյանքս
ապրում եմ ես ահա
այդ մի ակնթարթի
կախարդանքով։

◆

Եվ մի՞թե մի օր
կորած, անանուն աստղերի նման
կվերադառնան
մտերմության այն պահերը թավիշ,
որ շաղ տվի ես

քո հեռու, անհայտ համակարգության,
անշոշափելի քո պարզ տրտմության
անձրևոտ ու թաց փողոցների մեջ։

Ես չեմ արձակի վշտի հառաչներ,
ես չեմ օրորի աղերսանք ու սուգ,
ես կնվիրեմ իմ կյանքը նրան,
որ ապրում է իմ աչքերի մեջ զույգ,
ես երազանքս կզոհեմ նրան,
որին կորցրին ձեռքերը իմ զույգ,
և նվիրվելով, զոհաբերվելով,
կմնամ իբրև կարոտի մի սյուք,
մի սյուք, որ անցավ
հողմերի միջով,
տապերի միջով,
դրա համար էլ
բարկ ու տապերը
կարող է մեղմել
իր փափուկ շնչով։

Այդ շունչը լիքն է
մտերմության այն պահերով թավիշ-
որ շաղ տվի ես
քո հեռու,
անհայտ համակարգության
անշոշափելի քո պարզ տրտմության-
անձրևոտ ու թաց փողոցների մեջ։

Ես, որ գիտեի լոկ մի ճանապարհ՝
թե ուր են գնում աստղերն անանուն,
ես, որ գիտեի մի իմաստ միայն՝
ինչի համար է տիեզերքն անհուն,
ես հիմա գիտեմ անթիվ ճամփաներ,
բայց ասես կույր եմ տիեզերքի դեմ,
և իմ աստղերը չեն վերադառնում՝
քանի որ նրանց ճամփան չգիտեմ։
Այո՛, ես նրանց ճամփան չգիտեմ,

Բայց փառավոր է նաև իմ ներկան,
Չէ՞ որ կարող է պատահել այնպես,
որ հանկարծ զգամ՝
տիեզերք չկա, և աստղեր չկան։

Կարող է այդպես պատահել մի օր,
արարիչն ինքն է ամեն բան սարքել,
բայց ես այդ օրը
այնպես կփշրեմ,
որ աստղեր թափվեն
և... տիեզերքներ։

ՏԽՈՒՐ ԵՐԳ

Պիտի այսպես նստեմ տխուր
իմ չգրած երգերի դեմ,
պիտի այսպես նստեմ տխուր
իմ չբռնած ձեռքերի դեմ։

Պիտի նրանց հոգու համար
վառեմ մոմեր ոսկեգեղին,
պիտի թափեմ ծաղկաթերթեր
նրանց անուշ ու տաք հողին։

Նրանց համար պիտի անծա՜յր,
մաքո՜ւր, մաքո՜ւր երկինք բանամ.—
այնքան պիտի հիշեմ նրանց,
որ Հուշն ապրի, ես՝ մահանամ։

Հետո անցնեն անթիվ օրեր,
հիշեն այս Հուշն արարողիս,
հետո թավիշ ծաղկաթերթեր
թափեն անուշ ու տաք հողիս։

◆

Հիշեմ, դեմքդ հիշեմ,
հիշեմ աչքերդ անհուն,
բոլոր ժպիտներդ
հիշեմ անուն-անուն։

Ժպիտներիդ ծաղկանց
անուններ եմ տվել
և կարող եմ հիմա
բոլորինը թվել։

Վարդ ժպիտդ հիշեմ,
և ժպիտդ՝ կակաչ՝
ընկած զնգուն ձայնիդ
ջրում քաղցրակարկաչ։

Նրանք բուրում են դեռ
հիշողության հովտում,
զրուցելով երկար
աստղերի հետ անտուն։

Շուշան-շուշան ժպիտ,
ժպիտ նարգիզ-նարգիզ,
որ հյուսված են անքույր
տխրության հետ կյանքիս։

Հասմիկ-հասմիկ ժպիտ,
ժպիտ ճերմակ ու թույլ,
մանուշակե ժպիտ՝
աստղահով ու համբույր։

Սակայն ինչո՞ւ եմ ես
այս բոլորը հիշում,
չէ՞ որ նրանք վաղուց
ինձ համար չեն շրշում։

Նրանք անցյալ օրվա
լեզու՝ համր ու մեռած,
Նրանք հարսներ պուրպուր՝
տարած ու ետ բերած։

Ու նրանց հետ թեև
ոչինչ ես չեմ խոսում,
նրանց շշունջներից
ոչինչ ես չեմ լսում,

սակայն զարդարում են
նրանք իմ խուլ ճամփան,
ջերմացնում են սիրտս,
կյանքս... և ամեն բան։

Հնձանները դատարկվեցին,
գինի չկա՜ա, գինի չկա՜ա.—
ամբողջ գինին ներծծեցին
կարասների փորերն ագահ։

Քրքջում են նրանք հարբած,
խշխշում են մութի ծոցում.—
իմ սիրելին նրանց վրա
ծիրանագույն քող է գցում։

Ծածկում է նա մեկիկ-մեկիկ
քրքջոցներն այդ անամոթ.—
կարող է, որ իր սիրելին
այցելության գնա իր մոտ։

Նա կբացի դուռն աղմուկով
և կձգի մեջքը իրեն,
կխեղդեմ իր բուրմունքից,
չի համբերի գինի բերեն։

Կհամբուրի մեկիկ-մեկիկ
կարասների շուրթերը թաց,
և անամոթ խոսքեր կասեն
կարասները նրան հարբած։

Կփսփսան, կծիծաղեն...
ախ, այդ ի՞նչ է, դուռն են թակում,
կարծես հեռվից եկած մարդու
ոտնաձայն է լսվում բակում։

Արթնանում է խեղճը քնից,
պատուհանից նայում է դուրս,
քամին վայում է սարսուռով,
տերևներն են խշշում անհույս։

Շալը գցում է ուսերին,
հոգում կասկածն է ծվարել,—
ա՛խ, այդ գինին երևի թե
իր սիրելու խելքը առել,
վերցրել ուրիշ տեղ է տարել։

Քամին, ձյունե շորեր հագած,
թափառում է փողոցներում,
աննյութեղեն քողի նման
ծածանվում է պաղ եթերում։
Եվ սպիտակ տանիքներին,
տաք ծխի մեջ ծվարելով,
աղավնիներն են պտտվում՝
հողմի պարերը պարելով։
Հողմը երկինք է բարձրանում՝
սպիտակ ձյուն՝ տարածքի մեջ,
ճերմակն այնքան է թանձրանում՝
սև է դառնում հայացքի մեջ։
Սարսռում է սիրտս տխուր,

բուքը իմ մեջ է թափանցում,
տանս դուռը փակում եմ խուլ
և իմ հոգու դուռն եմ բացում,
որ որքան կիրք ու տաք հույզեր
մնացել են, թողնեն գնան,
քո անիրավ ցրտերի մեջ
չսառչեն ու չհամրանան։
Դու, որ ամեն կողմից հիմա
գալիս ես տուն տագնապելով,
դու ինձ կապված պիտի գտնես
քո ձյունեղեն պաղ կապերով։
Հողմը երկինք է բարձրանում՝
սպիտակ սյուն՝ տարածքի մեջ,
ճերմակն այնքան է թանձրանում՝
սև է դառնում հայացքի մեջ։

Ինձ թվում է, թե
ոտքերը կանանց և աղջիկների
ճառագայթում են սեր ու հիացում,
ճառագայթում են խելահեղ գրգիռ,
ճառագայթում են կարոտ ու կրակ,
թե չէ ինչո՞ւ են տղաներն այդպես
շուռ գալիս, նայում նրանց ետևից,
իսկ աղջիկները
ծաղկած ծառերի գույն ու բույրի մեջ
անհետանում են բոցի պես արագ։

Ինձ թվում է, թե աչքերը կանանց
երբ որ նայում են սեփական կրծքին՝
կանանց կոնքերում լճանում է սեր,
նրանց կողերում ծաղկում է թախիծ,
նրանց շուրթերով բոցի պես ճկուն
թրթիռ է անցնում
մատնության վախից,

որ ուրուրները կրքի ճտերին
չբռնեն օդում աջից ու ձախից,
քանի որ այնտեղ չի լինի կռիվ,
որ փորձեն ծնվել փրկության հույսեր։

Ինձ թվում է, թե աչքերը նրանց՝
այդ հիմարավուն, խեղճ տղաների
ճառագայթում են շանթ ու մխրճում,
այլապես ինչո՞ւ,
ինչպես որ քարի անկումը լճում,
նրանց հայացքը աղջիկների մեջ
հազար ալիքով ու արձագանքով
բացվում է, ճչում,
մարմինն ահավոր ալիք է տալիս,
և թաքուն,
ինչ-որ անհավատալի կայծեր են թռչում
անգամ ժպտալիս։

Եվ այդպես իրար ճիշտ հասկանալով,
նրանք սիրալիր խաբում են իրար՝
իբր թե՝ ի՞նչ են սեր ու հիացում,
իբր թե՝ ի՞նչ են կարոտ ու կրակ,
այդ ո՞վ է այդպես բարբաջում հիմար,—
իբր թե՝ տեսեք, ձուլված ենք թուջից,
և ստեղծված ենք
մեկս մյուսի
հիմար գլուխը կոտրելու համար։

ՀՐԱՎԵՐ

Ես մաքրեցի իմ տան անկյունները բոլոր,
որոնք լցված էին հին-հին երազների
աճյունների լացով,
(աճյունները չէ՞ որ կարող են լալ փոշի),
և փլվելով մի քիչ
քաղցրության մեջ հուշի,

մեղմ օծեցի ես ինձ փխրուն մի թախիծով,
մի թախիծով, որից մարմինն անէանում,
և օդի մեջ ցրվող ծվեններ է դառնում...

Եվ այդպես լուռ, խաղաղ,
առանց ճիչ ու լացի,
ես նստեցի այնտեղ, ուր լուսինն է նստում՝
օրվա ճամփորդության կրկնությունից հոգնած.
ես նստեցի եզրին կապույտ իմ կամրջի,
որ չկորչեմ հանկարծ,
չփշրվեմ հանկարծ
մթին անդունդներում կարոտներիս լճի։
Իսկ լճի մեջ այնքան
քարե աստղեր կային,
և քարացած խոսքեր,
քարե բառեր, որոնք
չասված պատմությունն են մեր մարդկային։
Որ չեն խոսում այսօր,
բայց գիտենք, որ ունեն
զգացմունքներ անհուն,
այն, որ անփութորեն թողել են, որ այսպես
քարով շրջանակվի,
և թե կարողանան դուրս գալ գերությունից,
քարը կտրաքվի։

Ես մաքրեցի իմ տան անկյունները բոլոր,
և օծեցի ես ինձ փխրուն մի թախիծով,-
իսկ բառերը իմ մեջ թռչում էին թեթև,
և ինձ լցնում էին սիրո շնկշնկոցով։

Հիմա կգա մեկը
և ինձ կասի՝ վե՛ր կաց,
ի՞նչ ես նստել, կասի,
վե՛ր կաց, գնանք ու տես՝
ուլը երազներիդ մարգագետնում
թպրտում է խաբված թռչունի պես։
Անմեղության ուլը գույն-գույն ծաղիկներից
բույր չի առնում բնավ,

բնավ չի հոտոտում,
գնանք տանենք նրան, գուրգուրելով տանենք
հետո մորթենք նրան
մեր տաք երազների ստորոտում։

Հիմա կգա մեկը...
բայց ոչ ոք չի գալիս...
այլ լուռ հեռանում է ճամփաներով հուշի։
Հետո երազների աճյուններն են լալիս,
շուրջս, սրտիս վրա
լալիս են պաղ փոշի։

Դու երազիս միջով
կրկին եկար այցի
քո կանացի տաքուկ շորորներով,
կրկին փայլով հոգնած,
տաք փափկությամբ հացի
և վառելով օդը քաղցր բուրումներով։

Եկար, իմ սիրելի,
վերադարձիդ համար
տերը տվել էր ինձ երկար երազ,
անուշ հացիդ համար,
անուժ դարձիդ համար
տաք-տաք սարսուռներ էր թափվում վրաս։

Եկար այդպես մենակ
ու տրտմորեն բարի՝
ինչպես երջանկության բոթն է գալիս,
որ դեռ չեկած, պիտի
ինձ ավերակ դարձնի,
ցրի վերջին հույսը տառապյալիս։

Եվ մատներդ ահա,
և աչքերդ հոգնած

լույս ու տաքությունով խեղդում են ինձ,
էլ փրկություն չկա,
էլ ազատում չկա
այս անսահման ազատ փեղեկտումից։

Ես ի՞նչ անեմ հիմա.—
մշուշի մեջ մտել,
դու գնում ես դեպի խորքը մութի,
և ինձ քո ետևից
քարշ ես տալիս, սե՛ր իմ,
ինձ ո՞վ պիտի դարձի ճամփան հուշի։

Իսկ մշուշի խորքում
կան սպիտակ աչքեր,
կան սպիտակ աչքեր, և հարթ հիշողություն...
թողություն քեզ, սե՛ր իմ,
թողությո՛ւն քեզ,
քե՛զ փառք,
և... թողություն։

◆

Ես պիտի գնամ հեռավոր մի տեղ՝
մոտիկ մի սիրով ապաքինվելու,
ես պիտի ինձ ետ առնեմ քեզանից,
և ետ պիտի գամ՝ նորից գնվելու։

Ես պիտի գնամ հեռավոր մի տեղ՝
մշուշի նման փափուկ ու անձայն,
մի կապույտ ծովի ալիքների տակ
ես պիտի ճոճվեմ որպես ծիածան։

Որպես ծիածան, կամ որպես նրա
արտացոլանքը ջրերի խորքում.—
և ջրերի մեջ ես պիտի լողամ,
և պիտի շողամ կապույտ երկնքում։

Պիտի ամեն ինչ մոռանամ մի օր,
պիտի ամեն ինչ լքեմ անվարան,
իմ հոգին պիտի մաքրեմ ախտերից,
որ դառնամ միայն Սիրո Տաղարան։

Պիտի աչքերիս մշուշը լվամ
մատներով անուշ արշալույսների,
և ինձ իմ ձայնը իմ անդունդներից
իմ բարձունքները ինձ պիտի հրի։

Եվ հուշդ այնքան մոտ պիտի լինի,
այնքան ցանկալի, այնքան իրական,
որ ամեն վայրկյան նա պիտի լինի
իմ ապաքինման գգվալից վկան։

Եվ այնքան քնքուշ, որ ես ցանկանամ
դառնալու կրկին ստրուկը քո հեզ,
կարոտներս ամբողջ բոցավառելով,
կրկին որպես զոհ նվիրեմ ինձ քեզ։

Ես պիտի գնամ հեռավոր մի տեղ՝
մոտիկ մի սիրով ապաքինվելու,
ես պիտի ինձ ետ գնեմ քեզանից,
և ետ պիտի գամ՝ նորից գնվելու։

Այս առուծախի գաղջ մթնոլորտում
արարիչն այս «իրն» ինչո՞ւ ստեղծեց,
սրբագործելով սիրո մեջ նրան,
կարոտի անբույժ ախտերով եղծեց։

ԹՄԲԻՐ

Կիսամութի մեջ սենյակի
նստել էինք մենք երկուսով,
ինչպես խավար խցում վանքի՝
լուսավորված մոմի լույսով։

Ու ծակոտկեն մութի միջով
լռությունն էր դանդաղ ծորում.—
Նա հին ձայնով խոսում ինձ հետ
և խոպոպիկն էր ոլորում։

Նայում էր իմ աչքերի մեջ՝
երբ փակ էին աչքերս արդեն.—
Հնչյունները նրա ձայնի
ուզում էին ինձ կախարդեն։

Ես տրտմորեն լսում նրան
և ինքս ինձ ասում էի՝
«Կախարդված եմ ես, սիրելիս,
խոպոպներով քո մազերի։

Կախարդված եմ ձայնով քո հին,
քո քնքշության բույրով անհաս,
վախենում եմ աչքս բանամ,
և դու իսկույն անհետանաս։

Վախենում եմ՝ աչքս բանամ,
և դու խառնվես այն խոզերին,
որ ճուտիկներ են կուլ տալիս,
խոլոր նայում չար բազեին։

Վախենում եմ՝ աչքս բանամ,
և դու խառնվես այն հորթերին,
որ լճափին խոտ են ծամում
և լսում են չար գորտերին...»։

Վհուկներ են գորտերը չար,
կոկռում են լճի խորքում.—
— Մի վախենա, իմ սիրելի,
փակիր աչքերդ ու մտիր քուն։

Մտիր, որ ես
ասպետի պես

գամ երազում քեզ փախցրնեմ,
սակայն վաղուց փախել ես դու,
քո տեղն ումի՞ց ես հարցրնեմ։

Տե՛ս, ծակոտկեն մութի միջով
լռությունն է դանդաղ ծորում,
դու հին ձայնով խոսում ինձ հետ
և խոպոպիկդ ես ոլորում։

Գիշերն արշալույսից
անջատվել էր լույսի բարակ շերտով,
կապույտ, անթրթիռ ու սառը լույսի,
որի ծավալներում տեղավորվում էին
մեր աշխարհի բոլոր իրերն հերթով՝
սրթսրթալով մենակ ու մեկուսի։

Մինչև արեգակը ելներ երկնակամար,
մինչև այդ խեղճերը տաքանային,
աշնան տերևները անմեկնելի ու հաշտ
արձագանքով էին նայում մահին։

Իջնում էին փափուկ օրորվելով,
վայելելով ասես վայրկյանն անկման,
հետո ոտքերի տակ տրորվելով՝
ժպտում էին տխուր փայլով հանգման։

Մենք սպասում էինք բորբ արևի գալուն,
սակայն աշնանն ո՞վ է տվել բորբ արեգակ,
լսում էինք ձայնը ընկնող տերևների,
կպչում էինք իրար մարմիններով մեր տաք։

Դուք բոլորդ գիտեք տաք մարմինը կնոջ,
հաղորդակից եք դուք շղթայազերծ ցավին,
և ինչ տոթով, մուժով եք դուք նայում հիմա
ձեր տոթակեզ վաղվան կամ անցյալին։

Նայում եք դուք, և ձեր հայացքներում աղոտ
մարմրում է փայլը ընկնող տերևների,
դուք փնտրում եք ձեր պիրկ ողնաշարը քանդող
վազքը խելակորույս մրրիկների։

Դուք փնտրում եք, և ես փնտրում եմ ձեզ հիմա,
ձեզ՝ ձեր մարմինների կաղապարում,
դուք ննջում եք հիմա, դուք ննջում եք հիմա
մեռնող տերևների պաղ անտառում։

Արթնացումի համար ես ձեր մեջ չեմ ճչա
և կթողնեմ, որ դուք հանգիստ ննջեք,
քանի հասկանում եմ ձեր կորուստը անդարձ,
քանի հասկանում եմ, որ այլևս Այն չեք։

ՄԵՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Մայրամուտի վերջին ճառագայթը ծովում
երևի թե Ոսկե Ձկանն է ման գալիս.—
տաք կարոտից իմ խեղճ շրթունքներն են ցավում,
և լույսն օրորում է թրթռումը բառիս։

Ես նայում եմ հեռուն, անվախճանին, հեռուն,
հետո միտքս կրկին դեպի տուն եմ տանում.—
տանն ինձ սպասում է մի անեզր թախիծ,
որ ոչ պատկեր ունի, ոչ էլ անուն։

Պատերը լուռ հիմա,
սեղանը լուռ հիմա,
լուսամփոփը լույսի պատրանքն է լուռ ծամում,—
տանն ինձ սպասում է անդեմ մի լռություն,
որ ոչ պատկեր ունի, ոչ էլ անուն։

Գնամ հիմա,
նրանց
արթնացրնեմ քնից։

և զարդարեմ նրանց տաք բառերով,
խոսեմ առօրյայից,
թանկ ու էժան գնից,
ինքս իմ տրտմությունը խանգարելով։

Եվ համոզեմ նրանց, որ ինձ մի խոսք ասեն,
որ լցվի հոգիս մութ շարքերով,
խոսեն ինձ հետ հանգիստ՝
իբրև ոչինչ չկա,
իմ կարոտը բնավ չակնարկելով։

Եվ թե մեկնումեկը
հանկարծ մի բառ ասի,
ասենք դաժան մի բառ՝
«Մենակություն»,
պատերը ճեղք կտան,
երկինքը փուլ կգա,
և կհոսի շուրջս
թախիծ ու թույն...

Մայրամուտի վերջին ճառագայթը ծովում
երևի թե Ոսկե Ձկանն է ման գալիս,
ես լսում եմ նրա ճողփյունը խուլ, հեռու՝
ինչպես կրծքիս խորքում՝ խլրտումը բառիս։

Ես լսում եմ նրա շարժումները բոլոր,
և ավելի խորքը,
դեպի խորքն եմ հրում,
որ Սերն իր սպիտակ, մաքուր առագաստով
օրորվի իմ երգի ալիքներում։

Դու իմ ձեռքերից կբռնես կամաց
և ինձ կտանես
թույլ շշունջներիդ երգով անսահման,
թախիծների մեջ կճոճվեմ ես մերկ՝
Հիսուսի նման, Հիսուսի նման։

Հեռու լեռների պաղ գագաթներին
կթողնես ինձ մերկ, կթողնես մոլոր,
ինձ քուն կդնես քամիների մեջ,
քեզ հետ կտանես երգերդ բոլոր,

Երգերդ տխուր, երգերդ չկան...
Հեռու լեռների պաղ գագաթներին
ես մերկ ու մենակ՝
հանգած աստղերից մի փոքրիկ խարույկ
կվառեմ այնտեղ,
կվառեմ երկար,
կվառեմ այնքան,
մինչև կդառնա կարոտի կանթեղ։

Այդպես կլինի... և կանթեղի տակ
ասուպների պես երգեր կցոլան.—
ինձ խաչող անգամ ես չեմ ունենա,
կխաչվեմ մենակ, կխաչվեմ ես մերկ՝
Հիսուսի նման, Հիսուսի նման։

ՍԻՐՈ ՀԵՔԻԱԹ

Ես չեմ հավատում ոչ քեզ, Տիրամա՛յր,
և չեմ հավատում ոչ էլ քեզ, օ՛, Տեր.—
մեր շուրջը այնքան զեռուն է վխտում,
մեր ոտքերի տակ կան այնքան որդեր,
որ չեմ հավատում ոչ քեզ, Տիրամայր,
և չեմ հավատում ոչ էլ քեզ, օ, Տեր։

Թեև դուք իբրև ցավ եք դարմանում,
թեև դուք լույս եք ճառագում անվերջ,
սակայն իմ լույսը խեղդվում է ահա
հուսահատության բուունցքների մեջ։

Քո մանկությունը իմն է, հիրավի,
քո մանկությունը չքնաղ է, օ, Տեր,

Ես էլ, քեզ նման լույսով զարդարված,
կերել եմ մարախ ու վայրի խոտեր,
ես էլ քեզ նման չեմ տեսել ծիծաղ,
և ոչ էլ լաց եմ տեսել մի կարգին,
քեզ նման բոբիկ, քեզ նման աղքատ,
քեզ նման մաշված ձորձեր իմ հագին,
քեզ նման, սակայն առանց մոգերի
շրջել եմ կյանքի անապատներում.—
և այս բոլորը ասելուս համար
Տե՛ր, աղաչում եմ քեզանից ներում։

Եվ ինձ քո կողքին դնելուս համար
ես աղաչում եմ քեզանից ներում.—
բայց ի՞նչ էլ ասեմ, ինչպե՞ս էլ ասեմ,
քո վախճանը ինձ չի ոգևորում։

Նայում եմ ահա քո խաչին դարձյալ,
չի ոգևորում քո վախճանն ինձ, Տե՛ր,
ես կապո՞ւյտ, կապո՞ւյտ, անսահման կապույտ
աչքերն եմ ուզում Հուդիտա դստեր,
ես ցավի նման այրվող ու մաքուր
շուրթերն եմ ուզում Հուդիտա դստեր,
այնքան կարոտով ու բարկ եմ ուզում,
որ նայում եմ քեզ, ինձ եմ խղճում, Տե՛ր։

Եվ խաչն անընդհատ գալիս է ինձ մոտ,
և խաչը անվերջ ինձ է հարմարվում.—
դա ամենօրյա վիճակ է, օ՛, Տեր,
եթե խաչվել ես դու դա համարում։

◆

Ծովից մշուշը գալիս, նրա աչքերն էր լցվում
և աչքերից մեղմորեն տարածվում էր ծովի մեջ,
նրա խոնավ հայացքը ջրերի մեջ ներծծվում,
ջրերի հետ ճողփալով կայծկլտում էր թույլ ու խեղճ։

Ավազներում սպիտակ բարակ մարմինը ճոճում
և ճոճելով սուզվում էր հավերժության գիրկը բաց,
և աչքերում մշուշոտ սոված ճայերը ճչում,
կախվում էին օդի մեջ՝ աղերսելով սեր ու հաց։

Ափի խոնավ ավազին, երազների պես ոսկե,
մեռնում էին անհամար ոսկեզրահ զատիկներ,
փլվում էին մեկ առ մեկ ապարանքները խոսքե,
դառնում էին բառերը մոռացության հատիկներ։

Եվ նա լռում էր անվերջ, լռում էր լուռ ու մենակ,
և շնչում էր հեռավոր, անեզրական կապույտում,
կախվում էր աստղը վերից, ծովը ուռչում էր անհագ,
և կաթում էր մշուշից մելամաղձոտ, կապույտ թույն։

Նա շնչում էր հեռավոր, անեզրական կապույտում,
և էլ երկար չի կանգնի նա ափին լուռ ու մենակ.—
ծովը նրան կտանի՞, ծովը նրան կտանի՞,
ծովն՝ անուշիկ երազի գերեզմանը կենդանի։

ԳԻՆԱՐԲՈՒՔ

Գինին այդ օրն ինձ գետին էր զարկել,
և մարմրնիս մեջ միրաժն էր ծփում,
բառաչում էին նյարդերս ցավից
և աղեղի տակ խելահեղ գինու
թռչկոտում էին, անզոր թպրտում։

Եվ փողփողում էր մարմինս օդում,
հրահեղուկով ճոճվում էր համառ՝
այն բոցի նման, որ գալարվում է
մի վայրկյան հետո հանգչելու համար։

Եվ մատներիս մեջ խաղում էր կարոտ,
և աչքերիս մեջ ծփում էր միրաժ,
միրաժի միջով հանկարծ նա եկավ
փափուկ քայլերով զարմանահրաշ։

Եկավ ու նստեց կրակի կողքին
ԵՒ կրակի հետ սկսեց խաղալ...

Հրդեհվում էին
դալկացող սրտիս այգեստանները՝
ողկույզ առ ողկույզ,
թաղար առ թաղար։

Եվ նա քայլում էր մոխիրների մեջ,
ԵՒ նա՝ գարունը, արյունում էր ինձ.—
մի մեծ կործանում մտել էր իմ մեջ,
մոխիր էր սարքում իմ բոց արյունից։

Մոխի՜ր։
Ավերա՜կ։
Հրդե՜հ։
Ու հանգչո՜ւմ։

Վերջին թրթիռից հուսահատ կառչում
ԵՒ արթնանում եմ երակ առ երակ։
Լույսի քնարն է քեզ համար հնչում,
ԵՒ դու ծաղկում ես, իմ խե՜ղճ ավերակ։

Քո մեջ վերստին,
քո մեջ վերստին
խաղում է հավերժ թրթիռն Անհունի.—
— Ինչի՞ համար ես ծաղկում, սիրելիս,
դու այդքան երկար ինչի՞ ես ծաղկում...
— Այն մի վայրկյանի Մեծ կործանումի
համար եմ ծաղկում,
այն մի վայրկյանի Մեծ կործանումի։

ՄՇՈՒՇ

Պայծառ լույսերի մեջ, ջահերի մեջ,
մարմարակերտ, ողորկ հատակների վրա,
հայելազարդ շքեղ դահլիճներում,
որտեղ թույլ շողն անգամ կհուրհրա,
դու՝ Լուսատուդ հզոր,
քո երկնքով
իջար որպես մշուշ ու մեղեդի,
որպես աստվածուհի, որպես հովանավոր
մեր մեղսական սիրո հազարամյա երթին։

Իջար որպես Աստղիկ, որպես տարփանք,
որպես մի Ֆրինե՝ մերկ ու անմերձելի,
որպես բորբ ուղեղի անուշ հափրանք
և զգացում՝ մեռնող հազար ձևի։
Իջա՜ր, իջա՜ր, իջա՜ր,
և քայլեցիր մենակ,
ես, անկյունում կանգնած, քամվում էի,
դու լուսեղեն մագնիս ու տխրություն դու բարկ,
որով ես իմ խաչին գամվում էի։

Քեզնով գամվում էի ես իմ խաչին,
և մոմի պես վառվում, հալվում էի,
ես աղոթքն էի քո առաջին,
և քո գոյության անունն էի,
սակայն անգամ դու չգիտեիր,
որ քո ճախրանքի անհունն էի։

...Օ, Ֆրինե՜, Աստղի՜կ, Աֆրոդիտե՜,
օ, Լուսատու՝ իջած քո երկնքով,
պարզվեց, որ մի քոսոտ քո անունը գիտե
և կարող է բռնել քեզ իր բորոտ ձեռքով։

Բռնել և այնպես հեշտ երկնազերծել,
քեզ դարձրնել այնքան սովորական,
որ իմ սրտի վրա խորունկ քերծեր
և խոր ու մութ վիհեր երևան գան։

Օ, Ֆրինե՜, Աստղի՜կ, Աֆրոդիտե՜...

◆

Զմեռն եկավ կրկին,
ձմեռն անցավ կրկին,
գարունն եկավ կրկին,
գարունն անցավ կրկին,
վա՜յ ինձ, վա՜յ ինձ, սե՛ր իմ,
դու քեզ տվիր դարձյալ
փոփոխական մտքին,
փոփոխական կրքին։

Քո անհաստատ ձեռքով
հանգավ բոցը գարնան,
դու չթողիր, ավա՜ղ,
որ բոց ծաղիկները
բորբ պտուղներ դառնան։

Երբ որ եղանակը
տաք ու հով է անում,
մեկ արևն է խփում
ու մեկ զով է անում,
խարխուլ խրճիթների
գերանները ծխոտ
իրենց ճաքճաքերից
արցունքներ են քամում։

Ախ, դու այնքան այդպես
տաք ու հով ես արել,
մեկ արև ու մեկ էլ
ձմռան դող ես արել,
որ խրճիթում իմ խեղճ՝
այս իմ հոգում անձուկ
և իմ սրտում անվերջ
կաթիլք է ու արցունք։

ՏԱՔ ՍԱԼԵՐ

Տաք են սալերը, ջուրն է հոսում,
Ննջում են խոտերն արևի տակ,
քանի՜-քանի շերտ երկինքներ կան
Թերթաքարերում փխրուն ու տաք։

Տաք են սալերը, ջուրն է հոսում,
և մեղուներն են բզզում անվերջ
արևային տաք միրաժի մեջ,
հասուն արտերի բորբ երազում։

Տաք են սալերը, ջուրն է հոսում.—
ասեղնտում են մեջքս ահա
ճառագայթները միլիոն տարվա,
որ ինչ-որ բան են լուռ փսփսում։

Ա՜խ, մեջքիս վրա, մարմնիս վրա
Ներանք կույրերի այբուբենով
այն պատմությունն են շարադրում,
որ սկսվում է Հայկ ու Բելով։

Թերթաքարերը շոյում մեկ-մեկ
և երկինքներն եմ հերթով բացում,
Աղեղնավորը նստել ցածում
և երազում է՝ ինչպես երբեք։

Արդյոք ինչե՞ր է նա երազում,
ես դա տեսնում եմ փակ աչքերով,
փակ, ինչպես դուռը քաջ Մհերի.—
տաք են քարերը, ջուրն է հոսում։

Տաք են սալերը, ջուրն է հոսում.—
չփակեք հանկարծ ջրի ճամփան.—
Աղեղնավորը նստել անբան
և փուչ բաներ է լուռ երազում։

Այսինքն՝ գուցե փուչ չէ՞ բնավ՝
որ անակնկալ երևայիր,
նայեիր՝ դեմդ վիհ է հսկա,
և կիրճի եզրով վախով գայիր։

Նա աղեղը քեզ կամուրջ աներ
և դու անցնեիր այդ կամրջով,
և ապա գայիր, մտնեիր ներս
փակ թարթիչներիս մթին կիրճով։

...Տաք են սալերը, ջուրն է հոսում,
ննջում են խոտերն արևի տակ,
քանի՞-քանի շերտ երկինքներ կան
մեր անցյալի մեջ՝ փխրուն ու տաք։

Թերթաքարերը շոյում մեկ-մեկ
և երկինքներն եմ հերթով բացում.—
ամեն երկնքում հրեշտակների
ճերմակ խմբեր են լուռ թևածում։

Լույս են բխում աչքերդ անվերջ,
լույս է ցանում ձեռքդ կաթե,
և քամում են հազար ասպետ
շրթունքներիդ մեղրը սաթե։

Նրանք քամում գիշեր ու տիվ
և հափրանքի մեջ երազկուն
ժպտում են ծույլ երանությամբ
և հավիտյան մտնում են քուն։

Եվ չի հատնում մեղրը բնավ,
և չի իջնում երբեք խավար,
քանի որ քո կրծքի խորքում
արեգակը բխում է հար։

ՊՈՂՆԱՁԵ ՎԱՐԴ

ԱԶԳՆ ՈՒ ՔԱՐԸ

Լերկ բլուրներ, սարեր, ժայռեր,
լերկ քարերի հարահոս վազք.—
սրանից է կերպար առել
բիբլիական հզոր մի ազգ։

Մեկ այդ ազգն է քարի վրա,
մեկ այդ քարն է ազգի մեջքին,
թավալվում են գիլ ու գլոր՝
ձեռ առնելով ժամանակին։

Քարը ազգին, ազգը քարին,
իրար խելք են տալիս-առնում,
և նրանց մեջ նույն արևի
խարկված ոգին է սավառնում։

Եվ բաժանում չկա հավետ,
քարն ու ազգը իրար կպած,
արեգակի պտույտի հետ,
տիեզերքով մեր չափչփած

Այնքան պիտի թռչեն, սուրան,
մինչև բախտի դուռը ջարդեն,
ինչպես Դավթի քարը ճեղքեց
բութ Գողիաթի զրահն անդեմ։

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԵՐ

Երկնագույն երգի քղանցքը դեղին,
Սարսուռներ ծնող իր նուրբ հպումով
Բանաստեղծների մեր անզոր ցեղին
Նինջ է պարգևում վարդ ու քրքումով։

Եվ երազային այդ նինջի խորքում
Տանջալի մտքով, բայց հոգով անհոգ,
Մենք ոչ թե նրա մարմինն ենք գրկում,
Այլ համբուրում ենք քղանցքները լոկ։

ՀԱՎԱՏԻ ՀՐԱՎԵՐ

Ծաղիկներ բերեք եկողներին,
Նվիրեք նրանց ծաղկեփնջեր,
մեր ամենօրյա երգողներին,
և՝ ում ձայնը որ դեռ չի հնչել։

Ծաղիկներ տվեք, որ չգնան,
որ էլ երբևէ մեզ չքեն,
ծաղիկների պես ժպտան իրար
և իրար սիրո հիմներ երգեն։

Թող նրանք, ովքեր հեռվում են դեռ,
լսեն դրախտի կանչը զնգուն
և թրթռոցով երջանկաբեր
կտրեն ճանապարհն իրենց անքուն։

Ջդիմանան մեր զիլ կանչերին
և խենթի նման վազեն ու գան
բոլոր դժբախտներն անմխիթար
և արքայուհին, և խեղճ արքան։

Նրանք, որ ականջ ունեն, լսեն,
որ լրիվ սիրտ են, համակ հոգի,

որ անմտորեն ելան ի զեն՝
Ոչ իբրև պաշտպան մեր բողոքի։

Թող իրար ձայն տան, ելնեն ու գան,
Երջանկությունից մոլորվելով,
Ողջ մարդկությունը դառնա մի մարդ՝
Իր մասնատումից բոլորվելով։

Եվ մենք, հավաքված իրար գլխի,
Հավատանք իրար, մեկտեղ խնդանք,
Վերելակներով ելնենք երկինք,
Ուրախանանք, որ Աստծուն գտանք...

...Տեսեք, գալիս են արդեն քիչ-քիչ,
Քիչ-քիչ գալիս են, որ շատանան,
Իրար սիրելու կանչն ամոքիչ
Էլ չի հասկանում խև սատանան։

Ծաղիկներ բերեք եկողներին,
Նվիրեք խոշոր ծաղկեփնջեր՝
Նվագողներին, երգողներին,
Եվ՝ ում ձայնը որ դեռ չի հնչել։

ԵՐԿՐՈՐԴ ՈՐԴԻՆ

Ինչ կլիներ, եթե Աստված
Երկու զավակ ունենար.
Կհամբառնար մեկը խաչից,
Մյուսը մեզ կմնար։

Կախտահաներ մարդկանց հոգին
Եվ հավատի կկոչեր,
Որ լույսն այնտեղ՝ սրտերի մեջ,
Հոր խոսքերով կարկաչեր։

Կկարկաչեր լույսը այնտեղ,
Որտեղ ծարավ կա լույսի,
Եվ կփոխվեր երջանկության
Խուլ տանջանքը Հիսուսի։

...Թե՞ սրտերը միշտ էլ այսպես
Կմնային մութ ու նենգ.
«Հրա՜շք-հրա՜շք»,— կգոռային
Փարիսեցվոց նման մենք։

Եվ տանջանքը կբերկարեր
Հեգ Հիսուսի հեգ Եղբոր.
Մեղքն էլ հետը կնորոգվեր՝
Անհուսության նման խոր։

...Կանչե՞նք Որդուն, թե՞ չկանչենք.—
Այս է տանջանքը հիմի.
Քանզի բնավ չի հավաքվում
Ամենքիս ջանքը ի մի։

Դուրսը՝ թախծի հեղեղ,
Ներսս անհուն թախիծ.—
Մեկը մի բան երգեր
աստվածային Բախից։
Գոնե մի բան լիներ,
լույսի մի ճառագայթ,
որ այդ թախծի ծովում
դառնար ինձ առագաստ։
Թե ոչ՝ ուզում եմ ես
անվերադարձ, անհետք,
տխուր կոհակվելով
հանդերի մեջ ցրվել.—

երևի թե մայրս
աչք է եղել նրբին,
որ ես այսքան մաքուր
արտասուք եմ ծնվել։

◆

Ես բախտի ո՞րքն եմ, թե՞ զավակն արդար,
ինձ համար մեկ է, չեմ տրտնջում ես,—
միայն թե մեկը իմ հոգին կարդար
ինձ այս աշխարհին պարգևողի պես։

Մորս պես մեկը նստեր իմ կողքին,
բռներ ձեռքերս իր լույս ձեռքերով,
և նորոգեր իմ փշրված հոգին
ոչ թե խոսքերով, այլ լուռ երգելով։

Եվ հավատայի ես կյանքի ոգուն,
և հավատայի անտերունչ բախտին,
և աղոթեի ինձանից թաքուն
մարդկային սիրո անմեռ դրախտին։

ՄԱՅՐ

Պատկերիդ հետ զրուցում եմ օրն ի բուն,
Ո՞վ կարող է ինձ ասել, թե դու չկաս.—
Արցունքներս քո ձեռքերով ես սրբում,
Քիչ է մնում՝ իմ փոխարեն հեկեկաս։

Մա՛յր, ամեն օր ինձ մայրություն ես անում,
Բայց քանի՞ օր ես քո զավակը եղա.—
Ցավն իմ հոգուց հառաչանքներ է քամում,
Որ ողոքեմ՝ մա՛յր, քա՛ղցր մայր, քեզ մեղա։

Մեղա սրտիդ, արցունքներիդ, տանջանքիդ,
Մեղա մտքիդ ճառագումին անխափան,
Աղոթքներիդ, մրմունջներիդ ու ջանքիդ.
Քեզանից դուրս հիմա չկա ոչ մի բան։

Որքան էլ որ ապրումներս խորանան,
Քո հայացքի շրջանակից եմ կախված,
Շրթունքներիս՝ քո խոսքերի մանանան,
Հոգիս՝ սիրուդ լուսյան մեջ թաթախված։

Մա՛յր, ամեն օր ինձ մայրություն ես անում,
Բայց քանի՞ օր ես քո զավակը եղա.—
Ցավն իմ հոգուց հին հառաչանքն է քամում,
Որ ողոքեմ՝ մա՛յր, քա՛ղցր մայր, քեզ մեղա։

ԿՀԱՍԿԱՆԱՅԻ՞Ն

Կհասկանայի՞ն իմ ծնողները,
իմ հայրն ու մայրը կհասկանայի՞ն,
թե ինչու եմ ես գիշերներ անքուն
հետևում այսպես կյանքին ու մահին։

Սևեռուն հոգով հետևում եմ ես
անքուն գիշերներ կյանքին ու մահին.—
Կիմանայի՞ն, թե ինչո՞ւ է այդպես,
իմ ծնողներն ինձ կհասկանայի՞ն։

Ա՛խ, հոգնած ու լուռ ննջում են նրանք
Սուրբ Սարգիս սարի լանջի մեջ փափուկ,
Նրանց շիրիմը շոյում է հիմա
Սուրբ Հովհաննեսի հովը խուսափուկ։

Ես լեռներ ունեմ անբարբառելի,
որ լեռ սրտերը հիմքից կհուզեն,
և չի փոխարկվի բնավ բառերի
Նրանց քարեղեն զանգվածը վսեմ։

Ես լեռներ ունեմ անթիվ-անհամար,
բայց սար եմ ասում բլուրին այդ թանկ,
քանի որ սարերն իմ բիբլիական
պահված են նրա տաքուկ կրծքի տակ։

Թաքցրած զանգերն իմ բիբլիական,
սուրբ ղողանջները իմ աստվածային....
Կհասկանայի՞ն իմ ծնողները,
իմ հայրն ու մայրը, կհասկանայի՞ն։

Ողորմի տվեք ձեր անցյալներին,
ինձնից ձեզ խրատ— ողորմի տվեք,—
և ականջ կախեք նրանց ձայներին,
և նրանց բարի գործերը թվեք։

Գիշերվա անուշ ցող է ողորմին՝
ձեր սրտի քարը կրկին կծաղկի,
և ձեր աչքերում նորից մարդացման
ցողով պարուրված արև կծագի։

Նրանք ձեզանից ոչինչ չեն ուզում,
ողորմի տվեք անցավորներին.—

— Անթիվ են նրանք, ես ինչպե՞ս թվեմ
նրանց սուրբ հուշի հանցավորներին։

ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Կարոտներիցս մի երկու՝ կարոտ
և հույսերիցս լոկ մի երկու հույս
շալակած ընկա ճամփան քարքարոտ՝
դեպի երկնքի գահը երկնասույզ։

Անտրտունջ, անվախ, լուռ ու անդադրում
քայլեցի երկար փիշերներ ու տիվ,
ուժերս փուշ ու մացառն էր վատնում,
և միտքս՝ ցավի միջատներն անթիվ։

Քայլեցի երկար, և կամաց-կամաց
տեսա, որ կյանքը մարմինս է լքում.—
ես ո՞ւմ հանձնեի պատյանն այս քամած,
գերեզմանեի ո՞ր ցավի գրկում։

Սակայն ցավալին այն է, հիրավի,
որ կարոտներս նույնքան լուռ, անքուն
իմ հույսերի հետ բազմանում էին
և երջանկություն սաղմոսում զնգուն։

Ես ձեզ ի՞նչ թողի, ի՞նչ թողի ես ձեզ
պայծառ կյանքի ու հրճվանքների տեղ՝
մի հզոր բանակ լուռ կարոտների
և հույսերի մի անպարտելի ցեղ։

ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԻՆ

Դու վերադարձար.... Քեզ բարի գալուստ, բարի վերադարձ՝
Նրանց անունից, ովքեր այսուհետ աշխարհ են գալու,
Ճերմակ թիկնոցդ առաքյալի պես վերից վար հագած,
Դու նրանց համար կանցնես արտերով նոր կծղած գարու։

Նրանք կտեսնեն քո խաժ աչքերի շողանքը տաքուկ,
Եվ կթվա թե՝ հասուն արտերը արևն է այրում,
Եվ չեն հասկանա՝ տեսի՞լք է արդյոք դա մի խուսափուկ,
Թե՞ երկրի վրա հրաշքով իջած Աստված է քայլում։

Բարի վերադարձ Հայոց ձորերի, լերանց անունից,
Հայոց աստղերի, որ քո ճակատին իջան քնքշորեն,
Ահա գալիս են Հայոց հովերը Հայոց անհունից,
Որ օվկիանոսներ կտրած աճյունդ մեղմորեն շոյեն։

Բարի վերադարձ... Հասկանալի է՝ էլ գնալ չկա։
Քո անցած բոլոր ճամփեքը հիմա խեղճ են ու թափուր.—
Սրտիդ մի կեսը մյուսի համար պիտի հեկեկա
Քո խորքերի մեջ դարերով զտված արցունքով մաքուր։

Եվ դու ասում ես՝
— Իրողությունը հենց այս է, որ կա,
Իմ բարեկամներ, իմ մարդասերներ, դուք մի բարկանաք.—
Կիսված է հողս, կիսված է կյանքս, ճակատագիրս,
Ուրեմն՝ ահա, կիսեցեք նաև սիրտս, մարմինս...
Կույր եք՝ չտեսնեք, խուլ՝ չհասկանաք...

Քո անունն այսու հավերժությունը միայն պիտի տա,
Եվ հայացքիդ դեմ աշխարհի խիղճը պիտի որ քրտնի.—
Քո թափառական ու կիսված սիրտը պիտի թպրտա
Այնքան ժամանակ, մինչև որ մյուս իր կեսը գտնի։

ԿՅԱՆՔԸ

Երկար, անքուն մի ցերեկ—
մանկություն էր երևի.
անուշ, կանաչ ճանապարհ
քնքշության ու սերերի։
Ու քուն մտա։ Ծիծաղի
մի ծաղկեփունջ կար գրկիս.—
Երբ արթնացա ես քնից՝
Հոգսը նստած էր կրծքիս։

Ու հոգսն ամուր ինձ գրկած,
աշխատեցի օրն ի բուն՝
ականջս կախ միշտ նրա
խոստումներին ծեքծեքուն։
Գիշերն իջավ։ Հոգսը ես
տվի բառիս ու երդիս.—
Երբ արթնացա ես քնից՝
Ցավը նստած էր կրծքիս։

Ու ցավն ամուր ինձ գրկած,
աշխատեցի ես կրկին.—
ցավն ուղեկից է հավերժ
ցավոտ երկրին ու երգին։
Ամբողջ գիշեր իրարու
օրորեցինք ցավն ու ես.—
առավոտյան վեր ելանք.
ցավն՝ ամեհի, իսկ ես՝ հեզ։

Եվ արթնությունն ավելի
ցավոտ թվաց, քան թե կար,—
պարուրեցին ինձ, ավա՜ղ,
Ահն ու Տանջանքը երկար։
Ու երբ գիշերը իջավ,
Ահը նստած էր կրծքիս.—
երբ արթնացա ես քնից՝
...Մահը... նստած էր կրծքիս։

ԴԺՎԱՐ ԿՅԱՆՔ

Հազար տանջանք կա օրերում անիմաստ.—
դեղին լապտեր և տխրության կապույտ սյուն—
գնում էի գիշերվա մեջ անհաստատ,
մութն իր թույնը շրթունքներիս էր քսում,
տեսա ես ինձ և տրտմորեն ասացի՝
քեզ էլ, ավա՜ղ, դժվար կյանք է սպասում։

Տեսա ես ինձ, որ միայնակ, անպաշտպան,
մութի վրա լույս էր, լույս էր արտասվում.—
ես մանկորեն աչքերի մեջ նայեցի՝
«Այս պատանու հոգուն ի՞նչ է երազվում.—
սա պանդուխտ է՝ հավերժական տենդի մեջ,
սրան, ավա՜ղ, դժվար կյանք է սպասում»։

Սվսվում են տերևները աշնային,
պատառոտված կոշիկներին քսմսվում.—

Նրա հոգին դժոխք բնավ չի իջնի,
Նրա ձայնը դրախտի մեջ է լսվում,—
սակայն կյանքը պիտի լինի հար դժոխք.
սրան, ավա՜ղ, տանջանք կյանք է սպասում։

Նա, խոսքերի տխրությունը քանդելով,
պիտի գորգեր հյուսի մութում ու լույսում.—
նա նայում է խրախճանքի աշխարհին,
նրա հոգին կրակի մեջ է մրսում,
չի հեկեկում և չի լալիս ողբագին,
նրան, Տե՛ր իմ, դաժան կյանք է սպասում։

Փրկի՛ր նրան, Տե՛ր իմ, փրկիր, որ ապրի.—
այդ մի լույսը խավարողներ կան բազում,
փրկիր նրան փորձանքներից անհամար,
խև մտքերից, իդեալներից ազազուն,
փրկիր նրան, որ քո ասածը լինի...
նրան կողքիդ թափուր գահն է սպասում։

Ծաղկից հոտ եմ քաշում՝
Աշուն է, խոր աշուն։

Ծառից հոտ եմ քաշում՝
Աշուն է, խոր աշուն։

Ժայռից հոտ եմ քաշում՝
Աշուն է, խոր աշուն։

Հողից հոտ եմ քաշում՝
Աշուն է, խոր աշուն։

Լույսից հոտ եմ քաշում՝
Աշուն է, խոր աշուն։

Հույսից հոտ եմ քաշում՝
Աշուն է, խոր աշուն։

Քամու բերանն ընկած
Երազները նախշուն
Փսփսում են իրար՝
— Աշուն է, խոր աշուն։

◆

Հավատարմության ճյուղից եմ կախված՝
Հուսախաբության անդունդի վրա.—
Անմաքուր ձեռքով հավիտյան ծախված
Փրկության արև, գլխիս հուրհրա։

Հուրհրա գլխիս, ոգի դարձրու,
Դարձրու ցոլանքը քո ոսկե ջահի.—
Անկումը այնքան սարսափելի չէ,
Որքան անկումի ճամփան տանջալի։

Անհավատարիմ ձեռքերով ծախված՝
Հավատարմության ճյուղից եմ կախված։

◆

Վերադարձ էր ճչում հոգիս կորած երգին,
և աչքերիցս ներս մութն էր գահավիժում,
բայց կար անհանգչելի հավերժական մի բան,
որ երգի մեջ ապրող իմ անցյալն էր հիշում։

Եվ ես, ոսկե դույլով անդիմադիր թռած,
սուրում էի դեպի աստղը պայծառագույն՝
լույս բերելու երգին՝ անակնկալ լռած,
ննջեցյալի նման՝ սրտիս դիակառքում։

— Ախ, ես տեսա նրանց կործանումը անմիտ,
և մոլուցքը վայրի՝ անխիղճ խրժռելու՝
ատամնանիվավոր քաղաքների առջև
նստած էին անատամ գյուղակները հլու։

Ահա ամպերը ճամփա ընկան
երկնքի անհայտ ճամփաներով.—
ծառերը, նրանց այպանելով,
պաղ ստվերները նրանց հագան,
այս պատմությունը բիբլիական
այստեղ չի գրվի այս բառերով։

Չի գրվի բնավ, որովհետև
սրանց մեջ նման ոչինչ չկա.—
ամպը անհոգ է, ծառը՝ ագահ,
ծառը ծանր է, ամպը՝ թեթև,
ծառը պահվում է ամպի ետև,
որ արևի հետ լույսաշխարհ գա։

Եվ երբ գալիս է նա լույսաշխարհ.
տեսնում ենք՝ ծառը ամպ է լրիվ,
իր ծվենները շաղած ցրիվ,
կախվել է օդում նշխար-նշխար.—
ամպերն էլ, պարզ է, ծառեր են գիժ՝
թափառական ու գանգրախոիվ։

Օ՜, դու իմաստուն, հավերժական
փոխակերպության ոգի ներհուն,
այս ի՞նչ ապրելու ուժ ես բերում
և հանգստություն եռեմական.—
մեր աստվածները հենց մեր մեջ կան,
և մենք ապրում ենք երկինքներում։

◆

Կարող է, որ լիներ
զարմանալի անկում՝
այս հողեղեն մարմնի
մի փլուզում վայրի,
և համբարձվեր հանկարծ
աստղը պայծառագույն,
որ դրված է խորքում
մարմնի կամ քարայրի։

Կարող է, որ հանկարծ
Աստղը պայծառագույն
հողմացրիվ աներ
օթևանն իր ցավից,
կարող է, որ լիներ
աննախադեպ անկում՝
եթե հանկարծ ճիչը
դուրս չթռչեր կավից։

— Իմ արյան մեջ ապրող
հրաշք փորձառություն,
այս կործանվող նյութին
իր կործանման պահին
լեր զորավի՛գ հզոր՝
տուր հարությո՛ւն։

Հարությո՛ւն տուր սրան,
տուր Հարությո՛ւն,
իմ արյան մեջ ապրող
Արդարություն։
Իմ արյան մեջ ապրող
հին բարություն,
ներթափանցիր նյութը
մի նոր քնքշությունով,
և կախարդիր կյանքով՝
տուր Հարությո՛ւն։

Արդարությունն ամբողջ
և բարությունն ամբողջ,
և արյան մեջ ապրող
փորձառություն,
գուրգուրեցին նյութը,
շունչ փչեցին նրան
և շղթայած տարան
խոր ծերություն։

Ինչ-որ հեռու մի ժամանակ,
ինչ-որ անհայտ մի երգում,
ձայնի նման կամ աստղի պես
ապրում էի երկնքում։

Թռչում էի ամպերի հետ,
աստղերի մեջ զրնգում՝
ինչ-որ հեռու մի ժամանակ,
ինչ-որ անհայտ մի երգում։

Ապրում էի երկնի բոլոր
արարածոց բախտերով՝
անձրևներին, կայծակներին
«բարի ճամփա» մաղթելով։

Եվ ամառվա մի տաք գիշեր,
ոնց կործանվող անգին թագ,
աստղը ցոլաց, և աստղի հետ
իջա երկրի գիրկը տաք։

Անձրևն իջավ. անձրևի հետ
հողն ինձ իր խորքը ձգեց.—
դուրս ժայթքեցի կաղնու նման
կայծակն իջավ, ինձ ճեղքեց։

...Ամեն գիշեր խոր խավարում,
աղոթքի պես, հույսի պես,
շողշողում է սիրտս ճեղքված՝
ճեղքված սուտակ աստղի պես։

◆

Կախարդվածի պես կանգնել եմ այստեղ,
լսում եմ շշուկն ամեն տերևի,
ամեն հնչումը նրա բազմաստեղ.—
սա կախարդական ծառ է երևի։

Պիտի որ այսպես չլիներ բնավ,
պիտի որ դրան չհավատայի.—
կախարդվածի պես նայում եմ լուսնին,
թվում է՝ մեռած պատկերն է մահի։

Կախարդվածի պես կանգնել եմ տեղում,
թվում է՝ այդպես պիտի չլիներ,
թվում է՝ ջուրը անցյալն է պեղում,
լսում եմ կորած մարդկային ձայներ։

Եվ այդ ձայները ջրերի հանգով
թվում է՝ հոգնած մարմինս են տանում,
տանում են՝ փակեն համաշխարհային
մութ քառսների անտակ զնդանում։

Թվում է՝ ոչինչ էլ չի մնացել,
որ գուրգուրի ինձ քնքշությամբ անհուն.—
Արթնացրեք ինձ այս դաժան քնից,
այս կախարդանքին էլ չեմ դիմանում։

ՄԵՆԱՎՈՐ ՏՈՒՆԸ

Լեռան վրա, աստղերի տակ, միայնակ,
խոնարհ մի տուն է կանգնած,
որտեղ բնավ ներս չի մտել միտքն անհագ՝
սարսափներով ահագնած։

Մենավոր լույսն ու մենավոր տունն այնտեղ
ընկերներ են իրարու.—
մենավոր լույսն ու մենավոր տունն այնտեղ
մունետիկներն են բարու։

Խորհրդարան երազների մեջ ապրող
մտերմության ու կյանքի,
շրշյունների և բույրերի մեջ հափրող
սիրո տաքուկ հրճվանքի։

Հոգսերից ու տանջանքներից փախչելու
մխիթարիչ կացարան,
ուր տիրուհին հանգստությունն է անքեն,
և լռությունը՝ ծառան։

Այդ ծառայի ծառան իմ տենչն է հիմա՝
այդ տնակում հանգչելու,
այս խելագար աղմուկներից հավիտյան
նրա գիրկը փախչելու։

Մենավոր լույսն ու մենավոր տունն այնտեղ
իմ ընկերներն են տխուր,
որ նետում են դեպի աստղերը սուտակ
երազներս ոսկեխույր։

◆

Ելնեմ, արևին գնամ ընդառաջ,
մաքրեմ իմ միջից բողոք ու հառաչ
և զվարթ խնդամ,
օդի մեջ բռնեմ մի փոքրիկ թռչուն,
գողանամ նրա ծիծաղը հնչուն,
սիրտս նրան տամ։

Իմ սիրտը նրա կրծքի մեջ դնեմ,
և նրա կյանքով կյանքս կրկընեմ՝
անհոգ ու բարի,
հավատամ նրա իմաստությանը
և քաղաքակիրթ բիրտ ստությանը
իմ ճանապարհի։

Այս ակնթարթի խաբկանքի դիմաց
իմաստուններ են լալկվել բանիմաց
և հավետ լռել.—
մեր արարիչը երկփեղկել է մեզ,
կյանքն այդ կեսերը դարձրել հազար կես
և այդպես կռել։

Դնեմ իմ սիրտը այդ թռչնակի մեջ
և մաքրեմ նրան խաբկանքներից խեղճ,
որ ցավս անցնի.—
գուցե թռչունն այդ իր թևերի տակ,
փետուրների մեջ գուրգուրոտ ու տաք
ինձ վերածընի։

ՏԵՍԻԼՔ

Ահա, մենք բոլորս, որդիքն արեգակի,
իմաստնորեն նստած աշնան տերևներին՝
որպես մակույկներում,
և մեր թախծապարուր հայացքները հառած

ինքնամոռաց հեռուն,
նավարկում ենք դեպի
անդառնալի ձմեռ։

...Ինձ գարո՞ւնն է ծնել...
...Ինձ ամա՞ռն է ծնել...
...Ինձ աշո՞ւնն է ծնել...

Ինձ մի մակույկ տվեք աշնան տերևներից,
որ նավարկեմ դեպի այն աշխարհը անհայտ,
որտեղ սպասում են ինձ պսպղուն աստղեր,
անոտնակոխ ձներ։

...Ինձ աշո՞ւնն է ծնել...

Ահա, մենք բոլորս, որդիքն արեգակի,
իմաստնորեն նստած աշնան տերևներին՝
որպես մակույկներում,
և մեր թախծապարուր հայացքները հառած
ինքնամոռաց հեռուն,
նավարկում ենք դեպի
անդառնալի ձմեռ։

◆

Բոլորդ արդեն քնա՞ծ եք։ Ոչի՛նչ։
Ես ոգիների համար եմ երգում.—
Ապաշխարհային ոգիներն այդ ջինջ
հավաքվել հիմա մթին երկնքում
և լուռ ու խոնարհ լսում են վերից
շնչառությունը ձեր ոգեհալած՝
իրենց աստղային լույսով առկայծող
աչքերը ձեր մութ դեմքերին հառած։

Նրանք կարդում են տագնապները ձեր
և հառաչում են անձայն ու մռայլ,
և ճռճռում է երկրագունդը ծեր

իր չոր ու տխմար առանցքի վրա։
Ախ, այդ ձայները խենթացնում նրանց,
անդարմանելի վշտով են պատում.—
Այդ պատճառով ես երգում եմ հոգնած
ձեր քնի անծայր այս անապատում։

Քնքուշ բառերով կանչում եմ, որ գան,
ախ, ձեր քնի մեջ թող գան ձեզ այցի
և կարեկցանքով հին պապենական
սրբեն վշտերը ձեր վհատվածի։
Եվ բացեն ձեր դեմ աստղային հեռուն,
ճանապարհները ոգեղեն կյանքի
և ձեր նյութապաշտ կյանքը սևեռուն
վերածեն ոգու մեծ խրախճանքի։

ՔԱՌՅԱԿՆԵՐ

Աղմուկներում, խոսքերի մեջ, վեճերում
Լռությունը հազար անգամ կրկնվեց,
Կրկնվելով, ահագնացավ, դարձավ մեծ
Ու նա մնաց մեր լուռ կյանքի էջերում։

◆

Մի ակնթարթ լուսավորեց ու հանգավ,
Եվ ծերացավ տիեզերքը բյուր անգամ.—
Բախտի խա՞ղ էր, թե՞ ծիծաղ էր, թե՞ պատգամ՝
Սերը կյանքը լուսավորեց ու հանգավ։

◆

Տխուր մարդուն ուրախ բաներ պատմեցին,
Խառնվեցին ծիծաղ, արցունք, հոգու ցավ.—
Ծիծաղն անցավ արձագանքով սրտե-սիրտ,
Իսկ արցունքը լոկ իր հոգում ծովացավ։

◆

Այսօր էլ կրկին օրն իրիկնացավ.
Աստված ուղարկեց հրեշտակներին,
որ երկնի անթիվ աշտանակներում
վառեն աստղերի մոմերը դեղին։

Նրանց ոչ քամին կտարուբերի,
ոչ կհանգցրնի ցոլանքը նրանց,
որքան էլ շողում խոսք արտաբերի՝
չի փոխի օրենքն Աստծո գրած։

Ես մեկ լսում եմ վայունը քամու,
մեկ էլ նայում եմ իմ բախտի մոմին.—
ախ, գիշեր ու զոր անմիտ փչելով
իմ աշտանակը սառցրեց քամին։

Ահա, մարմինս այնպես է սառել,
որ նրա մեջ մոմ դժվար թե վառվի.—
Սա պիտի նետել քուրան Աստծո,
որ սրա նման մի նորն արարվի։

...Շնորհակալ եմ այն հրեշտակից,
որ չուշացավ իմ մոմը վառելու,
առանց նրա ուժ չէի ունենա
իմ տանջանքները կառավարելու։

ԵՐԱԶ ԵՎ ԱՐԹՆՈՒԹՅՈՒՆ

Կեսգիշերին հանկարծ
մեկն ինձ արթնացրեց,
շատ իրական ձայնով ինձ ձայն տվեց՝
վե՛ր կաց,
և տես, թե այդ դո՞ւ ես
այն երազի տերը,
որտեղ քաջ մի լողորդ

օվկիանոսն էր ճեղքում,
մի քաջ ճանապարհորդ
անապատի միջով
գնում էր ու երգում,
և ավազներն այնտեղ շառագունում էին
նրա հոգու ցավից.
այդ նույն ցավից
այնտեղ
խելագարի նման
հառաչում էր, տնքում
մի ահռելի սամում,
և սամումն այդ թևեր
դարձավ նրա համար,
որ նա թռչի,
գնա,
հասնի իր երազին.
իսկ երազը այն էր,
որ նա պատմի մարդկանց
անապատի անտեր
ավազների մասին,
օվկիանոսի անտեր
ալիքների մասին,
մեր մեջ դեռ կենդանի
նավազների մասին,
և մեր ցավի բուժման
կարիքների մասին։

Այսինքն՝ թե մարդկանց
պիտի հավատացներ,
թե մեր կյանքը թանկ է,
աստվածային պարգև,
հետո պիտի նրանց
սրտերի մեջ անցներ,
որ ծաղկեցներ այնտեղ
վայելքի բորբ վարդեր։

... Անկողնուս մեջ մեկից
վրա նստեցի ես.—
մարդիկ քնած էին,
լռությունն էր իշխում,
և հասկացա, որ դա
անիմաստ է և սուտ—
կյանքի հոգսի դիմաց
երազն ո՞վ է հիշում։

Մեծ լռությանն է մեր կյանքը գերի.
մենք մի ակնթարթ լույսաշխարհ եկանք,
որ ապրենք առանց ցավ ու վերքերի,
խոսենք քնքշորեն, երգենք ու ինդանք,
բայց լացի ձայն է մեր ականջներում
և անկարեկիր ողբ ու հեծկլտանք։—

Իմ բարեկամներ ազնիվ հերկերի,
ճակատագրով եղբայրներ իմ թանկ,
բացեք դռները փակված երգերի
և ասեք՝ կյանքի իմաստը գտանք։

ՁՂՋՈՒՄ

Ես այս ի՞նչ արի,
ես այս ի՞նչ արի.—
ես հանկարծ հագա պատկերը չարի
և բարձրացրի ձայնս քո վրա,
և հետո դարձա մեղկ ու խղճալի.—
զավակս, անուշ բուրմունքը սրտիս,
շքեղ ծաղկումը տոհմիս հանճարի,
իմ ամենօրյա հրավառություն,
հոգուս սփոփանք, սրտիս բարություն,
անարդար կյանքիս մեծ արդարություն,

իմ հավատի սյուն, իմ կյանքի պատգամ,
իմ հերոսության խենթ վկայական,
ապրելու կորով իմ տիտանական,
ամենաշքեղ ջահն իմ տաճարի,
ես իմ դիվային ձայնի դղիրդով
փշրեցի լույսը քո քրքջալի.—
ես այս ի՞նչ արի,
ես այս ի՞նչ արի։

...Օ՜, նորոգվելու շնորհ երկնային.—
իմ տառապանքի այդ մթին պահին
քո մատղաշ հոգու լույսը նորոգվեց,
և քեզնից լույսի մի հեղեղ պոկվեց,
պոկվեց ու ցրեց մռայլս խպառ.—
արհամարհելով զղջման խոսք ու բառ,
մեր մեջ բարձրացող պատնեշը հալեց
և կրկին սրտիս մեջ գահակալեց։

Ես արձագանքն եմ քո մեծ բարության,
ես արձագանքն եմ քո արդարության,
ես 'իմաստության ճորտս մեկուսի,
լոկ արտացոլքն եմ քո շքեղ լույսի.—
քանի որ այն, ինչ ժառանգել եմ ես
քո բազմաբազում ապուպապերից
և տոհմիդ բոլոր վսեմ կապերից,
ողջն անմնացորդ նվիրել եմ քեզ։

◆

Միտը ճկկաց ծառի վրա,
շունը ծառի տակ հաչեց.—
զարմանք կտրեց հիացմունքից
և աքաղաղը կանչեց։

Շողն ընկնում էր ամպից ներքև,
բայց այդ ինչի՞ց նա կառչեց.—
չհասկացավ, բայց հիացավ,
և աքաղաղը կանչեց։

Մի գիշերում երեք անգամ
ծառան տիրոջը խաչեց.—
ինքն իր աչքում արցունք տեսավ,
և աքաղաղը կանչեց։

Քնած մարդիկ երեք անգամ
նրա կանչը լսեցին
և իմացան, որ զարթնում է
արեգակի ոսկե ձին։

ԱՄԱՆՈՐՅԱ ՀԵՔԻԱԹ

Թախիծով լցված Հայոց ձորերից
Հայ աստվածները ելնում են նորից
Բարձունքներն ի վեր Հայոց լեռների։

Ելնում են նրանք բուքը ճեղքելով,
Սուրբ ծննդոցի երգեր երգելով,
Ելնում են՝ ցավի ժայռեր փեղկելով։

Գնում են նրանք ձույլ խրախճանքի,
Գնում են՝ բերեն Մանկանն Հրճվանքի,
Բայց բուքը նրանց ցրիվ է տալիս։

Եվ որբի նման, արցունքներն աչքին,
Հայոց աստվածներն իջնում են կրկին
Թախիծով լցված ձորերը Հայոց,
Որ հաշվեն ձմռան օրերը Հայոց։

Թախիծով լցված Հայոց ձորերում
Հայ աստվածները իրար չեն ներում,
Լռնում են դարձյալ գայլերը հայոց,
ու խուլ տնքում են այրերը հայոց։

...Ծնկներդ ամուր սեղմիր ծնկներիս։
Աչքերիդ խորքում կայծերը հանգան.—
Լցրու բաժակդ՝ կենացը խմենք
Ձյուն ու բքի մեջ չսառչող Մանկան։

◆

Հյուգո՛, իմ բարեկամ,
Պուշկի՛ն, ազնի՛վ ընկեր,
Բայրո՛ն, հիվա՛նդ եղբայր,
դուք ինձ կհասկանաք —
Հայոց բանաստեղծը ոչ ցար ուներ, որի
կործանումը երգեր,
և ոչ ուներ, ավա՛ղ, աշխարհակալ լեզու,
ոչ էլ չքնաղ երկիր՝ Ֆրանսիա,
որի հայրը դառնար։

Եվ քանի որ, մեկ է, դեռ առջևում է մեր
հանդիպումը վսեմ,
ինչպես Ղազարոսի հարության օրն անգին,
ես հույս ունեմ, որ ձեր
խոսքը դեռ կլսեմ,
ձեր խոսքը պարզ, մեկին,
աներկդիմի իսպառ,
բնավ անգերակա,
և դեռ կարժանանա սիրտս բզկտահար
ձեր հանճարեղ խոսքի գորովանքին՝
երբ որ մարդկությունը բոլոր ցեղերի մեջ
սահմանները ջնջի ողբերգությամբ ագահ։

Բայրո՛ն, հիվանդ եղբայր,
Պուշկի՛ն, ազնիվ ընկեր,
Հյուգո՛, իմ բարեկամ.
իմ ժողովուրդն ապրեց բախտի այն հատվածում,
որ մենք անվանում ենք գեհենական.—
բայց միշտ հոգին մաքուր
և հայացքը ջինջ է։—
Եվ միայն դուք գիտեք, ձեր հանճարեղ միտքը,
թե գեհենից փրկված լույսի արժեքն ի՞նչ է։

ՀԱՆԳԱԾ ՕՋԱԽՆԵՐ

Հովիտների մեջ և անտառներում,
կանաչ ափերին աննինջ ջրերի,
ամենուր ցրված հանգած օջախներ,
գերեզմաններն եք դուք խարույկների։

Դուք կրակների գերեզմաններն եք,
հանգած օջախներ՝ վերքեր մոխրացած.
հիշողությունը կարճատև կյանքի
և ուրախության թրթիռը անցած։

Երբ ձեր մեջ կրկին կրակ է վառում
նոր նախամարդու ձեռքը մարդկային.
նոր բոցերի հետ հարություն առնում,
կենդանանում են կրակները հին։

Կենդանանում են մեղմ ճարճատյունով
և հեքիաթներ են պատմում անմեկին՝
հեքիաթով սնվող մարդկային հոգուն,
հեքիաթի կարոտ մարդկային ձեռքին։

... Կորա՜ծ Հայրենիք, իմ հանգա՜ծ օջախ,
ե՞րբ պիտի քո մեջ նոր կրակ վառեմ,
որ աչքերիս մեջ հովերդ խաղան
և սիրտս այրող կրակը մարեն։

Ճիշտ է, ամեն բան կտրվի քամուն,
կանցնի, կգնա, անհետ կկորչի,
և հուշը, որպես ահռելի սամում,
անգոյությունը կյանքի կկոչի։

Կկոչի դառը կանչով ողբագին
և զարհուրանքի սարսուռ կթափի՝
որ չնչին մի բան ետ բերի կյանքին
և իր տագնապի զորությամբ հարբի։

Ամեն բան կանցնի տեսիլքի հանգույն,
կդառնա փոշի տիեզերական,
և հավերժի մեջ անդեմք ու անգույն
գունեղ տենչերը կմեռնեն անկամ։

Ո՞վ է ցանկացողն այդ դառը բախտի,
ո՞վ է մունետիկն այդ չարալեզու,
այդ սերմնացանը բազմասեռ ախտի,
այդ կորստաբեր չարագուշակ բուն։

Ես ետ կմտնեմ պսակը ծաղկի,
կհոսեմ նրա տաք երակներով
դեպի արմատը անթախիծ կյանքի,
որ լցվեմ ուրիշ երազի բեռով։

Եվ երբ բիսումի տենչն անզսպելի
ինձ մղի կրկին լույսաշխարհ գալու,
ես ծաղկի միջից կծնվեմ էլի՝
երազանքներիս հետ միանալու։

... ծաղիկների մեջ շտապեք մտնել՝
քանի աշխարհը լրիվ չի մթնել։

ՄԻԱՅՆԱԿ ԾԱՌԸ

Նա իր ցեղի ասպատակված
հիշողության նման մերկ
և իր ամուր տերևներից
թանձր ստվեր կաթելով,
նա մեն-մենակ թանձրացել է

ժայռի վրա տոթ ու լերկ,
նա՝ միայնակ ծառն աշխարհի
մենակությունն ատելով։

Օ՜, այն դաժան, տառապագին
կյանքը, որ դու ես տանում,
հալածական ու վիրավոր
արմատներով ու սրտով,
ի՞նչ հրաշքով ես դու արդյոք
քարի ընդերքը քամում,
ի՞նչ ոգի է ապրում քո մեջ
անմահության կարոտով։

Մի ողջ անտառ հառաչելով
և կոծելով ողբագին,
անդարձորեն հեռացել է
այս կողմերից, էլ չկա,
և գիտեմ, որ այդ կորստյան
անհուն սարսափը կրկին
պիտի ճչա քո աչքերում
անհագորեն ու ագահ։

Նա իր ցեղի ասպատակված
հիշողության նման մերկ,
իր պղնձե տերևներից
թանձր ստվեր կաթելով,
նա մեն-մենակ թանձրացել է
ժայռի վրա տոթ ու լերկ,
նա՝ միայնակ ծառն աշխարհի
մենակությունն ատելով։

Երբ արեգակն առավոտյան
բարձրանում է հորիզոն
և ձգվում է երկինքն ի վեր՝
իր շողերից կառչելով,
երբ անտառը նրա շողի
տաքուկ շրշյունն է լսում

և սվսվում հազարաձայն՝
հառաչելով, թանչելով,

Չի հասկանում այդ ծառերից
և ոչ մեկը հիրավի,
թե արեգակն ամբողջովին,
երկինքն ո՞ւմ է պատկանում,
ո՞ւմն են արդյոք գիժ հողմերը
հյուսիսի և հարավի,
ո՞ւմն է սերը, ո՞ւմն է ցավը,
ո՞ւմն է սարսափը անհուն։

Բայց միայնակ, ժայռի վրա,
հպարտորեն ու վսեմ,
արեգակին դու ընդունում
և ճանապարհ ես դնում,
չես հանդուրժում, որ թփերը
քո հառաչանքը լսեն,
և կարոտի մորմոքներդ
քարերի տակ են քնում։

Երկինքն ամբողջ իր կապույտով
միայն քո մեջ է լցվում,
դու՝ հզորդ, քեզ ես ձգում
հիացումը ամենքի,
կյանքը միայն քեզնից ծնվում
և քո մեջ է ներծծվում,
դու խելահեղ, ամենաձույլ
մարմնավորումը կյանքի։

Քեզ հետ ապրել և հավատալ
կյանքի ուժին ու ոգուն,
չտրտնջալ ոչ ցավերի՛ց,
ոչ տանջանքի՛ց, ոչնչի՛ց,
լքե՛լ, լքե՛լ հաճույքները
փափկամեղկ ու մորմոքուն,
լինել քեզ հետ, քո թռչունը,
պղնձանալ քո շնչից։

Ո՞ՐՆ ԷՐ ՍԿԻԶԲԸ

Ձեր մասնիկն եմ ես, ապրում եմ ձեզ հետ
և շարժվում եմ ձեր սրտի տրոփով.—
երկի՞նք եք ղրկում՝ գնում եմ երկինք,
ինձ ե՞տ եք կանչում՝ գալիս եմ փութով։

Ուզում եք ժպտա՞մ, ժպտում եմ, ահա,
սեղմո՞ւմ եք սիրտս՝ ճչում եմ ցավից,
եթե դժբախտ եք, ելնում եմ անահ՝
որ դուրս բերեմ ձեզ ցավի անձավից։

Ուզում եք խոսե՞լ՝ ես բառ եմ դառնում
տրտմությա՛ն, սիրո՛, ըմբոստացումի՛,
իմ մեջ անաղարտ պատկերն է հառնում
մեր պարզ գոյության ու մարդացումի։

Իմ երազները ծնվում են իբրև
շարունակություն ձեր երազների.—
Ո՞րն էր սկիզբը, հիշեցրեք ինձ,
ո՞րն էր սկիզբը մեր երազանքի,
եթե հիշում եք, հիշեցրեք ինձ,
քանի մեր սիրտը չի քամել իսպառ
արնախում թաթը վերահաս նեռի։

◆

Օրվա հոգսերը թող օրը տանի,
եկող օրվանը հերիք է իրեն.—
սրտերը պիտի դատարկվեն ցավից,
որ եկող օրվա ցավերը կրեն։

Երջանկությունը քնի մեջ է լոկ.
երբ որ փափկորեն իջնում ծառերից,
հրեշտակները քնքուշ թևերով
մաքրում են սիրտը հոգս ու ցավերից։

Թախիծը դեղին ալեբախումով
կայծեր է ցանում մխիթարության.—
մարդն իր գոյության տենդից կախումով
ակունք է բացում անվերջ դառնության։

Եվ քունը գալիս, ակունքն է փակում
փաթիլ առ փաթիլ-սպեղանու պես.—
հապա ի՞նչ անեն սրտերը անքուն,
նրանց ցավերը ինչպե՞ս դատարկես։

Ո՞վ կտա նրանց մխիթարություն,
նրանք մեռնում են գիշեր ու ցերեկ.—
մահ տվեք նրանց՝ իբրև հարություն,
դո՛ւք, հրեշտակնե՛ր, նրանց քուն բերեք։

Թող քնեն նրանք ձեր թևերի տակ,
ցավի փշերը թող չքրքրեն.—
և օրվա հոգսը թող օրը տանի,
եկող օրվանը հերիք է իրեն։

ԳՐՉԵՐԳ

Իմ ցավաքաշ բարեկամ,
խենթ ու խելառ իմ գրիչ,
քեզնից թափվում են այնքան
զգացմունքներ գրգռիչ,
այնքան մաքուր երազի
անկրկնելի շող ու փայլ,
քաղցր սիրո և հույսի
մտերմական խոսք ու բառ.—
տառապանքի այնքան նուրբ
հյուսքե՛ր, հյուսքե՛ր անքննին,
հավատամքի ցավը սուրբ,
որ ուղղված է երկնին.—
այնքան թավիշ մեղմություն,
այնքան կարոտ մեղմության,

Հոգու այնքան սեղմություն,
և արցունքներ սեղմության.—
այնքան առատ, զվարթ լույս,
շողարձակվող անրջանք,
հառաչանքներ երկնասույզ,
հառաչանքի ներշնչանք,
երջանկության տխուր կանչ,
կանչի թախծոտ զրնգոց,
հայտնվելը նրա կարճ
և կորչելը համր ու գոց.—

Իմ ցավաքաշ բարեկամ,
միակ լեզու—կարեկցանք,
քեզնից թափվում է այնքան
հավատի սերմ, հույսի ցանք,
այնքան բողոք վշտալի՝
անմարդկային դարի դեմ,
որ թվում է, թե դարի
ցավերը քեզ կխեղդեն,
կամ ծառաները դարի
կախաղանեն քեզ պիտի...—

Բայց դու մեջտեղ ես գալիս
շարժումներով հտպիտի,
և սրտիդ մեջ ծով-արցունք,
կատակներ ես շաղ տալիս,
և հոգիները անձուկ
ծիծաղում են ու լալիս։
Եվ դու հոգնած, դատարկված,
կորստյան ախ ու վախով,
կրկին լցվում ես նրանց
արցունքով ու ծիծաղով։
Եվ դու հորդում ես դարձյալ
և հողով, և եթերով՝
քո սպառման լեգենդին

ծիծաղի ցոլք նետելով,
իմ ցավաքաշ բարեկամ,
խենթ ու խելառ իմ գրիչ...

. . . . . .

իմ գերիչ ու ավերիչ։

ԱՐԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Հոգու մղումներից
քաղցր ծնունդ առած,
ահա մի բառ կրկին
դրվեց թղթին,
որ թղթից թուղթ անցնի
և ձեռքից ձեռք անցնի
և հանձնվի կյանքի
տառապագին երթին։

Նա, որ դարերի մեջ
ապրել է և ննջել,
ննջել է և ապրել
դարերի մեջ անթիվ,
մի ակնթարթ անգամ
բխումը չի ջնջել,
այլ լոկ հաստատել է
կյանքը գիշեր ու տիվ։

Հաստատել է կյանքը՝
քնած թե արթմնի,
փառաբանել գոյը՝
կենդանի թե մեռած.—
դու լոկ փակ դուռ էիր
նրա ճանապարհին,
Աստված բացեց դուռը,
նա դուրս լողաց։

Եվ նա գնա՞ց, թռա՞վ —
— տիեզերքի ոգին —
դու մնացիր տեղում —
— նա պատյանն իր լքեց —
բայց նա ջուր կդառնա
ամռան շոգ ու տոթին,
որ հարություն առնի
հոգին քո գահընկեց։

Մի ակնթարթ միայն —
— կրկին նա կթռչի —
դու կմնաս տեղում՝
անթև, անօգնական,
և կհիշես պահը
քո անուրջի, ճիչի
և կտենչաս բառեր,
որոնք վաղո՞ւց... չկա՞ն։

Երգն այն ժամանակ է իսկական երգ,
երբ դու նրան չարքաշ քո նյարդերով
դուրս ես կորզում ծառերի արմատներից այնպես,
ինչպես արմատներն են հողից կորզում
խոնավություն
և ուժ,
և կյանք սարսռագին,
որ հետո քո ցամաք երակներով հոսում,
և քնքշություն տալով սրտիդ տառապանքին,
բխում է դուրս՝ որպես մատղաշ շյուղ ու տերև՝
հողից, արմատներից, զեռուններից վերև։

Ապա երգը երգ է,
երբ որ օդի նման
շնչում ես դու նրան,
ինչպես որ տերևն է օդը շնչում՝

երբ նրա մեջ հնչուն արձագանք է տալիս
հովից, արեգակից պոկված ամեն հնչյուն.
և զնգում է ծառը,
ղողանջում է ծառը
նույնիսկ այն ժամանակ,
երբ նրա մեջ պահված
թռչուններն են ննջում.—
... Անբռնելի երազ...
անլսելի հնչում...

Ահա, այսպես է, որ երգի աչքերի մեջ
ժպիտներ են շողում՝
թախծի ժպիտ,
սիրո,
ցավի ժպիտ, ահի,
տառապանքի՝
ինչպես տերևներին
այս ծառեղեն կյանքի...
նաև երգի դեմքին
իմաստության խորունկ կնճիռներ են հատվում,
ինչպես որ կեղևին իմաստնացած ծառի...

Օ՜, այդ կնճիռներից կյանքը չի վհատվում,
երգը չի վհատվում.—
էլ ինչո՞ւ եք ողորկ բառեր թափում վրան,
երբ բառերով, գիտեք, կնճիռը չի հարթվում։

...Եվ կցոլա ժպիտն աչքերի մեջ ծառի,
և կթափվի շուրջը իմաստության հուրեր,
և կհնչի երգը պարզ ու մարդավարի՝
քանի կրծողները արմատը չեն կերել։

◆

Օ, բզկտված աշխարհ,
սահմաններով ճղված,
փշալարով կնքված,
մարդու արյամբ խեղված
արցունքներով ցողված,
ծիծաղներով հղի,
քեզ ուզում ենք տեսնել
առանց սահմանների։

Քեզ գուրգուրած տեսնել,
քեզ պուրպուր հաց տեսնել,
վրադ՝ մշակ մարդիկ
և ամոլի եզներ,
վրադ՝ կանաչ արտեր,
անմահական վարդեր,
որ ոչ ստրուկ լինի,
ոչ սահման ու ոչ տեր։

Հետո մտածում եմ՝
եթե հրաշք լիներ,
խաղաղ մի մարդկություն
և Աստծո աչք լիներ,
եթե սահմանները,
իրոք, վերանային,
խելքը գլխին մի բան
մնալո՞ւ էր հային։

ՀԱՅՈՑ ՊԱՏԱՐԱԳ

Ահա նստել ու լսում ենք քեզ,
մեր գիշերային լույսի բխում.—
հայոց մեղեդի, երկինքն ի վեր
խոնարհություն ու հույս ես հղում։

Խավարի միջից իմաստության
աչքը, տե՛ս, մեզ է հառել թախծոտ,—
հովացընում ենք սրտերս այրվող
հնչյուններով այս մելամաղձոտ։

Լսում ենք այնքան՝ մինչև քանդվի
կարծր շաղախը մեր բողոքի,
և կամաց-կամաց ելնի երես
փխրությունը մեր հոգու խորքի։

Եվ կամաց-կամաց մենք միանանք
հնչյուններին քո տարաշխարհիկ.—
քո հնչյունները շար աշխարհում
հույսի օթևան, հոգու բարիք։

Հետո թերևս քեզ հետ հյուսված,
պիտի որ երկինք մենք համբառնանք,
քո հնչյունների խորքը սուզվենք
և քո գոյության հյուլեն դառնանք։

Դառնանք, քանի դեռ մեզ չի կերել
կարծր շաղախը մեր բողոքի.—
...երևի միշտ էլ ծնվեն մարդիկ,
որոնք մեռնելով դառնան ոգի։

Երբ ազատության ծիլերը նրբին
թափվում են գետին հողմաբեկումով,
երբ մարդիկ իրար երդում են տալիս
չհավատալու անսուրբ երդումով։

Երբ հավատի դեմ զենքեր կան արթուն,
քնած սիրո դեմ՝ հրթիռներ վայրի,
էլի հավատը կփրկի մարդուն,
և սերը կյանքը կհրավառի։

...Անարդարության համար այս անափ
ո՞ւմ կանչեմ դատի, ի՞նչ տամ դատվողին։
Անիմաստ կյանքի իմաստը մեկնեմ
վհատեցնողին ու վհատվողին։

Եվ այս աշխարհում բոլոր-բոլորի
հայացքը մի պահ դարձընեմ հողին
և ասեմ՝ փնտրեք, այնտեղ է ապրում,
հողի մեջ փնտրեք հողն ստեղծողին։

Փնտրեցեք այնտեղ, այնտեղ կգտնեք
Հայաստան հողը արարող Աստծուն.—
նա ձեզ վերստին մարդ կդարձընի,
կվառի ձեր մեջ կյանքի հիացում։

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ—ԵԿԵՂԵՑԻ

Զառանցանքից ազատվելով,
և հայացքս՝ զնգուն,
լեռներն էի ես չափչփում
իմ Հայաստան երկրում։

Նայում էի վիհերն ի վար՝
սարսափներից բացված,
նախնիներիս հազարամյա
արձագանքով լցված։

Ամեն լեռան գլխին՝ մի գյուղ,
գյուղի գլխին՝ կանթեղ.—
ժայռերից կախ զանգակներ են
հայոց գյուղերն այնտեղ։

Ղողանջում են վիհերն ի վար,
երկինքն ի վեր թռչում,
և հողմաբեկ ու հողմավար
երազներն են ճչում։

Ախ, հիմա էլ ձայնն այդ զուլալ
սրտիս մեջ է լցվում,
և ամեն մի հնչյունի հետ
կարոտներս են խրձվում։

Հայոց աշխարհ-եկեղեցի՝
գմբեթներով բազում.—
զանգերդ սուրբ զողանջյունով
պատարագ են ասում։

Լռությունն է գիշերվա տերը միայն,
Եվ աստղերը՝ զավակները լռության,
Որ ծնվում են անխոս, անբառ ու անմիտ,
Մի ակնթարթ հայում են մեր կյանքը բիրտ
Եվ մարդկային հառաչանքից հալածված,
Լուսադեմին գունատվելով դառնապես,
Լուռ սուզվում են տիեզերքի գիրկը բաց,
Շնորհելով նոր ծնունդի հերթը մեզ։

Ու ծնվելով մոռացումից մենք կրկին,
Մեր հայացքը շուռ ենք տալիս երկնքին։
Կամ լռությամբ, կամ խոսքերով մեր անմիտ
Մի ակնթարթ ապրում ենք մեր կյանքը բիրտ։
Եվ մեր կյանքի դառնությունից հալածված,
Մայրամուտին գունատվելով տրտմագին,
Լուռ սուզվում ենք մոռացության գիրկը բաց,
Պատրանքները շնորհելով երկնքին։

ԵՐԱԶՈՂԸ

Նստել է փոքրիկ պարտեզում,
հինավուրց թթենու շուքի տակ,
իր ներսից ձայներ է լսում
և անգոհ բողոքներ հստակ։

Ախ, ի՞նչ է աշխարհը նրան՝
ցանկության գագաթներ ու վիհեր,
տենչում է պայքար հուրհրան,
որ ինքը վայելեր ու նիրհեր։

Նա կեպին աչքերին քաշած
և ծնոտն արած արևին,
կիսախուփ կոպերի միջից
նայում է շահի հարեմին։

Աչքերը կրկին կկոցում,
նայում է հյուսիս ու հարավ,
և նրա լղարիկ ծոցում
ցնծում է իր սիրտը պառավ։

Թվում է՝ կբերեն հիմա,
թագուհուն կդնեն ծնկներին.—
պիտի որ իր կուրծքը զարդարող
շողշողուն աստղիկներ ընկնեին,

Որ կեպին աչքերին քաշած
և ծնոտն արած արևին,
նա ինքն իր հայացքով խաշված
նայեր իր գոմին ու սարերին։

— Ախ, խեղված կրքերի ցանկատուն
ախ, հիվանդ օրերի տանջարան,
ախ, պայծառ երազի հակաթույն,
ախ, մաքուր ցանկության խաչարան.—
չի փրկի քեզ Հայկը մշտարթուն,
չի կարող փրկել և քաջ Արան։

◆

Ցերեկն արևը աշխարհի միջից
Թախիծ է կորզում,
Գիշերն ամպերից աշխարհի վրա
Արցունք է հոսում։

Թափվում է կրկին, կրկին համբառնում՝
Առած հարություն.—
Տիեզերքն ի՞նչ է— հավերժ տխրության
Շրջանառություն։

◆

Թողեք այսօր մի քիչ
երկար նստեմ ձեզ հետ,
մի քիչ երկար նայեմ
խոնավ ձեր աչքերին,
խմեմ ձեր սրտերի
լույսից երանավետ
և հավատամ ձեր մեջ
ծնվող հրաշքներին։

Թողեք, որ զարմանամ
ձեր լռության վրա՝
ձեր գեղեցիկ, մաքուր
երազանքի բեռով.—
ինչպես կախարդական
հեքիաթների սրահ,
վաղուց կորած մի կյանք
ինձ իր գուռն է բացել,
լցված հենց Աստծուց
սերված քանդակներով։

Օ՛, ի՞նչ երգեր, օ՛, ի՞նչ
մեղեդիներ բաղում,

որ հորդելով կյանքից,
քարացել են հիմա
բյուր դարերում հունցված
ձեր կավի մեջ հասուն,
որ բորբոքեն այսօր
իմ աչքերը ամա։

Թողեք՝ այսօր մի քիչ
ձեր անցյալը հիշեմ,
կանչեմ ձեր քաջազուն
նախնիների ոգին,
թող գան՝ իրենց քարե
հետնորդներին բուժեն,
որ արժանի փառքով
կանգնեն իրենց կողքին։

Թողեք՝ այսօր ձեզ հետ
նաև երկար լռեմ,
որ արարվի մեր մեջ
երկար հաղորդություն.—
ախ, ինձ վիճակված է
ճակատագիր մի բարդ՝
որ մեր բախտը պիտի
սիրո գրչով գրեմ,
ծայրապանը լցրած
թախծի անուշ մի թույն։
Թողեք՝ այսօր ձեզ հետ
մի քիչ երկար ապրեմ,
հիշեք՝ մեր ժողովուրդն
ինչ երկար է ապրում.—
և ձեր կախարդական
գորովանքից հափրեմ,
ինչպես ձեր կրծքի տակ
ձեր լուռ ցավն է հափրում։

◆

Ինձ թվում է, թե մեր արարիչը
Ցերեկը քնած, գիշերն է արթուն
Եվ մեր տառապած, բաց հոգիների
Երազանքների էջերն է կարդում։

Երբ որ արթուն ենք՝ հզոր ենք ու կանք,
Մտքով հաղթում ենք տխրությանը հեգ,
Բայց երբ քնած ենք, միայն նա գիտի,
Թե որքան-որքան անպաշտպան ենք մենք։

◆

Մութից լույսի մեջ ենք անցնում,
Լույսից մութի մեջ ենք անցնում.—
Մեկ ճանապարհ ենք ցույց տալիս,
Մեկ էլ ճամփա ենք հարցընում։

Ոչ մենք գիտենք ճամփան կարգին,
Ոչ էլ նրանք, որ ցույց տան մեզ.—
Դեռ դա քիչ է, դրանից էլ
Իմաստություն պիտի քաղես։

◆

Միայն անունն է հավիտենական,
Միայն անունը, որ մենք ենք կրում.—
Դալիս ենք աշխարհ — այդ անունի տակ,
Ուրախ կամ տխուր բառեր ենք գրում։

Գրում ենք, հետո գնում ենք անդարձ,
Գնում ենք, սակայն մնում ենք երկրում.—
Միայն հոգին է հավիտենական,
Միայն հոգին է, որ մենք ենք կրում։

◆

Առավոտը կրկին բացվեց,
էն մնացածը՝ ոչինչ,
սիրտս լույսի մեջ լվացվեց,
էն մնացածը՝ ոչինչ.—
աղմուկներով, սարսափներով
այս խելագար աշխարհի
հոգուս ականջը խլացվեց,
էն մնացածը՝ ոչինչ։

◆

Ախ, թե լիներ՝ իմ երազած
կյանքով մեկ օր ապրեի,
խեղճ մարդկության երջանկության
հանգով մեկ օր ապրեի.—
հաղորդվեի մի ակնթարթ
ինձ արարող Ոգու հետ,
ծնված օրս գլխիս լույսի
թագով մեկ օր ապրեի։

◆

Մի տխրություն հավերժական
և էլ ուրիշ բան չունեմ,
կորուստների ողբ ու կական
և էլ ուրիշ բան չունեմ.—
թեև հոգուս մեջ խնդության
անարձագանք կանչ ունեմ,
ամենքի հետ լուռ եմ սակայն
և էլ ուրիշ բան չունեմ։

◆

Կանաչ դաշտի մեջ, ուր լույսն արևի
բարակ քամու հետ ծփում է հանդարտ,
տխրությունը հին շիրմաքարերի
նայում է հոգուդ աչքերին անթարթ։

Սրինգի ձայնը գեղգեղանքներով,
կանաչների մեջ, լույսին հպատակ,
կարոտ է երգում թախծի հանգերով
և ներծծվում է շիրիմների տակ։

Ահա, պատկերը վախվորած նեռի՝
քաղցր լույսի մեջ շարժվում է անհույզ.—
արդյոք թախի՞ծն է դա կորածների,
թե՞ մեր կորստյան տագնապը անհույս։

Կանաչ դաշտի մեջ, ուր լույսն արևի
բարակ քամու հետ խաղում է անվերջ,
հին թախիծը հին շիրմաքարերի
լուծվում է դանդաղ հոգիների մեջ։

ԻՆՁ ՏԽՐՈՒԹՅՈՒՆ ՄԻ ՏՎԵՔ

Ինձ տխրություն մի տվեք,
դրանից շատ ունեմ ես.
անցա գյուղերը մեկ-մեկ
և քաղաքները բեհեզ,
մարդկանց հոգուց թախիծը
հավաքեցի հարկի պես։

Անցա բոլոր սրտերով՝
կատաղի և համր ու հեգ,
հավաքեցի որպես երգ,
հավաքեցի հարկի պես.
ինձ տխրություն մի տվեք,
դրանից շատ ունեմ ես։

Հավաքեցի և տարա,
որ ջրերին տամ խելառ.
ջրերն ուրախ քրքիջով
գնում էին միալար։
Տարա, որ տամ դաշտերին,
նրանք անհուն են, ասի,
կներծծեն թախիծը
մեր հոգու և երազի։

Դաշտերն անհուն ժպիտով
ծխում էին ու երգում.—
ես ամոթով ու փութով
փակեցի ցավն իմ հոգում։
Եվ երկնքին նայեցի,
և աստղերին ադամանդ,
քո տխրությունն, ասացի,
ոչ մեկը չի տանի, մարդ։

Եվ իմ բեռան տակ կքած,
վերադարձա կրկին տուն.
տեսա՝ նստած է այնտեղ
իմաստությունը արթուն։
Նա աչքերիս մեջ նայեց,
ես հայացքս փախցրի.—
իմաստությունն ուժ չուներ՝
որ տխրությունս ցրի։

ԿԱՐԱՍՆԵՐՆ ՈՒ ԹՁՈՒԿՆԵՐԸ

Մենք յոթ կարաս ունեինք,
յոթը կարաս խոր ու մեծ,
կյանքը փոխվեց, ու հերթով
յոթ կարասն էլ փշրվեց։

Հայրս ասում էր՝ մեր տան մեջ
յոթը թզուկ են ապրում,
ապրում են յոթ կարասում՝
այս մեկն էլ մայրս էր ասում։

Նա թեքվում էր կարասին
(կարասը մեծ, ես պստիկ),
յուղ էր հանում կարասից,
հուզվում էի ես սաստիկ։

Մեկից էլ մեղր էր հանում,
մեկից՝ ձավար, մեկից՝ թուփ.—
որքան էի զարմանում՝
հսկա կարաս, ներսը մութ։

Ի՞նչ կախարդանք, ի՞նչ հրաշք,
ինչե՞ր ասես չկային...
— Հիմա ո՞ւր են դրանք, հա՛յր,—
հարցրի հորս նկարին։

Մի մեծ, հսկա կարասից
փարչով գինի էր բերում.—
խմում, ասում էր՝ գինին
խունկ ու խաղող է բուրում։

— Որտեղի՞ց ես հանում, հայր։—
Նա ծիծաղում էր վրաս՝
— Ներսում թզուկ կա, որ միշտ
լցնում է փարչը, տղաս։

— Ամանդ ո՞վ է լցնում,
մայրիկ, ցորենը պուրպուր։—
— Բարի թզուկը, տղաս,
ցորենատուր բախտատուր։

— Քույրիկ, քեզ ո՞վ է տալիս
մեղրը ոսկի, խունկ ու սաթ։—
— Պստիկ եղբայր, տալիս է
մեղրի թզուկը՝ փեսադ։—

Մենք յոթ կարաս ունեինք,
յոթը կարաս խոր ու մեծ.—
կյանքը փոխվեց, ու հերթով
յոթ կարասն էլ փշրվեց։

Պառկում էի քնելու,
(կարասներում՝ յոթ թզուկ),
կախարդական պատկերներ,
խորհրդավոր փսփսուք։

Թզուկները մեղրահոտ
գինի խմած, պարելով,
ելնում էին քրքիջով
երդիկ տանող քարերով։

Պարում էին լուսնի հետ,
աստղերի հետ զրուցում,
կանաչ լիներ, թե լիներ
խորը ձմեռ ու պաղ ձյուն։

Յոթը կարաս ունեինք
յոթը բարի թզուկով,
սակայն մի օր լցվեցին
կարասները խոր սուգով։

Դա պատահեց, երբ նրանց՝
թզուկներին այն բարի
կարասներում բարության
մորթեց սարսափը վայրի։

Մենք յոթ կարաս ունեինք,
յոթը հրաշք խոր ու մեծ,
կյանքը փոխվեց, նրա հետ
յոթ կարասն էլ փշրվեց։

Հիմա նայում եմ հեռվից
մանկությանն իմ փշրված՝
արյո՜ւն... սարսա՜փ... լռությո՜ւն...
ու մի փշուր մաքուր հաց։

ԱԼԵՐՍԱՆՔ

Ամբոխի միջով գնում էի ես,
Սակայն իմ ներսում ոչ մեկը չկար.—
Իմ մեջ փոված էր երկինքը բեհեզ,
Եվ աշնան դեղին մի գունանկար.
Ճոճվում էր, ծփում թափանցիկ օդի
Աստվածաշնորհ ալեբախումով,
Ես՝ Հայրն Աստծո և լքված Որդին,
Ես քայլում էի սրտի բախյունով։

Ա՛խ, չկպչե՛ք ինձ և չհրմշտե՛ք,
Բեռնավորված եմ ես անգին բեռով,
Իմ անգին բեռը օրերում նժդեհ
Հազիվ եմ տանում ես հազար ձեռով։
Չկպչե՛ք հանկարծ և չհրմշտե՛ք,
Որ ցրիվ չգա իմ բեռը անգին.—
Երազանքներ են ուսերիս դրված՝
Սպասումի մեջ այն տառապագին,

Թե այնքան պիտի ես տանեմ նրանց
Եվ այնքան պիտի գուրգուրեմ թաքուն,
Որ ելնեն մի օր անհուն թռիչքի՝
Անվախճանության թևերով անքուն։
Ելնեն և գնան, և թռչեն ազատ,
Ինձ էլ իրենց հետ տանեն ճախրանքի,
Որ բերեմ մարդկանց հրճվանքը անզարդ
Տիեզերական անվախճան հանգի։

Ա՛խ, մի՛ կպեք ինձ և մի՛ հրմշտեք.
Օվկիանոսներ են իմ մեջ հառաչում,
Իմ մեջ բխում են օրերում նժդեհ
Հազարակնանի ջրեր պաղպաջուն։
Թե ինձ լսեք, և իջնի վրաս
Դժոխքի ծնունդ հարվածը նեռի՝
Պիտի հեղի ձեզ ամենամեծը
Համաշխարհային ջրհեղեղների։

Մի՛ ճզմեք դուք ինձ մամլիչների տակ,
Իմ մեջ այնպիսի գույներ են ցոլում,
Որ երբ լռում եմ՝ գույներ են հստակ,
Իսկ երբ երգում եմ՝ երգեր են ծորուն։
Եվ թե ինձ հրեք, կթափվեն նրանք,
Ձեր ոտքերի տակ կդառնան փոշի
Եվ կբարձրանան ձեր մարմինն ի վեր՝
Որպես չո՛ր, խեղդո՛ղ ու տաք գոլորշի։

Մի՛ կպեք դուք ինձ, եղեք բարեգութ.
Արարատներն եմ ես իմ մեջ տանում,
Իմ մեջ և նրա կարո՛տը կրակ,
Եվ նրա ճերմակ ձյո՛ւնն է խտանում։
Եթե ինձ կպչեք, շուտ կգան նրանք
Իմ մեջ ծփացող ծովակում Վանա.
Հո չե՞ք թողնի, որ այդ սուրբ լեռների
Ճախրանքի հույսը իսպառ մահանա։

Եվ չէ՞ որ նրանք ինչ-որ ժամանակ
Ճախրել են Հայոց աշխարհի գլխին՝
Սուրբ թռչունները տիեզերական,
Շնչավորները մեր ամենահին։
Շնչում են նրանք, և շունչը նրանց
Փռվում է երկրի վրա ավերված,
Եվ այնքան պիտի շնչեն բալասան՝
Որ կենդանանա Մայր հողը մեռած։

Այդ բոլորն ահա ես առել իմ մեջ,
Ձեր մեջ իմ հոգնած պատկերն եմ թողնում.—
Դո՛ւք ողորմացեք, բարեգութ մարդիկ,
Տեսնո՞ւմ եք, Տերը դեռ չի ողորմում։
Տեսնո՞ւմ եք, առել տվել է քամուն
Եվ երկի՛ր, և ծո՛վ, և լեռնե՛րը սուրբ,
Որոնք մեր սրտից արյուն են քամում
Եվ բախտի շուրթից՝ բարբաջանք մի սուտ։

Եղեք բարեգութ և տարեք ձեր մեջ
Ձեր հողը, լեռը, երկինքը բեհեզ,
Մի՛ կպեք իրար և մի՛ հրմշտեք,
Որ չկործանեք հենց ինքներդ ձեզ։
Եղեք բարեգութ հազարապատիկ,
Որ չմոլորվեք՝ հողմին հպատակ,
Ճանապա՛րհ բացեք ձեր եղբայրներին,
Որ չճզմըվեք ձեր սուրբ բեռան տակ։

ՆՐԱ ԳԱԼՆ ՈՒ ԳՆԱԼԸ

Նա եկել էր՝ մեզ Աստված դառնար,
Ուզեցին մեջքին համետ բառնալ։

Եվ նա՝ խոնարհը, առավ վրան
Պահակի քուրքը դրսի դռան։

Մտնող-ելնողի խելքը չափեց,
Եվ մրսեց հոգին ու տառապեց։

Գլխին դրեցին կրակե խույր,
Նայեցին նրա դեմքին տխուր։

Թախծոտ աչքերի մեջ նայեցին.
Աչքերում լույս կար տառապածին։

Հետո տնտղեցին սիրտը մի լավ,
Ապա բարձրաձայն մտածեցին՝

— Այսքան տառապանք ունեցողին
Պիտի տանել ու հանձնել հողին։

ՈՐՆ Է ՏԽՐՈՒԹՅՈՒՆԸ

(Երկու տարբերակով)

1.

Մենակ մարդը՝ անծայր, դեղին անապատում,
և կամ տափաստանում, գորշ թփերի միջով
քայլում է նա—
նրա ուրվապատկերը սև—
Հենց դա է տխրությունը։

Մենակ մարդը՝ նստած
դատարկ սենյակի մի անկյունում,
հնչյուններ է որսում, որոնք արձակվել են
գուցե հարյո՞ւր, հազա՞ր, միլիոն տարի առաջ,
և իր որսը նրան խոցում է ցավագնորեն —
Հենց դա է տխրությունը։

Բայց սա բոլորովին այն չի նշանակում,
թե նա, երբ հանդիպի իրեն նմաններին—
ուրախություն է լինելու.
Հենց սա է ցավալին,
և կամ սարսափելին—
Տխրությունը՝
ոչինչ։

2.

Մենակ մարդը տափաստանի
դեղին սրտում ամայի՝
սա է, ահա, տխրությունը,
որ նմանվում է մահի։

Մենակ մարդը, որ անցյալից
հնչյուններ է դուրս կորզում—
անասելի տխրություն է՝
որսը իր սիրտն է որսում։

Մենակ մարդը, մենակ մարդը,
սարսափները կուլ տալով,
որ հանձնված է հավիտյան
լուսնի ոգուն ահալի.—
սակայն բնավ հայտնի չէ, թե
երբ հանդիպի նա մարդկանց՝
ուրախությո՞ւն է լինելու —
հենց այս բանն է ցավալի։

ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԸ ՉԵՆ ԾԵՐԱՆՈՒՄ

Իջնում է մութը ամեն անգամ,
և խտանում են տագնապ ու վախ,
ջերմացընում են հույսը սառած
աստղերը՝ երկնի գմբեթից կախ։

Ծագում են, ճիշտ է, աստղերի հետ
և աստղերի հետ ո՞ւր հեռանում.—
կորչում են, ավա՜ղ, սակայն երբեք
բանաստեղծները չեն ծերանում։

Նրանք ապրում են ջրերի մեջ
և խոտերի հետ ընկերանում,
հալվում են տառ ու գրերի մեջ,
և գրի նման չեն մեռանում։

Թե սուր է կախված երկրի վրա,
սրին ու դահճին ըմբերանում,
դառնում են զոհը դահիճների,
բանաստեղծները չեն ծերանում։

Ծնվում են նրբին ծաղկի նման
և ծաղկի բույրի պես վերանում,
խառնվում են մեր շնչած օդին.
բանաստեղծները չեն ծերանում։

Անգամ ծերությունն ինքը գիտի՝
բանաստեղծները չեն ծերանում.—
Նրանք հունն են մեր հույսի գետի
և ազատության հույսն են անհուն։

ՋԻՆԵՍՏՐԱ

Այս բույսը Սիցիլիայում ցանում են էքնայի հրաբխային սառած լավայի վրա, և նա ոչ միայն ինքն է աճում, այլև արմատներով փխրեցնում է կարծրացած լավան և դարձնում հող...

Ջինեստրա՛, ես քեզ քույր պիտի կոչեմ,
Ջինեստրա՛, պիտի եղբայրդ դառնամ,
սև լավան պիտի փշրենք միասին,
որ քաղցրացընենք հողը դառնահամ։

Ախ, այս հողն այնքան կրակ է տեսել,
լավայի այնքան հրաշեկ հեղեղ,
որ որքան ուզես խորքերը պեղել՝
այնքան ավելի կարծր է ու սև։

Այդպես իմ հողն ու իմ երկիրն է քար,
Այդպես կարծր են շուրթերն իմ հողի.—
Ի՞նչ կախարդական ջուր կողողի՝
որ ծաղիկ դառնա քարը խելագար։

Բայց արմատները քո կախարդական,
Ջինեստրա՛, նրանք ուժով նրբագին
սանձահարում են կրակի ոգին,
որ սառել է սև ու դարձել է քար։

Ես քեզ կտանեմ երկիրն իմ քարե,
Ես քեզ կցանեմ ապառաժներին,
Ես քեզ կցանեմ քար սրտերի մեջ,
Կտամ զորություն քո արմատներին,

որ դու աննկուն և համառորեն
քարե սրտերը դարձընես ծաղիկ,
խոնարհեցընես ժայռերն անառիկ,
և սրտերը քո շնչից օրորվեն։

Ջինեստրա՛, ես քեզ քույր պիտի կոչեմ,
Ջինեստրա՛, պիտի եղբայրդ դառնամ,
սև լավան պիտի փշրենք սրտերում,
որ քաղցրացընենք կյանքը դառնահամ։

Սիցիլիա, Էթնա

◆

...Ի՞նչ եք կանգնել ու ապշած
նայում շուրջներդ մոլոր.—
իզո՞ւր են ձեր չափչփած
ճանապարհները քոլոր։

Դե՛, գնացեք-փնտրեցեք
գաղափարի ճորտերին.—
նրանք էնտեղ՝ քիչ հեռվում
խոտ են տալիս հորթերին։

Էնտեղ խավար է լրիվ,
էնտեղ մարդ չի երևում.—
ալիքներով իր խռիվ
սև գիշերն է երերում։

Նա ձեզ ոչինչ չի ասի՝
ոչ պատմությամբ, ոչ հանգով.—
նա ձեզ վրա կվազի
ահաբեկիչ հորձանքով։

Եվ կտեսնեք, որ ուրիշ
Ճար ու ճամփա դուք չունեք.—
դուք էլ խելոք ու խոնարհ
դա լույսի տեղ կընդունեք։

Նյու Յորք

ԷԹՆԱ

Ես այդ գիշեր տեսա գոյությունը լեռան,
Որ սուրբ գեղեցկությամբ մարդու սիրտն է խոցում.—
Քնած հրաբուխը արթնացել էր հանկարծ,
Հրե ծաղիկներ էր թափում մութի ծոցում։

Հրճվում էր իմ սիրտը այդ խոր, անքուն լեռով
Եվ ճիչերով մանկան, և լռությամբ մեծի.—
Բաբախում էր Էթնան հրե ժայթքումներով՝
Ինչպես բաց երակը բանաստեղծի։

Բաբախում էր Էթնան հրե ժայթքումներով՝
Ինչպես բաց երակը բանաստեղծի,
Երբ նա՝ բանաստեղծը քրքրում է իրեն
Քար լռության դիմաց անպատասխան հարցի։

...Գիշերն ի բուն վառվիր, ցրիր հուր ու ցոլքեր,
Գիշերն ի բուն ճչա ճշմարտության ցավից՝
Մինչև պատասխանդ հանես քո պատմության
Աններելի տխուր հարցարանից։

Էթնա։

NIAGARA

Թևերն առած հորիզոնի կապտամշուշ խորքերից
և անցնելով քարափների ու ժայռերի զորքերից,

հողի վրա, հոգու վրա, սրտի վրա զայրացած՝
Թևաբեկ ու ճերմակաթույր թռչուններ են թափվում ցած,

Նիագարա՛, աստղափոշին աստղաքող է քո դեմքին,
ինչպե՞ս պիտի նա թաքցնի քո խռովքները ներքին։

Թող լռության ասպետները լռության գովքը անեն,—
ես քեզ պիտի կյանք ու մահի անհուն Աստված անվանեմ։

Հոգեվարքդ վեր է ածվում կենդանության շառաչի,
մահվան ճիչդ՝ կարոտն առնող կարոտյալի հառաչի։

Նիագարա՛, քո խռովքը լռությունից է ծագում,
Ծիածան է մեջքիդ վրա լռությունդ բազմագույն։

Դու ամեն մի կանադացու երակի մեջ ես մտել,
նրան հույսի և ապրելու գրգիռներ ես հաղորդել։

Եվ թափվում ես կատաղորեն բարձր ու շռայլ շենքերից,
նկուղներում գիշերային՝ մարմիններից, երգերից։

Ամեն արթուն գործիքի մեջ քո լարերն են նվագում,
Նվագի տակ ամեն ազգի խոլ նժույգներ են վարգում։

Ես վերքերի մասին բնավ չէի ասի ոչ մի բառ,
թե չլային քո մեջ ազգիս հառաչանքները թափառ։

Նրանք երկիրը սասանող քո խելահեղ երգի տակ
անդունդ իջնող թեակոտոր թռչուններ են սպիտակ։

Նրանց պատկերն, ինչքան ապրեմ, պիտի իմ սիրտը ճզմի,
և իմ հոգուց պիտի նրանց խուլ հառաչանքը լսվի։

Նիագարա՛, այդ է ահա, որ քեզ իմ մեջ եմ տանում՝
որ միշտ ապրեմ քո գեղեցիկ ազատության զնդանում։

Վիննիպեգ-Նիագարա

15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 1979, ՄԱՆԻՏՈԲԱ-ՎԻՆՆԻՊԵԳ

Ես այս աշխարհից բան չգիտեմ,
Ես այս աշխարհը նոր եմ եկել,
Ես կարդացել եմ «Մարտին Իդեն»
Եվ լսել եմ պարզ նիգրո երգեր։
Լսել եմ անթիվ պատմություններ՝
Իրարամերժ ու հակասական,
Մեկը ասում է՝ դրախտ ես դու,
Դժոխք է ասում մյուսը սակայն։

Իսկ ես եկել եմ՝ աչքով տեսնեմ՝
Ծառը ինչպես է կանգնում հողին,
Ծառը ինչպես է տերև տալիս,
Տերևն ինչպես է ընկնում հողին։
Հողը ինչպես է ծառը պահում,
Հողը ինչպես է սնում ծառին,
Երբ զավակները լաց են լինում,
Ի՞նչ բալասան է դնում ցավին։

Ես այս աշխարհից բան չգիտեմ,
Սակայն եկել եմ՝ տեսնեմ աչքով.
Արդյոք ինչո՞վ ես դու իրական՝
Քո իրողությա՞մբ, թե՞ հրաշքով։
Ահա եկել եմ՝ հիմարի պես,
Տեսնեմ՝ ինչո՞վ ես մարդուն պահում.
Երկնաքերներո՞վ սարսափելի,
Թե՞ դղյակներով քո հմայուն։

Ինչո՞վ ես պահում, ասա տեսնեմ,
Ինչո՞վ ես լցնում մարդու հոգին.—
Իրար լիզում են անհագորեն
Սատանաներդ սրբիդ կողքին։
Եվ առհասարակ այս աշխարհում
Մարդուն պահպանող բան կա՞, իրավ,—
Չէ՞ որ պահապան Որդին խաչվեց
Եվ առ այս վայրկյանը դեռ ոչ հարյավ։

...Օ՜, ների՜ր դու ինձ, Հայո՜ց Ոգի,
Ների՜ր, միայն թե՝ ոչ բառերով.—
Մենք ճշմարտություն որոնեցինք՝
Աշխարհե-աշխարհ թափառելով,
Աշխարհե-աշխարհ թափառեցինք՝
Աչքներս մարդկանց դաժան դեմքին,
Աղերսում էինք արդարություն,
Աղաչում էինք դարման վերքին։

Բայց թե աշխարհը նույնն է լրիվ.
Ծառը նույնպես է կանգնում հողին,
Ծառը նույնպես է տերև տալիս,
Նույնպես է տերևն ընկնում հողին։
Հողը նույնպես է ծառը պահում,
Հողը նույնպես է սնում ծառին,
Եվ երբ զավակը լաց է լինում՝
Նույն բալասանն է դնում ցավին։

Վիննիպեգ

ՄԻ ՔԱՆԻ «ԵՐԱՆԻ», ՈՐՈՆՔ ԻՆՔՆԱԲՈՒԽ ԿԵՐՊՈՎ ԴՈՒՐՍ ԹՌԱՆ ՆՅՈՒ ՅՈՐՔԻ ՄԱՆՀԵԹԵՆ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ

Երանի այն տներին,
որոնց տանիքներին դեռ չեն տնկել
հսկող աչքն այն կարմիր՝
իբրև արյունարբու ազդանշան,
որ մթի մեջ թռչող օդանավը՝
այդ թառանչող հսկա կույր թռչունը հանկարծ
չբախվի մութ բախտին
և ցրիվ գա՝ որպես հիշողություն հանգած...

Երանի այն տներին, որոնք դեռ կարող են
թռչունների նման
ծվարել ու ննջել ծառերի ստվերներում,
որոնք ոչ թե անմիտ

Հպարտության ողորկ, փայլուն մոլուցք հագած,
մխրճվել են երկինք
և ահազդու վերից
ճոճվում են մելամաղձոտ մարմինների վրա՝
որ նստած են, պառկած,
արթուն են կամ հարբած...
այլ երանի նրանց՝
այն տներին խոնարհ,
որոնց վրա երկինքն ինքն է իջնում փափուկ,
և քնքշորեն, մաքուր,
շոշափելի՝ որպես քողը սիրած կնոջ,
և նրա պես աննյութ ու խուսափուկ,
այնքան կախարդական մրմունջներ է լցնում
դռնից, պատուհանից,
աչքերից ներս,
որ թվում է՝ կյանքը
հենց դրախտն է, որ կա,
և մեզ արարողը,
երկար տարիների մոռացումից հետո,
անակնկալ հանկարծ հիշել է մեզ,
մեզ—
իր կորստական զավակներին, ավաղ,
որ դրախտից մի օր դուրս մղվեցինք դեպի
դժոխքը քաղաքների
և լուռ կոտորվում ենք խոնարհ ու հեզ։

Եվ երանի նրանց՝
թռչուններին այն սուրբ,
որոնք գլխի ընկան և շուտ փախուստ տվին
այս մեծ հրեշներից՝ փայլուն ու երկնահուպ,
որ չփտի երկինքն հենց իրենց մեջ շնչող.—
ախ, երանի նրանց ոգուն չերկնչող
և սխրանքին անմիտ՝
քանզի նրանց միտքը
իրենց ստեղծողի մոտ է պահվում.—
իսկ մեր միտքը, որ մեզ
տրվեց անվերադարձ,

(Թող ինձ ներեն մտքի ասպետները այսօր),
մթագնում է սաստիկ,
ամեն վայրկյան փտում, լկվում, կաղապարվում։

Ուզում եմ ձեզ ասել,
թե երանի նրանց,
ովքեր ոչ թե պիտի մեր երկիրը լքեն
և կամ պիտի սուրան,
յոթը երկինք ճեղքեն՝
ուռած երակներով և աչքերով ուռած,
այլ երանի նրանց,
ովքեր ուրի՜շ-ուրի՜շ-ուրի՜շ աշխարհների
անգո հմայքները պիտի կրկին հերքեն,
և եթե կան նրանք՝
այդ քաջ մունետիկներն անգո աշխարհների,
պիտի մղվեն երկիր,
և հիացքով անհուն,
խոնարհությամբ սրտի,
մեզնից փոխ առնելով չքնաղագույն բառեր՝
սիրո, երջանկության և աստղերի մասին,
մեր այս պայծառ երկրի հմայքները երգեն...
Բարի գալուստ նրանց,
թող գան՝ ինչպես կուզեն,
մենք տերևներ կտանք թզենի սուրբ ծառի՝
եթե հագուստ չունեն—
մարդ են—
եթե մերկ են։

Նյու Յորք

ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՏԵՆՉ

Օ՜, ազատության դարավոր տենչանք,
և միտք հալածող, և սիրտ արյունող,
նվիրյալներիդ դարձել ես տանջանք
և զինվորներիդ դարձրել ես հող։

Դու ինքդ ծնունդ անմեռանելի,
բայց զավակներդ հավերժ բանտերում.—
քեզ խաղացնում են, ո՛վ երանելի,
քո զավակների դահիճի դերում։

Բարերարներ են հայտնվում նրանց՝
ազատությանդ բաղձացողներին,
բայց հետո նրանց գտնում են մեռած
բարերարության սուր-սուր ձողերին։

Եվ այդպես նրանք դառնում են դրոշ՝
արյունի, ոգու, ըմբոստացումի.—
Նրանց ետևից գնում են գրոհ
առանց ցավի և առանց հարցումի։

Սակայն վա՜յ նրան և հազար նզովք,
ում սրտի մեջ քո հուրը չի եռում,
ով չի երազում ազատ հայրենիք
և աղոթում է իր ճորտ լինելուն։

◆

Թող ձին վազի անտառի մեջ,
թող վրնջա կարմիր քամի,
թող փրփուրով հալեցրնի
սառնությունը իր լկամի.—
օ, կհորդա փրփուրն իմ մեջ
(երբ իմ բեռը լուռ տանեմ ես)
Նիագարա խոլ ջրվեժի
աստղակուտակ փրփուրի պես։

Թող ձին վազի մարգագետնով,
հետո փախչի, մտնի բացատ,
թող օձերին օձխեղդ անի
սմբակներով իր հրացայտ.—
իմ բեռը լուռ կտանեմ ես,

Ես իմ բեռի խոնարհ ծառան,
և աչքերիս կայծերը խոլ
հոգուս վիհում կթրթռան։

Թող վրնջա հրեղեն ձին,
ազատության գինով հարբի,
մինչև գայլին հանդիպելը
գուցե տիրո՞ջը հանդիպի.—
գուցե փրկի՞ գլուխը սեգ
փորձանքներից անփրկելի,
որ պտույտ են գալիս գլխում
ամեն տեսակ գազան-գելի։

Ես, իմ խղճի բանտում նստած,
ազատ ամեն մի փորձանքից,
ձիու սարսափը կըերգեմ,
ծիկրակելով լույսի ծակից։

Երբ գայլերը նեղեն սաստիկ,
ես ձայն կտամ ձիուն ուժատ՝
— Սմբակներդ ամուր պահիր,
ճակատները ամուր են շատ։

◆

Օ՜, լեռների վեհություն,
օ՜, պարզություն ջրերի,
հովիտների մեղմություն,
անմահություն գրերի,

Օ՜, լռություն ինքնասույզ,
ոգու թռի՛չք, մտքի թռ՛ույն,
արդարության վերջին հույս,
վերջին հույսի անգին գույն.—

դուք ինձ տվեք այն միայն,
որ կոչվում է ՄԻԱՅՆ ԱՅՆ։

Միայն մեկը՝ ցանկալին,
ճշմարիտը, միայն մեկ,
այն, որ գրվում է քարին՝
որպես կյանքի հիմնը մերկ։

Բայց երբ թեթև ու հոռի
ինչ-որ բան են նետում ինձ՝
ինչ-որ մի բան ԻՆՉ-ՈՐԻՑ—

արդարությանը նման,
ճշմարտությանը նման.—
ինչ-որ բան է դուրս գալիս
խարդախությանը նման։

Ես նման բան չեմ ուզում.
դուք ինձ տվեք այն միայն,
որ կոչվում է ՄԻԱՅՆ ԱՅՆ։

Այս ի՞նչ խելակորույս վազք է, սիրելիներ,
Հավերժական հանգիստ ժամանակի կողքով,
Մենք վազում ենք, սակայն նա չի գալիս մեզ հետ,
Այլ ժպտում է մեկ-մեկ իր խաբուսիկ շողքով։

Մարդկանց կործանելով,
կործանելով ոգին,
Մարդկության դեմ անվերջ դավ նյութելով անքուն,
Ինչպես ջուր է տենչում անապատը պապակ,
Այդպես մարդ ենք փնտրում ուրիշ մոլորակում։

ՀԱՆԳՐՎԱՆ

Քանի՞ հազար տարի, քանի՞-քանի՞ դարեր
գլխապատառ ընկած, մարդը գալիս էր, որ
մտնի հանգրվանը. մարդկային պարզ սիրո՞,
մարդկային մեծ խղճի՞, արդարությա՞ն, ոգո՞ւ,
անթե՞ք ճշմարտության օթևանը մտնի,
և ազատված անմիտ տանջանքների բեռից,
ինքն իր բռնությունից ձերբազատված իսպառ,
փառք քեզ, ոգու մղում, խաղաղություն գտնի։

Նա գալիս էր այդպես գլխապատառ ընկած,
և կանգ առավ այնտեղ, ուր որ կանգ էր առել
երեկվա կարճ օրը. տառապանքով լցված,
նույնպես հոգնամրմունջ և շարշարված դարեր,
նույնպես հրաշագործ մղումներով փրկված,
շռայլելով ցավի արյունալի բառեր,
դարձյալ նույն մարդկային երազանքով գրկված՝
հորիզոնի վրա մայրամուտ էր դառել։

Մարդը կանգ էր առել և լսում էր օրվա
նույնպես անկրկնելի հառաչանքը վերջին,
և սեղմում էր սիրտը անասելի ցավով
իր հոգեվարքն ապրող օրվա ջանքը վերջին.—
Նրան պարուրել էր անմեկնելի մի միտք,
որ լուռ ծավալվել էր հովիտների վրա,
բլուրներով հոսել-թանձրացել էր ցածում...
...որ ծնել էր օրվա այդ տանջանքը վերջին։

Նա չէր կարող շարժվել։ Վախից արձանացած,
դեռ չպաղած իսպառ, դիակի պես դեռ տաք,
Նրան թվում էր, թե՝ ոտքը փոխի հանկարծ,
ոռմբեր պիտի պայթեն ուղիղ ոտքերի տակ։
Ախ, թվում էր նրան՝ եթե շարժվի հանկարծ,
ուղիղ ոտքի տակից հրթիռներ կբթռչեն՝
որ հրկիզեն վերջին շարժումն աշխարհի մեջ
և մարդկային վերջին երազանքը ջնջեն։

Եվ նա նայեց շուրջը՝ վախվխելով, զգույշ.—
վերջին քամու, հովի շարժում անգամ չկար,
բոլոր մարդիկ իր պես արձանացել վախից,
նայում էին իրար՝ անմիտ ու ապիկար։
Բոլորի տակ ասես ռումբեր էին դրված,
չէր շնչում հողն անգամ-ականներով պատած—
միայն միտքն էր շարժվում ազատ ու անկաշկանդ՝
աստվածային կյանքը մահվան դատապարտած։

...Օ՛, Պղնձե քաղաք, օ՛, հեքիաթի մարդիկ,
չարաբաստիկ կամքով հավետ արձանացած,
օ՛, մարդկային մետաքս զգացմունքի թելին
մտքի անասելի ծանր բեռներ բարձած
հեքիաթային ճորտեր մոլեգնության կամքի,
այս ի՞նչ հանգրվանի բերեցիք դուք մարդկանց,
և ի՞նչ նվիրումի, և ի՞նչ հավատամքի,
ա՞յս էր ձեր երկիրը՝ իդեալներից սարքած,
և վախճանը մարդու — տիեզերքի փառքի։

Նյու Յորք

ՈՂՈՐՄԱ, ԵՐԿԻՆՔ, ԾԻԱԾԱՆՆԵՐՈՎ

Իմ մեջ բույն դրած երեկվա լացին
ես այսօր ծիծաղ պիտի անվանեմ,
որ կյանքս ներեն տերն ու դրացին
և իմ երգերի պարզ ակունքներից,
այսինքն թե՝ իմ սրտից ու հոգուց
իրենց չարության նետերը հանեն։

Ողորմա՛, երկի՛նք, ծիածաններով,
այս մժղուկների օրը վատացավ.—
խեղճերը իրենց խեղճ կածաններով
քաշվել են խոնավ խորքերը հողի
և կպել են մի
անդարմանելի ու սուր հոգացավ։

Ողորմա՛, երկի՛նք, և այս խեղճերի
գլուխը քորիր տաքուկ մատներով,
լսիր ձայները սրանց ճիչերի,
որոնցից պիտի խլանա մի օր
արևդ ոսկի,
պիտի կուրանա և պիտի ուրիշ
ճամփեքով գնա՝ լրիվ հատնելով։
Սրանք մեղկորեն խլրտում են, տե՛ս,
բորբոսապատված խորքերում հողի.—
արև ուղարկիր՝ աղաչում են քեզ,
որ արևերես ելնեն հրճվանքով...
... և ոտքն ուղարկիր,
տրորող ոտքը՝
այս մեղկություններն աշխարհ բերողիր

Թող գա՛,
թող մի քիչ տրորի՛ կարգին,
թող մի քիչ սրանց տիղմը տրորի,
և հետո ետ տար ճիշտ ժամանակին,
որ մնացորդներն այս անճարության,
պայքար մղելով դիակների դեմ
իրենց պապերի,
առաջ ընթանան՝ ընդդեմ տխրության
և հանուն... «նորի»։

◆

Եթե չհաշվենք
մեր երջանկության
պահերը չնչին,
ապա ամեն օր
մի տառապանք կա
նստած մեր շնչին։

Եվ տառապում են
բոլորն անխտիր՝
գույն-գույն ցավերով,
ախտերով ընտիր.

Մեկն՝ իր ահռելի ուժի պատճառով,
մեկն՝ անմխիթար հուշի պատճառով..
մեկը՝ իր կճատ քթի պատճառով,
մեկելն՝ անիմաստ ստի պատճառով.
մեկն՝ իր գետնաքարշ բոյի պատճառով,.
մեկելը՝ չարի գոյի պատճառով.
մեկն՝ իր քաչալի կամ իր կույր աչքի,
մեկելն՝ իր ներսում արթնացող քաջքի..
մեկն՝ անմերձելի իր գեղեցկության,
մեկն՝ անմերձելի տգեղ անձկության.
մեկը՝ որ, ավաղ, հայրենիք չունի,
ոչ էլ փոխարեն՝ մի սիրտ գնչուի.
մեկն էլ՝ որ ունի հայրենիք ու տուն,
սիրտը հայրենյաց ցավն է հոշոտում..
մեկը՝ անքանակ փողի պատճառով,
մեկելը՝ կորցրած հողի պատճառով.
մեկն՝ իր ոգեղեն, բիլ երազանքի,
մեկելն՝ իր դատարկ հոգու և գանգի.
մեկն՝ իր անհագուրդ փառասիրության,.
մեկելը՝ բնավ չփնտրած փառքի...

Ամե՜նն-ամենքը,
բոլորն անխտիր,
խուլ տառապում են
ցավերով ընտիր.
բոլորն են ապրում
իրարու օտար,
օտար, իրարու
ցավին ակնդիր։

ՀՐԱԺԵՇՏ

...Օ, մնաք բարով ամենակեր
Հարյուրներին ու հազարներին...
Ես ինձ տանում եմ՝ կեր դարձնելու
Անտառի խոնարհ գազաններին։

ՊՂՆՁԵ ՎԱՐԴ

Վերջին դղրդոցից առաջ.—
դա կարող է լինել ասենք թե անկումը մի երկնային
մարմնի,
որը թափառել է տիեզերքի բոլոր անկյուններում
և կրակ է կտրել մեզ փնտրելու տենդից.—
կամ կարող է լինել սրտի անկումն, ասենք,
մարմընի մեջ—
կամ միջուկի պայթյուն,
որի բեկորները չենք հասցընի տեսնել,
ինչպես չենք հասցնում՝ տեսնել ամենալավ օրերը
մեր կյանքի՝
այնքան որ արագ է կյանքը հարվածում մեզ...

Վերջին դղրդոցից առաջ.—
և որ դա թող լինի ընդամենը, ասենք,
ինչ-որ ողորմելի մի երկու ժամ,
պետք է վերջին անգամ հեռուստացույցն արագ
կարգի բերել
և իմանալ՝ արդյոք կատարվե՞լ են բոլոր պլանները—
մսի, ձվի, կաթի—
և այն պլանները, որոնք կատարվում են առանց դրանց,
հետո՝ գիր գրելու, գիրք տպելու,
հետո՝ ալկոհոլի, ծխախոտի,
ով որքա՞ն է երգել, որքա՞ն ժամանակում,
մեր կարևոր մարդիկ ովքե՞ր են և ի՞նչ են անում հիմա—
և որ՝ ձվեր չկան, որտեղի՞ց են ծլել հավեր խանութներում,
և թող ներվի ասել, նրանց ձվերն ո՞ւր են,
գուցե ճամփորդել են ավելի տաք երկի՞ր, որ
հավիկներ դառնան,
հետո ցելոֆանե թիկնոցները հագած՝ մեզ մոտ
վերադառնան—
պիտի հասցնել նաև թերթել թերթերն ամբողջ,
որ մեզ համար դժվար գործ չի եղել բնավ՝
«երկու բոպե կամ տաս՝
հերիք է, որ բոլորն իրար վրա կարդաս...»,

հետո պիտի բացել ամսագիրը, որտեղ, թող թույլ տրվի ասել,
բառերն իրար վրա թափթփված են անկարգ,
խառնիխուռն, մեռած, անկիրք, անհրապույր...
ինչպես քաղաքային աղբանոցում...

— պե՞տք էր վերցնել մի փայտ
և հալածել այն խեղճ շուն ու կատուներին,
որոնք աղբանոցում ուտելիք են փնտրում,
և, որ ազնվորեն պիտի խոստովանել, գտնում են
առատորեն.—
ո՞ւր հալածել նրանց— քաղաքային այգի՞,
որ ծաղիկներ տեսնեն և օ՞դ շնչեն.—
սակայն չէ՞ որ օդը անհիշելի վաղուց ճչում է
ասֆալտի տակ,.
թե ծաղիկներն այնտեղ կործանվել են իսպառ—
մի ճեղք, մի դուռ բացեք—
բայց բոլորը հիմա զբաղված են միայն ճեղք
փակելու գործով,
որ չգիտեմ՝ ի՞նչը, բայց ինչ-որ բան հանկարծ քան-
դուքարափ չլինի.—
այս մի ճեղքը փակենք,
այն մի ճեղքը փակենք,
այս մի մեղքը չափենք,
այն մի մեղքը չափենք.—
Վերջին դղրդոցից առաջ.—
դա կարող է լինել ասենք թե անկումը մի երկնային մարմնի—
և այդ ահաբեկիչ նյութը երկնային է, գիտե՞ք՝ ինչի համար.
միայն նրա համար, որ այնտեղ է՝ երկնում...
իսկ մենք երկրային ենք,
մրջյունների նման հողին կպած,
նրանց նման թթու.
(մենք այս բանի մասին իմացություն առանք, երբ որ մարդը
կերավ նախ մրջյունին, հետո մարդուն կերավ)
և մեր աշխատանքի միակ օրինակը հենց նրանք են, որ կան,
մինչդեռ երազանքը, որով լցված ենք մենք,
ինչպես որ կրակով՝ մարմինն այն երկնային,
մի սև գրոշ չարժե նրանց համար, ովքեր

ՀԵրազում են մարդկանց կառավարել միայն մրջյունների նման՝
երբ որ պետք է՝ նրանց,
նրանց աշխատանքը փառաբանել,
երբ որ պետք է՝ ուտել,
երբ որ հարկավոր է՝ այնպես անել, որ այդ
մրջյունները իրար ուտեն—
միտքս մանրամասնե՞մ— իրար հոշոտելու ձևն են
սովորեցնում
անգամ գազաններին, որոնց կոչումն արդեն իրար
հոշոտելն է...

Վերջին դղրդոցից առաջ.—

որ կարող է լինել բարբառելը հողի,
այն, որ ասում ենք, թե՝
ինչեր կլսեինք, եթե հանկարծ հողը լեզու առներ—
պետք է մեր մարմնի հողը կահավորել
բոլոր այն քարերով, մետաղներով գույն-գույն, որ
քամել ենք հողից,
և շաղախել նրան հողի տված անթիվ բարիքներով,
և կաթեցնել վրան անմահության նեկտար՝
երկնի շրթունքներով կրկին հողից քամված.
ամբրոս, հասմիկ, նարգիզ և մեխակներ,
շուշան, վարդեր, կակաչ, մանուշակներ և հիրիկներ ցանել
մեր մարմնի անկուշտ հողի վրա—
և տեսնել, թե վերջին կործանումից հետո
այդ բոլորից մի բան կծլի՞ մեր մարմնից,
ասենք չնչին մի բան— ՊՂՆՁԵ ՎԱՐԴ—
եթե ծնվեց
ապա
մարդը կրկին կապրի
կամ իրավունք ունի դեռ ապրելու...

◆

Այնքան լռեցինք երկար ու ձիգ,
մթի մեջ այնքան ներանձնացանք
և հաստատեցինք, և հերքեցինք
ճշմարիտ խոհ ու անմիտ հանցանք։—

Մինչև արևն իր հսկա վարդով
լցրեց աշխարհը, հրճվանք պոռթկաց
և կարկատեց իր ճառագայթով
մեր լռությունը պատառոտված։

◆

Ախ, իմ սիրելին քնած է վաղուց,
ես «Բարի գիշեր» չեմ ասել նրան.—
Նրա գեղեցիկ սիրտը երևի
կասկածանքները հիմնովին կերան։

Քնած գլխի մեջ հիմա երևի
կասկածանքների բազեներ վխտում
և ինձ կործանող բառերը կտցած՝
գահավիժում են շուրթերից տրտում։

Իսկ առավոտյան բազեներն այդ չար,
իմ գլխի վերև պտույտ դառնալով,
կծաղրեն սերս կռինչով անճառ,
մերթ իջնելով և մերթ համբառնալով։

...Ես պիտի ժպտամ շուրթերս սեղմած
և պիտի լռեմ՝ քնքշորեն գերի,
որ սերս փրկեմ սուր կտուցներից
և չկորցնեմ շողն իմ երգերի։

◆

Քո շարժումները կախարդիչ
եթե փորձեմ ես վերծանել.
պիտի ասեմ հառաչելով,
որ լուսնահար քայլքդ, օրիո՛րդ.
բանաստեղծներ է կործանել։

Կործանել է կյանքը նրանց,
վանդակել է նրանց հոգին.
այդ խեղճերն էլ դարեր ի վեր
աղեկտուր լաց են լինում
մուսաների քնքուշ գոգին։

Օ, ես բնավ չէի խոսի,
չէի անի ոչ մի հարցում,
բայց բանաստեղծը, սիրելիս,
իր տանջահար սիրտը նաև
իր դահիճի մոտ է բացում։

Գուցե դու ինձ մի խո՞սք ասես
և պատասխան տաս իմ հարցին՝
— Մի՞թե այդքան պետք էր, օրիո՛րդ,
մի անգամ էլ կործանելը
վաղուց արդեն կործանվածին։

◆

Պատշգամբ ելա, նայեցի լուսնին.
փակ էր երկինքը, և լուսին չկար,
սիրտս վշտալի հառաչ արձակեց
և քիչ էր մնում ցավից հեկեկար։

Բայց ես քնքշորեն խափանեցի ինձ
և սև սրտիս մեջ պայծառ խորհեցի՝
— Գուցե լուսինը եկել է քեզ մո՞տ,
որ իմ վշտերով քո հոգին ցնցի։

Այդպես խորհեցի, և քունքերիս մեջ
ներծծվեց ջերմը այրվող ափերիս.—
և տեսա լուսնին քո կրծքի վրա՝
իմ հառաչները գիրկդ թափելիս։

Քաջալերեցի մի երկու խոսքով
նրա արարքը այդ ասպետական.—
իմ մրմունջները լսեցին մարդիկ
և ահաբեկված շտապով եկան։

Եկան և գլխիս պաղ աստղեր դրին՝
իմ զառանցանքը թագադրելով,
որ չբզկտվի իմ հոգին հանկարծ
հառաչանքների կայծակ-թրերով։

— Օ՛, ազնվասիրտ իմ բարեկամներ,
շնորհակալ եմ ձեր կարեկցանքից,
բայց հոգիս եթե կրծքումս լիներ,
վաղուց պատռված կլիներ արցունքից։

ՄԱՐԴՆ ՈՒ ՏԽՐՈՒԹՅՈՒՆԸ

Մարդն ու տխրությունը նստած էին տխուր
իրար դեմ-հանդիման,
և դա մի հինավուրց առասպել էր կարծես,
ինչպես այն ժամանակ,
երբ աշխարհի վրա կար Տխրության աստված,
և այդ աստծո պատվին մատուցանվող կար ծես.—
Այդպես նստած էին
Մարդն ու Տխրությունը՝
առանց հառաչանքի, առանց ճչոցների,
անձայն.—
Տխրությունը կարծես արձանագործ լիներ,
Մարդը՝ տխուր արձան,
հին դարերից բերած
տխրալի մի արձան,

որ ցոլանքներ ուներ շրթունքների վրա
աստծո նվիրաբերած ազնիվ պտուղների
և հոգու մեջ պետք է որ ունեցած լիներ
պայծառ մի ծիածան։

Մարդն ու Տխրությունը։
Երբ որ կինը հուշիկ մոտիկ եկավ նրանց,
իսկույն հասկացավ, որ մենակ չէ այդ մարդը.—
ներքուստ շփոթահար շառագունեց մի քիչ,
մի պահ նրանց դիմաց արձանացած մնաց,
ապա ինքնահոժար և կամովին իսպառ
որոշեց, որ պիտի մտնի այդ թակարդը։

Տխրությունը ուռավ, փքվեց պղպջալով,
ասես թե այդ կինը կրակ էր իր տակին.—
և ինքը եռ գալով, ցավով ու փնչալով
պիտի պայթեր հիմա՝ հասներ նպատակին։

Եվ կինը լուռ, խոնարհ, երեք անգամ ժպտաց,
հույսի երեք կաթիլ՝ փրփրակալած եռքին,
Տխրությունը հուզվեց
և, հանգչելով, քլթաց՝
տեղ բացելով ծնվող ուրախության հնքին.—
և մնացին միայն մարդն ու կինը նստած՝
տխրության պաղ, դատարկ գավաթները ձեռքին։

ԱՆԿԱՏԱՐ ՍԵՐ

Տարիները, իրար վրա բարդվելով,
հավերժական քարերի պես ակնակուռ,
ժամանակի բուրգն են ահա բարձրացնում
տարածության մեջ ամեհի, խուլ ու կույր։

Բարձրանում է բուրգն աննահանջ ու վսեմ,
այնտեղ հույսի ոչ մի շող չի թափանցում,
չկան մարդիկ՝ որ տրոփյունդ լսեն,
ոչ ամոքո՛ւմ, ոչ կարեկցա՛նք, ոչ հարցո՛ւմ։

Սիրո անհուն խլութիւնն է միայն տեր,
համայնական, հավերժական ու անքառ,
ոգիները բուրգը վաղուց են լքել,
չի մնացել ոչինչ, որ այդ ցավն զգար։

Մենք լռութեան բնակիչներս երկու,
երկու աստված՝ թաղված բուրգի ընդերքում,
պաշտպանում ենք լռութիւնն այդ ահարկու,
ոչ խոսո՛ւմ ենք, ոչ լալի՛ս ենք, ոչ երգո՛ւմ։

Լոկ մի թռչուն արյունալի կտուցով
կտցում է իմ սիրտը, որ ինքը ապրի,
նա էլ երկար չի դիմանա, ա՛խ, գիտեմ,
կմահանա, երբ որ իմ սիրտը հատնի։

◆

Անցա անթիվ աշխարհներով,
տեսա հազար լաց ու խնդում
ու ներս մտա հեքիաթների
դարպասներով ու դռներով,
տեսա սիրո ավերմունքի
պատկերները ցավաժպտուն
և դուրս եկա՝ փրկվածների
հույսի ձեռները բռնելով։

Ու նետվեցի ես անհամբեր
դեպի սիրո կանչը զնգուն,
դեպի նրա կախարդական
բուրումների հովիտը պերճ,
բայց ամենուր կորուստների
հուսաբեկ հավքն էր մորմոքում՝
սիրո վայելքն ալ կտուցին
և արցունքներն աչքերի մեջ։

Սրտիս միջով մրրիկ ու հողմ
և ավերման սարսափ անցավ,
և սիրո սուրբ տաճարն այնտեղ
անհուսության ձեռքով քանդվեց.
— Ավա՜ղ, սիրո աչքը սոված
իմ սիրով էլ չլիացավ,
և սիրո քաղցն այս աշխարհի
իմ սիրով էլ չփարատվեց։

◆

Կնոջ կարոտն ինձ համար է հորինվել,
ինձ համար է ծնվել թախիծը սիրո,
տառապանքի հենքն ինձ համար է հինվել,
որ գորգ դառնա գունաթելիկ հույսերով։

Մի տեղ լույս է, մի տեղ խավար է հիմա,
մի տեղ տանջանք, մի ուրիշ տեղ խնդություն,
սիրտ կա, ավա՜ղ, որ անապատ է ամա,
մի ուրիշ տեղ՝ սիրո անուշ խենթություն։

Ոչ մեղավոր կա աշխարհում, ոչ վկա,
ինքն իր համար կյանքը հոսում է, գնում.
սիրտ կա, որտեղ հույսի նշույլ իսկ չկա,
հույս կա, որտեղ անհուսությունն է քնում։

Երբ պոկվում է հոգուց հառաչը ջերմին՝
հառաչողի շրթունքները այրելով,
խառնվում է ուրախության ճիչերին
Հորինողի արարչական, վարժ ձեռով։

Ոչ մի պատճառ չունեմ բնավ ես լալու,—
և ոչ պահանջ Հորինողից մեր եղծված.—
գետ մեկ անգամ հանդիպեինք իրարու,
որ նա տեսներ թախիծը իր ստեղծած։

Տեսներ՝ գուցե ազնվանար վերստին
և բաց աներ դարմանատունն ամոքիչ
և մեզ տալիք արարչական նպաստին
սիրո բաժինն ավելացներ գեթ մի քիչ։

Ահա մատներս կպչում են այնտեղ,
որտեղով լույսը հոսում քո կրծքից
և աչքերիցդ կախվում է որպես
կարոտի կանթեղ։

Լուսավորում է նա մի ճանապարհ,
որով ես արդեն անցել եմ վաղուց—
դեռ այն ժամանակ, երբ մութ էր սաստիկ,
երբ որ խավարը այդ չարաբաստիկ
և կանչում էր ինձ,
և մոլորեցնում.—
քո փակ աչքերի խավարը հեռվից
հառաչանքներ էր ինձնից փրցընում,
բայց լույսիդ ձայնը,
լույսիդ բաբախը,
լույսիդ հեռավոր ալեբախումը
հույսի զրահ էր սրտիս հագցընում։

Հիմա մատներս կպչում են այնտեղ,
որտեղով լույսը հոսում քո կրծքից
և աչքերիցդ կախվում է որպես
կարոտի կանթեղ։

Փակի՛ր աչքերդ։—
Ես վախենում եմ
ուշացած լույսի այդ ճանապարհից,
քանի որ ոչ թե կանչում է նա ինձ,
այլ ասես թաքուն մի հեռացումի
անվերծանելի մի միտք է հուշում։

Փակի՛ր աչքերդ։—
Արյունը, ահա, քունքերս է խուժում,
որ դառնա համբույր՝ ցավագին ու տաք,
մերձեցման մաքուր ու սուրբ մշուշում։

ԼՔՈՒՄ

Մանիշակագույն ճանապարհներով
սլանում էին նրանք խելագար.—
ի՞նչ է, հիրավի, իմաստը մարդու՝
սլացքը ահեղ ու ինքը տկար...

Ես կանգնեցրի ընթացքը նրանց,
սանձեցի նրանց թռիչքը մի պահ.
— Ոգեղեն երկրի ճամփորդնե՞ր եք դուք,
ո՞ւր եք շտապում,— հարցրի ապա,—
— Դուք զարհուրելի դեմքեր անժպիտ,
ո՞ւր եք շտապում խելագար վազքով,
դուք շտապում եք սիրո՞ ետևից,—
հարցրի նրանց հույսով անսքող։—
— Դուք շտապում եք սիրո՞ ետևից,
պատասխան տվեք, պապանձված շուրթեր,
սերը ձեզ լքեց — ձեր մութ սրտերից
հորդում են հիմա արցունքի գետեր...
— Սերը ձեզ լքեց...— արձագանքն անսանձ
դմբդմբացնում է ձորերը մթին,—
— Գնացեք, ահա, ես օրհնում եմ ձեզ,
բերեք, նվիրեք ետ ժողովրդին...
Եվ քրքջացին նրանք վայրենի
և ներողամիտ ժպտացին վրաս.—
— Ի՞նչ է,— ասացին,— դու մա՞րդ ես արդյոք
թե՞ մութ, անհաջող գիշերվա երազ...
— Մենք շտապում ենք սիրո՞ ետևից.—
զուր ես չարչարում քո միտքը անքուն.
սերն ինքը, ահա, թռչում է այնտեղ,
ուր կանաչ-կարմիր աշխարհի տեղակ

կանաչ ու կարմիր դրամն է ծաղկում։
Սերն ինքը վաղուց իր ամբրոսներով
դրամի ծառն է ցողցողում անվերջ.—
և երբ հոգնում է, քնում է նրա
կանաչ ու կարմիր տերևների մեջ։

...Բայց իր երազում երազում է դեռ
մի կանաչ-կարմիր աշխարհի ծաղկում...
Չգիտեմ՝ ծո՞վն էր, երկի՞նքն էր, թե՞ ես,
թե ինքը՝ Սերն էր խուլ աղաղակում։

◆

Ապրել տխրության մեջ,
փախչել տխրությունից անել,
կորցնել սիրտը առօրյայի խուլ, հուսաբեկ վազքում,
ձեռնածուի նման հույսի տոպրակներից հանել,

Սրտի միջից հանել
և հառաչանքը, և սեր աներկրային.—
և որպեսզի անգույն, անհրապույր չլինի մեր վախճանը մի օր,
թևեր աճեցընել, հազարագույն թևեր՝ անթև մահին։

Հաղորդակից լինել նիրվանայի այն վիճակին՝
երբ որ երգդ կարդաս խոտին, ծաղկին ու լճակին,
քնած սարսուռները, արթնանալով երգիդ մրմունջներից,
կյանք հաղորդեն մեռած վերջին կոհակին ու պղպջակին։

Հաղորդակից լինել նիրվանայի այն վիճակին՝
երբ որ երգդ դնես մթով ներանձնացած մութ փչակին,
այնպես փայլի, շողա վախը սրտում քնած ձագուկների համար,
ինչպես պայծառ աստղը՝ երկնի կապտամշուշ կամրջակին։

Խոնարհ այս տանջանքից
փախչել դեպի Աստծո խոնարհություն։

Մարդկանց առջև կրկին
բացել հույսի դռներ՝ գեղեցկությամբ լցված,
և հավատալ, որ կա մեր մեջ մեզ սպասող
ԵՒ մահ, և հարություն։

ՔԱՄՈՒ ՀՐԱՎԵՐ

— Այս ո՞ր քամին էր, որ քեզ բերեց,—
ասում եմ խոսքս ու կարկամում.—
օրեր, տարիներ սպասեցի
քո շքեղ քայլքը բերող քամուն։

Այս ո՞ր քամին էր, որ խշշոցով
սրտիցս հույսի գետ է քամում.—
աչքերս փակած սպասում եմ
քեզ իմ երազին բերող քամուն։

Փակվում է, ահա, երկինքը մութ,
և խավարին է աստղն ինձ գամում.—
նստել ու ահով սպասում եմ
հարազատներիս բերող քամուն։

Տագնապած հոգով լսում եմ միշտ
չար բախտի բուեր բերող քամուն.—
— Գուցե մի օր էլ ե՞ս հանդիպեմ
դրախտի լուրեր բերող քամուն։

ՍՊԱՍՈՒՄ — 1

Մեղմիր տանջանքս
և սերս ներիր.—
դու, որ քո տաքուկ խլրտումներով
ձյուներիս տակից
ձնծաղիկներս լույսաշխարհ բերիր,
որ երբ պատում էր սառույցը կյանքիս,

ինձ շշնջացիր՝ կաց ու համբերիր,
որ ստիպեցիր ինձ հավատալու
հին գարունների կրկնողության,
ինձ վերին ներման արժանացրու,
արժանացրու նաև թողության։

Հավատի երեք աստղեր են շողում
իմ գլխի վերև,
որ երեք գույնով և երեք փայլով
երեք տարիքն են իմ նախանշում,
տես, կաթի նման, քո ճանապարհին
թափվել է նրանց լույսը խշխշուն,
և պիտի հոսի,
և պիտի հոսի այդ կաթե գետը
այնքան, մինչև որ խառնվի մի օր
մեզնից մնացող մեր մի ափ փոշուն,
որ մեզնից հետո
աշխարհը կրկին հավատի քրքում
և սեր ճառագի,
որ մտքի թույնը,
զգացմունքների նրբին հյուսվածքը,
ախ, չճարակի։

Եթե երկուսը փշրել են արդեն,
բեր ինձ այն մեկը,
այն միակ աստղը,
որ իր մեջ նաև
փշրած երկուսի լույսն է ամփոփում.—
իմ հոգու համար բավական է լոկ
աստղային ձեռքի մի նրբին հպում,
որ հավերժական խավարի միջից
մութ ու մեկուսի
բաբախի կրկին ակունքը լույսի։

Այն ակունքը, որ քո սիրո համար
աստղերի անծայր երկինք է բացում՝
հրավառ ու հիր.—

բեր ինձ այն աստղը,
բեր՝ հոգնած հոգիս,
այրվող ճակատս
բեր՝ թագադրիր։

ՍՊԱՍՈՒՄ — 2

Դու ինձ հարցնում ես՝ ինչի՞ց եմ հարբել.
հայոց որբերի
թախծոտ աչքերի արեգակների
մանիշակագույն ճառագայթներից
քո կրծքի վրա բացվել են վարդեր,
և սիրտս ահա պատառոտվում է
այդ քո վարդերի թանձր բուրումից,
հոգիս աղոթք է մրմնջում առ տեր...
ո՞վ կփրկի ինձ
զգացմունքներիս աչքերը կտցող
անխիղճ ուրուրից,
և ո՞վ կարող է
այս ծիրանագույն ալեբախության
թափը հանդարտել...

Մոտեցիր այնտեղ,
ուր որ դրված են երեք սկահակ
և երեք գույնով
երեք տարիքն են իմ նախանշում.—
խոնարհվիր և տես դատարկությունը,
իմ տարիների դատարկությունը՝
ձուլած կարոտից, տրտմորեն նախշուն։

Խոնարհվիր այնքան,
մինչև որ լցվեն սկահակները
վարդերիդ բույրով ,
և ապա օծիր մետաքս շուրթերիդ
տաքուկ համբույրով։
Եվ եթե հանկարծ

անզգուշաբար երկուսը չարդվեն,
բեր ինձ գեթ մե՛կը,
միայն մե՛կը բեր,
որ ես վարդերիդ թանձր բուրմունքը
խմեմ-հանդարտվեմ։

ՍՊԱՍՈՒՄ — 3

Զայնդ իմ սրտում նման է լացի,
Լացդ աստղերի ցոլանք է իմ մեջ,
որ իմ տանջանքի մութը ճեղքելով,
թաքուն նվիրման նոր այգաբացի
անտրտունջ հույսի զանգերն է խփում.—

Եթե բարձրանաս դու առավոտյան,
և թե առաջին քո շողը առնի
արթնացող թփին,
ուրեմն՝ իմացիր —
պահված եմ թփում —
և սպասում եմ քո ճառագայթին,
որ ծլվլամ ու երգեմ զմայլված.—
Եթե առաջին քո շողը առնի
ջրերին պաղուկ,
ես ջրի խորքում ավազ եմ այրված,
որի կրակը
աշխարհի վրա, ախ, ոչ մի ջրով
դու չես հանգցնի.—
Նա միլիոն տարի սպասում է, որ
գա նա՝ բաղձալին,
գա, իրեն սիրո շապիկ հագցնի՝
մարգարիտ դարձնի,
դարձնի սիրո անեղծելի թագ,
որ խամրի քեզ հետ՝
եթե դու խամրես,
և շողարձակի
քո առաջին իսկ ճառագայթի տակ։

Եթե առաջին քո շողը առնի
ծառին բողբոջուն.—
... մոտեցիր այնտեղ, ուր ճանապարհին
սրսփումներով տաք ու դողդոջուն
երեք բարդի են նրբին խշխշում.—

Ախ, նրանք իրենց բնի զորությամբ
և կարողությամբ իրենց ճկվելու
երեք տարիքն են իմ նախանշում։

Եվ եթե տեսնես, որ այն երկուսի
արմատը, ավա՜ղ,
կտրել է արդեն որդը տանջանքի,
հավաքիր մեկի շշունջներն արծաթ
ու ցոլանքները տաք անրջանքի,
հավաքի՛ր
և բե՛ր,
և պարուրի՛ր ինձ
գուրգուրանքներով բոլորանվեր,
որ վերածնվեմ թախծի բարուրից
և տանջանքների աշխարհից ավեր։

Եթե բարձրանաս դու առավոտյան,
և քո առաջին ճառագայթը տաք
սիրո սպասման ակունքին առնի.
ձեռքներին երեք գունեղ սկահակ,
զարդարված սիրո երեք աստղերով,
քո առջև երեք բարդի կհառնի։

ԱՅՆ ՕՐԸ ՄԱՀ Է...

Օ, լռություն է, քար լռություն է,
լոկ աստվածներն են արթուն հիմա.—
նրանք նստել են Վերին Ատյանում
և մեր սրտերն են կարդում հիմա։

Նրանց առջև է իմ տառապանքը,
վճիտ քո հոգին անարձագանք.—
Նրանք այդպես են ստեղծել կյանքը,
բայց և գոհ են, որ երկուսս էլ կանք։

Հիմա թվում է՝ ես նրանց հետ եմ,
լսում եմ նրանց ամեն շշուկ.—
Նրանց համար ես կարոտի գետ եմ
և մերժված սիրո մի քաշքշուկ։

Նրանց համար դու զուլալ աղբյուր ես,
քո մեջ տեսնում են պատկերն իրենց,
մութ կախարդանք ու դրախտի դուռ ես,
որ, ով աչք ուներ, տեսավ՝ սիրեց։

Եվ այդպես պիտի գնա ու գնա,
ախ, այդպես պիտի շարունակվի,
մինչև քո սիրո թանձր մշուշով
լցված գլուխս կրծքիս հակվի։

Իսկ հիմա, պարզ է, վկա են անտես
և աստվածներ, և ուրիշ սրբեր՝
այն օրը մահ է, երբ որ տեսնեմ քեզ
և կարողանամ դողս զսպել։

ԱՇԽԱՐՀԻ ԲԱԽՏԸ ՔԵԶՆԻՑ ԷՐ ԿԱԽՎԱԾ

Ծիծաղելի է, բայց փաստ է, իրավ,
աշխարհի բախտը քեզնից էր կախված.
իմ կրծքի ներսում մի աշխարհ մեռավ,
թողնելով միայն հուշն աղավաղված։

Քեզ համար երկար ես տառապեցի
և անցկացրի գիշերներ անքուն,
մի վայրկյանի մեջ մի դար ապրեցի,
հառաչանքներս խեղդելով թաքուն։

Եվ թե պապանձվեմ ու մնամ անբառ,
դուրս նետվեմ կյանքից, դարից ու տարուց
և եթե հոգնեմ աշխարհից իսպառ,
չեմ հոգնի բնավ անունդ տալուց։

◆

Իրարանցում էր պաղ,
աշնան իրարանցում.—
ցրտից սրսփացող
փողոցները անձյուն
քշում էին մարդկանց
խուճապահար հոտեր։—
Օ՛, դուք անմխիթար
կյանքի՜, ոգո՜ւ ճորտեր,
ո՞ւր եք վազում այդպես
քամու բերանն ընկած,
և կորացած սաստիկ,
հոգսերի տակ կքած
Ապոլոններ նախկին
և պատանի Վերթեր,
և Աստղիկներ՝ բուրյան,
գարնանային ցողով,
Անահիտներ՝ օծված
սիրով հավերժական,
Արամազդներ՝ ուժի
փառքով աստղաողող,
ո՞ւր եք վազում այդպես
մռայլ ու մեղսական։

... Դեմը դաշտն էր հետո,
ու մերկացած ծառեր,
քամին թոցընում էր
իր ավարը դեղին.—
ես իմ մրսած հոգին
թևերիս մեջ առել,

ու լուռ նայում էի
գունեղ այդ հեղեղին։
Քամու բարակ մի շերտ
սրտիս միջով անցավ,
վերջին տերևն այնտեղ
փոխարկելով բառի,
խառնըվեցին իրար
ապագա ու անցյալ.—
ես ինձ նմանեցրի
աշնան մի անտառի։

Ես ինձ նմանեցրի
աշնան մի անտառի,
որտեղ մտավ հողմը,
ողջ գույներս տարավ,
հիմա առած վրաս
Թիկնոց հաշտարարի,
ցրտից խույս եմ տալիս
դեպի հարա՜վ, հարա՜վ...
Գիտեմ, սերը պիտի
չթողնես, որ կորչի,
և գիտեմ, որ քամին
իր բաժինն է տանում.—
և տաքությունն այնտեղ,
ախ, հարավում հո չի՞,
սրտի մեջ է ջերմը,
և հոգի է հանում։

Դեմքը խոժոռ, հայացքը մութ,
շուրջը ոչինչ չտեսնելով,
անցնում է լուռ ու գլխահակ
սիրո ցավի կրկեսներով։

Դեռ որքա՜ն բան պիտի տեսնի
և ի՜նչ ցավեր պիտի զգա,
և ի՜նչ բեռներ պիտի կրի
աշխարհի մեջ խուլ ու հսկա։

Արդյոք ինչի՞ց է խոժոռվել
դեմքը խոժոռ այս պատանին,
որ աչքը իր ներսն է հառել՝
սրտի վրա,
հոգու վրա
սիրո հսկա կարկատանին։

ԵԼՔ

Առավոտյան, երբ որ նա դուրս եկավ տանից
գլուխը պտտվում էր.—
թեև պայծառ օր էր,
բայց արեգակն այնտեղ՝ հորիզոնում դրված
թթխմոր էր դեղին,
որ պտտվում նույնպես
և թթվում էր։
Թեև պայծառ օր էր, բայց երեկվա մուժը
ծխում էր դեռ աչքերում
ալկոհոլի թույնով,
և այդ մուժի խորքում որքան ուղեղ որ կար,
որքան մնացել էր
բուռն մսխումներից օրվա անցուդարձի
և պատմության վրա,
և մեր ձգտումների,
քաղաքական սիրո,
քաղաքական լույսի,
պոռնկության,
և զենքերի վրա,
և բազմագույն բոլոր սարսափների...
ահա այդ մնացած չնչին բանը, կամ թե՝

ոչնչությունն այնտեղ՝ նրա գանգատուփում
պարուրված էր հեռո՜ւ, անո՜ւշ մանկությունով։

Եվ նա օրորվելով,
(որովհետև այնտեղ՝ գանգատուփում եղած
չնչին բանն այդ արդեն
էլ չէր կարող նրան կառավարել կարգին),
նա, թույլ օրորվելով,
ինչ-որ անիրական խոսք էր նետում կյանքին,
ինչ-որ հավատարիմ երդման նման մի բան.
խոնարհվում էր մարդկանց և ծառերին դեռ թաց՝
իբրև ի պատասխան նրանց խոր հարգանքին։

Գիշերային խաղաղ, տաք անձրևից հետո,
դեռ թաց տերևները շողում էին փափուկ,
և ասֆալտի վրա անթիվ ջրափոսեր
արտացոլում էին շողանքն այդ խուսափուկ։

Եվ գծերը ճկուն կանանց մարմինների
լողում էին օդում՝ սարսռեցնող ու տաք,
և նա, անբանական մղումներին գերի,
ոչինչ ու ոչ մի բան, ախ, չէր տեսնում հստակ։

Եվ իր ներսում ծփող դատարկության ծովում,
մուժից ծնունդ առնող ալիքների վրա
լողում էին բուրյան ջրահարսեր ծիծղուն՝
և կայծկլտուն, բորբոք և հուրհրան։

Ոչ իր լեգենդներում, հեքիաթներում խոնարհ,
ոչ իր ժողովրդի զրույցներում խոսուն,
և ոչ կարոտակեզ հայացքներում խոնավ,
և ոչ արցունքների արտացոլքում հոսուն
ջրահարսեր բնավ չէին եղել, օ, ոչ,
չէին եղել այնպես,
ինչպես ծով չէր եղել,
բայց այդ պահին նրա զգացմունքը բողբոջ
խորտակում էր ահեղ մի ծովային եղեռն։

Եվ նա մայթի վրա,
անցորդների միջև,
ամբողջ հասակով մեկ թեքվեց ջրափոսին,
ասես հրեշտակ էր երկնքից ցած իջել՝
մարդկանց նվիրական երազանքը ուսին։
Նայում էին նրան
և զարմանքով, և լուռ,
այդ անսովոր մի քիչ, խենթի նման մարդուն,
ոմանք մի անմեկին հիացմունքով անլուր,
ոմանք՝ մերժողական հայացքներով արթուն։

Նայում էին, իսկ նա
վեր չէր կարող նայել,
Նա հազիվ էր պահում գանգը, որ ցած չընկնի,
կախարդել էր նրան ջուրն այդ, և հմայել
ջրափոսում ճոճվող արտացոլքը երկնի.—
Գուցե այնտեղ հանկարծ
ջրահարսե՞ր լողան,
գուցե մե՞կը լողա կամ կո՞ւրծք մի հոլանի,
սակայն լողում էր լոկ թարս ծառերի տողան՝
գլխի վրա՝ ճերմակ-կապույտ ամպհովանի...

Եվ մոտեցավ նրան
նիհար մի ծերունի,
նա մոտեցավ դանդաղ ու կռացավ,
զննողական մի քիչ նայեց ջրափոսին,
— Վերջը երևո՞ւմ է,— ծիծաղեց ու անցավ։

Հետո ջրափոսում
էլի երկինք պաղեց։
Հետո ջրափոսում իր պատկերը լողաց։
Նա վեր կացավ, մի կերպ պոկվեց ինքն իրենից
և հեռացավ՝ հոգին անձրևի մեջ թողած։

◆

Երեկոյան ծովն ալեկոծ էր, սակայն
առավոտյան հարթ էր, ինչպես հայելի,
առավոտյան նրա քողը կուսական
պատռում էին զավակները հայերի։

Սուզվում էին ջրահարսեր հանելու,
ջրահարսեր՝ շողարձակող վարսերով,
և դարավոր իրենց կարոտն առնելու՝
կակազելով մի քանի խոսք ասելով։

Սուզվում էին։ Ելնում էին, և... դատարկ,
և պրկվում էր նրանց մարմինը խանձված,
մթնում էին հայացքները նրանց բարկ՝
որ չկային ծովանույշներ թախանձված։

Բարկությունն այդ ծովը մեղմում էր ասես՝
փափո՜ւկ-փափո՜ւկ գուրգուրանքներ հյուսելով...

. . . . . .

ջրի վրա պառկես, անվերջ երազես
ջրահարսեր՝ շողարձակող հյուսերով...

Եվ երազես ծովի կապույտ հայրենիք,
իր մշուշով, ավազներով իր ոսկի,
անա՜փ, անա՜փ, անա՜փ, անա՜փ ափերով,
որ լիանա մի պահ պատրանքը խոսքի։

Եվ երազես ծովի կապույտ հորիզոն,
հեռվում՝ ճոճքը երազանքի նավերի,
և փոթորկվի քո լռությունը խոսուն,
և թանձրանա սրտիդ կարոտն ավելի։

◆

Երեկ աղմուկ էր,
այսօր լռություն.—
ես՝ աղմուկին կեր,
դու՝ լռության տուն։

Ինձ ազատիր այս
հոռի տանջանքից,
շնորհիր ինձ քո
լուռ անրջանքից։

Քո մենությունից
տուր մի ակնթարթ
և դարձրրու ինձ
վերստին, ախ, մարդ։

Ես՝ մի բուռ հողս,
լկվեց ախտերով՝
բութ աղմուկների
մոլախոտերով։

Ծաղիկներն էնտեղ
չորացան ցավից,
երազանքն էնտեղ
քար կտրեց ահից։

Թռչուններն, ավաղ,
էնտեղ լալկվեցին,
զգացմունքները
վշտով թաղկվեցին։

Լռության մյուռոն
քսիր շուրթերիս,
որ ես լռության
գավազան ձեռիս

անցնեմ աղմուկի
Օվկիանի միջով
դեպի փրկության
հովիտն անրջող,

Որ ինձ բաբախուն
այն հողին խառնեմ.—
հավատամ — գուցե
հարություն առնեմ։

Վեր կաց, ոսկե պատանի,
գիշերվա մեջ մի խամրիր,
մինչև խրճիթը տանող
խոտ ու քարերը համրիր։

Այնտեղ բոլորն են քնած,
այնտեղ արթուն աչք չկա,
այնտեղ քնած է անգամ
անքուն մայրը աղջկա։

Իսկ նա, ում քունն է փախել,
նա աստղի է սպասում։
Սպասում են տանողի
երկնի աստղերը բաղում։

Կույսին քաջ է հարկավոր,
քաջն էլ աստղը կտանի,
ֆսկ քաջին էլ պետք է, որ
մի բանաստեղծ խթանի։

Բոնիր մեկը, մեկ հատիկ,
պատուհանից նետիր ներս.—
և կատաղի մի արև
կսլանա դեպի քեզ։

... Մոռացության ճահճի մեջ
այս ի՞նչ լար եմ նվագում.—
մի ձեռք՝ աշխարհը որբուկ,
մեկն էլ աչքերս է փակում։

◆

Հին տխրության բաղեղները քանդելով,
Ման եմ գալիս հին կարոտի հանդերով։

Հաճույք ու ցավ իրար խառնած, իրար հետ,
Դուրս են բերում ինձ ամոքման արահետ։

Ձայնդ է, ահա, իմ ականջի խեցու մեջ
Կենդանություն տալիս լռած նկարիդ.—
Այս որքան շատ մնաց ձայնդ իմ ականջում,
Որ դարձավ նուրբ ու աստղացոլ մարգարիտ։

◆

Քեզ մոռանալով, վիշտս մոռանում,
աղոթք եմ անում սրտիս խորանում,
որ հոգիս ցավից չխելագարվի
և չհեկեկա.—
— Հարություն չկա՛ մոռացումներին,
հարություն չկա՛։

Ախ, կրկնում եմ բառերն այս նոթի,
և սահմռկում է սիրտս սնոտի,
մինչև կարոտը բզկտի հոգիս
և խառնի իրար անցյալ ու ներկա.—
— Հարություն չկա՛ մոռացումներին,
հարություն չկա՛։

Հարություն չկա՞ մոռացումներին...
արձագանքում են լեռները խոնարհ,
արձագանքում են այրերը մթար,
արձագանքում են ձորերը ագահ.—
— Հարություն չկա մոռացումներին,
հարություն չկա՞...

◆

Թաքնվեցինք մութի մեջ,
մթում իրար նայելով,
իրար ցոլանք փնտրեցինք
մութի փայլուն հայելով։

Ընտելացանք մենք մութին,
մթում իրար նայելուն.
դու՝ իմ տխուր մռութին,
ես՝ հայացքին քո ներհուն։

... Նայենք-նայենք, որ հետո
ընտելանանք մեռնելուն։

◆

Նա մի քանի վայրկյան
շողաց այնտեղ,
հետո անհայտացավ
մի ողջ հավերժություն.—
պատուհանի ետև
փայլեց իբրև կանթեղ,
հետո սուզվեց դեպի
գորշ մթություն։

Նա ինձ համար լույս էր՝
մաքուր, անմեռնելի,
միշտ անմարում լույսի
հավերժական հյուլե,
սակայն ինչպե՞ս խախտեց
օրենքն անմահների՝
խավարի հետ ինչպե՞ս
կարողացավ ձուլվել։

ԵՍ, ՈՐ ԱՌԱՆՑ ՍԻՐՈ...

Ինչպես հովն է բռնում խոտ ու ծաղիկների
բույրերը տաք, ջերմին,
հառաչանքները պաղ,
այդպես ես մարդկային պարտեզների միջով
անցա հովի նման՝
հավաքելով նրանց հառաչները գույն-գույն,
արցունքները աղի
և քննելով նրանց հոգու պտուղն ազնիվ,
տեսա, որ մարդկության
կեսը անհուսալի դժբախտ է, ախ, սիրուց,
մյուս կեսն էլ, ավաղ,
դժբախտ է, որ մարդ է և սեր չունի։

Նրանք՝ այդ հողեղեն հրեշտակները, որոնք
տառապում են սիրուց,
սիրո անձրևներից անվերջ խարխլվում են
տաճարների նման,
և չեն հոգնում բնավ իրենց հոգիներում
տանջանքների գունեղ ցանց հյուսելուց,
որի ոստայններում
հալածվում են անմիտ
հերոսական, անճար հանճարների նման։

Կարող է, որ նրանք
գիտեն այն հաճույքը,

որ ծնվում է անլուր տառապանքից,
և այդ տառապանքից կարող է, որ նրանք
ստանում են մի նոր երջանկություն...—
սակայն հենց այդ բանը ուրիշ իմաստ չունի
և կամ ուրիշ անուն—
պերճ խակություն—
Եվ սերն ինքը, ահա,
այդ հանճարեղ ոգին,
որ մասնատված նյութը իրար միացնելով,
արարում է ծաղկում,
այդպես անպատասխան թափառելով անմիտ,
դառնում է մի անգույն միջակություն։

Նրանք, որ սեր չունեն,
այդ դժբախտներն, իրոք, երջանիկ են թվում,
ոչ տառապանք ունեն, ոչ սեր,
ոչ հիացում, ոչ մեղք,
Նրանց ոչ հոգին է
անպատասխան սիրո մխանքներից նվում,
ոչ էլ սիրտն է լալիս արյուն-արցունքներով
մերժումից նենգ։
Նրանց անբույր կյանքի,
կամ ապրելու և կամ դժբախտության մասին
գիտեն նրանք, ովքեր նետեր ունեն սրտում՝
Օլիմպոսից ղրկված,
Նրանք, որ վշտերի բարեկամ են դարձել
և ապրում են իրենց ցավի հետ միասին՝
երջանկության դողից, սիրո կարկաչյունից
հավերժորեն զրկված։

Նրանք գիտեն, ահա, որ սեր չունեցողը
հենց դժբախտն է, որ կա,
և գիտեն, որ իրենք նույնպես երջանիկ չեն՝
սիրո ցավին գիտակ,
և այդ զգացումով երբ նայում են ցավի
աչքերի մեջ ագահ,
երջանկության ինչ-որ թեթև մի ալիք է
շարժվում կրծքների տակ։

Չէ՞ որ ցավը ինքն էլ ինքնին մի բան արժե,
և առավել արժե սիրո ցավը նրբին,
նրա սլաքները՝ հին աշխարհից թռած,
մխրճված են դարձյալ սրտին՝ սիրո գերբին։

Ես մարդկային անծայր պարտեզների միջով
անցա հովի նման՝
հավաքելով նրանց հառաչները գույն-գույն,
արցունքները աղի,
և քննելով նրանց հոգու պտուղն ազնիվ,
տեսա, որ մարդկության
կեսը անհուսալի դժբախտ է, ախ, սիրուց,
մյուս կեսն էլ, ավաղ,
դժբախտ է, որ մարդ է, և սեր չունի։

Բայց հանելուկ մնաց և առեղծված վերին՝
ես, որ առանց սիրո կյանք չեմ պատկերացնում,
մարդիկ այդ ինչի՞ց են ծնում մանուկներին...

ԵՂԵՐՆԵՐԳ

Լույսի բանալին թռավ իմ ձեռքից,
և սուզվեցի ես խորքը խավարի.—
լոկ հառաչ մնաց իմ սիրո երգից,
որ արցունքներով իմ սիրտը վառի։

Ես սիրում էի ժպիտը նրա,
նրա հայացքը մեղմ ու թախծալի,
և թարթիչները աչքերի վրա՝
ստվերների պես մանրաճյուղ ծառի։

Ես սիրում էի ծիծաղը նրա,
շշունջը նրա նրբահյուս խոսքի,
որ այսուհետև սրտում իմ ավեր
պիտի ծավալվի դառնությամբ սգի։

Ես սիրում էի պատկերը նրա՝
վրան տանջանքի ցոլանքը գունատ,
և այդ տանջանքի պատկերի վրա՝
աղոթքի քրքում, նվիրումի վարդ։

Բայց իր լրումին բախտը չհասավ,
Նա դարձավ նոխազն, ավաղ, քավության.—
ինձ դաժանության աստվածը տեսավ,
և կտցեց հավքը անիրավության։

Նա թռչունի պես թռավ իմ ձեռքից՝
անտերունչ մահի թևերի վրա,
և մինչև հիմա, ախ, նրա վերքից
կաթում է սրտիս արյունը նրա։

Երջանկությունից բախտը ինձ զրկեց,
հույսի դռներն էլ իմ դեմ կփակի.—
ճակատագիրը ինձ մահից փրկեց,
որ դատապարտի հավետ տանջանքի։

◆

Ապրեցինք բողոքի անուրախ երգերով,
վշտալի սերերով հագեցանք,
լցվեցինք անիմաստ վերքերով, կրքերով
ու դարձանք կարոտի տխուր զանգ։

Աշխարհը տխրության անդաստան դարձրինք
և թանձր թախիծով ծածկեցինք ամեն բան
և հետո ումից էլ խնդություն հարցրինք,
իմացանք՝ հավիտյան փակված է այդ ճամփան։

Օ, հակված գլուխներ ողողանջող ծաղկունքի,
օ, ջրեր, մարդկանցից խռոված,
որտե՞ղ է ակունքը խնդության ակունքի,
որտե՞ղ է մեր սերը մոլորված։

Որտե՞ղ է աշխարհի ընթացքը իմաստուն,
անտագնապ ապրելու հին ոգին,
այդ ո՞վ է կարոտի մրմունջները սաստում,
որ ձուլի մեզ մահվան իր զորքին։

... Հավիտյան բողոքի չմարող մրմունջներ,
կարոտի թախծալուր, տխուր զանգ.—
այս ունայն աշխարհից մեր ուզածն ի՞նչ էր՝
մի սեր էր, և այն էլ չունեցանք։

◆

Լռությունը անհայտ է։
Հայտնի են աղմուկները։
Լռությունն է հայտնի։
Աղմուկները չկան։
Անցյալի մեղմ դաշտում
չգիտեմ՝ ո՞ր, սակայն
հրեշտակի ձայն է
ամենօրյա ներկան։

Դեղին կարոտները
խշխշում են քամուց։
Հիշողության ձայնը
զարդարում է պահը.—
անհայտ է վայրկյանը,
ժամը, օրը, տարին,
բայց ապագան հայտնի է՝
— Ինչպես մահը։—

◆

Մենք արդարության ճորտն ենք հավերժ
Եվ ազնվության անհույս գերին։
Կյանքն իրավունք է տալիս նրանց՝
Պղտոր ջրերում ապրողներին։

Բայց հո չե՞ս կարող պարտադրել
Ամեն ծնվողի, որ կույր լինի.
— Թե պիտի ապրենք ձկան նման,
Գոնե թող ջուրը մաքուր լինի։

ՄԵՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՀ

Երբ անձրև էր գալիս,
ապակիներն այնտեղ
խոսում էին լացի և տխրության մասին,
և ծառերը հուզված ճոճում էին իրենց
կատարները՝ իբրև կարեկցանքի նշան,
թռչունները լույսի հետքեր էին փնտրում
կաթիլներում պաղուկ — նշխարներում լույսի —
(իբրև ընկնող կանթեղ),
որոնք թափվում էին տերևների միջով
գունեղ ու խշխշան։

Ու ես մենա՜կ, մրսա՜ծ,
իբրև հիվանդ հոգի,
իբրև հոդերի մեջ ձգվող բարակ մի ցավ,
նվում էի դանդաղ, դատարկ ու սնոտի,
այնքան երկա՜ր, անմի՜տ,
մինչև անձրևն անցավ։

Մինչև անձրևն անցավ,
ու դուրս եկավ արև։
Ես զգացի հանկարծ,
որ կա մեկը, ահա,
որ չի նվում բնավ անհուսության դիմաց,
իր ողջ հմայքներով դուրս է գալիս անահ՝
ժպիտ ճառագելով,
և ձեռքերը հինած։
Եվ ինձ ներշնչելով իր քաջության ոգին,
լույսով ողողելով
իմ հին մոլորության բավիղները կրկին,

ինձ կանչում է անտուն տունը պատրանքների,
դեպի կյանքի, սիրո առեղծվածն է կանչում՝
որ ես ապրեմ հույսով,
որ ես լինեմ գերի
հողից երկինք ձգվող ծորուն մշուշներին՝
և երգերին հնչուն։

Ահա, կանչում է նա,
և ես դուրս եմ գալիս։

Դեռ թաց բուլվարները չափչփելով մենակ,
ինքս իմ ուրախության վրա զարմանալով,
ձեռք եմ տալիս խոնավ տերևներին աշնան
և քննում եմ նրանց կյանքը մշտահոլով.—
Մրսածությունն ինձնից
անջատվում է ահա դեղին գոլորշու պես,
անհուսությունն ահա կապույտ քողի նման
իմ ուղեղն է լքում,
կախված կաթիլն ահա հուշում է քեզ, որ դու
անգամ քո անկումը հենց իր նման երգես.
ծիծաղ՝ դեմքիդ վրա,
իսկ կորստյան ցավը՝
թողած Աստծո գրկում։

Ահա քարերն այստեղ — բնակիչներ հավերժ —
գնդլիկ ծաղկամաններ՝ կանանց նման ներկված,
ծառեր՝ հույսի հազար ճյուղեր փռած քո դեմ,
հանճարների անմահ շրթունքներով երգված...
ահա ինչե՞ր... ինչե՞ր...
ի՞նչ ջերմություն փափուկ,
գունեղ կայծկլտումներ անտուն երազների,
կարոտների ցոլքեր՝ մարմանդ ու խուսափուկ,
և կենդանի դեմքեր՝ անգամ մեռածների...

Ուրեմն՝ Արեգակը,
այդ թագուհին կյանքի,
ժպիտ ճառագելով և ձեռքերը հինած,

դուրս է գալիս՝ իբրև փոխհատուցում միակ
կորած սիրո դիմաց,
կորած հույսի դիմաց,
կորած երազների,
կորած լույսի դիմաց,
և մեր բոլոր-բոլոր
կորուստների դիմաց։

◆

Ոչ ոք
ոչ մի տեղ
ու ոչ մի վայրկյան
էլ չի պարտվելու։
Ապրենք հաղթությամբ
և երազներից
սև փղոսկրե դագաղներ ձուլենք
լույսերի համար։

... էլ ի՞նչ պարտություն,
էլ ի՞նչ հաղթանակ՝
երբ դու հենց ինքդ պարտված ես արդեն,
Դու՝ քո հաղթության դրոշների տակ։

◆

Երբ ձմեռը գա, և ձմեռն անցնի,
երբ մի ձմեռ էլ հողն անմահացնի,
այս տունը պիտի հիմքից ավերեմ,
հողի երեսից ասֆալտը քերեմ,
տեսնեմ թե՝ տեղը ձնծաղիկ կաճի՞,
տեսնեմ թե՝ հողը պիտի կանաչի՞.—
ու թե կանաչեց —
կանաչ տնակում
մի գարուն ապրեմ ճնճղուկի հանգույն,

մի ամառ ապրեմ ճնճղուկի նման,
մի աշուն ապրեմ թիթեռի հանգույն՝
մի մե՜ծ, երկա՛ր օր —
և լրիվ անքուն։—

Եվ հետո կրկին երբ ձմեռը գա,
երբ բուքը սրտիս, հոգուս մեջ վնգա,
հողի մեջ սառցե պատեր կշարեմ,
որ հող ու երկինք էլ չնշմարեմ։
Եվ հույսն էլ հետո այնտեղ կպառկի՝
թե երբ գարունը աշխարհը ծածկի,
գուցե մի բան էլ ինձանի՞ց ծաղկի.—
և բաց աշխարհի կանաչ տնակում
մի գարուն ապրեմ ճնճղուկի հանգույն,
մի ամառ ապրեմ ճնճղուկի նման,
մի աշուն ապրեմ թիթեռի հանգույն.
մի մե՜ծ, երկար օր —
և լրիվ անքուն։

Մեզ միշտ թվում է, թե առանց մեզ
Աշխարհում կյանքը կդադարի,
Թվում է՝ եթե մենք չլինենք,
Ամեն բան մեկից կխաթարվի։

Գետերը դեպի ետ կհոսեն,
Ամպը չի ծածկի դեմքն արևի,
Եվ կկորցընի իմաստն իր վեհ
Տխրությունը մեր ծույլ բառերի։

Եվ այդ անիմաստ տխրությունից
Թվում է՝ կյանքը կկործանվի,
Եվ անհետանա գուցե նաև
Հանդիսավորությունն անգամ ցավի։

Օ՛, կարող է և այդպես լինել,
Դա ճշմարտության ձայնն է, որ կա.—
Միտքը չի կարող կյանքը սնել,
Որ մահը կյանքի մասին հոգա։

◆

Շոգը ննջում է—
ծղրիդն է երգում։

Հովը փչում է —
ծղրիդն է երգում։

Աստղը լճում է —
ծղրիդն է երգում։

Հավքը ճչում է —
ծղրիդն է երգում։

Սերն ինձ խղճում է —
ծղրիդն է երգում՝

...և՛ ականջիս մեջ,
և՛ տիեզերքում։

◆

Ուրիշները շոգին՝ ստվեր,
Ցրտին արև վայելելով,
Ապրում են պարզ, հասկանալի,
Իրենց չափի հոգսի բեռով։

... Քանի շոգ էր, արևի տակ
Այրվում էի խոնարհ ու խեղճ,
Հենց որ ցրտեց, հանելուկ էր,
Հայտնվեցի ստվերի մեջ։

ՏՈՀՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1.

Չդիմացա, չդիմացա
այս տաղտուկին խելագար...
երեկ գիշեր ոտաբոբիկ
ելա ճամփա գնացի,
(քանդում են ինձ տղամարդկանց
հառաչանքները տկար
և վիրավոր ու անհագուրդ
բողոքները կանացի...)։

Ինձ ուղեկից եղան լուսնի
զավակները անհամար,
դստրիկներն ու որդիները
հավերժական արևի.—
ցրում էին նրանք մութի
մտածմունքները խավար,
տալիս էին քամիներին
հյուսիսի ու հարավի։

2.

Առավոտյան, երբ արեգակն ելավ հիր,
ինձ ժպտացին աչքերով պարզ ու հստակ
կակաչների երեխաները կարմիր
և սունկերի ճուտիկները սպիտակ։

Խոտ ու ծաղկի ժառանգները անքանակ
միշտ ծիծաղկուն, իրար գրկած, ժպտալով
հասմիկների աղջնակները ճերմակ
խմում էին ցողը ամպե գդալով։

Թփերի մեջ ամաչելով, պահվելով,
կչկչում էր պստիկ աղջիկը գետի,
ժայռի ծոռը լաց էր լինում, որ գոնե
մի պահ իրեն նրա պաղ գիրկը նետի։

Ժայռի պապերն իրենց ծոռին նայելով,
այրվում էին և ավելի ժայռանում,
ճիշտ նույն պահին ծոռնուհիներն արցունքի
ծնվում էին ժայռի խոնավ մառանում։

Ինձ խոտերի աղջնակները կանաչ
ժպտում էին առանց շրթունք և անաչ,
և կամ՝ աչք էր նրանց մարմինը լրիվ
արեգակի, աշխարհի և իմ առաջ։

Արեգակի պապն իջնում էր մայրամուտ,
և գալիս էր քամու տղան վազելով.—
ի՞նչ էր փչում ականջներին խոնարհված՝
կակազելով հնամենի խազերով։

Եվ քանի դեռ վերջին ցոլքը չէր հանգել
արեգակի և աստղերի մեծ պապի,
խոնարհվելով մինչև գետին, ինձ կանչեց
դալար մի հարս բարդիներից դեռատի։

Բարդիների այդ հարսնուկը ինձ ասաց՝
արի՛, ասաց, այրվող այտերդ շոյեմ
թավիշ — արծաթ տերևներով մեղմասաց
և թևերով հոգնած մարմինդ օրորեմ։

Իրավ, մի՞թե նա հասկացավ՝ ի՞նչ ասաց։—
Վրնջում է մեջս որդին ջրվեժի.—
զոհաբերեց ինձ Արարիչը այսօր
տաք մարմինը և տաք բուրմունքը խեժի։

... Ես կհալչե՜մ, կանէանա՜մ հիմնովին
այս տարաշունչ հոլովույթի մեջ անքուն
և դալարուկ հարսնուկների ծոցի մեջ...
այդ բոլորի զավակն եմ ես հետնագույն։

ԻՆՁ ՔԱՆԻ՞ ՏԱՐՎԱ ԿՅԱՆՔ Է ՄՆԱՑԵԼ

Ինձ քանի՞ տարվա կյանք է մնացել,
ինչո՞ւ ապրեցի ես այսքան փութով.—
օվկիանոս թախի՜ծ, անքանակ հարցե՜ր,
պատասխանները կնքված են վերքով.
ինձ քանի՞ տարվա կյանք է մնացել։

Փորձեցի սիրտս ամոքել երգով,
բայց իմաստության կախարդանքը ծեր
ինձ լռեցրեց զորավոր ձեռքով.—
ինձ քանի՞ տարվա կյանք է մնացել,
որ փորձեմ սիրտս ամոքել երգով։

Ինձ քանի՞ տարվա կյանք է մնացել.—
հանապազօրյա գազանությունից
բոլոր նյարդերս ձեռքից գնացել,
բոլոր սերերս, ավա՜ղ, հնացել,
և քրքրվել է մարմինս թույնից.—
ինձ քանի՞ տարվա կյանք է մնացել։

Ի՞նչ անել — Աստծուց հավելո՞ւմ հայցել,
որ մի քիչ այս մեղկ կյանքը երկարի՞,
որ վերափոխվի վիշտն սփոփանքի՞,
քարը՝ մետաքսի, մետաքսը՝ քարի՞.—
ինձ քանի՞ տարվա կյանք է մնացել.
ի՞նչ անել, Աստծուց հավելո՞ւմ հայցել։

Ինձ քանի՞ տարվա կյանք է մնացել՝
մի միլիոն տարվա ապիկար հարցում.—
Իսկապես, քարը փոխվեց մետաքսի,
թախիծն էլ հնուց քար է մեր սրտին,
բայց թախծի քարից, վշտի մարմարից
դամբանաքար է միայն ստացվում։

ՀԵՔԻԱԹ ՄՂԶԱՎԱՆՋՆԵՐՈՎ

Հանելուկ է հավերժական
Կամ առեղծված անթերի—
Մարդը խավար մի զանգված է,
Բայց նման է կանթեղի.—
Տրորվում է իր մթի մեջ,
Սակայն լույս է ճառագում,
Խտանում է մութն անընդհատ,
Լույսը— ավա՜ղ— բարակում։

ՄՂԶԱՎԱՆՋ — 1

Հաչում է շունն աստղերի մեջ,
Զյունն է հալչում աստղերի տակ,
Մեկի կավե գլուխը բութ,
Մեկ ուրիշի գուլպան է ծակ։

Եվ ումը որ ծակ չէ բնավ,
մեկ է, մի օր պիտի ծակվի,—
կհաչի շունն այդպես մի քիչ
և մեզ վրա կհարձակվի։

...Եվ ծակերից անհաշվելի
Հոսում է խելքը մարդկային
դեպի պալատն արքայական,
ուր արքան է նստած գահին։

Մեկը հուշեր է շաղ տալիս,
մյուսն այդ հուշերն է վաճառում.
վաճառում են անխտրական
նա, ով ինչ-որ բան է ճարում։

Սակայն հուշերն ի՞նչ կապ ունեն
պալատի հետ արեգնածին.—
ախ, հա... արքան հիշում է միշտ՝
թե ինչ գահեր կործանվեցին։

Հաչում է շունն աստղերի մեջ,
Անշուշտ շուն է արքայական՝
քանի որ միշտ նրա ձայնում
կործանումի հնչյուններ կան։

Քանի՞ հազար տարի առաջ
ցնդած մեկը ինձ վաճառեց,
մինչև հիմա ոչ մի խելոք
փրկագնելու ճար չճարեց։

Ես մի քիչ էլ քայլեմ այսպես,
մինչև ձյունի սահմանն անցնեմ,
հետո հանեմ գուլպան իմ ծակ
և աստղերով կշորացնեմ։

Եվ կտանեմ իբրև նվեր
ճոխ պալատին իմ արքայի,
որ նաժիշտները կարկատեն
ծակուծուկերը հին գահի։

Թող գահը միշտ հաստատ մնա,
ես էլ մի կերպ փրկագնվեմ,
որ ազատվեմ մղձավանջից,
շուտով երկինք պիտի չվեմ։

ՄՂԶԱՎԱՆՋ — 2

Խառնվել են մտքերս իրար,
և ոչ մի բան չկա կարգին.—
քուն է գալիս մարդու վրա
այս մշուշոտ եղանակին։

Երբ քնում եմ՝ երազիս մեջ
ավերվում է կյանքը ցրված,
արթնանում եմ, և ամեն բան
կրկին իրեն տեղն է դրված։

Մարդիկ քայլում են հիրավի,
և ժպտում են, և ծիծաղում,
կսմթում են իրար մի քիչ,
և իրար հետ սեր են խաղում։

Եվ պատմում են պատմություններ՝
հնարովի կամ իրական,
իրար մի քիչ ձեռ առնելով
ծաղկեցնում են իրենց ներկան։

Աչքդ փակիր,— ասում են քեզ,—
բաց ափդ, մի դողա վախից,
կրակ դնում ձեռքերիդ մեջ,
ուշաթափվում են ծիծաղից։

Եթե բացես սիրտդ հանկարծ,
և հավատաս նրանց բառին՝
այնպես քացի կտան քեզ, որ
խելոքացնում է հիմարին։

Մայրս ասում էր՝ հեռու մնա
առակախոս այդ էշերից,
մեկ էլ տեսար՝ իրենց կեղտը
կհավաքեն քո փեշերից։

Կծոտում են նրանք անվերջ՝
ամեն գույնի, ամեն համի,
նրանց համար կեր է չքնաղ
հոգին ընկեր-բարեկամի։

Մայր իմ, այո, հեռու մնամ,
բայց ինձ այնքան են կծոտել,
որ վերքերս ինչ-որ ձևով
անհնար է կրկին զոդել։

Անհնար է արդեն ապրել
մի ներդաշնակ պայծառ կյանքով,
այնպես, ինչպես ասում էիր՝
ապրենք խաղաղ, մեռնենք փառքով։

Խառնվել են մտքերս իրար,
և ոչ մի բան չկա կարգին.—
քուն է գալիս մարդու վրա
այս մշուշոտ եղանակին։

Գնամ հիմա բոլորի հետ
և ետևից ընկած ջահի
շուկա հանեմ գուլպան իմ ծակ՝
մի մրցանակ գուցե շահի։

ՄՂԶԱՎԱՆՋ — 3

Մայրամուտ էր։ Քայլում էի
մի հեռավոր ու խոր կիրճով,
աղավնիներն անցնում էին
խարխլված ու հին կամրջով։

Գնում էին իրար կպած,
վախենալով, սրթսրթալով,
ի՞նչ է, չէի՞ն կարող թռչել
հազար կիրճեր՝ թևին տալով։

Հպարտ գնում էր առջևից
ծիրանագույն թագով արքան,
գութ էր շարժում ամեն մի քայլ՝
ծիծաղելի և տխրական։

Ի՞նչ է, թևե՞րն էին կորել,
կամ թե չկար հիշողությո՞ւն.—
մեր մեղքերին անքննելի
թողություն տուր, Տեր, թողություն։

Այդպես օրոր-շորորալով
նրանք առաջ գնացին հեզ,
և կամրջին բացված անցքից
կիրճ թափվեցին քարերի պես։

Եվ անկումի պահին միայն
նրանք ասես ճախրում էին՝
նրանց թևերն էր գուրգուրում
քերծերի մեջ պարող քամին։

Հետո տխուր կաղկանձելով
ջրերի հետ ողբաց մի քիչ,
հետո կարծեմ ինչ-որ կտոր
երգեց հիմնից մեր ամոքիչ։

Հիմա եկել, վերելակով
բարձրանում է խելառ քամին.—
նա փնտրում է կիրճում իր հետ
միակ վկա-բարեկամին։

Կելնի այդպես մինչև տանիք
և տանիքից խողովակով
կիջնի մինչև անկողինս՝
առոք-փառոք, հարգ ու կարգով,

Երգում է նա պաղ ու տրտում,
վախեցնում է երգից բացի՝
թե գուլպայիս ծակով հանկարծ
մարմընիս մեջ կթափանցի։

ՄՂԶԱՎԱՆՋ — 4

Հանրախանութ մտա մի օր
սիրո և այլ ապրանքների,
հայելազարդ սրահներում
մարդիկ կային հազար ձևի։

Եղանակը թեթև էր շատ,
օդը՝ մաքուր և հաճելի,
բայց խանութում տոթն էր կանգնել
բուռն ապրումներ ու կանչերի։

Պոետները կանգնած էին
սեղանների ճիշտ ետևում,
բայց նրանց միտքը թևավոր
սրահների մեջ էր թևում։

Նրանց աչքերը անհանգիստ
վառվում էին մութ կրակով,
ապրում էին, ախ, վաճառվող
ամեն բառ ու տողի կյանքով։

Օ, ապրանքներ տեսակ-տեսակ
հաճախորդներ ամեն գույնի,
տանում էին թխված երգեր՝
վերելքների և անկումի։

Հենց հաճախորդ էր մոտենում՝
գեղգեղանքով հալվում էին,
ծախում էին ամեն տեսակ
պատմություններ փտած ու հին։

Մի անուշիկ օրիորդ սակայն
ինչ-որ բան էր փնտրում երկար,
նրա շարժմունքը հուսահատ
շարժեցին և իմ սիրտը քար։

Ես հարցրի նրան կամաց,
թե արդյոք ի՞նչ է ցանկանում,
նա շփոթված նայեց վրաս,
արտասանեց ինչ-որ անուն։

Ապա դեմքի շառագույնով
հասկացրեց ինձ հիրավի
մետաքսահյուս երգի մասին
մի հեռավոր ճանապարհի,

որով մի օր ոտաբոբիկ
կամ գուցե թե՝ ծակ գուլպայով
պիտի անցնի ամեն ասպետ,
որ հասնի տեղն իր ապահով։

Օ, ճանապարհ սքանչելի,
տես, քեզ նայող աչքերն ահով
փնտրում են լույսն արարումիդ՝
քո իսկ տված ոսկե ջահով։

ՄՂՁԱՎԱՆՋ — 5

Զորն այնքան պարզ մրմունջ ունի,
և այնքան մեղմ, նրբին թախիծ,
որ թվում է՝ արարված է
մեր ապրելու հույս ու վախից։

Հույսը՝ պարզ է, վախը՝ նրբին.
սարի ետև արջն է ննջում,
ի՞նչ պիտի տանք մենք այդ լրբին,
որ չխեղդի մեզ մեր կիրճում։

Առույգ, զորեղ շրջում է նա,
և ննջում է երախը բաց,
և ճամփորդները մեր ոգու
ետ են գալիս
հոգնած, ջարդված ու կողոպտված։

Զորն այնքան պարզ մրմունջ ունի
և այնքան մեղմ, նրբին հառաչ,
որ թվում է՝ թրթռում է
կախարդ վիշապ օձի առաջ։

Թող կործանվեմ ես հիմնովին,
լեզուս հավետ մնա սաստած՝
թե գլխի մեջ սառած օձի
չարք ու դևեր չկան նստած։

Հարսանիք են սարքում նրանք
այդ գլխի մեջ բևեռային,
որ տաքացնեն մարմինը պաղ,
ազատ ելք տան մեռնող մահին։

Նրանք այնպես են ծիծաղում
լիրբ ծիծաղով էգ ու որձի,
որ քրտնում են աչքերը պաղ,
և մարմինն է ցնցվում օձի։

Ախ, այդ դևերը խելագար
այնքան պիտի համբ հանեն,
մինչև որ խեղճ ձորի գլխին
արջն ու օձը սիրաբանեն։

Այդ համբույրից ձորի վրա
երևի թե մաղձ կկաթի,
և չի մնա գոնե մեկը,
որ ծակ գուլպան իմ կարկատի։

Եվ այդ ծակից ես կնայեմ
պատմությանն ու ապագային,
մեկը լաց է, մյուսը՝ ծիծաղ,
զույգ համբույր են՝ տրված մահին։

Զորն այնքան պարզ մրմունջ ունի
և այնքան նուրբ, նրբին թևեր,
որ կարող է թեթևորեն
արջ ու օձից բարձրանալ վեր։

Եվ ճախրելով լցվի, լցվի,
անմահության տաք մշուշով,
և գուլպայիս ծակով մի օր
մարմնիս մեջ լցվի գույժով։

ՄՂԶԱՎԱՆՋ — 6

Փշատենին ամբողջ տարի
պատուհանիս տակ մորմոքեց,
կռանալով քսվեց գետնին,
խուլ տնքալով մեջքը շտկեց։

Ամեն անգամ հարցնում էր ինձ՝
— Ես ի՞նչ երկրի ծառ եմ, ասա,—
ամեն անգամ խորհում էի,
թե՝ ի՞նչ տխուր հարցում է սա,

Ի՞նչ ես ուզում, ասում էի,
թե ուզում ես՝ ներս արի տուն,
կպաշտպանվես քամիներից,
կզրուցենք գիշերն արթուն։

Սակայն ինչպե՞ս կպաշտպանվենք,
ասա, քեզ եմ ես հարցընում,
այն փոթորկից, որ սրտիս մեջ
կաղնիներ է կռացընում։

Նա քնքշորեն հակվում էր ինձ,
դեմքս էր շոյում տերևներով,
այնքան փափուկ, ասես՝ Որդին
ախտ էր սրբում հրաշք ձեռով։

Այնպես փխրուն ու բուրալի
շնչում էր նա ռունգերիս մեջ,
որ կարծես ողջ Հայոց ցեղի
շունչն էր լցվում ունկերիս մեջ։

Ախ, դու անմիտ փշատենի,
ես, հարցումիդ հավատալով,
կարող էի խեղճ գլուխս
խփել հազար ժայռ ու քարով։

Որ պատասխան գտնեմ մի ճիշտ,
Մի ճիշտ խոսքով սիրտդ շահեմ.—
Մի՞թե հողիդ վրա կանգնած
քեզ զգում ես անապավեն։

Մի՞թե տագնապ կա սրտիդ մեջ,
և հողն անգամ հավատ չի քեզ։
Մի՞թե հողը զրնգացող
ուժ չի տալիս, որ դու երգես։

Նայիր հզոր արմատներիդ՝
նրանք երկիրն են քո զորեղ,
որ չեն կարող կտրել երբեք
ոչ մի մրրիկ, ոչ մի մորեխ։

Հայրենիքդ ծաղկապարուր
բույր ու շշուկն է քո անքուն,
Օ, ոչ մի ծառ դեռ չի ապրել
այդքան չքնաղ հայրենիքում։

Եվ չի ապրել այդքան խոնարհ,
այդքան տխուր հարց հեգելով,
այդքան բարի, այդքան խոնարհ,
հավերժական պարզ երգերով։

Ի՞նչ մաս ունեն քո ծաղկումին
հողմը անմիտ, աշխարհը խեղճ,
բայց ես ուրախ ապրում եմ, տես,
այստեղ՝ իմ ծակ գուլպայի մեջ։

ՄՂԶԱՎԱՆՋ — 7

Թե մի քիչ էլ քայլենք առաջ,
գուցե դուրս գանք մառախուղից,
իսկ հիմա, տես, կախված է նա
ամեն թփից, ամեն ճյուղից։

Մեր այսօրվա խմած գինին
եթե այսքան հին չլիներ,
նոր պատկերը այս աշխարհի
գուցե այսքան սին չլիներ։

Գուցե անմիտ չերևային
նկրտումներն այս տանջալի.—
ինչ բախտեր են խաչվում իրար
ծայրին նզովք այս խանչալի։

Մառախուղը ետ տանելով,
մենք առաջ ենք գնում կրկին՝
ծակ գուլպայից իմ աղոթքներ
հղելով փակ, մութ երկնքին։

Ի՞նչ գեղեցիկ ձոներգ ձոնեմ
հերոսական մեր ընթացքին,
որ չամաչեմ ուղիղ նայել
նրա բերած վարկ ու վարձքին։

Այս մառախուղն անտանելի
տխրություն է և թախծի ծես,
մաղմղում է դեմքիդ վրա՝
առանց ձայնի լաց է կարծես։

Փաթաթվում է ինքնաթաքույց
սև ծառերի քանդակներին,
պաղ փակչելով մեր սրտերի
կարմրամշուշ վանդակներին։

Ի՞նչ եմ ասում, ի՞նչ տխրություն
կամ ի՞նչ մշուշ, կամ ի՞նչ ծառեր.—
մեկը մեռնող այս աշխարհի
աճյունների դեզն է վառել։

Ընտելացրել են դարերով
մեր ոունգերը այդ բարկ հոտին,
նա մեզ այնքան է հարմարվում,
ինչքան կրակը՝ վառոդին։

Եվ մենք այնքան հեշտ ենք շնչում
թանձր սարսափը օրերի,
որ թվում է՝ մարդկանց ցեղը
վեր է ածվել սոսկ բոռերի։

Մառախուղը ետ տանելով,
մի անկյուն ենք փնտրում հարմար,
որ գինով լի սկիհի մեջ
տարրալուծենք օրերը մառ։

Եվ միամիտ, և սևեռուն
նայենք երկար ծակ գուպպային.—
ճշմարտությունն ինչի՞ է պետք
ավազակին և աբբային։

Եվ կամ գուցե պետք է որ, ախ,
կարելվույն չափ խոր թաքցընեն,
թե բռնկվել փորձի հանկարծ՝
կարելվույն չափ շուտ հանգցընեն։

Ճշմարտությունն էլ հիրավի
ոչ ճրագ է, ոչ էլ անթեղ.
նա շրջում է ամենուրեք,
ինչպես հիմարն է ամեն տեղ։

ՄՂԶԱՎԱՆՋ — 8

Մշո՜ւշ, մշո՜ւշ, կանաչ հովիտ,
կաթն է հոսում հովտի միջով,
հեռվում ջրվեժն է շառաչում՝
անհույս ու սառը քրքիջով։

Այնքան երգեր են հորինել
ջրվեժի խենթ պարի մասին,
որ անկումը հարմարեցնեն
մեր օգուտին կամ վնասին։

Պաղ է սարսափը օրերի,
ահ է քամու մրմունջը պաղ.—
կախարդական տնակի մեջ
պիտի փակվեմ ես անհապաղ։

Նա մեն-մենակ, տնակն այդ հին,
հայտնվել է հովտի միջում,
ծակ տանիքի միջով նրա
կապույտ մշուշն է կարկաչում։

Եվ չի լսվում ձայնը բնավ,
պաղ մշուշի ոչ մի հնչյուն,
քանի որ քիչ հեռվում ահա
խելառ ջրվեժն է շառաչում։

Տնակի մեջ հին օրերին
մերկ ոգիներ են բնակվել,
որ մտքի դեմ մեր գարշելի
կռվել են ու նահատակվել։

Գնամ հիմա, գուցե նրանց
հարություն տամ մի կարճ պահի,
խոսեմ հետները անցյալից,
քննեմ հարցերն ապագայի։

Գուցե նրանք ինչ-որ հույսից
մի ցանկալի կրա՞կ վառեն,
ապագայի համար գուցե
մի հուսալի մի՞տք բարբառեն։

Ախ, այդ տնակը հիրավի
կախարդական տնակ է հին.
որ ոչ մի կերպ չի հարմարվում
ներկային ու ապագային։

Սակայն բառերն այս անիմաստ
ի՞նչ կարող են տալ մեր հոգուն,
երբ նրա հույսն ապրում մեր մեջ,
երջանկություն է մորմոքում։

Շուրջն ամայի, սարսափ ու մութ,
ու մենք՝ դրա անհույս գերին.—
— Կախարդական տնակ է պետք
բոլոր մրսած հոգիներին։

Մշո՜ւշ, մշո՜ւշ, կանաչ հովիտ,
կաթն է հոսում հովտի միջով,
հեռվում ջրվեժն է շառաչում
անհույս ու սառը քրքիջով։

Նա մեն-մենակ, տնակն այդ հին
հայտնվել է հովտի միջում,
նրա դեղին տանիքի մեջ
կապույտ մշուշն է կարկաչում։

ՄՂԶԱՎԱՆՋ — 9

Հեեե՜յ, գագաթին բարձր սոճու
կոռաց ագռավն իր սև թաղից,
պարզ է՝ կտուցը տաքացավ,
էլ չի վախում ցուրտ ու պաղից։

Կտուցն հանգիստ բաց է անում,
չի վախենում՝ լեզուն սառչի։
Լեզվի վրա մի կողմ նետած
գեշ բառեր են մեր արարչի։

Արարիչն էլ... խեղճը հիմի
կծկվել է պաղ երկնքում,
արարիչի շատ պե՞տքն է, թե
ագռավն այստեղ ի՞նչ է երգում։

Զբաղված է նա երկնքում
անօրինակ բարդ խազերով՝
հայհոյանքներն իր հասցեին
իրար կողքի դասդասելով։

Օ, այնքան շատ նա ստացավ
հայհոյանքներ, բոթեր, գույժեր,
այս պատմության մեջ ցավալի
ամենաշատն ինքն է տուժել։

Բայց խորամանկ աստված է նա՝
անբեկ մտքով մեծ հանճարի.—
Կմտածի, և այդ ողջը
կրկին հենց մեզ կվաճառի։

Եվ մի բան էլ նրա առջև
պարտք կմնանք մենք տակավին.—
այդ մասին է ասում ահա
այս ագռավը այն ագռավին։

Գեղեցկություն չունեն սրանք,
բայց իմաստուն բաներ գիտեն,
«իմաստություն են» կոկոում
գեղեցկության ու երգի դեմ։

Նրանք պիտի տգեղ լինեն,
որ դիմանան ժամանակին.—
գեղեցկություն չի դիմանա
դառն օրերին, դաժան կյանքին։

Թող դիմանան այնքան երկար,
որ թաթերին մորուք աճի,
ագռավների երկիր դառնա
աղբանոցն այս տեր արարչի։

Այնքան կռռան, այնքան կռռան,
որ խլանան։ Չքվեն։ Չկան։
Եվ լռություն կիջնի այնժամ՝
տենչալի ու ողբերգական։

ՄՂԶԱՎԱՆՋ — 10

Գնում էի օտար երկիր,
(ինչ հայ, առանց երկրի օտար),
գնում էի հույս բերելու՝
թե հաջողվեր, բախտը գթար։

Ճանապարհիս հանդիպեցի
մենակ ապրող մի պառավի,
նա իր պառավ կրծքի վրա
տաք գլուխն էր շոյում ցավի։

Մրմնջում էր մի հին թախիծ,
մի հիի՜ն, մի հիի՜ն, վշտալի երգ,
այդ երգի մեջ տապակվում էր
աշխարհը պիղծ և բախտը մեղկ։

...Մայր իմ, ի՞նչ էր քո երգի մեջ,
մինչև հիմա չեմ հասկանում,
նրա ամեն հնչյունն ինձնից
տարիների կյանք է տանում։

Նրա ամեն բառի վրա
կուչ է գալիս սիրտս ցավից,
թեև հենց այդ սիրտը, մայր իմ,
կյանք է առնում նույն քո ձայնից։

Ի՞նչ էր քո այդ բողոքը խուլ,
այդ ինչի՞ց էր սիրտդ մխում.—
պառավն ահա ճամփիս վրա
այդ նույն թախիծն է մղմղում։

Ի՞նչ են անում մայրերը խեղճ.—
զավակներ են բերում աշխարհ,
և պահում են շուրթը սեղմած,
սիրտ մաշելով, քար կրծելով,
ապա բռնած հեռու ճամփան,
մղմղալով գնում են, ախ,
իրենց արգանդը սրբասուրբ
օրհնելով կամ անիծելով։

Օրհնելով կամ անիծելով,
օրհնում են մեզ ամեն վայրկյան,
նրանց օրհնանքն է աշխարհում՝
որքան հույսեր, սերեր որ կան։

Դրա համար թեթև սրտով
գնում էի հույս բերելու,
տարօրինակ մի մղձավանջ
եկավ մարմինս գերելու։

Մայր իմ, հիմա կամաց-կամաց
արթնանում եմ ես քո կանչից՝
ծակ գուլպայիս ծայրից բռնած,
դուրս ես քաշում մղձավանջից։

ՄՂՁԱՎԱՆՋ — 11

Այսօր գիշեր մի հրեշտակ
եկել էր, որ հալս հարցնի,
երբ տեսավ, որ տխուր եմ շատ,
մնաց՝ մի քիչ ուրախացնի։

Նա աստղեր էր բերել իր հետ՝
սուտակ-սուտակ, նախշուն-նախշուն,
նա զարդարում էր ճակատս,
ես նրա քիթն էի քաշում։

Հրեշտակի պես զայրանալով,
ապտակում էր թևով դեմքիս,
և ցնդում էր մի վայրկյանում
տխրությունը հոգուս, երգիս։

Ես, զարդարված աստղահույլով՝
մեծ պոետներն ինչպես հնում,
զգացի, որ իր գրկի մեջ
աչքերս, ախ, կուլ են գնում։

Մոռանում եմ բողոք ու թույն,
մոռանում եմ կռիվ ու վեճ
և ուզում եմ ննջել մի քիչ
հրեշտակային թևերի մեջ։

Ինձ օրորիր, քնեցրու,
և համբույրներ շաղ տուր դեմքիս,
սրբիր ձեռքով հրեշտակային
մրմուռները անփակ վերքիս։

Եվ, ախ, թեկուզ երազի մեջ,
և, ախ, թեկուզ գեթ մեկ անգամ
քո դրախտի երկիրը տար,
տար այս իմ սիրտը արնաքամ։

Տար, դիր տիրոջդ սեղանին՝
ամենատես աչքի առաջ,
ախ, թող տեսնի հայի սիրտը
ինչ է շնչում՝ տենչ ու հառաչ։

Թող տեսնի, որ մեկ բախյունով
սիրտս այնքան աստղ է ժայթքում,
որքան երբեք չի լինելու
նրա ոչ մի տիեզերքում։

Սակայն երբ ինքն է ուղարկում
երկու աստղիկ ճակտիս համար,
չեն խավարում նրանք երբեք
և տրտմորեն փայլում են հար։

ՄՂԶԱՎԱՆՋ — 12

Ոսկեդեղին սաթե մեղրի
բարկ բուրմունք էր կանգնած օդում.—
ես ուզեցի քեզ հոտոտել՝
ինչպես մեղրն են հոտոտում։

«Ոչ, ասացիր դու ժպտալով,
եթե փորձես ինձ հոտոտել,
հետո պիտի փորձես նաև
գոնե մի քիչ մեղր ուտել։

Ես գիտեմ ձեր ցեղն անամոթ,
իբրև թե մեղր են հոտոտում,
սակայն քթները անպատճառ
մաքուր մեղրի մեջ են խոթում»։

Այդ ասելով, դու մեղմորեն
իմ ձեռքն առար ափերիդ մեջ,
մի վայրկյանում ընկա ես քո
լուռ քնքշության կապերի մեջ,

մի վայրկյանում անհետացա
քո աչքերի չափերի մեջ,
խճճվեցի, մոլորվեցի
մազերիդ սև սաթերի մեջ։

«Ախ, ես երբեք չէի ուզի
բաժին դառնալ քեզ պես մեկին,
սեր գողացող, սիրտ գողացող
անամոթին, ավազակին...»։

Եվ իմ ձեռքը անփութորեն
տարար սրտիդ թեթևակի.—
մեղուները բզզում էին,
սպանիչ էր բույրը ծաղկի։

Եվ եռում էր օդը անբույժ,
և եռում էր սիրտս օդում.—
ես ուզեցի քեզ հոտոտել՝
ինչպես մեղրն են հոտոտում։

Ման եմ գալիս խելակորույս,
սիրտս ուղղած իր սլաքին.—
«ախ, այս ո՞վ է, որ տիրաբար
ման է գալիս՝ մեղր հագին...

Այս ո՞վ է, որ իմ շուրթերից
հառաչանքներ է դուրս քամում,
երջանկության պատկեր ունի,
դժբախտության դառը անուն։

ՄՂԶԱՎԱՆՋ — 13

Վայրի, սրտամաշ քամիների մեջ,
նրանց բվվոցի տագնապին հլու,
ամբոխն էր գնում խղճալի ձայնով
զոհասեղանին լուռ գլխատվելու։

Խոսքի շիկավուն մտրակների տակ
երբեմն գվարթ գոչյուն էր հանում,
իսկ շանթ-մտրակներ արձակողները
խոզեր էին և մարդիկ անանուն։

Օ, նրանք այնքան ոգևորությամբ,
և, օ, այնպիսի մեծ նվիրումով
խոխռում էին ամբոխի վրա՝
որ նրան քշեն ցանկալի հունով։

Ես նայում էի առաջին անգամ
ինքն իր դին տանող թափորին անծայր,
և սիրտս քամվում ու տնքում էր խիստ,
և մշուշվում էր հայացքս պայծառ։

Եվ այդ վայրկյանին շիկավուն մի նետ,
արձակված թաքուն և առանց ձենի,
գալիս էր, որ պինդ մխրճվի իմ մեջ
և ինձ վառվռուն դրոշ դարձընի։

Դարձընի դրոշ ամբոխի վրա՝
այս երկնքի տակ, այս հողի վրա,
այս Աստծո տված քարե դրախտում՝
որպես նենգության շաղփյուն ու փողփյուն։

Ես, մեղմ ժպտալով, նետը որսացի,
խփեցի ժայռին, փշրվեց իսկույն,
և լսեց հոգիս, որ ամբոխն այնտեղ
Հարության զվարթ երգեր է երգում։

Թշնամիներս դրոշ պարզեցին՝
«Նա դավաճան է, գլխատեք նրան»։
Հրեշտակները երգեցին վրաս՝
«Նա դավաճանն է դավաճանության»։

Եվ ես ապշահար երկինք նայեցի,
զարմանքը հոգիս կապույտ էր ներկում՝
ինչպե՞ս է, որ դեռ հրեշտակներ կան
այս թունավորված, չքնաղ երկնքում։

Փչեցի նրանց ոտքերին թեթև,
նրանք ճոճվեցին ու ճռվողեցին՝
— Ախ, մենք չենք կարող երբեք ձեզ լքել,
ազգականներն եք դուք մեր հողածին։

Դուք մեր հողածին պապերն եք, որ կաք,
իսկ թե ինչպես ենք մենք ապրում այսպես,
պիտի քեզ ասենք, որ ամեն գիշեր
քույր հրեշտակը սրսկում է մեզ։

— Ախ, ինձ էլ տարեք, անգին քույրիկներ,—
ես աղաչեցի նրանց սրտագին,—
մի մեծ ասեղով մի լավ երգ գրեմ
և նվիրեմ այդ քույր Հրեշտակին։

ՄՂԱՎԱՆՋ — 14

Խաղաղ, որպես գարնան արև,
և նրա պես զվարթ ու լույս,
թափվում էի երկրի վրա
սարսռագին ու ոսկեհյուս։

Սարսռագին ու ոսկեհյուս
լցվում էի գետ ու առու,
ուր քրքիջով լողում էին
ձկնիկները էգ ու արու։

Բերանիկները բացելիս
պղպջում էր աղոթք ու ծես,
տնկվում էին պոչի վրա՝
բանաստեղծներ էին կարծես։

Եվ հարկ չկար խղճալ նրանց,
կարեկցանքի խոսքեր ասել,—
պետք էր հյուսել շողիկներից
ծիրանի քող, ոսկե մազեր։

Պետք էր հոգալ, որ չսառչի,
որ ջուրը միշտ մնա փափուկ,
և այդ կյանքը շողա մեղմիվ
շարժումների մեջ խուսափուկ։

Պետք էր հուսալ, որ ի վերջո,
ինչ-որ մի օր, մի լույս պահի
մեկը մի խոսք կասի հանկարծ,
այդ հրաշքը կպատահի։

Մի խոսք՝ հավերժ այդ լռության
սարսափելի ցավի մասին,
և կբերգի միանգամից
ձկների ցեղը միասին։

Եվ մղձավանջը իսկական
հենց այստեղ է, որ պիտի գա.—
այդ հրաշքը պատահել է
գիշերվա մեջ, առանց վկա։

Ճչացել է մեկը հանկարծ,
աստղերն ի վեր ձայն է տվել,
բոլոր ձկներն առավոտյան
ուռկանի մեջ են հայտնվել։

Այ քեզ անտես, հզոր ուռկան.
այ քեզ ձկներ հիմար ու խեղճ,
բերաններն են բացում-խփում
կախարդական ուռկանի մեջ։

Նրանց լռին աղաղակից
մռայլվում է դեմքն արևի,
ասենք արևն այդ ես էի,
որ փոխարկվել եմ բառերի։

Եվ երբեմն խոսում եմ ես
անմեկնելի ձկնաբառով,
սիրտս էլ իմ մեջ գալարվում է
ձկան նման թպրտալով։

ՄՂԶԱՎԱՆՋ — 15

Գնացքները դղրդալով
գլխիս միջով անց են կենում,
այդպիսի պիղծ, թունոտ տանջանք
չկար անգամ հին գեհենում։

Ես նայում եմ նրանց վրա՝
մեծ նվաճում են երևի.—
պիտի փառք տանք նվաճողին
և վերևի, և ներքևի։

Նրանց մասին պիտի բնավ
հիմար բաներ մենք դուրս չտանք,
նրանք դարիս նվաճողն են,
իսկ մենք՝ դարի խեղճ խղճմտանք,

Նվաճել են նրանք բոլոր
գաղտնիքները հին աշխարհի.—
հին աշխարհին ի՞նչ է մնում՝
իր մեղքերը ապաշխարի։

Նվաճել են նրանք Նոյին,
և Ադամին, և Աբելին.—
Կայենների զորքը զվարթ
նվաճելով մեր պապերին,

հրթիռների երգով դղրդ
գլխիս միջով անց են կենում,
այդպիսի պիղծ, թունոտ տանջանք
չկար անգամ հին գեհենում։

Կայեններն են շրջում հպարտ,
սարդ է նստած նրանց հոգուն,
և սարդի մեջ կարիճ կա սև,
որ բողոքի թույն է թքում։

Թքում է թույնն այն բողոքի,
թե՝ որքան էլ սպանեցին,
լույսաշխարհ են գալիս էլի
Աբելները Աբելածին։

...Ախ, ես ոչինչ չեմ հասկանում
ոչ հաճույքից, ոչ տանջանքից,
հիմարությունն է երևի
ինձ կողակից ու կարեկից։

Ու գնում եմ ես գլխահակ,
հիմարության պոչը բռնած,
նա է դրոշն ամենամեծ՝
հորիզոնի վրա դրված։

ՄՂԶԱՎԱՆՋ — 16

Օրերն անուշ փայլ ունեին,
Եվ փայլի մեջ փայլ էր ոգին,
Եվ նեղություն չկար սրտիս
Ոչ բքի մեջ, ոչ բարկ շոգին.—
Ոչ իբրև զենք կամ զորավար,
Այլ որպես լոկ ռազմիկ մի քաջ,
Գնում էի միանալու
Ժողովրդիս անպարտ զորքին։

Գնում էի միանալու,
Եվ ճանապարհն էր ցանկալի,
Մարդիկ աչքիս նման էին
Արդարության վարձակալի.—
Գնում էի, որ նրանց հետ
Դառնա մեր տունը մշտական
Արդարությունն ամենասեր,
Ճշմարտությունը անձկալի։

Քայլս թեթև, սիրտս մաքուր,
Կյանքս խորունկ շնչառություն,
Չկար արյունս պղտորող
Ոչ մոլություն, ոչ չարություն.—
Անիրական ամպեր էին
Հոգուս մաքուր երկնքի մեջ
Եվ մոլեգին անճարություն,
Եվ անկարող հանճարություն։
...Բայց ինչո՞ւ է ինձ երազվում
Հիշողությունը ցանկալի,
Նրա մշուշը տեսնելով,
Վեր եմ ածվում մեղմ փխրության.—
Եվ նայում եմ շուրջս, մարդկանց
Եվ աչքերին իմ անձկալի՝
Ես տխրության ճուշարձան եմ՝
արձանների մեջ տխրության։

ՄՂԶԱՎԱՆՋ — 17

Ամեն գիշեր գիշերն ի բուն
Աղաչեցի երկնքին՝
— Լուսավորիր քնած մարդկանց
Երազները անմեկին,
Նրանց իղձը նվիրական
Եվ մտքերը բորբոքուն,
Լուսավորիր,— աղաչեցի,—
Որ հիանամ ես թաքուն։

Աստղը շողաց-լուսավորեց
Երազները խոր մթնում—
Մութ-մութ էին երազները,
Ի՞նչ էր, մարդ ի՞նչ իմանա.—
Նեղվեց սիրտս, և մինչ այսօր
Թեթևություն չի գտնում,
Նեղված մտքով, նեղված սրտով
Մարդ որքա՞ն կըդիմանա։

Նեղված սրտով գիշերն ի բուն
Աղաչեցի երկնքին՝
— Ցույց տուր պատկերը ոգեղեն՝
Լույսի ջահերը ձեռքին,
Հույսի զրահն՝ անիրական
Սարսափների դեմ անպարտ,
Եվ մեկնիր ինձ,— աղաչեցի,—
Մեր գոյության Բանը բարդ։

Լուսավորվեց պատկերը մութ—
Մութ սարսափ էր խոցվելու,
Լուսավորվեց, և լույսի մեջ
Սև զանգված է հիմա նա.—
Նեղվեց հոգիս, և ոչ մի կերպ
Հնար չկա բացվելու,
Նեղված սրտով, նեղված հոգով
Մարդ որքա՞ն կըդիմանա։

Հանելուկ է հավերժական,
Կամ առեղծված անթերի՝
Մարդը խավար մի զանգված է,
Բայց նման է կանթեղի.—
Տրորվում է իր մթի մեջ,
Սակայն լույս է ճառագում,
Խտանում է մութն անընդհատ,
Լույսը, ավաղ, բարակում։

ՄՂԶԱՎԱՆՉ — 18

Պատուհանից այն կողմ
ինձ պես մեկը նստած,
ինձ պես գլուխը կախ,
տխրությունը զսպած,
ձեռքը դրած քունքին,
ծխախոտ է ծխում,
բայց պատկերից մաքուր
տխրություն է բխում։

Ինձ պես հարցում ունի,
անպատասխան հարցում.—
ինձ պես ինքը իրեն
հանճարեղ է կարծում,
և ճգմում է ոգին
անմիտ իր հանճարի,
որ անթաքույց հարցին
մի պատասխան ճարի։

Ի՞նչ է հարցը սակայն,
հարցը ո՞րն է, գիտե՞ք.—
անպատմելի հեռվից
մի սուր նիզա՞կ, թե տեգ՝
Աստծո ձեռից թռած,
մի քանի գիր ծայրին,
գալիս է, որ մեխվի
սրտի քարանձավին։

Մոնչում է սիրտը,
պատեպատ է զարկվում,
և գլուխը թղթին
ավելի է հակվում։
Սակայն թղթի վրա
ոչինչ չկա գրված,
գրված թուղթը տեգի
սույր ծայրին է խրված։

Ի՞նչ է գրված թղթին,
գիտե՞ք՝ ի՞նչ է գրված՝
«Ճակատագիր»։ Հետո
վերջակետ է դրված։
Այդ է։ Ոչինչ։ Թեկուզ
լոկ մի բառով, մեկով,
սակայն ինչո՞ւ հանկարծ
դա ուղարկել տեգով։

... Պատուհանից այն կողմ
ինձ պես մեկը նստել,
ձեռքը դրել քունքին,
տխրությունը զսպել,
սիգարետ է ծխում,
և այդ ծխի միջով
մոտենում է տեգը
սուր լռության ճիչով։

ՎՂՋԱՎԱՆՋ — 19

Իմ Հայրենիքը էլ չի այրվելու
վշտի անպատրույգ կրակարանում.—
անծագում ու բիրտ, անդեմք, անանուն
ավազակներին չի հարմարվելու։

Իմ Հայրենիքը չի կործանվելու,
որ կրկին մոխրից հարություն առնի,
Նրա արյան մեջ պիտի սավառնի
լույսն՝ առանց ցավի և խցանվելու։

Էլ այսուհետև նա չի ծնելու
զավակներ գաճաճ, պիղծ ու տմարդի,
որոնց քծնությամբ իր մեջքը ջարդի.—
իր հերոսներին չի կործանելու։

Չի հավատալու շողոմ բառերին,
խոսքերին պատիր, մտքերին տարտամ,
խոստումների մեղկ կրքին անատամ՝
ապավինելով լոկ իր քարերին։

Իմ Հայրենիքը անտեր ու անթագ
չի դողդողալու՝ հողմերին գերի,
չի հանգցնելու հուրը երգերի
և չի թաղվելու սառույցների տակ։

ՄՂԶԱՎԱՆՋ — 20

Պատուհանից այն կողմ
ինձ պես մեկը կրկին
նստել է լուռ, մենակ,
ծխախոտ ձեռքին։
Եվ սպիտակ թուղթը
սառն է ձյունի նման,
ջերմացընող մի տաք
անգամ չկա վրան։

Լռություն է համակ,
չկան բառեր, ժեստեր.—
ոսկորներիս վրա
պաղ եղյամ է նստել։
Այնպես ցուրտ է, կարծես
ես եմ նստել դրսում.—
ձյունը ներս է եկել,
և նա էլ չի մրսում։

Եվ վհուկներ չկան,
չկան շարքեր, դևեր,
և չղջիկներ չկան,
սարսափազդու թևեր։
Եվ ձյան վրա արծաթ
ցոլանքներ են խաղում.—
մութը ձյունի վրա
կրկին ձյուն է մաղում։
— Ինձ հետ խոսիր, տղաս,
ախ, ինձ դուր չի գալիս,
որ լռության անծայր
ծովում այս անխարիսխ
դու լռում ես այդպես
անմեկնելի, անհաս.—
ներիր, ես եմ որդիդ,
դու իմ հայրն ես որ կաս։

Ես ի՞նչ ասեմ, երբ դու
ինքդ ողջը գիտես.—
Թե ուզում ես ապրել՝
պիտի անվերջ ստես։
Ժամանակը դառն է
դառնության պես բառիս.—
մեղքի համար ոչ ոք
պատասխան չի տալիս...

Խոսում էի այդպես
ինքնամոռաց բառեր,
չէի ուզում անգամ
աչքերի մեջ նայել։
...Երբ ուզեցի նայել
առավոտվա ծեգին,
տարել էին նրան։
Մենակ էի կրկին...

ՍՊԱՍՈՒՄ

(Մղձավանջ— 21)

Էդ քամի՞ն է տարուբերում
վարագույրը, թե՝ դու,
ինձնից քեզ ի՞նչ է հարկավոր,
ախ, դու պառավ ջադու։

Առանց էն էլ, ես ահի մեջ,
լուսնի շողքն եմ բռնել,
ու նստել եմ՝ ամուր փակած
պատուհան ու դռներ։

Սիրտս այնպես է տրոփում՝
տունն է ցնցվում ահից.
ինձ ասին՝ սև ժապավենով
թուղթ է եկել մահից։

Ջարախնդում ես դու, գիտեմ,
այն մտքերից հոռի,
որ գրված են սև թղթի մեջ
սև մատներով Քոռի։

Որ նա քոռ է, հաստատ գիտեմ
արդեն քանի տարի.—
մանկությանս մայրս էր ասում՝
— Քոռ մահը քեզ տանի։

Հիմա եթե անիծի ինձ՝
իր կարոտին գերի,
պիտի ասի՝— Քոռ մահը քեզ
ոչ թե տանի, բերի։

Քանի որ, էէ՞է, արդեն վաղուց
ինքն այնտեղ է ապրում,
նրա կաթի անուշ բույրից
այդ Քոռ մահն է հափրում։

Հափրում է, որ տաղանդավոր
սև թղթիկներ գրի.—
ախ, մեր այսքան թանկ կյանքը, Տեր,
ծախի այդքան ձրի։

...էդ քամի՞ն է տարուբերում
վարագույրը ահով,
թե՞ մեր միտքը, մեր տանջանքը՝
կնքված կյանք ու մահով։

ԱՔԱՂԱՂԸ

(Մղձավանջ— 22)

Աքաղաղը ելավ քնից,
նայեց շուրջը, խլշկոտաց.
ձայն չէր գալիս հավաբնից,
հավիկները այս ու այնտեղ
թափված էին ու քնոտած։

Ելավ, նայեց, ճմլկոտաց.
զարմանալի աքաղաղ էր...
ձայն չհանեց, չհոտոտաց.—
ելավ թեթկեց մի խեղճ հավի,
կարծես թե դա թեթև խաղ էր։

Հավը, գլխին տվածի պես,
այդպես էլ տապ արեց, մնաց.—
աքաղաղը, գժվածի պես,
ելավ-կանգնեց ու ծղրտաց
ականջներում խուլ ու քնած՝

— Քաղաքակիրթ հավ եմ ուզո՜ւմ,—
ճչում էր նա ողջ թաղով մեկ։—
Այս հավերը ինձ չեն հուզում,—
ծղրտում էր վիզը ձգած,
աչքերը փակ, գլուխը թեք։

«Քաղաքակիրթ հավ եմ ուզո՜ւմ...»—
տատը լսեց, խիստ զարմացավ՝
«Վայ դու, ապուշ, վայ անասուն...»
Շորը մի կերպ քաշեց վրան
և անկողնուց վեր բարձրացավ։

Եկավ, գտավ աքաղաղին.
ցնորված էր, աստված վկա,—
ձեն էր տալիս ամբողջ թաղին,
թե բազմանդամ հավանոցում
իրեն հարմար մի հավ չկա։

— Արի,— ասաց տատը նրան,—
արի ես քեզ Փարիզ ղրկեմ,
էնտեղ հավեր կան հուրհրան.
գուցե քեզ պես մի ապուշի
գլուխն էնտե՞ղ պիտի գրկեն։—

...Երբ դանակը դրեց վզին,
Թոռն անկողնում հանկարծ ճչաց.—
մի հավ բռնեց մի աքաղաղ,
ոտքը դրեց իր ոտքի տակ,
վիզը կտրեց ու կչկչաց։

Աստղեր կային հորիզոնում,
և մթություն՝ աստղերի տակ.—
քամին դեպի ծով էր սուրում,
ուր մթի հետ բախվում էին
ալիքները կուտակ-կուտակ։

ՈՍԿԵ ՅԱՆՅԸ

(Մղձավանջ— 23)

Ես ինձ համար ապրում էի
կորած սիրո մշուշի մեջ,
տապակվում էր սիրտս էլ խոնարհ
տառապանքի տաք հուշի մեջ։

Եվ գոհ էի, որ այնտեղ էլ
ասես թե կար կյանքի ծաղկում.
թեև բոլոր ծաղիկները
թախծալի բույր են արձակում։

Եվ սրտմորեն ուրախ էի
և գոհ էի մեր Տիրոջից,
որ չթողեց ինձ լրիվ մերկ,
բաժին հանեց իր մեծ խղճից։

Ինձ հագցրեց թախծի զգեստ՝
երազանքի ոսկե կարով,
հետո անդուլ նվիրումի
մի թերթ տպեց իմ նկարով։

... Անմտություն է, հիրավի,
որ ես ինձ հետ խաղ եմ անում.
սակայն հոգնած սրտիս վրա
գրվեց սիրո մի նոր անուն։

Եվ ես այդօր աղոթք արի
վաղամեռիկ մեր աստծուն,
որ իմ տանջված սիրտը կրկին
իր ոսկեղեն ցանցն է գցում։

Ցանցը ոսկի էր, հիրավի,
շողշողուն ու խոստումնալից,
և իմ սիրտն էլ սիրտ էր ոսկի,
թեև մի քիչ ընկած հալից։

Կուտը տեսած հավքի նման
խեղճ իմ սիրտը սերը կտցեց.—
դա բախտի խաղ էր, հիրավի,
և տանջանքի անդուլ մի ցեց։

(Ահա, այդ է մեր ապրելու
ձևն ասեմ, թե՝ իմաստը ծեր.
պիտի գնաս ճիշտ այն ճամփով,
ինչ սովորույթն է լոկ գծել։

Թեթևություն չկա բնավ
ոչ մեր կյանքում, ոչ մեր հոգում.—
սավառնելու ամեն մի ճիգ
նշանի տեղն է բորբոքում։

Նշանառուն արթուն նստած
սպասում է սավառնումի՝
որ չպղծվի գեղեցկատես
մերկությունը մեր անհունի)։

... Էհ, ի՞նչ ասեմ, սիրտս կտցեց,
և կտուցը մնաց թաղված
սիրո թանձր ցավի խորքում,
ու թևերն էլ՝ հավետ կախված...

ԻՇԽԱՆ-ԾԱՌԱ

(Մղձավանջ— 24)

Մեղքով լիքն է աշխարհն ամբողջ,
կյանքը մեղքով է թաթախված,
ախ, քանի որ մեկի բախտը
մյուսից է միշտ էլ կախված։

Ի՞նչ են անում մարդիկ իրար,
բնավ իրար չեն պահպանում.—
սիրո տենչից տոչորվելով,
հենց սիրո դեմ մեղք են անում։

Ես իմ սիրո ծառան էի,
նվիրյալը անմնացորդ,
բայց նա իշխան էր երազում,
ես իր սրտին մնացի խորթ։

Իշխանն եկավ, տարավ նրան,
իշխանաբար կողքին կանգնեց.—
ճնշվեց սիրող սիրտը, ավա՜ղ,
ալեկոծվեց ու հառաչեց։

Եվ պահանջեց իր իշխանից,
որ նա ծառա դառնա իսկույն.—
և իշխանը իրեն, ավա՜ղ,
ծառայից էլ վատ էր զգում։

Եկավ իմ սերն ու ինձանից
պահանջեց, որ իշխան դառնամ.—
հայացքիս մեջ այդօրվանից
կա տխրություն մի դառնահամ։

Դարձա իշխան, ի՜նչ աննի,
իշխանություն էր պահանջվում,
բայց այդ տխուր ճանապարհին
իմ սրտի մեջ սերն էր խաչվում։

Ապա երբ որ իշխանաբար
իմ առաջին քայլն արի ես.—
սերս ուզեց, որ իր կողքին
լինեմ սիրո ծառայի պես։

Ճոճանակ ենք մենք, հիրավի,
իշխան-ծառա ծայրագծում.—
մենք ծնվեցինք սիրո համար,
մեզ սիրո մեղքն է հալածում։

Բայց ցավալին այն է, իրավ,
(սա էլ ցավ է պսակավոր),
որ այդ մեղքը ետ գնելու
չնչին վայրկյան է հարկավոր։

Սիրող սրտին ակնթարթը
հավերժության է հավասար.—
մի վայրկյանում թվում է, թե
Անահիտի գիրկը հասար։

Գուցե տայի՞նք մեղավորին
մի ակնթարթ՝ մեղքը քավեր.—
բայց վստահ եմ, որ այդ պահին
նա մի նոր մեղք կգրավեր։

Օ՛, ԼԵԹԱ ԳԵՏ, Օ՛, ՄՈՌԱՑՈՒՄ...

(Մղձավանջ— 25)

Այս բացառիկ էժան կյանքից
մի թանկագին օր էլ անցավ.—
նկարված էր օրվա դեմքին
ափսոսանք ու ժպիտ ու ցավ։

Օրը գնաց, և պատկերը
արտացոլված մնաց իմ մեջ՝
ինչպես գինու արտացոլանք
հենց այդ գինուց հարբածի մեջ։

Եվ ծփում է պուրպուրն ահա
և ծփանքով ինձ հարբեցնում.—
Ասես Աստված ներսն իմ դատարկ
մոռացության մուժ է լցնում։

Լեթարգիական քնի մեջ եմ
Լեթա գետի ալիքներում
և գնում եմ անդարձ հեռուն
ալիքների մեջ երերուն։

Իմ տանջանքը իմ հեգ սրտից
ա՜խ, պիտի որ նրանք քամեն,
սակայն երկար չեն դիմանա,
մի տեղ կրկին ափ կհանեն։

Նախ տանջանքս կնետեն ափ,
հետո հերթը ինձ կհասնի,
և կերևա դեմքդ քնքուշ,
որ այդ երկուսը միացնի։

Հավատալու բա՞ն է, իրավ,
այն, ինչ մեզ հետ է կատարվում.—
տառապում ենք սիրո ցավից,
ոչնչով չենք մխիթարվում։

Շատերին էլ թվում է, թե
սիրո ծովում լող ենք տալիս.—
մինչ սիրո ծով չկա վաղուց,
կա ժանգոտած կրքի խարիսխ։

...Ադամ-Եվա — մեղքի խնձոր —
ինչ-որ անհայտ չար սատանա.—
և դրախտից՝ դժոխքի ձոր —
մարդ քրտինքով սե՞ր ստանա...

Հիմար բան է՝ սեր քրտինքով...
Հորինվածք է խելագարի.—
սերը լույսի շողանքն է տաք
տեր աստծո լույս քանքարի։

Պույր են մարդիկ մեր օրերում
ԵՒ կամ թե լույսն է պակասել.—
Սիրո Տանջանքն են օրորում
ԵՒ այդ Դևին կոչում են Սեր։

Օ՛, լեթա գետ, օ՛, մոռացում,
Մատուցեք ինձ սիրո գինի.—
Թե որ ես էլ չխմեմ դա,
Վերջն անասելի վատ կլինի։

ԻՆՁ ԴԵՎԵՐԸ ԿՁԱՐԿԵՆ

(Մղձավանջ— 26)

Կանգնած էի ժայռի վրա,
Ներքևում ծովն էր ծփում.—
Ձկների պաղ աշխարհն էր դա՝
Երազկոտ ու արսփուն։
Օ՛, արժանի են հիշվելու
Մի այդպիսի ժայռ ու ծով՝
Մարդու համար միշտ անծանոթ
Քրքիջով ու հոգոցով։

Նայում էի ալիքներին,
Որտեղ արևն էր քթթում.—
Տարաշխարհիկ արև ու ջուր
Հյուսվում էին իմ սրտում։
Եվ ճոճվում էր սիրտս անհագ
ԵՒ կրծքիս մեջ, և ծովում,
ԵՒ իմ սրտից ջրերի մեջ
Սիրո նեկտարն էր ծորում։
Կախարդական կաթիլք էր դա
Սրտիս միջից երևի,
Որ Անահիտ մեր դիցուհին
Ցոլաց մուժի մեջ հեռվի։

Ապա տեսիլքն այդ իրական
ինձ շատ մոտիկ երևաց,
և դրանից նախ իմ հոգին,
ապա ժայռը երերաց։

Նա քնքշորեն թռավ-եկավ
և բռնեց ձեռքս ամուր,
որ ժայռի հետ չգլորվեմ
ջրերի մեջ մութ ու խուլ։
Ժայռը տնքաց, երերալով
անդունդի խորքը փլվեց.—
և հառաչեց ծովը խորունկ
և կուլ տալով՝ փրփրեց։

Մենք մնացինք օդում կախված,
հովերի հետ ծփալով.—
շնորհակալ եղա նրան՝
«Սիրում եմ քեզ» ծեր բառով։
Շառագունեց թեթևակի
և ժպտաց ինձ քնքշորեն
և չթողեց, որ կնճիռներն
իմ պարզ դեմքը խոժոռեն։

Հետո թռանք իր թևերով,
թռանք, հեռու գնացինք.—
և օդի մեջ ճոճվող լույս էր
իր մարմինը սլացիկ։
...Զայն մի տվեք։ Այս տեսիլքից
ես չեմ ուզում արթնանալ.—
առանց այդ էլ բարդ իմ կյանքը
էլ չի ուզում բարդանալ։

Խորտակված է ժայռը հիմքից
ջրերը՝ մութ ապաքեն.—
թե արթնանամ այս տեսիլքից,
ինձ դևերը կզարկեն։

ՄՈՒՍԱՅԻՆ

(Մղձավանջ— 27)

Երեկ գիշեր թեթևակի
գինով էի և կրկին
ինձնից թաքուն, հոգուս աչքը
հառել էի երկնքին։
Փնտրում էի լույս պատկերդ՝
աստղերի մեջ ցոլացող,
որ կաթեցներ երգիս վրա
անմահության անուշ ցող։

Փնտրում էի, և ճիշտն ասած
այնպես էի ամաչում,
որ կլսեմ հիմա մեկի
ծաղրող ծիծաղը հնչուն։
Մի նոր պոետ եթե հանկարծ
այդ խեղճությունս իմանար՝
կորած էի ես հիմնովին,
փրկության ոչ մի հնար։
Կարծում են, թե օրենք դարձավ,
որ ի հեճուկս հնի՝
մուսաների կարիք չունեն
բանաստեղծները հիմի։
Մուսաները նրանց համար
խրտվիլակներ են անդուր,
որ փակված են հին երդերի
տիեզերքի մեջ անդուռ։

Նոր պոետներն աշխարհով մեկ
քանդում են և ավերում
տաճարները մուսաների
և օրենքները ներհուն։
Հիմա նրանք ամեն բանից
կարող են մի երգ թխել
և կողքին էլ մի մուսայի
ծաղրանկար զետեղել։

Եվ սակայն դուք, ով մուսաներ,
մի շարացեք անտեղի.—
բորբոք պահեք հուրը նրանց՝
ինչպես կրակն անթեղի։
Քնքշացրեք սիրտը նրանց
և քնի մեջ, և արթուն.—
Նրանք ձեր դեմ ելել կռվի,
բայց ձեր գութն են պաղատում։

Հոմերոսից մինչև Դանտե,
մինչև Քուչակ ու Չարենց,
ամեն պոետ իր պարտքը ձեզ
գլխեգլուխ վճարեց։
Քանի որ դուք հավանավոր
եղաք նրանց ողջ կյանքին
և թև տվիք նրանց հզոր
ներշնչանքին ու ջանքին։

Ձեր մոլորյալ զավակներին.
դառը պատիժ մի տվեք.—
կաթեցրեք երգի նեկտար
սրտերի մեջ նրանց նենգ։
Եվ աղոթքս գիշերային
թաքուն պահեք նրանցից՝
քանի ձանձրույթ է ճառագում
նրանց երգից ու անձից։

ՊՈԵՄՆԵՐ

ԱՏԻՑ ԳԼՈՒԽ

(Ասք ինքնամոտեցման)

1

Կիսամշուշը դարձավ կիսամութ,
Եվ մայրամուտի արդեն հագեցած, հին գույների մեջ-
Վառվել-մարելով,
Սեղմվեց աշունքվա խամրած պատերին։
Մենակ եմ արդեն։
Ու պառկել եմ ես իմ մահճակալին՝
Այլևս հոգնած խոր խաղաղությամբ,
Հանգստով, սիրով,
Այլևս հոգնած երազանքների ներշնչմամբ բարի,
Եվ իմ անսահման կենդանության մեջ
Մեռնում եմ ասես
Մղձավանջային,
Այս կոշմարային
Խորությամբ, հեքով, լայնքով այս դարի։

Եվ իմ լռության արձագանքն իմ մեջ
Հնչում է հրաշք-մաքուր զընգոցով՝
Որպես գոյություն,
Եվ տեսանելի, և շոշափելի իրականություն՝
Անսկիզբ, անվերջ,—
Այնպես է հնչում,
Ինչպես հնչել է հայ նախամարդու անխոսք,
Բայց արդեն իմաստուն ձայնը քարանձավի մեջ։

Քարանձավ եմ ես,
Եվ իմ սեփական արձագանքն եմ ես
Քարանձավի մեջ։
Դարեր շարունակ ապրել եմ որպես վանք, եկեղեցի,
Դարեր շարունակ իմ սառնության մեջ այրվել եմ
որպես վանք, եկեղեցի
Եվ շատ-շատերի դեռ սապատավոր ուղեղների մեջ
Ես նույնանում եմ ամեն ինչի հետ,
Ինձանից բացի։

Ես քարանձավ եմ
Եվ իմ սեփական արձագանքն եմ ես
Քարանձավի մեջ։

Տխուր տքնությամբ իջավ անձրևը
Սև փողոցներին,
Սևությամբ մնաց,
Ես քանի անգամ ուզեցի տեսնել կենդանությունս—
Ինձ մեռած գտա։

Կենդանությունս ուզեցի տեսնել
Ցավ չեղած պահին,
Բայց ցավերի մեջ զգացի, որ կամ,
Ցավ ունեմ՝ դեռ կամ,

Եվ աստվածային կատակերգությամբ
Ծաղրում եմ ինձ ու վիշտը մարդկային,
Եվ անասնական կատակերգությամբ
Լցնում դատարկը մարդկային հոգու։

Կապույտ տքնությամբ իջավ անձրևը
Սև փողոցներին,
Սևությամբ մնաց։
Ես տեսա ցեխոտ տերևը մայթին
Եվ նրա կողքին՝ անթիվ ոտքերով տրորված ճիչս,
Որի արձագանքն այս քանի դար է
Ես փնտրում էի
Բրոնզե կարճհասակ, բրոնզե բարձրադիր
Արձանների մեջ,
Արձան, որ բուրգ չէ
Քեոփս հորջորջված մի փարավոնի,
Ոչ Տիգրան Մեծի շողարձակ գլուխ,
Ոչ Պետրոս Մեծի բարձրաձիգ հասակ։
Երբ փարավոնն իր
Սրբացած մարմնի տաճարն էր շինում,
Ապագա կյանքի ապաստարանն իր մութ ու մահաքուն,
Նա չէր բարձրանում բուրգի կատարը աստեղնամոտիկ,
Այլ իր հանճարեղ մումիան փակում էր խորքի սենյակում,
Եվ փարավոն էր նա մնում դարձյալ,
Եվ մնում էր մեծ։

◆

Իմ մոնումենտալ ուրվապատկերը քայլում է առաջ,
Ճոճվում է բարձր ճոճաձողի պես...
Այդ ես եմ գնում։
Եվ տիեզերքում պտտվում եմ ես,
Որպես սլաքը անցա՜ծ, գնացա՜ծ, գնացո՜ղ, եկո՜ղ
Եվ ճանաչված ու անճանաչելի
Ժամանակների։—
Այդ ես եմ գնում՝
Տրորված ձայնիս արձագանքները

Բերելու ի մի։
Զայնս էլ չկա։
Ես արձագանքով կարո՞ղ եմ գտնել,
Թե այդ որտե՞ղ էր, որ ձայն ունեի,
Եվ զույգ ոտքիս տակ
Զույգ լեռներ կային։)

Եվ քայլում եմ ես։
Ինձ հետ քայլում են իմ մոռացումը,
Իմ տխրությունը,
Վիշտս,
Կարոտս,
Եվ ստիպում են, որ քայլե՛մ, քայլե՛մ։

Աշունը կնոջ մեղկ թուլությունով
Իմ ճամփին դեղին արցունք է թափում
Ու դեղին հրաշք,—
Եվ քայլում եմ ես՝
Տիեզերքի մեջ ճոճվելով բարձր ճոճաձողի պես։
Աշխարհի գլխին թափահարվելով,
Քայլում եմ ուղիղ աշխարհի վրա
Եվ մտնում եմ ներս աշխարհի արդեն ավերված սեմից,
Մտնում եմ, որպես աշխարհի մի նոր թափահարություն,
Եվ որպես դող եմ մտնում ես մարդկանց մարմինների մեջ։

◆

Հայաստան երկիր.
Դու աշխարհ հզոր բնավորության,
Հզոր կրքերի,
Հզոր տխրության,
Մոլությունների։
Ես շոշափում եմ քո մարմինը տաք,
Եվ երգի նման խլրտում ես դու
Զորեղ մատներիս հպումների տակ։
Թունդ աղաղակով փշրվում եմ ես,
Որպես լռության փականքդ վերջին։

Քո մարմնի վրա փշրվում եմ ես՝
Բոլոր կողմերից քեզ հավաքելու
Եվ փականքելու։
Հայաստան երկիր,
Դու աշխարհ հզոր բնավորության,
Հզոր կրքերի, մոլությունների,
Հզոր երգերի,
Հզոր ներկերի երանգապնակ
Եվ ժամանակի անպարփակելի հասկացողություն։

2

Դեռ պառկած եմ ես
Ջորս պատերի մեջ,
Իմ ցածրի՜կ, ցածրի՜կ, հին մահճակալին։
Նանր պատերը տեղի են տալիս
մի աներևույթ զորության առաջ,
Զորություն, որ իմ հոգնած աչքերն են,
Նեղված իմ սիրտն է,
Անկենդան պահն է մարմնիս ու հոգուս։
Հետո ցնդում են պատերն անզգույշ մի թեթևությամբ։
Նա իմ հոգնության ծանրությունն ունի։
Տեղի է տալիս աշխարհն իմ առջև։
Եվ տարածվում է մի տարածություն,
Որտեղ ձգվում է իմ դոն-կիխոտյան երկարությունը,
Ձգվում է նորից,
Ինչպես հենց ինքը՝ ձգողությունը,
Ինչպես ինձանից մինչև կապկամարդ և էլի առաջ
Ձգվում է մարդու հիշողությունը։
Ձգվում եմ, ինչպես խորընթաց գետը
Եվ սահում եմ առաջ, ինչպես հանդիսավոր
Հուղարկավորություն։
Եվ հեռանում են ոտքերս ինձնից,
Եվ հեռանում են ձեռքերս ինձնից,—
Բազմացող ձեռքեր,
Բազմացող ոտքեր,
Որոնք թռչում են խենթ արագությամբ,
Գնում են անվերջ,

Եվ թաց աչքերս հսկում են վերից
Այդ հաղթարշավը տարածության մեջ։
Ես բաժանվում եմ մարմնով նյութեղեն,
Ես նմանվում եմ ինքս ինձ արդեն,
Ես նմանվում եմ իսկական հայի։

◆

Սահում են առաջ, ոտքերս գնում,
Սահում են կողքի, ձեռքերս գնում
Եվ տարածվում են
Հարաբերական արագության մեջ,
Եվ արագության գաղափարն արդեն
Թվում է նույնիսկ սոսկ ծիծաղելի։

Իմ ձեռքերի մեջ է երկրագունդը,
Իմ ոտքերի տակ է,
Եվ աչքերիս մեջ խճճվում է դեռ
Բյուր փողոցների ցանցը համապարփակ՝
Ինչպես ծանր վանդակ
Ու գեղեցիկ վանդակ՝
Կատաղորեն մեխված
Այս հին երկրագնդի այս ծեր մարմնի վրա։
Եվ այսպես տխուր նայում ենք իրար
Ես ու բանտարկյալ երկրագունդը,
Նրա կարծիքով ես եմ բանտում,
Իմ կարծիքով՝ ինքը.—
Ապրում ենք այսպես իրարից բաժան
Եվ իրար կողքի,
Նաև իրար մեջ։—
Իմ կարծիքով ես իր շղթաներն եմ քանդում,
Իր կարծիքով իմն է քանդում ինքը։—
Իրար նայում ենք վանդակի միջով,
Ժպտում ենք իրար
Հավատացնելու անհուն ցանկությամբ,
Եվ հավատալու արդեն սովորույթ դարձած մեր ճիգով,
Եվ գուցե նաև սուտ երջանկությամբ,

Եվ գուցե նաև
Մի երջանկության հասնելու շփոթ ճաշապարանքով։
Մենք իրար հետ ենք,
Մենք իրար կողքի,
Նաև իրար մեջ,
Իրարից բաժան՝ կարճությամբ անծայր,
Երկիր, օ, վատ եմ հասկանում ես քեզ,
Երկիր, և վատ ես հասկանում դու ինձ։

◆

Ձեռքերս հանդարտ սահում են առաջ
Հսկումի կանգնած իմ աչքերի հետ.—
Ի՞նչ հայացք է սա.
Մի որոշակի անորոշություն
Իմ բախտի, կյանքի, գոյության մասին։
Մատներս դողով շոշափում են դեռ
Թուրքիայում հանգչող գերեզմանները՝
Ամբողջ մի երկիր — մի գերեզմանոց։
Եվ ուր կպչում են իմ ցուրտ ու գունատ մատները դողով,
Ես ցավ եմ զգում
Եվ ինձ թվում է՝ շոշափում եմ իմ մարմինը հիվանդ։
Ես ամեն ինչում և ամենուրեք
Դեռ կանչում եմ ինձ,
Ես ամեն ինչում և ամենուրեք
Ճանաչում եմ ինձ։
Ճանաչում եմ ինձ աշխարհի ինչ-որ հեռու անկյունում
Հանկարծ գտնված մի «նարեկի» մեջ,
Եվ գրքի գունատ թերթից ու կազմից ես շնչում եմ դեռ
Հայուհու կրծքի բուրմունքը տաքուկ,—
Եվ մոդեռնացած կատարելապես՝
Հայաստանից դուրս հայ կնոջ տարած
Մի հին հայկական մի թարեքի մեջ,
Չարենցի երգում,
Որ մի հայ մանուկ նորոգել է իր
Աշակերտական ձեռատետրի մեջ՝
Հայոց գրերի ծոմված տեսքով,

Զվարթնոցի մի խոյակում կապույտ,
Որ կնքված է իմ պատկերով քարե,
Եվ հայ հանճարի յոթնհազարամյա իմաստուն խոսքով,
Ճանաչում եմ ինձ
Բոլոր և ցրիվ սրբություններում՝
Նոր ու հնավանդ,
Ամեն տեղ ես կամ։
Եվ ինձ թվում է՝ շոշափում եմ իմ մարմինը հիվանդ։
Մատներս նորից հատակն են սուզվում Մեծ օվկիանոսի
Եվ հատվածներն են գտնում իմ մեռած, իմ մեռնող մարմնիս։
Իսկ ես չեմ կարող չլինել, եթե ուզենամ անգամ.—
Ցանկությունը միշտ ոգևորվում է իրականությամբ։
Ոտքերս նորից գնում են առաջ,—
Ես հիանում եմ ամեն հրաշքով
Ու չեմ զարմանում ոչ մի հրաշքից։
Այդ հրաշքները ես եմ ստեղծել,
Ստեղծագործել հոգով, արյունով
Այս երկրագնդի ամեն անկյունում։
Հիմա արևի վառվող գույներում ես շոշափում եմ
Նյու Յորքի ծանր շենքերի ծանր մռայլությունը
Եվ շոշափում եմ կատարները ձիգ,
Ուր դժվարությամբ բարձրացա մի օր
Եվ հեշտությամբ ինձ նետեցի մինչև խորքն օվկիանոսի,
Որ խաղաղություն լինի աշխարհում,
Եվ փոթորիկի մռայլը մարի իմ իսկ արյունով։
Իսկ խաղաղություն...
Այնպես էլ չեղավ։
Ինձ ճանաչում են Հայաստանից դուրս.—
Աշխարհի բոլոր ճանապարհներին,
Ինձ ճանաչում են որպես տիրոջ ու որպես ծառայի,
Իսկ իմ տանը ինձ չեն էլ ճանաչում։
Հազարամյակներ, դարեր շարունակ
Աշխարհի համար ես գրում էի.
— Մենք կանք աշխարհում,
Լինելու համար հիմարություն է կասկածելն անգամ։
Հիմա նայում եմ ես իմ գրածին
Եվ թարթիչներիս նեղլիկ ճեղքերից

Երևում են իմ հոգնած աչքերը՝
Մի որոշակի անորոշություն։
Ես իմ արձանն եմ կերտել աշխարհի բոլոր ճամփեքում
Եվ Հայաստանում,
Որ իմ պատկերից չօտարանա իմ հողը հայրենի,
Ես իմ Աստվածն եմ սարքել երկնքում
Եվ դարձրել եմ Մեծ ու Անվանի։
Եվ հազար անգամ թաղվելուց հետո
իմ մեջ հոգի եմ կրկին արարել,—
Ես ի՞նչ չեմ արել,
Կամ ի՞նչ եմ արել։

◆

Անթիվ ձեռքերով ես շոշափում եմ
Քո մարմինը, Երկիր,
Շոշափում եմ հոգով,
Շոշափում եմ հոգու անհուն մարտնչումով,
Եվ որոնում եմ այն խարդախագույն գնդակը մահու,
Որ արձակել եմ քո հրաշալի մարմնի մեջ,
Եվ ինչ-որ մի տեղ,
Ինչ-որ մի մասդ մեռցրել եմ ես։
Օ, իմ ահավոր և ամեն անգամ վերակրկնելի
Մեծ ողբերգություն.
Ես ինչպե՞ս պիտի կենդանացնեմ, հարություն տամ քեզ։
Հիմա տարածվում եմ ես մարմնիդ վրա
Քո շամանդաղի անհուն քնքշությամբ,
Անմերձենալի,
Քո դարավոր կարոտի սպառող ուժով,
Եվ քո կրքի մաքուր ու չսահմանվող հզորությամբ,
Իմ փակ աչքերի հարստությունով,
Քո գոյատևի,
Հարատևության անշեղ հավատով,
Անթիվ ոտքերով,
Անթիվ ձեռքերով
Փաթաթվում եմ քեզ
Ամուր և ամուր,

Եվ իմ պղնձե շուրթերով ահա
Համբուրում եմ քեզ քո ամեն տեղից՝
Ցավեցնելու չափ։
Համբուրում եմ քեզ կարոտի տենդով։
Ի՜ն նման անշեղ հավատացյալի համար
ԴՈՒ,
ԵՐԿԻՐ,
Սրբալույս նշխար,
Ես գրկել եմ քեզ,
Դու գրկիս մեջ ես,
Եվ կրծքիս վրա՝ սրտիս չափ մի տեղ՝
ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀ։

1960 թ.

Ոչքարում

Նվիրում եմ մորս՝
ԼՈՒՍԻԿ ԴԱՎՈՅԱՆԻ
պայծառ հիշատակին:

ՄԵՆՔ ԽՈՍՈՒՄ ԵՆՔ ԿՅԱՆՔԻ
ՀՐԱՇՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մենք կյանքից ձանձրացել ենք,
Սակայն հավաքվելիս
Միշտ խոսում ենք կյանքի հրաշքների մասին։

Ամայության վրա
Փռված գիշերների
Անթև երազներով,
Մինչև դատարկության գագաթները ելած,
Եվ այս կյանքի ամենախոր անդունդների միջից
Մենք խոսում ենք կյանքի հրաշքների մասին։

Մենք իրար աչքերի բիբերի բացվածքի մեջ,
Ձեռքի համանվագ երաժշտությամբ,
Սրտի կապտակարմիր մշուշներում
Եվ կարծր շուրթերի մեջ
Առօրյա կյանքն ենք դիտում՝
«Երկիրը ամեն օր ծնվում է,
Երկիրը մեծանում է,
Բազմանում է խոհերի նման...».—
Եվ մարդկային մեղքը
Ջնջվում է մութի սաթե ականջներում։

Մեր մեղքերի առջև
Մենք խոնարհ ենք, ինչպես մի սևամած գիշեր
Արեգակի առաջ...

Օ, խղճալի գիշեր,
Քո սևությամբ այնքան չթանձրացար,
Որ գեթ մի շող ճերմակ լույս արձակեիր,
Մի շող ճերմակ լույսով
Կարող էիր լցնել միլիոնավոր աչքեր,
Միլիոնավոր հոգիների
Վանդակապատ տրտմությունը կծակեիր,
Միլիոնավոր խոհերի մեջ
Կկանգնեիր հզոր միջնասյան պես
Եվ տիեզերքը կառանցքեիր։
Իսկ հիմա—
համբուրելով խավարիդ թաց շուրթերը,
Ես գգվում եմ քեզ.—
Այդ քո անհուն, անվերջ դատարկությամբ
Դու չես կարող լցնել մի աչք անգամ,
Մի հոգու բիբ.—
Սովորական երգի վերջին տողը լինել,
Սովորական աստծո ապաստարան,
Սովորական կրքի համար՝ եղեռնական,
Սովորական պոռնիկների համար՝ ձայն առնական,
Սովորական կանանց համար՝ կանացիություն
ավանդական,
Սովորական կյանքի համար
Դու չես կարող լինել
Իր տխուր կամ ուրախ վերջաբանը՝
Իր Ապագան,
Այնքան որ քիչ ես, սովորական։

Մենք կյանքից ձանձրացել ենք.
Բայց խոսում ենք կյանքի հրաշքների մասին։

Հարազատներս ահա շարված են իմ կողքին,
Նրանք հավերժության լողորդներ են մի-մի,

Նրանց դեմքերի մեջ կա հալվող մի կարծրություն,
Որ ես իմ աչքերով տեսնում եմ, թե ինչպես
Իրենն է դարձընում,
Ներլուծում է, տանում,
Կպցընում է իրեն ժամանակը հիմի։

Ժամանակը նրանց բերում է իմ առջև,
Նրանց հայտնությունը անակնկալ
Ցողցողում է բույրեր շրթունքներիս դողդոջ.—
Հարազատներ, տխուր հարազատներ,
Ո՞ւր եք գնում այդպես,
Ո՞ւր եք կորչում ողջ-ողջ...
Ո՞ւր եք գնում... ահա՝
Նրանք հավքերի պես թռչում են իմ ձեռքից.—

Նրանց լուռ աչքերից,
Ինչպես կարոտների աննյութ, անծայր ժապավեններ,
Այս աշխարհի բոլոր փողոցները
Դուրս եմ քաշում
Ու փռում եմ նորից երկրագնդի վրա
Եվ փոշոտ հետքերս թողնելով քայլում եմ
Հալված սև աչքերի ասֆալտի վրայով։—

Նրանց աչքերից ես քաղաքներ եմ հանում
Փառաբանված,
Ու մեծ,
Ու անցյալի պատմությունով հարուստ,
Ու այսօրվա կյանքով ռոմանտիկ,
Ինչպես ճերմակ պատի վրա
Հազարատոք մի սարդ,
Ինչպես խավարի մեջ շարժվող սպիտակ ձեռք,
Կամ ինչպես ես՝

Արարատի գլխին,
Նախնադարում,
Մի նավակով,
Մենակ,
Ջրհեղեղից փրկված։

Նրանց աչքերից ես քաղաքներ եմ հանում,
Եվ տեղը մնում է
Հին քաղաքի գիշերային կապույտ լռությունը,
Եվ լռության մեջ՝
Ինչպես վանականի խցում,
Իր երգերը կարդացող պոետի ձայն,
Մնում է մոռացված սալարկ փողոցների
Սալիկներին լուծված տրտմությունը,
Մնում է չծնված ակնակիր մառախուղը՝
Մոռացությամբ ապրող ծովերի մեջ թաղված,
Մնում են անձրևի սև թիկնոցները
Սպիտակ պատերին՝ կախիչներից կախված...
Մնում է.—

Մի մերկ աշխարհ, Երկիր՝
Սարքած զգացմունքից,
Եվ դեմքերի վրա՝
Լույսով շրջանակված երկու մթություններ՝
Կարոտներից շաղված։

Անձրևի թիկնոցները հագնում են մեզ.
Նրանց համար դեռ կա մի հարազատ անձրև,
Եվ հարազատ, քան թե
Այս պատերը ճերմակ,
Կախիչները խոնարհ
Եվ մենք։

Եվ մենք մեր ուսերին
Գլուխների տեղակ շանթարգելներ առած,
Դուրս ենք գալիս՝ բոլոր
Անկապ փողոցները կապկպելու իրար,
Որ ստանանք մի մեծ, ամբողջական աշխարհ
Թարթիչների վրա նստած սֆինքսներով,
Թափանցիկ կոպերի ստվերներում պառկած
Կանանց մարմինների պատարագով,
Ձեռքերի մեջ սեղմած ռիթմերի
Անսանձելի կյանքով,
Մեր կողերում,

Մեր աչքերում ապրող
Միլիոնավոր անմեղ մանուկների
Լույսից չվախեցող
Բացված աչկներով,
Բացված շրթունքներով....
Մենք խոսում ենք
Կյանքի
Հրաշքների մասին։

ՉԳԻՏԵՄ ԵՐԲ... ՉԵՄ ՀԻՇՈՒՄ ՈՎ....

Չգիտեմ երբ, չեմ հիշում ով
Անցնում էր լուռ այս աշխարհով։

Ցավերն ամեն՝ առած ուսին,
Գլխի վերև՝ մեռած լուսին,
Ոտքերի տակ՝ աշխարհը սին,
Չգիտեմ երբ, չեմ հիշում ով,
Անցնում էր լուռ այս աշխարհով։

Աչքերից կախ՝ սրսուռ երգեր,
Ուսերից կախ՝ թմրած ձեռքեր,
Թույլ կողերին՝ մեռնող մեղքեր.
Չգիտեմ երբ, չեմ հիշում ով
Հողածնունդ իր ցավերով
Մեխվեց երկրի ամեն անկյուն,
Խեղդեց բոլոր ցավերն անքուն,.

Ցավ-դիակներ առած ուսին,
Գլխի վերև՝ մեռած լուսին,
Ոտքերի մեջ աշխարհը սին,
Իր մեղապարտ կյանքի կեսին
Մեխվեց կյանքի կոկորդն ահով.—
Չգիտեմ երբ, չեմ հիշում ով...

Աշնան տամուկ խշխշյունով
Հովիտներին դեղին երգեր

Փռեց աշնան ձայնով կերկեր,
Մրսած, հիվանդ մեր աչքերին
Հանգչեցրեց փոքրիկ ձեռքեր,
Մեր միգասքող շրթունքներին
Ցանեց լույսի խամրած հևքեր.—
Խամրած հևքեր, տաքուկ հևքեր
Ցանեց փոքրիկ կարեկցանքով...

Չգիտեմ երբ, չեմ հիշում ով...

Աշնան տամուկ երկինքներով
Տարավ մեռած աչքերը մեր,
Մեր քրքրված, լուռ աչքերում
Կուլան ճերմակ ու պաղ ձյուներ,
Կուլան տխուր, կուլան ճերմակ
Թարթիչներին մեր ձյունակեր,
Եվ մեր մեռնող սրտերի մեջ
Կիջնեն հանդարտ ձյունե ձեռքեր։

Ձյունե մարմին, ձյունե շապիկ,
Ձյունե նժույգ, ձյունե թամբիկ.—
Ո՞ւր մնացիք, ամպ ու շամբիկ,
Ձեր մոլեռանդ հմայքներով։—

Չգիտեմ երբ, չեմ հիշում ով...
Մանրիկ, սահող իր քայլերով
Արթնացրեց կապույտ խորքեր,
Կապույտ խորքեր, դմբդմբալով
Կանցնեն, ինչպես հուռութք զորքեր.—
Սա թույլ, մանրիկ իր մատներով
Գիրերների խամրող կրծքին
Գծեց լերանց կապույտ հոնքեր,
Քաշեց ձայներ լերանց մեջքից
Եվ Հեղեղաթույր հովիտներին
Փռեց՝ ինչպես կապույտ ձեռքեր.—
Իր ականջին փոքրիկ երգեր
Եվ ինքն իրեն մրմնջալով,

Փոքրիկ ձայնով շշնջալով,
Իր հոգու մեջ իր աղբյուրի
Կաթիլ-կաթիլ երգը լալով,
Չգիտեմ երբ, չեմ հիշում ով
Անցնում էր լուռ այս աշխարհով։

◆

Լուսնի ժապավենները պառկել են
ցանկապատին.
Լուսնի թափանցիկ կրծկալը լողում է ամպերի մեջ։
Լուսնի գիշերային ծիծաղը թռչկոտում է
քաղաքների վրա։—

Երազանքներով ծանրաբեռ՝
Նա դուրս է լողում տանից
Ուղիղ գիշերվա մեջ։
Նրան կանչում են աստղերի կայծկլտումը,
Գիշերվա լռությունը.
Նրան կանչում են...
(Լուսինը շողերը կապել է տերևներին
Եվ մանկան պես քաշում է փողոցների վրա),
Խշշյունն անպատմելի, ծկլթացող տենդը,
Ծղրիդների ճռռոցն անհայրենիք,
Սպիտակ մարմնի մեջ լողացող սև աչքերը.
Սպիտակ մարմնի մեջ կանացի ժարգոնը կարմիր,
Լուսնի դագաղի մեջ խաչվող ցանկությունը.—
Նրան կանչում ենք Մենք,
Որ մեր ուղեղների
Անջրանցիկ տապին գամենք։
Օ, խեղդելու մոլուցք,

Մենք քեզ հագցրել ենք մեր ձեռքերին.
Եվ լուռ ծիծաղում ենք
Ամենուր և ամեն պահ ծնվողների վրա։
Օ, խեղդելու մոլուցք,
Մենք քեզ դուրս քաշեցինք մեռած աստվածների
աչյուններից,
Եվ լուռ ծիծաղում ենք

Ամենուր և ամեն պահ ծնվողների վրա։
Նրան կանչում ենք մենք,
Որ մեր գրպաններից
Վաղը խաչված ոսկե Քրիստոսներ հանենք.
Հանենք.— ժամանակի անփույթ դեմքի վրա
Մի բուռ արյամբ օծված իմաստություն ցանենք։

◆

Չգիտեմ երբ, չեմ հիշում ով...
Պաղ գիշերվա սրսփյունով
Բերեց մոտ-մոտ, իրար սեղմեց
Աստղերն անգույն, փոքրիկ, մեծ-մեծ.
Սեղմեց իրար, զարկեց իրար.—
Բայց քունքերին մեր հողմածեծ
Չտեղաց լույսն ակնապարար,
Այնպես, ինչպես լիքը կրծքից
Իջնում է կաթ՝ վարար-վարար,
Խենթացընող փշփշյունով—

Չգիտեմ երբ, չեմ հիշում ով
Զարկվեց գարնան ներխուժումով,
Գարնան կանաչ ջահը ձեռին
Փռվեց բոլոր հովիտներին,
Վառեց մեկ-մեկ ծառերն հանգած,
Բարձրացրեց բույրերն ընկած
Ու թռչնոց պես թողեց օդում...
Ոտքը ձգած, ձեռքը ձգած,
Աչքը մեռած, սիրտը փակած,
Ականջը խուլ, շուրթը ճաքած,
Հոգին արթուն, ականջը խուլ,
Ժպիտներ էր փռում բույլ-բույլ,
Բույլ-բույլ մեխիր, բույլ-բույլ երգեր,
Բույլ-բույլ աստված, բույլ-բույլ ձեռքեր,
Բույլ-բույլ անուրջ, սուտ մոռացում
Փռում էր թույլ կարեկցանքով։
Չգիտեմ երբ, չեմ հիշում ով
Հողե փոքրիկ իր տապանով
Փակեց երկրի շուրթը ճաքած.—

Բորբ աչքերին մշուշ հագած,
Հոգին տխուր, շուրթը փակած,
Մեղապարտի աղերսանքով
Չգիտեմ երբ, չեմ հիշում ով
Անցնում էր լուռ այս աշխարհով...

ՀԵՐԱՐՁԱԿ ԳԻՇԵՐՎԱ ՏԱԳՆԱՊԸ

Այն հերարձակ գիշեր,
Երբ այլևս գիշեր չկար,
Երբ գիշերը վերջացել էր կեսգիշերից առաջ,
Երբ ուղիղ կեսգիշերին
Արշալույս էր մի սև
Ժայթքում հողի կրծքից
Դեղին աստղերն ի վեր,
Երբ դու փղոսկրե անոթ էիր՝
Լցված դատարկությամբ,
Ես ծուխ էի՝
Լուծված փղոսկրով...
Այն հերարձակ գիշեր
Կրկնաբանված երգի առաստաղը իջավ իմ ծնկներին
Պարտված մի գլխի պես,
Եվ աստղերը անգույն հիշողության
Փափուկ արցունքներով լվացվեցին։

Եվ շուրթերս իջան
Գիշերվա պես խոնավ, դատարկ իմ ծնկներին՝
Թաց մազերիդ թողած բույրը համբուրելու,
Քո աչքերի խոնավ թախիծն համբուրեցին...

Հետո լռության մեջ
Կարծրանում էր սիրտս,
Կարծրություն էր լցվում կուրծքս համատարած,
Կարծրանում էր քամին,
Քամին, կարծր քամին հարվածում էր դեմքիս։
Քո աչքերի փափուկ երազների միջով
Թռչում էին կարծր կայծերն անհայտության.—

Քո ուռուցիկ շրթաց,
Քո մատների վրա
Ի՞նչ էր խաղում, աստված,
Որ աչքերիս լույսը մնջանում էր անվերջ.—
Այն հերարձակ գիշեր
Զարտասանված խոսքի արձագանքը մնաց
Զոր տառերով սարքած իր բանտի մեջ։
Եվ երկնքից լույսի շանթարձակման լեռներ կախվեցին ցած՝

Գիշերվա մեջ պայթող ստինքների նման։

Եվ այդ լույսի սրտանման լեռների մեջ խրված,
Լույսից էլ նուրբ մի ձեռք
Մութ էր քամում
Զարմանքի դաշտերի վրա։

Եվ Հյուսիսից Հարավ և Արևմուտք,
Եվ Հարավից Հյուսիս և Արևմուտք էլի
Արևելքի անհանգույց շողը բացարձակվեց։

Գիշերվա կողերը
Հանեցի ես մեկ-մեկ,
Շարեցի արևի ճյուղերին...

Գույնզգույն ցողերը արթնացան,
Արևի թևերով
Թիթեռների նման թռան ծաղիկներից՝
Աշխարհի անհաստատ գոյությամբ իմաստուն,
Վերջին երկվայրկյանի անհոգությամբ
Նախանձելի ու պարզ
Վերջին
հրաշքների
հանդեպ
Եվ անտարբեր,
Եվ գոհ,
Վերջին երազների նման
Կրկնապատիկ անգոհ։—

Հետո այդ մեծ, հանդիսավոր լռության մեջ՝
Մի տերևի սոսավ,
Մի թռչունի ձայն,
Հետո մի մեծ թմբուկ՝ Արևից մեծ,
Հետո սյուների շարք,
Որոշակի քաղաք,
Եվ անորոշ խոհեր.—

«Ինչ-որ մի բանն» այստեղ
«Ինչ-որ մի բան» ջնջեց։—

Իր արնածոր հոգին
Դրած սև թաթի տակ,
Գիշերային գազանների հոգնած արքան ննջեց։

Թափառումը նստեց լեռան լանջին,
Անտառի մեջ, ինչպես ծուռթաթ մի բարեկամ.

Լեռները սողսողացին
Ծառերի բներն ի վեր։
Քարավաններ անցան արևի մեջ
Եվ արևի միջով՝
Անապատի պես մերկ անտառն ի դուրս։

Թափառումը հոգնած փարավոնի նման
Նստեց լեռան լանջին։—
Եվ կրքերը մաքուր, և խոհերը չնչին
Գամերով մեխվեցին հողի մեջ,
Եվ խորացավ հողը,
Եվ խորացավ հողը ու խոր մի ճանապարհ գնաց
Դեպի վախճանակետ.
Ծանրության տակ դեռ շունչ ու կենդանի,
Կրծքի վրա վառած սպասումի ջահեր,
Ժամանակի վրա ոստոստելով անվերջ.—
Սկիզբ չկար, էլ ինչ ծիծաղելի մի վերջ։

Ահավասիկ, քո դեմ
Բաց են դռներն ամեն.—
Բաց դռների ետև խորհրդավոր մութի,

Տարտամ անհայտության ալիքների վրա,
Հեռու ճանապարհի փոքրիկ առկայծումներ
Ակնթարթում հանկարծ բռնկվում են հուրթի.—
Նրանք կանչում են քեզ ծիծաղներով կերկեր
Նրանք հուշում են քեզ մոռացության երգեր,
Նրանք տալիս են քեզ փնտրումների ձեռքեր.—
Եվ դու այդ ձեռքերով բացում ես քո հոգին,
Ուր աճում է քո հին, քո տրտմությունն անձև.
Ներս է մտնում հանկարծ գեղեցկությունը մերկ
Եվ քո փակ աչքերից
Մաղվում է ցած՝ որպես մոռացության անձրև։
Արարչագործ ոգու հիացումով
Ավերում է նա քեզ,
Հրդեհում է ոգուդ ծիրը դիշերային,
Հետո քո տրտմության թևերն հագած՝
Փաթաթվում է քո հին
Ու նոր երազների
Կարոտներով.—
Եվ մնում է՝ երբեք չգնալու համար,
Եվ գնում է՝ երբեք չդառնալու համար։

Տապ է։
Անասելի, անծայր մի տապ։
Հրդեհվում է արևն։ Արևի հետ
Անապատի շներն են հրդեհվում,
Եվ լեզուներն՝ ինչպես հալվող մետաղ։

Ես քո դեմքը լվանում եմ
Միջօրեի շոգի արցունքներով,

Տիեզերքի բոլոր անկյուններում
Կա մի արցունք
Եվ անպայման՝ անդունդների վրա կախված։

Ես քո դեմքը լվանում եմ
Միջօրեի շոգի արցունքներով
Եվ մշուշ է կաթում իմ աչքերից։

Ես կարող եմ հիմա պատառոտել շոգը
Ժամանակի-արդի երգերի պես,
Կամ պաստառի նման,
Կամ լեռնային ջրի հոսանքի պես պատառոտել շոգը,
Ջարդել արմավենու ընկույզների նման
Եվ փաթաթվել նրա զովության մեջ։
Պատառոտել՝
Ինչպես արևի պաշտամունքը։

Տապ է։
Անասելի, անծայր մի տապ։
Հեռու քարանձավից
Խեղդվող օրվա խռխռոցն է գալիս՝
Մի անպատկեր հեռվից՝
Իմ միջից է ելնում։

Մի անպատկեր հեռվի
Սատանայի մի հողմ,
Միջօրեի արևն առած գլխին,
Ոտքը դրած անբառ հոգիների անդունդի մեջ,
Պտտվում է,
Փորում
Դատարկության անշրջանակ մի փոս
Ու խորացնում
Ու սուզվում է անվերջ։

ԵՐԳԻ ՈՒՐՎԱԿԱՆԸ

Խեղանդամված երգի առասպելի բոբիկ
Եվ մի լլկված կնոջ ուրվականի նման
Թափառում է համատարած սև ամպերի վրա՝
Իր ճերմակ հետքերը
Թողնելով նրանց մեջ,
Նրանց ցցուն կրծքին,
Որը պայթելու չափ լիքն է անգիտությամբ,
Եվ չպայթելու չափ՝ ամրակեղև։

Ո՞ւր է Արարիչը,
Որ խեղդվելով մթից
Գոռաց՝
«Եղիցի լույս...»
Եվ «Լույս եղև»,
Գոռաց՝
«Համակարգվիր, քաոս...»,
Իսկ քաոսը, որպես կարգավորում,
Խճճվում էր անվերջ ինքը իր մեջ.—
Ընկնում էին բոլոր գոյություններն հաստատ,
Ու նրանց մերկ տեղում,
Նրանց ողբերգական, անապատան տեղում
Բարձրանում էր մի նոր՝
Լեգենդների աշխարհ։

Խեղանդամված երգի առասպելը բոբիկ
Եվ մի լլկված կնոջ ուրվականի նման
Ինքն իրեն է փնտրում քաոսի մեջ։

Հավանական Աստված,
Հավանական Ոգի։
Եվ ճշմարիտ մի երգ՝
Խեղանդամված ճերմակ մի ուրվական.—

Իրենց սև ձեռքերով քո կողերից կառչած,
Քարշ են տալիս գիշերների եզերքներից եզերք,
Իրենց մետաղային,
Սառը ճակատներով
Հպվում են քո արյան վերջին շնչին,
Գգվում են քեզ մի պաղ ու անկարոտ ոգով,
Մետաղային խոնավ մի տրտմությամբ...
Գգվում են քեզ...
Իսկ դու...
Քո կարոտը ահա տափակում է կրծքիս
Երկրագնդի բոլոր ջրերի պես,
Մի ծանրությամբ,
Որ հենց այս վայրկյանին
Կարոտները սանձող ձեռքս ունի...

Կարոտում եմ, օ, ես քո լուսեղեն ոգուն,
Ստեղծագործող կրքին,
Կարոտում եմ՝
Մեռնող երազների կատաղությամբ
Եվ քո ճերմակ ուրվականի
Կոնքերը տաք
Շոշափում են ահա իմ մատները դողով.—
Կարոտում եմ,
Եվ իմ
Նախամարդու մարմնի շինվածքը հողեղեն
Ճաքճքվում է հազար միլիոն տեղով։
Գալիս են քեզ...
Մինչ մենք
Անքուն գիշերներին,
Գլուխներս կապույտ առաստաղից կախած,
Սուրճի բաժակներում
Որոնում ենք լույսի
Բռնաբարված,
Լքված մի շող,
Որ ինչ-որ տեղ, ինչ-որ բանի վրա
Մեր նուրբ երազները կարողանանք հյուսել։

Ու մենք դարձանք հետո
Խտացրած ստվերների մի դամբարան։

Մեր սիրտը—
Բոցավառ մի ստվերն է
Մի կապույտ թռչնի։
Մեր հոգին—
Գիշերների լռությունը ճեղքող
Կարծր մի լռություն։
Մեր կողերը —
Ջարդված ստեղնաշար
Մի հին երգեհոնի,
Որի վրա ոչ ոք չնվագեց երբեք
Սիրո մի պատարագ։

Մենք, ամպերի ցնցուղն առած մեր ձեռներին,
Ջուր ցնցղեցինք այրված հոգիների վրա.—
Մեր աչքերը դարձան գոլորշիացող,
Դարձան մշուշների անդունդ քարանձավներ...

Դգվում են քեզ...
Իսկ մենք
Մեր կարոտը կախաղան ենք հանում
Մեր սեղանի վրա,
Նստում նրա առջև՝
Վերջացրած երգը նորից սկսելու,
Վերջացրած տխուր մի զգացմունք
Նորից վերջացնելու,
Վերջացրած մի միտք
Ամպի ծվեների նման նորից գզգզելու։

Մեր բերանը—
Ճեղքված ու վիրավոր մի սիրտ՝
Ատամների վայրագությամբ բռնաբարված,
Մեր շուրթերը—
Միևնույն առասպելյալ սրտի
Երկու հաշտվող կեսեր,
Որ հղկվել են անվերջ
Քո կարոտի սիրույն չարտասանված խոսքից։

Ողորկ մեր շուրթերը,
Ու բառերով հղկված,
Ու բարբարոս,
Հղի
Ամեն վայրկյան պայթող մի լռությամբ.—
Նրանք տենչում են քեզ.
Ու կարոտը ցեղի
Կրկին մոլեգնում է երգերի մեջ՝
Անկաղապար, անհանգ.
«— Լապտերների մեջ ճոճվում են ծառերը,
Նրանց տերևները խոնավ են մի աղջկա
արցունքներից,

Որ իր ստվերի հետ լացել է այս գիշեր,
Մի տղայի լռությունից,
Որ լռել է անգամ քնած պահին։

Երկնքում հավերժ կենդանի լուսնի դագաղն է։

Լապտերների մեջ ծառերը ճոճվում են,
Եվ նրանց շուրջը տասնյակ սրտերի պես
Հավաքվել է նույնքան բազմալեզու թռչուն։
Նրանք լուռ են,
Որքան
Լապտերն է լուռ
Լուսնի դագաղի մեջ։

Մենք անաղմուկ ու լուռ
Կեսգիշերվա կեսին
Մենք մեզ ընդառաջ ենք գնում...

Լապտերների մեջ ծառերը ճոճվում են,
Լապտերների մեջ ծառերը ճոճվում են,
Լապտերների մեջ ծառերը ճոճվում են...»։

◆

Երգի կարոտը մեզ հիվանդ է դարձրել։
Մենք երգի հիվանդներ ենք։

Մենք մի երգ ունեինք, որ երգում էինք առավոտ, իրիկուն, երգում էինք սահանքների վրա, քարերին հանդիպելիս, երբ երկինքը տխուր էր կամ ուրախ, երբ ճանապարհները չէին մտածում փրկել մեզ,— և լսում էինք այդ երգը մեր քնի մեջ՝ մեր հոգին երգում էր մեզ համար։

Եվ մի անհավատ քոչվոր, բոլոր անակնկալները թողած մի կողմ, հանկարծ կանգնեց մեր առջև և ասաց՝ «Ձեր երգը երգված է»։

Մենք չհավատացինք, իսկ նա ասաց՝ «Ձեր երգը երգված է»,— հետո լրջորեն ժպտաց մեկ ուրիշը, «թե՞ նրա ստվերն էր՝ «Ձեր երգը երգված է»։

ԻՆՉՈ՞Ի ՉԵՆ ԽՈՍՈՒՄ ԵՐԳԵՐԸ

Ինչո՞ւ չեն խոսում երգերը։
Մի՞թե նրանք տառապել են ավելի,
Քան մարդիկ։
Մի՞թե մենք չհորինեցինք
Նրանց ձևերի խստությունը՝
Քնքշանքի,
Կարեկցանքի,
Սիրո,
Մոռացության,
Ցավի ու դիպվածի
Թևերին մելանխոլիկ,
Որ մենակության մեջ չծամենք մեր շրթունքները։

Մի՞թե այդ մենք չէինք,
Որ տվեցինք նրանց
Մեր ձայնի խստությունն առևանգող,
Մեր տխրությունն անանց,
Մեր հոգու մերկությունը անքող,
Կործանող պատկերները կանանց,
Տվեցինք ամեն ինչ, որ կար,
Որ թավալվում էր արյան մեջ մեր հին,
Որ պահանջում էր կորով ու քանքար,
Եվ մեզ օրորելով՝
Ապրեցնում էր դարձյալ անդունդների զեհին։

Ինչո՞ւ չեն խոսում երգերը.—
Մի՞թե նրանք ավելի զգայուն են,
Քան մարդիկ։

Մենք կորցրինք մեր սիրտը,
Աչքերը,
Մեր ձեռքերը,
Սակայն պահեցինք քայլվածքը մեր երերուն,
Մեր հայացքը,
Կատակելու կիրքը,

Տափակ միօրինակությամբ կրկնվելու
Մեր անսպառ ձիրքը։
Ինչո՞ւ չեն խոսում երգերը։
Մի՞թե նրանք տառապել են ավելի,
Քան մարդիկ։
Մենք մերը համարեցինք
Քարերի գաղտնակուր լռությունը.
Եվ այն չմնաց մեզ։

Նա մաս-մաս գումարվեց
Մեր կյանքի ընթացքին,
Եվ կրծքում մեր փոքրիկ
Ինչ-որ բան դարձավ քար։
Մեր փոքրիկ կրծքի մեջ
Ինչ-որ բան արև էր,
Եվ լուսին, և աստղեր
Մեր փոքրիկ աչքերում,
Եվ միշտ էլ թափուր են մնում մեր ձեռքերը...

Ինչո՞ւ չեն խոսում երգերը։

Մենք մերը համարեցինք
Անդունդների վիշտը.—
Խավարից մի փոքրիկ մաս
Հագանք մեր մերկ մարմնին՝
Արշալույսի առաջ
Մերկ չելնելու համար։—
Արհավիրքի պահին
Մենք մերը համարեցինք
Արևի շլությունը,
Ջորերի խլությունը,
Անապատի զարհուրն ինչպես
Մեր սրտի մեջ քամես...
Ամեն ինչ համարեցինք,
Ամեն ինչ ունեցանք մենք,
Եվ ոչինչ չմնաց մեզ։

Ինչո՞ւ չեն խոսում երգերը...

Մենք միշտ էլ ասում ենք, թե տխուր ենք,
Մենք միշտ էլ կարող ենք
Կրկնել, թե ուրախ ենք.—
Եվ ճիշտ է, որ քիչ ենք սիրում մենք երգերը.—
Մենք միշտ էլ երգում ենք,
Սակայն չենք հավատում,
Թե թափուր չեն մնա
Մեր սիրտը, մեր հոգին,
Աչքերը,
Ձեռքերը,
Մեր փոքրիկ մահճակալն ու փոքրիկ երկիրը...

Երգում ենք։
Լռո՞ւմ ենք։
Լալիս են երգերը։

◆

Քարանձավները ժպտում են արցունքներով։
Մաքուր արցունք է նրանց ծիծաղը...
Մենք մեզ հետ արցունքների արձագանքն ենք տանում։
Մենք ասում ենք մի խոսք–արցունք–ճշմարտություն:

ՏԵՐ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Մենք իրար պիտի մոտենանք գուցե,
Ինչպես որ կաղնու երկփեղկված բույնը...
Եվ ինչո՞ւ պիտի ես մղոնների հեռավորությամբ,
Երկրի ու երկնի տարբերությունից
Գոռամ, թե՝ կեցցե ճշմարտությունը։

Կրկին ուզում եմ հավատքիս առաջ լուռ խոնարհվելու
Մրմունջի համը շուրթերիս զգալ՝
Զգալ ինձ մերկ ու անկողոպտելի։
Ինքս ինձ վրա ուզում եմ ոգալ
Մահադարձության թավշե ժպիտով։

Եթե մեղքերի թողությունն այնպես
Հեշտ լիներ, ինչպես
Ճառեր ասելով
Ամբիոնի առաջ թափահարվելը,
Խոստովանանքը վանահոր առաջ,
Ոչ թե Աստծո,
Եթե սգալը լոկ արցունք լիներ,
Եթե մեռնելը լիներ միայն քուն,
Թեկուզև անդարձ, անարթնանալի,
Մենք կպառկեինք—
կանաչով,
Հողով,
Սունկերի փափուկ սպիտակությամբ
Պատրաստված չքնաղ մեր անկողնու մեջ
Եվ ամբողջ մի մեծ Հավիտենություն
Կբերազեինք արթնության մասին։

Եթե ապտակը միայն ցավ լիներ՝
Շառագունությամբ պսակազարդված,
Թե հոգին լուռ,
Թե հոգին չզգար իրեն անպատիվ,
Ջարությամբ խոցված.—
Քրիստոնեական մեծահոգությամբ
Մենք կպարզեինք մեր մյուս դեմքը՝
Թող ապտակեին,
Միայն թե նորից
Ճշմարտության այդ սուրբ առաքյալին
(Եթե ինչ-որ տեղ,
Ինչ-որ հանճարեղ մի ակնթարթում
Հարություն առներ)
Չբռնեին ու նահատակեին։

Եվ բուրվառելով անամոթության
Դահճային լեզուն,
Հրեշտակների անմեղությունը
Շողոքորթության դիմակ դարձրած,
Կրկնեին նորից
«Քրիստոս հարյավ ի մեռելոց»։

Հուդան, իհարկե, հավատացյալ էր։
Եվ սերնդափոխ մի հաջորդությամբ
Դեռ իշխում է նա աշխարհիս վրա,
Եվ մի սև աչքը դարձրած հազար,
Փնտրում է անվերջ
Աննվազ ոգի,
Աննահանջ կարոտ,
Անքինախնդիր հափշտակություն,
Աննախանձ, անչար ոգևորություն,
Փնտրում է անվերջ,
Որ խաղաղեցնի,
Որ դարձնի ամա,
Իր սև աչքի մեջ,
Աչքի վանդակում թաղի ամեն ինչ.—
— Վախ, Ազատությունն օրորոցի մեջ
Ապականությամբ եղավ խեղդամահ։

◆

Իմ մահճակալից կախված իմ ձեռքը
Իմ տրտմությունն է,
Եվ իմ մատները՝ արցունքի շիթեր։
«Մեզ մի մոռացիր,
Եվ հիշեա մեզ, Տեր»։
Մեր ջարդված հոգու ամեն մի հյուլեն
Կենդանություն է հավիտենական,
Որից դարի և գալիքի համար
Երգեր կձուլեն՝
Եվ ողբերգական, և կոմիկական,
Եվ լաց կլինեն,
Եվ կծիծաղեն,
Եվ կքրքջան հրդեհ կոնքերով,
Մատներով մորճիկ,
Շուրթերով մարջան,
Եվ շեկ մազերի շիկավուն բոցով,
Եվ կքրքջան մեզ հասկանալու
Խելագարության անորոշ լացով։

Մեզ մի մոռացիր,
Եվ հիշեա մեզ, Տեր,
Տեր Ճշմարտություն։

Քո որդեգիրը չեմ ես հիրավի,
Եվ քո որբը չեմ՝
Քո վզից կախված.—
Ես ինքնագտման իմ ճանապարհին.
Եվ քեզ գտնելու իմ ճանապարհին
Ամբաստանության կրակ եմ կլլում,.
Որ աղիքներս,
Իմ այս հողեղեն շինվածքը թրծեմ։
Հոտած միսերի գոյությունը գարշ,
Լպրծուն ոգու թագավորությամբ,
Քո կրակի դեմ կդառնան մոխիր,
Կդառնան փոշի,
Շնչավոր աղբը անշունչ կդառնա.—
Ես դրա համար
Պիտի քո ոգու
Հավիտենական հյութը ներծծեմ,
Որ իմ մեջ անծուխ
Քո հուրը վառվի,
Եվ քո աննախանձ գոյության համար
Լինեմ ատրուշան։

ՏԵՐ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Մեզ մի ժանտ կայծակ
Ճեղքել է մի օր
Դարավոր կաղնու կիսված բնի պես։
Բայց արմատներով
Իրար ու հողի մեջ ենք ներհյուսված—
Եվ մեր ապրելու
Դաժանությունն ու գեղեցկությունը
Կիսել ենք արդար,
Եվ մեր հավատը արդար ենք կիսել,
Եվ մեր երազը արդար ենք կիսել։—

Երկնի կապույտի անհաշտությունը
Մեր հոգիներին
Երկար չի տևի։
Երկինքը շուտով կկապի նորից,
Մի ծիածանե նարոտ կկապի՝
Որպես հաշտություն մի բիբլիական։

Իմ մահճակալից կախված իմ ձեռքը
Իմ տրտմությունն է,
Եվ իմ մատները արցունքի շիթեր,
Որոնք հատակին
Լալիս են հույսի գեղեցկությունը
Լույսի, կարոտի գեղեցկությունով։
Եվ քամում են ինձ նրանք իմ առջև,
Ու տեսնում եմ ես,
Որ ես ինձ՝ ինձնից և ուրիշներից
Առ ու փախ արի միայն քեզ համար,
Որ լինես իմը.
Նվ բոլորինը.
Որ այնքան հեռու չլինես, որ ես
Առանց տեսնելու
Գոռամ, թե՝ կեցցե ճշմարտությունը.
Այնքան մոտ լինես, որ ժպտանք իրար,
Եվ ասեմ... չասեմ... և մոռանամ իմ
Հոգնածությունը։

ԵՎ ՄԱՐԴԻԿ ԿԱՐԾԵՍ ԱՇԽԱՐՀ ԵՆ ԳԱԼԻՍ

Տեր ճշմարտություն...
Մարդիկ քո անվամբ իբրև թե հպարտ,
Իբրև թե հզոր և անխոցելի՝
Իրարից քիչ-քիչ հեռու են քայլում,
Դեմք են շուռ տալիս.
Կույր երազների անմտության մեջ

Հարթ ճակատները բախում են իրար,
Ընկրկում են ետ
Եվ ընկնում են միշտ
Թիկունքում պահված սրերի վրա։

Եվ մարդիկ կարծես աշխարհ են գալիս
Որպես մարդասպան
Կամ որպես նրանց հետապնդողներ։

«Ու թեև մենք էլ անասունների հոտերի նման
կապված ենք մահին».
Մի՞թե ավելի չէ երկարակյաց
Մեր ստեղծածը,—
Բայց ոչ մշտական,
Հավիտենական։
Եվ անչափելի ժամանակի ծույլ,
Անտանիք, անդուռ
Եվ անպատուհան տարածության մեջ
Մի՞թե մեր ազնիվ դեմքը չի հոսում՝
Մեր ստեղծածի հյուլեին կպած։

Մի՞թե անօգուտ երազել ենք մենք
Եվ մնացել ենք հավիտյան ունայն՝
Մեր նկրտումի թևերում անզոր,
Մեր կարոտների հիվանդ մորմոքում,
Մեր հոգիների փակ դռների մեջ,
Մեր հույսի խաբված արտացոլանքում....

Մի՞թե անօգուտ երազել ենք մենք
Եվ մնացել ենք հավիտյան ունայն
Խումբ-ընտրյալների անապատի մեջ։
Տեր ճշմարտություն,
Մենք քեզնով լցված փակ անոթ էինք,
Երբ դատարկ էին դեռ մեր աչքերը,
Փոքրիկ աչքերը՝
Անգիտակ ու փակ
Մեծ արևի դեմ։

Եվ ժամանակը
Արևագալի ձեռքերով ոսկե
Բացեց կապտամութ գիշերվա առաջ
Մեր աչքերը փակ.—
Եվ ինչպես հեղեղ՝ գահավիժանքով,
Եվ հորդանալով անասող գիշերվա խավարի նման,
Աշխարհը իր չորս ծագերից լցվեց
Մեր աչքերի մեջ.—
Հորդացավ հեղեղ
Դեպի մեր հոգու անսահմանն ամա,
Դեպի մեր սրտի ընդգրկող հեռուն.—
Լցվեց անզգույշ իր գեղեցկությամբ,
Միայն ու միմիայն իր գեղեցկությամբ։

Լուսազարմ էինք և ազատածին.—
Ամենամեծը երկինքն էր դարձյալ,
Ամենաշատը և անմատչելին երկինքն էր նորից,
Ամենաազատն ու անմատչելին երկինքն էր դարձյալ.—
Երկինքն էր նորից սերն ամենամեծ։
Կյանքը մեզ համար
Անկապ-անկապանք ստինքն էր մեր մոր՝
Մեր Աստվածամոր
(Մենք աստված էինք),
Որ թվում էր, թե մինչև կյանքի վերջ
Պիտի ծծեինք։
Մեզ անծանոթ էր
Մահը
Եվ մահվան անհայրատ ոգին։

Իսկ ուրիշները, որ քայլել էին
Ջարդված օրերի գիշերվա միջով,
Եվ իրենց նիհար սրունքների հետ
Քարշ էին տվել ողորկ ճամփաներ,
Որ կախվել էին իրենց սեփական
Կոկորդների մեջ՝
Իրենց ձայների կախաղաններից,

Եվ իրենց լեզուն ոլորել էին պարանի նման,
Կապել սեփական ատամնաշարի տափակ սյուներին.—
Այդ ուրիշները բարձր ձայներով
Ողբեր ողբացին,
Թե՝ հավատացեք, Մահ կա աշխարհում։

Անժպիտ արցունք
Թափեցին թավշե մեր ափերի մեջ՝
Մահ կա աշխարհում։
Մեր ժպիտները
Կախվեցին գունատ մեր շրթունքներից
Նոտրված, թոշնած ծաղիկների պես՝
Մահ կա աշխարհում։

Սրեր ցույց տվին,
Տեգեր, նիզակներ,
Ապա ականներ ցույց տվին հատ-հատ,
Արկերի լեռներ,
Բլուրներ խոսքի
Եվ հայացքների գոսացած կույտեր՝
Մահ կա աշխարհում։—
Ապա հրթիռներ
Ցույց տվին իրենց
Միշտ անգերազանց սլացքների մեջ՝
Մահ կա աշխարհում։
Ու թեև կյանքում բաներ կան, որոնց
Մենք չենք հավատում
Ու չենք հավատա,
Բայց անկապտելի մահվան գոյության
Մենք հավատացինք։

Եվ իրոք, որ կա մի մահ բնական,
Որ զարհուրելի չէ բնավ այնքան,
Որքան ողբերի աղաղակներում,
Հայացքների մեջ,
Սրերի սայրին
Եվ հրթիռների փայլի մեջ զնգուն։

Կա մի մահ, որ լուռ, անստվերագիր
Պառկում է անդարձ
Ճերմակ մազերի ալքերով հոսող
Դաշտերի վրա,
Պառկում է թափուր երազների հետ,
Թափուր ձեռքերով՝
Անվրդով, ինչպես պաղ ցայգալույսի
Ժայռերը գունատ,
Անտրտունջ, ինչպես հողին շղթայված
Լեռները բոլոր,
Անկապանք, անշարժ,
Անխաբ-հողի պես։—

Մարդկության կեսը,
Որ սպանում է այն մյուս կեսին,
Խեղում է մահվան գեղեցկությունը,
Երազն է խեղում՝
Արյունոտելով կարոտի լույսը։

Մեկտեղ սպանված մահվան ու կյանքի
Ջարհուրանքն է, որ
Ջորեղ է բոլոր եղերերգերից,
Ողբերից աղի,
Մեռնող ձանձրույթից,
Օրերից անվեճ.—

Օ, այս բոլորը ակնթարթորեն
Մեռնում են մեկտեղ՝
Մեկտեղ սպանված Մահվան ու Կյանքի
Ջարհուրանքի մեջ։

◆

Վախկոտ մտքերը քայլում են տխուր
Մեր երակների
Կարմիր ու կապույտ ճանապարհներով։
Գնում անհաստատ
Եվ սայթաքում են՝
Ժայռերին հպվող մառախուղի պես։

Ուր էլ որ գնան,
Կես ճանապարհին կմնան անուժ,
Կնետվեն ցածում իրենց սպասող
Մերկ սվիններին։

Թե թռիչք է պետք՝
Մենք արմատահան թև ենք ցույց տալիս։

Թե հայացք է պետք ամենաթափանց՝
Մենք շոշափում ենք փակ ակնագնդեր։

Ու թե երգ է պետք՝
Մենք ցույց ենք տալիս
Մեր կոկորդների գեղեցկությունը,
Որոնք տրտմորեն լուռ են ու համր,
Ոչ մի լիարյուն երգ չեն խոստանում։

Թե հաղթել է պետք՝
Մեր պարտությունը
Անճապարանքով պարզում ենք առաջ
Ու հոգնածորեն... հանգստանում։

ՃՉՄԵՑԵՔ ԹԱԽԻՄԸ

Մենք լռության քայլին համատրոփ,
Ճոճվում ենք երկաթե ու մերկ մեր ուսերով
Երկար սեղանների դատարկության վրա։

Քայլեցեք, երազներ, քայլեցեք՝
Մեր հույսի պարանով շղթայված,
Կրակներ հավաքող ձեր ձեռքով
Դե շոյեք փայլը մեր ճակատի.—
Մոռացված թռչունների երգերով
Հանգցրեք մորմոքը կարոտող աչքերի.—
Քարանձավների պաղ լռության մեջ
Ապրող աչքերի.

Լեռնալանջերին ծաղիկների հետ
Անհուն ծփացող անծիր աչքերի.
Գագաթներից վեր թռչող թևավոր
Թռիչք-աչքերի.
Աչքերի, որ սուրբ աղոթքով հղի
Ծունկ էին չոքում
Մեր հին, հեթանոս աստվածների դեմ.
Եվ աչքերի, որ փոշիների մեջ
Հավիտյան փակված ու փակ մնացին՝
Անտեղյակ կյանքի խուլ անցուդարձին.
Մնացին տարտամ,
Աներազ,
Անտուն,
Մնացին դատարկ,
Մի անարձագանք, խուլ դատարկությամբ
Քայլեցեք, երազներ,
Դե քայլեք ամպերի ուռուցիկ հետքերով,
Պատերի կապտաճիչ, անշրթունք դեմքերով,
Մեր կորած, անծանոթ թևավորների
Մոռացված երգերով։

Քայլեցեք, երազներ, քայլեցեք
Դատարկ սեղանների երկարության վրա.
Ձեր բոբիկ ոտքերի տակ ճզմեցեք թախիծը՝
Որպես սև մի նարինջ.
Եվ ձեր ձեռքերի սկուտեղներով
Բերեք մեզ նրա
Արցունքը՝ վաղվա ծնունդով հղի,
Բերեք մեզ նրա համբույրը աղի,
Բերեք մեզ թախծի ձևն արքայական,
Որ նման է միշտ
Մի քիչ սիրո և մի քիչ դագաղի։

Եվ երազների մաշված ոտքերը մերկ
Լացեցին մեր դատարկ ձեռքերի խաչերի վրա։

Եվ մենք դեպի հողը կախված մեր ձեռքերը
Բարձրացրինք վերև, դեպի երկինք՝
Մեր մեծ կորուստների հիշատակի համար։

Իսկ մեր ոտքերի տակ պտտվում էր
Թաղված, խամրած հիշատակների
Տափակ մի երկրագունդ.
Եվ մեր աչքերում պտտվում էին
Պայծառ հիշատակների զույգ երկրագնդեր.—
Հիշատակների աշխարհ էր շուրջը
Եվ ոգիների թագավորություն,
Ուր որ զայրույթը դառնում է ստրուկ
Եվ արձանանում դոների առջև.
Պապանձված լեզվով
Ոչ հրաման է արձակում ի զեն,
Ոչ հրաման է ընդունում խուլի իր ականջներում։
Հույսը դառնում է Մայր տաճարներից
Վոնդված գունատ սաղմոսագրքեր,
Որ զրկված է, ավաղ, իր կենարար շնչից,
Եվ փակ շուրթերի մեջ երգն է խեղված։

Հիշատակների աշխարհը
Շղթայում է թևավորվող ոգին։

Վերածնվող հույսի ու հավատի,
Վերածնվող սրտի, երգի համար
Հարկավոր է մոռացության ծնունդը տաժանելի,
Եվ մեռնելու համար
Հարկավոր է անխաբ մոռացությունն էլի։
Եվ մենք՝
Այդ հիշատակների երկրով շրջապատված
Եվ անկարող՝ թողնել մոռացության,
Մենք՝ լռության քայլին համատրոփ,
Ճոճվում ենք երկաթե ու մերկ մեր ուսերով
Դատարկ սեղանների երկարության վրա։

Եվ փայլի մեջ ողորկ մեր ուսերի
Անցած երազների
Համատարած ուժն է վերընձյուղել։—
Մեր աչքերը փակ են,
Սակայն՝
Լապտերների նման,
Ուր կարող է ազատորեն մտնել լույսը,
Ազատորեն ելնել՝ հիացմունքով հղի.—

Լույսը, որով կարող ենք մենք
Խավարի չորացած շուրթերը ցնցուղել,
Խավարի ճաքճքած արյունը ցողցողել,
Որ լերդացած չիջնի մեր խոհերի վրա։

Մենք մեր մի-մի ձեռքում
Գերբնական ուժով
Դեռ պահում ենք կծկած
Լուսությունը ծանր,
Որ թե խփենք հանկարծ
Մյուս ձեռքում սեղմած կարոտներին,
Մի միֆական դղիրդ կբարձրանա՝
Այնքան ահագնացող,
Որ ահաբեկ,
Խևոտ,
Խելագարված,
Ամենահեռու քարանձավից
Դուրս կարձակվեն
Նախնադարից քնած բնակիչներն անգամ։

Ավերելով պարիսպների հատորները հաստ-հաստ,
Անտուն, մենաբաղձիկ ու անոթի,
Երկրագնդի վրա խոլ կշրջեն
Մրրիկները տենդի ու կարոտի։

ՄՈԼՈՐՅԱԼ ԱՉՔ

Քաղաքները՝ թափուր,
Արձանները՝ դալուկ,
Երազները դարձան քարե քառակուսի պատվանդաններ։

Զգված մեռածների,
Ծալված ապրողների
Ճշմարտության համար բացված շրթունքներին
Սառած ու թափանցիկ թերթիկներով
Մի ծաղիկ է ծաղկում՝
Ամլացած օրերի
Դիակների վրա փռված։

Այդ ծաղիկը հիմա
Դարձյալ դնում ենք մենք մեր արյան մեջ,
Արմատները մինչև մեր սրտերն ենք տանում,
Քանզի հավատում ենք, թե հող ենք մենք՝
Անապական,
Անգարշ,
Ծույլ-ծույլ երազների
Հաստ-հաստ շրթունքներով
Դեռ չլկված։
Հող ենք,
Հողի մեջ ենք,
Հողի վրա,
Հողով կերակրված.—
Հող ենք-հող կդառնանք։
Մեր արյունը հող է՝ արևի մեջ հալված։

Քարև մի բռունցքով
Մեր ժպիտը ջարդվեց մեր դեմքերի վրա,
Եվ ահավոր վերքից
Մեր աչքերի տեղակ սպիներ են հիմա.
Մեր շուրթերը փայլուն սպիներ են երկու,
Երկու մարմարիոնե սառը դամբանաքար՝

Միավորիկ մարմնի հողե—
Համայն ճշմարտության
Դամբարանին դրված։

Սակայն հող ենք,
Հող ենք,
Դարձյալ մենք ենք հողն այն,
Որի վրա անդուռ աշտարակի նման
Պիտի ելնի մեր հին ժողովրդի ծառը՝
Աստվածների դեմքին
Մեր պատկերի ուժը ցնծացնելու
Եվ մեր ճշմարտության ծվենները լկված
Արևի մեջ թրծած հույս դարձնելու։

◆

Ոգու միայնությամբ
Դեղին փայլով տխուր մի արհամարհանք
Աշնան մշուշների անհանգրվան, անճիչ ճանապարհով
Լուռ ձգվում է դեպի
Ջարդված երազների
Ջարդված գագաթները ապակեփայլ։

Հորիզոնի վրա մեխված կակաչների
Սևն է փայլում
Սևաչք արեգակի նման,
Որի շուրջը թերթ-թերթ կարմիր լույս է վառվում՝
Կարմիր հեգնանքի պես։—

— Մոլորյալ աչք, փոշոտ, չվերծանված...

Կարմիր թարթիչներիդ անքուն հոգնածությամբ·
Հառաչանքդ ես փնտրում քարերի մեջ
Ու գտնում ես լույսի անթաղ դիակների
Այգեստաններ,
Ու գտնում ես ամեն քարի տակին պահված
Անդունդի ճիչ։

Վեր կաց,
Վեր կաց,
Վեր կաց,
Մոլորյալ աչք՝ դրված ժամանակի ճերմակ ափի վրա։
Դու մեր բախտի բոլոր
Անդունդները հիմա հավաքել ես քո մեջ,
Հոգնած, փոշեկոլոլ
Գլորվում ես վերև
Մեր անհատակ ու շոգ օրերի ճանապարհով։
Մեր ցնծության բոլոր անտառները թողած հեռվում,.
Կաղնիների լույսը դարձրած փոշի,
Մեր կարոտի բոլոր օվկիանները մսխած,
Դարձյալ հավատալով ինչ-որ գերբնական ուժի,
Դու թռչում ես հոգու
Անբռնելի, անգույն հորիզոնի վրա։

Բաց թևերիդ ուժը
Քարերի տակ ծլող հող է դարձել։
Քո սասանող ոգին ցնցում է քարերն այդ
Ու չի տեղաշարժում։

Տրտմությունից խուլ-խուլ ճարճատում է ոգիդ
Ու չի կոչում մահվան։
Աղոթքներում հոգնած քո շուրթերը
Կրկրնում են միմյանց։

Լսում — լուռ ես մնում։

Արթնանում ես քնից,
Ու բաց աչքդ դժգույն քո կոպի տակ
Մնում է փակ։
Մոայլվում ես ու չես կնճռոտվում,
Որ աղաղակ լսվի մկաններիդ միջից.

Ժպտում—
բարբառում ես խոսքի կաղապարներ
Երջանկության, սիրո ու հավատքի մասին։

Ժպտում—
Բարբառում ես վրիժառու տենդը
Առևանգված բախտի
Ու չես կոչում դարձյալ սրբազնագույն մահվան։

Եվ օրեր ես հաշվում՝
«Կորած», «Անդառնալի»,
Եվ եղեռնի օրեր՝ անապատի
ավազների վրա լկված,
Եվ գրգանքի օրեր՝
շեկ ժայռերի կապույտ ստվերներում,
Սառույցների վրա անմահացած դալուկ,
դժգույն օրեր,
Դեղին ճամփաների անքուն երկարությամբ
Փռված փոշեկոլոլ ու տափակած օրեր,
Ոտքերիդ տակ մեռած,
Ուսերիցդ կախվող,
Կոկորդիդ մեջ խզված
ու լռության օրեր...
...Եվ հաշվում ես Հույսի անհաշվելի օրեր...

Կողկողագին ողբի
Ծվեն-ծվեն միգով
Պղտորվում է անփայլ հորիզոնը
քո հին առասպելի։
Ու ծնվում է ժայռը
Հալված աճյուններից քո բյուրավոր մարմնի։
Փողփողացող փոշին ոչ երկինք է ելնում,
Ոչ իջնում է գետին,
Փշաքաղված ծառերն, ահից սարսռալով,
Թարթիչներիդ վրա ցող են կաթում,
Եվ դու բռնկվում ես պտտահողմի բոցով։

Բարձրանում է ժայռը աճյուններից,
Աշտարակի նման քեզ տանում է երկինք՝
Աստվածների դեմքին
Մեր պատկերի ուժը ցնծացնելու։

◆

Մոլորյալ աչք-փոշոտ, չվերծանված...

Դու մեր բախտի բոլոր անդունդները հիմա
Հավաքել ես քո մեջ.
Մեր տրտմության բոլոր քարվանները
Մեր ծուռ բախտի բոլոր ճամփաներով
Քո հատակն են իջել,
Եվ քո խորքից հիմա,
Ինչպես խփված վագրի որովայնից,
Ես լսում եմ մի խուլ ոգեմռունչ,
Ու գիշերն է փլվում անձայն աղաղակով մեր թևերին։
Մենք քո հառաչանքը, որպես դամբանաքար,
Դնելու ենք հիմա քո անցյալի վրա,
Եվ գիշերվա մութը
Կտրտելով շերտ-շերտ նարնջի պես,
Խնջույք պիտի սարքենք՝
Ծիծաղելով արևի շեփորներով։
Մեր հեթանոս ոգու անսանձությամբ
Պիտի երգենք նորից խրախճանքը աղի,
Եվ մեր քրքիջների կորիզները խոնավ
Պիտի ընկնեն դարձյալ հողե մարմիններին,
Որ բարձրանան կրկին անտառները

ԼՈՒՅՍԻ ՈՒ ԾԻԾԱՂԻ։

Պիտի երգենք հիմա,
Եվ գլխից վեր բռնած մեր ձեռքերին
Բարձր կտանենք մենք մեր գլուխը հոգնած,
Եվ մեր սիրտը լցրած գավաթի մեջ.
Կբուրվառենք տենչերն ամենօրյա սիրո և հաղթության։

Չէ՞ որ անտառներ կան
Անտառներից փախած ձայների մեջ,
Թռչուններ կան իրենց ստվերներում,
Երազները խլված ձեռքերի մեջ
Երազներ կան էլի,

Ջրվեժներ կան իրենց շառաչի մեջ...
Եվ քո հառաչանքում-Մոլորյալ աչք—
Մենք կանք,
Քո անցյալի վրա այդ մենք պիտի դրվենք
Որպես հիշողության փափուկ մամուռներից
Ծնված մի շիրմաքար։

ՈՉ ԹԱԽԻԾ ԷՐ ԿԱՐԾԵՍ...

Եվ ջերմության կանաչ մամուռների վրա
Գլգլում էր ջուրը
Քնի, երազի մեջ մեր ծիծաղի ձայնով։

Հնձանների խեղդող տաքությունն էր հոսում
Մամուռների վրա,
Եվ լեռներում ծնված մանուկների ձայնից
Թպրտում էր ջուրը
Մեր թափանցիկ խոհի, մեր մատների միջին։

Այդ որտե՞ղ էր և ե՞րբ...
Մոռացության այդ ո՞ր հորիզոնի վրա
Ճեղքված ծնծղաների տափակ շրթունքներով
Կապույտ երազները հողին տալու հուղարկավոր եղանք։

Եվ կապույտ հող եղավ
Երկրագնդի վրա։
Կապույտ բլուրները-կապույտ առագաստներ,
Որոնց վրա մի-մի մարգարե էր նստած
Մեր ուղեղի կապույտ միրաժի մեջ։
Եվ երկինքը դարձավ
Լույսով ճեղքված
Մի ոսկեգույն ծնծղա,
Որ արնահամ երգեր գոմռալով
Ահազանգ էր երգում մեր արյան մեջ։
Իսկ մենք թախիծ էինք ըմպում անհագորեն։
Թույնը երազների կապույտ ճանապարհով
Տանում էր մեզ դեպի անդառնալի անցում.

Մարգարեներ՝ նստած կապույտ բլուրներին,
Իրենց խոհերն էին աչքի բոցի վրա խանձում։

Այդ որտե՞ղ էր և ե՞րբ...

Անվայրափակ ոգու ընդվզումը հանգավ
Մոայլ կեսգիշերին վառած մոմի հանգույն,
Եվ անբստգյուտ սիրո ու կարոտի
Ծանր մեղանչումից
Աստվածների ձայնով
Մի այլանդակ մանուկ ծնվեց երկրի վրա՝
Մի կիսադեմ Հուդա։

Ու կես դեմքով մարդիկ եկան աշխարհ,
Կիսած շրթունքներով,
Եվ աչքերով,
Հոգով,
Կեսը-խավարի մեջ։

Այդ կիսադեմ մարդիկ—կիսած վագրի նման—
Այդ կես դեմքի սառը, խեղդող մոայլությամբ
Նայեցին մեզ իրենց կենտ աչքերի
Պարիսպների տակից։

Մեր միամիտ ոգու
Աշտարակը փլվեց մեր ուսերի վրա,
Եվ մեր սիրտը դողաց մեր մարմնի մեջ
Այրված ոստանների ծխի նման։
Եվ մենք այդ կիսավեր կամարների տակին
Ծունկի եկանք հոգնած, փլատակված.
Ոչ ավերակ էինք,
Ոչ շեն էինք,
Ոչ տուն.—
Ոչ ձմեռ էր կարծես,
Ոչ թախիծ էր կարծես,
Ոչ ամառ էր ու տապ,
Ոչ էլ աշուն...

Խավարի մեջ թողած ծխի նման
Մեր սիրտն անէացավ մեր մարմնի մեջ.—
Մեր աչքերի տակին թարշամ մանուկների նման,
Մերի տեսքով երկու
Սրտեր եկան աշխարհ,
Կապույտ առասպելի
Թույն-թախիծով լցված՝
Մեր շուրթերից սրտեր կախվեցին ցած,
Մեր ձեռքերի վրա սրտեր էին դարձյալ,
Ջանցած ճամփաների փոշիների միջով
Մենք քարշ էինք տալիս միլիոնավոր սրտեր՝
Մեր մի սրտի, ավաղ, աճյուններից հյուսված։

Եվ կես դեմքով մարդիկ
Քայլում էին իրենց կենտ ձեռքերին խաչե խայծեր բռնած,
Քայլում էին լույսի և խավարի սահմանների վրա՝
Հոգով պոռնկորեն տրված մութին,
Գնում էին որպես առաջնորդող
Եվ քարշ էին տալիս իրենց ետքից
Խաչելության պատրաստ,
Խաչելությամբ ապրող
Ամենօրյա տարտամ ժողովրդին։

Հոգիների կանաչ արոտները ընկած
Եվ հանձնառու թիկնոց հագած առաքյալի,
Իրենց կես լինդերով
Մսխում էին վերջին ծիլը վերընձյուղած։
Հոգիների կանաչ արոտների եղեգների վրա
Թքում էին երգերն իրենց այլասերված հոգու.—
Նրանց մատնիչ շնչից եղեգները հույսի
Դառնում էին հազարամյա կանգնած աճյուն։

Այդ կես դեմքով մարդիկ,
Մեզ կիսավեր արած,
Կիսում էին ողջը,
Ինչ եղել էր ու կար այս աշխարհի վրա։

Կիսած ճամփաների դիակների վրա
Երջանկության լեռներն էին կիսում՝
բոլոր սրտերի մեջ։
Կիսում էին թախծի նարինջները կապույտ,
Կիսում էին խինդի արոտներից ելնող ամեն հնչյուն,
Եվ քայլ առ քայլ սև-սև սեպերն էին մեխում
Հույսի աշտարակին,
Ինչպես փայտահատը փայտ կիսելիս
Իր սեպերն է տնկում ողնաշարին կաղնու։

—

Այն խուլ մռնչյունը,
Որ ելնում է կաղնու որովայնից,
Այն, որ ժայռաբնակ ճարճատյուն է կարծես
Ու մերկ,
Ու անկապանք,
Ու բնության ձայնի որսված ազատությամբ՝
Այդպես դղրդում էր Աշտարակը Հույսի։

Կիսված սիրո ճեղքված երկնքի տակ,
Կիսված սիրո այգիների վրա
Մեր հավատի թռչունն ուղեմոլոր
Թպրտում էր վշտի թևերի մեջ,

Ու կիսադեմ մարդիկ
Կիսեցին այդ թռչնին,
Ու կիսեցին դարձյալ,
Ու կիսեցին էլի,
Ու կիսածը նորից կեսկիսելով,
Մեր հավատի սյունը դարձրին փոշի
Իրենց կենտ աչքերի հորիզոնի վրա։

Հիմա մենք նստել ենք կիսված հողին,
Կիսված երազները մեր ծնկներին առել,
Եվ լուռ օրորվում ենք՝
Կես-շուրթերի երգին համահնչուն։
Մեր շուրթերը հիմա ծնծղաներ են երկու—
Մեր ձեռքերի նման,

Մեր կոպերը դարձյալ ծնծղաներ են հիմա՝
Մեր աչքերի անտակ անդունդների վրա.—
Եվ մենք, անապատի բարկ շուրթերին ընկած,
Ոչ ավեր ենք կարծես,
Ու ոչ շեն ենք կարծես,
Ու ոչ էլ տուն...
Ոչ թախիծ է կարծես,
Ու ոչ մահ է կարծես,
Ոչ ամառ է ու տապ,
Ոչ էլ աշուն...

ՈՒ ՏԱՌԱՊԱՆՔԻՍ ՔԱՎՈՒԹՅՈՒՆ ՉԿԱ...

Պարաններից կախված սավանների նման
Ալիք-ալիք տվող երկնքի տակ
Ես իմ երգի անտոթ անապատն եմ փռում
Ձեր աչքերի վրա,
Պապակ ձեր շուրթերին։

Հիվանդ կարոտներից հազար անգամ մեռած,
Հիվանդ երազներով դեռ կենդանի
Որպես
Առասպելյալ թռչուն,
Ես իմ կրակները...
...Ձեր աչքերի միջով...
Կիսակործան վանքից մտնում եմ ներս...
Մերկ մարմընով,
Բոբիկ,
Ու ծնկներով մաշված,
Մագաղաթյա գրեր դաջված անրակներիս
Ասեղնագործ երգեր ուռած իմ շուրթերին
Ու կոպերիս խաշված,
Հնադարյան անձույլ մեղեդիներ կողերիս միջ,
Մրմնջում եմ ահա
Մեռած աստվածների,
Մեռած հանճարների հոգով անիրական,

Մրմնջում եմ հողոտ իմ շուրթերով.
—Օ, հող, օ, մեծ երկինք,
Չէ՞ որ ձեր ճարտար մատներով հյուսած
Ես եղեգնահյուս ավազան էի՝
Ձեր լուռ հիացքի,
Անլուր խնդության,
Աննեխ, թափանցիկ ծովերի համար։—

Եվ ես մի կապույտ ավազան էի
Մեծ կարոտների պալատների դեմ.
Երազանքների թռչունները շոգ
Իրենց թևերը մեղմ սուզում էին
Կապույտ կրծքիս մեջ
Եվ պաղ օրերի հիացքով լցված,
Թռչում էին լուռ տիվ ու գիշերի թևերի վրա.

Եվ ես մի կապույտ ավազան էի
Տենչանքների տոթ լեռների համար,
Որ իրենց ժայռե լեզուները շեկ
Իջեցնում էին իմ սարսռացող ձեռքերի վրա.
Եվ ես մի կապույտ ավազան էի՝
Հավիտենության կրծքի մեջ թաղված,
Եվ ես մի կապույտ ավազան էի՝
Ոչ լկված-մեռած,
Ոչ աղավաղված։

Ողբալի եմ ես
Ջուրը ցամաքած շատրվանի պես։

Եվ հա՞րկ էր արդյոք, որ ես ողբայի
Կամ թե խնդության երգեր երգելիս
Գոռայի ամբողջ-անծիր երկնքով.—
Ես խաղաղ, կապույտ ավազան էի,
Ես լռում էի,
Եվ տիեզերքը լցվում էր երգով։

Անջուր, անլեզու շատրվանի պես
Ողբալի եմ ես։

Ողբալի եմ ես
Լքված, անկրակ բագինների պես։

Անստվեր, անձայն անտառների պես
Ողբալի եմ ես։

Ողբալի եմ ես
Անհող, անպտուղ այգիների պես։

Ողբալի եմ ես
Այրված, սևացած դաշտերի նման,
Որ փռվում են մեր հոգիների դեմ
Անդունդների պես։
Ողբալի եմ ես
Ձեզ նման, ինձ պես...

Ես՝ անառագաստ, անսեր, անհոգի,
Անծուխ, անկրակ վառվում եմ, վառվում,
Եվ երկու միլիոն ուրվականներս
Իմ հայացքների ձողերի վրա
Մեխվում են, շարվում։

◆

Ես երկու ծայրով մեխված եմ, գամված
Իմ անհնազանդ տարածության մեջ։

Իմ ամեն խշշյուն,
Ամեն մի զնգոց
Խուլ գոմռոցով
Դեռ կրծոտում է իմ գամփոն ագահ.—
Ատամների տակ սրսփում եմ ես՝
Ինքնահանդիպման տկլոր վայրկյանին
Ջրին մոտեցող մառախուղի պես,
Եվ տառապանքիս քավություն չկա,
Եվ տառապանքիս քավություն չկա։

Հալածվում եմ ես
Զույգ անհնազանդ
Զիերին միևնույն ճամփեքով տանող
Անիվների պես։
Տառապում եմ ես
Ցխոստովանած խոսքերի նման։

Տառապում եմ ես
Իմ երեք միլիարդ կրծքի մեջ մեխվող
Ատոմաթռիչ նիզակների պես։

Ավելի լավ է՝ ես ջունգլիներում
Կատաղած փղից ընկնեմ հալածված,
Փակվեմ լեռների անխուց բուրգերում,
Եվ իմ կողերի ճարճատյունը խուլ
Սասանի երկրի մռայլված ոգին,
Ավելի լավ է՝ մասայի դառնամ
Եվ ընձառյուծը ինձ պատառոտի,
Եվ կարողանան արմավներն հոգուս
Սիրտ, կարոտի ողբերգը լսել,
Ավելի լավ է՝ մոռանամ ես ձեզ,
Մոռանամ սերը,
Քան իմանալով, ես մնամ անսեր։

Եվ գետերը մեկից զարնվում են իրար,
Եվ զարմանքի խոնավ, տամուկ փոշին
Պարուրում է Հավատի լեռները մագաղաթե։

Եվ ծովերը ելնում, բարձրանում են իրարից վեր։
Ու բազմահարկ ծովերի միջով գնում եմ ես՝
Ջրերի որբ սյուների
Մերկ թևերից բռնած,
Նրանց շրթունքները՝ իմ շուրթերի վրա,

Գնում եմ ես դեպի անդառնալի անցում.—
Ոչ ավեր եմ կարծես,
Ու ոչ շեն եմ կարծես,
Ու ոչ էլ տուն։

Ոչ թախիծ է կարծես,
Ոչ տրտմություն մահվան,
Ոչ էլ աշուն...

ԱՆՏԵՐՆԵՐԸ ՏԻՐԱՎՈՐ ԵՆ ԴԱՌՆՈՒՄ

Եվ աստված հավաքեց իր աստվածազարմ որդիներին
Եվ արքաներ կարգեց
Երկրի վրա—
Ասաց՝ կառավարեք մահկանացու մարդկանց
Բախտը անգոսնելի.—
Սակայն մոռացավ տալ
Պայծառությունն իր աչքերի,
Թրթռումը ոգու,
Որ կարող էր հայել
Գիշերներից ծնվող գիշերների
Հեռուն անվերադարձ։
Եվ մոռացավ դարձյալ ձայնն իր աստվածային,
Որ լույսի պես կախվում երկնի շրթունքներից
Եվ աղոթք էր դառնում՝
«Փառք ի բարձունս»։
Աստված մոռացավ տալ ձայնն իր աստվածային,
Որով երկինք տանող ճանապարհն էր գտնում
Ամեն մահկանացու։

Ոչ աստված էր աստված,
Ոչ արքա էր աստված.—
Նավաբեկյալ ոգու աղաղակ էր սաստված,
Նավաբեկյալ ոգու աչք էր դժնատեսիլ՝
Ամբաստանյալ երկրի բաց ճակատին
Որպես խարան,
Կնիք՝
Իր սեփական ձեռքով հավերժորեն հաստված։

◆

Եվ ողջ տիեզերքում
Երկրագնդի տեղակ
Պտտվում էր մի մերկ, հսկա կիկլոպ,
Մի մոլեգնած, անդեմ,
Խառնատեսիլ մարմին,
Աղաղակի հախուռն ճյուղաճամփով
Հազար կողմից թափվող
Մի անիմաստ լեղի,
Որն իր զանգվածային անձույլ հոգին
Պտտում էր աչքի առանցքի շուրջ
Եվ տանում էր ինչ-որ անդառնալի հեռվում
Հավերժորեն թաղի։

Եվ կանչեցին արքաներն իրենց արքայորդիներին
Եվ ասացին՝ դուք եք տերը հիմա,
Եվ ասացին դարձյալ՝ տերն եք այս ամենի.—
Եղեք ամուր,
Տերն ինքը ձեզ տեր է կարգել, արքայորդիք,
Տերն ինքը ձեզ երբեք չի մոռանա։
Արքայորդիները կանչեցին մեզ
Եվ ասացին՝ մենք ենք տերը հիմա,
Տերն ինքը մեզ տեր է կարգել այս ամենի,
Տերն ինքը մեզ երբեք չի մոռանա։
Եվ մենք անտեր էինք
Ու տիրավոր դարձանք։
Եվ մենք վերջին անգամ ծիծաղեցինք՝
Կորցընողի վերջին հավատքի պես ամուր,
Կորցընողի վերջին խարսխի պես խարխուլ,
Բոլոր ժպիտների ուժով միագումար,
Բոլոր կրակների ձայնով արևարյուն,
Ծիծաղեցինք մինչև օրը ծալվեց
Դեպի հողը ծալվող մեր ձեռքերի նման,
Մինչև մառախուղը փոխվեց մեգի,
Մեգը խավար դարձավ,
Եվ սև ծիծաղ իջավ գլուխներին մեր բաց։

Եվ մենք հոգնած ու լուռ,
Հոգնած ամեն ինչից,
Գլուխներս հանդարտ իջեցրինք
Մեր ծիծաղի փայլուն փշրանքներին՝
Հավատքով այն որբի,
Որ աստղեր է պեղում մոխիրների միջից։

Օ՜, ձայն իմ կերկերուն,
Իմ աչքերի խավար,
Հեռավորիս պատրանք,
Ոսկորներիս նման կոտրատված իմ անցյալ,
Օ՜, ձայն իմ կերկերուն,
Դուք թանձրացեք այնքան,
Որ ես կարողանամ
Ձեր ծնունդով ապրող մեռածների
Ոգին թափահարել ահագնասաստ ուժով,
Ցնցել պատրանքն հողի,
Հողի կրծքին հանգչել հնչյուն-հնչյուն,
Ակունքների վրա մեռնել,
Վերածնվել ակունքների կապույտ մուժով,
Հետո հողի կրծքում սիրով ընդարմանալ
Եվ համբարձվել երկինք,
Ապա դառնալ
Երկնի թարթիչներից հավերժորեն կախված
Քարե արցունք։

Տիեզերքի բոլոր անկյուններում
Կա մի արցունք՝
Եվ անպայման անդունդների վրա կախված։

Կաքավն արյան պես շողում է քարի կրծքին,
Կաքավն հույսի պես դողում է արյան կրծքին,
Հույսը արյան հովիտներում
Թռչկոտում է կաքավի պես,

Կաքավն հույսի հովիտներում
Խելագարի ձայն է կարծես։
Իմ կաքավող հույսերի ձեռքերից բռնած,
Թռչկոտում եմ լույսերի շղթաների մեջ,
Եվ ձայների համընթաց քարավաններով
Անապատի լռությամբ ճոճվում եմ անվերջ։

Ոգիների ականջները մարմընիս հագած,
Հավաքում եմ չարձակված ամեն մի հնչյուն,
Հավաքում եմ բենգալյան օրերս հանգած,
Հավաքում եմ մրրիկներն անապատների,
Որ քրքրված, բզկտված օրերիս վերջում
Վերջին հրդեհս վառեմ, հուրս ակնակիր
Եվ կրակե սյուն կանգնեմ երկնքից երկիր.—
Դառնամ ինքս իմ գլխին արտասվող երկինք,
Դառնամ ինքս իմ աչքերում ծիծաղող աստված,
Հետո մաս-մաս փշրվեմ շուրթերին հողի,
Փշուր-փշուր փշրվեմ քարերին ողորկ,
Ջրերի մերկ թևերին փոխարկվեմ դողի,
Եվ ամենուր կորսրված մնամ հավիտյան.
Մնամ անկորուստ և անբռնելի,
Որ արքաներն ինձ չտեսնեն նորից,
Ջտիրավորվեմ ես հանկարծ էլի.—
Եվ արքաներին, և արքայորդվոց
Հավաքեմ ի մի,
Նույն ամանի մեջ հավաքեմ նրանց,
Մխրճվեմ դարձյալ խորքերն անհունի,
Եվ աղաղակեմ՝
Քո եփած ճաշը ինքդ կեր, աստված։

Մեր խառնրված, խարխուլ ճանապարհին
Աղաղակով թռչող լճեր կային՝
Մեռած կարապների մարմինների վրա։

ՄԵՆՔ ՆԱԽԱՄԱՐԴ ԷԻՆՔ

Մենք նախամարդ էինք,
Ապրում էինք
Անտառների մոլեգնության փայլուն հեքիաթներով։
Մեզ հետ ծաղիկները դառնում էին գիշեր,
Եվ մեր առավոտի կապույտ թարթիչներից
Արևային, կարմիր ցողն էր կաթում—
Եվ մենք պառկում էինք արյուն լացող
Առավոտի վրա,
Պառկում էինք, ինչպես
Կաթնամշուշ կաթում ու հեքիաթում,
Ապա մեր ձեռքերի քարե ատամներով
Կամ հողն էինք քանդում,
Կամ կարոտյալ ջրի ծառեր էինք ցանում
Հոգիների անծայր անապատում։
Եվ միշտ երգում էինք թռչունների
Անշողոքորթ ձայնով։
Երգում էինք աստված-աստվածուհիներին,
Նրանց շրթունքների բոցերն արևահամ,
Նրանց երազների ձայներն ավարառու,
Երկնքի պես արձակ ծիծաղները նրանց,
Որ քայլում էր մեր ձույլ մարմինների վրա,
Ինչպես հողի ոգին, որ լուռ կարկաչում է
Բոլոր բույսերի մեջ,
Եվ հագուրդի տենդոտ մի միջօրե
Կանգնեցրնում բոլոր հոգիներում՝ էգ և արու։

Մենք քանդեցինք գիշերը սարդոստայնի նման,
Ապա կորանք նրա փափուկ կրծքում։
Մենք քանդեցինք արևն անպարագիծ,
Եվ միստիկ օրերի առաջին առավոտը քանդեցինք։
Եվ մեր ոտքերի տակ
Տրորելով ձայներն աստվածային,

Մեր աչքերի միջից հանում էինք լեռներ՝
(արևափայլ մուժից),
Հանում էինք ծառեր մոլեգնության խանդի
Եվ սարսռում էինք մեր ձեռքերի մելանխոլիկ ուժից։
Ապա մեր ձեռքերը սուզում էինք հանդարտ
Մեր կրծքերում կախված թախծի պարկերի մեջ,
Հույսի մանուկներին
Հանում էինք մեկ-մեկ,
Շարում էինք քանդված առավոտի
Աճյունների վրա։

◆

Խունկ էր ծխում առավոտը,
Ցիթենին օրվա խաղաղությունն էր երգում
Իր թանձր շուրթերով,
Երեկոն իր քամված գլուխը հազիվ էր օրորում
Իր ուսերի վրա,
Եվ քայլում էր օրը՝ երեկվա,
Անցածի,
Անցյալի
Կրակե անպաճույճ խութերով։

Մեր կրծքերում կախված թախծի տոպրակներից
Հանում էինք լույսի սրախողխող ձայներ,
Եվ զինավառ ասպետների անհայրենիք տենդով
Գնում էինք՝ մութի ծալքերի մեջ փնտրելով ձեռք,
Մինչև ուրիշները գտնում էին փնտրող ձեռքերը մեր,
Խաչում էին իրար,
Գամում էին խաչին այն Տառապյալ Որդու,
Որ մեզանից առաջ
(Արդեն քանի դար էր)
Նույն ճամփով էր քայլում։

Մենք ստրուկներ էինք։

Մենք փարավոն դարձանք ոչ թե նրա համար,
Որ ծիծաղով հերքենք գոյությունը աստծո,
Այլ որ՝ օրինակենք ծիծաղն աստվածային,

Եվ քավության ժամի խորախորհուրդ պահին՝
Ցույց տանք մեր ծիծաղի աղբյուրն ամենազոր՝
Մեր սրտի մեջ կծկված լացը մեր մարդկային։

Լացը, այդ ծիծաղը,
Այդ քրքիջը որ կար,
Այդ արցունքի փոքրիկ առագաստը թրթռուն,
Երբեմն բարձրանում էր,
Ինչպես առասպելի դաժան մի հողմ,
Բարձրանում էր հուժկու
Եվ քրքիջ էր փռում երկրի չորս կողմ։

Մի փոքրիկ արցունքից
Ծնվում էր թափանցիկ մի առավոտ,
Մի տոթ միջօրե
Հալվում էր մի փոքրիկ արցունքի մեջ։

...Մի հանգչող երեկո...
Մի ծարավ անապատ...
Մի ծառ, մի զորընդեղ,
Ապրելով ամրանում էր իր դառն արմատներով.
Նրա տաքուկ շնչից
Արձակվում էր շղթան խաչված շրթունքների։

Մենք խոսում ենք կյանքի ճրաշքների մասին։

Մենք ստրուկներ էինք
Եվ դավաճաններն էինք ստրկության։

Ուզում էինք քանդել առագաստը ոգու,
Բայց փշրեցինք նավը,
Եվ ճորտության անդուռ դռների դեմ
Մեզ նետեցին խխմած փշրանքները նրա
Եվ արցունքի փայլուն բյուրեղիկներ
սկսեցին լողալ
Ցավի օվկիանոսի մերկ մարմնի վրա։
Նրանք տխուր էին,
Սակայն կայծկլտացին,
Եվ լռություն իջավ,
Կքված, աղեղնացած մի լռություն
Ծանրախորհուրդ իջավ ծիծաղազգեստ լացին։

Ու մենք ճորտեր էինք,
Անդավաճան ճորտեր,
Ամենազարհուրելի ճորտերն այս աշխարհի.
Մեր անցյալը՝ փակված,
Եվ փականքի շողքը
Արձակվում էր անգամ ապագայի վրա։
Ծնվում էին խոսքեր, բառեր անդամալույծ,
Ծնվում էին դեմքեր՝ մոխիրների միջից,
Մեղքը գալարվում էր անծայր հողի վրա,
Մեղքը սպրդում էր ամեն անկյուն,
Եվ ճռռում էր հողը՝ —
Թաղված ոսկորների ճարճատյունով անքուն։

Ու մենք ճորտեր էինք,
Անդավաճան ճորտեր,
Զարհուրելի ճորտերն ռուսական հողի։—

Մեր մռայլված ուժը,
Մեր քրտինքը աղի,
Մեր մատներով հոսում,
Իջնում էին հողի,
Հողի,
Հողի,
Հողի,
Հողի կոկորդի մեջ դառնում էին դամբան.
Խեղդում էին հողի պտղավորվող լեզուն.—
Եվ հողը չէր խոսում.—
Անծայր և անհաղորդ գերեզմանի նման
Անհատակ ու անխորք
Փռվել էր նա հոգնած, համայնասփյուռ,
Եվ լսում էր՝ ինչպես
Արեգակն էր փռվում իր մարմրնի վրա
Որպես աճյունագորգ։
Եվ լսում էր հողը
Ու լուռ ընդարմանում։

ՄԵՐ ՄԵՋ ՄԻ ՓՆՏՐԵՔ ՄԵՋ

Մեր մեջ մի փնտրեք մեզ.
Մեր մարմիններում չկանք մենք
Անհաշիվ տարիներից ի վեր։

Զարմացած իմ ձեռքը բռնում է ճակատս,
Եվ ժեստերի գունատ աղջամուղջում
Տխուր մի մեղեդի է ծանր շնչում։

Մեր մեջ մի փնտրեք մեզ.—

Տրորելով փողոցների կուրծքը փափուկ
Եվ ճեղքելով նրանց մառախուղը քնած,
Երգում է անիվների կցորդն ամենօրյա.—
Հեքիաթային գլուխն իր ամփոփած մի քրքրված ու հին,
Արդեն վերացական մի գլխարկում,
Եվ ձեռքերով իր հին հարազատի՝ իր սայլակի
քնքշությունը բռնած,

Անիվների քայլքին համատրոփ,
Եվ նրանցից անկախ
առանձնացած,
հեռու,
Նա երգում է առավոտ, միջօրե, երեկո,
Նա մեր ճակատներին հանգչող առասպելն է երգում,
Եվ մեր ճակատագիրն անկապ հնչյունների նման
Անիվների անձույլ աղմուկների մեջ է թքում։
Երգում է ծիծաղելի կրակները ցրիվ,
Անցած հեքիաթների անուններ է թվում,
Զգում է մի մեղեդի անեզրական,
Զգում է փողոցների թախիծների միջով,
Ու ձգելով այդպես, նա ձգում է այնքան,
Մինչև ամփոփում է օրը՝ իր սկիզբով, վերջով։
Նա երգում է
Առավոտ,

Միջօրե,
Երեկո.—
Եվ գույների ջարդված հնչյուններն է երգում։
Նա ամբողջ մի գիշեր երգում է
Առավոտ,
Միջօրե,
Երեկո,
Ապա լուսադեմին կպցընում է աչքը՝
Հարազատի քնքշությունը պահած ձեռքում։

Մեր մարմիններում չկանք մենք
Անհաշիվ տարիներից ի վեր.—

Մեզանից հանեցին մեզ մի օր
Ու դրեցին սայլակների լծափայտերի մեջ.—
Եվ մենք ձեռքերի քնքշությունը որոնեցինք,
Փնտրեցինք ձեռքերի կարեկցանքը անշուք.—
Գուցե ինչ-որ պահի մենք ճչացինք,
Եվ ձեռքերը գրկեցին մեզ ժպիտով տրտմաշուք։
Այդպես.— մեզ նետեցին երկնի սառը դեմքին,
Աստղերը խշրտացին արցունքների ծովում,
Եվ մենք մի անգամ էլ ծնունդ առանք
Մեր կորստյան հանդուգն առասպելի շեմքին։

◆

Ձայնը։
Լույսի նման բոցավառվող ձայնը.—
Աստղերի փշրանքներում փնտրեցեք մեզ,
Եվ մեզ համար չկա ամբողջական աշխարհ,
Կա կես աշխարհ,
Գուցե՝ աշխարհ ու կես։
Կորածների աշխարհ համայնասփյուռ,
Ապրողների աշխարհ՝ մի կիսափակ-կես բուռ՝
Հավերժորեն ապրող, հզորացող մի կես։—

Իսկ թե կուզեք տեսնել շուրթեր ճառագայթող,
Աղաղակի սյուներ՝ ծաղիկների գույնով,
Միծաղների երկինք,

Անբռնելի ոգի,
Եվ մրրիկներ, որոնք խոնարհվում են հլու
Փոքրիկ շուշանների ճերմակության առաջ,
Աղեղնացած երգեր
Պրկված մկանների ձայներ ահասարսուռ,
Եվ թե կուզեք տեսնել աչեր գարնանաբույր՝
Հողո՜ւմ,
Հողո՜ւմ,
Հողո՜ւմ փնտրեցեք մեզ.—

Թե շուշան է բացվում հողի կրծքին՝
Այդ հողի մեջ թաղված ձայնն է մեր կես,
Մեր սպիտակ ձայնը,
Մեր անմատույց սիրո առհավատչյան,
Որի առջև երկնի մեղմությամբ ես ծունկի գալիս,
Եվ թվում է՝ նրա շրթունքներին ճերմակ
Դու քո անմահության բույրը պիտի լուռ խնկարկես։

Եթե հողը հանկարծ
Բաբախում է ինչ-որ անհայտ շնչով,
Եթե ալիքվում է հողը հանկարծ,
Բռնվում է ծովի շունչը հարամռունչ,
Եվ լեռներն են եթե շարժվում հանկարծ՝
Այդ հողի մեջ թաղված սիրտն է մեր կես.—
Այդ է այն ճշմարիտ կորուսյալը, որ միշտ
Թվում է, թե ինչ-որ մի խուլ հարստություն,
Անմատչելի մի ձայն խորհրդավոր հեռվից,
Մի կորուսյալ կարոտ կանչում է քեզ,
Որ չլինի հանկարծ
Հոգնությունդ մի օր
Պատանքի պես հագած
Քո ձանձրույթի մռայլ դագաղի մեջ պառկես։
Այս է— այդ ձայնը միշտ կանչում է քեզ։

Կանչում է, երբ խուլ ես,
Եվ երբ լսում են ականջներդ
Շրթունքների գունավոր շշուկները

Եվ շշուկները մոռացված գույների...
Երբ ուզում ես երգել
Եվ լռում ես...
Ձեռքդ սկսում է երգել.
Ձեռքդ ձայների մեջ դառնում է լույս.—
Համբուրում եմ ձեռքդ, որ մաքուր է դարձյալ,
Իմաստության գիշերվա մեջ դարձել է թափանցիկ
Եվ փնտրում է կանչող ձայնի ճանապարհը։

Մեր մեջ մի փնտրեք մեզ.—

Հողից ճառագայթող ծաղիկները բոլոր,
Ծլարձակումն ամեն,
Ամեն հեքիաթային, զարմանալի հրաշք
Այդ հողի մեջ թաղված էությունն է մեր կես...
Այդ են առասպելներ, լեգենդները բոլոր,
Անբանական ոգին, իդեալները ջարդված,
Էությունը, լույսը, կուրությունը տառի,
Կաղապարներն ամեն և մտքերը հարթված,
Եվ ծնունդը, ջուրը, մերկությունը,
Նաև ծանրությունը հավանական բեռի,
Որ հանգչում է մեր նուրբ շրթունքներին խարտված։

Առավոտ։
Միջօրե։
Երեկո։
Ձեր մատների փակված աչիկներով
Փնտրեցեք մեզ քարերի լռության մեջ.—
Ձեր ոգով շարժեցեք մեզ՝
Քարերի շարժումն անմահությունն է մեր.
Շարժեցեք քարերը,
Եվ ձեր տրտմությունը կփարատվի ցավով՝
Կորցրածի համար։
Փնտրեցեք ջրերի մեջ,
Ձեռքերով փնտրեցեք,
Ինչպես խավարի մեջ լռությունն են փնտրում.—
Մենք ձեր ձեռքերը համբուրելով կանցնենք,

Իսկ երբ կանգնեք մեր դեմ,
Մառախուղի նման կբարձրանանք ձեր կուրծքն
ի վեր
Եվ մենք քնքշությունը կկապենք ձեզ, ինչպես
կապար

Հովերը թևերն են մեր.—
Ավաղ, ինչ մաքուր են մարդիկ.
Ծնվում են թափանցիկ աչքերով
Եվ ցավի, մոռացման,
Խենթության, հրճվանքի, տանջանքի աշխարհում
Դառնում են գաղափարի զոհեր.—
«Հարյավ խաչի զոհը անդրաշխարհից,
Հարյավ...»։
Զոհե՜ր, զոհե՜ր, զոհե՜ր...

ՄԵՆՔ ԿԱՏԱՐՅԱԼ ԿԵՂԵՎՆԵՐԻ ՄԵՋ ԵՆՔ

Թափթփվում է ձյունը քաղաքների վրա.
Երկնքում սպիտակ հեքիաթներ են շրջում՝
Ճերմակ հրեշտակների անմեղությամբ։

Արդարության ձայնը՝ առանցքն արեգակի—
Այդ մեզնից են կախվում քաղաքները գաճաճ,
Հասակներով թզուկ,
Կախվում են մեր ոտքերից ու քաշում են ներքև,
Քաշում, քաշում, քաշում
Ու չեն սեղմում հողին.—
Հողից աստվածամերձ բարձրությունը երկնի
Զորեղ ահազանգով կանչում է մեզ.
Եվ ինչպես ժայռ ճեղքվի,
Ինչպես փուլ գա երկինք,
Ինչպես մանուկ ծնվի՝ ժայռի կողը ճեղքող կակաչի
պես,

Ինչպես մոլորակներ խփվեն իրար՝
Սև-սև ճակատներով
Սև գիշերվա սևում
Իրար հանկարծ գտած
Սև-սև ցուլերի պես,
Այդպես դղրդում է
Մեր հողի մեջ թաղված
Սիրտը մեր կես...
Հենց որ աստվածամերձ բարձրությունը երկնի
Արվեստների ձայնի զորեղ-հազանգով,
Կանչում է մեզ։

Հողից ոգեկոչված ոգիները թեթև
Բարձրանում են երկինք.—
Եվ կախված սրտերի մեջ քաղաքներ են ծնվում։

Ճշմարտության համար թե կա գեթ դույզն
ինչ ազատություն,
Նա կծնվի անգամ շղթաների միջից։

◆

Ձերմակ մի ձվի պես
Կատարյալ կեղևի մեջ հանգչող իմ կատարյալ ոգին
Ես ուզում եմ փշրել ձեր ոտքերի առջև
Եվ ձեր զարմացական հայացքներում բացել
Գույների մաքրությունը ցավոտ,
Բացել անէության և նախաստեղծ ոգու թրթռումը զնգուն,
Բացել շղթաների դռներն անբացելի,
Բացել գեղեցկության անդունդն անանցելի,
Եվ մեր ցավի, ցավի,
Ավաղ, մեր խուլ ցավի՝
Մեր մանկան պարզ ճակատի կնճիռները խոկուն։

Իսկ թե չփշրեմ ես,
Եթե թողնեմ այնպես,
Ինչպես հրաբուխն են թողնում հանգիստ—
Մեկ է, պիտի պայթի.—

Եթե ճշմարտությունն ինքն է հասունացել,
Կատարյալ կեղևներն անզոր են պահելու.—

Նրանց միջից դարձյալ ճշմարտության ձայնը
Պիտի պայթի վառվող մի սրտի պես,
Ինչպես փակ աչքերում արցունքներն են պայթում,
Փակերի տակ պահվող շրթունքներն են պայթում,
Ինչպես ռումբն են խոթում կեղևի մեջ,
Եվ նրանից հեռու գլուխներն են պայթում.—
Այս աշխարհի խուժդուժ խլության դեմ
Պիտի պայթի դարձյալ,
Ինչպես Սիրտն են հատում,
Եվ Արյունն է պայթում...

◆

Իմ մեջ մտքերը պայթում են բողբոջների նման.
Եվ իմ զգացմունքների նուրբ ճյուղերին
Ծնվում են ծաղիկները։

Ձեզ համար իմ սիրո գույն-գույն ծաղիկները
Բացվում են գիշերվա թանձրության մեջ.
Ծնունդների մեղմիկ շշուկներով հյուսված,
Լցնում են աշխարհը ոգու երաժշտությամբ։
Ես՝ աչք, ականջ, ոգի,
Որտեղ պայթում են բողբոջները,
Ծաղիկներն են բացվում,
Հյուսվում է սիրո պուտ-պուտ գեղեցկության
Հեքիաթն անմեկնելի։

Օ, ցավագար ոգի,
Օ, չարության աշխարհ,
Անմիտ ,անընդունակ,
Անպարտելի պարտված,
Ագահ, անփոխելի,
Աներգ, անմեղեդի,
Անլույս, անապավեն խավար.—

Դու, որ եթե անգամ պահում ես մեզ կողքիդ,
Միայն նրա համար,
Որ փրկես քո աղբահոտ մարմինը
ֆիզիկական շոգից,
Քանզի դժվար է քեզ տանել քո լպրծուն
ծանրությունը.
Ինքդ քեզ տանելը դժվար է առավել,
Դրա համար պիտի ուրիշները տանեն.—
Դու անզոր ես ինքդ քո մեղքերը քավել,
Դրա համար պիտի ուրիշները քավեն.—
Դրա համար պիտի ուրիշներին դարձնես դագաղ,
Պիտի ուրիշներին դարձնես սակավ,
Պիտի նետես երկինք,
Պիտի ծովը նետես,
Պիտի գտնես ինչ-որ կատարյալ ձև,
Որ նրանց այդ կատարյալ կեղևի մեջ խոթես.—
Այդ կեղևը պիտի լինի մաքուր, ողորկ,
Պիտի հեքիաթային հրաշք լինի,
Պիտի թռչի հզոր արագությամբ, ուժով հզորագույն,
Որ մեր ուժեղ մարմնից
Մեր մեծ հոգին հանի,
Անդառնալի տանի։

Ձեր քնած կոպերի տակ ամեն օր բազմանում եմ,
Ծաղիկներս շատացնում,
Խտացնում եմ բույրերս,
Ես ամեն վայրկյան դառնում եմ լուսավոր,
Շողշողում, զնգում եմ,
Լուսավոր են դառնում իմ բոլոր կույրերս՝
Իմ կույր բողբոջները դառնում են լուսարձակներ։
Իսկ եթե իմ կողքին ծաղկում են և քույրերս,
Եթե ծաղկում ենք մենք,
Դուք անցնում եք ծաղկած ծառերի միջով,
Ձեզ համար մենք երգում ենք
Ծաղկած հեքիաթների կախարդանքը ոսկի...
Շոյում ենք ձեր աչքերը,
Որ չփայլեն անփայլ դատարկությամբ։

Մեր բույրը քողի պես գցում ենք ձեր ուսերին
Եվ ձեզ դարձնում աստղեր, արքա, աստված.—
Ձեր ոտքերի տակ սփռում ենք շունչը անմահության,
Եվ այն, ինչ ելնում է մեր շուրթերից,
Ձեզ համար դարձնում ենք անկողին բույրերի,
Եվ ձեզ մոլորեցնում ենք երգերի մեջ։
Իսկ դուք, որ մոռացել եք մեզ,
Որ մեր մարմինները դարձրնում եք դագաղ,
Մեզ վերցնում, շպրտում եք ծովը,
Շպրտում եք երկինք,
Նետում եք մոռացության աչքերի մեջ ագահ,
Դուք, որ ամենուրեք երկրագնդի վրա
Ազնվագույն երգի ցեցերն եք պատմական,
Որ հրի եք մատնում երգի ապարանքներ
Եվ խուլ քրքջում եք թույնով ներոնական,
Դուք, որ սուր սեպերով ճեղքում եք մեզ,
Որ մեր ձայնի ճիչը, մեր խուլ ճարճատյունը լսեք.—
Մի՞թե տհաճ է ձեզ մեր երգի տևական հարստությունը։

Կատարյալ կեղևներ կան,
Կան կատարյալ ձևեր,
Որոնց կորուստն է ողբ,
Եվ կուզեի սրտանց, որ ինչ-որ տեղ
Այդ կորստի համար մարդու հոգին ցավեր։

Ցավի արթնության մեջ կանգնեինք մենք,
Մենք՝ ծաղկաբուռ ծառեր,
Մենք՝ բույրացան ցնցուղ,
Երջանկության բուրվառ,
Սիրո փոխհատուցման անկրկնելի բառեր,
Մենք ձեզ համար սիրո ծաղիկներ ենք բացում
Մեր կանաչ ձեռքերի մեջ,
Պարզում ենք ձեզ ամեն կողմից,
Լցնում ենք ձեր աչքերը միակ երջանկությամբ.—
Իսկ դուք մի դարձեք հողմ,
Անապատի դաժան մոլեգնության մի հողմ,
Եվ մի ցրեք ծաղիկները մեր որբ,

Մի պոկեք ծաղիկները,
Քանի դեռ պտուղներ չենք տվել ձեզ համար,
Քանի դեռ իմաստությամբ չենք ծանրացրել ձեզ.—
Իսկ երբ խոհուն կլինենք,
Արդեն կլինի ամառ,
Մենք մեր պտուղները կկաթեցնենք
Շրթունքներին ձեր չոր,
Եվ դուք մեր քնքշության խոնավ ձայնակցությամբ,
Ձեր աչքերի փոքր-ինչ թախծոտ թախանձանքով,
Դուք մեր հավերժության աղերսանքը կերգեք,
Բանաստեղծի նման կերգեք հանգով,
Եվ ինչպես որ ձեզ է երգում բանաստեղծը,
Նրա նման

Նրան

Կերգեք ակնածանքով։

Դուք մեր տոհմածառը թողեք կանգուն
Հիշողության կապույտ բլուրների վրա։
Թողեք...

Նա ինքը ձեզ ապրել կուսուցանի,
Թողեք,

Որ ձեզ համար իր անթիվ շրթունքներով

Բույրեր ցանի,

Մի ջարդեք մեր ոգին
Ինչպես երեկ-երեկ-երեկ... այսօր,
Թողեք հաստատ մնանք, մնանք անպարտելի՝
Մեր բազմաճյուղ տոհմի հավերժությամբ հզոր։

ՏՎԵՔ ԻՆՁ ԻՄ ԱՉՔԵՐԸ

Խաղաղ առավոտ է,
Խաղաղ միջօրե է,
Խաղաղ երեկո է՝
Ալեկոծված սրտի անմեղության վրա.—

Եթե արևն այսօր հալեցրել է ձեզ,
Ձեզ,
Որ երկրագնդի ամեն խաչմերուկում
Ամեն ճշմարտության, ազնիվ բանի առջև
Կանգնած եք մաքսատան պես,
Մաքսանենգի նման
Ավերում եք երգի քարավաններ զնգուն,
Դուք, որ ամենուրեք այս աշխարհի վրա
Անդունդներ եք, չարի աչքն եք՝
Հավերժորեն արթուն.—
Եթե արևն ստիպում է,
Որ ձեր միջից դուրս գա վերջիվերջո
Թաքցրած ճշմարտության փշրանքները վերջին՝
Փաթաթեք ձեր ձեռքերին նրա մազերը «լիրբ»,
Խոնարհեցրեք նրա գլուխը փառահեղ,
Խոնարհեցրեք ձեր պիրկ բռունցքների միջին...
Կանե՞ք...
Ես արևի քրքիջներն եմ լսում.
Նրա ամեն շողը ձեզ կծեփի պատին,
Ձեզ կդարձնի չնչին, անօգնական ստվեր,
Իսկ թե փոքր-ինչ անգամ մոտենա ձեզ,
Դուք կփոխվեք դժգույն անապատի,
Ձեր ածխացած արմատների վրա էլ չեք կարող կանգնել,
Էլ չի լինի այնպես,
Որ դուք լինեք ստրուկ, նաև արքա, աստված,
Էլ չեք կարող լույսի պերճանքները հագնել,
Եվ դուք կմնաք լուռ, հավերժորեն սաստված։—

Այս քո ճշմարիտն է Արքա-Արև-Աստված։

Ես իմ ճշմարիտը բացում եմ ձեր առջև,
Բացում եմ իմ հոգին,
Բացում եմ երկնքի պես,
Իսկ դուք, պտտվելով իմ գոյության շուրջը,
Ինչ-որ փոքրիկ մի անցք, ինչ-որ դուռ եք փնտրում,
Որ մտնեք ներս.—

Է, ո՞ւր պիտի փնտրեք դուռը տիեզերքի.—

Իմ բաց տանիքի տակ, իմ դռների առջև
Ես տեսնում եմ ահա ձեր դեմքերը ուժատ, անօգնական
Եվ ձեր փնտրումները, դռան փնտրումները,
Որ անապատ է դարձնում ձեզ։

Սակայն այդուհանդերձ բացում եմ իմ հոգին,
Ազատությունն իմ մեծ,
Իմ կարոտը,
Որ տեղ-տեղ կուտակվելով,
Երջանկության կանաչ բլուրների փոխվեց,
Իմ ձայնը, որ խուլ մի լռությամբ խաչակնքվեց
Եվ երբ ձայն չէր արդեն, աղաղակ էր դարձել,
Քնած ուղեղներում ջրվեց, քարվեց, հողվեց։

«Չկան, դռներ չկան»—
Ձեր անվերջ գանգատն այս կաթում է աչքերիս մեջ
Միլիոն տարի առաջ
Միլիոն անգամ հայտնի
Արցունքների նման,
Որ բախտը հանճարների ուղիղ ճանապարհով
Հասցնում է մեզ.—
Եվ վերջապես հոգին պոռնկատուն հո չի՞,
Որ ամեն մեկն ուզի ու մտնի ներս։

Սակայն ես վերստին իմ հոգին եմ բացում,
Բացում եմ ձեզ,
Բացում եմ ձեռքերիս պես,
Երբ ազնիվ երաժշտություն է մտնում նյարդերիս մեջ։

Տվեք ինձ իմ ձեռքերը,
Եվ ձեզ համար գույն-գույն լույսեր կքաղեմ ես,
Կհավաքեմ ծաղիկների շշուկները մեկ-մեկ,
Ձայների թրթռումը կբռնեմ օդի մեջ,
Կբռնեմ ամպերի զնգոցն անբռնելի,
Մաքուր ջրվեժների շոգի մեջ կլվանամ,
Բռիս մեջ կքամեմ ծովի ջուրը աղի,
Մի քիչ աղ կցանեմ ձեր պատառին անհամ,
Ես մատներով ձայներ կհանեմ շրթունքներից
Եվ հողմերի միջից կքամեմ ադամանդներ.—

Տվեք ինձ իմ ձեռքերը,
Եվ ես կամուրջներ կկապեմ ձեզ համար,
Կգուրգուրեմ հողը-նա կդառնա բերրի,
Կշոյեմ դժգույն սարերի ճակատները խոնավ,
Նրանք փակ կրծքերից աղբյուրներ կհանեն,
Քարերը օրհնանք կասեն սֆինքսների խոսքով...

Տվեք ինձ իմ աչքերը,
Որ ձեզ տեսնեմ այնպես,
Ինչպես արարել է ձեզ բնության ոգին.—
Թող կույր չմնամ ես,
Տվեք ինձ իմ աչքերը,
Տվեք՝
Կարեկցանքով նայեմ կարեկցանքին։

Իմ սիրտը տվեք ինձ.
Սրտի տեղ կրծքիս մեջ մի հոգնած, քրքրված
արարած եք դրել,
Որ ես քարշ եմ տալիս հոգնած իմ ծնկներում,
Տանում եմ։
Եվ ինքն ինձ տանում է։
Մենք իրար տանում ենք անհայտության խուլ-խուլ
ճամփաներով։

Տվեք ինձ իմ սիրտը.
Եվ ես կհավաքեմ ձեր վշտերը բոլոր,
Կքամեմ ձեր թախիծը ձեր աչքերի միջից
Եվ խնդության լույսեր կցանեմ ձեր հոգում։

Տվեք ինձ իմ շուրթերը.
Ես նրանցով հողից ծաղիկներ կհանեմ,
Կհամբուրեմ ժայռը— և նա կդառնա վանք,
Կհամբուրեմ ձեր աչքերը,
ձեր շուրթերը,
ձայնը,
Կհպվեմ ջրերին— ջրերը կքրքջան,
Կհամբուրեմ լռությունը,

Եվ նա կբարբառի հեքիաթային խոսքեր.—
Կհամբուրեմ գույները— նրանք լաց կլինեն,
Երջանկության դողով կխառնվեն իրար,
Եվ մենք կմոլորվենք գույների մեջ։

Տվեք ինձ իմ շուրթերը,
Որ ձեզ համար գտնեմ բառեր անգտնելի,
Հնչյունները դարձնեմ կախարդական ճյուղեր
Եվ գտած իմ բառերը
Ծաղիկների նման կախեմ այդ ճյուղերից։

Տվեք ինձ իմ շուրթերը,
Որ ձեզ համար երգեմ,
Ձեզ համար հանգստյան պատարագ կերգեմ,
Կմրմնջամ աղոթք,
Եվ կամարները կբարձրանան երկինք...

Դուքը՝ չարացած աշխարհի չար ոգին, չար ուժը, չար դևը, չարացած աշխարհի չարությունն է, որ ամեն վայրկյան խլրտում է մեր շուրջը և մարդը նրան պիտի պահի գոնե մի նիզակաչափ տարածության վրա՝ տագնապելով, թե՝ ո՞րը կկատարի առաջին ցատկը։

ՄԵՆՔ ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾՆԵՐ ԵՆՔ

Մեր կարոտը ժայռ է կապտաշրթունք,
Որի վրա կանաչ մամուռներ են աճում.—
Եվ մեր ոգին փխրուն ջրվեժների նման
Մաշում է այդ կարոտը, փաթաթվում է նրան,
Եվ նրա ոտքերի տակ շառաչում է այնպես,
Որ նրա ապառաժե ծանրությունն է ցնցում։

Նրա ոտքերի տակ
Նախ բացում է փոքրիկ մկրտության խորան,

Ապա խորանալով,
Ինչպես վերքը խեղված ժամանակի,
Ժամանակի, սիրո, կարոտների համար
Կորստյան խոր, ցավոտ անդունդներ է բացում։

Եվ ատամներն այնքան դառն են գալիս իրար,
Եվ աչքերը այնքան անտերունչ են հածում,
Որ անլեզու մեղքն ու տխրությունը վարար
Փոքրիկ,
անթև, անօգ
թռչունների նման
Թպրտում են խոսքի անզորության ցանցում։
Այդ մենք չէ, որ կանգնում ենք անդունդների եզրին
Ու տխրության անձուկ վանդակներում փակվում,
Այդ մենք չենք կանգնում անդունդների եզրին,
Անդունդներն են գալիս ու մեր առջև կանգնում։

Ծույլ-ծույլ ուղեղները սառը թմբիրի մեջ,
Իրենց պատմուճանների կոճակների հետ
Խաղալով, ինչպես ներքինի,
Ոսկեհուր ցոլքերի դեմ փակելով աչքերի թմրությունը մեռած,
Կարկտաբեր ամպի պես կախում են մեզ վրա
Շրթունքները ուռած,
Եվ ուռած շրթունքներից անդունդներ են ծնում.
Ծնում են միլիոն տարվա մեռելների բանակ,
Ծնում են միլիոնավոր լխկած պառավներին՝
Նրանց երախների ձայնով անդնդակուլ,
Եվ մեր չգտնված ճամփեքին են ցանում։—

Մգլած ուղեղներից հանում են մգլաբույր
անդունդները մեկ-մեկ,
Ամենուր կախում են մութի քղանցքներից,
Ճակատ առ ճակատ բախվում ենք մենք,
Եվ մեզ ստիպում են ,որ աշխարհին նայենք
Իրենց բացած նեղլիկ միջանցքներից։

Իսկ մենք, որտեղից էլ նայենք,
Երևում է նրանց ճաղատ, միաբջիջ անմտությունը,
Որի մեջ լփլփում է երգը անդունդների
Եվ քայլ առ քայլ երկրագունդը կուլ է տալիս։

Նրանք, որ ամենուր երկրագնդի վրա
Ազնվագույն երգի ցեցերն են պատմական,
Որ հրի են տալիս երգի ապարանքներ
Եվ խուլ քրքջում են թույնով ներոնական.—
Նրանք իրենց համարում են երգի մայրապետներ,
Իսկ մեզ՝ կեղտոտ հատակ,
Եվ իրենց մտքի գարշահոտ փալասները
Քսում են մեր դեմքին,
Որ մենք փայլենք.—
Նրանք հավաքում են մեր մանուկ ժպիտները
մեր դեմքերից,
Պահում են թթված տակառների ուռած կողերի մեջ,
Որ ամեն գիշեր իրենց ճարպակալած մարմինները օծեն.—
Նրանք մեր ստեղծածը խցկում են իրենց մտքի դույլերի մեջ,
Կախում են քավության անդունդների ճոճռան
ճախարակներից,
Որ պատմության համար,
Իբրև թե, մեղսագործ հոգիները
Ջարքերից սրբագործեն։

Նրանք ամեն վայրկյան
Փորձում են մերկացնել մեզ,
Երբ մենք մեր հոգու մոնումենտալ մերկությամբ
Կանգնած ենք անպարտելի
Ապոլոնի նման,
Կուրացուցիչ Զևսի,
Ադամի պես...

Մենք ամեն անգամ փոխում ենք մեր ոտքը,
Եվ մեր մյուս ոտքը միշտ մնում է կախված անդունդների վրա,
Եվ դեռ չենք կործանվում,
Քանզի մեր մի ձեռքը սիրո հավատարմությամբ

Զուլել ենք արևի ճառագայթին,
Իսկ մյուս ձեռքով շոյում ենք
Քրտնած ճակատների հոգսը հավերժական։—
Մեր մի աչքը ուղիղ նայում է ձեզ,
Մյուս աչքով հողից բույլ-բույլ ծաղիկները քաշում
ենք դուրս։

Իսկ դուք մեր հոգու ծաղիկների վրա
Տրորում եք մեր աչքերի մեղեդին ծաղկալույս,
Մեր հայացքի բույրը դարձընում եք մշուշ
Եվ ձեր հորինած մշուշների, մառախուղների մեջ
Փնտրում եք մեզ՝
Մեզ՝ անհայտ կորածներիս (ինչ հոգատար ձեռքեր)՝
Որ իբր վերացական մոլորության բավիղներում անլու
Մեր ուղեղը դարձրել ենք արևի փոշի,
Մեր երգերը դարձրել ենք անկապ մտքերի բնակարան,
Մոլորվել ենք այսպես,
Ու չենք կարողանում գտնել մի ճանապարհ,
Որ ելնենք դուրս։

Մեր մի աչքը նայում է ձեզ ուղիղ ձեր դիմացից,
Մյուս աչքով մենք ձեզ ետևից ենք նայում.
Եվ միշտ մեր մի աչքը ծիծաղում է անձայն.—
Մեր ծիծաղող աչքը մեր կյանքն է,
Մեր կենսունակ ոգին, մեր մշտագո ձայնը,
Մեր երգի շարունակությունն սկզբնաբան,
Մեր հավատի հավերժորեն շարժվող թևն անխափան,
Մեր սրտի երբեմն չարախինդ ընդվզումը ծիծաղելի,
Մեր անցյալը, մեր ներկան...
Օ, տեր աստված, մի՞թե
Նաև մեր ապագան։
Մեր ծիծաղող աչքը՝ իմաստուն,
անհիշաչար,
անխռովկան։

Թմրության ոխակալ մենամարտում
Մեզ համարում են կույրեր, խելագարներ, կաղեր,

Եվ մենք մաս-մաս, մաս-մաս փոշի կդառնայինք,
Եթե մեր մի աչքը
Չդառնար զոհ մյուս աչքի համար,
Եվ այս մյուսը հավերժորեն չծիծաղեր։

Տվեք ինձ իմ աչքերը՝
Որ ես կարողանամ
Հարազատի անբռնադատ մոտիկությամբ
Եվ իմ արյան մաքուր արցունքներով
Ողբալ կորուստներս,
Հարազատի անկողմնակալ հոգով
Մտնել մեղքերիս մեջ,
Եվ այդ ճշմարիտ ինքնագտնումի ճանապարհով
գնալ այնքան,
Մինչև կարողանամ գտնել բոլոր չիրագործված
հեքիաթներս,
Կարողանամ ելնել անմեռ երազներիս
Գույն-գույն օղակներով,
Կարողանամ գտնել անվախճան որոնումս,
Ասել է, թե՝ սերս,
Իմ հայացքի տամուկ խորության մեջ
Ծանր ու թեթև անեմ ծանրությունը մեղքիս.
Տեսնեմ, թե որտե՞ղ եմ ծիծաղել ես,
Տեր աստված, ծիծաղե՞լ եմ միթե,
Եվ մարդկության լուսավոր աշտարակների սրբության առջև
Այդ որտե՞ղ է, որ դարձել է մեղկ
Ու մեղանչել է հոգիս։

◆

Ուզում եմ հավատալ, որ ինչ-որ տեղ դուք կաք դեռ,
Իմ արյան անքավելի մեղսագործներ,
Դուք իմ զմրուխտի վրա
Թեև չեք կաթեցնում հասունության նարինջ,
Մի բուռ լաթի նման քամում եք իմ հոգին
Եվ «թույն է»՝ բղավում եք շողշողուն արցունքներիս,

Ձեք պարուրում ականջներս ծիածանի երաժշտությամբ,
Ձեք հագեցնում միտքս անհունությամբ խոսքի,
Ձեք զրչում, պարսավում եք,
Ձեք հոգում, այլ ցավում եք կարեկցությամբ իզուր,
Ձեք օրորում թեև իմ տառապյալ սիրտը երանությամբ ոսկի»
Այլ պատռում եք հոգիս
Ձեր բութ ծիծաղների հետևանքով սայրսուր,
Թեև դուք ինձ համար չկաք ինչ-որ մի ցանկալի պահի,
Ինչպես անմահական պտուղ,
Որին երազում են և ապրելիս, և մեռնելիս,
Այլ կաք՝ հավերժ ներկա,
Սիրտ, միտք, հոգի մաշելու չափ,
Ձեր գոյության մասին ի՞նչ եք խորհում արդյոք,
Արդյոք ի՞նչ եք խորհում իմ գոյության մասին։

Տվեք ինձ իմ աչքերը,
Եվ ես հայացքների անդորը ցնցուղներով
Կլվանամ հոգիները աղտից աշխարհային.
Նրանք մանուկների նման կլինեն պարզ,
Կծլվլան առավոտյան թռչնակների ձայնով աստվածային —
Մթության մեջ ողորկ լույսեր կգտնեմ ես,
Եվ երկնային պարգև կդառնա մեզ համար.—
Մութը հանգստավետ անկողին կդարձնեմ ձեզ,
Այլ ոչ եղծումների ու պղծության կամար։

Տվեք ինձ իմ աչքերը,
Քանզի հավատում եմ, որ ինչ-որ տեղ դուք կաք։

Ես ձեզ լռությունը կդարձնեմ մոտիկ,
Կբերեմ մոտ հեռուն,
Եվ դուք կշոշափեք այն կուրծքը փակ,
Որտեղ թռիչքների զորությունն է եռում։
Ես ձեր հոգնած սիրտը կլվանամ սիրով,
Ես ձեր մութ աչքերը կլվանամ սիրով,
Ես ձեր հոգիները անմահությամբ կօծեմ.
Տվեք ինձ իմ աչքերը.—
Դեմքիս վրա խամրող մեղքի զույգ դռները
Թողեք, որ ես գոցեմ։

ՄԵԿԸ ՏԽՈՒՐ Է, ԵՐԿՈՒՍԸ ՏԽՈՒՐ ԵՆ...

Մեկը տխուր է,
Երկուսը տխուր են,
Երեքը տխուր են,
Հարյուրը, միլիոնները,
Բոլորը տխուր են։

Մոտենում ես հանկարծ միլիոններից մեկին,
Եվ անփույթ ծիծաղների ծաղկեփունջը ձեռքիդ,
Հանում ես ծաղիկները մեկ-մեկ
Եվ թույլ գնդակների անզորությամբ
Շարում ես աչքերին, ձեռքերին, շուրթերին ու կրծքին.
Շարում-ծիծաղում ես,
Հավատալով մարդու ամենազոր խելքին։

Եվ դու, որ քո առջև
Տեսել ես աշտարակված մտքեր,
Լսել ես անդունդներից ելնող
Ոգելից ամենալիր խոսքեր,
Քո խոսքի հնչյուններն այլևս
Չեն դառնում արթնության զոդանջ,
Չեն դառնում թևեր զորավիգ,
Որ հոգնած մարմինդ օրորեն
Սեփական թախծի մեջ թերևս.—
Թերևս մատները շոյեն քեզ
Շուրթերի մելանխոլիկ քնքշությամբ.
Չէ՞ որ երբ աշունդ մոտ է,
Հնչյուններդ նետում ես
Աշնան տերևների անփութությամբ,
Բայց աշնան տերևների գույների հարստությամբ։
Նետում-ծիծաղում ես ու ժպտում ես կրկին՝
Հավատալով մարդու ամենազոր խելքին։

Եվ մարդիկ, որ ունեն խելագարներ,
Իմաստուններ մտքի,
Իմաստուններ հոգու,
Որ ունեն շղթաներ,

Շղթայակապ երգեր,
Նահատակներ ունեն
Մարմնավոր մեղկ կրքի,
Որոնք՝ այդ «հրեշտակները»
Իրենց կիրթ հոգիները
Խարսխում են մաքրության անբռնելի գաղափարին,
Եվ մարդիկ, որ ունեն առաջնորդներ հոտի,
Եվ ոչինչ չունենալու համար՝
Ունեն ծաղրածուներ,
Որ ունեն դահիճներ-տափարակներ վշտի,
Երջանկության անվերջ փոքրացող ածուներ,
Որ ունեն խրտվիլակներ— տիպար կատարյալի,
Ունեն պահապաններ— փարատիչներ մեղքի,
Եվ ծակծկված հոգի— անցուղիներ ելքի,
Քառակուսի զանգեր— կաղապարներ երգի,
Մտքի,
Երգի,
Խոսքի,
Սրբազնագույն կրքի,
Մաքուր արվեստների և անմաքուր հանգի,
Սեռամոլոր սիրո և խակ ակնածանքի,
Դեռ չաղարտված հոգու և աղարտյալ վարքի,
Սահման դյուցազնության և անսահման խելքի,
Ունեն կաղապարներ վերջին մեղանչումի և կտտանքի,
Եվ աստվածներ, ավաղ, և աստվածներ չունեն.—
Նախ լռում են մի պահ,
Ապա դուրս են քաշում քրքրված հոգիներից
Արհամարհանքի շղթաները փայլուն,
Որոնցից դառնությունն է կաթում հավերժական մեղքի.—
Քաշում-փաթաթում են քո մարմնի շուրջ
Մինծաղների թունոտ դամբաններում փակված
Դառնությունը կյանքի։

Իսկ դու ասել էիր, թե մի թախծեք,
Մի տխրեք, ամեն ինչ լավ կլինի։
Մի ծառ ծաղկում է,
Երկրորդը ծաղկում է,

Երրորդը ծաղկում է,
Հարյուրը, միլիոնները,
Բոլորը ծաղկում են։—

Ամբոխը միջատների նման ցրվում է ծառերի մեջ,
Եվ բոլոր ծառերի տակ
Ժպիտների կանաչ ծածկոցներ են փռվում.
Բույրերով, արցունքներով շաղախվում են հանկարծ
Հոգիները ստերջ,
Եվ ամուլ աչքերի բորբոսը ճեղքելով,
Քանդելով միայնության հանգույցները քարե,
Ծառերի արմատներին ժպիտներ են խրվում։

Եվ հանկարծ ներկան կշտացած աչքերով նայում է—
Սակայն ոչ անցյալին,
Ոչ էլ ապագային—
Ծաղրածուն ոստոստում է,
Արքան ծիծաղում է,
Ծաղրածուն թքում է իր արքայի ոսկեբանված գահին,
Արքան ծիծաղում է բարձր ավելի.—

Մի ծառ չորանում է,
Երկրորդը չորանում է,
Երրորդը չորանում է,
Հարյուրը, միլիոնները,
Բոլորը չորանում են...

Ամայի անտառները դառնում են կախաղաններ
Անեղծելի, մաքուր, սպիտակ փաթիլներին։

Մարդկային նոսրացած ամբոխը
Ճոճվում է կախաղանների պես.—

Կախաղաններն իրար գլուխ են խոնարհում.
Եվ ոգեղեն փայլը Սոկրատեսի,
Ապոլոնի հանճարի զրնգացող մերկությունը,
Նարեկացու մեղքը ամենազոր,
Տոլստոյի ոգեպատիր անսահմանությունը
Դագաղի մեջ դրած,
Տանում են ռուսաստանյան մի հին ու քրքրված սայլով։

Մարդկային նոսրացած ամբոխը ճոճվում է
կախաղանների պես՝
Սմքած, դժգունացած, մեռած բույր ու թույրի
Անհուսատու փայլով։

Վաղեմի նժույգները քայլում են հենակների վրա.
Նրանց քառատրոփը
Հեռացող ժամանակի սաթե ականջներում
Տկտկոց է դառնում,
Կախաղաններն ընկնում են,
Ու նորերն են հառնում։
Քուռակները քիչ-քիչ ավանակի
Կերպարանք են առնում։
Կախաղաններն իրար գլուխ են խոնարհում։

Կախաղանները մարդկանց շարում են իրար կողքի,
Եվ ձեռքներին պահած դրոշակներ արյան,
Արնաքամ մարմինները առաջ են խթանում.
Առաջ, առաջ, առաջ։— Դեպի ո՞ւր են տանում,
Ո՞ւր են տանում, ասեք։
Ո՞ւր են տանում, ասե՛ք
Արարատներն ա՛յս սեգ։

Կախաղաններն իրար գլուխ են խոնարհում.
Փտած ոսկորներով զարնվում են իրար
Եվ ոսկրային— դեղին քրքիջներ են հանում։
Զանգակների ձայնը՝ շոյող, անբռնելի, կանչում է քեզ,
Եվ դու մոլորվում ես կախաղանների անտառի մեջ։
«Ո՞վ ես դու,
Որտեղի՞ց ես եկել,
Եվ ո՞ւր պիտի քայլես...»։

Ականջներիդ մանուկ սրսփումի վրա
Մի բու կռնչում է,
Մի վագր մռնչում է,
Մի նժույգ տկտկում է հենակների վրա.—
Մեկը տխուր է,

Երկուսը տխուր են,
Երեքը, միլիոնները,
Բոլորը տխուր են։

◆

Ասում են հայտնվել է մարդկության վերջին Մարգարեն,
Եվ հասակը կարճ է,
Աչքերը գեղեցիկ են Սիոնի որդիների աչքերի պես,
Եվ նրանց դեմքերի պես դեմքը հոգնատանջ է,
Ձեռքերը գեղեցիկ են հողի նման,
Որի ճաքճաքերից ծաղիկներ են ծնվում.—
Եվ հասակը կարճ է...

Աշխարհը բարձրանում է իր թաթերի վրա,
Պարանոցը երկարում է առաջ,
Որ տեսնի վերջին մարգարեին...

ՄԱՐԳԱՐԵԻ ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Եթե մարգարեներ կան դեռ այս աշխարհում,
Եթե եղել են մարգարեներ՝ կիզիչ իմաստությամբ,
Եթե եղել են մտքի հնձանները քամած
Երգեցիկ ճշմարտության այրեր՝ խոնարհ, խոհուն,
Եթե եղել են ու կան դեռ,
Արդյոք ինչի՞ է հասցրել մեզ
Նրանց տառապանքը անհուն,
Նրանց մտքի ճիգը՝ ազնիվ ու ծանրաբեռ,
Նրանց երազների ճախրանքը՝ մաքուր և անանուն.—
Այդ ամենը արդյոք ինչի՞ է հասցրել մեզ,
Եվ մեր վաղը արդյոք դեպի ո՞ւր է տանում։

Մի՞թե նրանք մերկ ու անապաստան
Ձնստեցին իրենց քանդված, խարխուլ տակառներում,
Մի՞թե որպես ծաղիկ, որպես
Բնության ձայնը մերկ

Զբուսնեցին նրանք հողե ծաղկամանում
Եվ բիրտ քամիների երթերի տակ հանգան.—
Նրանց կողքով անցավ կյանքի ընթացքն անկանգ՝
Իմաստության համար հավերժորեն պարտված,
Սակայն արշավանքով զորեղ ու հաղթական։
Նրանք լույսը իրենց տկլոր մարմիններին
Որպես զգեստ հագան,
Եվ ձեռքներին բռնած փոքրիկ լապտերիկներ,
Մարդ փնտրեցին այս գորշ
Ամբոխի մեջ անծայր,
Եվ ինչ թողեցին մեզ, բացի
Զքնաղ մի լեգենդից,
Միֆից, առասպելից՝ զարմանալի պայծառ։

Ախր, ի՞նչ թողեցին մեզ,
Նրանք ի՞նչ թողեցին մեզ
Եվ ի՞նչ կարող էին թողնել,
Երբ մսեղեն զորքը պաշարում էր նրանց
Իմաստությունն անեզր,
Պաշարում էր նրանց միտքը,
Որպեսզի այն օրհներ
Գահերի ցնծությունն ու արյան խրախճանքը անսեռ։

Այդ մսեղեն զորքը ասպատակում,
Գրոհում էր տաճարներ ու բերդեր,
Տափաստաններ, լեռներ,
Օվկիաններ ու գետեր,
Գրոհում էր այն ամենը, որ կար,
Որ ապրում էր արյան մեջ մեր հին,
Որ պահանջում էր կորով ու քանքար,
Եվ մեզ, օրորելով,
Ապրեցնում էր դարձյալ անդունդների զեհին։
Նրանց ոգին, որպես փառքը իրենց ժամանակի,
Խաղում էր նիզակների սայրին,
Փայլում էր, շողում, շողշողում,
Երգում էր արևող օրհներգը իրենց տան,
Թեև նիզակները

Իրենց ճառագայթը բորբոք
Այլ տեղ էին ուղղում,
Եվ նրանք էին որոշում ընթացքը պատմության։
Իսկ հետո մարգարեներ՝ զորքով, զորագնդով,
Մարգարեներ և ինչ մարգարեներ.—
Նրանք քառատում էին ամբոխը
Զարմանալի խանդով,
Բաժան-բաժան անում ու բզկտում անվերջ,
Նրանք իրենց բարբաջանքը աննյութ
Մաղում էին տարտամ հոգիների վրա՝
Որպես սուրբ միջնորդներ
Անհուն ժողովրդի,
Նաև
Բազմապատիկ անհուն Աստծո միջև։

Նրանք ժողովրդին բաժանեցին անմիտ բանակների՝
Անհավատներ,
Հետո՝
Հավատավոր բանակ.—
Եվ մարգարեն մի՞թե պիտի խելագարվի այնքան,
Որ բարբաջի՝ «Նրանք
Փափագում են, որ դուք անհավատներ դառնաք։
Անհավատներ դառնաք, ինչպես
Անհավատ են իրենք,
Եվ հավասար դառնաք...
Ուրեմն՝ բարեկամներ դուք չեք լինի, քանի
Դեռ չեն գաղթել նրանք ճանապարհով Աստծո։
Ու թե մերժեն հանկարծ,
Դուք բռնեցեք նրանց,
Սպանեցեք նրանց,
Ուր էլ գտնեք նրանց...»։
Իսկ մեզ ի՞նչ է թողել նրա
«Իմաստությունն անքննելի»։
Նրա ջանքը, տագնապը, եռանդը,
Նրա միտքը ,որ այսօր էլ էլի
Դեռ բորբոք է պահում իր նախնական խանդը։—
Նա մեզ ի՞նչ է թողել,

Ի՞նչ է թողել նա մեզ.
Մեզ թողել է զոհեր, կրկին զոհեր, զոհեր,
Զոհված երազների հիշատակներ անմար,
Քանզի այս աշխարհում միշտ եղել են ու կան
Միլիոնավոր սրտեր,
Որոնք պատրաստ են, ախ, որ թիրախներ դառնան
Մի մոռացված կամ նոր գաղափարի համար։

Մի՞թե նա թողեց մեզ գոնե մի ձեռք,
Մի քնքշություն անհուն,
Որ համբույրի նման իջներ մեր վերքերի վրա,
Մի աչք, որ շոյեր մեզ
Եվ տար համբերություն մի մեծ,
Ինչպես այն տառապյալ Որդին,
Որ հավաքեց բույրերն ամեն ծաղիկներից,
Որ բնության մաքուր արցունքի մեջ շաղվեց,
Դրեց մեր վերքերին,
Որ քարի հետ քաղվեց,
Որ հողի հետ մաղվեց,
Որ աշխարհի վշտից քամվեց, անվերջ քամվեց,
Մաքրեց հոգիները թույնից, դավից, քենից.
Էհ, այդքան թույն ու դավ ինչպե՞ս պիտի մաքրեր՝
Եվ նա իր սեփական խաչին գամվեց։
Ախր, նա ո՞ւր, ինչպե՞ս և ի՞նչ պիտի աներ։
Նիզակը որոշում էր ընթացքը պատմության,
Իսկ նա մնացել էր անորդի ու անհեր։

Նա որբ էր մնացել
Կամ գուցե նա չկար,
Կամ գուցե չէր եղել,
Զառանցանք էր, չկար...
Ինչպես որ չկա այլևս աշխարհը հին,
Սակայն այցելում է մեզ մեկ-մեկ
Վհատության, ցավի կամ հաղթության պահին։

Նա չէր եղել, չկար.—
Իսկ մեզ հարկավոր էր, որ ամրանա ոգին,
Որ մաքրվի մարդը թույնից, դավից, քենից,

Որ սարսափի առջև նա չմնա տկար.
Վախով քուն չմտնի ու չարթնանա քնից։
Իսկ ի՞նչ թողեց նա մեզ.—
Երկար դարերի մեջ
Կարծես ցնդեց, անցավ հեքիաթը բարության,
Եվ մնաց մեզ սարսափ մի անանուն,
Մի վախ
Անտանելի,
Մի զարհուրանք անհուն,
Դատաստանի տագնապ, որ մեզ
Անդամալույծ անում
Եվ մեր հոգիներից անվերջ ու անդադար
Քավության թե ցավի արցունքներ է քամում։
Իսկ մեզ հարկավոր էր, որ ինչ-որ տեղ մարդը
Մարդավայել մի մեծ կռվից հետո
Վերջացրներ պայքարն ինքը իր մեջ.
Կռիվն ընդդեմ չարի, գարշության դեմ քծու,
Ընդդեմ ավերակող ու ճարակող հրի,
Եվ կռիվ տար ոչ թե՝ ընդդե՞մ, ընդդե՞մ, ընդդե՞մ,
Այլ լոկ՝
Հանո՞ւն,
Հանո՞ւն,
Հանո՞ւն ուրիշների։

ՀԱՎԱՏԻ ՄԱԳԱՂԱԹԵ ԼԵՌՆԵՐ

Այդ որտեղի՞ց ծնվեց ճանապարհի միտքը
Մարդու մշուշաբույր, մերկ գանգի մեջ։

Այդ ո՞վ էր, որ ուներ թախծապարուր հոգի,
Անօթևան, անբուն թռչունի պես
Խեղճ գլուխը դրեց իր թևի տակ
Ու ճանապարհ ելավ,
Ու ճանապարհ գնաց՝
Իր աչքերը թավշե ափերի մեջ դրած։
Իր ոտքերի աներևույթ սյուները թողնելով

Օդի թախծանվագ ճեղքվածքներում։
Այդ ո՞վ էր, որ գնաց,
Ավանդելով թափառումի
Անհանգրվան ոգին։
Եվ մենք՝
Սև գիշերվա սև կոնքերին նստած,
Նրա եղջյուրների
Երկնաթռիչ ծեղ-ծեղ պատուհանից
Լուսաստղ էինք ուտում,
Ուտում էինք խոսքեր
Ու խոսքերի պատրանք մի սպիտակ,
Ու խոսքերի զնգոց կապտակարմիր,
Ու խոսքերի դեղին
Արյունն էինք ըմպում
Վաղնջական տենդով.—
Խմում էինք անապատի ավազների անհագ
Շոգ ծարավով,
Եվ մեր մարմինների մոխիրները հալված
Կպչում էին իրար լեզվով պապակ
Ու անարյուն խանդով։

Եվ խոսքերի փերթ-փերթ ստերն էին
Մեր սնունդը միակ։

Մեր ճանապարհին
Աննվազելի ոգևորությամբ
Ծամում էինք մենք
Հավատի մագաղաթե լեռներ.—
Աչքերի մենաստանները դարձնում էինք
Հանգստավետ հանգրվաններ կորած հոգիների,
Ստինքների ճերմակ տաճարները դարձնում էինք
Նվագարան,
Եվ մեր մատների դողդոջ հպումներով
Երգում էինք միայն ծննդոցի
Ու Հարության երգեր։

Մեր մատների հոգնած շրթունքներով
Բիրտ ժայռերի վրա
Գգվում էինք լուսնի դեմքն սպիտակ,
Ճեղքում էինք նրա չվերծանվող հեռուն,
Հետո մաս-մաս
Մաս-մաս
Թաղում էինք ճամփի քարերի տակ։

Ժայռերի կրծքի վրայով հոսում էր երկինքը,
Եվ նրա կապույտ թարթիչներից
Աղմոսներ էին թափվում անդունդների մեջ,
Երգի ծաղկաթերթերը չէին դժգունում
Կապտաթարթիչ երկնքի սև շուրթերի տակ։

Մոռացության անմեկնելի ու բյուրհանգույց
Ոլորանի վրա,
Պատարագի կանգնած ստվերների կողքով,
Խուլ զնգալով՝ ինչպես ձորը ընկնող լուսին,
Քարավանն էր անցնում Հույսի ու Հավատի։

Օ, այդ ճանապարհը,
Օ, այդ երգը գրված դաժան ձեռքով՝
Մեր տրտմության համար ու մեր բախտի,
Որի կրծքի վրա
Անջնջելի հետքեր թողեցինք մենք
Հոգով,
Մեր աչքերով,
Մեր շուրթերով,
Ձայնով,
Հառաչանքով հոգնած մեր ծնկների,
Սրունքների դողով,
Մեր մոլորյալ բախտի տարօրինակ խաղով
Եվ ապրելու տենդով ամենազոր։
Օ, այդ ճանապարհը...

Որ անշուրթ էր, անաչք,
Սակայն փրկում էր մեզ,
Դարսում իրար վրա
Իր կոկորդի փոշոտ խոռոչներում։
Իսկ երբ ծիծաղում էր,
Մեր վրայից փոշին բարձրանալով,
Մշուշում էր կորած մեր ետդարձի ճամփան։
Իսկ մենք կարող էինք վերադառնալ,
Թեկուզ փակ աչքերով, թեկուզ դյուրապատիր։
Չէ՞ որ մեր աչքերը թողել էինք մեր ետևում։

Հազարավոր մղոն հեռվում թողած
Մեր աչքերի
Թափանցիկ ու տաք արցունքն էր, որ
Գլորվում էր մեր այտերի մաշված ժայռերի միջով։

Տիեզերքի բոլոր անկյուններում
Կա մի արցունք,
Եվ անպայման՝ անդունդների վրա կախված։

Եվ մենք, մեր արցունքը գրկած,
Գնում էինք առաջ,
Երբ նա, համբարձվելով, դարձավ մի զանգ,
Կախվեց երկնի կրծքից,
Ապա մեծանալով՝
Երգեց,
Երգեց,
Երգեց,
Ահագնացող մի երգ մեր փակ ականջներում։
Մոլեգնությամբ երգեց,
Տառապանքով,
Խոհուն մի տրտմությամբ.
Եվ աշխարհը իր փակ ականջներով
Դեռ լսում է երգն այդ ամենօրյա
Եվ ասում է՝ երկնում
Կա մերկ երկինք։

Ու զնգում է զանգը
Մի մոլեռանդ կրքով
Ու հարատև սիրով Այն Ամենի,
Ինչը զարդարում է երկնի մերկությունը։

Եվ աշխարհը իր փակ ականջներով
Դեռ լսում է երգն այդ
Եվ ասում է՝
Թե երկինքը մերկ է,
Թե երկնքում կորած աստղեր կան լոկ,
Թե երկնքում Աստված
Բացակա է։
Չկա։

Ու զնգում է զանգը
Երկնի վրա թաղված Աստվածների համար,
Մարդու և լեռների կախարդանքի համար,
Կյանքի համար, մարդու, կյանքի համար։
Եվ աշխարհը իր փակ ականջներով
Դեռ լսում է երգն այդ՝ ծունկի իջած,
Եվ երկնքի հանդեպ իր մերկ ստինքներով
Դեմքը դեպի արև-աղոթարանն արած,
Շշնջում է՝ «Երկրում
Աստվածներ կան թաղված,
Եվ հոգիներ չկան առանց մեղքի։

Ամենակալ երկինք,
Մեր ժպիտը ծովից հանած քարի նման
Ջորանում է քո բորբ ճշմարտության առջև...
Վերընձյուղած սիրով մեր շուրթերը բացվում,
Քո անունն են տալիս մեր փակ աչքերի մեջ»։—

Ու զնգում է դարձյալ այդ արցունքե զանգը
Պատարագվող անդուռ մի վեհությամբ՝
Հանդիսավոր,
Հանդարտ,
Վերածնված...
Եվ մենք մեր հին ցեղի հանդիսավոր երթով,

Մեր հին ցեղի հանդիսավոր գավազանը գրկած,
Մեր նոր պճնանքներից ազատվում ենք հերթով,
Մեր ճակատից աղի քրտինքը քամում
Ու գնում ենք՝ մեր ձիգ մարմինները բրգած։

Մեր անդուլ, անհանգիստ երթի ճանապարհին ընկնողների վրա գնում ենք մեր լեռնաշխարհի երբեմն թեթև, երբեմըն ծանր քարերից, որ տիեզերքում իր պտույտը շարունակի Հիշատակների երկիրը։

ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՄ ՔԵԶ, ԵՐԿԻՆՔ...

Օ, լուության կարկաչ,
Քո միալար հոսքով
Դու քշեցիր-տարար այն ամենը, որ մենք
Անհետացող կյանքի փոշի աճյուններին
Կամ կաթեցրինք խոսքով,
Կամ անխոսք դրոշմեցինք՝ «մեղա, մեղա, մեղա...»։

Հիմա, այս վայրկյանին
Եթե իմ մեղապարտ հոգով լցված իմ աչքերը հանկարծ
Բարձրացնում եմ երկինք
Կամ խոնարհում եմ ցած,
Այսպես՝ երբ խոնարհվում կամ համբարձվում եմ վեր,
Իմ դեմ ծանրանում է վսեմաշուք պատկերն այն մեծ
Մարգարեի,

Որ կնքված էր աջով արարչագործ ոգու
Եվ աղաղակով մրմնջում էր՝ «մեղա...»՝
Այս է հաստատուն խարիսխը քավության՝ շշնջալով։
Ուրեմն՝ ձեզ մեղա՝ ամուլ արգանդներիդ,
Որոնք չէին կարող Քրիստոսներ ծնել,
Ծնել մարգարեներ,
Եվ աստվածներ ծնել,
Աստվածային ախորժելի, բուրյան, սուրբ մաքրությամբ
Անաստվածներ ծնել,
Որոնք անաստված են միայն նրա համար,
Որ ծնվել են աստված։

Օ, մեղա ձեզ, մեղա,
Ձեր ձայնարկու անգոյության վշտի բազմագուն գորգերին
Անշշուկ հպում են թաթերն իմ ոտքերի
Եվ զնգացող իմ տխուր մատներով
Շոշափում եմ ճոճքերը թափուր,
Մի կաթիլ անաղարտ աղերսանք
Դնում եմ ամեն մի ճոճքի մեջ,
Թե, օրհնյալ, մեղքերով բեռնաբարձ,
Աչքերով աղեխարշ
Ես ինչպե՞ս լցնեմ այս սրբության անոթները դատարկ։
Այդ ես եմ մեղապարտն այն նսեմ,
Որ սիրո ճառագայթն արգանդներից ներս ներարկելու փոխան,
Մահու ճառագայթ եմ մեխել
Ջծնված Քրիստոսի ճակատին։

Այդ ես էի, որ գլխաբաց,
Բազկացրիվ,
Մեջտեղ մտա, որպես
Մկրտության սեղան,
Սակայն մկրտվողներն ինձնից փախան, փախան,
Անդառնալի փախան...

Օ, մեղա ձեզ, ամուլ
Արգանդներիդ մեղա,
Քանզի ես կուզեի ձեր անապատ կրծքի կանաչ
անկյուններում
Մանուկ հրեշտակների պարսեր խաղան,
Ես կուզեի, որ դուք լուսավորված լինեք
Մանուկ ձայնիկների թրթռուն գունախաղով,
Եվ պճնվեք նրանց անպաճույճ պճնանքների
Պերճանքներով վճիտ,
Եվ մաքրվեք նրանց մանուկ սրսփումի
Դողով, շաղով, շողով։
Սակայն մեղա դարձյալ,
Ողջ աշխարհը լցվեց անթիվ կույր ու կաղով,
Որոնք ներքինացրին առնությունը խղճիդ։

Զծնվեցին նրանք,
Որ բույր էին համակ,
Եվ ամփոփված էին արարողի վսեմ պատկերի մեջ։
Նրանք անէության փափուկ ոլորտներում
Մնացին լուռ, որպես ծլվլոցներ անձայն,
Նրանք օդում, որպես չբռնվող հիացք,
Թափառում են անվերջ,
Նրանք անցան, անցան,
Նրանց օրոցքներից էությունը հանվեց.
Քրիստոսների բույներ-օրոցքները թափուր
Մի անլեզու ճիչով անէացավ։

Իմ տխրության գորշ-գորշ հովիտների վրա
Խաղում է ձյունը մեղմ,
Եվ ես հիացմունքով կրկնում եմ դարձյալ՝
«Շնորհակալ եմ քեզ, աստված,
Որ այսքան մաքուր մի բան կա դեռ երկնքում»։

Հայացքս շպրտում եմ մառախուղի վրա,
Ճոճքի պես օրորվում է մեզը ամենօրյա,
Եվ սիրտս ճզմելով, քամում է մեկն իր ձեռքում։

Ես հովտի մեջ բուսած մաքուր շուշան էի,
Մաքուր հովիտ էի, կապույտ սարեր,
Սակայն ի՞նչ պատահեց, որ արշալույս չեղա.
Ի՞նչ պատահեց— խաբվեց երկինքը շափյուղա.—
Օ, մեղա քեզ, երկինք, մեղա, մեղա...

Ես մոռացել եմ քեզ,
Ինձնից ծածկել եմ քո դեմքը՝ հավերժական մաքուր,
Քո հարաշարժ հանդարտությունը հանել եմ իմ միջից...
Քո մաքրության դեմքին փորձարկել եմ մեկ-մեկ
Բոլոր ձանձրույթները ֆիզիկական,
Քո չպղծված կրծքին եղծված իմ շուրթերով
Որպես ժառանգություն
Դրոշմել եմ համբույրն իմ քիմիական,
Եվ ինձ՝ մեղապարտիս,

Հռչակելով որպես քո եզակի արքան,
Քո տերն ամենազոր,
Մոռացության, վշտի, կարեկցանքի, ցավի,
Անհուսության, մեղքի,
Այլասերված երգի,
Այլանդակված կրքի զսպանակին հեծած,
Թռչկոտում եմ փողոցների ծուռտիկ անհուսության
ոլորքներով։—
Շենքերի արանքներից նայում եմ հեռախույս քո
պատկերին,
Եվ իմ պարզ աչքերի անգիտակից մեղքում
Փլվում ես դու փոքր-ինչ համբառնալով,
Եվ ոչ այնպես, ինչպես աշտարակն է փլվում։

Օ, մեղա քեզ, երկինք,
Մեղա ամեն ինչից,
Մեզնից ծածկել ենք քո դեմքը՝ հավերժական մաքուր,
Քո հարաշարժ հանդարտությունը հանել ենք մեր միջից։

◆

Երկինքը մաքուր է, սպիտակ անսահման,
Անսահման ձյունների անեզրական մի դաշտ,
Եվ կարմիր թավիշ հագած մանկան նման
Խաղում է արևը ձյունների մեջ.—
Խաղում, գլորվում է մանուկ մի հեթանոս,
Մանուկ մի ձյունապաշտ, կրակապաշտ...

Եվ այսպես երկնքով մկրտվում իմ հոգին,
Եվ դեմքս դեպի վեր եմ շուռ տալիս ես կրկին,
Եվ նորից ես նույնն եմ մրմնջում իմ մտքում՝
Որ այսքան մաքուր մի բան կա դեռ երկնքում»։
«Շնորհակալ եմ քեզ, աստված,
Որ այսքան մաքուր մի բան կա դեռ երկնքում»։

Սպիտակ ձյունների մեջ այս բորբ մանուկը թող
Հավերժորեն խաղա,
Իսկ ես պիտի կրկնեմ՝

Արեգակ, քեզ մեղա,
Մենք մոռացել ենք քո վեհությունը միստիկ,
Եվ քեզ քո երկնային անձեռնահաս վերից
Քարշ ենք տվել ճղճիմ լակոտի պես
Դեպի մեր պոետական շաղակրատանքի
Լաբիրինթը ճղճիմ.—
Եվ մեր բորբոսաբույր մտքերի մեջ հիմա
Շղթայակապ ես դու
Քո շողերի թվով շղթաներով,
Քանզի քո ամեն մի շողից
Հազարավոր երգերի դիակներ են կախված,
Քանզի քո սրտի մեջ հիմա ողբի,
Ցավի,
Ճիչի,
Աղերսանքի
Հազար միլիոնավոր աճյուններ են թաղված.
Քանզի քո արյունը մեր դառն, անբմպելի
Արցունքով է շաղված։
Ես վերստին կրկնեմ՝
Արեգակ, քեզ մեղա,
Քանզի ոչ դու կարգին մի արեգակ եղար,
Ոչ էլ ես մի կարգին արևապաշտ եղա...

ԽԱՉՎՈՂ ԲՈՒՅՐԵՐ

Կապույտ իրիկվա ծածկոցների մեջ
Փաթաթել եմ իմ ձեռքերը դեղին.—
Զգացմունքներս բռնում եմ մեկ-մեկ
Ու շպրտում եմ հոգնած երկնքի կապույտ աղեղին։

Մատներիս վրա խաչվում են բույրեր՝
Իրիկնամուտի մշուշում կորած,
Կապույտ իրիկվա իրիկունը սև
Աչքերիս մեջ է իջնում մոլորված։

Կապույտ իրիկվա իրիկունը սև
Ծնվում է սառչող լեռների կրծքից,—
Գետերը իրար փաթաթվում են մեղմ,
Եվ մի կիսավեր տակառի վրա
Լուսին է ընկնում երկնքի ձեռքից։

Ու հին տակառի ատամներն ավեր
Ուտում են լուսնի հացը սպիտակ,
Ու լուսնի դեմքը ժպտում է տխուր
Մի ուրիշ լուսնի սառած դեմքի տակ։

Ու ես նստում եմ ավեր տակառում,
Առագաստներս պարզում եմ քամուն,
Քամին բերում է աղմուկն երեկվա,
Լցնում է տակառն ու էլ չի տանում։

Աղմուկը այդպես խոսում ձանձրալի,
Բառեր է ասում իբրև ամոքիչ,—
Իմ դեմ հառնում է անցյալն անցյալի,
Եվ իմ աչքերը թացանում են քիչ։

Անցյալն անցյալի նայում է վրաս,
Ախ, գոնե մի խոսք ասեր սրտալի,
Առագաստներս կիջեցնեի ես
Եվ իմ տակառում կապրեի էլի։

◆

Այս ինչ է, ասված, որ միշտ հոլովվող
Մի տառապալից բան կա մեր սրտում.—
Պոետիկները շրջում են մեր շուրջ
Եվ կյանքի մասին տխուր երգեր են մեկ-մեկ
զկռտում։

Այնպես, որ կարծես ոչ մի ժամանակ
Կյանքը մեզ կարգին մի բան չի ասել.—
Մեր լուրջ դեմքերին ինչ-որ անհեթեթ բծեր են
փայլում
Կամ ինչ-որ խազեր...

Եվ այլանդակված պատկերներ հոռի
Ծամածռվում են իմ աչքերի դեմ.—
Խեղված դեմքերի շարականները գալիս են հերթով,
Որ մեր մեջ մեր մեծ երկինքը ջարդեն,
Աստղերը քանդեն։

Նրանք բազմում են գահերի վրա,
Բառեր են ասում շուրթերով ճողված,
Իսկ մենք մեռնում ենք մեր ձեռքերի մեջ՝
Մեր աստվածների փայլով սքողված։

Եվ չեմ հասկանում, թե այդ ո՞րտեղից
Ծնվեցին այսքան դեմքերն հաշմանդամ.—
Տխուր-տառապած աղաչանքներով
Նայում է վրաս տակառն անատամ։

Ախ, հենց նրանով ծովերի վրա
Հսկա ալիքներ ես կշարդեի,
Եթե թողնեին, որ գեթ մի վայրկյան
Իմ պատկերն իմ մեջ բացահայտեի։

Ես կփովեի գետերի վրա
Փափուկ, թափանցիկ աղջամուղջի պես
Եվ հովիտների լայնարձակության
Ցավի տխրությամբ կիջնեի կրկես։

Եվ կնայեի ձեր աչքերի մեջ՝
Թախիծս սեղմած իմ ոտքերի տակ։
Բայց տխրությունը հայելի հո չի՞,
Ցխրությունն, ավաղ, տիղզերք է փակ։

Մնում ասացվերի կենդանի վկա,
Ամբ լուռ սահում է դագաղը լուսնի.
Ախ, ինչ չարգելք ակվարիումն այդ լուռ
Հրանից պիտի պատկերս հյուսվի։

◆

Ինչ էլ որ լինի, ես իմ տակառում
Նստել եմ ահա արքայազնի պես,
Առագաստներս պարզել եմ քամուն
Ու հին թախիծով իջնում եմ կրկես։

Ավեր տակառի ատամներն ավեր
Ուտում են լուսնի հացը սպիտակ,
Եվ լուսնի դեմքը ժպտում է տխուր
Մի ուրիշ լուսնի սառած դեմքի տակ։

Կորած ձայներ են հասնում ականջիս,
Հարազատների տխրափայլ երգեր,
Կորած համբույրներ հպվում են դեմքիս,
Ինչպես կաթնաբույր, սփոփող ձեռքեր։

Քաջալերանքի խոսքեր եմ լսում,
Լսում եմ ձայներ՝ հազար կողմանի,—
Ախ, լցվեք այնպես, իմ առագաստներ,
Որ շունչըս անգամ ձեզ թռցնի-տանի։

Սակայն նավակը մնում է տեղում,
Իմ շրթունքներն են ուռչում ավելի,
Իմ թարթիչներից կախվում են աստղեր,
Եվ իմ ականջում լսում եմ ձիու խրխինջ սիրելի։

Իմ ձեռքերի մեջ զգում եմ սանձեր,
Նրանք այդ փայլն իմ բերանն են տանում.—
Ի՞նչ է, իմ ձեռքերն ինձ ձեռ են առել,
Աշխարհի բանը նոր եմ հասկանում։

◆

Կապույտ իրիկվա ծածկոցների մեջ
Փաթաթել եմ իմ ձեռքերը դեղին.—
Գիշերն անկյունով իր ամենասուր
Իջել է հոգնած մարմնիս աղեղին։

Եվ այլանդակված պատկերներ հոռի
Ծամածռվում են իմ աչքերի դեմ.—
Խեղված դեմքերի շարականները գալիս են հերթով,
Որ մեր մեջ մեր մեծ երկինքը ջարդեն,
Աստղերը քանդեն։

Նրանք բազմում են գահերի վրա,
Բառեր են ասում շուրթերով ճողված,
Իսկ մենք մեռնում ենք մեր ձեռքերի մեջ՝
Մեր աստվածների փայլով սքողված։

Եվ չեմ հասկանում, թե այդ ո՞րտեղից
Ծնվեցին այսքան դեմքերն հաշմանդամ.—
Տխուր-տառապած աղաչանքներով
Նայում է վրաս տակառն անատամ։

Ախ, հենց նրանով ծովերի վրա
Հսկա ալիքներ ես կջարդեի,
Եթե թողնեին, որ գեթ մի վայրկյան
Իմ պատկերն իմ մեջ բացահայտեի։

Ես կփռվեի գետերի վրա
Փափուկ, թափանցիկ աղջամուղջի պես
Եվ հովիտների լայնարձակության
Ցուլի տխրությամբ կիջնեի կրկես։

Եվ կնայեի ձեր աչքերի մեջ՝
Թախիծս սեղմած իմ ոտքերի տակ։
Բայց տխրությունը հայելի հո չի՞,
Տխրությունն, ավաղ, տիեզերք է փակ։

Մեռած աստղերի կենդանի վկա,
Ուր լուռ սահում է դագաղը լուսնի.
Ախ, եթե ջարդեք ակվարիումն այդ լուռ,
Նրանից պիտի պատկերս հյուսվի։

◆

Ինչ էլ որ լինի, ես իմ տակառում
Նստել եմ ահա արքայազնի պես,
Առագաստներս պարզել եմ քամուն
Ու հին թախիծով իջնում եմ կրկես։

Ավեր տակառի ատամներն ավեր
Ուտում են լուսնի հացը սպիտակ,
Եվ լուսնի դեմքը ժպտում է տխուր
Մի ուրիշ լուսնի սառած դեմքի տակ։

Կորած ձայներ են հասնում ականջիս,
Հարազատների տխրափայլ երգեր,
Կորած համբույրներ հպվում են դեմքիս,
Ինչպես կաթնաբույր, սփոփող ձեռքեր։

Քաջալերանքի խոսքեր եմ լսում,
Լսում եմ ձայներ՝ հազար կողմանի,—
Ախ, լցվեք այնպես, իմ առագաստներ,
Որ շունչըս անգամ ձեզ թոցնի-տանի։

Սակայն նավակը մնում է տեղում,
Իմ շրթունքներն են ուռչում ավելի,
Իմ թարթիչներից կախվում են աստղեր,
Եվ իմ ականջում լսում եմ ձիու խրխինջ սիրելի։

Իմ ձեռքերի մեջ զգում եմ սանձեր,
Նրանք այդ փայլն իմ բերանն են տանում.—
Ի՞նչ է, իմ ձեռքերն ինձ ձեռ են առել,
Աշխարհի բանը նոր եմ հասկանում։

◆

Կապույտ իրիկվա ծածկոցների մեջ
Փաթաթել եմ իմ ձեռքերը դեղին.—
Գիշերն անկյունով իր ամենասուր
Իջել է հոգնած մարմնիս աղեղին։

Եվ աղեղն ահա լարվում է կամաց.
Սակայն դժվար թե նետը արձակվի,
Նետը կմեխվի հենց աղեղի մեջ,
Եվ ամենամեծ վերքս կփակվի։

ԵՎ ՀՈԳՆԱԾ... ՀՈԳՆԱԾ

Եվ մի անսահման սառչող մի ցավից
Ծնվող անսահման անտարբերությամբ
Ես դատարկության վրա ծալեցի ձեռքերս հոգնած,
Ես դատարկության վրա փռեցի հայացքս հոգնած,
Եվ հոգնած, հոգնած, անսահման հոգնած,
Դատարկության մեջ շոշափեցի ես կողերս հոգնած...
Եվ այնպես հանդարտ, ծուլորեն հլու աչքերս հոգնած
Թռչունների պես բաց թողի կանաչ արահետներում։—

Եվ հոգնած, հոգնած, հավիտյան հոգնած,
Շուրթերս դժգույն արևների պես
Իջեցրի հոգնած շուրթերին հողի.
Հողն աղբյուրներով խորացավ մի քիչ,
Եվ իմ տրտմության փայլը լուսեղեն
Ես աղբյուրների ջրերում թողի.—
Եվ ջրերի պես ողորկ քարերը լիզելով անցա,
Եվ թույլ խոտերի գոյությունն անփույթ
Անփույթ խոսքերով հուզելով անցա,
Եվ ծույլ հողմի պես ծույլ անապատի
Լռությունը ծույլ խզելով անցա,
Հոգսը ծառերի սանդերքի վրա
Մառախուղի պես գզելով անցա,

Ու մալանչ-մալանչ իջա հովիտներ,
Եվ փաթիլ-փաթիլ ձորերը ընկա,
Եվ ցավագնորեն տեսա, որ, ավաղ,
Մարդու հոգեկան բզկտվածությանն
Այս աշխարհում դեռ վերջ-վախճան չկա։

Մարմինս հանդարտ իջեցրի հողին,
Հողը տեղ բացեց, խորացավ մի քիչ,—
Ապա շուրթերի հեծկլտանքը խուլ
Փակեց գիշերվա ճողոպրումը լուռ
Մեռած վարդերի մենաստաններից։

Աստղերի տխուր կերպարանքներով առկայծելով պաղ,
Ճեղքելով օդի աղմուկը փայլուն ու միապաղաղ,
Երկնքի գահից տիեզերական խաչեր են իջնում
Մեռած դիցերի գերեզմաններին,
Քանզի նրանք էլ մեռնելուց հետո թաղվում են հողում։—
Անդուռ, անսահման խավարի միջով երբ նայում ենք մենք,
Այնտեղ, ուր չկա այլևս հորիզոն,
Մի ուրախաբեր տխրության նման
Նրանց փայլփլուն խաչերն են շողում։

Թավիշ իրիկվա քղանցքը բռնած մատներով գունատ
Եվ համբուրելով լույսն արարչագործ
Իմ շրթունքների կարմիր խավարով
Եվ ծիծաղելով գորշ համբերության անդունդների մեջ,
Բոլոր ճամփեքին կանգնեցի մի պահ՝
Բոլոր հին ու նոր աշտարակների ձանձրույթի վրա։
Եվ մեռած բույրեր չկան հիրավի.—

Խաչված բառերի շարքեր են քայլում ձյունների միջով։
Խուլ ճռճռոցով գնում են առաջ,
Տնքում են ցավից,
Քանզի մեղապարտ ուսերին իրենց,
Իրենց անարյուն, սառած ձեռքերով
Լուռ քարշ են տալիս սայլեր ճռճռան։

Եվ մեղքի հազար գիշերներ մեկից
Գոռում են նրանց թույլ ոտքերի տակ.—
Աղաղակների ճռինչը բքով բարձրանում է վեր,
Եվ ավելի են փակվում բառերի շրթունքները փակ,
Եվ ավելի է ավերվում, ավաղ, հորիզոնն ավեր,
Եվ սնքրտում են գույնզգույն ցավեր.—

Լեգենդն էլ մի տեղ թեթևացնում է մեր կյանքն, հիրավի-
—Եթե Քրիստոս հայտնված չլիներ աշխարհում արդեն,
Ես հոգով պիտի աղաղակեի՝
«Հարկավոր է մի Քրիստոս աստված,
Որ հավերժական այս մեղքը քավի...»։

Եվ հոգնած, հոգնած, հավիտյան հոգնած...
Իմ կրծքի ներսում
Վարգում են վայրի եղջերուների խմբերը վայրի,
Սառցալեռներ են շպրտվում երկինք
Եվ փշուր-փշուր խոնարհվում են ցած,
Լիզում են հոգիս ծովերը քաղցած.—
Քաղցած ծովերի աստվածը քաղցած
Ջրե մատներով աչքերս է սրբում։
Շուրթերիս վրա խամրում են փայլեր.—

Աշտարակները օրորում եմ ես՝
Քնեցընելու ձանձրույթն աշխարհի։

Ծովերի փափուկ կրծքին եմ հպվում,
Եվ իմ մեջ թռչող լույսը խելագար
Իմ մեջ բարձրացող սրին է խփվում։

Ցավոտ զնգոցից արթնանում եմ ես.
Ես համատարած խավարի նման խաչված եմ ահա
Մեռած վարդերի մենաստաններում։
Բայց մեռած բույրեր չկան հիրավի...

...Թույլ ու մտերիմ, մեղավոր ու չար,
Մռայլ ու դժգույն, զորավոր-անճար,
Խելագար ու թույլ, իմաստուն ու խեղճ,
Հոգնած ու հիվանդ ու բազմաչարչար...
Ու հոգնած, հոգնած, հավիտյան հոգնած,
Բոլորից տխուր, ոչ մեկին չօգնած,
Եվ բոլորի հետ անվերջ մոլեգնած,
Անվերջ մոլորված, անվերջ մեղսակիր...

Բայց մեռած բույրեր չկան հիրավի...

◆

Բույրերի անթիվ անկողիններ եմ փոխել ես հերթով.
Բոցավառվում է ամեն մի բույր,
Եվ ամեն մի բույր պարան է քեզ համար,
Եթե քո փայլը խելահեղ է, ինչպես մի ակնթարթ
Ձկան փայլատակումը ջրի խորքում։

◆

Այս վայրկյանին հարյուր աստվածների նման
Ես հավաքվել եմ իմ հոգու սեղանի շուրջ,
Եվ չեմ փնտրում տխուր պատկերը դավաճանի,
Այլ փնտրում եմ զոհին,
Որին աստվածները պահանջում են համառ։
Ես չեմ փնտրում զոհին,
Ես ուզում եմ փրկել նրան...

Նա տխուր նայում է աչքերիս մեջ,
Երբեմն ժպտում է ինչ-որ մեկի համար.
Ձեռքերը ծալում է դատարկության վրա.
Աչքերը դառնում են քավության մենաստաններ,
Լույսը մի ակնթարթ ճչում է աչքերի մեջ...

Եվ ես հարյուր աստված հարյուր ժողովրդի,
Դառնում եմ տխրության հարյուր եկեղեցի,
Քայց թափուր են խորաններս, սեղաններս՝ դատարկ,
Վեմերս՝ անշաղախ, անկապ և օրորուն...

Ես ուզում եմ տափակ կտուրների տխրությունը
Տանել ինձ հետ,
Տանել ստվերների թափանցիկ թանձրությունը,
Բոլոր ծիծաղների տխրությունը տանել,
Ուժեղ հոգիների փխրությունը տանել,
Բոլոր կրակների մոխիրները հանել,
Դարձնել թախծաշաղախ,
Եվ իմ խորաններում
Իմ մոլորված հարյուր աստվածների
Իմ մարդ-աստվածային մկրտությունն անել։

ՀԱԶԱՐԱՄՅԱԿՆԵՐԻ ՁԱՆՁՐՈՒՅԹԸ

Հազարամյակների ձանձրույթը
Նվում է ոտքերիս տակ։

—

Ձայները կիսակործան պալատների նման
Փայլփլելով մեկ-մեկ,
Փլվում են խորհրդավոր խավարի մեջ.
Անճառելի բույրը անվերադարձ ոգու
Թրթռացնում է ոունգերը գանահարված թռչնի
թևերի պես։

Կապույտ տխրության մեջ ցցված դեղին սյուների հետ
Ես խոսում եմ թանձր կարոտների մասին։

Զարդարված թափանցիկ դեղինների,
Կապույտների
Եվ անթափանց կարմիրների
Թանձր իմաստության չվերծանվող խաղով,
Բոլոր ձևերի հզոր, ներդաշնակ շքեղությամբ,
Զարդարված ինձանով, բոլորով,
Խոսքերով անտեղի՝
Հազարամյակների ձանձրույթը նվում է ոտքերիս տակ։
Քայլում եմ տապալված սյունների վրայով,
Տապալված երգերի,
Խոհերի,
Մտքերի,
Տապալված կրքերի հանգստության մեջ
Ես զգում եմ քո զորավոր ուժի
Անվերծանելի համայնացումը։
Ձանձրույթ, նվում ես իմ կողերի մեջ,
Եվ սիրտս հնամյա աշտարակի նման
Գալիս են ասպատակելու
Սրունքների պայծառ համաստեղությունները.
Երկնքից, անդունդներից, ծովերից, գագաթներից
Գալիս են աչքերի տխուր համաստեղությունները,
Խավարի մեջ անհուն պատարագի նման

Թարթվելով ներդաշնակ,
Մրմնջում են շուրթերի հոգնած
համաստեղությունները։
Եվ խավարի միջից կարկառվում են դողդոջ
Ձեռքերի,
Ձեռքերի,
Ձեռքերի համաստեղությունները։

◆

Մենք կյանքից ձանձրացել ենք...
Մենք կյանքից ձանձրացել ենք...
Մենք կյանքից ձանձրացել ենք...

Իմ աչքերից ձգվում է լուսնի սառցե ծուխը,
Եվ բիբերս տնքալով բարձրանում են երկինք...

Մենք առավոտը ձգում ենք մինչև կեսօր,
Եվ մի ձեռքով բռնած երեկոյի շուրթից՝
Կեսօրը կրակե ցուլի նման քաշում—
Քաշում-մխրճում ենք գիշերվա մեջ.—
Գիշերը ձգում ենք, ձգում ենք, ձգում ենք,
Սևանում են ձեռքերը, շուրթերը, շրթունքները,
Աչքերը մթնում են խորանների նման,
Այտոսկրերի վրա մեր մութ հոգիներում պահած
արշալույսի
Վերջին ցոլքն է խաղում,
Ու չի բեկվում դարձյալ խավարի անկոտրում
կարծրությունը։

Ձգում ենք տափաստանի թախիծը միապաղաղ,
Ձգում-բարձրացնում ենք գագաթների վրա
Եվ աչքերի վրա, շրթունքների վրա,
Ու խուլ հառաչում են ձորերն հազարամյա։

Անվերջ ձգում ենք մեր գագաթները երկինք,
Ձգում բարձրացնում ենք,

Նրանք դառնում են լույս, անմերձելի տաճար,
Որտեղ առանձնությամբ երջանիկ ու հարուստ
Մենք միշտ խնկարկում ենք
Մեր աղոթքներն անճառ...

Մեր մտքի սահմանները մարգարտաձույլ
Մենք հանում ենք ծովից,
Մեր երկրի սահմանները մինչև ծովն ենք ձգում,
Անճանապարհ, անմիտ պտտահողմի նման
Ծարավ, շնչակտուր փլվում ենք ծովի ափին
Եվ մեր ծարավը մեզ կուլ է տալիս անհետք։
Մենք կյանքից ձանձրացել ենք,
Մենք կյանքից ձանձրացել ենք,
Մենք կյանքից ձանձրացել ենք,
Սակայն չէ՞ որ միշտ էլ
Մենք խոսում ենք կյանքի հրաշքների մասին։

Առուներում լույսը կարկաչում է ահա,
Քարերը ծաղկում են,
Գույն-գույն ծիծաղները
Թռչկոտում են ծաղկած քարերի մեջ.
Ծաղկում է Հայաստանի հողը սալահատակ,
Թախիծը ծաղկում է ուղղակի ձեռքերիդ մեջ՝
Երբ քարերի ճեղքից մի բուռ հող ես հանում։

Եվ դու երջանկության համար խելագարված,
Ծաղկում ես գլխիվայր՝
դեպի խորքը,
խորքը,
Ախր, ո՞ւր ես ծաղկում,
Դեպի ո՞ւր ես ծաղկում.—
...Ախր, հողում թաղված արմատներով միայն..
...Ախր, երկնում պահված գագաթներով միայն...

Արմատների ցանց է Հայոց հողը խափան
Ու գլխիվայր ծաղկող ծաղիկների դամբան։

Այդ դամբանից ինչ-որ պատահական մի ծիլ
Դուրս է լողում հանկարծ,
Գոռում է երկնքի դեմ,
Հողմերի դեմ, ծովի,
Գոռում է ողբի նման.
Հողմի կարեկցական շնչից քիչ է մնում լալկվի,
Ծովի կարեկցանքից ուշաթափ է լինում
Եվ երկնքի մի կաթ արցունքի տակ
Ընկնում է հավերժորեն թաղված։

Տիեզերքի բոլոր անկյուններում կա մի արցունք,
Եվ անպայման անդունդների վրա կախված։

ԹԵՎԱՎՈՐՆԵՐԸ ԵՏ ԵՆ ԳԱԼԻՍ ՏՈՒՆ

Իրիկունները գալիս են մեկ-մեկ,
Հերթով քնում են աշխարհիս վրա.
Ինձ ի՞նչ է մնում, ի՞նչ է մնում ձեզ
Տարտամ խոհերից այս ամենօրյա։

Կրակներն ինչո՞ւ խուլ հեծկլտացին,
Ինչո՞ւ ծառերը ճչացին հանկարծ,
Քամիներն ինչո՞ւ բոցավառվեցին,
Եվ ի՞նչ էր, օ, Տեր, պատահել արդյոք,
Որ խոնավ, տամուկ անապատներից
Ոչ ոք չսպասեց իմ վերադարձին։

Ի՞նչն է մոռացվում, ի՞նչն է, որ չկա,
Եվ ո՞վ էր թաքուն եկավ ու գնաց,
Մարդկային մեղքի,
Ցավի,
Խենթացման
Այս հազարագույն խրախճանքի մեջ
Ի՞նչ է երազվում աշխարհին քնած։

Լուսաբացի հետ լուսանում եմ ես,
Իմ միջից գույն-գույն ձայներ են հորդում,
Լուսաբացի հետ լուսանում եմ ես
Եվ տեսնում եմ, որ
Աքաղաղների կանչն ամենօրյա
Պահել եմ ես իմ խզված կոկորդում։

Աքաղաղների կանչն ամենօրյա
Հալվում է բացվող երկնքի շրթին,
Կորած, գտնված հայրենիքներից
Ծանոթ ձայներ են հասնում իմ սրտին։

Թռչունների մեջ ապրող երկնքից
Մի բուռ ծիծաղ է աչքերս լցվում.—
Թռչունների մեջ ապրող երկնքից
Իմ մեջ մի հսկա երկինք է բացվում։

Ես մրմնջում եմ խոսքեր անանուն,
Բառեր եմ կանչում անհայտ աշխարհից.—
Աստված իմ, այս ի՞նչ հրաշք է, օ, Տեր,
Այս քանի՞ միլիարդ մանկություն ունեմ,
Որ բոլորն այսպես հավաքվել ի մի,
Ձեռքով են անում ու կանչում են ինձ։

Նրանք բոլորը՝ սպիտակ ամպեր,
Թեթև լողում են կապույտ երկնքում,
Իրենց վարդագույն, նուրբ շրթունքներով
Հարության փափուկ երգեր են երգում։

Նրանք մոտենում, հյուսվում իրարու,
Կենդանացնում են խոսքերը ավեր.—
Իջնում են, շքվում ծաղիկների մեջ
Եվ հետո կրկին բարձրանում են վեր։

Գնում են, գալիս, քաշքշում իրար,
Փխրուն ծիծաղով տանջում են անվերջ,
Աչքերիդ միջից թանկագին մի բան
Հալեցընում են ուղիղ սրտիդ մեջ։

Ես մի բուռ հող եմ վերցրնում հողից,
Նայում եմ նրա աչքերին տխուր,
Հող, ասում եմ, դու ի՞նչ ես երազում,
Ի՞նչ ես ուզում դու քո արարողից։

Նայում եմ նրա աչքերին տխուր,
Մի միլիոն աչք կա մի բուռ հողի մեջ,
Նայում եմ նրա աչքերին տխուր,
Եվ կաղկանձում է տխրությունն իմ խեղճ։

Հող, ասում եմ, դու ի՞նչ ես երազում,
Ի՞նչ ես ուզում դու քո արարողից,
Եվ հազար-հազար խուլ տարիների
Խուլ հառաչներ են դուրս գալիս հողից։

Մի բուռ արև եմ վերցնում արևից,
Շոյում եմ նրա տագնապներն անհուն.—
Աշխարհում ոչ ոք չի կորցնում ոչինչ,
Աշխարհում ոչ ոք ոչինչ չի շահում։

Անհայտությունից մի բուռ հայտնություն
Դնում եմ օրվա տխրության վրա,
Գիտեմ, որ մինչև հաջորդ լուսաբաց
Կանաչ խոտերում
Թախիծը պիտի երգով հուրհրա։

Ոսկեղեն միգում ոսկյա բանալին
Իմ աչքերի դեմ ձուլվում է համառ՝
Ատելության մեջ խեղդվող ամբոխի
Շրջապատումից դուրս գալու համար։

Եվ ես քանդում եմ պատնեշներն ամեն
Բացում եմ բոլոր դարպասները փակ,
Խոսքի բռնկվող ռումբեր եմ դնում
Թույնը ներփակող պարիսպների տակ։

Բացում եմ անվերջ, բացում եմ, բացում,
Փշրում եմ բոլոր դռներն ամբոխի,
Ճեղքում եմ ցավի հունդերը բոլոր,
Ձեռքով հատում եմ տառապանքն հողի,
Բացում եմ անվերջ, ճեղքում եմ, հատում,
Մերկացընում եմ դեմքն արարողի,
Որ տեսնի՝ ինչպես երկրի վրայով
Գնում են, չքվում
Գետերը ցավի, թույնի ու ոխի։

Եվ զարհուրանքի քամին խելագար
Սարսափներն ամեն քշում է, տանում,
Ցուրտ ձայների պես դողում են նրանք
Կախված անանուն, անհայտ անհունում։

Եվ ալիք-ալիք խեղդվում է միգում
Մեր դառն ու անուշ
Դար-տարիների տառապանքը տաք.—
(Ախ, քանի սերունդ դեռ պիտի կանգնի
Այս ամենի մոտ
Հուղարկավորի տեսքով գլխահակ)։

Իրիկունները գալիս են մեկ-մեկ,
Հերթով քնում են աշխարհիս վրա,
Մեզ երջանկության պատկերն է մնում
Հոգնած խոհերից մեր ամենօրյա։

Վաստակած, վառված մեր փոքրիկ հանդում
Մենք թիկն ենք տվել կանաչների մեջ՝
Կեսքուն-կիսարթուն.—
Մեր կորած, հեռու թևավորները,
Մի կում շողշողուն երգ կտուցներին,
Ետ են գալիս տուն։

Արձագանքներով հյուսվում են իրար,
Պատարագվում են ձայներն հնօրյա.—
Փոքրիկ, սպիտակ ձեռքեր են իջնում
Տխրության փափուկ հուշերի վրա։

ՊԱՏԳԱՄ

Ինչպես էլ պատմեմ հեռավոր
Օրերիս տրտմությունն անել,
Կիմանան, որ կյանքիս համար
Մի աշխարհ արյուն եմ քամել։

Խավարում, նստել եմ խավարում,
Եվ աստղի, մեծ աստղի դուրս գալուն
Սպասել եմ երկար ու երկար.
Մի աշխարհ ցավեր կան իմ հոգում,
Սակայն ես չեմ դարձել ցավագար։

Եվ ինչ էլ որ պատմեմ աշխարհին,
Չեմ ուզում, որ հանկարծ ինձ խղճան.—
Կա կյանքիս օրենքը իմաստուն,
Որ հացին թշնամի չեն լինի,
Չեն լինի հողին դավաճան։

Իմ երկիր, մի անհուն ճառագայթ
Տանում է քեզ անհունն անվախճան,
Պարտվել են օրերդ թշնամի,
Մեռել են երգերդ դավաճան։

Ցնծության կրակներ ես վառել,
Իմ մեջ քո հրաշքն է հոլովվում,
Քո հրի հեքիաթով ոգեղեն
Այրում ես ու չես խորովում։

Հեքիաթ են լեռներդ ադամանդ,
Հեքիաթ են քաղաքներդ ոսկի,
Հեքիաթ ես անհուն, անվախճան՝
Ծալքերում, ծերպերում խոսքի։

Հեքիաթ ես, հրաշք ես, և ահա
Քո որդոց քո պատգամն անվախճան՝
— Քո հացին թշնամի մի լինիր,
— Մի լինիր քո հողին դավաճան։

ՈՎ ԻՄ ՍՈՒՐԲ ԱՇԽԱՐՀ

Ով իմ սուրբ աշխարհ,
Իմ սուրբ հայրենիք,
Ահա իմ սիրտը
Քո ձեռքին սովոր թռչունի նման
Խաղում է ոսկե մատներիդ վրա
Եվ քո ափի մեջ
Երգի ոգեղեն հասկեր է կտցում.
Եվ քո ափի մեջ
Երգի կաթնաբույր շաղախ է հունցում...
Ով իմ սուրբ աշխարհ,
Ահա իմ սիրտը քո հայացքների ջերմությամբ ապրող
Թռչունի նման

Իջնում է երկար քո թարթիչներին
Եվ գգվում է քո
Ճակատը ոսկե,
Եվ տաք շողի պես
Պլլվում է քեզ,
Եվ գրկում է քո գլուխը հուրհեր,
Եվ աղաչում է քեզանից հուրեր,
Թաքցրած հուրեր՝
Որ չդալկանա։

Նա քո ձայնի պես ապրում է քո մեջ,
Եվ դու ես նրան լույսաշխարհ բերում՝
Եվ աղաչանքով,
Եվ հառաչանքով,
Եվ օրհներգությամբ,
Փառաբանության կրակներով պերճ,
Այդ դու ես նրան լույսաշխարհ բերում՝
Լույսը՝ լուսեղեն հրայրքների մեջ։

Ահա իմ սիրտը իր խոսքի երկար այս ճանապարհին
Անտեղյակ չանցավ քո տառապանքից,
Չկարողացավ ցավդ չտեսնել,

Ցապրել վերստին
Կորուստներդ հին,
Հրաժարվելով ձրի ձեռք բերվող վարկից ու վարձից,
Ընդվզեց հանկարծ
Քո խուլ ցավերի խուլ զարհուրանքից.—
Եվ պատարագի իր հազարագույն այս ճանապարհին
Հնչեց քո ամեն քարից ու ժայռից,
Հնչեց քո ամեն թփից ու այրից,
Քո ամեն վանքից,
Եվ փառաբանեց
Գոյատևության զորությունդ մեծ,
Եվ ամբաստանեց
Քո ոտքին կպած, ետքից քարշ եկող տխրությունը խեղճ,
Որովհետև նա քո ձայնի նման ապրում է քո մեջ։
Եվ տեսա հանկարծ,
Որ մեծ աշխարհի տառապանքի մեջ
Դեռ ծաղկում եմ ես,
Ծաղկում եմ ծաղկող արշալույսի պես.
Բացված ձեռքերիս՝
Երազանքների աստղաբույլերը նորի ու հնի,
Բացված աչքերիս՝
Ոգեղեն փայլը մայրամուտներով խեղդվող անհունի,
Բացված շուրթերիս՝
Դրախտների մեջ թափառող կանչը քո սուրբ
անունի.—
Եվ ծունկի եկած Արևիդ առաջ,
Աղաչում եմ ես՝
— Ախ, իմ անունը թող տառապանքի ծաղիկ չինի...

Աղաչում եմ ես Արևիդ առաջ՝
— Թող Տառապանքի ծաղիկ չինի,
Որովհետև մենք տառապում երկար,
Եվ ապրում ենք կարճ.
Որովհետև մենք խարտվում ենք երկար,
Եվ ապրում ենք կարճ.
Խաղում ենք երկար,
Եվ ապրում ենք կարճ.

Միծաղում երկար,
Եվ ապրում ենք կարճ.—
Եվ մեծ Բնության հրաշքների պես
Մեռնում ենք երկար, երկար ու երկար.
Այդպես ապրում ենք հավիտենապես։

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Քամին սրբում է դեմքը աշխարհի,
Սև փաթիլներով իջնում է մութը
Ծառերի վրա,
Եվ ամանորյա զարդերի նման
Փոքրիկ, լուսավոր առկայծումներով
Ծտեր են պահվում տերևների մեջ.—
Լուսինը վերից նայում է անթարթ՝
«Այդ ինչպե՞ս է, որ փակված աչքերով
Արթուն են նրանք ամեն ակնթարթ...»։

Գետերն ինչո՞ւ չեն խլացնում իրար,
Եվ ի՞նչ են ասում երգով անանուն.
Ի՞նչ են երազում ձկները հեռու
Օվկիանոսների ջրերում անհուն...
Վերջապես ի՞նչ է բամբասում քամին
Ցուրտ ծիծաղների արոտների հետ.
Ապակիները ի՞նչ են զնգզնգում
Խեղճ, անապաստան կարոտների հետ...՝
Քամին սրբում է դեմքը աշխարհի.
Սև փաթիլներով իջնում է մութը
Հոգնած ծառերին.
Ճեղքված աշխարհի անդունդն է քաշում
Ամպերին հուրհեր
Արևն՝ ամպերի նախազոր ներին։

Եվ մրջյունների շարքերը երկար
Գնում են հոգնած արևը թաղեն.—
Աստղերն իջնում են՝ նահատակների
Քարերը քաղեն, հողերը մաղեն։

ՎԵՐՋԵՐԳ

Իմ երկիր, մի անհուն ճառագայթ
Տանում է քեզ անհունն անվախճան,
Պարտվել են օրերդ թշնամի,
Մեռել են երգերդ դավաճան։

Եվ քանի որ ես բաց դուռ եմ դարձյալ,
Եվ քանի որ ես բաց աչք եմ կրկին,
Եվ քանի որ ես բաց ականջ եմ դեռ՝
Անցյալը գալիս— կանգնում է իմ դեմ
Հարազատների պատկերներ ձեռքին։
Անցյալը գալիս— լցվում է իմ մեջ
Եվ խտանում է հոգուս անկյունում,
Բոցավառվում է տխուր պատկերով
Եվ անդարձորեն տրվում է քամուն։

Եվ հանկարծ նորից գալիս է էլի,
Բերում է իր հետ տխուր պատկերներ՝
Տխուր աչքերի, տխուր կյանքերի։

Եվ ես քանդում եմ պատնեշներն ամեն,
Բացում եմ բոլոր դարպասները փակ,
Խոսքի բռնկվող ռումբեր եմ դնում
Թույնը ներփակող պարիսպների տակ։

Բացում եմ անվերջ, բացում եմ, բացում,
Փշրում եմ բոլոր փակերն աշխարհի,
Ճեղքում եմ ցավի հունդերը բոլոր,
Ձեռքով հատում եմ տառապանքն հողի,
Բացում եմ անվերջ, ճեղքում եմ, հատում,
Մերկացընում եմ դեմքն արարողի,
Որ տեսնի՝ ինչպես երկրի վրայով
Գնում են, չքվում
Գետերը ցավի,

Թույնի

ու ոխի։

1963—65 թթ.

ԽԱՉԵՐԻ ՋԱՐԴԸ

ՆԱԽԵՐԳԱՆՔԻՑ ԱՌԱՋ

Փառք տուր Աստծուն,
Փառք տուր Աստծուն,
Որ արեգակ ելավ կրկին,
Փառք աշխարհքին,
Որ ինչ-որ տեղ
Դեռ աղուհաց ունի ձեռքին։

Փառք տուր, տղաս, գիշեր ու զօր,
Փառք տուր Տիրոջ փառքին անհաս,
Փառք տուր նրա խղճին արդար,
Եվ փառքի մեջ կշողշողաս։

Փառք տուր նրա նշխար հացին
Եվ փառք տուր, որ այսօր դեռ կանք,
Աստված մեծ է, և փառքը՝ շատ,
Եվ բարութեան ջրվեժն անկանգ։

Ասա՝ ով Տեր, ով անքննին,
Հեռու պահիր մեզ փորձանքից,
Մենք քո գառներն ենք անլեզու,
Կորուսյալներդ անկարեկից։

Փառք տուր, տղաս,
Փառք տուր անվերջ,
Ասա՝ ով Տեր, պիտի գթաս,
Որքան փորձանք տվիր՝ տեսանք,
Ուրիշ փորձանք էլ ցույց չտաս։

Փակիր, ասա, Տիրոջը մեծ
Վայրկյան-վայրկյան մեզ օղակող
Ճամփան ստի,
Եվ քո աջով հեռու պահիր
Այն արնակող հորիզոնից,
Որտեղ անդունդն է կորստի։

Քո զորությամբ անպարագիծ
Ջարից հեռու պահիր անվերջ,
Մենք արձագանքն ենք քո ձայնի
Կյանք-ամայի անձավի մեջ։

Թռչկոտում ենք, զարկվում իրար
Տենչանքներով մեր անմարում.
Դեպի հույսի կայծն ենք թռչում
Հավերժական այս խավարում։

Եվ այդ հույսի կայծն էլ ահա
Ասա քո մեջ է, ով Հզոր,
Փառք քեզ երեկ, փառք հավիտյան,
Բյուրապատիկ քեզ փառք այսօր։

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Այն պատկերը մաքուր,
Որ երկնքում անհուն
Ամպերի հետ դանդաղ
Արևմուտք էր սահում,
Այդ պատկերը ինչպե՞ս
Համատարած ու մեծ,
Այդքան թեթևորեն
Իր աճյունից պոկվեց,
Ու վերևից ահա
Անտագնապ ու հանդարտ,
Ամպերի մեջ զնգուն
Իր հայացքով անթարթ
Նայում էր մեզ հանգիստ

Որբուկներին մեր խեղճ,
Մենք գլխահակ ճամփորդ,
Ինքը բուքն էր մեր մեջ,
Մենք՝ որբ սգավորներ,
Ինքը՝ սուգն էր մեր մեջ։
Նայում էր մեզ հանդարտ
Իր երկնային գահից
Եվ երկնքից երկիր
Անջատված էր մահից։

Եվ հետո, երբ տխուր
Խաչքարերի միջով
Անցնում էին մարդիկ
Դառը ողբ ու ճիչով,
Լսում էի կարծես
Կորստյան սուր կանչեր.
Ընկնում էին մարդիկ,
Ծնվում էին խաչեր։
Եվ ամեն խաչ այնտեղ,
Որ կանգնած էր անուժ,
Ինձ թվում էր կորած
Մեր մարմնավոր կյանքից
Ամենապարզ մի հուշ։

Այն պատկերը մաքուր,
Որ երկնքում անհուն
Ամպերի հետ դանդաղ
Արևմուտք էր սահում,
Այդ պատկերն ինձ այսօր
Երգի հունն է քաշում,
Իսկ երգն ի՞նչ է արդեն՝
Մի թախծալի աշուն։
Մի թախծալի աշուն,
Մի մորմոքող կարոտ,
Աստծո չեղած պատկեր
Ու չկապված նարոտ։
Եվ ես ահա դանդաղ

Երգիս հունն եմ մտնում.
Ինչպես արեգակը
Առավոտվա միջով
Առավոտ է մտնում։
Ու թեև նա պայծառ
Դեպի մեզ է հակված՝
Նրա այրված ճամփան
Կապույտով է ծածկված.—
Այդպես ճամփան երգիս
Այրված է ու դաժան
Եվ փոված է վրան
Երազների խաշամ։

Եվ հաշտվելով արդեն
Տարիների բեռին,
Ես լուռ խորհվում եմ
Իմ ցավերի ձեռին։
Ում որ կանչում եմ ես՝
Արդեն վաղուց չկա,
Ում էլ պիտի կանչեմ՝
Ի՞նչ իմանամ՝ կգա՞։
Եվ կկանչեմ արդյո՞ք,
Թե՞ կհարցնեմ՝ «Ո՞ տայր»,
Ինձ մայր էլ ո՞վ կտա
Աշխարհում այս օտար։
Երբ նայում է նա ինձ
Իր երկնային գահից,
Եվ երկնքից երկիր
Անջատված է մահից։

Իսկ ես մահվան ձեռքին
Թպրտում եմ, ժպտում,
Եվ ապրելու տենդից
Մեկ-մեկ մահ եմ խնդրում։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ամեն առավոտ նա դուրս էր գալիս,
Ամեն առավոտ նա տուն էր մտնում
Եվ աշխարհի մութ առեղծվածներին
Ոչ մի պատասխան ու ելք չէր գտնում։

Ամեն օր թանձր մառախուղի պես
Կարծրանում էր նա դռան սալքարին
Եվ իր հեռավոր հուշերի խորքից
Երկար նայում էր անտեր աշխարհին։

Եվ իրիկվա հետ մթնում էր կամաց,
Եվ իրիկվա հետ փափկանում էր լուռ,
Մառախուղի պես ձգվում էր տեղից
Եվ լցվում էր իր սենյակը անբույր։

Եվ մայրը այդպես ապրում տարիներ,
Եվ տարիներով ոչինչ չէր անում,
Փակվել էր կարծես, կորել էր կարծես
Հեռու հուշերի կապույտ ընդանում։

Կիրակիներին գնում ժամատուն,
Թեքվում էր որպես աղոթքի կամար,
Երկար ու երկար շուրթերն էր շարժում
Կորած որբերի փրկության համար։

Նրա աչքերում կար անուժ տագնապ,
Եվ տագնապի մեջ՝ աղոթող թախիծ,
Որ մնացել էր պատերազմներում
Անտեր աշխարհի կործանման վախից։

Նա Աստվածամոր մոր տարիքն ուներ,
Եվ հնությունը հոլովվող բառիս,
Բայց Աստվածամոր պատկերի առջև
Դեռ սարսռում էր ու կուչ էր գալիս։

Եվ որքան էլ որ աշխարհը պայծառ
Եվ հոգին լիքն է կյանքով ու երգով,
Սակայն մարդն էլի ապրում է դարձյալ
Վերապրումների ակնկալիքով։

Պատահում է՝ մի փառավոր վայրկյան
Լուսավորում է քո կյանքը անտուն,
Եվ ամբողջ կյանքում ձույլ շղթայի պես
Այդ պայծառ հուշը հոգիդ է բանտում։

Կարոտն՝ հեծյալը այդ պայծառ հուշի
Մնացած կյանքդ փշրում է, ջարդում,
Եվ դու՝ անմոլոր աստղդ հավատի,
Դանդաղ հալվում ես ու չես հավատում։

Ու չես հավատում, որ ինչ-որ մի տեղ,
Իր ադամանդե խեցու մեջ փակված,
Այդ ակնթարթը էլ չես գտնելու
Քո օրերի մեջ՝ պաղ ու անարգված։

Էլ չես գտնելու։ Եվ կյանքդ, կյանքդ
Ծածկված է անհուն տրտմության խավով.
Դու զարդարված ես կարոտով քո մեծ
Եվ զարդարված ես կորստյան ցավով։

...Եվ մայրը այդպես ապրում տարիներ
Եվ տարիներով ոչինչ չէր անում,
Փակվել էր կարծես, կորել էր կարծես
Իր մութ հուշերի կապույտ զնդանում։

Մայրը ոչ մեկին էլ չէր հավատում,
Լոկ Աստծո հետ խոսում էր երկար.—
Աստված փրկության հույս էր հաղորդել,
Դրանից հետո կորել էր, չկար։

Այսինքն՝ գոնե երևար մեկ օր,
Աստղի պես այսպես ցոլանար-գնար,
Մայրն ինքը արդեն կզնգար՝ ինչպես
Սուրբ ճշմարտության յոթնաղի քնար։

Սակայն փրկության հույս էր հաղորդել
Եվ հետո այդպես կորել էր մեկից,
Հուսահատ մայրը բան չէր սպասում
Ոչ զավակներից, ոչ սուտ աշխարհքից։

Իր սաղմը առատ տվել աշխարհին,
Տասնըմեկ շողուն խաչեր էր ծնել,
Տասնըմեկ անգամ զարկվել էր գետնին
Եվ բոլորին էլ մեկ-մեկ կորցրել։

Բայց Ավագ Խաչի կորստյան համար
Նա օվկիաններով արցունք էր հեղել.—
Նա, որ անհայտ էր կորել աշխարհում՝
Իր կորուստների սկիզբն էր եղել։

Եղել էր սերն ու վիշտը առաջին,
Իր մեջքին՝ գոտի, իր գլխին՝ կամար,
Թե որ այդ մեկը մնար, չկորչեր,
Գուցե այլևս կորուստ չունենար։

Սակայն կորուստը մնում է կորուստ,
Կորստից հետո հույսն էլ ի՞նչ կանի.—
Մի հույսի դիմաց շրջում է շուրջդ
Հազար տառապանք՝ հազարաչքանի։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Մի գունատ արև հալվում է դանդաղ
Նոյեմբերյան գորշ ու պաղ երկնքում.—
Ձյունի սպասող փողոցների մեջ
Թախիծը հանկարծ իմ սիրտն է ծակում։

Ջրհորդաններից կախվում է ահա
Օջախի բույրը հարազատ հարկի.—
Հարազատներիս կարոտել եմ ես,
Քշիր, եղբայր իմ, քշիր, եղբայր իմ՝
Ձմեռը չգա, ճամփան չփակի։

Եվ անիվները վնգում տագնապոտ,
Ոլորաններին ճռռում են ցավից.—
Մեռնող աշունը, ցուրտ Նոյեմբերը
Եվ իմ կարոտը լացացնում են ինձ։

Քշիր, եղբայր իմ, քշիր, եղբայր իմ,
Քանի դեռ միայն իմ սիրտն է լացում.
Իմ մայրը հիմա նստել հատակին,
Գարու հատերով իմ բախտն է բացում։

Իմ եղբայրները հավաքվել հիմա,
Հարսներին մեկ-մեկ ուղարկել ջրի,
Իրենք շիկացած վառարանի շուրջ
Կենացն են խմում իրենց պուճուրի։

Ճակատագիրս հայտնի չէ նրանց,
Գուցե ինձ էլ են կորած համարում.—
Հարազատներս կորցրել են ինձ
Այս փոքր ու տխուր Հայոց աշխարհում։

Նրանք խմում են, բորբոքվում իզուր,
Լալով խմում են ոսկեցոլ գինի.—
Ողբասացների այս ցեղի վերջը
Տեր Աստված, արդյոք ի՞նչ պիտի լինի։

...Ու վրնջում է խազալում մի ձի,
Արձագանքում են լեռներ ձյունաթաց,
Գունավոր քամին մեռած գույներով
Ջովացընում է իմ աչքերը տաք։

Ու սև ցուլերի նախիրը հեռվում
ճոճվում է դանդաղ,
Շուրջը լցնում է բառաչի ահով.—
Ասես լավայի այրվող մի ալիք
Ելել-քայլում է երկրի վրայով։

Սև ագռավների երամը երկար
Լարերին շարված ուղեկցում է մեզ,
Ցուրտն ավելի է կարծես սաստկանում,
Եվ ինքըս իմ մեջ կծկվում եմ ես։

◆

Գունատ արևը հալվել է արդեն
Նոյեմբերյան գորշ ու ցուրտ երկնքում,
Գյումրի քաղաքի մշուշների մեջ
Ախուրյան գետը սաղմոս է երգում։

Եվ ինչպես որ միշտ պատահում է մեզ՝
Հուզվում ենք, նաև տագնապում անել՝
Այդքան մոտիկից,
Այդքան իրական
Իր հուշերին իր մոտիկությունը
Միշտ չէ, որ մարդը կարող է տանել։

Եվ իրիկնացող քաղաքի վրա
Մայր եկեղեցու զանգերն են զնգում.—
Մրսած քաղաքը վազում դես ու դեն
Եվ խառնվում է ինքն իր հոսանքում։

Հասկանում եմ ես՝ ճիշտ է ամեն ինչ,
Հասկանում եմ, որ ես գնում եմ տուն,
Բայց սրտիս խորքում ինչ-որ մի թախիծ,
Ինչ- որ անորոշ ցավ է խլրտում։

Չէ՞ որ իմը չեմ համարել երբեք,
(Եվ այդպես լինի գուցե մինչև մահ),
Այն, որտեղ հիմա գտնվում եմ ես,
Եվ այն, որտեղից գալիս եմ ահա։

Թեև մի տարտամ համակերպությամբ
Հաշտվել եմ արդեն օրերի բեռին.—
Ինչ բերել էի հանդերից գյուղի,
Զոհաբերեցի ցուրտ նկուղներին։

Նրանք վառեցին երակներիս մեջ
Թունդ խմիչքների խլրտումը տաք.—
Այդպես հոսում էր կյանքը իմ միջից՝
Ալիք առ ալիք, վտակ առ վտակ։

Եվ մրսում էի պաղ ձանձրույթի մեջ,
Ծանրանում էի տագնապի բեռով,
Որ ջերմանում էր Հայոց մեծերի
Լուսավոր ու տաք առկայծումներով։

Քշիր, եղբայր իմ, փողոցների մեջ
Իրիկնամուտի մշուշն է հունցվում,
Տես, ստվերները ծնվում են մեկ-մեկ,
Հետո գալիս են իրար ագուցվում։

Այդպես կարող է իջնել մեզ վրա
Մտքերի թանձր ու փափուկ գիշեր,
Եվ այն ժամանակ չեն փրկի էլ մեզ
Ոչ սեր, ոչ կարոտ, ոչ քաղցր հուշեր։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Եվ նորից ծնկներս ծնկներին,
Հայացքս աչքերում զառամած,
Մորս մոտ նստել եմ մանկան պես,
Բռնել եմ ձեռքերը թառամած։

Դռնակը բացել է օրվա դեմ,
Ցուրտ քամին մշուշներ է բերում,
Էլ ասեղ չեն բռնում ձեռքերը,
Խշշում են ձեռքերն իմ ափերում։

Ոչ բառաչ, ոչ մայուն, ոչ մի բան,
Որ լիներ մոռացում իր ցավին.—
«Բարի լույս» շնորհեք, անցորդներ,
«Բարի լույս» հավաքող պառավին։

Օրհնում է բոլորին մեկ առ մեկ,
Նայում է երկնքին ու հողին,
Եվ այն, ինչ պիտի տար իր որդոց,
Բաշխում է անցնող ու դարձողին։

«Ապրում ես, գիտեմ որ՝ ապրում ես,
Երգերդ կարդում են։ Լսում եմ։
Բայց էլի մենակ եմ աշխարհում,
Կարոտից, տագնապից մրսում եմ։

Չգիտեմ՝ ո՞ւմ ասեմ, ի՞նչ ասեմ,
Խռովեց իմ աստվածն ինձանից,
Ճյուղառատ ծաղկել է սրտիս մեջ
Ինչ մնաց, ինչ որ կար հին ցավից։

Քեզ ի՞նչ տամ, զավակս,
Ի՞նչ տամ քեզ...
Ի՞նչ ասեմ
աշխարհին
այս չարկամ.—
Ի՞նչ զավակ, որ իր մոր օջախում
Չկտրի մի պատառ հաց անգամ»։

Երկինքը սպիտակ-սպիտակ
Ամպեղեն զանգակներ է կախում,
Մայում են գառնուկներն սպիտակ
Երկնքի սպիտակ փարախում։

Երկնքի սպիտակ թևի տակ
Թռչում են թռչուններ սպիտակ,
Թռչում են, գալիս են... ու չկան.—
Նրանց հետ թռչում են անհայտում
Անցյալը, ներկան ու ապագան։

«Ախ, ո՞ւր ցրվեցիք, զավակներ,
Եվ ինչո՞ւ չքացաք աշխարհում,
Իմ տանից հանեցիք ինձ այսպես,
Արմատս թողեցիք անարյուն։

Չգիտեմ՝ ո՞ւմ ասեմ, ի՞նչ ասեմ,
Խռովեց իմ Աստվածն ինձանից,
Ճյուղառատ ծաղկել է սրտիս մեջ՝
Ինչ մնաց, ինչ որ կար հին ցավից։

Ուր բերիք, ախր, ինձ ո՞ւր բերիք,
Օջախը այդ ե՞րբ է հնացել.—
Տներս դարձել են մեռլատուն,
Մեռելներս անտեր են մնացել»։

Եվ հետո հոգնում է տրտունջից,
Քանի որ մնում է սրտի մեջ
Կարծրացած տխրություն մի անհալ,
Եվ վախը, որ ամեն ակնթարթ
Կարող ես թողնել ու հեռանալ։

Եվ ինքը իր ցավից կճչա,
Եվ ճիչը իր սիրտը կծակի,
Եվ դատարկ խոսքեր կրխշխշան
Աշխարհում ցավի ու փորձանքի։

Եվ հանկարծ ելնում է իր տեղից,
Ծպտում են աչքերը պառաված,
Եվ մեկ էլ տեսնում ես, որ ահա,
Ցավը՝ սեր, և սերը դառավ հաց։

Լցնում է գավաթներն օդիով,
Աչքերը սրբում է մշուշից,
Եվ նորից մի կյանքի զորությամբ
Հառնում է փշրանքը հին ուժից։

Օրհնում է Աստծո օրհնանքով,
Օրհնում է բառերով զրնգուն.
Ինչ բառեր, Աստված իմ, ինչ բառեր,
Փնտրել ու չեմ գտել ողջ կյանքում։

Բաց դռան արևկող քարերին
Մեր թաղի կանայք են նստոտել,
Նրանք, որ զրուցում են արդեն.
Սակայն դեռ զրույցը չեն գտել։

«Ուրուրներ, ուրուրներ-պառավներ,
Ջավակս իմ տանն է, նայեցեք,
Ուրուրներ, ուրուրներ-պառավներ,
Ջավակս՝ Աստծո փրկող ձեռք»։

Եվ կրկին խմում ենք մի գավաթ,
Մեր շինած աշտարակն ենք փլում.—
«Մեռելներս անտեր են մնացել»՝
Արցունքի ակներն են գլգլում։

«Կգնաս, գիտեմ՝ գյուղ կգնաս,
Կայցելես գերեզմանը քո հոր,
Ափսոս որ չեմ կարող գալ քեզ հետ,
Որ առնեմ կարոտներս բոլոր։

Չգիտեմ, չհաշտվեց իմ հոգին,
Ծերությունս անցավ այս բանտերում.-
Աչքերս կտանես բոիդ մեջ,
Կթողնես մեր գյուղի հանդերում։

Կգնան, կթռչեն թևավոր,
Ակներից մի պաղ ջուր կխմեն,
Կլցվեն հովերով, ձորերով,
Հանդերի բույրի մեջ կքնեն։

Եվ մի օր, երբ ես շատ կհոգնեմ,
Եվ մի օր, երբ արդեն լինի վերջ,
Աչքերիս ետևից կտանես,
Կպահես խոտերի բույրի մեջ։

Եվ եթե պատահի, որ հանկարծ
Իմ Անհայտ Կորածը ետ գա տուն,
Կասես, որ քո մայրը հոգնելով
Դեռ քո ծակ գուլպան է կարկատում։

Կասես որ՝ անասված, անհոգի,
Այս երկար տառապանքն ո՞ւմ էր պետք.—
Բա մա՞րդ էլ իր ծնված աշխարհում
Կկորչի խռոված ու անհետք։

◆

Եվ կյանքիդ պատմությունը այսպես,
Կառչելով մանր ու մեծ հույսերին,
Եվ դաժան, և քաղցր տանջանքով
Առնում ես քո հոգնած ուսերին։

Եվ այսպես կորվելով, կորվելով,
Գլխահակ քայլում ես— դեպի ո՞ւր,
Երբ կյանքդ մնում է մի անհայտ,
Մի թաքուն, հեռավոր աստղի բույր։

Էլ ինչպե՞ս կարող ես չտրտմել,
Քո հոգին էլ ինչպե՞ս կհրճվի,
Երբ քո դեմ արձակած նետն ահա
Քայլ առ քայլ գալիս է քո ետքից,
Որ մի օր քո սիրտը մխրճվի։

Քո նետը, քո նետը— ահա նա—
Զրնգուն թռչում է ու թևում,
Եվ դու միշտ պահվում ես ժպտալով
Կարոտիդ, հույսերիդ ետևում։

Պահվում ես, բայց մեկ է, կգա նա
Եվ մի օր սրտիդ մեջ կցցվի,
Նա քեզ դուրս կբերի Անհայտից,
Եվ հետո աշխարհը երջանիկ
Քո Աստղի բուրմունքով կլցվի։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Գնամ։ Ուր որ է՝ ճերմակ շշուկով
Ձյունն իջնելու է՝ կիրճերը փակի,
Եվ տխրությունս սպիտակ շուքով
Կփայլի որպես աստղոտ ապակի։

Բքի մեջ վայող ամեն մի հնչյուն
Էությանս մեջ արձագանք կտա,
Հուշերիս հովտում բուխարին մեր տան
Փափուկ կարոտով լուռ կկայծկլտա։
Եվ ես, բուխարու ետևից ընկած,
Նրան վերստին գտնելու հույսով,
Պաղ ձյուների մեջ գուցե թե սառչեմ,
Եվ իմ անցյալը չի լուսավորվի
Արծաթ ձյունների սառնաշունչ լույսով։

Բայց ի՞նչ եմ ասում, ո՞ւմ է հարկավոր
Իմ անցյալն անհույս, անդյուցազնական
Իմ անցյալի մեջ ի՞նչ երազներով,
Ո՞վ է փնտրելու իր կույր ապագան։

Չէ՞ որ բոլորս աշխարհ ենք գալիս
Եվ կույր վազում ենք մենք մեր ետևից,
Մեր երազներին փայլ է խառնվում
Անցյալի ուրախ-տխուր գետերից։

Գնամ։ Ուր որ է՝ ճերմակ շշուկով
Զյունն իջնելու է՝ կիրճերը փակի,
Եվ տխրությունս սպիտակ շուքով
Կծածկի բույրը իմ հին տնակի։

Հիմա խոր աշնան լույսն է օրորվում
Մանիշակագույն ճանապարհներին,
Գնամ, քանի դեռ հավատում եմ ինձ
Եվ իմ շալակած հույսերի բեռին։

◆

Այս ճանապարհը ինձ ամեն անգամ
Դարձնում է այսպես անիմանալի,
Նա և փականք է դառնում ինձ վրա,
Եվ ինձ իմ ներսը տանող բանալի։
Կուրծքս այնպես է ուռչում հուզմունքից,
Թևերս այնպես են մարմինս գրկում,
Որ կարծես մեկը կործանում է ինձ,
Եվ կործանումից մյուսն է փրկում։

Իմ կորուստների հեղեղը վայրի
Խեղդվելով, ցավով իմ կուրծքն է լցվում,
Հոգիս շարժվում է հրաբուխի պես,
Մայրցամաքի պես մարմինս է ցնցվում։

◆

Թող գիշերը գա, թող մութը մաղվի,
Թող շշուկները համրանան կամաց,
Հովիվ լուսինը թող հաշվի դանդաղ՝
Աստղերի հոտը՝ խավարին գամած։

Թող մարդիկ քնեն,
Թող կյանքը քնի,
Թող խաղաղություն լինի ամենուր,
Քամին լեռնացած սրբերի փեշից

Թող բերի խոտի և աղոթքի բույր։
Գիշերվա փափուկ կուրծքը ճեղքելով,
Թող գյուղի գետը սաղմոսի թախիծ,
Ես սարսռում եմ իմ մանկության հետ
Ճակատ առ ճակատ հանդիպման վախից։

Թող փափուկ քնի և շնչառության
Մշուշը ծխա գյուղի փարախից,
Ես դողդողում եմ իմ մանկության հետ
Ճակատ առ ճակատ հանդիպման վախից։

Ես օտարացած չեմ ուզում զգալ,
Իմ որբ մանկության կրկնությունն եմ ես,
Ես մանկան նման գյուղ պիտի մտնեմ,
Ինձ պիտի նայեն օտար մարդու պես։

Ողջագուրանքներն, աղմուկները սուտ
Իմ սրտի խորքում ոչ մի տեղ չունեն.—
Լուռ փողոցները, լուռ տնակները
Եվ իմ պապերի
Գերեզմանները թող ինձ ողջունեն։

Թող ինձ ողջունի իմ տնակը հին
Եվ Վանքաձորի հովը բյուրառու,
Որ իմ տխրության ու ցավի պահին
Ես չմոռանամ շոյանքը բարու։
Եվ եթե հանկարծ գիշերը քնեմ
Եվ առավոտյան արթնանամ քնից,
Իմ տունը բարի անարատությամբ
Ինչ որ եղել է՝ թող կրկընի ինձ։

Թող բացի մեկ-մեկ անցած, գնացած
Պատմությունների թելերը ոսկի,
Որ իշխանական իմ երազները
Պատմուճան հագնեն հարազատ խոսքի։

Այդ պատմություններն անցյալի մասին
Ես խոնարհաբար կլսեմ հլու,
Քանզի անցյալը տիեզերական
Իմ ապագային մոտ է ավելի՝
Շուտով ես էլ եմ անցյալ դառնալու։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Այս տառապանքը երկարում է շատ,
Եվ իմ սրտի մեջ
Մեկը անընդհատ լալիս է, խոսում,
Եվ ինձնից առաջ ընկնելով անվերջ,
Գիշերվա միջով մեր տուն է հոսում։

Իսկ տանն անցյալի հուշերի վրա
Ննջում է արդեն տրտմությունը հեզ,
Ես, իմ մանկության ետևից ընկած,
Գնում եմ մոլոր երեխայի պես։

Իմ մանկության դեմ մոլոր է մնում
Հասունությունը իմ անօգնական.—
Հին փշրանքներ են զարդարում հոգիս,
Կրակներ, բույրեր, երազներ չկան։

Եվ գյուղը հանկարծ ցոլում է իմ դեմ
Ցանկապատերի քարե կարերով,
Մեր տունը և իր ցանկապատը հին՝
Կանաչ բազալտի անտաշ քարերով։

Ամեն բան մեկից զնգում է հանկարծ,
Արծաթ ձայներ են երկինք համբառնում.
Այդ փոքրիկ տնից, մոռացված տնից
Աստվածաշնչի բուրմունք եմ առնում։

Խոտերը արդեն չորացել վաղուց
Եվ խշխշում են քար-քոեճի մեջ,
Հավերը տապ են արել խոտերում,
Քնել են այդպես իրենց վեճի մեջ։

Կովերն՝ արարմնա գայթակղությամբ,
Տաք գոմերի մեջ արոճ են անում,
Եվ աստղերի տակ հավիտենական
Այս պատմությունը դեռ չի վերջանում։

Եվ շշուկների բույրը հեռավոր
Հարության նման օրորում է քեզ,
Եվ այս ամենը քաղցր է ու մոտիկ՝
Խաղաղությանը հավատալու պես։
Խաղաղությանը հավատալու պես,
Խաղաղության մեջ ապրելու նման,
Ուր որ ծաղկում են աչքերիդ խորքում
Երջանկությունը ու սերը լման։

Այո, բայց չէ՞ որ ես գիտեմ հիմա,
Որ մանկությունս կովի մեջ անցավ,
Ոչնչացնում էր պատերազմը մեզ,
Խեղդում էր, բայց և... չկարողացավ։

Այդ անասնվածը լուռ դաժանությամբ
Կովի էր հանել անգամ խոտերին,
Նրանց բազմամբոխ թրերի վրա
Որբերը պիտի արյուն ոթեին։

Եվ որքան ավեր ու որքան սարսափ
Թափվեց մեզ վրա մարդկանց ոհմակից.
Բայց խոտերը մեզ բարեկամ դարձան,
Անասունները եղան կարեկից։

Եվ նրանց ձայնը կանչում է հիմա
Բույրի ու ցավի թավշե ղողանջով.—
Աշխարհում մի տեղ լցված է դարձյալ
Հավիտենության կանաչ կարկաչով։

◆

Որքան էլ դառը, հուշերն անցյալի
Ցոլում են որպես մաքուր արծաթներ,
Նրանք անցյալի տխրության վրա
Ցրված են որպես լույսի բացատներ։

Ահա քայլերս տանում են ինձ տուն,
Ահա ես դուռը թակում եմ կամաց.
Դռան կողքն ի վար կախված բուրում է
Ձերմակ տոպրակում մածունը քամած։

Հոգնած քնել են, չի լսում ոչ ոք,
Ես բարձրանում եմ գլխատան տանիք,
Տանիքի վրա բույր է ճառագում,
Օշինդրների մի մեծ ընտանիք։

Կամաց թեքվում եմ երդիկի վրա,
Տունն ասես լինի մթակող կարաս.—
Եվ ցուրտ օրերի անցյալը հանկարծ
Ահ ու սարսափով իջնում է վրաս։

Տագնապը հեռվից գալիս խշշալով,
Եվ փշրվում է աչքերիս առաջ.
Հեռու-հեռավոր գիշերվա կեսին
Լսում եմ կովի մահագույժ բառաչ։

Գիշերվա կեսին լուսնյակի վրա
Հուշերով տարված թող շունը հաչի,
Բայց ո՞վ է տեսել՝ խաղաղ քնի մեջ
Գիշերվա կեսին կովը բառաչի։

Եվ խուլ ճռռալով ջարդվում են մեկ-մեկ
Երդիկին մեխված թևերը խաչի,
Սև տագնապի մեջ ցնցվող ձեռքերում
Այլանդակվում են ձևերը խաչի։

Իմ պապերի սուրբ օջախի վրա
Երկնքից քարե կարկուտ է տեղում,
Եվ խաչերկաթը փշրվում է խուլ
Թոնիրը լցվող քարե հեղեղում։

Իրար հետևից ընկնում են խաչեր,
Սրբություններ են ոտնատակ լինում,
Մայրս թախտի տակ հավաքում է մեզ,
Աղոթք-անեծքի խոսք է կրկնում։
Եվ կովը դարձյալ բառաչում է խուլ, —
Մեր միակ հույսը բառաչում է, Տեր,
Աղաղակում է մայրս ողբաձայն,
Եվ արձակում է անեծքի նետեր։

Եվ անիծում է բախտ ու պատերազմ,
Եվ անեծքի հետ թույն է ներփակում.—
Եվ կատաղության շանթն է որոտում
Խուլ սարսափների խավար ծմակում։

Մայրը եղանը պարզում է վերև,
Զայնին խառնվում է բառաչը կովի.—
«Շուն,— գոռում է,— շուն, քո սիրտը, ով շուն,
Իմ թոնրի շրթին պիտի խորովվի»։

Պարզ է, քաջերը կգան ճակատից,
Պարզ է, կկտրեն ականջը այդ շան,
Բայց թե խաչերը կմնան ջարդված,
Կշարունակվի սարսափը դաժան։

Եվ կմեծանան որբերը մի օր,
Եվ չեն հավատա իրենց տեսածին,
Եվ չեն իմանա, թե ինչ պատճառով
Վախ է խառնված իրենց սուրբ հացին։

Իսկ գիտունները կխոսեն երկար
Եվ կամբաստանեն աստրծուն ռազմի,
Եվ պատերազմի դեմ բարբառելով,
Կմղեն մարդկանց նոր պատերազմի։

◆

Ինձ մեկը ասես ծեփել տանիքին,
Օշինդրների բույրի մեջ թաղել,
Եվ թողել է այս պարզ լուսնյակի տակ՝
Որպես տրտմության անտերունչ աղեղ։

Երկար նայում եմ երդիկից ներքև,
Խավարը սեղմող աչքերս են ցավում։
Ահա լույսի հետ արթնանում մայրս
Եվ լույսի նման շարժվում է ահա
Հեռու հուշերիս խավար անձավում։

Ելնում է տանից, լաչակը հանում,
Արեգակի դեմ արձակում գոտին,
Ծունկի է գալիս, կուրծքը բաց անում
Եվ աղաչանքի խոսք է մրմնջում
Ծնվող Մանկանն ու Մայր Առավոտին։

Առավոտի պես մաքուր է կուրծքը,
Որտեղից արևն իր կաթն է ծծում.—
Մայրս ձեռքը մեկ խփում մայր հողին,
Մեկ էլ տառապած իր կուրծքն է ծեծում։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Մայրս ձեռքը մեկ խփում մայր հողին,
Մեկ էլ տառապած իր կուրծքն է ծեծում,
Քանդում է մազերն արեգակի դեմ,
Աղոթքի, ցավի խոսք է հեծեծում։

«Ջարը բարուց
Պոկող Աստված,
Սուտը ճշտից
Ջոկող Աստված,

Զրկող Աստված,
Զարկող Աստված,
Հույսի շիվեր
Տնկող Աստված,
Ցավն ամոքող,
Անքող Աստված,
Իմ խաչերի
Փրկված թևով,
Փակված, փակվող
Դռներս բաց։

Բաց արա, Տեր,
Ձեմ համբերում,
Խղճա գոնե
Այս որբերին,
Ո՞ր հանցանքիս
Համար ինձ, Տեր,
Դարձրիր այս
Ցավի գերին.—
Կամ որբերիս
Ինքդ պահիր,
Կամ ինձ տուր իմ
Ավագներին։

Զավակներիս
Համար անտեր
Հալալ արա
Կաթն իմ արդար,
Կամ ինձ էլ, Տեր,
Ինձ էլ, ինձ էլ
Այս աշխարհից
Վերցրու, տար։

Անթիվ որբեր
Կան աշխարհում.—
Բոլոր փակված
Դռները բաց՝
Ձարը բարուց

Պոկող Աստված,
Սուտը ճշտից
Ջոկող Աստված,
Ջարկող Աստված,
Ջրկող Աստված...»։

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

Եվ Աստրծո հետ կռվելով անվերջ,
Մայրը ողջ օրը դեսուդեն վազում,
Հոգսերի ճանկից փեշը թափ տալիս
Եվ կալերի մեջ արցունք էր կալսում։

Իր որբուկներին հավաքում կամին,
Եվ բութ աշխարհի պտույտի հանգով
Կորստյան նավը քշում էր այդպես
Տանջանքի, հույսի դեղին ճամփեքով։

Երեկոյան մութը դավով
Երդիկից տուն էր լցվում.—
Թոնրին դրած քուրսու վրա
Հացի սեղան էր բացվում։

Խմում էին որբերն անգետ
Կանաչի ջուրը աղի,
Որ կրծքները փափուկ մնան,
Աչքներին մութ չմաղի։

Քուրսուն դրած լամպի լեզուն
Ապակու մեջ թրթռում՝
Մորս միտքը գուշակության
Մութ աշխարհն էր հրթիռում։

Տետրի թուղթը ոլորում էր,
Դնում լամպի ապակուն
Եվ կանչում էր աղաչանքով

Ոգիների պարսն անքուն։
Կանչում էր նա հրեշտակներին,
Աստվածներին, դևերին,
Որ իր որդուն գոնե մի պահ
Բերեն իրենց թևերին։

Թրթռում էր ապակու մեջ
Բոցի տանջանքը ոսկի.—
Շշնջում էր մայրս բոլոր
Աղաչանքները խոսքի։

Անարձագանք լռության մեջ
Քարանում էր ամեն բան.
Բոցը հանկարծ ճեղքվում մեկից,
Եվ հայտնվում էր ճամփան։

Ավագ խաչը գալիս հանկարծ,
Պաղ աղբյուրին կռանում,
Լվանում էր դեմքը փոշոտ
Եվ երկար չէր հեռանում։

Նստում այրված խոտերի մեջ,
Բացում էր կուրծքը քրտնած,
Նայում էր գորշ ճամփաներին
Եվ երկնքին սփրթնած։

Եվ հետո հանկարծ սև-սև տանկերի
Շարասյունները անցնում դղիրդով,
Ավերում էին պատկերն աշխարհի,
Կործանում էին ամեն բան հերթով։

Ռումբը պայթում էր, ականը վայում,
Կյանքը դառնում էր կրակի բաժին,
Կործանումների տխրության վրա
Երկնքից երկիր կանգնում էր փոշին։

Ռումբը պայթում էր, ականը՝ վայում,
Փոշին ծածկում էր ամեն բան մեկից,
Եվ Ավագ խաչը կորչում էր այդպես
Անհայտության մեջ և անկարեկից։

◆

Իր Ավագ խաչի կորստյան ցավից
Մայրն օվկիաններով արցունք է հեղել,
Նա, որ անհայտ է կորել աշխարհում,
Իր կորուստների Սկիզբն է եղել։

Եղել է սերն ու տանջանքն առաջին,
Իր մեջքին՝ գոտի, իր գլխին՝ կամար,
Թե որ այդ մեկը մնար, չկորչեր.
Գուցե այլևս կորուստ չունենար։

Սակայն կորուստը մնում է կորուստ,
Կորստից հետո հույսն էլ ի՞նչ կանի,
Մի հույսի դիմաց շրջում է շուրջդ
Հազար տառապանք՝ հազարաչքանի։

Փոշին ծածկում է երկիրը ավեր,
Փոշին ամեն բան ծածկում է մեկից,
Եվ ականջիդ մեջ մնում է միայն
Ձայների ճիչը կյանքի դժոխքից։

Եվ աչքերիդ մեջ մնում են միայն
Խուլ սարսափների անքուն կրակներ,
Եվ հոգուդ խորքում քնում են միայն
Երազանքների ոսկե փշրանքներ։

ՎԵՐՋԵՐԳ

Ինձ մեկը ասես ծեփել տանիքին,
Օշինդրների բույրի մեջ թաղել,
Թողել է բացվող երկնի տակ ընկած,
Որպես տրտմության անտերունչ աղեղ։

...Գնամ։ Ուր որ է՝ ճերմակ շշուկով
Զյունն իջնելու է՝ կիրճերը փակի,
Եվ տխրությունս սպիտակ շուքով
Կփլվի՝ որպես աստղոտ ապակի։

Իսկ նա, որ գնաց աշխարհից անտեր,
Եվ նա, որ ոչինչ չունեցավ կյանքում,
Հիմա երկնքից Աստվածամոր պես
Իր որբ խաչերին հսկում է անքուն։

Հսկում է անվերջ, հսկում է անքուն,
Իր տանջանքները աշխարհին թողած,
Եվ հիմա, հիմա, հենց այս վայրկյանին
Նրա աղոթքն իմ շուրթերին շողաց.

«Փառք տուր Աստծուն,
Փառք տուր Աստծուն,
Որ արեգակ ելավ կրկին,
Փառք աշխարհքին,
Որ ինչ-որ տեղ
Դեռ աղ ու հաց ունի ձեռքին։

Փառք տուր, տղաս, գիշեր ու զոր,
Փառք տուր Տիրոջ
Փառքին անհաս,
Փառք տուր նրա խղճին արդար,
Եվ փառքի մեջ կշողշողաս։

Փառք տուր նրա նշխար հացին
Եվ փառք տուր, որ
Այսօր դեռ կանք.—
Աստված մեծ է, և փառքը շատ,
Եվ բարության ջրվեժն անկանգ...»։

Վերջ
1970—1971 թթ.

Խոսք գարնանային

(Հատվածներ պոեմից)

Ա

Թթե մարմինդ լցված է հանգով,
և երակներդ
ներդաշնակության ցավով են տնքում,
ուրեմն՝ աստղերը
Իրար համբույր են տալիս երկնքում,
և կախարդական հնչյուններ հանող
լուրթ աղեղներ կան հովերի ձեռքում,
Ճերմակ ամպերը
սահում են վարգով,
տերևները զով սաղմոս են երգում,
կապույտ ջրերը
իրենց մեջ թափված ստվերների հետ
գգվում հուսահատ
և շշնջում են խոր ակնածանքով.—
Ի՞նչ են շշնջում,
երբ ստվերները
ձկներին սիրո խոսքեր են ճչում,
իսկ ձկներն ահա
խուլ աշխարհի մեջ՝
ձկները ուրա՜խ, անմիտ քրքջում
և փաթաթվում են
տաքուկ շողերով։

Եթե աչքերդ
ներդաշնակության լույսով են ծփում,
ապա ձկները ջրում սառչում են
բարակ շորերով,
թիթեռնիկները
շոգից շորանում արեգակի տակ,
դառնում են պայծառ,
գունագեղ նկար,
կանաչ ճյուղերը
թևեր են երկար,
երկա՜ր, անուշի՜կ թևերն են թախծի,
նրանք աչքերիդ խորանների մեջ
թրթռումներ են թափում կանացի.—
և ի՞նչ երկինք կա
մեզ երևացող երկնքից բացի,
և ի՞նչ գեղեցիկ ու երազային
կյանք կա հիրավի
այս դառնաթախիծ մեր կյանքից բացի,
ի՞նչ կարոտներ կան,
ի՞նչ սրսփումներ,
մարդո՜ւ,
պատմությա՜ն,
երազանքների՜,
մահվան ու կյանքի
ի՞նչ նուրբ հպումներ,
անիմանալի տխրության միջով
կապույտ հրաշքի ի՞նչ ակնկալիք,
և, տե՜ր իմ Աստված,
երազանքների թելերից հյուսված
ի՞նչ պայծառ գայիք...
ի՞նչ պայծառ գայիք...

Զ

Եթե մարմինդ լցված է հանգով,
և երակներդ
ներդաշնակության ցավով են տնքում,

ուրեմն՝ անցյալ բյուր-բյուր դարերի
և ապագայի թրթիռներից է
կրծքիդ տաճարի
զանգը ծրլընգում.—
այդ Սերն է նրա
լեզվակը ձգում,
կարոտիդ կապույտ
լարերը պրկում,
և դու այլևս չես կարող խոսել՝
շուրթդ բացում ես՝
բառերն են երգում,
պարզում ես ձեռքդ՝
քարերն են երգում,
բացում ես գիրքը՝
տառերն են երգում...
Երգում է կյանքը
փոքրով ու մեծով.—
Բացում ես աչքդ՝
ճառագայթները աչքերիդ միջից
թափվում են խրձով,
և ի՞նչ թրթիռ կա նրանց շողանքում,
նրանց խաղի մեջ՝ արյան պես անքուն,
արյան պես ջերմին,
արյան պես բորբոք,
որ եթե կպնի մեռանող սերմին,
սերմը կպայթի ցնծության ցավից
և կճառագի խնդության մորմոք։

ԺԳ

Եթե մարմինդ լցված է հանգով,
և երակներդ
ներդաշնակության ցավով են տնքում,
ուրեմն՝ ինքը՝ Արարիչն է քո
ճակատագիրը վերևից հսկում։
Եվ ինչպես ծաղիկն արևի փափուկ
շոյանքն է զգում,

ինչպես գազանը
կորցրնելիքի կորուստն է սգում,
ինչպես շոգի մեջ կոպերի տակով
վազում են հովեր
և հոգու անտակ անդունդն են լցվում,
այդպես Արարչի շունչն անբռնելի,
քո պատանության փխրուն մարմընով,
քո երազների մեջ է ներծծվում։

Եվ արարչության ոգին տանում է —
քեզ աշխարհից վեր,
որտեղ կան ուրիշ
ծաղկունք ու հովեր,
որտեղ կան ուրիշ
անհավատալի կրքեր ու գազան,
և դու չես կարող
սաստել քո ոգու մղումն անսասան...
Չես կարող բռնել
թռիչքն ամեհի,
երբ նույն ժամանակ
քո մարմնի համար
անթիվ դարբիններ կռում են շղթա,
որ արարումի համար ճչացող
քո երազանքի, քո ոգու անհուն,
կապույտ ճիչերից
մարմինդ հանկարծ ճեղքվածքներ չտա։

Օ՛, նա կարող է պատռվել հանկարծ...
Եվ դու,
սեփական զրահներդ հագած,
ելնում ես կյանքը վերափոխելու։
Քո զրահները չե՛ս զգում բնավ,
չե՛ս լսում ձայնը քո շղթաների,
և կամաց-կամաց
պատկերը Նեռի,
մաքուր հայացքիդ վրա փռվելով,
թակարդ է լարում

երազներիդ դեմ.—
և բուրումների թանձր մի թախիծ
լցվում է լույսի խորշերը փափուկ՝
կյանքը դարձնելով թախծության եղեմ։

ԺԴ

Քո երգերի մեջ՝
թախծության միրաժ,
քո ձեռքերի մեջ՝
սարսուռի որոտ,
անուշ մխանք կա
քո շրթունքներին,
և քո ձայնի մեջ
լույս կա վեհերոտ։
Քո ծիծաղի մեջ՝
թռչող մանուկներ,
քո հայացքի մեջ՝
կրկին թախծություն,
որ թե կուրորեն
թարգմանենք բառով,
պիտի որ հնչի՝
Սիրաբաղձություն։

Այնպես դյուրին ես
դու արձագանքում
հեռու և մոտիկ
տխրություններին,
որ կարծես ինքը՝
Տեր Հիսուսն ես դու,
մեղքի քավության
Սկիհը ձեռին։

Քո մարմրնի մեջ,
արյան հետ մեկտեղ,
հոսում են այնքան
անտես թրթիռներ,
որ քո բյուրաթև

Հոգու թևերին
մարմնդ պիտի
համբառնար, թռնել։

Պիտի որ դու լույս
բռնեիր ձեռքով,
շրթունքով լույսից
ծիծաղ քամեիր,
ոչ մի չարության
և վշտի առջև
պիտի որ երբեք
չրկարկամեիր։

Ամենամաքուր ու պարզ խորքերից
դու ինքը՝ Բխումն ամենավերին,
պիտի առաջնորդ դառնայիր վսեմ
բոլոր կորուսյալ, մոլոր նավերին։
Իսկ իմ նավն ահա ճոճվում է տխուր
և կշտամբում է իր խեղճ նավորդին,
նրա կայմերը ճռռում են հարցով՝
թե ո՞ւր է արդյոք փրկարար Որդին։
Մութ հորիզոնից բխում է խավար,
մութ ալիքներն են շաչում իր կողին,
օ՛, ի՞նչ հույսերով ամեն կործանվող
սպասում է իր փառք ու փրկողին։
Սպասում է նա,
և ի՞նչ չար կատակ,
լոկ կործանումից հետո, հիրավի,
աշխարհ են գալիս «փրկիչներ» անթիվ,
որ գովերգում են պերճանքը նավի։

Նրանք կործանված աշխարհի մարմնին
գեռունների պես վխտում են անթիվ
և քրքրում են աճյունը մոլի,
և հափրանում են գիշերներ ու տիվ։

Եվ նա՝ այն միակ տարաբախտը լուռ,
որ հաղորդվում է կործանման ցավին,

Նա է, որ հոգով ճչում է՝ «ավա՜ղ»
կորած նավորդին, կործանված նավին։
Եվ նա է, որ իր սրտով ամեհի
կորած աշխարհի ճիչերն է լսում,
ճիչերն այն հզոր, խեղճ խիզախների,
որ ճչում էին աշխարհի դրսում։

Քո երգերի մեջ՝
թախծության միրաժ,
քո ձեռքերի մեջ՝
սարսուռի որոտ,
միանք՝ աղոթող
քո շրթունքներին,
և քո ձայնի մեջ
ձայն կա վեհերոտ։

Քո ծիծաղի մեջ՝
թռչող մանուկներ,
քո հայացքի մեջ՝
կրկին թախծություն,
որ թե կուրորեն
թարգմանենք բառով,
պիտի որ հնչի՝
Սիրաբաղձություն։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Ա

Եթե մարմինդ լցված է հանգով,
և երակներդ
ներդաշնակության ցավով են տնքում,
ուրեմն՝ սերը բխում աստղերից,
ծիածանվում է կապույտ երկնքում,
Աստղիկ դիցուհին իր մաքուր ձեռքով
նրա անաղարտ ճակատը կնքում

և այնպես քաղցր է
խոցում քո սիրտը,
որ ասես մահը,
իր զարհուրելի թույնը թաքցրած,
քեզ համար սիրո
սաղմոս է երգում։

Դու, որ լսում ես մրմունջը նրա
կանաչ աշխարհի հեքիաթի վրա,
և դու, որ նրա շնչով մեղսական
ճոճվում ես միգում՝
նստած քո ճյուղին,
այդ ո՞վ է սիրտդ գուրգուրում ցավով,
այդ ո՞վ է գծում թռիչքիդ ուղին։
Ո՞վ է քեզ համար անգոյությունից
ստեղծում շքեղ, պերճ հավատալիք,
ո՞վ է սնում քո օրերը գալիք,
խոհերը գալիք։
Ո՞վ է հավատում հավատավորիդ,
ո՞վ է գուրգուրում մղումը նորիդ,
քո խաչը այդպես մաքուր հավատով,
քնքուշ բարությամբ սրտին կրողիդ։
Ո՞վ է հավատում...
երբ մարդիկ իրար
սիրելուց առաջ
իրար ծննդյան վայրկյանն են ատում,
բոցեղեն խարտով թշնամոց, նաև
բարեկամների նյարդերն են խարտում,
միտքը աղարտում,
ոգին աղարտում,
այնքան անիմաստ,
այնքան անհեթեթ
հոգսեր են իրենց ճամփեքին բարդում,
որ հոգսը, փարթամ ճյուղավորվելով,
բանտում է իր մեջ ցեղը մարդկային,
և մարդն արձան է կանգնեցնում մահին.

Լոշտը սարսափով
աչքերն է փակում՝
«Մարդիկ արձան են կանգնեցնում մահին...
մինչդեռ մեր սրտում կարոտն է ճչում,
սիրո կարոտը՝ մեծ, աստվածային,
իսկ մարդիկ, ահա,
կանգնեցրնում են անթիվ արձաններ
թախծին ու մահին,
վշտին ու մահին,
սգին ու մահին,
բիրտ ուժին, վայրի ավերումներին,
կրկին ավերող սրին ու հրին,
և մենք,— ո՞վ ենք մենք,—
մենք շնորհակալ այս մեր գոյության
սոսկ փաստի համար,
շարունակում ենք տառապել համառ,
համառ ջանքերով
մեր երազներն ենք պաշտպանում հողմից,
որ բզկտում մեզ
և հարվածում է բոլոր կողմերից»։

Բ

Լոշտն այդպես երկար պիտի տառապի։
Նա պիտի սարքի պատյանն իր դանդաղ,
իր նուրբ ու փխրուն էության սերմը
պիտի անկոտրում զրահով պատի,
պիտի հավաքի
մարդկության բոլոր երազներն անթաղ,
որ իբր նոր կյանք շնորհի նրանց՝
զոհասեղանին մի նոր հավատի։
Լույս ճաճանչափայլ,
ոգի դրախտի,
անչափելի միտք,
նկրտում բախտի,
աղոթքի մեհյան,
երգ փողփողացող,

երազանք անհուն,
սրբություն լացող,
մղում անաղարտ,
ցավ անպարագիծ,
չընդհատվող մխանք,
չմոլորվող գիծ...
Սակայն այդ ինչպե՞ս, այդ ո՞ր աշխարհում,
զոհասեղանին այդ ո՞ր հավատի,
այդ ինչպե՞ս պիտի ոգի տա հանկարծ
երազանքներին մոլորյալ բախտի։

Ի՞նչ կախարդանքով և արդյոք ինչի՞ց
նա պիտի ձուլի հավատքի կուռքեր,
այդ ո՞ր պատմության ավազ ու խիճից
պիտի բորբոքի հարության կրքեր,
իր ժողովրդի դժնի պատմության
ո՞ր լույսից պիտի կանթեղը վառի...
Ու նա գնալով մխրճվում է խոր
սահմանների մեջ հսկա խավարի։

Եվ ամեն քայլին հայացքն ընկրկում
և ավելի խոր սուզվում է իր մեջ,
և տեսնում է, որ իր ներսում ապրող
հարության երգեր, լույսեր կան անշեջ։
Իր մեջ անպատկեր ժամանակներից
կորած դրախտի շունչն է օրորվում,
և նա փակ աչքով այդ խավարի մեջ
գնում է առաջ և չի մոլորվում։
Եվ չի բողոքում ոչ պատմության դեմ,
ոչ պատմությունը աղարտողների,
լոկ մտածում է, թե ի՞նչ հնարքով
իր ներսի լույսը լույսաշխարհ բերի։
Թանձր է խավարը, ժամանակը՝ լիրբ,
տիրակալ է խև ճորտության ոգին,
հալածական է միտքն ամենալիր՝
նա պիտի ապրի դահիճի կողքին։

Եվ զարհուրելին այն է, հիրավի,
որ նրան պիտի և փառաբանի.—
փականքն էլ պիտի դնի իր հոգուն,
որ անախտակիր անզգուշությամբ
բխումն իր լույսի նա չխափանի։
Թե որ խափանվեց, ուրեմն՝ նաև
իր ժողովրդի հոսքն է խափանվում,
իր մեջ իր ցեղի շարունակության
գոյատևելու սաղմն է տապանվում։
Այն, որ ոչ մի սուր չի հայտնաբերի,
և ոչ մի դահիճ չի կարող ջնջել.—
Ահա նրա մեջ սերն է բողբոջում,
նրա մեջ ինքը՝ Աստված է շնչել։
Շնչել է այս նուրբ, նրբին անոթում
և դարձրել է կատարյալ ու պերճ,
այնպես է շնչել, որ ինքը երկրում,
իսկ ոգին ապրի տիեզերքի մեջ։
Որ հրճվի այնտեղ լույսով աստղածին,
և փառավորի իմաստը գոյի.—
զորեղ է տենչը գոյատևելու,
որքան էլ մարդը կյանքից դժգոհի։

Դ

Եթե հավատաս, որ կյանքն անցողիկ
պահ է կարճատև, խաղ է արարչի,
քեզ մղում տվող ամեն մի թրթիռ,
դեռ նոր կյանք առած՝ պիտի որ հանգչի։
Ամեն երազանք և ամեն մի ճիգ
մի թիթեռի կյանք չեն ապրի անգամ,
թեկուզև լինեն նույնքան գունագեղ,
կլինեն նույնքան և ողբերգական։

Եթե հավատաս—
ո՞ւմ են հարկավոր
տագնապներն ամեն, մտքերն ամեհի,

չարությունը, որ ուժ է ապրելու
կամ դարձել է ուժ դժնի աշխարհում,
անգամ չարության մղում չի լինի։

Այդ խաղի համար, օ, ի՜նչ նրբություն,
շնորհակալ ենք մենք մեր Արարչին,
որ անցյալն ամբողջ վայրկյան է չնչին,
գալիքի վայրկյանն՝ Հավիտենություն։
Օ, մեր մեջ այնքան լավ է աշխատում
հրաշք խարկանքի գործիքն այդ նրբին,
որ աղացվելով նրա բերանում,
պաշտում ենք նրան արարող սրբին։

«Տե՛ր, մեր մարմինը քոնն է, հիրավի,
Օ, մի բարկանա՝ մեր հոգին էլ, Տե՛ր,—
Ադամն իմացավ՝ ինքն ինչ էր ուտում,
բայց քո արոտի տեղը չգիտեր։
Գուցե թե այդպես չլինի՞ անվերջ,
գուցե դու մի օր խղճաս մեզ, Վերին,
և ցույց տաս տեղը այն արոտների,
որ կյանք են տալիս մեր սեգ տերերին։
Մեր աստվածներին պահում են առույգ,
Ներշնչում նրանց խոհական մտքեր,
Նրանք էլ քո ծույլ ժամանակի մեջ
թողնում են վառվող-արյունոտ հետքեր։
Մի՞թե հենց դա է բխումն անձկալի,
և քո ծաղիկը ա՞յդ է լոկ, Վերին,
Ես՝ Լոշտս, ահա, մերկացած սրով
մոտենում եմ քո բաց դարպասներին»։

Օ, լույս պատանի,
խղճալի վահան,
ժամանակ չկա
քո ձայնն անսալու,
բայց քանի որ դու
ճամփա ես ելել,
հովերը սեր են

Քեզ փսփսալու՝
Ծաղիկները քեզ
պիտի շղթայեն
մաքուր, ոգեղեն,
Ներհուն դյութանքով,
ջրերը պիտի գերեն քեզ հիմա
ամենապայծառ
բխումի հանգով։
Քեզ վրա պիտի
իջնի կախարդանք,
որ թմրեցընի
ջղերդ հոգնած,
Նրբին կախարդանքն
աստղային երգի,
որ նայադների
շնչից է երկնած։
Պիտի բերի քեզ
այնպիսի մի թանկ
և անմեկնելի
հին մոռացություն,
որ թե կուրորեն
թարգմանենք բառով,
պիտի որ հնչի՝
Սիրաբաղձություն։

Քո աչքերի մութ
խորանների մեջ
այնպիսի մաքուր
լույս պիտի ծաղկի,
որ քո հոնքերը
պիտի նմանվեն
լույսի աղբյուրներ
տանող լծակի։
Եվ ողջ անցյալդ
քեզ պիտի թվա
լոկ մի ակնթարթ.
լոկ մի ակնթարթ,

իսկ ապագայիդ
ակնթարթը սոսկ
պիտի քեզ թվա
Հավիտենություն,
Հավիտենության
կանչն անպարագիծ,
պատուհանը բաց,
հայացքը անթարթ։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Ա

Քաղաքը՝ գո՜րշ, մռա՜յլ, մառախլապա՜տ,
քարե զանգվածների մի ահռելի ճահիճ,
մշուշը փողոցներում լիզում է դեմքդ պաղ,
մրսող ոսկորներիդ հաղորդելով համբույր
աշնան տերևների հուսալքող մահից։

Քաղաքը՝ գո՜րշ, մռա՜յլ, մառախլակե՜ր,
փողոցները՝ խոնա՜վ, պատերը՝ թա՜ց,
մառախուղն ուղղակի դու կարող ես հագնել,
թաթմանների նման քո ձեռներին
և կաթե այդ ճահիճում ճոճվել հարբած։

Մառախուղից մի քիչ քաշում ես քո ջանին,
և հոգուդ մեջ բարակ տխրությունն է ոռնում.—
ափսոսում ես նույնիսկ աշնան այդ վախճանին,
քանի որ թվում է քեզ, թե հանդերինն է նա,
օտարության մեջ է տխուր մեռնում։

Սերունդներով ահա մարդիկ ապրում այստեղ
և օտար են մնում իրար սրտի, ոգու,
շնչում են օդը նույն, նույն մազութե
դեմքերն իրար սեղմած գնում են աշխատանքի՝
մշտապես տագնապներով՝ մո՜ւթ, ահարկո՜ւ։

Ո՞ւր են Վարպետները հին ու հանդարտ,
որոնք հղկում էին հավերժության քարեր...
Նրանց սերունդները՝ ատամին ոսկե շապիկ,
փախել են փող բերելու հեռավոր Ղրղ՞ղ, Ղազա՞խ,
Չեբոկսա՞ր, Զուֆութ-Կալե՞...

Մրսած փողոցները բառեր չեն հասկանում,
արձագանքում են լոկ՝ ոռնոո՞ց, ոռնոո՞ց, ոռնոո՞ց,
իսկ թախիծը չունի անուն կամ ազգանուն,
նրա ողջ պատկերը ստեղծված է աչքից՝
մութ ճակատի վրա քաղաքամոր դոնոս։

Ա՜խ, դու քաղաքամա՜յր,
ա՜խ, դու հրաշալի՜...
փողոցներից հյուսած կարոտի ցանց,
դեմքիդ կնիքը կա հայոց քարաժայռի,
սակայն տարօրինակ, անդիմադիր ու լուռ
գույնզգույն քո փոխանը ահա քշել ես ցած։

Ցուրտ է, մրսում ես դու, սրթսրթալով նկուն
բարակ մարմիններով քո ծառերի,
և ավելի բարակ քո ճյուղերով ճկուն,
և պատմում ես մենակ անցորդներիդ
ինչ-որ պատմություններ՝ տխուր-ծիծաղելի։

Ինչ-որ պատմություններ, որ եղել են վաղուց,
որից դու ինքդ անգամ չունես մի գաղափար,
ինչ-որ պատմություններ անհիշելի դարու,
որ կարող են ահա օրերի մեջ մոայլ
դառնալ հիշատակի պայծառ նկար։

Օ՜, դու բորբոքում ես հոգնածավալ կրքեր,
որ մեղկ նվնվում են քո պաղ որովայնում,
ամեն օր փսխում ես դու անթիվ թերթեր, գրքեր,
անթիվ երազանքներ, որոնք սպասում են
մի պարզ, հրաշալի ու հանճարեղ գարուն։

Սպասո՞ւմ են արդյոք, և արդյոք ի՞նչ գարնան,
ի՞նչ հոյակապ, շքե՞ղ, մեծ ծաղկումի,
նրանք այդօր պիտի մեծ երգիչներ դառնան,
որ քո վրա զնգուն փորագրեն գրչով
պատմությունը իրենց մեծ անկումի։

Ա՜խ, դու քաղաքամա՜յր,
ա՜խ, դու հրաշալի՜...
քո Լոշտուկը, ահա, զարմանալի մոլոր,
փաթաթվել է ծայրով մառախուղե շալիդ,
և ինքն ամբողջությամբ մառախուղ է դարձել՝
մտքով իր թանձրացյալ, իր նյարդերով բոլոր։

◆

Եթե մարմինդ լցված է հանգով,
և երակներդ
ներդաշնակության ցավով են տնքում,
ուրեմն՝ սերը ապրում է ոչ թե
այնտեղ՝ երկնքում,
այլ Հուդիտայի շարժումների մեջ,
հայացքի մեջ է ծաղկում ու երգում.—
դրա համար են նյարդերդ այդպես
մերժումի ցավից նվում, հեկեկում.—

Դու բնակված ես ոչ թե սիրո մեջ,
այլ՝ սիրո վերքում։

Մերժո՞ւմ է սերը,
քեզ ընդունում է մերժումը վսեմ,
հաշտություն չկա՞—
քեզ ընդվզումը կոչում է՝ ի զեն,
խնդությունը քեզ մերժո՞ւմ է լրիվ—
տխրության թավիշ թելերը ահա
իջնում են վրադ,
որ կյանքիդ համար
մեծ ճամփորդության
առագաստ հյուսեն։

Եվ այն ժամանակ,
ուզեն թե չուզեն,
դու այս կյանքի մեջ կաս անմերժելի,
անթիվ Բայրոններ ապրում են մերժված,
անթիվ Դանտեներ՝
պսակների մեջ չքնաղ փշերի
կան հզո՜ր,
անպա՛ռ,
և անխժռելի՛...

Միայն թե մի օր չհոգնես հանկարծ —
ինքդ քեզ այսպես մխիթարելուց,
սրտիդ մեջ անվերջ շարունակության
կրակի համար ապրուստ ճարելուց...
Չհոգնես հանկարծ,
հոգնությունը քեզ հանգում կբերի,
խնդություն չուզես՝
նա խարդախագույն անկում կբերի
ծիծաղների տակ
այս բութ աշխարհի անթիվ լրբերի։

Ախ, դու կոչված ես քո տխրությունից
մեծ երջանկության տաճար սարքելու,
որի շուքի տակ մարմինդ հոգնած
կփլվի մի օր՝ հանգիստ պառկելու։

◆

Փույթ չէ, թե ոչինչ չմնա հետո,
և Հայրենիքը նրան նզովի,
ինքը պատրաստ է դրոշ դառնալու՝
մտքի ամլության և ոգու սովի։

Ի՞նչ է, նրանք, որ փառք են վայելում
կամ իշխանավոր մարդիկ են վերին,
որ նվերներ են բաշխում տերերին
և սպասում են նրանց նվերին,

որ Հայրենիքի և ժողովրդի
անունից կյանքի ծաղիկն են հատում,
որ քարոզում են սեր, եղբայրություն,
և ամենից շատ իրենք են ատում,
ի՞նչ է, հիմա՞ր են նրանք հիմնովին,
մի՞ս ու արյուն չէ շաղախն էլ նրանց.—
— Դավաճանությունն ուրիշ բան է, քան
դավաճանության օրենքը գրած։

— Ծաղկազարդումի օրենքն ուրիշ է,
քան թե ծաղկումի օրենքը վճիտ։
Ծաղկում չի լինի, չի լինի ծաղկում,
թե չփխրեցնես սուրբ հողը խղճիդ։

Ի՞նչ անի Լոշտը չար բնության դեմ,
որ կասկածներ է տվել այսքան մեծ.—
կյանքը դարձել է անիմանալի՝
սողունից մինչև թռիչքն աստղամերձ։

Դարձել է, այո, անիմանալի,
սուրբ ճշմարտություն, Տեր իմ, մեղա քեզ,
քանի որ նա, ով թռչում է վերում,
նա էլ է սողում սողունների պես։

Միտքը թռչում է աստղերին մոտիկ,
իսկ ինքը ահա սողում է ցածում.—
— Օ, մի՞թե սա է օրենքը կյանքի,՝
խելքս չի կտրում օրենքի հարցում։

Ե

Եթե մարմինդ լցված է կյանքով,
և երակներդ
կրքի մոլեգին ցավով են տնքում,
և եթե մարդիկ
մարդ են քո մտքում,
ոչ թե աստվածներ ու հրեշտակներ,

ուրեմն՝ իզուր ես
անհույս, ողբագին աղաղակներով
կատարելության կարոտը սգում,
և ձույլ մարմինդ՝
այդ կատարյալին,
տառապեցնելով անկատար մտքի
քյուր տանջանքներով,
ոգեղինացման հաճույքից զրկում։

Տուր նրան հողմի խելառությանը,
տուր նրան հովի մեղմ գուրգուրանքին,
հանձնիր ծովերի ծով գերությանը,
դարձրու նրան կրքերի բագին,
նվիրիր նրան ընկերությանը
կամ ամենակեր մենության ժանգին,
միևնույն է՝ կրկին կատարյալ է նա,
միևնույն է՝ կրկին ջինջ ու պաշտելի,—
և տրաքվում է միտքը անկատար
հակասությունից այս անհաշտելի։

Զ

Ճիշտ է, մարմինը պատյանն է հոգու,
հոգու և մտքի,
մտքի և ոգու.
դարերով անվերջ այդպես մտածել
և փոխանցել են մարդիկ մեկմեկու՝
առանց քննության, առանց հարցմունքի,
իբրև ընթացքի մեր դաժան ճամփան
խավարից կորզող անթաքույց լույսեր։

Ճիշտ է, մարմինը պատյանն է հոգու,
բայց ստեղծված է այնքան կատարյալ,
որ դիմանում է մտքի տանջանքին,
նկրտումներին նրա խաթարյալ,
նրա այրումին,

Նրա մխանքին,
ազատությանը, պիղծ ձգտումներին,
Նա իր կատարյալ գեղեցկությունով
մնում է անգամ խևության գերին։

Այն տանջանքները, որ նա է կրում,
այն սարսափները գերաշխարհային,
որ մարմնի վրա
մտքի թանձրաթույն մելանն է գրում,
այդ նյութը մաքուր և աստվածային
մտքի սանդերքի վրա քրքրում,
նախամարդկային առաջին կայծից
մինչև տիեզերք ելնելու մարդու
բոլոր մտային ջղագարության
անվերջանալի շղթան կրկընում,
կրկընում շղթան—
նյութն են քրքրում։
Նյութը՝ մետաքսը, դարձընում են քար.—
այդ պայծառ նյութը, մտքերը տկար,
մտքերը թունոտ,
մտքերը հոռի
հալածանքներով այնքան են նեղում,
որ վերջիվերջո
վերափոխում են բնությունը նրա՝
ամլացընելով այդ նյութը բեղուն։

Եվ կատարյալին ձգտելով անվերջ,
իր կատարյալը հենց ինքը խեղում,
մարդը դառնում է մոլուցքի գերին.—
և մեկ էլ ահա տեսնում ես հանկարծ,
որ այլանդակներ ծնվեցին ցեղում։

Մռայլ դեմքերը՝
լցված ահռելի մտատանջության
խարխափումներով,
թանձր խավար են ծորում ամենուր,

ամենուր իրար շանթում, թրատում,
և տեսնում ես, որ այդ կաղապարում,
որ գլխի նման դրված է վրան,
միտքն է աշխատում...

Միտքն է աշխատում,
և լույսն աչքերում դառնում է խավար,
խավար թանձրափայլ կորստյան անդունդ։

Միտքն է աշխատում։
հոգին դառնում է նենգության ավար։
Միտքն է աշխատում՝
թույն է ճառագում ոգին հրավառ,
և կարեկցանքը վրեժն է հատում։

Եվ միտքը ագահ,
և միտքը մոլի
աստծո արարած մետաքսն է լափում,
ինքը իր ճահճի վրա խարխափում,
և զառանցում է թռիչք ու շողյուն.—
մինչդեռ նրանից մի փոքրիկ մասնիկ
դնում ես հողում,
և խոռվում է հողը դարերով.—
ինքն իր մեջ կյանքի հունդը վառելով,
ամլանում է նա՝ մարդկության գլխին
նրա գոյության իմաստը անմիտ
մութ խավարելով։

Միտքը նախանձոտ,
միտքը չարակամ,
միտքն ընդունակ է ամեն հանցանքի։
Նա շնորհ ունի երկաթ մատներով
բռնել ամենուր գրգիռը կյանքի
և շուռ տալ այնտեղ,
ուր ինքն է ուզում,
և շուռ տալ այնպես,
որ սաղ գա իրեն քմահաճույքին.—

Հրավառության կամ բռնկումի
վայրկյան չունենան
ոչ բնազդները և ոչ էլ հոգին։
Բնազդ ու հոգի
ճառագայթներ են անիմանալի՝
արձակված նրա վերին տաճարից,
որ այս էլ քանի
ծանրասիրտ ու սև,
մութ ու ահալի
մարդատյաց տարի
թռչում են՝ ճիգով
ճեղքելով մութը մտքի խավարի,
որ փրկեն մարդկանց վրեժից չարի։

Սակայն խավարը թանձրանում է խիստ,
այնքան, որ ինքն է մթագնում իրեն,
բայց ճառագայթը, մեկ է, կթռչի՝
ճեղքելով մութը ճառագայթորեն։

ԺԱ

Մեղավոր սերեր չկան աշխարհում,
կան մարդու գլխում մեղավոր մտքեր,
հանցավոր սեռեր չկան աշխարհում,
կան սեռը տանջող հանցավոր կրքեր։

Եվ եթե լիքն ես գեղեցկությունով,
որին մենք անմեռ արվեստ ենք ասում,
ուրեմն՝ չքնաղ Մարմինդ արդեն
զգացմունքների այգի է հասուն։

Պտղավորման ինչ անձրև կտեղա,
և կամ մոլության կարկուտ կզարկի,
Օ, մայր բնություն, քեզ հազար մեղա,
քանի որ մենք ենք կործանողները
քո արարչության անմեկին փառքի։

Այդ մենք ենք վայրի ավերողները,
այն հովիտը, որ դու ստեղծեցիր,
որ պարուրեցիր ըղձանքի լույսով
և ցանկահարույց բույրով օծեցիր։

Դարձըրիր նրան ախտին անընկալ
և շարարեցիր ախտի դեմ միջոց.—
հիմա նրա հետ ամեն հպումից
մեզնից քամվում է տանջանք ու ճչոց։

Այն, որ կատարյալ դու ստեղծեցիր—
այդ աստվածային նյութն անախտակիր,
այդ պատյանը սուրբ և ձևը անծիր՝
անընդգրկելի մոգության գրգիռ.—

այդ անքննելի կառույցը նրբին
զրկվել է հիմա ամբողջությունից,
և ախտ է լցվում այն տաճարը սուրբ,
որ դու սարքել ես արև ու ձյունից։

Եվ ախտը հիմա սուրբ եդեմիդ մեջ
մետաստազներ է շաղ տալիս հոռի,
շուտով որքան որ նյութ կա կատարյալ,
նա պիտի անզուսպ կրքով գրոհի։

Եվ պիտի հաղթի, օ, մայր բնություն,
իր աղտեղային փայլով հուրհրան,
քանի որ նյութդ կատարյալ արիր,
բայց անմահության չօժտեցիր նրան։

Եվ սակայն ախտը թողիր անկատար,
բայց անմահ արիր, օ, մայր բնություն.
և մտքի տեսքով դրիր նյութի մեջ՝
որ ձգտի դեպի կատարելություն։

Եվ նա՝ քո վերին խորհրդին գիտակ,
հիմա մղվում է գագաթն այն չեղյալ,
որտեղից մտքի արևը պիտի
ճառագի՝ գլխին ամպեղեն վեղար։

Հիմա ես քեզ հետ չեմ վիճում բնավ,
բնավ չեմ ուզում խորհուրդդ փոխել,
բայց հիշիր, տեր իմ, թե նյութը չքնաղ
ինչ թույներով է այսօր ողողվել։

Եվ հիշիր նաև, Վերին Տեսանող,
թե այդ թույները ինչի՞ց են քամվում.—
— Նրանք ծնվում են ՄՏՔԻ արգանդից
և նրա փափուկ ձեռքով խնամվում։

Եվ հենց նույն ձեռքով աշխարհի վրա
և սրտերի մեջ ցանվում են մոլի,
և ով շատ ունի այդ ախտից, Տեր իմ,
նա օրենսդիրն ու տերն է բոլորի։

Եվ զարմանալի չէ՞ միթե բնավ,
որ նույնն է մնում կառույցը մարդու,
իսկ միտքը անվերջ փոխվում է, թեքվում՝
ճիշտ այնպես, ինչպես ցանկացել ես դու։

Եվ եթե անգամ չես էլ ցանկացել,
բայց անկարող ես եղել հիրավի
ստեղծել միտքը նույնքան կատարյալ՝
որքան ձևերը թրթռուն կավի։

Նյութը և միտքը այդքան անհարիր...
խուլ տառապանքի այն ցավն էլ վրան,
որ նյութը այդքան կատարյալ արիր,
բայց անմահությամբ չօժտեցիր նրան,

մինչ միտքը թողիր հավերժ անկատար,
բայց անմահ արիր, որ նա մոլեգին
մղվի իբրև թե կատարելություն
և բիրտ ավերի մարմինն ու հոգին։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ա

Արվարձանն այնպես չի արթնանում,
ինչպես որ քաղաքը,
քաղաքը լուսանում է դանդաղ ու երկդիմի—
մինչդեռ այնքան պարզ է արվարձանի վարքը՝
նա ծանր խումհարով արթնանում է քնից՝
որպես ջարդված հրեշ
և կիսախուփ աչքով թմրած շոշափում է
ճանապարհն այն ծանոթ,
որով պիտի այնտեղ՝ քաղաք դիմի։

Այնտեղ խանութներ կան տուրիստների համար,
մագազաններ, որոնց լույսը չեն հանգցրնում,
ցուցափեղկերն ամբողջ լիքն են պուպրիկներով,
որոնց տարբեր գույնի շուշիկ են հագցրնում։

Հագցրնում են շորեր, ապա մի քիչ նազանք,
(ախ, ինչ նազանքով են կանգնում ցուցափեղկում)—
բարձրասրուն, սևաչ, բարձրահասակ
աղջիկները լույս են հագնում ցուցափեղկում։

Էհ, թող հագնեն, ինչ կա, չունենք արգելելու
ոչ ցանկություն, ոչ էլ իրավունք ու օրենք,
սակայն երբ կանգնում ես ցուցափեղկի առջև,
հայտնվում են մարդիկ և ասում են՝ կորեք։

Օ, այդ մարդիկ, իբրև պահապաններ կարգի,
պարտավոր են նաև թաքուն մտքեր կարդալ.—
ահա այդտեղ նրանք շփոթում են կարգին
արդար քո մտքերը նպատակով խարդախ։

Ճիշտ է, լցված ես դու ալկոհոլի մուժով
և չես կարողանում զարթնել մղձավանջից,
սակայն այդ օրիորդից դու հո շոր չե՞ս խնդրում,
այլ՝ մի կտոր սրունք, պատառ մի ականջից։

Անմեղսունակ ժպիտ այն հանցանքի դիմաց,
որ եղել է թաքուն կամ դեռ չի կատարվել.—
ցուցափեղկի առջև այդպես կամաց-կամաց
դու կարող ես հալվել կամ խաթարվել։

Թեթև այն մշուշը, որով շրջապատված
նրանք հիմար, ժպտուն նայում են քեզ,
կարող է քեզ բերել համբերության կաթված
կամ դարձնել քեզ կապիկ, շրջապատդ՝ կրկես։

Թող նայեն քեզ մարդիկ, թող հավաքվեն շուրջդ,
նայեն զարմանալի, զվարճանան,
նրանց դեմքին փչիր հրալեզու շունչդ,
թող անգիտուն լինեն և խեղճանան։

Ախ, այդ փողոցները... ամեն երևացող
թվում է թե՝ կգա և կբացի,
սակայն ոչ թե ահա այս խանութը կոկիկ,
այլ նախադուն, որտեղ ցայգալույսում աղոտ
գինին կուլ են տալիս առանց հացի։

Օ, այդ մարդիկ բնավ համբերություն չունեն,
ծանր գլխացավով արթնանում ենք քնից,
և հոգսերը նրանց միայն մի վերջ ունեն,
որ կախված է էժան խմիչքների գնից։

Էժան խմիչքները թմրած ուղեղներում
ճառագում են կապույտ վաղորդայնի թույնով,
և լցնում են մաշված սրտերը ուժասպառ
մի անիմաստ, անճար, անտեր խնդությունով։

Եվ լոշտուկը, ահա, նրանց շարքերի մեջ՝
ինքն իր մղձավանջի քարայրի մեջ փակված,
ինքն իր լույսի վրա նստած ամպի նման,
նրանց կարեկցանքով ամուր շրջապատված,

ինքն իր անմեղության անկրկնելի շողքով
պիտի կյանք տա մարդկանց այդ երամին մեռած,
և հավատ, որ կյանքը, տես, չի անցնում կողքով,
այսօր կրկնվողը պատմություն է եղած։

Երեկ պատահածն էլ պատմություն էր հայտնի՝
ոսկե անգիտությամբ հավերժ փրկագնված.—
երբ որ մուժը հատնի,
երբ որ գինին հատնի,
երբ որ կյանքը հատնի,
ախ, ուշադիր նայեք, այդ՝ բոլորի տակին
այս բառերն են գրված։

Բ

Առասպել է, թե որ ապրես քո ուզածով,
իր ուզածով ոչ ոք չի ապրել այս կյանքում.—
մարմինդ պաշտպանիր հանապազօր հացով,
որ նրա մեջ վառվի հոգուդ ճրագն անքուն։

Թող նա վառվի այնտեղ ճարպով տառապանքի,
բայց թող անմար մնա, թող չհանգչի երբեք.—
մարդիկ, եթե հիշեք իմաստը ձեր կյանքի՝
մեկ-մեկ եղեք արի և պատրույգը սրբեք։

Եվ թող լինի թանձր տառապանքը ներհուն,
որպեսզի և բոցը լինի թանձր ու պայծառ,
գուցե դա՞ է մարդուն իմաստություն բերում
հիմարության անթիվ ծովերի մեջ անծայր։

Ախ, լոշտը չի կարող հիշել ուրիշ ակունք
իմաստության համար՝ բացի տառապանքից,
որ պահվում է իբրև ուրիշներից թաքուն,
բայց ծլում է ամեն ուրախության տակից։

Արցունքով է ծաղկում՝ վրան լույսի ցոլանք,
մեջը բազմախորհուրդ շարժումներ են տառ-տառ.—
ահա այդ արցունքն է իմաստության ծորակ,
ճակատագիրդ այնտեղ դու կարող ես կարդալ։

Սակայն պիտի փորձես թաքցնել ուրիշներից,
օ, դաժան են նրանք մեր թուլության հանդեպ,
Նրանք կարեկցելով կբռնեն քո ձեռքից
և կտանեն, որ քեզ անդառնալի քանդեն։

Դրա համար պիտի միշտ խաղացկուն լինես,
կրես ամեն տեսակ ստորացման բեռներ,
քեզ ամեն օր այն մեծ մտքով պիտի զինես,
որ տխուր ես, այո, բայց չես ուզում մեռնել։

Եվ հենց այդտեղ, (ներեք ինձ այս միտքը դաղող,
այն ցոլացավ մի օր ալկոհոլում զվարթ),
ուրիշների առջև դերասան ես ձախող,
և քո առջև՝ անդարձ ձախողված մարդ։

Այսուհետև բոլոր մտքերդ իմաստուն
այնտեղ պիտի կարդաս՝ ալկոհոլի բոցում,
այնտեղ քեզ ոչ մեկը չի այպանում, սաստում
կամ կորստյան անմիտ գաղափարով խոցում։

Դու չես կարող կորչել, դու չես կարող կորչել,
որ աշխարհ ես եկել, ինչպե՞ս պիտի կորչես,
Քեզ Ոչինչից Աստված առ գոյություն կոչել
և մղում է տվել, որ կարկաչես։

Քեզ Ոչինչից Աստված առ գոյություն կոչել
և մղում է տվել, որ քեզ տանջես,
որ մեծ հավերժության եղյամ-փոշին նստի
ոսկորներիդ վրա՝ երբ քեզ խաչես։

Մտածում է Լոշտը՝ պարզ է, պիտի լինես,
ուրիշ հնար չկա, ո՞ւր պիտի համբառնաս.—
սակայն այդ ե՛րբ, այդ ե՞րբ, ինչպե՞ս դու ապրեցիր,
որ հիմա էլ փոխվես ու մանեկեն դառնաս։

Շուրջդ մանեկեններ, մանեկեններ անթիվ՝
ծիծաղափայլ, ժպտուն, մութ ու մռայլադեմ.—
Նրանց շարժումի մեջ եղիր գիշեր ու տիվ,
որ մի օր էլ բախտով քեզ նրանցից զատեն։

Շուրջդ մանեկեններ, մանեկեններ բազում,
կամ խժռում են և կամ գուրգուրում են իրար,
օդը հսկայական ցուցափեղկ է խոսուն,
և մեծ մագազան է այս աշխարհը արար։

Եվ զարմանքով կրկին մտածում է Լոշտը՝
ինչո՞ւ թիթեռների մանեկեններ չկան,
նրանց հոգին գույնն է լույս թևերի վրա՝
նրանց շրշյունի մեջ մեղմ ու թիթեռական։

Ինչո՞ւ արծիվների մանեկեններ չկան,
այլ կան խրտվիլակներ՝ զարկված մարդու զարկից,
սակայն մենք հո գիտենք, որ ամեն մի արծիվ
դուրս է նետել նրանց
իրենց արծրվային ընտանիքից։

Որ աշխարհ ես եկել, պարզ է՝ պիտի ապրես,
ուրիշ հնար չկա, ո՞ւր համբառնաս,
սակայն այդ ե՞րբ, այդ ե՞րբ, ի՞նչ կյանք դու ապրեցիր,
որ հիմա էլ փոխվես ու մանեկեն դառնաս։

Գ

Եթե մարմինդ լցված է ահով,
և երակներդ
անթվարկելի, անհասկանալի, բազմադեմ ու մութ
դավաճանության ցավից են տնքում,
ուրեմն՝ այլևս քո կյանքի համար
չի կարող լինել վայրկյան ապահով,
ոչ ափաշկարա, և ոչ էլ թաքուն.—
և ո՞ւր էլ գնաս, ինչպես էլ փախչես՝
վերջավորվում է ամեն բան մահով
քո մահահարված, անխարիսխ մտքում։

Եթե մարմինդ լցված է ահով
և երակներդ աշխարհ փոխելու քո անզորության
ցավից են տնքում,

Ուրեմն՝ այլևս ոչ մի զրահով
ոչ մի միտք ոչ մի հոգի չի փրկում,
և ոչ մի հոգի չի կարող փակել
ճանապարհները հուսահատության՝
որ կրկին բոցա
ճարճատյուն մտքի, մկանի պրկում։
Եթե մարմինդ լիքն է միրաժով,
և երակներդ
քարանձավային լաբիրինթոսի
արցունքներով են արդեն հեկեկում,
ուրեմն՝ այլևս քո ճանապարհը շարունակե
կողմնացույցները չկան քո ձեռքում.—

և այն ժամանակ ամեն մի հիմար,
որ տապակվում է
մեր այս խեղճ կյանքը կառավարելու
մտքերով նկուն,
փորձում է դառնալ ուղեցույց խեղճիդ,
և անզորության անվերջ ճիգերով
նա կամաց-կամաց
դառնում է միայն հայցվորը խղճիդ։

Սակայն դրանով հարցը չի փակվում՝
դառնում է հետո վարձվորը խղճիդ,
և, հալածելով խիղճ ու զգացում,
քո մեջ սարքում է
այնպիսի մի մեծ, սուր իրարանցում,
որ, ավաղ, իսպառ ջնջվում է քո մեջ
ներդաշնակության ամեն մի հարցում։

Եվ դու դառնում ես ներսի ու դրսի
բիրտ աղմուկների զոհը հալածված.—
քո ջղերի մեջ պիտի լոկ ինքը՝
Աղմուկն Աղմուկի երազանք հյուսի,
և պիտի տեսնես դու՝ տառապյալդ,

որ կրծքիդ վրա
Աղմուկի խոշոր վարդեր են բացված,
քո պարանոցին շղթաների պես
կախված են անթիվ աղմուկի զարդեր,
աչքերիդ լույսը անվերծանելի
աղմուկներով է միայն լվացված,
շուրթերդ ուզում են խոսքեր շշնջալ
առ արարիչդ, իմաստդ, առ տեր,
ուզում են, սակայն աղմուկ են հորդում.—
հոգիդ ուզում է կարեկցանք հղել
առ տառապյալը-տառապած Որդուն,
սակայն ի՞նչ ասեմ, կարեկցանքի տեղ
միտքդ անեծք է միայն հոխորտում...

Վերին բնազդով հասկանում ես դու,
որ ի հեճուկս ամեն մաքրության
աղավաղում ես պատկերը մարդու,
և ինքդ դուրս ես մղվում աշխարհից.—

Ուզում ես փրկել-փրկում ես մարդուն՝
անկախ փրկելուց, «փրկություն» բառից,
և դա կործանում չես էլ համարում՝
որ ինքդ դուրս ես մղվում աշխարհից։

Ուրեմն՝ այլևս ոչ մի զրահով
ոչ մի միտք ոչ մի հոգի չի փրկում,
և ոչ մի հոգի չի կարող փակել
ճանապարհները հուսահատության՝
որ կրկին բոցա
ճարճատյուն մտքի, մկանի պրկում։
Եթե մարմինդ լիքն է միրաժով,
և երակներդ
քարանձավային լաբիրինթոսի
արցունքներով են արդեն հեկեկում,
ուրեմն՝ այլևս քո ճանապարհը շարունակելու
կողմնացույցները չկան քո ձեռքում.—

և այն ժամանակ ամեն մի հիմար,
որ տապակվում է
մեր այս խեղճ կյանքը կառավարելու
մտքերով նկուն,
փորձում է դառնալ ուղեցույց խեղճիդ,
և անզորության անվերջ ճիգերով
նա կամաց-կամաց
դառնում է միայն հայցվորը խղճիդ։

Սակայն դրանով հարցը չի փակվում՝
դառնում է հետո վարձվորը խղճիդ,
և, հալածելով խիղճ ու զգացում,
քո մեջ սարքում է
այնպիսի մի մեծ, սուր իրարանցում,
որ, ավաղ, իսպառ ջնջվում է քո մեջ
ներդաշնակության ամեն մի հարցում։

Եվ դու դառնում ես ներսի ու դրսի
բիրտ աղմուկների զոհը հալածված.—
քո ջղերի մեջ պիտի լոկ ինքը՝
Աղմուկն Աղմուկի երազանք հյուսի,
և պիտի տեսնես դու՝ տառապյալդ,

որ կրծքիդ վրա
Աղմուկի խոշոր վարդեր են բացված,
քո պարանոցին շղթաների պես
կախված են անթիվ աղմուկի զարդեր,
աչքերիդ լույսը անվերծանելի
աղմուկներով է միայն լվացված,
շուրթերդ ուզում են խոսքեր շշնջալ
առ արարիչդ, իմաստդ, առ տեր,
ուզում են, սակայն աղմուկ են հորդում.—
հոգիդ ուզում է կարեկցանք հղել
առ տառապյալը-տառապած Որդուն,
սակայն ի՞նչ ասեմ, կարեկցանքի տեղ
միտքդ անեծք է միայն հոխորտում...

Վերին բնազդով հասկանում ես դու,
որ ի հեճուկս ամեն մաքրության
աղավաղում ես պատկերը մարդու,
և ինքդ դուրս ես մղվում աշխարհից.—

Ուզում ես փրկել-փրկում ես մարդուն՝
անկախ փրկելուց, «փրկություն» բառից,
և դա կործանում չես էլ համարում՝
որ ինքդ դուրս ես մղվում աշխարհից։

ՀԱՅԱՐԱՏՈՒՄ

I

Պատմության ծովի մեջ ամեհի
լողալով՝ որպես մի նոր նավորդ,
հաղթահարելով ահի, մահի
ալեբախության հորձանքը հորդ
և գուրգուրելով երազանքի
ծլարձակումը բազմաբեղուն,
ընթանում էի դեպի կյանքի
խնդումը՝ նրա սրտի տեղում։

II

Օ, թռիչքների անհուն երկինք
և նավարկության օվկիան անհուն,
դեպի հաղթություն մղվելու կիրք
և տառապանքի բեռ անանուն,
դուք տվեցիք ինձ անասելի
ոգորումների թռիչք ու թև,
որ խիզախումը իմ խենթ սեռի
թեթև չլինի ու կարճատև։

III

Եվ ես հրեղեն իմ աշխարհի
սանձերը թողած, ճամփա ընկա,
որ բռնեմ սանձը խոսք ու բառի,

հագուրդ տամ նրա տենչին ագահ,
սակայն հոգուս մեջ, սրտիս խորքում
այդ իմ հրեղեն լեռնաշխարհի
խոլ վրնջյունն էր անվերջ երգում
և վերադարձ էր կանչում՝ արի։

IV

Եվ իմ մեջ կանչը այդ մոլեգին
դիվային սարսուռ արթնացրեց,
ճանապարհ բացեց զուլալ երգին,
հոգուս մշուշը խսպառ ցրեց՝
որ փակ դռները կրկին բանամ
և հասկանամ, որ մի նոր հանգով
ա՛խ, ես էլ պիտի հիվանդանամ
Նաիրյան անդուլ զառանցանքով։

V

Իմ սիրտը պիտի լցվի հիմա
քաղցր կսկիծը անմեկնելի,
ինչպես որ հողն իմ հազարամյա
տառապանքին է եղել գերի,
ինչպես որ քարը բիբլիական
շղթայված է տաք մամուռներով,
այդպես ներկան իմ և ապագան
պիտի շղթայեմ ես իմ ձեռով։

VI

Ես պիտի մնամ հավերժորեն
իմ հեգ աշխարհի թամբին կապած,
որ ինձ գուրգուրեն և օրորեն
հիշողություններն՝ արյուն թափած,
սնուցանեն ինձ այրության կիրք
և ներարկեն ինձ հեծյալի կամք.
անձը զոհելու պաշտելի ձիրք,
որդի լինելու պաշտելի վարք։

VII

Երբ ընտելացա ես իմ բեռին
և տեսա՝ ընդմիշտ կապված եմ ես,
խնդացի, որ նետ կա իմ ձեռին,
և որ՝ ազատ եմ թռչունի պես։
Ինձ թոթափեցի կապանքներից
մեծ աշխարհի և իմ խեղճության
և ճչացի որ՝ գտա ուղին
մեր սուրբ տեսակի անվերջության։

VIII

Անդաժանություն և անավեր,
առանց պղծելու կյանքը այս սուրբ,
ապրում ենք ահա քանի դարեր՝
որպես գոյության պայծառ ասուպ։
Այս մեր աշխարհի խժդժության,
անթիվ ցեղերի աղմուկներում
մենք տվեցինք մեզ, ա՛խ, գժության
և արարչական ոգուն ներհուն։

IX

Եվ որպես վերուստ նախանշված
մի բիբլիական անմահ երգիչ,
իմ ժողովուրդը սիրուց գժված
երգում է, ա՛խ, իր երգն ամոքիչ։
Եվ փողփողում է լուսացնցուղ
մխիթարանքի դրոշն իր տաք
սրտերի վրա մութ ու անձուկ
և ազատության ամպերի տակ։

X

Եվ երբ իմ հոգին աստղաթռիչ
մեր երազանքին դառավ ընկալ,
գայթակղիչ ու, ա՛խ, գրգռիչ
և բոլորովին անակնկալ

Ես հասկացա, որ կյանքն իմ անհամ
անմիտ է այդ մեծ երազի քով,
որ ես էլ պիտի հիվանդանամ
Նաիրյան անդուլ զառանցանքով։

XI

Որ նրանից է բխում առատ
հզոր ակունքը մեր գոյության
և պատգամները մեր անարատ,
և մեր արյունը՝ կարմիր որդան.—
և սփոփվում ենք թվում է թե՝
համաշխարհային վիշտ երգելով,
մինչ կոփում ենք կամք մի երկաթե
և նրբանում ենք միշտ երգելով։

XII

Հիմա, եղբայրնե՛ր արենակից,
ես ձեզ համար եմ երգում հիմա,
և աստվածային խոսքի հանգից
ցողեր են կաթում սրտիս ամա,
որ ծաղիկները մեր տրորված
նուրբ ցողունները կրկին շտկեն
և թափառական երգչի կորված
կամքն արիության հույսով պրկեն։

XIII

Հորիզոններ են առջև, ետև,
հորիզոններ են աջում, ձախում.—
խաբում են իրար մարդիկ թեթև,
ժողովուրդներ են առնում-ծախում,
թշվառությունը հանել շուկա
և դեռ փորձում են մեզ համոզել՝
թե ինչ էլ լինի, աշխարհը կա,
թեկուզ աներազ և առանց սեր։

XIV

Օ, նման աշխարհ և գոյություն
չեն կարող բերել մեր հին սրտին
ոչ ամոքում մի, ոչ գոհություն,
ոչ շքեղություն մեր խենթ երթին,
այլ կարող են մեզ դարձընել պաղ,
մի անբնակ ու անդեմ կառույց,
որի շուրթերին խոսքն է ճապաղ,
և աչքերում ու սրտում՝ սառույց։

XV

Ինչե՞ր կարող է անել մեզ հետ
խելագարությունն այդ աներկբա,
մութ բռնակալի հայացքը խեթ
և նրա մտքի թույնն անոպա.—
այդ գազանային երթը անմիտ,
որի ճակատին մեր արյունով
մեկ դրոշմվում է Սուլթան Համիդ,
կամ թե՝ գազանի այլ անունով։

XVI

...Թող պատմությունը մնա այնտեղ,
թող պատմությունն իր բեռը տանի,
մեր գլխի վրա, իբրև կանթեղ,
կախված է ոգին Հայաստանի։
Շողարձակումով անպարագիծ
լուսավորում է ընդերքը մեր,
և նրա լույսի տաք բժժանքից
պոկվում է ցավը-ընկերքը մեր։

XVII

Մենք այդ ցավից ենք ահա սնվում
քանի՞ մռայլ ու անհույս դարեր,
սակայն մեր հոգին չի սասանվում,

և չի կարենում մեզ խաթարել
նրա թանձրությունը՝ ցավից հյուսված,
նրա կլանող ոգին մածուկ,
օ՛, այդ թանկագին վշտի ճահճից
տե՛ս, դուրս ենք լողում մենք կամացուկ։

XVIII

Մենք՝ զավակները քո թանկագին,
մենք՝ զավակները քո տառապած,
մենք՝ հուշարձան քո տառապանքին,
ա՛խ, մենք մարմինը քո քառատված.—
Նաիրի երկիր — հին զառանցանք —
Նաիրի երկիր — թանձր կորով,
քեզ հետ միասին չէ՞ր, որ անցանք
ամենից դաժան բախտի հրով,
և բորբոքվեցինք, և այրացանք
կյանքի սրտի մեջ՝ կյանքից խռով։

XIX

. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .

XX

Մենք — երեք ընկեր, երեք արու,
մենք — թափառական երեք դերվիշ։
երեք պատրաստի ավարառու՝
սրտներս լիքը «ախ, վաշ ու վիշ»—
մեր հոգիները իրար տված,
որտեղ մեր ազգի հիմնն է գրված,
թափառում էինք Երևանի
մտերիմ ու տաք փողոցներով,
հառաչանքներով մեր անվանի
էգերի սիրտը հալեցնելով։

XXI

Երազում էինք մեղմ ու տխուր
և այրվում էինք երգի համար.—
և կարոտները մեր ոսկեխույր,
և անուրջները մեր հրավառ
շաղ էինք տալիս շռայլ ու տաք
տաք աղջիկների ոտքերի տակ.—
նրանց խնդումին հավետ գերի,
նրանց սրտի մեջ հավետ թաղված,
և ապավինած հին երգերի
նոր հնչումներին աղավաղված։

XXII

Օ, հին օրերի լուսե երազ,
հին թախիծների նոր արծարծում,
օ, պատանություն ոսկեերիզ
նոր տառապանքի դժվար անցում.—
մենք ինչպե՞ս պիտի հասկանայինք,
որ մեր սրտի մեջ որպես մահիկ
փայլում է հայոց տառապանքի
և հայոց բախտի մանգաղը կեռ՝
հնձելու ոչ թե խրախճանքի,
այլ եղերական — տխուր երգեր։

. . . . . .

. . . . . .

XXIII

Փողոցները թաց և ամայի,
ուշ գիշերվա հետ արթուն պառկած,
մեզ պատմում էին ահի, մահի
հազար պատմություն, հազար վարկած,
և լցնում էին մեր միտքը ջեռ
մութ սարսափների հազար էջեր։—
Անգոյությունից մեն-մի անգամ

երբ որ տրվել են նրանք կյանքին,
ախ, էլ ոչ մի ուժ տիտանական
չի կարող նրանց խեղդել կարգին։

XXIV

Փողոցները թաց և ամայի,
աստղերը՝ մանուկ, աստղերը՝ պաղ
թե այն ժամանակ իմանայի,
հուր կդառնայի ես անհապաղ՝
որպեսզի այրեմ ցավի լեզուն,
որպեսզի դառնամ կրակե սյուն
և կախաղանը՝ աշխարհավեր
բոլոր տեսակի խուլ ցավերի,
որ ցավը ցավին միայն դավեր,
և լույսը լիներ լույծ ավելի։

XXV

Բայց ի՞նչ է, ավա՜ղ, խորհուրդն այդ մութ,
այդ մութ աշխարհի ընթացքը հեզ,
որ իմացումը դառնում է սուտ,
քանի որ ուշ է այցելում մեզ.—
օ,՛ այն ժամանակ, այն ուշ պահին,
երբ որ գերված է կյանքը մահին։
Եվ նա գալիս է ոչ իբրև տեր,
իբրև պաշտպան ու իբրև փրկիչ,
այլ բացում է խոր խոց ու վերքեր
և զգացմունքին դառնում լկիչ։

. . . . . .
. . . . . .

XXVI

Եվ մենք երեքով մեր բիրտ դարի
ու մեր նյարդերը իրար կապած,
քայլեցինք երկար ու տաղտկալի

Փողոցների մեջ մութ ու հարբած։
Եվ հետո մի օր ցրիվ եկանք
Կյանքի հոսքերում հորդ ու անկանգ։
Գնացինք ուրիշ երեքների
առեղծվածներին միանալու,
Հուսալով, թե նա մեզ կբերի
Երգի ջրվեժ ու խինդի առու։

XXVII

Նրանք երկուսը, որ ինձանով
պիտի դառնային հիմա երեք,
խոսում էին տաք, բորբոք ձայնով,
ինչպես մենք էինք խոսել երեկ։
Նույն երազներն ու հոգսը մլար
և բողոքները նույն միալար
բզկտում էին նրանց հոգին
և հոգնեցընում միտքը նրանց,
ինչպես որ դժբախտ կյանքի մասին
ողբերգակների մոտ է գրված։

XXVIII

Մենք եղբայր էինք արդեն վերուստ,
եղբայրանալու էլ հարկ չկար,
ավելորդ էին խոսքերը սուտ,
միաբանության ցույցը՝ տկար։
Միասին էինք ու առհավետ
պիտի ապրեինք մենք իրար հետ։
Ինչպես մեկ անգամ աշխարհ եկած
տառապանքների ծլարձակում,
մենք նշված էինք իրար գրկած
Հայոց աշխարհի հույսի ցանկում։

XXIX

Եվ ես հասկացա, որ կյանքը իմ
կարված է նրանց թախծի թելով,
որ պիտի տրվեմ ես օրերին՝
նրանց մորմոքը լուռ թերթելով,
որ չի լինելու ուրիշ մի կյանք՝
ավելի պայծառ, ավելի թանկ,
լցված մի ուրիշ երջանկությամբ
և ուրիշ հույսի շողով կապված,
որ նրանց պիտի ոգեկոչեն
մեր երազները անապատված։

XXX

Եվ մենք երեքով լուռ քայլեցինք
մարդկային խռիվ հոսքի միջով,
օրերի միջով մռայլ ու ձիգ,
անհավատարիմ խոսքի միջով։
Գնացինք այնքան, մինչև գտանք
մեր երազանքի մի շողը տաք։
Եվ այդ շողն առած՝ իբրև պատգամ,
միացանք ուրիշ երեքների,
ապա զորացանք հազար անգամ
ծածուկ, թշնամի աչքից հեռի։

XXXI

. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .

XXXII

Օ՜, կապույտ երկինք ծաղկաձորյան
և անտառների զուլալ աշուն,
գիտուն այրերի մտքի ցորյան,

որ ազգի կյանքն է նախանշում։
Օ՜, դուք փողոտված հայրենիքի
սերմնացանները վաղվա բերքի,
դուք նման էիք ձմեռվա մեջ
բանտարկված մոլոր այն երամին,
որ ուղղում է իր հայացքը խեղճ
վաղուց հեռացած նավի կայմին։

XXXIII

Զրուցում էիք, բորբոք վիճում,
ապա աղոթում մեղմ ու նրբին,
հայ հանճարն էիք ոգեկոչում,
որ տաքացնի մեզ դաժան ցրտին.—
որ լիացնի մեր հոգին ծարավ,
ետ բերի այն, ինչ բախտը տարավ
լցնի մեզ կյանքի մի նոր շնչով,
մի նոր ճանապարհ հայոց բացի
և ուրախության երգ ու ճիչով
հին կրակները մեր արծարծի։

XXXIV

Օ, իրավ է, որ կանչում էիք
և ոգեկոչում խուլ եռանդով,
դուք նվիրումի հնչյուն էիք
գոյության կռվի մեջ այս անթով։
Սակայն երբ խնջույքն առաջ գնաց,
արթնացան կրքերը ձեր քնած,
և հասկացա ես ցավով սրտի,
որ դուք կանչում եք հանճարը հին,
որ ոչ թե ինքը առաջնորդի,
այլ որ հետևի ձեր կրքերին։

XXXV

Որ զորություն տա, մղի ձեզ ո՞ւր,
արդյոք ի՞նչ մի նոր մոլորության,
դուք մուսաների ճորտեր տխուր,
անտեղյակ հոգու խոր խորության.—
արդյոք դուք ի՞նչ եք տալիս նրան,
ձեր երազից ի՞նչ մաս հուրհրան.—
ի՞նչ ադամանդ եք կախում վզից
իր ատոմային ճառագայթով,
որ մոխիր մնա մեր երազից
մեր հիշողության վրա անթով։

XXXVI

Երբ վիճեցիք դուք գիշերը ողջ,
ձեր երազները տվիք քամուն,
ոնց արեգակը ձեռքով բողբոջ
գիշերվա մռայլ լաթն է քամում,
այդպես քամվեցիք, հանգստացաք,
առանց մեղքերի և անհանցանք,
մեր երգիչների ձեռքը բռնած,
ելանք, գնացինք եկեղեցի
և սուրբ պատարագ մատուցեցինք
սուրբ հոգու համար Հայոց Մեծի։

XXXVII

Օ՜, դու, Կույս Մարիամ, օ՜, սուրբ և մայր,
օ, համատարած բխում լույսի,
մեր սիրտը ինչպե՞ս կդիմանար
մեր տագնապներին մո՞ւթ, մեկուսի՜,
եթե մեր հոգու անդունդը ծեր
քո աչքի լույսը չթափանցեր,
եթե շշունջը քո մայրական
մեզնից մեր բուքը չհալածեր,
և մեղավորի վրա անգամ
քո գթությունը չտարածեր։

XXXVIII

Օ՛, Աստվածամայր, օ՛, մայր և կույս,
քո թափառական որդին հանգավ,
Նրա աճյունին իջեցրու լույս
և հանգստացրու միտքը անբավ։
Նրան հասցրու քո երկնքին,
լեր սպեղանի նրա վերքին,
թող այսուհետև սիրտը նրա
էլ հառաչանքի ձայն չհանի.—
լույս կաթեցրու հոգու վրա
քո որդու՝ Վիլյամ Սարոյանի։

XXXIX

Ապա բոլորս լույս զգեցած,
ողորմի տվինք նրա հոգուն,
որ ճախրանքներով իջնում էր ցած
և օվսաննա էր մեզ հետ երգում։
Մենք սպասում էինք նրա այցին՝
մեր թափառ եղբոր վերադարձին,
բայց իր փոխարեն հոգին եկավ,
կամարների տակ մեղմիվ սահեց,
մեզ հետ երգելով մեղմիվ հանգավ,
զորացնելով մեր պատրանքը մեծ։

XL

Ջնգում էր Հայոց աշխարհը լուրթ
և ղողանջների մեջ լողանում,
համրացել էին խոսքերը սուտ,
ոչ բառ էր հնչում, ոչ պիղծ անուն։
Օ՛, եղբայր էին բոլորն իրար՝
չարիքի դիմաց մութ ու մլար...
Բայց, ավաղ, միայն այդ մի պահին...
Վերին հաղորդման շնչով պրկված,
այդ ակնթարթին աստվածային
դուրս եկան բոլորն իրար գրկած։

XLI

Ապա ցրվեցին երեք-երեք,
ապա գնացին ուրիշ կողմեր՝
որպես թե երամն այդ հուսաբեկ
պատառոտեին վայրի հողմեր։
Իրենց կրքերի սանձերն հագած,
դարձան մոլեգին ու ահագնած։
Թողին այնտեղ մի շվար պատգամ
և մոլորված ու լքված մի հույս,
թե իբրև կրկին իրար կգան
ակնթարթի մեջ մի երկնասույզ։

XLII

Մենք մեր երեքով ճամփա ելանք
դեպի Սևանը սարսռալիք.—
աշնանագույները երանգ-երանգ,
խոհերի նման հին ու գալիք,
ծփում էին մեր ճանապարհին,
մի խոր տխրություն տալով պահին։
Ճարտարապետը զուսպ ու խոհուն,
և նկարիչը թախծահայաց
իրենց մտքերը լուռ հոլովում
և ժպտում էին մեղմ ու մարած։

XLIII

Հավիտենության երկու զավակ,
և ես՝ ընկերը նրանց ջահել,
մեր հիշողության թելը բարակ
մեր սրտերի մեջ էինք պահել
և կծկում էինք արագ-արագ,
և ապրելով խոր հուզման պահեր,
մի շիշ օղի և տաք հաց առանք
և շտապեցինք ճամփան ի վեր,
և հասանք այնտեղ, ուր որ հնում
Սևանա պարզ լիճն էր ծովանում։

XLIV

Ցկար աճյունը մեռնող ծովի,
ա՜խ, չեն ունենում ջրերն աճյուն.—
լոկ մեռած հողի վրա նրանց
լուրթ հիշողությունն է կանաչում...
կիսով չափ մեռած լճի կողքին
արձակեցինք մեր բանտված հոգին։
Եվ հիացմունքի կարկաչյունով,
և ընդմիջելով անվերջ իրար,
առաջ գնացինք սրտի հունով
զմայլանքի մեջ հոգեպարար։

XLV

Օ, դու գեղեցիկ ունայնություն,
օ, հոգու լլկանք ու մտքի վերք,
մեր կարճ գոյության թախիծ ու թույն,
մեր ուրախության սանձը անբեկ,
օ, հավերժության կլանող տենչ,
այդ ի՞նչ կրակ ես դու մարդու մեջ,
ի՞նչ աստվածային այրում ես դու,
որ այսպես դանդաղ, անհանգչելի,
ուտում ես կյանքը քո խեղճ որդու
և վերածում ես սև էջերի։

XLVI

Հեռու Ղրիմում ահա նստած,
այս անծայրածիր ծովի ափին,
ես ուրախության ճիչս զսպած
և սանձեր դրած իմ խենթ թափին,
տողեր եմ շարում թղթի վրա,
որ նրանց կյանքը միշտ հուրհրա.
Նրանց՝ իմ ազգի զավակների,
իմ եղբայրների արենակից,
և դեռ պատանու նման էլի
ես վեր եմ թռչում ամեն հանգից։

XLVII

Այս անծայրածիր ծովի ափին
մեռած ծովեր են երազվում ինձ,
ականջ եմ դնում նրանց ծափին
և քարանում եմ հիացումից։
Նրանց ծփանքը, որ էլ չկա,
քաղցր է ավելի, քան այն, որ կա։
Նա մեր հեռացած կյանքն է, ավաղ,
Նա մեր հեռացող կյանքն է կրկին,
հոգու ծնունդ է և մտքի խաղ,
լվացման ջուր է Տիրոջ ձեռքին։

XLVIII

Այդպես նստեցինք երկար մի պահ
Սևանի կապույտ թասի եզրին,
վայելեցինք մեր օղին ապա,
նայելով ծովի հեռատեսին։
Սևանը՝ հսկա հեռատեսիլ,
մենք՝ ափին նստած երեք եսիր։
Մենք տեսնում էինք ցոլքերի մեջ
պատկերները մեր կարոտների,
մեր ժողովրդի փառքերը պերճ
և այն, որ պիտի մեզ փառք բերի։

XLIX

Ա՛խ, ինչեր էին ծնվում հերթով
և ցոլանում մեր աչքերի դեմ.
էլ պատմություն ու երկիր կերտող
հերոսներ բազում, մտքի եղեմ,
էլ հրաշքների ոսկե շղթա,
էլ մի նոր աստված, որ մեզ գթա,
էլ մի մարդկային ճակատագիր՝
լոկ մարդու համար նախանշված...
...Երազանքի մեջ մեր ակնակիր
խմում էինք և խոսում գժված։

L

Պիտի երկարեր այդ պահն անհագ,
թե ճանապարհով — որտեղից ուր —
կուշտ ու կուռ կերած մի ավանակ
չանցներ զռալով ու շատ տխուր։
Ախ, նա զռում էր երկար ու ձիգ
երազի վրա մեր գեղեցիկ։
Մինչև որ տերը հասավ նրան,
ճակատին մի լավ ճիպոտ քաշեց,
ապա շտապով թռավ վրան
դեպի հակառակ ճամփով քշեց։

LI

Հետո մենք կրկին նստեցինք լուռ,
մի քիչ խղճալով ավանակին,
որ չարչարանքի մեջ իր անլուր
մի տեր ունենար գոնե կարգին։
Մի տեր, որից որ ոչ թե փախչեր,
այլ նրա ձայնին միշտ ականջներ։
Եվ գլուխը կախ, ետքից գնար,
և գլուխը կախ, բեռը տաներ,
և գլուխը կախ, ամեն հնար
գործ դներ ,որ իր գործը աներ։

LII

Մեր դեմ Սևանը պարզ ու կապույտ
իր ճայերին էր ճոճում հանդարտ,
մեր հիացմունքը, ախ, ծովածին
չէր հանգչում և ոչ մի ակնթարթ։
Սահման չկար մեր զմայլանքին,
որ այդ գեղուհին՝ քողը հագին,
այդքան նազանք է նվիրում մեզ
և զգացմունքներ տարաշխարհիկ,
խոր աշնան մեջ էլ ժպտում է հեզ՝
որպես գոյության անհուն բարիք։

LIII

Տխուր է եղել մեր բախտը չար,
և դա ասելն իսկ տխուր է շատ.—
բա մարդ ունենա այդքան հանճար
և լինի, ավաղ, այդքան ուժա՞տ։
Մեր ուզածն ի՞նչ էր այս աշխարհից՝
մարդկային մի կյանք, հեռու չարից,
լինել աշխարհի թագին պսակ,
զարդարել մարդկանց սիրտը բարով
և խոնարհությամբ մարդահասակ
գնալ Աստծո ճանապարհով։

LIV

Այսինքն՝ լինել արդարության
իրավատերը... նաև ծառան.—
լինել խղճի և ճշմարտության
մի հավերժական լուռ կացարան.—
այդ բոլորի մի բխումի տուն,
մի ակունք լինել՝ հավերժ արթուն,
բոլորի համար և ամենքի
հավասարատես, անկողմնակալ,
բալասան լինել ամեն վերքի
և եղբայրության ոգի դառնալ։

LV

Բայց եթե սիրտդ վերք է ու կա,
եթե նվում է հոգիդ ցավից,
եթե տանջանքի ժանիքն ագահ
արյուն է խմում կենաց ծառից.—
ինչպե՞ս բալասան դառնաս վերքին,
կամ ո՞նց ամոքես ցավն անմեկին։—
Ցավից քամվածը՝ ցավաերազ,
ցավից քամվածը՝ ցավախնդում,
քո դեմ հրճվանքի դեմքն է մեռած,
նրա հայացքը ցավաժպտուն։

LVI

Բայց ցնդում է այդ բոլորն հանկարծ,
ինչպես հեքիաթի մեջ է լինում,
և ուրախության կայծը հանգած
պեծին է տալիս ու մլմլում,
երբ բարեկամիդ հոգին մաքուր
լուսավորում է հայացքդ կույր։
Եվ ինչպես կրկին հեքիաթի մեջ,
փորձանքի միջից դուրս ես լողում,
հեքիաթի մանուկ՝ մաքուր ու պերճ—
և սրբագործված, և շողշողուն։

LVII

. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .

LVIII

Եղե՞լ էր մի պահ մեր օրերում,
որ հանդիպեինք մենք իրարու
և տապակվելով խոսքի հրում՝
պայքարի մասին չարի, բարու,
եղե՞լ էր մի պահ, արդյոք մի օր,
որ հիշողության տանջանքը խոր
մեր հանդիպումը չպսակեր
իր արյունալի ալ պսակով՝
ճարտարապետին չկորացներ
իր ազնվազարմ սեգ հասակով։

LIX

Ի՜նչ մտքի ճամփով էլ թափառեր
և ի՜նչ անուրջի գիրկ էլ գնար,
արտաբերելով չքնաղ բառեր,
ի՜նչ կարոտով էլ որ հագենար,

Վերադառնում էր տխուր ու խեղճ
հոբ հիշողության հեքիաթի մեջ։
Ոգեկոչում էր դեմքը նրա,
նայում էր նրա սուրբ պատկերին,
կորստյան բեռը սրտի վրա,
դաժան կորստի հավետ գերին։

LX

Իր հայրը հզոր Աստծո զավակ,
և դատավորը կրքի, մեղքի.—
եկել էր ինչ-որ մի ավազակ,
չէր թողել անգամ որդուն գրկի։
Արու հարեմի այդ ներքինին,
գերի մարդկային անդուլ քենին,
Նրան տարել էր մահին հանձնի
նենգ ու տմարդի ճանապարհով,
որ իբրև կյանքը գեղեցկացնի,
իբր՝ աշխարհը լցնի բարով։

LXI

Օ՜, դուք բարության նենգ դահիճներ,
մենք դեռ հնուց ենք ձեզ ճանաչում,
պիտի ձեր գլխին վաղուց իջներ
սուրբ արդարության սուրը հնչուն.—
բայց, ավաղ, օ, Տեր, ներիր բառիս,
արդարությունն էլ ուշ է գալիս։
Նա էլ գալիս է ոչ իբրև տեր,
իբրև պաշտպան ու իբրև փրկիչ,
այլ բացում է խոր խոց ու վերքեր
և հոգիներին դառնում լկիչ։

LXII

Ամեն անգամ այդ պատմության հետ
նկարվում է իմ աչքի առջև
սուրբ Նվիրյալի պատկերը խենթ,
և նրա հոգու տանջանքը ջեռ։

Ոսկե մշուշում այգալույսի
երևում է մեղմ ու մեկուսի։
Տեսնում եմ Պետիկ Թորոսյանին,
այդ նվիրյալին սուրբ ու մաքուր,
և նրան լկող խև գազանին —
ճակատագիրը մեր խով ու կույր։—

LXIII

Մեր ընդվզումը զսպված, կրկին
մենք բաժակներ ենք բարձրացընում.
դա ամոքում է բերում վերքին
և երազանքի շող է ծնում։
Եվ միասնության պատգամ կարծես —
դառնում է սիրո, նվիրման ծես։
Մենք, մեր նյարդերը իրար կապած,
կապած նյարդերին մեր խենթ դարի,
նետում ենք մի կողմ կյանքը խաբված,
փորձում ենք ապրել մարդավարի։

LXIV

Եվ նկարիչը այդ բաց դռնով
տխուր հեքիաթի մեջ է սուզվում.—
մեր ցավն ատամ ու հոգի բռնող
ողջ տիեզերքի մեջ է լսվում։
Խոշոր, թախծալի իր աչքերով
նայում է մեղմ ու հոգի գերող։
Ծամածռվում է դեմքը ցավից
և ընդվզումից փուչ ու անհույս,
բայց սթափվում է ոգու ձայնից՝
նրա, որ իրեն պարգևեց լույս։

LXV

— Հայրս էլ, գիտեք...— ասաց նա մեզ,—
յոթ տարեկան եմ նրան հիշում...
Նա գնաց, կորավ ասուպի պես,

Խառնվեց կյանքի անդեմ փոշուն։
Թեև եղեռնից նա ազատվեց,
բայց ուրիշ մի սև դատով դատվեց.—
գնաց՝ աշխարհում բախտ որոնի,
բայց անհայտության երախն ընկավ...
Ճակատագիրը՝ խև բորենի,
իսկ մարդու կյանքը՝ փլուզվող կավ.—

LXVI

Հիշողությունը՝ դեղին փոշի,
և տիեզերքը՝ մերկ անապատ,
մրրիկը՝ լեզվակ ահ ու գույժի,
արդարությունը՝ ուղտի սապատ։
Այդ սամումի մեջ ուղտն է վազում,
և, ավա՜ղ, սապատն է նվազում։
Եվ այդպես այնքան կնվազի,
մինչև որ ուղտը ընկնի հալից
և թաղվի խորքում շեկ ավազի՝
և սարսափազդու, և ահալից։

. . . . . .
. . . . . .

LXVII

Ես տեսա նրա կնոջը ծեր,
որ իր ամուսնու տատն էր արդեն,
որդուն, որ այնքան է մեծացել՝
ավագ եղբայր է մեռած հոր դեմ։
Ես տեսա նրա զավակներին՝
աշխարհի լույսը սուրբ ձեռներին։
Տեսա, և խորունկ մի տխրություն
ծավալվեց, ախ, իմ բառ ու բանին.—
Ողորմի նրա հոգուն արդար,
ողորմի Տիգրան Հակոբյանին։

LXVIII

Ողորմի տալով հոգուն նրա
և ճայի նման կռնչալով,
թևաբախեցինք ջրի վրա,
որ ծավալվում էր բիլ հանճարով։
Ճախրեցինք վերև՜-վերև՜-վերև՜
Գեղամա լերանց գագաթներով,
արև լցվեց մեր սիրտն անարև՝
զմրուխտներով ու ագատներով։
Ապա Մասիսից ելանք վերև,
Նա Հայոց Երկրի ճիշտ մեջտեղում
կանգնել էր հպարտ ու աներեր
և շուրջը շռայլ լույս էր տեղում։

LIX

Ելանք աստղերի գահը անհաս,
նայեցինք Հայոց լեռնաշխարհին,
այնպես էր՝ ասես սիրտդ բանաս
ու նայես կյանքի քո պաշարին։
Սա է, ասացինք, հրաշքը մեր,
սա է մեր տունը և մեր հոգին՝
բոլոր տեսակի ցավերից վեր,
բոլոր տեսակի ցարերից վեր
և սպեղանի մեր հին վերքին։

LXX

Սա է, ասացինք, սա է, որ կա,
այն միակ տեղը անառարկու,
որտեղից պիտի մենք արձակենք
հրթիռները մեր անմահ հոգու
դեպի աշխարհի ծագերն ամեն
և գավառները Հայոց բոլոր.—
Թող այդպես լինի։ Փառք և ամեն
բոլոր սրտերին խեղճ ու մոլոր։

Թորոս Մոսլէրեան

ԳԱՍԸ

ՆԱԽԵՐԳ

I

Ով Կաթն-Ծիր հայոց ոգու,
ով աստղահուռ ոսկե գոտի,
շողարձակել ես անձանձիր՝
պնդած մեջքին մեր հավատի։
Փռել ես լույս գիշեր ու զօր
մեր ճամփեքին մութ ու մլար
քո աստղերով մեծ ու հզոր՝
հավերժական ու հրավառ։

II

Կար ժամանակ, որ քեզ վրա,
փառքով և բորբ, և սնոտի
շողում էին ժողովրդիս
ադամանդները հուրհրան.—
Նրանց փայլը խամրեց-անցա՞վ,
թե՞ աչքերս են տկարացել,
սրբիր նրանց մշուշը ծեր,
ով Կաթն-Ծիր լուսամեծար։

III

Սրբիր ձեռքով քո աստղային
թանձր մշուշը դարերի՝
և Շապուհի, և Դարեհի,
որ նստած է հայոց գահին,
մառախուղը բյուզանդական,
մազութե ամպը թուրքերի,
նրանց մորմոքը երգերի՝
հավերժական ողբ ու կական։

IV

Քերիր հոգուց պիրկ մատներով
ողբի նստվածքը անթափանց,
փրկիր մեր միտքը խարխափած,
նորոգիր մեզ քո հին հրով.—
ով պատմության մեր Ծիր-Կաթին,
ով աստղահուռ ոսկե գոտի,
ով դու սատար մեր հավատին
և ուղեցույց ժողովրդի։

V

Ո՞ւր եք քաջեր հայոց ցեղի,
դյուցազուններ մեր հայկազուն,
որ տիրացաք անափ երկրի
և աստվածներ տվիք բազում.
Հայկ Նահապետ ու Տիգրան Մեծ,
Առյուծ Մհեր, Սասնա Դավիթ...
Հայոց երկիր, բերդերն էին
և հյուսիսիդ, և հարավիդ...

VI

Այսպես երկար մխում էի
խոհերի մեջ տառապագին,
մեկ էլ եկավ, դեմս կանգնեց

Հայկը հզոր՝ զրահն հագին։
Եկավ կանգնեց ու որոտաց,
(հողն ու սիրտս դղրդացին),
«Ի՞նչ է տանջանքդ,— ինձ ասաց,—
զարմերի զարմ իմ հայկածին»։

VII

Մինչև շունչս բերանս գար,
մինչև մի խոսք բարբառեի,
և բառերով իմ ապիկար
հոգուս վիշտը նկարեի,
Նա բռնեց ինձ թռչունի պես
և հողմի մի ակնթարթում
հայտնվեցինք լեռան վրա՝
աստղերի տակ հավերժ արթուն։

VIII

Ցածում խավարն էր տարածվում,
անեզրական խավարը մեծ.—
լսվում էին մութը ծակող
հեծեծանքները դառնահեծ։
Լսում էի ես ապշահար
ամեն տեսակ ճիչ ու հառաչ.—
քնի մեջ էլ տանջվում էին
մարդիկ իրենց բախտի առաջ։

IX

Նահապետը լռեց խորունկ՝
խավարից էլ խոր ու մռայլ,
հեղեղվում էր ուսերն ի վար
քոց աստղերի լույսը շռայլ։

Ապա նայեց աչքերիս մեջ՝
հասկանալով միտքս թաքուն՝
թե դյուցազնները վաղեմի
հիմա ո՞ւր են փայլատակում։

X

— Նրանք,— ասաց տրտում բանիվ,—
երկինք փախան մարդկանց ձեռից։—
Եվ Տիրի կառքը երկանիվ
դղրդալով անցավ վերից։—
— Նրանք,— ասաց,— մարդկանց համար
անհուն դրախտ էին կռում,
բայց թե մարդիկ համառ սրտով
ուրիշ դրախտ էին գնում։

XI

Անմեկնելի մութ մի դրախտ,
փառատենչ ու ողբերգական.—
այդ դրախտին իբրև տերեր
արքայիկներ աշխարհ եկան,
եկան ու ձեր բախտի վրա
իշխանություն սահմանեցին,
և չորս ոտքով թաղվեց հողում
հզոր Դավթի հրեղեն ձին։

XII

Ավերեցին, բզկտեցին
Քաջանց տոհմի մեկ սիրտը մեծ.—
մեր զարկերակն անզուգական

Հազար պստիկ հիղագ տվեց,
Հազար կողմով գնաց-կորավ
Հազար երկրի անապատում,
և մնաց որբ, անօթևան
Հայ արքայոց դրախտն անտուն։

XIII

Եվ նրանք, որ կաթիլ-կաթիլ
ժողովրդից հավաքվեցին
և դարձան խոլ դյուցազուններ
երկրի համար մեր հայկածին,
Նրանք կրկին ժողովրդի
արյունի մեջ ներծծվեցին,
քանի իրենց հողն ավերված
էլ չէր տանում իրենց մեծին։

XIV

Հիմա կրկին երկրի վրա
երբ սարսափն է ահագնանում,
գումարվում են վրա-վրա
կաթիլներն այդ՝ ցասմամբ անհուն,
և ունկնդիր ժողովրդի
աղոթքին ու աղաչանքին,
իբրև արվեստ, իմաստություն,
լույս են փռում նրա ճամփին։—

XV

Ասաց։ Եվ ես կախարդանքով
կրկին խավարը սուզվեցի՝
սիրտս լցրած հույս ու հանգով
մեծ խոսքերից հայոց մեծի։
Հիմա որքան սիրտը կուզի,
թող բիրտ սարսափը հոհոա.—
մեր Նահապետն աղեղնավոր
շողշողում է լեռան վրա։

XVI

Եվ սրտի մեջ ամեն հայի
քնած կաթիլն է թունդ եռում,
որ արձակի իբրև զրահ
իր ճառագայթը սևեռուն։
Այդպես Ռոսլինը արձակեց
իր ճառագայթը ոսկեղեն՝
հզոր, քան այն արյունն ամբողջ,
որ հեղել են ու կհեղեն։

XVII

Երբ առավոտ բացվի երկրին,
երբ որ բացվեն դռներն հուսո,
շողա արթուն սրտերի մեջ
բռնկումն այդ շքեղ լուսո,
էլ չի լինի բնավ խավար՝
որքան էլ մութ իջնի հողին,
ժողովուրդը կպաշտի հար
իր անմար լույսն արարողին։

ՓԱՌԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Դառնանք ողորմի տանք Նահապետին՝
Հայկ Նահապետին հազար ողորմի,
որ ի հեճուկս մեր մեղկ ծուլության,
վեր կացավ եկավ մեզ այցելության
և դյուցազնական նետ-աղեղն առած,
մեր հոգու, փառքի ջահերը վառեց։
Դառնանք ողորմի տանք Նահապետին...
Եվ ապա կարգով, ամենն իր հերթին,
դառնանք ողորմի ասենք Ռոսլինին,
Թորոս Ռոսլինին հազար ողորմի,
որ հայոց ոգին հավետ դրոշմեց
անսվաղ դեմքին պատմության որմի,
շնորհաբերելով փառք ժողովրդին։

Եվ ապա փառք տանք այն ժողովրդին,
որ Ռոսլինի պես զավակներ ծնեց,
թագավորական իր զորությունը
աշխարհե-աշխարհ, ծովե-ծով ցրեց
և հողմացրիվ եղավ անտեղի,
բայց իր զավակի ձեռքով հանճարեղ
պատմության ճակտին անունը գրեց,
գրեց, և— հայոց վսեմ թուլություն —
վայրի ցեղերի խանդը գրգռեց,
բորբոքեց նրանց մոլուցքը վայրի,
և այդ մոլուցքն իր սիրտը քրքրեց՝
սկսած կռվից Մեծ Ավարայրի
մինչև մամլյուքներ, մոնղոլ ու սելջուկ՝
գայլից, բորենուց մինչև լղրճուկ
ամեն տեսակի սողուն ու գազան...
Դառնանք ողորմի տանք մեր զոհերին,
ողորմի նրանց ոգուն անսասան,
սրբարաններին այդ մեր հավատի,
նահատակներին մեր արդար դատի,
ողորմի ասենք և գնանք առաջ
ճառագայթացիր օազիսներով
մեր հեգ պատմության մութ անապատի։

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

ԼԵՎՈՆ ԻՇԽԱՆԸ ԴԱՌՆՈՒՄ Է ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԹԱԳԱՎՈՐԸ ԵՎ ԻՐ ՄԵԾԱՄԵԾ ԳՈՐԾԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԵԾԱԳՈՐԾ ԱՆՈՒՆՆ Է ՍՏԱՆՈՒՄ

I

Անթիվ երկրներ ծնվեցին, անցան,
հանգան ծերացած աստղերի հանգույն,
և կործանվեցին գահերը կանգուն,
լկվեցին մեղքով և փոշիացան։
Ասպատակվեցին ճակատագրեր,

արտերը ցավի դրոշներ դարձան,
ողբացին կյանքը մարդիկ բարձրաձայն
և հորինեցին արցունքի գրեր։
Եվ մռայլության ու կործանումի
այդ դառն ու դժնի ժամանակներում,
այրելով ոգին աստղային հրում,
անսալով կանչին իրենց արյունի,
հայ ասպետները կրկին վառվեցին
գոյատևումի մեր անդուլ խանդով,
արհամարհելով մեր բախտը անթով,
Կիլիկիա երկրի ջահը վառեցին։

II

Մեծ Հայաստանի զավակներն անտուն,
թողած տիրույթներն իրենց տոհմական,
եկան ու եկան, եկան ու եկան,
քանի որ նրանց աշխարհն էր քանդում
թուրք ու թաթարի հորդան ոհմական։
Եկան Անի մեծ մայրաքաղաքից՝
արքայական ու իշխանաց զարմեր,
արվեստից ծառա, դպրության այրեր.
որ ընկել էին պատվական հարգից
և հոգին վշտի քուրայում այրել։

Եվ թեև լքված ու հալածական,
թեև բնավեր ու թեակոտոր,
արյունն աչքերում ու սիրտը խոտոր
արծիվներ էին, ախ, նրանք սակայն,
որ այրվում էին Հայոց աշխարհի
վերածնության անդուլ կարոտով։
Եկան, կապեցին վերքերը իրենց,
եկան, սրբեցին արյունն աչքերի,
եկան, թափ տվին փոշին ոտքերի
և կոնչացին զորավոր ու մեծ։

III

Արձագանք տվեց կռինչը նրանց
Տավրոսյան լեռանց այն մյուս ծայրից,
Հայոց հինավուրց կիրճ ու անձավից,
և Միջերկրական ծովը սարսռաց
հարազատ շնչից, հարազատ ձայնից։
Անշուշտ, ոչ միայն ծովը սարսռաց,
Թագավորներն էլ զգացին սարսուռ.—
բայց վախն անմիտ էր, և տագնապը՝ զուր,
քանի որ հայոց դաշույնը սրած
գլուխ չէր հատում ու հեղում արյուն։
Բայց հայոց սրտում դեռ չէր դադարում
անդուլ մորմոքը կորած աշխարհքի.—
դավաճանության աններում բարքի
վրեժը նրանց հոգում վարարում,
մղում էր, որ այդ դավաճանների
քազուկը հատի, գլուխը զարկի.—
չէ՞ որ երկիրը գերված էր, իրավ,
բայց փառքն ու ոգին մեծ նախնիների
թևաբախում էր աշխարհում էլի՝
երկիր ու երկինք, հյուսիս ու հարավ։

IV

Եվ նրանք, ովքեր եկան հյուսիսից,
և նրանք, ովքեր հարավից եկան,
և հալածական, և փախստական,
և արևելքից, և արևմուտքից,
գումար-գումարով, կուտակ-կուտակով
իրար կապեցին և հավատ, և զենք,
բրգեցին իրենց մարմինները սեգ
և պսակեցին երկիրը թագով։

Երբ պսակեցին երկիրը թագով,
երբ հայոց դրոշն սկսեց շողալ,
և երբ սկսեց ծովը դղդղալ

Հայոց նավերի հաղթական վարգով,
Հռոմի պապը իր թագն ուղարկեց՝
ադամանդակուռ և ոսկեբանված,
պատերազմների մեջ փառաբանված
Գերմանիո կայսրն ապա մեզ հարգեց։

V

Մեզ հետ խնամի դառնալու եկան
ուխտյալ թշնամիք՝ ոխերիմ սիրով,
մոմեր վառեցին քաղցր հույսերով,
նորընծա հոգով բարեկամական.—
քանի՞ արքաներ՝ շողշողուն ու պերճ,
դուքսեր՝ և երկու, և մի աչքանի,
հզոր իշխաններ քանի՞ ու քանի՞
խոր խոնարհվեցին Կիլիկիայի մեջ։

Օ՛, բարեկամներ, հարգեցեք դուք մեզ,
մենք անգո տեղից երկիր ենք ծնում
և ճոխ ու շռայլ ձեր առջև դնում՝
հեքիաթում շինվող աշխարհների պես։
Շնորհակալ ենք ձեր թագի համար,
բայց մի քիչ նաև մեր գինն իմացեք.—
մեզ ձեր ոչ ծառան, ոչ տերը կարծեք,
մենք ձեր ոգին ու միտքն ենք հրավառ։

VI

Ախ, ո՞վ էր տեսել այդպիսի ոգի՝
ընդդեմ այդպիսի անիրավության,
որ փշրանքները ավերված քո տան
վերածես կրկին անպարտ մի զորքի
և բոցավառես երկիր մի նորոգ,
և հիմնես մի նոր թագավորություն,
մի կողմ նետելով դառնություն ու թույն,
կյանք փառաբանես ավերման օրոք։

Եվ երբ աշխարհը խավարն է պատում,
տնքում է կյանքը խցերում մթին,
դու ականջալուր մարդկային սրտին,
տգեղինացած երգես զվարթուն,
և վերածնվես այն պահին, երբ դեռ
Վերածնության անունն իսկ չկա,
այսօրդ ապրես իբրև ապագա,
հորդացընելով խնդության գետեր։

VII

Եվ պալատներ են բարձրանում կրկին,
Հայոց պետության անառիկ բերդեր,
Հայոց լեռներից հորդում են գետեր՝
լեռան խենթություն ու պաղ խառնելով
Միջերկրականի փափկամեղք կրքին։
Եվ դղյակները բույրով պսակող
պարտեզների մեջ տիկնայք են ճեմում,
ազնվատոհմիկ իրենց վեճերում
գաղղիացոց խոսքի երանգն առնելով,
քարեբանում են սիրելը անքող։

Անքող սիրում են քաղաքների մեջ,
լկտանոցներում, ուր որ պատահի,
արհամարհելով լլկանքը դարի,
երգ են դարձընում, գիր ու դպրություն
մարդկային հոգու ամեն ելևէջ։
Խնկում է ամբողջ Կիլիկիան սիրով,
վիշտը՝ ոսկեբան թիկնոցների տակ.—
և շողշողում են ծիրանի ու թագ՝
Համահայկական թագավորության՝
Մեծ Հայաստանի անմեռ հույսերով։

VIII

Փա՜ռք քեզ, օվսաննա՜, Լևոն թագավոր,
որ Բագրատունյաց անկումին ընդդեմ,
որպես նոր կյանքի նորընծա եղեմ,

Հայոց երազը վերածնեցիր
բազկով ու գլխով քո պսակավոր։
Փա՛ռք քեզ, որ մեծիդ, քո Տիգրան Մեծի
ոգուն ընդառաջ կուրծքդ բացեցիր,
կռվեցիր մենակ, լուռ ու անձանձիր
և մեծից հետո, առաջին Մեծի,
անունը տվին քեզ Մեծագործի։

Դրանից հետո երեք դար պիտի
աշխարհիս վրա քո կամքը տևի,
և որին հետո պիտի հետևի
կրկին կործանում, սարսափ ու ավեր՝
կանաչ դրոշով նենգ Մուհամմեդի։
Բայց կործանումը թողնենք իր հերթին,
կործանումների քանակն՝ անքանակ,
դու ստեղծիր զորավոր բանակ
խաչակիրների, որը հետևեց
Տիրոջ աճյունը փրկելու երթին։

IX

(Փրկեցե՛ք, այո՛, աճյունը Տիրոջ,
իրեն, ա՛խ, փրկել չկարողացան.—
նրա մազերի հյուսքն ալեծածան
պահված է ճերմակ ծիծերի միջև
հեգ Ղազարոսի վշտաբեկ քրոջ։
Իսկ Մուհամմեդի ժառանգները պիղծ
գրկում են ում և որքան կամենան,
ախ, նրանց գրկում պիտի համենան
նաև Հայկազյան քո ազնիվ ցեղի
կույսերը՝ ախտի, կորստյան վախից)։

...Եկավ խնդրանոք և աղաչանոք
Լյուդովիկոսը, Պիոսը եկավ,
և ասպետական զրահներ հագավ
դքսությունների մի ամբողջ բանակ՝
նպատակամետ և քաջակորով։

Եվ Հայոց արքան օրհնաբանելով,
դուքս ու թագավոր ասպետ էր օծում,
Թրծելով կամքի Հայոց հնոցում,
դարձնում էր նրանց հոգու նվիրյալ
իրական գործով, ոչ թե բառերով։

X

Վտանգն այնտեղ է, ուր ուժն է իշխում,
ուր թվում է, թե կյանքն է ապահով,
շուրջը օձերի վտառն է խշշում՝
քոչվորական իր թագով ու գահով,
որ լույսը դեպի խավարն է քշում։—
Եվ պարիսպներ են բարձրանում հսկա,
հսկա պարիսպներ՝ յոթը շերտերով,
աշտարակներով բարձր ու արևկա,
ներսում ամփոփված մթին բերդերով,
բայց ուրախության ճիչերով ագահ։

Ելնում են ընդդեմ այն տակառների,
որ թալանելու մոլուցքով լցված,
լցված վառոդով ավերմունքների,
կործանումների կրքով ներծծված,
գալիս են ահա, գլորվում անդուլ
թուրք-թաթարների կծիկի դեմից,
գալիս են, ահա, քշին եղեմից
մարդկային սիրո հրճվանքը անդուռ
և ուրախության պայծառ գետերից
հիշատակ թողնեն ավազները կույր։

XI

Եվ քանի որ մեզ վաղուց է լքել
զվարթ ապրելու հրճվանքը վերին,
ապավինելով հոռի մտքերին,
առեղծվածի դեմ լալկվել ենք, կքել.—

Ես էլ խորհում եմ մտքով իմ եղծված,
որ կյանքը մահվան համար է ծնվել՝
չէ՞ որ չի կարող ոչինչ կործանվել,
եթե տակավին դեռ չի ստեղծված։

Թե որ աշխարհում լոկ կործանումի
աստվածը մնար, ավերմունք ցաներ,
եթե չստեղծվեր կրկին ու կրկին,
ապա նա էլ ի՞նչ պիտի կործաներ։
Ու ես, դարավոր կործանումների
անհուն տխրության շապիկը հագած,
այդ նենգ իմաստն եմ կրկին վերծանում՝
— Այս ի՞նչ դառնաղի ճակատագիր է,
առանց արարման չկա կործանում։

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԹԵ ԻՆՉՊԵՍ Է ՌՈՍԼԻՆԸ ԴԱՏԱՍՏԱՆ ՏԵՍՆՈՒՄ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՐԻ ԱՌԱՋ ԱՊՐԱԾ ԴԱՎԱՃԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ՀԵՏ

I

Ահա, նրանք հեռո՞ւ,
մռայլ միջնադարի
կամարների տակին,
խորաններում նստած,
մեջքները կոր, ինչպես
հոգնածավալ աստված,
ամբողջովին տրված
կախարդանքին բառի,
դրոշմում են գրեր
մագաղաթի դեմքին
և ականջ են դնում
իրենց գրչի երգին։
Ու նրանք կոր, ինչպես

կամարներն այն վսեմ,
որոնք պսակում են
մարմինները նրանց,
մարմնով կամարում են
գրերն իրենց գրած,
որ մեծ Տիրոջ խոսքի
ձուլ մեղեդին լսեն։

II

Օ՜, այդ կամարները
կամքով մի բարբարոս
պիտի ցնդե՜ն, լուծվե՜ն
ժամանակի փոշուն,
սակայն դրանց միջի
ամեն գիր ու շրշյուն
պիտի շողա որպես
հավերժական փարոս,
քանզի անդաստանից
բազմաբեղուն, հարուստ
այդ է կամեցել մեզ
մեր աստվածն ի վերուստ։
Նրանք պիտի քանդվեն,
տրվեն քամուն, հողմին,
սակայն կամարները
նրանց մարմինների
պիտի մնան հավերժ,
որ ընդունեն էլի
սերունդներին՝ իրենց
եկող ամեն կողմից։

III

Անքուն գիշերների
տառապանքով նկուն,
մարմարիոնե դեմքի
շողքը մագաղաթին՝

որպես լուսնի փայլը
ողորկ իր ճակատին,
որպես լուսնի փայլը՝
խաչքարերին անքուն,
նա մեն-մենակ նստած
գրչատան իր խցում,
իր մենավոր կյանքի
հրճվանքն անկասելի
խառնած իր մելանին,
խանդով անասելի
դրոշմում էր գրեր
և պատկերներ ցնծուն։
Ձեր բխումին ի տես
և պսակված հրով,
պիտի ամեն հայացք
և ամեն սիրտ բերկրի,
օ՛, կաքավներ նախշուն՝
Կիլիկյան տաք երկրի
և խորաններ՝ վսեմ
սյուն ու կամարներով։

Օ՛, դու Թորոս Ռոսլին,
գրչի մանուկ արքա,
մաքուր գույն ու գծի
ասպետ շնորհակիր,
ժողովրդիդ ոգու
ցնծությունը երգիր,
քանի այդ խնդության
կոկորդը չեն կրծել
քո փառավոր երկրի
թշնամիներն ագահ։

Նրանք կգա՛ն հերթով,
կգան կործանելու
և խմելու մուժը
տաք ու հարբեցընող,

քո ծովածին երկրի
ադամանդներ ծնող
հողի վրա սարսափ,
ավեր, ա՜խ, ցանելու։

IV

Եփրատ գետի վրա
կախված ժայռերն ի վեր
բարձրանում են հսկա
աշտարակներ բազում,
և Եփրատը նրանց
հեքիաթներ է ասում՝
լուսնի լույսի ներքո,
բազմաբազում օրեր։
Եվ այդ ատամնավոր
պարիսպներից ընկած
ստվերները ծանր
ընկղմվում են ջրում.—
նրանց պատմությունն էլ
պատմիչներն են գրում՝
պարիսպների ներսում
մագաղաթին կքած։

Ինչպես որ լուսնյակի
արծաթն անքննելի
ընկնում է ջուրն ու մեղմ
լուծվում ու ծավալվում,
այդպես մոմի ոսկին
մագաղաթին հալվում
և ծորում է դանդաղ
ու վերածվում գրի։
Կանցնի հազար ավեր,
կանցնի հազար արյուն,
և մարդկային ցեղեր՝
դաշն ու իրարամերժ.—
հիշատակող գիրը

կճառագի հավերժ,
և լուսնի պաղ դեմքը
կարտացոլվի ջրում։
Եվ այդ զգացումով
տաք ու մելամաղձոտ
և պարուրված մթով
ու լռությամբ անքուն,
Հայոց Վեհափառը
իր բաց գիրքը փակում
և նիրհում է փափուկ՝
մտքերի մեջ թախծոտ։
Ինքն է պատվիրատուն
տգու անմահության,
ինքն է մղում նրանց՝
ճորտերին այդ գրի,
որ իբրև խաչն իրենց՝
փառքը իրենց երկրի
բարձրացընեն դեպի
լյառը այն՝ Գողգոթան։

V

Նա թող այդպե՞ս խորհի,
հավատա իր խոհին,
սակայն Ռոսլինն այնտեղ
ամբողջովին լցված
աստվածային բառով,
մտքով ոսկեզօծված,
փառք է տալիս սիրուն
և մարդկային գոյին։
Ա՜խ, ցնծում է նրա
հոգին նվիրական
երազներից հյուսված
պատկերներին ի տես.—
եթե նրա գիրն ու
նկարները դիտես,
միտքդ ու հոգիդ ոչ թե
խոնարհության լոգան,

Այլ կցնծան կրկին
վարգով եղնիկների,
կաքավների կարմիր
կտուցների բոցով.—
կանանց մարմինների
մերկությունը խոցող
սրտիդ վրա վարդեր
կծաղկեցնի էլի...
Թե բրաբիոն լինի,
թե առնասպար ծաղիկ՝
խորանների շուրջը
բոլորհյուսկեն պսակ,
թե մանուշակ լինի,
թփեր տեսակ-տեսակ,
բալասան են հոգուդ
կամ անամոք ցավիդ։
Եվ մարդկային անհուն
սուրբ ու մաքուր դեմքեր՝
հավերժության խաղաղ
իմաստությամբ օծուն,
նրանք քո դեմ Աստծո
ճանապարհ են բացում՝
քանզի նրա սրտից
հենց նոր են դուրս եկել։
Օ՛, փա՜ռք այդ դեմքերին,
նրանց ելած տեղին,
և այն ճանապարհին,
որով նրանք ելան,
Հայոց սիրտ ու գրիչ,
փառք ձեզ հազար բերան,
անպարտելի պարտված
ձեր աննկուն ցեղին։

VI

Երբ խավարն է իջնում,
երբ գիշեր է արդեն,
պարիսպները դանդաղ

ժայռերին են լուծվում,
աշտարակներն այնտեղ
մթության մեջ հյուծվում,
կուլ են գնում թանձր
լռությանը անդեմ։
Եվ նրանց մեջ շրջող
պահապաններն արթուն
լուծվում-միանում են
լռությանն ու մութին.—
ամեն գիշեր Աստված,
ձեռքը դրած սրտին,
նրանց տագնապներն ու
երազներն է կարդում։

Ա՛խ, կարդա՛ դու, կարդա՛,
օ՛, Տեսանող Վերին,
Հայոց Աստվածների
ավեր պանթեոնում
միայն դու ես հիմա
քո աղոթքը մանում,
որ ամոքում բերես
մեռնող երազներին։
Ա՛խ, դու կարդա՛, կարդա՛,
անքննելի միակ,
կարդա՛ Հայոց բախտի
գրերը պաղ, անձև.—
Հայոց իշխանները
դարբիններ են դարձել,
որ չնչին-ինչ շտկեն
ծուությունն այդ անհագ։

Եվ շրջում են այնտեղ
պահապաններն զգոն՝
և ասորի, և հույն,
գաղղիացի և հայ,
որ թե հանկարծ խավարն
ասի՝ հասե՛ք, հարա՛յ,

Նիզակներով ճեղքեն
վտանգի կուրծքն խսկույն։
Վտանգն ամեն կողմից
դարանակալ ու նենգ
գոյության այդ տոնին
իր աչքերն է հառել.—
Հայոց բախտը քանի՞
հողմ է հողմահարել,
քանի՞ սուր է հատել
երազները մեր մերկ։

VII

Միայն նրա՞նք արդյոք,
օտարները մոլի,
արդյոք միայն նրա՞նք
մեզ լկեցին...
ախ, մոլեգին տենչը
իշխանության ցավի
իր դավաճան ձեռքով
խփեց Հայոց Մեծին։
Նրանք արյունարբու
եղբայրներով երեք
գլխատեցին Հայոց
վերջին թագավորին.—
Նրանք, որ հպատակ
ճորտեր էին երեկ,
այսօր գազաններ են՝
ատելությամբ խորին։

Եվ երբ հայրենիքի
վերածնման խանդով
բորբոք ու զինավառ
և այրվելով սաստիկ,
կորցնելով հանգիստ,
իշխանական անդորր,
Լևոն իշխանն ահա

օրն այդ չարաբաստիկ
հայտնաբերեց որջում
այդ դավաճան մարդկանց.
կողոպտված զենքերն
ու թագն արքայական,
ոռնաց գազանի պես
իր վրեժը հանգած.
աչքերը տաք արյան
արտասուքներ հագան։

Եվ նա բռնեց նրանց՝
եղբայրներին այդ նենգ՝
նրանց մեկիկ-մեկիկ
կախեց ծառից, մորթեց.—
և խոցոտեց սիրտը
ճշմարտությունն այդ մերկ,
և կոկորդից ոգբը
շառաչաձայն հորդեց՝
թե երկիրը խպառ
կործանվել է, չկա,
սակայն թագի համար
թագավոր են մորթում,
իշխանության, փառքի
այդ ի՞նչ տենչ է ագահ,
արյունարբու և նենգ
թաղված մարդկանց սրտում։

VIII

Այդ պատմությունն ահա
մագաղաթին տալով,
տալով սերունդների
արդարամիտ դատին,
նա, դժգոհ ու մենակ
մտքում մրթմրթալով,
նրանց պատկերները
մեխում է իր պատին։—
Նրանց՝ այդ դավաճան

Երեք եղբայրների,
որոնց դեմքերն ահա
մագաղաթին գծել,
հովանի է դրել
պատկերը չար նեռի,
բերանները դրել
հուդայական ծիծեր։
Ու ծծում են նրանք,
թույն են ծծում ու դավ,
նենգություն են ծծում
ագահորեն ու գոհ,
և նրանց կուրծք տվող
մի ինքնաբավ Հուդա
ճառագում է վայելք
հուդայական ոգով։
Արդյոք ճի՞շտ է գծել,
արդյոք այս է, որ կա՞
հարյուր տարի առաջ
պատմությունն այն եղած,
արժե՞ արդյոք թողնել
սերունդներին վկա
ողբերգությունն հայոց
ու ցավն իր անթեղած։

Մագաղաթներն այն հին,
որ հասել են իրեն,
փառքից ավելի շատ
ցավ ու դավ են բերել,
և սիրո մեջ տպրող
եղբայրներն իր հրեն
ճորտերն են անցյալի
և դավերի տերեր։
Լինե՞ն սրանք։ Օ՛, ո՛չ։
Թող սրանք էլ խաչվեն։
Եվ մեխեր է շարում
դեռ թաց մագաղաթին.—

ինչո՞ւ սերունդները
հիշողությամբ տանջվեն
անհույս սարսափների
և պատմությամբ խրթին։

IX

Գիշերվա իր տանջանքն
այդպես պատին խաչած,
աղջամուղջի միջով
նա դուրս եկավ տանից.—
հեռվում, պարիսպներից
արդյոք շո՞ւն էր հաչեց,
թե՞ հառաչանք լսվեց
մթին մի զնդանից։
Պարիսպները, դանդաղ
մութից անջատվելով,
հորինեցին կրկին
աշտարակներ վսեմ,
նրանք Եփրատ գետի
ջրում ջարդոտվելով
պիտի առավոտյան
զարթնումի երգ լսեն։

Ասպետները, խրոխտ
պարիսպներին թառած,
այգալույսի երգ են
երգում զվարթաձայն,
հայացքները դեպի
արևագալ հառած,
ասես ոչ թե մարդ են,
այլ ոսկեձույլ արձան։
Զարմանալի զուլալ
ու զրնգուն ձայնով
նրանք երգն են երգում
Հայոց Հայրապետի՝

արեգակին ձոնված,
ոսկե շողեր ցանող՝
և աչքերում մարդկանց,
և ջրերում գետի։

Մանուկ իր սրտի մեջ
և իմաստուն մտքում
Թորոս Ռոսլինն ահա
զարմանում է կրկին՝
«Հայոց Հայրապետը
հարյուր տարի առաջ
սուրբ զարթնումի երգ է
ձոնում արեգակին»։
Այդ ի՞նչ միջնադար է
և ի՞նչ տեսակ խավար,
կամ ի՞նչ հալածանք է
լուսավորող մտքի.—
չկա ոչ մի խավար
Հայոց Ոգու համար,
և ձույլ արեգակ է
ճառագումը երգի։

X

Նա գնում է դանդաղ,
ելնում պարիսպներից,
և աչքերից հոգնած
հովը քունն է սրբում,
քարափներին կանգնած
հիանում է վերից
զարթնող իր աշխարհով,
երգով այդ սրսփուն։
«Օ՛, Առավոտ լուսո,
օ՛, Արեգակ արդար...»—
կաքավները արդեն
«շաղկղա» են ասում,
բույնն են մտնում-ելնում
ծիծառները ճարտար,

Ժպտում-ծիծաղում են
Նարինջները հասուն։

«Օ, Առավոտ լուսո,
Օ, Արեգակ արդար...»—
վարդե՛ր, վարդե՛ր, վարդե՛ր
հազարերանգ ցոլքով.—
Նրանց քնքշությունը
ո՞վ կարող է կարդալ,
եթե ոչ լոկ հոգին՝
կախարդական շողքով։
Ո՞վ կարող է լսել
ծփանքն այն քույրերի,
որ աշխարհիս վրա
ծավալվում է նրբին՝
իբրև երազային
վայելք համբույրների,
իբրև հոգեկցություն
պաշտողի և սրբի։

Եվ իջնում է հետո
Ծփրատ գետի վրա՝
(իր հին ժողովրդի
երակն անկասելի).—
կանցնեն դարեր, ավա՜ղ,
ջուրն այդ կհուրհրա
հայոց մորթվող արյան
ողբով անասելի։

Եվ կճչա այնտեղ
այն հայացքը մաքուր,
որ առավոտ լուսո
ջրերին է խառնում
հայոց հրաշք գրի
ծաղկողն աստվածային,
որ սուրբ պատկեր ունի
և մի Թորոս անուն։

XI

Նա իր հոգին լցրած
լույսի ավետումով,
ու բույրերով, ձայնով,
ու զարթնումով հողի,
ետ է դառնում կրկին
խուցն իր, որ քթթումով
այդ բոլորը զնգուն
մագաղաթին թողնի։
Նոնենիներն ահա
պտուղներով պուրպուր-
ծիծաղներ են ցանում
նրա ճանապարհին,
Նա այդ ծիծաղները
հավաքում է բուռ-բուռ,
որ ներարկի գրչով
պատկերին ու բառին։

Ծղնիկները ահա
վարգով բիբլիական
կտկտոց են շարում
դեմքին ժամանակի.—
նրանց ուրախության,
նաև սիրո վկան
նրանց պատկերներով
գիրը կպսակի։
Աքաղաղներն ահա
կտուցներով կարմիր,
կատարներով զնգուն՝
արյան նման վառվող,
Թորոս Ռոսլին գրիչ,
որդան կարմիր քամիր,
որ նկարես նրանց
վեճը թմբկահարվող...

...Սակայն հայացքի դեմ
գիշերվա տաք մուժից

Կրկին դուրս են լողում
պատկերներն իր գծած.—
օ՜, դուք դավաճանե՜ր,
ձեր դիվային ուժից
պոկ չի գալիս հոգին,
ոչ էլ միտքը լցված։
Թեև խաչված եք դուք
ահա կրկին անգամ,
բայց մեր միտքն ու հոգին
մնում է ձեզ խաչված...

... Երգը լռեց այնտեղ,
և ջահերը հանգան,
և տարածվեց լույսը՝
պաշտված ու աղաչված։

ԵՐԲՈՐԴ ԳԼՈՒԽ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՄԵԾ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԹԱՓԱՌԱԿԱՆ ԳՈՒՍԱՆՆԵՐ ԵՆ ԳԱԼԻՍ ՀՌՈՄԿԼԱ ՀԱՅՈՑ ԱԹՈՌԱՆԻՍՏ ՔԱՂԱՔԸ ԵՎ ՎԻՊՈՒՄ ԵՆ «ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ՎԻՊԵՐԳԸ

I

Թափառական երկու գուսան՝
անցած հազար ավեր ու մահ,
Թուրք-Թաթարի ոտքերի տակ
Թողած իրենց երկիրն ամա՝,
Թողած Սասունն ու Վանն ու Մուշ,
Թողած Անին հազարասուրբ,
մրրիկների մեջ մահագույժ,
շալակն առած հազար ասուպ,
ելան եկան ու փլվեցին
դարպասների դեմ Հռոմկլայի.—
ա՜յս է, ասին, երկիրն հայոց,
ա՜յս է հիմա տունը հայի։

Պահապանները խաչակիր
աշտարակից նայեցին ցած,
տեսան՝ երկու օտարական
դերվիշների ձորձ զգեցած,
այնքան հոգնած ու անձկալի
փուլ են եկել դարպասի դեմ,
ոչ ուժ ունեն՝ ձայն տան մարդկանց
ու ոչ էլ կամք՝ կոչնակ զարկեն։
Իջան արագ և շտապով
Նրանց առան ու ներս բերին,
գինի ու հաց բերին թափով,
ուշքի բերին գուսաններին։

II

Իրիկվա դեմ, երբ հովն ընկավ,
կենդանացավ խոսքը լռած,
ծառայաթող զինվորները
քաղաքամեջ բերին նրանց։
Այդ ի՞նչ հրաշք էր կենդանի,
ի՞նչ հայացքներ, մեջքեր նազուկ,
ասես երբեք երկրի վրա
չէր եղել մահ, ավեր ու սուգ։
Օդը լցված էր, հիրավի,
ուրախությամբ մի անստվեր,
զվարթ խոսքից ու ծիծաղից
մեռյալն անգամ պիտի ազդվեր։
Այդ քաղաքի փողոցներում
թեթևաքայլ ու գեղանի
շարժվում էին կին ու օրիորդ՝
իբրև վերքի սպեղանի։
Եվ սյունազարդ դղյակներում,
և տներում իշխանական
և ճոխություն կար և ներհուն
իմաստության ցոլք կար անգամ։

Գինետներ կային անթիվ
գործավորաց ու արքենի,
դռները բաց գիշեր ու տիվ,
և փորերը՝ լիքը գինի։

III

Ելան-եկան քաղաքի մեջ
մունետիկները ձայն տվին
և կանչեցին տներից դուրս
ստրուկներին ու տերերին։
Դպիրները թռան վազքով,
լուրը տարան փոքր ու մեծին,
թե՝ մեր Հայոց Մեծ աշխարհքից
մեզ վիպողներ այցելեցին։
Եվ զարմանքը ալիք-ալիք
օվկիանի պես օդը ճոճեց,
և ով խուլ չէր ու համր չէր,
իր զարմանքի մասին գոչեց։

— Է-հե՛յ,— ասին,— աշխարհն Հայոց
հոշոտեցին գել ու գազան,
բայց թե Հայոց խելառ ոգին
անպարտ մնաց ու անսասան։—
— Է-հե՛յ,— ասին,— Հայոց երկրի
գլխին թափվեց կրակ-կարկուտ,
բայց ավելի բոցավառվեց
հայ մնալու տենչն անհագուրդ։—
Երգե՛ք, ասին գուսաններին,
վիպեք Հայոց ոգու մասին.—
և փանդիռները որոտով
«Սասնա ծռեր» վիպերգն ասին։

IV

Էլ Սանասար, էլ Բաղդասար,
էլ Ծովինար, Խանդութ Խաթուն,
էլ Մեծ Մհեր, Թլոլ Դավիթ,
Փոքր Մհեր ու Սասնա Տուն,

Էլ Մելիքին կիսել հորում,
Էլ առյուծի երախ ճղել,
Քեռին այնպես ծառը հանեց,
դողդողացին հող ու ջղեր։
Վա՜յ, ձեր անուշ բերնին մատաղ,
ինչ քաջերի անուն տվին,
նրանց զարգանդ ստվերն անգամ
կահաբեկեր չարք ու դևին։

Քայց Ռոսլինի հոգում զնգաց
էն Մարութա ջուրը պստիկ,
որ մաքուր ու հավերժական
և ահռելի ուժով սաստիկ,
կիջներ սարից էն Մարութա,
էն պղտոր գետ կտար-կանցներ...
այդ առուն էր, որ մեր ազգը
պիտի պահեր-հավերժացներ։
... Աշխարհը գետ՝ պղտոր ու մեծ,
Հայոց ոգին՝ զուլալ առու.—
պիտի փորձեն մեզ կուլ տալ միշտ
պղտոր գետերն ավարառու։

V

Մեկը մեկից խոսք առնելով,
երգում էին երկու վիպող,
և հորդում էր հեղեղի պես
ասքը՝ երգերն իրար կապող։
Ի՜նչ խնդություն լցվեց քաղաք.—
տակառները դուրս թափվեցին,
և խմեցին մարդիկ անհագ,
խմեցին լավ ու հարբեցին։
Եվ երգեցին գիշերն ի լույս
ջահերի տակ բոցավառված.—
և ամենքի աչքերի մեջ
էն Պստիկ Ջուրն էր նկարված։

Ռոսլինն առավ գուսաններին
և նրանց հետ խմեց, թնդաց

և գովում էր ամբողջ գիշեր
Պստիկ Ջուրն էն որոտընթաց։
— Քանի՞ պղտոր գետեր կտրեց,
չէ՞,— ասում էր,— լսեք դուք ինձ,
հենց էդ Պստիկ Ջուրն էր հորդաց
Մեծ Լևոնի հզոր բազկից։
Հորդաց էստեղ լեռներն ի վար,
դարձավ բերդեր ու դղյակներ,
որ Կիլիկիան կրկին հայոց
չքնաղ դեմք ու ոգի հագներ։

VI

Գուսանները խոր ազդվեցին
ցնծությունից անակնկալ.—
Նրանք վաղուց չէին տեսել
Հայոց բերդեր ու բերդակալ։
Շեն դղյակներ իշխանական
և այդքան կյանք, և այդքան եռք,
տերունական խոսքի հրճվանք,
աղոթքների ծես բազմաձեռք։
Մի ապահով ուրախություն՝
գազանների աչքից հեռու.—
և երգեցին ու խմեցին
ապրելու չափ ու մեռնելու։
Միայն թե ասես ինչ-որ մի բան՝
այնպես չէր, որ պիտի լիներ.—
չար ու տափակ մի դիմակ կար,
խրտնեցնում էր այր ու կիներ։
Պտտվում էր, հեռվից հեռու
գուսաններին հետևելով,
և տամկալի վախ էր փռում
չղջիկային իր թևերով։
Պտտվում էր հեռվից հեռու,
զգույշ, պաղ ու դարանակալ.—
և Ռոսլինի հայացքի դեմ
այդ դիմակը դարձավ նկար։

VII

Դարձավ նկար՝ թաթարների
մեր աշխարհը գալու մասին.—
արյան հոտ ու գույն էր խառնած
նրանց հագած ալ կերպասին։
Գինու թանձր մշուշի մեջ
նրանց դեմքերն անաչք ու պաղ
մի անհաղորդ պատի նման
չէին լսում ոչ երգ, ոչ տաղ։
Սակայն հայոց դյուցազնների
պատմությունները առինքնող
փշրում էին այդ անհաղորդ
պատերի շարքը՝ պաղ, հեգնող։

Քանի նրանք այդպես էին.—
տեսած հազար դավ ու չարիք,
գուսանները վիպում էին
երկրի մասին չնաշխարհիկ։
Իրենց երկրի, իրենց սիրո
և մարդասեր իրենց հոգու
ոգին էին փառաբանում
և նրա մեծ ուժն ահարկու։
Եվ երգի հետ գինին եռում,
ջահերի տակ ծփում պուրպուր
և քշում էր դեպի հեռուն
երազները հսկայաբուռ։

VIII

Թե Ռոսլինը ինչպես հարբեց,
գինին ինչպե՞ս խելքը առավ,
չհասկացավ, ի՞նչ հասկանար,
բայց լույսի հետ կրկին հարյավ։
Աչքը բացեց ու զարմանքով
գինու թանձր մուժի միջից
տեսավ՝ վարձակ մի կնոջ քով
պառկած է մեղկ ու մեղավոր
և դողում է նրա շնչից։

Փակեց իսկույն աչքը մժոտ.—
չցանկացավ, որ բաց աչքով
տեսնի պատկերն իր վավաշով
թեթևամիտ այդ կնոջ քով։

Նա ինքն իրեն իր մտքի մեջ
նախատում էր խիստ դառնապես
(թե որ մեղքը քոնն է միայն,
քո ապիկար զայրույթն, ավաղ,
էլ ո՞ւմ գլխին պիտի թափես)։
Այդպես մտքում տառապելով,
նախատում էր ինքը իրեն,
մեկ էլ թվաց՝ բուժիչ հովեր
եկան հեռվից, որ օրորեն.
մեղմ ու թավշե հպումներով,
սյուքի նման ու լեյակի
երկու նրբին համբույր իջան
դեմքի վրա թեթևակի։

IX

Այդ համբույրից տարաշխարհիկ
ներսը՝ հոգու մի անկյունում,
տարաշխարհիկ ծաղիկ ծաղկեց՝
հազարաթերթ, հազարագույն։
Ծաղկեց, քշեց հոգու միջից
դառնությունն ու համը գինու.—
այդ ի՞նչ սեր էր՝ դառավ զգեստ՝
որ սիրեցյալը զգենու։
Եվ Ռոսլինը փակ աչքերով
նրա շուրթերը շոշափեց —
շրթունքներից սեր էր վազում,
և Ռոսլինը կրկին հարբեց։

Տաք մարմինն այդ հրեշտակի
թևերի մեջ առավ փութով,
և ողողվեց էությունը
վարդի բույրով, վարդակաթով։
Լցվե՞ց-լցվե՞ց ու հանդարտվեց,

Ներսն օվկիան էր ալէբախում.—
Վարձակ կինը խոր հաճույքից
Մղկտում էր ու նվաղում։
Հաճույքն այնպես էր օրորվում,
այնպես բեղուն ու անձկալի,
որ կարող էր խոովք դնել
ամլության մեջ անգամ քարի։

X

— Քո օթևանն ինչպե՞ս եկա,—
հարցում արեց Ռոսլինը մեղմ։—
— Եկար իբրև սիրո վկա,—
պատասխանեց վարձակը սեղմ։—
— Սիրո վկա՞... հարբած էի...
գուսանները հարբեցրին։—
— Մեղավորը գինին է, տեր,
հարբեցնում է միշտ էլ ձրին։—
Եվ Ռոսլինը աչքը բացեց,
նայեց վարձակ կնոջ աչքին՝
— Այնտե՞ղ էիր երեկ գիշեր,
ներկա՞ էիր էն հրաշքին։

Ես խմեցի իմ դրամով,
աստված վկա, իրավ է դա,
բայց գինին չէր ինձ զարկողը,
էն Պստիկ Ջուրն էր Մարութա։
Տեսա՞ր՝ ինչպես իջավ սարից,
ինչպես կտրեց գետը պղտոր,
փրկվեց հարյուր ու հազարից
զուվալությունն էդ մի կտոր։
Հրաշք էր դա, մեղա՛ քեզ, տե՛ր,
մեր գոյության հրաշքը մեծ.—
ցամաքեցին անթիվ գետեր,
բայց ջրիկն այդ ազգը փրկեց։—

XI

Վարձակ կինը խոր հուզումով
ունկնդրում էր հայիլ-մայիլ՝

— Ջահել կյանքս սպասումով
պիտի անցներ՝ թե չգայիր։
Քանի՞ օրեր, քանի՞ տարի,
արդեն քանի՞ լուռ ժամանակ
սպասումով մի անձկալի
տենչում էի գալդ անհագ։
Բայց դու ինչպե՞ս իմանայիր,
ես՝ վարձակ կին, դու՝ գիր ծաղկող,-
ես՝ տաք սիրո մի հմայիլ,
դու՝ ճգնավոր՝ Սեր ծանակող։—

Եվ քրքջաց... քրքիջի հետ
— Ո՛չ,— ընդվզեց Ռոսլինն արագ,—
ես չեմ ծաղրել սերը բնավ,
ես ատել եմ կյանքն անառակ։
Բայց ատելն էլ խոսք էր՝ ասի,
խղճացել եմ ծախվող սիրուն,
և օրինակը Հիսուսի
դարձել է միտքն իմ սևեռուն։
Եվ փորձել եմ ապրել խոնարհ՝
մեր պապերի ավանդույթով,
տանջված սիրտն ու հոգին մլար
լուսավորել անկեղծ գութով։

XII

— Օ՜,— ծիծաղեց վարձակն անուշ,—
մի՞թե կարոտ չեմ ես գութի,
այրում էր իմ հոգին սիրով
քո գրերի ոսկին հուռթի։
Ես վարձակ կին եմ, հիրավի,
բայց իշխաններն են ինձ վարձում
վարպետ Թորոս, գիրդ տեսա
Արքայորդու մեծ ամրոցում։
Երանի թե չտեսնեի,
քուն ու հանգիստ ինձնից փախան.—
ես քեզ առատ ոսկի կտամ,
նվիրիր ինձ մի տաղարան։

Թորոսը լուռ լսում նրան,
մռայլվում էր թեթևակի,
մշուշի պես ծփում վրան,
հալվում էր քողը վարձակի։
Մաղերի տակ, պարանոցին
շողում էին մարգարիտներ,
մարգարիտներ փնտրող ձեռքը
ադամանդներ պիտի գտներ։
Ադամանդներ՝ շողարձակող
ստինքների ծայրին դրված.—
և Ռոսլինը տառապելով
ետ բերեց շունչն իր կտրված։

XIII

— Օ՛, ծովածին, դուստր ծովի,
դո՛ւ, որ մարմինդ ասպատակում,
բաժանում ես սեր վարձովի,
առատ դրամ ես կուտակում,
դու ուզում ես վաստակը քո
զոհաբերել տաղարանի՞.—
ես քո վարձը գրչով կտամ,
եթե ձեռքս չվարանի։—
Ասաց Թորոսն ու թանձրորեն
նայեց նրա աչքերի մեջ,
ասես ծփաց արտը ցորեն
խաժ բոցերի հրով անշեջ։

Ասես կայծեր արձակվեցին,
սակայն զսպեց կինն ինքն իրեն,
և Ռոսլինը, խիստ զղջալով,
ասաց նրան մտերմորեն։
— Ների՛ր,— ասաց,— ես կարծեցի·
խեղճիս վրա ծաղր ես անում,
ծաղրվածն էլ այն գիտի, որ
ծաղրը ծաղրով են լվանում։
Գեղեցկության ծառան եմ ես

Եվ ծառան եմ Տիրոջ խոսքի.—
Կնկարեմ աչքերդ հեզ
և կգծեմ ծամդ ոսկի։

XIV

Կնկարեմ որդան գույնով
շրթունքները քո տաղասաց
և կլցնեմ նռան բույրով
ստինքներիդ նռներն հասած,
պորտիդ վրա՝ բացված շուշան,
և մարմինդ կօծեմ խնկով,
իբրև հավերժ սիրո նշան՝
կզարդարեմ քեզ երկնքով։—
Ռոսլինն ասաց, և կինն իսկույն
հալվեց, փափկեց ու մեղմացավ,
կինը՝ սիրո ճորտն աննկուն,
անուշ խոսքի զոհը դարձավ։

Կրկին մեղմիվ փարվեց կրծքին,
կրկին շուրթերը համբուրեց,
և Ռոսլինի հոգնած գրկին
Նարնջենու այգին բուրեց։
Ասաց՝ Տիրոջ ծառա՞ն ես դու,
հապա հիշիր Տիրոջ խոսքից,
որ ծաղրելով գեթ մի մարդու
դարձնի իրեն նա կարեկից։
Տիրոջ խոսքում ծաղր չկա,
չկա վրեժ ու հատուցում.—
կարեկցություն կա աներկբա,
որ վրեժի հետ է մրցում։

XV

Եվ երկու օր անձրև տեղաց
հորդ, խելագար ու վարարուն,
և երկու օր թիվը մեղաց
բաղմապատկվեց սիրով անհուն։

Եվ երկու օր չելան տանից
սիրահարներն այդ ակամա,
քաղցր սիրո այդ զնդանից,
ուր չկար վիշտ, աղետ ու մահ։
Եվ երկու օր թանձր բույրով
նարնջենու այգին բուրեց,
վարձակ կինն այգ թագուհու պես
սիրեց նրան ու գուրգուրեց։

...Թագուհու պե՞ս... ա՜խ, թագի տակ
ազատություն չկա երբեք.—
— Օ՜, գուսաններ իմ հպատակ,
ազատ սիրո մասին երգեք։
Ձեր բառերով ոսկեղենիկ
ազատ սիրո գովքը արեք,
այս թագի տակ արևային
այրվում է իմ սիրտն անարեգ։—
Թագուհին իր գուսաններին
հորդորում էր իր պալատում,
և նրա սիրտը ոսկեցիր
տխրության մութ ամպն էր պատում։

ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՊԱՏԱՆԻ ԴՊԻՐԸ ՀԱՅՏՆՈՒՄ Է ՌՈՍԼԻՆԻՆ ԱՅՆ ԼՐՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԼԱՏԻՆԱՄՈԼՆԵՐՆ ԻՐԱՑՆՈՒՄ ԵՆ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՀՊԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՆԵԼՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

I

Եվ երբ երկինքը դատարկվեց ցավից,
և երբ դադարեց հեղեղը վայրի,
նա ,որ նման էր սիրո քարայրի,
դուրս լողաց սիրո տաքուկ անձավից։
Նա իր հետ տարավ արևի ոսկին
և սփռեց շռայլ անհուն աշխարհքում.—
օ՜, հազվադեպ է արևն այդ ծագում՝
չկամ տրվելով բառին ու խոսքին։

Այդ արևային մղձավանջով լի
և շուրջը սիրո տոթ ճառագելով,
հոգնած մարմնի հևքը հարգելով
և հպարտությամբ մի երևելի
Ռոսլինը գնաց, իր խուցը մտավ,—
ապա դուրս ելավ, մտավ գրչատուն.—
ոչ մի մարդ, մի շունչ դեռ չկար արթուն,
ոչ գրիչների խշրտումը թավ։

Եվ վրձինները քնի մեջ փափուկ
երազում էին անտեր ու լքված.—
մագաղաթների դեմքերը պրկված
ցոլցլում էին պաղ ու խուսափուկ։
Նրանց մեջ ասես դիվային ուժով
առկայծում էին մեղմ ու հուսաբեկ
բառեր, որ ինքը չէր լսել երբեք
և հունցում էին միտքը մշուշով։

II

Աշխարհում հիմա էլ այսուհետև
որքան որ ապրեր ու ջանք ունենար,
ունենար եռանդ ու միտք ու հունար,
խնդագին մտքով ու սրտով թեթև
կզոհաբերեր այն չաստվածուհուն,
որ իրեն գինու մուժին խառնելով,
իր թանկը այդքան էժան առնելով.
և առանց կովի և այդքան սահուն։
Առևանգել էր մի նվիրյալի
և փախցրրել էր իրեն աստրծուց,
թողել էր անղեկ և անկողմնացույց
այդ խավարի դեմ մութ ու ահալի։
Բայց խավարն այնպե՞ս ճառագեց իր դեմ,
խավարն այնպիսի՞ շողանքներ թափեց,
որ աստվածավախ իր սիրտը լափեց՝
դարձընելով պիղծ կարոտի եդեմ։

Հենց այդ էր ցոլում մագաղաթը պաղ,
այդ էր երազում վրձինը քնած,

և չաստվածուհին, որ այնտեղ մնաց,
և սիրտը այդ էր տենչում անհապաղ։
Նախապաշարման ահը վերթողած,
իբրև առաջին անգամը լիներ,
գրակալի դեմ նստեց աներեր,
բայց սիրտը զարկեց, և ձեռքը դողաց։

III

Անհայտ է կյանքի խորհուրդն անմեկին,
անհայտ է վերին խորհուրդը կյանքի,
անհայտը ինքն էլ անհայտ կրկնակի,
որ ի սկզբանե իշխում ամենքին
և բռնած ձեռքից հպատակների,
տանում է դեպի խուլ անհայտություն,
առավել թախիծ և առավել թույն
թողած սրտերում՝ պատկերով նեռի։
Բայց ինչպե՞ս դարձան գառներն աստծու
նեռին հպատակ ու նեռադավան,
նրա մութ ու չար խորհրդին հավան,
և գերի նրա մտքին մահացու։
Իրենց գոյության հրաշքը լքած,
անիրավության հունդով սնվեցին
և թույնով լցրին իրենց սուրբ խեցին,
և տնքում են՝ չար բեռի տակ կքած։

Հավատա՞ արդյոք, թե՞ չհավատա
հոգու փրկության, գոյի հրաշքին,
աշխարհն ստեղծող տեսանող Աչքին
պաշտամո՞ւնք հղի և կամ թե գթա՞,
որ ստեղծել է և ամենից շատ
անիրավությունն ինքն է տեսանում,
ամեն օր մի նոր վիշտ է տես հանում
և հավանաբար ողբում է ուժատ։

IV

Օ՜, ողբա՜, ողբա՜, Վերին Տեսանող,
քո ողբը հիմա քաղցր է ավելի,
քան հայացքները՝ աղերսանքով լի
մխիթարվում են մարդիկ քեզանով։

Տո՛ւր նրանց քո սուրբ արցունքից կաթիլ,
որ նրանց սրտում բողբոջի ցավով,
և չարի գուղձը՝ երակ խցանող,
հայեցրու և աչքերից վաթիր։

. . . . . .
. . . . . .

Եվ նա, որ պիտի տաղարան գրեր՝
կնոջ հմայքը գովաբանելու,
զգացմունքների հորձանքին հլու,
սիրո խոսքերով սիրտը քրքրեր,
վերցրեց ցամաք գրիչը կրկին
և տաք մելանի մեջ թաթախելով,
ինքն իրենից ու աստծուց վախելով,
խոնարհվեց կրկին արարչի խոսքին։

Մխիթարվեցե՛ք, սիրեցե՛ք իրար,
և մի՛ շնանաք, և մի՛ գողացեք,
Տիրոջ բարության ծովում լողացեք
և ըմպեք նրա խոսքը լուսարար։
Եվ մի՛ ենթարկեք մարդուն փորձության,
չի՛ ձերբազատվել նա դեռ կրքերից,
նա ձեր ձեռքին է, մի թողեք ձեռից,
որ չգլորվի դունդը պղծության։

V

Ապա գնալով մտքի ետևից,
ծաղկող Թորոսը վրձինը առավ,
հրեշ նկարեց — մի վհուկ պառավ—
և լեզուն կապեց է տառի թելից։
Ուզում էր ասել, թե Աստվածը՝ է-ն,
կարմատահանի չարության լեզուն,
և նրան, ով իր խոսքը չի լսում,
կուղարկի դժոխք, կքշի գեհենն։
— Բայց ինչո՞ւ այդպես... մի՞թե ճիշտ է դա,
մի՞թե մեր տերն էլ դաժան է այնքան,
որքան դահիճը և կամ թե արքան՝
փոխանակ մարդուն սիրի ու գթա։
Չէ՞ որ գրված է, թե մոլորյալին
նա գուրգուրանքով դարձի է բերում,
սխալմունքի դեմ խոնարհ համբերում
և ջանում է միշտ, որ հաղթի բարին։—

...Այդ զուլալ, զնգուն ձայնը թիկունքից
պարզ ղողանջյունով բան էր պահանջում,
մի պատասխան, որ միտքը չի տանջում
և որ չի ծնվում պղտոր ակունքից։
Թորոսը շրջվեց, տեսավ պատանուն
և զարմանքի մեջ պապանձվեց մի պահ.—
մատղաշ դպիրը այդքան աննկատ
ե՞րբ էր ներս մտել և ի՞նչ էր անում։

VI

— Որտեղի՞ց եկար,— հարցրեց նվաղ,—
ի՞նչ խորհուրդ ունի այդ վաղաժամ։—
Եվ իբրև թաքուն մի հանցանշան,
մթնեց դպիրի դեմքը անսվաղ։
Նա մի պահ վախով նայեց վարպետին
և ապա կրկին շառագունելով.
աղերսեց նրա հայացքը ներող
և խոնարհությամբ խոնարհվեց գետին։

Ասաց՝ ների՛ր ինձ, ո՛վ մեծաշնորհ,
ես իմ մեծերի կամքն եմ կատարում,
թեև վայել չէր խոնարհ պատանուն
առանց հարցումի մտնել աստանոր,
բայց Սրբազանը պատվիրեց ինձ խիստ՝
զգույշ հետևեմ քո ամեն քայլին։
Նայեմ քո ամեն գիր ու նկարին
և իր հարցումին պատասխան տամ միշտ։
Մթնեց Ռոսլինը և մռայլ լռեց.—
ուրեմն՝ այդպես թաքուն, տմարդի
լրտեսում էին, որ կանչեն դատի...
և սարսափելի հոգին գրգռվեց։
Ջսպեց զայրույթը, նայեց պատանուն,
խռովվեց սաստիկ, և միտքը ծվաց՝
ախ, անեղծելին կանգնած էր եղծված,
հոգևոր հայրերն այս ի՞նչ են անում։

VII

Դպիրը տեսավ խռովքը նրա,
այլայլվեց սաստիկ, ինքն էլ խռովվեց,
տամկություն իջավ աչքերի վրա,
անկապ խոսքերով արվեստը գովեց։

Սևեռուն նայեց գիր ու նկարին,
ասաց՝ պաշտում եմ գրերդ հնչուն,
ասաց՝ թող տերը կատարի բարին,
բայց ինձ ծանր ու սև մտքեր են տանջում։

— Ինչո՞ւ են,— ասաց,— գառներն աստծո
երբեմն այդքան ոխերիմ ու չար,
սրտերը դաժան, մտքերը քծու
և կործանումով հղի անպատճառ։
Իբրև թե Տիրոջ կամքին են գերի,
հանձնակատարն են նրա խնդության,
բայց նրա տված շնորհի հանդեպ
լցվում են թույնով վրեժխնդրության։

Ինչո՞ւ է այդպես, ո՜վ մեծաշնորհ,
ինչո՞ւ են ուզում քեզ քաշել դատի,
ես սարսափելի խոսքեր եմ լսել
ընդդեմ քո անձի և քո հավատի։
Սակայն իմ հոգին ձգտել է միշտ քեզ,
քո մեծ արվեստի հրաշքին ոսկի,
և իմ սրտի մեջ ծիլ չի արձակել
թունաբեր հունդը նրանց չար խոսքի։

VIII

— Ես իմ սրտի մեջ ատում եմ նրան,
ով կարգել է ինձ, որ քեզ լրտեսեմ,
ես պիտի գայի, որ քո հուրհրան
գրերին նայեմ և խոսքդ լսեմ։
Ես աշակերտդ պիտի լինեի,
խոնարհ դպիրդ՝ իր աստծո մոտ,
քեզ պես գունագեղ գորգեր հինեի
ճարտար գրերով, մատներով հմուտ։

Ես Սրբազանի կամքին անսացի
և հետևեցի քեզ, վարպետ Թորոս,
որ քեզ օգտակար լինեմ իմ ձևով,
չհաղթի լատին իր միտքը գոռոզ։
Ինձ ասա այն բիրտ մոլուցքի մասին,
որ մարդուն դեպի չարիք է մղում,
փշրում է սիրո գրիչը բեղուն
և թույն է խառնում մեր լուրթ երազին։—

Ասաց, և փայլեց ճակատը մաքուր,
ասաց, և սիրտը անհամբեր զարկեց,
և ելևէջեց կուրծքը ամրակուռ,
անհամբերության հանգով նվագեց։

Նրա խոսքերից Թորոսը շշմել,
կախարդվածի պես նրան էր նայում.—
անակնկալից կարող էր գժվել,
սակայն պատանու միտքն էր խնայում։

IX

Ինձ համար, ավա՜ղ, դժվար է այնքան
կարդալ Ռոսլինի մտքերը թաքուն.—
անհայտ է նրա ծնունդը անդամ,
և թե ինչեր է արել իր կյանքում։
Ի՞նչ երազներ է փայփայել լռին
և ո՞ր կարոտի ցավից կռացել.—
այն արվեստը, որ տվել է գրին,
ուրիշ ոչնչով էլ չի լրացել։

Պատմիչներն ի՞նչ են գրում հիրավի,
պատերազմներն են սնունդը նրանց
կամ պատմությունը խանդածին ցավի՝
թագավորների հոգին գրգռած։
Կամ առուծախի մասին են պատմում,
կամ դաժանության նրբությունների.—
քաջալերում են կարծես վերստին
իշխանությունն ու հարգանքը նեռի։

Թագավորները անցան-գնացին,
իրենց երկիրն էլ իրենց հետ գնաց,
սակայն արվեստով իր աստվածածին
զարթնեց մեզ համար Ռոսլինը քնած։
Նրա արվեստը և փառքը անծիր
հայոց գրերի մեջ է ամփոփված
և պսակված է լույսով անձանձիր
և հայոց ոգու հանճարով կոփված։

X

Ես պիտի ջանամ ձայն տալ Ռոսլինին,
եթե հանգն անգամ ինձ դավաճանի,
և խմեմ նրա չխմած գինին,

որ միտքն իր տխուր ավերը չանի։
Եվ այդպես անմիտ համարձակվելով,
ես պիտի ձայն տամ, որ նա վերստին
արևի բույր ու համ արձակելով,
օվսաննա կարդա անմեռ արվեստին։

Նրա հետ ասեմ խրոխտանալով,
որ եթե անգամ պատմության բեմից
բնաջնջում են երկիրը զոռով,
արվեստի երկրի չքնաղ եղեմից
չի կարող ջնջել ոչ մի ուժ նրան
և ոչ մի օրենք զինյալ ամբոխի,
քանի որ դա մեր հոգին է բուրյան
և արյան հևքն է մեզ ստեղծողի։

Գուցե հենց ա՞յդ էր, որ հեգ դպիրի
երդնատուր լեզվի կապանքը քակեց,
և նա փոխանակ դիտի, համբերի,
իր հիացմունքը խոսքով նվագեց։
Նա, բնազդներին տրված ապահով,
փորձեց իմանալ իմաստը գոյի,
սակայն այնպիսի խոսքով ու բառով,
որ իր մոլորվող հոգին տոգորի։

XI

Օ՜, բարեկամներ, ես տեսնում եմ, թե
խոստովանության այդ չքնաղ պահին
ինչպես է Ռոսլինն աչքերով սաթե
նայում պատանի իր բարեկամին։
Սարսափելի չեն էլ նրա հոգուն
դավաճանություն, դատ ու դատաստան,
քանի դեռ Աստված հուրը բորբոքում
թրծում է մի նոր ազնիվ ապաստան։

— Արդեն ասե՞լ ես,— հարցնում է մեղմիվ,—
ասե՞լ ես արդեն՝ որտեղ էի ես։—
Շառագունում է դպիրը դարձյալ
և ջինջ հայացքը խոնարհում է հեզ։
— Տե՛ր իմ, երկու օր անձրև էր տեղում,
երկու օր լրիվ հեղեղ էր վայրի,
և այդ անդադար, անդուլ հեղեղում
թվում էր՝ հոգուս լույսը կմարի։

Բայց երբ լսեցի ձայնդ զվարթուն,
ազատությունը տեսա հայացքիդ,
տիրոջ հրաշքի մի ակնթարթում
ծիրանու փոխվեց սքեմը հագիդ։
Եվ արդեն թռա ես քո ետևից
ոչ թե պատվերով նենգ ու թշնամի,
ոչ թե մի ուրու՝ ներշնչված դևից,
այլ որպես սիրով կախարդված քամի։

XII

— Շնորհակալ եմ քեզ, իմ բարեկամ,
և մեր Տիրոջը, որ քեզ ներշնչեց
զգայուն հոգի, մտքեր մոգական
և իմ հեգ սրտից տագնապը ջնջեց...—

. . . . . .
. . . . . .

...Բայց միանգամից ուրախությունը
Նրա աչքերում փոխարկվեց թախծի.—
և այդ թախիծն էլ արտացոլանքն էր
մի թաքուն վճռի կամ մտածածի։
Դպիրն անհանգիստ սպասում էր դեռ,
Որ Գրիչ Վարպետն իր խոսքն ավարտի,
բայց չէր կռահում և դեռ չգիտեր՝
ի՞նչ է վախճանը Ռոսլինի դատի։
Ռոսլինը ինքն էլ չգիտեր կարգին,
թե ո՞ր խոսքերով իր վճիռն ասի,
որ չխռովի պատանու հոգին,
որ այնտեղ լույսը, ախ, չնվազի։

Բայց եթե ջուրը ակունք է բացել,
պիտի աշխարհի վրայով հոսի,
թե տաք երազից հավքն է արթնացել,
երազի մասին պիտի որ խոսի,
եթե արցունքն է կախվել ակամա,
և կամ հասել է պտուղը ծառին,
որքան էլ, ավաղ, դառը լինի նա,
պիտի հաղորդվի անկումի ցավին։

XIII

Եվ թվարկելով անուն առ անուն
անթիվ մեղքերը մարդու և դարի,
նա համոզում էր անմեղ պատանուն,
թե նա իր պարտքը պիտի կատարի։
— Դու պիտի գնաս,— ասում էր նրան,—
և պիտի պատմես տեսածդ լրիվ,
որ ազնվության ամրոցը վերջին
չդառնա ավեր ու հողմացրիվ։

Թեև քեզ համար դժվար է հիմա
անարդար հնչող խոսքին հավատալ,
սակայն կտեսնես, որ արդար է նա՝
երբ որ սովորես գրերը կարդալ։
Մենք ծառաներն ենք մեր մեծ հավատի,
պիտի տառապես և լուռ համբերես.—
մեկ է, նրանք ինձ կկանչեն դատի,
դու պիտի մեղքը քո մեջ չկրես։

Թե պարտքիդ հանդեպ հանկարծ թերանաս
թեկուզև նման անարդար գործում,
նախաստեղծ ոգուց դու կհեռանաս,
և խավար կիջնի սրտիդ ամրոցում։
Երբ տարիներդ խոնարհվեն հլու,
և ժամանակը նոր մտքեր ծնի,
մեկ անգամ արդեն խաբած լինելու
հիշողությունը կսարսափեցնի։

XIV

— Արդյոք լսեցի՞ր այն գուսաններին,
որ մեզ դյուցազնոց կյանքն էին վիպում.—
նրանց ուղղափայլ աչքից ու սրից
մարդկային ոչ մի մեղք չի վրիպում։

Մե՛նք պիտի լինենք ժառանգորդները
նրանց մեծ գործի և մեծ հավատի.—
եթե արդար եմ, ես պիտի հաղթեմ,
որքան էլ նրանք ինձ կանչեն դատի։

Պղտոր աշխարհը... և ջինջ մեր առուն...
այդպես էլ կյանքի պղտորության մեջ
արվեստը մաքուր լույս է արարում,
որ հոգու աչքը պահպանի անշեջ։
Իսկ լույսը, ահա, սարսափ է, դպի՛ր,
խավար մոլուցքի և ախտի համար.—
դե հիմա գնա, տաճար շտապիր
և իմ այս խոսքն էլ Սրբազանին տար։

Օ՛, ես տեսնում եմ, թե ինչպես է նա
եռում իր անզուսպ կատաղությունով,
ինչպես է լցնում իր սիրտը անահ
լատինադավան գաղջ մթությունով։
Այն հոգին, ավաղ, որ ստեղծվել էր
հայոց հավատի տաճար դառնալու,
անհայտ վարակով եղծվել-պղծվել է
և ընդունակ չէ էլ համբառնալու։

XV

Ինչպես արևի շռայլ լույսի հետ
խամրում են մատղաշ աստղերը սուտակ,
այդպես դպիրը դանդաղ նահանջեց
Ռոսլինի մտքի բարկ շողերի տակ։
Ու լուռ, գլխիկոր հեռացավ-գնաց,
ու լուռ, գլխիկոր տաճարը մտավ,
ու չուզած մարդուն չբորոնելով
գտան աչքերը իր տխրաթաթավ։

...Ռոսլինն էլ այնտեղ, իր նստած տեղում
մենակության մեջ թանձրացավ լռին,
հիշեց վարձակի դեմքը շողշողուն,

Նայեց իր ձեռքով պատկերած գրին...
ապա իր թանձր հայացքը շրջեց
գրակալների վրայով թափուր,
և խորունկ տխրած հոգին անրջեց
քավության մաքուր արցունքներ բուռ-բուռ։

Եվ ելավ տեղից, հեռացավ շտապ.—
գրիչներն, ահա, ուր որ է, կգան,
մոայլ էր սիրտը, հոգին՝ թևաթափ,
ինքն իրեն դատի տվեց ինքնակամ։
Գնաց ու մտավ իր խուցը քարե,
հոգնած մեկնրվեց գորգապատ թախտին՝
իր կյանքն իր ձեռքով կնքած մարգարե,
որ ճակատը բաց նայում է բախտին։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՀԱՅՈՑ ՁՈՐՔԻ ՀԱՂԹԱԿԱՆ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՌՈՒՄԻ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԱՐՇԱՎԱՆՔԻՑ ԵՎ ՌՈՍԼԻՆԻ ԲԱՆՏԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

I

Ժամանակը ետ պտտեք,
թերթեք էջերը անցյալի,
մաքուր սրտով կրկին գտեք
երջանկության դեմքը ծավի,
և երկրներ հիշեք բազում՝
ծնված տենչից երջանկության,
ինչպես պայծառ ու երազուն
խաղալիքներ պերճ մանկության.—
օ՛, չի եղել բնավ երբեք
երկրի վրա մեր տարաբախտ
մի այնպիսի անուշ դրախտ,
որպես երկիրն էր Կիլիկիա։

Մեր դրախտի դաշտերն էնտեղ՝
մեր դրախտի ծովի ափին,
մեր դրախտի քաջ տերն էնտեղ՝
բարձրբերդի ձորի ափին,
մեր Եփրատը դղրդյունով
կիրճն ու աշխարհն է դեռ ցնցում,
էնտեղ թափված արյան գույնով
դեռ հայի սիրտն է կսկծում։
Մեր Տավրոսյան լեռներն էնտեղ՝
ձյուն-պսակով պսակավոր,
իսկ ոտքերին սուրբ ձիթենյաց
այգիների պսակն աղվոր։

Էնտեղ հայոց ծովի վրա
պար են բռնել նավերն հայոց,
ծիրանիներն են շողշողում
իշխանների և արքայոց։—
Հայկական տուն, հայոց ոգի
և ճախրանքի հզոր թևեր,
մանում է սիրտն ամեն մեկի
ազգը իրար կապող թելեր։
Այ, քեզ երկիր, հրաշքի բույն,
լույսի աղբյուր՝ տաք ողողանջող,
հազար երազ և հազար գույն
հոգու համար մեր անրջող։

Սակայն երկիրն ինչ էլ լինի,
ա՜խ, չի կարող դառնալ դրախտ,
թե չունի սեր անրջելի
մարդկանց համար և չունի բախտ։
Օրկիրը սեր ուներ անհուն,
բայց թե բախտը դավաճանեց.—
Տիրոջ դեմքին էր նմանում,
Հուդան նրան էլ խաչ հանեց։
Սակայն թողնենք առժամապես
հառաչանքի խոսքերը ջեռ,
քանի այսօր հասել են մեզ
հիացմունքի պայծառ էջեր։

II

Յոթնապարիսպ Հռոմկլայում
ապրում էին տարբեր ազգեր՝
եղբայրական սիրով կայուն
և դաշնությամբ մի համոզկեր։
Հույն, ասորի, փուլան, արաբ,
լատինացի, գաղղիացի,—
երջանկության տեղատարափ
և ցնծություն աղ ու հացի։
Ապրում էին նույն հավատով,
սրտով երբեք չէին նեղվում,
Նույն հավատի անուշ կաթով
նրանց հոգին էր հեղեղվում։

Առատություն անպարագիծ
նյութի, հոգու և արվեստի.—
ա՜խ, հավատ էր կաթում դեմքից
և գոռոզի, և համեստի։
Երանության մի պահ էր դա
գորշ պատմության երկար միգում՝
որ Աստծուն մարդ հավատա
և առերես, և իր մտքում։
Այնքան ջահել չէր հիրավի
մեր տեր Հիսուսն այն ժամանակ,
որ հավատի սյունը հալի
խոստումների հրով անհագ։

Եվ ոչ այնքան ծեր էր ու թույլ,
որ խոսքի մեջ ուժ չլիներ.—
այր էր — արծիվ թեթևասույր,
կախարդում էր այր ու կիներ։
Եվ ամենքին անբացառյալ՝
ամեն ազգի եղբայրներին.—
Ներս էր մտնում տուն ու քարայր
փրկության իր ջահը ձեռին։

Մարել էր հին լեգենդը սուտ
գաղափարի բռնակալի,
Նա միանձնյա հերոսն էր սուրբ
ամեն գրի ու նկարի։

Նա բռնակալ չէր հիմնովին
հայոց թագի սահմաններում,
և երբ մարդիկ շեղվում էին,
գուրգուրում էր, սիրում, ներում։
Ինքն էլ մեզ հետ կամաց-կամաց
պիտի կյանքը լավ հասկանար,
մնար սիրո դեմ կարկամած՝
թե այդքան շուտ չիմաստնանար։
Բայց այդպիսի դրախտն, ավա՜ղ,
ամեն մարդու սրտով հո չի՞,
գալիս է հողմը անուրախ՝
վրան վշտի փոշի փչի։

III

Նարնջենու այգիներից
միրաժի պես, բայց անվարան,
դուրս էր լողում կամաց-կամաց
մարդկային հոծ մի քարավան։
Նա գնում էր դանդաղ ու ձիգ,
ի վեր քարափն էր բարձրանում,
որ պատկերով իր սլացիկ
գետի վրա էր թանձրանում։
Ապա միրաժն այդ մարդկային
կախկխվում էր ծվեններով
քարափների ցցունքներից
և տարածվում էր ցրվելով։

Եվ արևի խաղն առնելով,
ինչպես միրաժն է կայծկլտում·
Ճիշտ այդպես էլ արևի տակ
ասպազենն էր փայլատակում։
Յոթնապարիսպ Հռոմկլայի

Ավագ դուռը երբ որ բացվեց,
պարիսպներից ահագնալի
զանգերի ձայնը տարածվեց։
Ղողանջեցին զանգերն ամեն՝
միախորհուրդ ու բազմաձայն՝
հայոց զորքն էր վերադառնում
հաղթանակով ալեծածան։
Պարիսպներից դուրս թափվեցին
բնակիչներն աղաղակով.—
ասպետական մեր այրուձին
պարսպից ներս մտավ հարգով։
Ապա նրան լուռ հետևեց
գերիների ամբոխը հոծ,
գերիներից հետո կարգով
հետևակ զորքն եկավ հայոց։
Եվ լռեցին պարիսպների
հուժկու զանգերն ահեղաձայն,
երբ լռեցին, տաճարների
քնած զանգերը արթնացան։

Այդ հայոց Վեհն էր ողջունում
վերադարձը հայ քաջերի,
խաչը ձեռքին կանգնած էր Վեհ
դռան առջև Մայր Տաճարի։
Սպարապետն իջավ ձիուց,
ծունկի եկավ, խաչն համբուրեց,
Վեհափառը օրհնեց նրան,
և Կիլիկյան խունկը բուրեց։
Ամբոխն ալիք տվեց, խշշաց,
ամեն սեռի ու կարգերի,
և աղաղակ ելավ երկինք
«Կեցցեների ու փառքերի»։

IV

Ուրախ էին, այո՛, սաստիկ,
բայց թե ի՞նչ էր նվաճվածը.—
հայոց զորքը ետ էր բերել

Հայոց հողն ու հայոց հացը։
Առևանգված, ասպատակված
բերդերն էին ետ նվաճել.—
այդ էր, ահա, սրտերի մեջ
տաք ցնծության ձայնով աճել։
Թե ոչ, այդպես ե՞րբ էր եղել,
որ օտարի հող ու ջրով
ուրախանար սիրտը հայի
և արձագանք տար ճիչերով։

Ուրախ էին և հուսառատ,
որ իրենք էլ կամքով արի
կարող էին պաշտպան կանգնել
իրենց երկրին մարդավարի։
Կարող էին դառնալ բանակ
և թշնամու դեմ ծառանալ,
հանուն երկրի կռվել անհագ
և հաղթությամբ պայծառանալ։
Անխամրելի պայծառություն,
որ դարերով լույս է տալիս
ժողովրդի սրտում արթուն
և օրհնաբան բառ ու բանիս։
Անափ, անքեն, անչարամիտ
ցնծություն էր անպարագիծ.—
եկան այրեր հանճարամիտ
ամեն բերդից, ամեն վանքից։
Եվ իշխաններ եկան շուքով,
տիկնանց հետ նուրբ ու նազելի,
խոսում էին մեղմ շշուկով,
ժպտում էին երազելի։
Եկան ամեն կարգի մարդիկ.
զորապետ ու վաճառական.—
և բոլորը ներս ու դրսից
խրախճանքի զգեստ հագան։

Իսկ տներում զվարճության,
հեքիաթային հրով ասքի,
զգեստները դեն նետեցին
պերճաղիճներն ամեն ազգի։
Դեն նետեցին ու պարեցին
փանդիռների նվագի տակ
և մարմրնով ներծծեցին
ասպետների հայացքը տաք։
Եվ խելագար գինին հորդաց
երակներով քաջ այրերի.—
դա խրախճանք էր մարդկային՝
քաղաքակիրթ ու վայրենի։

V

Երբ ամեն տեղ ու ամենուր
ցնծությունը ծաղկեց լրիվ
և խաչվեցին օդում իրար
խմած խոսքեր գանգրախռիվ,
երբ հավասար առյուծ էին
կռվող ասպետ, քաջ ու վախկոտ,
և նրանց մեջ հալհլվում էր
կանանց հայացքը նվաղկոտ.—
նա մեն-մենակ ու մեկուսի
նստած էր իր քարե խցում,
մագաղաթին աստվածային
գիր էր գրում, պատկեր գծում։

Աստվածային... այդ էր ու կար.—
ոչինչ չկար Աստծուց դուրս,
նրա դեմքը գեղանկար,
նրա խոսքն ու հայացքը լույս
ամենուր էր, ամեն ինչում,
համատարած ու ցանկալի,
նրանով էր անգամ շնչում
նա, ով ելել էր պայքարի
ընդդեմ նրա՝ այն միջնորդի,

որ փակել էր դեմքն Աստծու,
որ մարդկանցից մի բան շորթի
շողում լեզվով, վարքով քծու։
Բայց Ռոսլինը այդօր բնավ
դրանց մասին չէր մտածում.—
կենաց ծառով ու ծաղկունքով
զարդարում էր իր Աստծուն։
Նկարում էր հեքիաթային
թռչուններ ու արարածներ,
զրընգացող գիծ էր գծում,
որ հետո տաք գույնով լցներ։
Բայց թե մեկը տեսներ նրան,
դիվահարի մեկն է՝ կասեր,
հայրենիքի հանդեպ չունի
ոչ հիացմունք ու ոչ էլ սեր...

Ի՞նչ մագաղաթ, կամ ի՞նչ նկար,
երբ հաղթանակն է տուն եկել,
պետք էր գնալ, բոլորի հետ
գինի խմել, ցնծալ, երգել...
Այդ, իհարկե, նա լավ գիտեր,
գիտեր՝ իրեն ի՞նչն է կանչում,
և դեռ իրեն հասանելիք
մեղքի բաժինն էր ճանաչում։
Բայց և գիտեր ուրիշ մի բան,
որ քչերը կիմանային,
դա հայտնի էր մեկ էլ Աստծուն,
որ իշխում էր կյանք ու մահին։

VI

Նկարում էր նա մեկուսի
և ինքն իրեն խոսք էր ասում՝
«Ահա որդին Մարիամ Կույսի,
երեխա չէ, այր է հասուն,
թող նա վկա լինի մտքիս
և թող դատի արդար դատով.

մի չար հողմ է անցել ասես
մարդու մտքի անապատով։
Այսօր մենք ե՛տ գրավեցինք,
վաղն իրենք ե՛տ կգրավեն,
կրկին բերդերը մեր վերձիգ
կավերեն ու գերեվարեն։

Ասպատակո՜ւմ, ավե՜ր, պայքա՜ր,
մահ ու սարսա՜փ, թույն ու դավե՜ր.—
մարդու մտքի ուժը տկար
էլ ճանապարհ չունի ավել։
Պիտի այդպես գնա առաջ,
պիտի այդպես մահ տարածի,
վարձն ստանա՝ ողբ ու հառաչ,
և ինքն իրեն միշտ հալածի։
Իսկ ես, ահա, նկարելով,
փառք եմ ասում մարդու գոյին.—
գուցե այս չէ՞ փրկությունը,
քայց կործանում չէ բնովին»։

Եվ տխրելով ելավ տեղից,
և քայլերը նրան տարան
դեպի ուժի ու տարերքի
սանձակոտոր հանդիսարան։
Ուրախ էին մարդիկ, իրավ,
հոգով, սրտով, ամեն ինչով,
լցրել էին քաղաքն ամբողջ
խուլ հրճվանքի տաք կոինչով։
Եվ ցնծության ալիքն անտես
նրան էլ իր գիրկը առավ,
և նահանջեց միտքը սրված,
և բնազդի ոգին հարյավ։

Տեսավ ծանոթ-մոտիկներին,
գինու գավը բռնեց ամուր,
և թնդացին «կեցցեների»
կանչերը զիլ, միահամուռ։

Եվ նա խմեց մինչև հատակ,
գինին շողաց մորուքն ի վար,
դարձավ հաղթող, ոչ հպատակ
և աշխարհի, և իր համար։
Տաք արյունը եռաց կրկին
թրթիռներով անմեկնելի.—
լավ է դահիճ լինել մտքին,
քան թե լինել որբ ու գերի։

VII

Երբ խմում էր, որտեղից ուր,
վարձակի դեմքն ընկավ աչքին,
մի պահ գինին ցոլաց պուրպուր
շողարձակող նրա լանջքին։
Այդ անաստված աստվածուհին
տեսավ նրան, պարն ընդհատեց,
ընդհատեց ու հաջորդ պահին
մարմար գետինն ասպատակեց։
Թափեց շուրջը կարկուտի պես
մանրիկ դողը սրունքների,
ինքնամոռաց հևքն էր ասես
ողջ հմայքը նրա դերի։

Ապա Թորոսն էլի խմեց,
և վարձակը պարեց էլի.—
դա իրար հետ լուռ հաղորդման
ժամանակ էր երևելի։
Ապա Թորոսն առաջ գնաց,
և վարձակը եկավ առաջ,
և Թորոսի ներսից պոկվեց
անլսելի խուլ մի բառաչ։
Անլսելի... բայց նա լսեց,
ում համար որ պոկվել էր դա.—
ով քնի մեջ ձայն է լսել,
իմ խոսքերին կհավատա։

Շուրջը լարում կար ահռելի
ու վախճանի լուռ սպասում,

Նրանց շուրջը բզզում էին
հայացքների ճանճեր բազում։
Բայց մի հայացք սրի նման
հետևում էր դրսից նրան,
պտտվում էր մութ տագնապով,
որ նրա մեջ խրվի թափով։
Նա սքեմի մեջ պարուրված
պտտվում էր ամբոխի մեջ,
ասես անգղ լիներ վայրի,
որսն էր փնտրում մութ դողի մեջ։

Ճիշտ այն պահին, երբ Ռոսլինը
դուրս էր եկել գրչատնից,
այդ պահին էլ այդ խուզարկուն
ներս էր մտել մյուս դռնից։
Պատկերագիր, նկարազարդ
մագաղաթները թերթելով,
ձեռքն էր առել մի նորագիր
Ավետարան՝ ոսկե թելով։
Հրաշալի Ավետարան,
գույն ու գծի շքեղ հանդես,
և բարության բազմադարյան
խրախճանք էր գրքում ասես։

VIII

Դե՛, դա ոչինչ, բարություն էր,
զվարթ կյանք էր ու զվարթ լույս,
Քրիստոսի հարություն էր,
լաջվարդ ամպեր ու Մարիամ Կույս.—
հենց այդտեղ էր, որ կարկամեց,
լեզուն կապվեց, դեմքը սառավ.—
այդ պատկերը ծանոթ թվաց
պատկերների մեջ հազարավ։
Շրջեց մյուս էջը, այնտեղ
ընտանիքն էր արքայական,
կրկին նայեց իր տեսածին,
և աչքերը արյուն հագան։

Ելավ տեղից ու կատաղի
սուրաց զվարթ ամբոխի մեջ՝
հաստատ մտքով, որ կթաղի
իր տեսածը իր ոխի մեջ։
Եվ ի՞նչ—տեսավ։ Վարձակն այնտեղ
իր հմայքոտ պարն էր պարում,
և Ռոսլինը նրա դիմաց
կրքի թևերն էր սատարում։
Շուրջը լարում կար ահռելի
ու վախճանի լուռ սպասում,
բզզում էին նրանց վրա
հայացքների ճանճեր բազում։

Այդ կուտակումն անասելի
զարթնեցնում էր նորոգ կրքեր.—
արդեն պարզ էր, որ վարձակին
Ռոսլինը պիտի գրկեր։
Եվ նվագն էլ ինչ-որ թաքուն
մենամարտի ձև էր առնում,
հրեշտակներն այդ նվագում
իջնում էին ու համբառնում։
Եվ այդ պահին, երբ ամեն ինչ
պարզ էր արդեն հայելու պես,
վրան հառեց հայացքը ջինջ
իրեն ծանոթ դպիրը հեզ։

Նա անպաճույճ եկավ, կանգնեց
պարուհու և իր մեջտեղում,
և աչքերից կապույտ ու մեծ
զարմանալի լույս էր տեղում։
Զարմանալի կապույտ մի լույս
հմայիչ ու անբռնելի,
ժպտաց Ռոսլինը ինքնասույզ
մաքուր սիրով ընթեռնելի։
Մի պահ ուզեց գինու գավը
պարզել նրան, սակայն տեղում
միտքը փոխեց, զգալով, որ
վարձակից է իրեն շեղում։

IX

— Ի՞նչ կա,— ասաց որոտի պես,—
ինչո՞ւ եկար, բա՞ն պատահեց։—
Եվ Թորոսի դղրդյունը
մտրակի պես դեմքը դաղեց։
— Ներիր,— ասաց,— Վարպետ Թորոս,
քաջությունը չէր ինձ բերեց,
այստեղ ուրիշ մարդու տեսա,
և իմ սիրտը չհամբերեց...
Նայի՛ր— ասաց,— թեքվեց մի կողմ,
և Ռոսլինը շրջվեց մեկից,
ոնց անգղի թևերի հողմ
պոկվեր նայած սև եզերքից։

Սրբազանը կանգնել մոայլ
և նայում էր տեսարանին,
չգիտեր՝ ի՞նչ պատիժ գտնի
այդ կես-սրբին, կես-հարամին։
Եվ Ռոսլինը փափուկ ու պինդ
մի կողմ հրեց խեղճ պատանուն.—
վարձակն ինչպես մոլորված վիթ,
կանգնել ու չէր հանգստանում։
— Հիմա գրկեմ՝ հանգստանաս,—,
ինքը իրեն խուլ մռմռաց,
պոկեց գետնից փետուրի պես
և վերին հարկ տարավ թռած։

Թե ինչ եղավ էնտեղ հետո,
ինչ աղմուկ ու իրարանցում,
ով ներկա էր, երկար օրեր
դա նրա միտքն էր հալածում։
... Արքայական Գրիչ էր նա,
դարձավ այդպես ապերասան —
նրան գրքեր են պատվիրում
կաթողիկոս ու սրբազան,

Էլ թագավոր, էլ իշխաններ,
Էլ մեծ տիկին ու թագուհի,
իսկ նա վարքով իր սանձարձակ
հանում է աչքն անգամ կույրի։

Դպիրն էնտեղ կանգնած մնաց
սարսափելի խռովքի մեջ,
ապա հոգին խուլ մռմռաց
մեղսապարուր իր գովքի մեջ.—
քանզի միտքը ընդվզում էր
արարքի դեմ աստվածամարտ,
բայց հոգին էլ փսփսում էր
հիացումի խոսքեր հպարտ։
Հիացումի խոսքեր նրան,
որ ոչ մի խոսք չէր ասել չար,
լոկ բացել էր պատուհանը,
որ աղավնին մտնի տաճար։

X

Բայց թե պարզ է, որ անպատիժ
այդ արարքը չի մնալու,
այն, ինչ բոլորն աչքով տեսան,
չես կարող տալ չիմանալու։
Սրբազանը, խուլ հևալով,
սև փնչոցներ էր արձակում,
մտմտալով Ռոսլինի դեմ
կործանարար մի հարձակում։
Մեկ աջ, մեկ ձախ տալով իրեն,
մոլտում էր պատժի մասին.—
սակայն ամբոխն աղմկում էր
կին փախցնող քաջի մասին։

Սրբազանը անհայտացավ,
մի ակնթարթ չքվեց աչքից,
մեկ էլ եկավ, խրոխտ կանգնեց,
երկու ասպետ՝ իր առաջքից։

Կանչեց ասավ՝ դուրս բերեք շուտ
և Գրիչին, և վարձակին,
տարեք բերդի զնդանը շուտ,
շղթա զարկեք ոտ ու ձեռքին։
Ասպետները երբ ներս մտան
և վերին հարկ ելան փութով,
իրենց առջև բացված գտան
մի վարագույր՝ անուշ հոտով։

Էնտեղ ներսում նստած էին
և ծաղկողը, և պարուհին,
կնոջ ձեռքին՝ կնոջ պատկեր,
մեղմ խոնարհված իր բարուրին։
Աստվածամայրն էր, հիրավի,
գլխին ոսկե լուսապսակ,
նայում էր պարզ, մայրավարի,
ինքը՝ բացվող մի արուսյակ։
Երբ ասպետները նայեցին,
վարձակն իր դեմքը թաքցրեց.—
իսկ Ռոսլինը ելավ տեղից,
և հայացքը բարձրացրեց։
Ասաց՝ Հայոց աշխարհի մեջ
ասպետն ասպետ պիտի մնա,
Սրբազանին այդ ես եմ պետք,
ինձ կարող եք տանել ահա։
Եվ նրանք լուռ ու գլխիկոր,
երեք այրեր գնացին դուրս.—
հառաչանքի պսակ հագավ
տեսարանը այդ սրտահույզ...

Եվ այդպես հեշտ, այդպես անմիտ,
ցնծության մեջ բորբ ու նախշուն,
հաղթած երկիրն ուրիշ մի տեղ
հաղթանակը ետ էր բաշխում։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿԵՂԵՎԴ ԲԱՑ ԱՐԱ

Կեղևդ բաց արա 3
Երեկ տխուր, այսօր ուրախ 5
Իմ ծուռ երգերը 6
Նարեկացուց հետո 7
Արևն անչատեց ծառից 7
Փողոցը նրա համար է 7
Քամին գլորում է պահածոյի տուփը 8
Ձեր կուրծքը ցավում է, մայթեր 8
Ստվերներ է քշում քամին 8
Երկիր 9
Կա աշխարհում բանձրիկ մի Հայաստան աշխարհ 9
Երեկ հանդիպել եմ 9
Երկինքը սփրթնել է 10
Զվարթնոց 10
Զվարթնոցն է նորից, ավերակներ 10
Քամին՝ մելանխոլիկ ջութակահար 11
Դեղին տերևներն հավաքել քամին 11
Երկու փոքրիկ շնիկներ 12
Ամառ 13
Այրված շուրթեր 13
Մարդկային երթը օրորվում է ծույլ 14
Օրերն ընկնում են սյուների պես 14
Քամին ծառերի շորցած ճյուղերից 15
Անսահման անուշ քնքշություններով 15
Ձյուներն սպիտակ շրթունքների պես 16
...Ու վերադարձ 16
Արդեն հիշելն իսկ դժվար է 17
Տիեզերական մեր մեծ թռիչքներում 17
Արևամուտը 18
Ոչ աստղեր, ոչ լուսին երկնքում 18
Ապրում ենք իրար հետ, ապրում ենք 18
Դու ինձ գրկեցիր ամուր և ամուր 19
Կապույտ լուսինը դարձավ շողարձակ 19
Ես կանգնած էի, դու գնում էիր 20
Ճերմակ գիշերներ, բարի գիշերներ 20
Շուշանը նստել է պատուհանում 20
Հազար երանի և հազար ափսոս 21
Գիշերը խորանում է 21
Ուռած, արցունքաթաց կոպեր 21
Պառկած եմ ահա 21
Ինչ-որ բամբասանք են գտել 22
Եվ անցնում է այսպես պահը, ժամանակը 22
Սրնգահար լուսնի կապույտ սրնգահար 22
Ես չէի կարող չհաշտվել արդեն 22

Տերը ընկնում է 23
«Աշունը տխուր լալիս է դրսում» 23
Օրերս անցան իրար հետևից 23
Փակում եմ աչքերս 24
Իմ աչքերը 24
Իմ կապույտ արցունքները 24
Մանր են իմ աչքերը 25
Երբ տխրում եմ ես 25
Աշնանային օրը 25
Ես տեսա 25
Մառերի դեղին խշշոցը 26
Կան մարդիկ, որ զորեղ են 26
Մարդու հոգում կյանքը 26
Եվ գետն իր պատրանքը թրթռուն 27
Ցուրտ էր կյանքը 27
Ինձ մի թաքցրեք հովհարների տակ 27
Աշուն 28
Ջրասույզ երկինք ու սուզված հուշեր 28
Եղերերգ 29
Մեսրոպ Մաշտոց 29
Մառը ծառ էր ծնվել 30
Քամիները բոլոր 31
Ամպերն իջել ահա 32
Ճակատագրի դառնության միջով 33
Աշխարհը լիքն է կործանումներով 34
Ապակու մեջ ահա ծառերն են օրորվում 35
Շունը 36
Գիշերվա մեջ կժերն իրար 37
Հայրենի՛ Մհերին 38
Ձեզ 38
Տեսիլքներ 39
Ձերմակ բարձերի խլության մեջ 40
Լռում եմ 41
Անտուն ուղևորներ 42
Մեղուն 44
Անձրևից ծեծված 46
Փղոսկրե անիվներով 46
Ինձ գարնան մի օր դրին անկողին 47
Ժայռերի կրծքից բվվոց էր գալիս 48
Մաղվում է ցած 48
Ու գարնան հետ տխրությունով թափանցիկ 49
Մեր խոհերին, մտքին տիրակալ է 50
Սանին 51
Ես հիշում եմ ծովը 52
Իմ սրտում ասեղներ կան ցցված 53
Մեռածների աշտարակ 54
Սփոռցների տակին պահված 55
Մեզ խտուտ են տալիս 55
Մեր հոգիներն անույշ ու կույր 55
Կանգնած չեն տանիքները 56
Պատերը պտտվում են շուրջս 56
Կեսօր է։ Միջօրե 56
Դեռ առավոտ է 56
Թռիր, քամի, շտապ անապատի վրա 57

Ես ծնվել եմ 57
Ես մի ամբողջ գիշեր 58
Մի բեկոր ժայռ պոկեմ 58
Երեկո 59
Մի քիչ բարձր 59
Ապրում է մեկը հեռու 60
Բաց, դուռդ բաց արա 60
Ինչ-որ տեղ հիմա 61
Այդ բոլորը վերհուշ է 61
Դու, գտնված երգ 62
Իմ ձայնը անմարմին, անգլուխ 63
Հասմիկին 63
Ես քոնն եմ հիմա 65
Ձկա 65
Բառը 67
Ջրերը կակաչներ են ուտում 68
Դու կաս, հիմա դու կաս 69
Ոչինչ չեմ հասկանում տագնապներից 69
Ես ամեն օր քեզ հետ զրուցում եմ 71
Ես այստեղ չեմ հիմա 72
Ես իմ մանկության հանդերին 73
Սուտ էր տառապանքն իմ 74
Մոռացման քանի պատնեշ 75
Ձայները 77
Իսկ ես, մշուշներում քնած 78
Առավոտը հանդարտ սար ու ձոր 79
Սերդ խեղդում էր ինձ 79
Վիլիթն աղջիկ է մի փոքրիկ 80
Ինչքան որ կա սեր 80
Քո լռությունը՝ հեռու և մոտիկ 80
Քո տառապանքը դու տարար քեզ հետ 81

ՏԱՔ ՍԱՂԵՐ

Կանաչ դաշտերը փափուկ 82
Կան անթիվ աստղեր և մոլորակներ 84
Տառապանքի ծառ 85
Ես ոչ մեկին չեմ տվել 86
Ուռիները տաք թախիծ են քամում 87
Հեքիաթի գորգ 88
Փաթաթվեմ աշնան թափանցիկ օդով 89
Երազանքի անիվ 90
Անձրև 92
Ինձ փաթաթեք երկնքով 93
Ոգեղեն հաց 94
Մարդիկ աշխարհը ծաղկեցնում արյամբ 95
Աստրծո նման խաղաղ պահիր քեզ 95
Օդը 96
Անսահման լեռը 98
Մութն օրորվելով 100
Օրորոցային 100
Եթե ամեն ինչ մեր ճանապարհին 102
Անցանք թեթև 103
Արի, զավակս, արի, սիրելիս 103

Ճառագայթի կյանք 104
Ամպը քարի ճեղքով 105
Ես ամեն անգամ իմ հավատի մեջ 106
Մայր մտնող արևին ասացի 107
Վերին ոլորտներից 109
Ի՞նչ կա, կնստենք ամեն օր 109
Օրվա այն պահերին 111
Ծնունդ 113
Անելանելի փախուստ 114
Բաբախյունն այնպես հեշտ է 115
Այնտեղ, հրաշալի պարտեզներում 116
Իսկ նրանք այնտեղ երգում են դեռ 117
Վայրկյանները ցարդված ծառեր են 119
Հին դարպասների գոց աչքերի դեմ 119
Պարիսպներ 120
Շուտով շոգ ամառ կգա վերստին 120
Երբ մանկությունդ 121
Ուրախության ինչ անսահման կարոտ 123
Տիրամայր Մարիամ 123
Սարդը 124
Ճամփորդություն—1 127
Ճամփորդություն—2 127
Ճամփորդություն—3 129
Ճամփորդություն—4 130
Ջրի, եկեղեցու և սանդարամետի մասին 131
Ինչպե՞ս թե՝ չունեցանք 132
Տեր Աստվածը պատահաբար 132
Քեզ ասում են, թե դու 133
«Մոայլ երգերը քո...» 135
Դրախտի երկիր 136

ՆԱՄԱԿՆԵՐ ՀԱՍՄԻԿԻՆ

1. 137
2. 139
3. 140
4. 142
Բենիս 145
Սիդոնի դուստրեր 146
Փափուկ տխրությունը 149
Ծուղակ 151
Շշուկի նման 153
Լուսինը, լուսինը մարեց 154
Այն բակը, որտեղ ապրում էիք 155
Փոթորիկ 156
Զմեռային հեքիաթ 159
Լույս է թափվում շուրջս 161
Եվ մի՞թե մի օր 161
Տխուր երգ 163
Հիշեմ, դեմքդ հիշեմ 164
Հնձանները դատարկվեցին 165
Քամին, ձյունե շորեր հագած 166

Ինձ թվում է, թե 167
Հրավեր 168
Դու երազիս միջով . . . 170
Ես պիտի գնամ հեռավոր մի տեղ . 171
Թմբիր 172
Գիշերն արշալույսից . . 174
Մենակություն 175
Դու իմ ձեռքերից կբռնես կամաց . 176
Սիրո հեքիաթ 177
Ծովից մշուշը գալիս . . . 178
Գինարբուք 179
Մշուշ 181
Ձմեռն եկավ կրկին . . . 182
Տաք սալեր 183
Լույս են բխում աչքերդ անվերջ . 184

ՊՂՆՁԵ ՎԱՐԴ

Ազգն ու քարը 185
Բանաստեղծություն և սեր 186
Հավատի հրավեր 186
Երկրորդ որդին 187
Դուրս՝ թախծի հեղեղ 188
Ես բախտի ո՞րբն եմ, թե՞ 189
Մայր 189
Կհասկանայի՞ն 190
Ողորմի տվեք ձեր անցյալներին . . . 191
Ժառանգություն 191
Վիլյամ Սարոյանին 192
Կյանքը 193
Դժվար կյանք 194
Ծաղկից հոտ եմ քաշում 195
Հավատարմության ճյուղից եմ կախված . . 196
Վերադարձ էր ճչում հոգիս 196
Ահա ամպերը ճամփա ընկան 197
Կարող է, որ լիներ 198
Ինչ-որ հեռու մի ժամանակ 199
Կախարդվածի պես կանգնել եմ այստեղ . . 200
Մենավոր տունը 201
Ելնեմ, արևին գնամ ընդառաջ . . . 202
Տեսիլք 202
Բոլորդ արդեն քնա՞ծ եք։ Ոչինչ . . . 203

ՔԱՌՅԱԿՆԵՐ

1. Աղմուկներում, խոսքերի մեջ . . 204
2. Մի ակնթարթ լուսավորեց . . 204
3. Տխուր մարդուն ուրախ բաներ . . 204
Այսօր էլ կրկին օրն 205
Երազ և արթնություն 205
Մեծ լռությանն է մեր կյանքը գերի . . . 207
Զզջում 207
Միտը ճկկաց ծառի վրա 208
Ամանորյա հեքիաթ 209

Հյուգո, իմ բարեկամ 210
Հանգած օջախներ 211
Ճիշտ է, ամեն բան կտրվի քամուն 211
Միայնակ ծառը 212
Ո՞րն էր սկիզբը 215
Օրվա հոգսերը թող օրը տանի 215
Գրչերդ 216
Արարչություն 218
Երգն այն ժամանակ է իսկական երգ 219
Օ, բզկտված աշխարհ 221
Հայոց պատարագ 221
Երբ ազատության ծիլերը նրբին 222
Հայոց աշխարհ-եկեղեցի 223
Լռությունն է գիշերվա տերը 224
Երազողը 224
Ցերեկն արևը աշխարհի միջից 226
Թողեք այսօր մի քիչ 226
Ինձ թվում է, թե մեր արարիչը 228
Մութից լույսի մեջ ենք անցնում 228
Միայն անունն է հավիտենական 228
Առավոտը կրկին բացվեց 229
Ախ, թե լիներ՝ իմ երազած 229
Մի տխրություն հավերժական 229
Կանաչ դաշտի մեջ, ուր լույսն արևի 230
Ինձ տխրություն մի տվեք 230
Կարասներն ու թզուկները 231
Աղերսանք 234
Նրա գալն ու գնալը 236
Որն է տխրությունը 237
Բանաստեղծները չեն ծերանում 238
Ջինեստրա 239
Ինչ եք կանգնել ու ապշած 240
Էթնա 241
NIAGARA 241
15 հոկտեմբերի, 1979 Մանիտոբա-Վիննիպեգ 243
Մի քանի երանի, որոնք ինքնաբուխ կերպով դուրս թռան Նյու Յորքի Մանհեթեն թաղամասում 244
Ազատության տենչ 246
Թող ձին վազի անտառի մեջ 247
Օ, լեռների վեհություն 248
Այս ինչ խելակորույս 249
Հանգրվան 250
Ողորմա, երկինք ծիածաններով 251
Եթե չհաշվենք 252
Հրաժեշտ 253
Պղնձե վարդ 254
Այնքան լռեցինք երկար ու ձիգ 257
Ախ, իմ սիրելին քնած է վաղուց 257
Քո շարժումները կախարդիչ 258
Պատշգամբ ելա, նայեցի լուսնին 258
Մարդն ու տխրությունը 259
Անկատար սեր 260
Անցա անթիվ աշխարհներով 261

Կնոջ կարոտն ինձ համար է հորինվել . . 262
Ահա մատներս կպչում են այնտեղ . . . 263
Լքում 264
Ապրել տխրության մեջ 265
Քամու հրավեր 266

ՍՊԱՍՈՒՄ

1. 266
2. 268
3. 269
Այն օրը մահ է 270
Աշխարհի բախտը քեզնից էր կախված 271
Իրարանցում էր պաղ 272
Դեմքը խոժոռ, հայացքը մութ 273
Սլք 274
Երեկոյան ծովն ալեկոծ էր 277
Երեկ աղմուկ էր 278
Վեր կաց, ոսկե պատանի 279
Հին տխրության բաղեղները քանդելով 280
Քեզ մոռանալով, վիշտս մոռանում 280
Թաքնվեցինք մութի մեջ 281
Նա մի քանի վայրկյան 281
Ես, որ առանց սիրո 282
Եղերերգ 284
Ապրեցինք բողոքի անուրախ երգերով 285
Լռությունը անհայտ է 286
Մենք արդարության ճորտն ենք հավերժ 286
Մենակության պահ 287
Ոչ ոք 289
Երբ ձմեռը գա, երբ ձմեռն անցնի 289
Մեզ միշտ թվում է, թե առանց մեզ 290
Շոգը ննջում է 291
Ուրիշները շոգին՝ ստվեր 291
Տոհմաբանություն 292
Ինձ քանի տարվա կյանք է մնացել 294
Հեքիաթ մղձավանջներով (1—27) 295

ՊՈԵՄՆԵՐ

Ոտից գլուխ 337
Ռեքվիեմ 347
Խաչերի ջարդը 456
Էպոս պատանության 483
Հայապատում 514
Թորոս Ռոսլինի դատը 537

Ռազմիկ Նիկողոսի Դավոյան

ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐ

(Բանաստեղծություններ և պոեմներ)

Размик Никогосович Давоян

ИЗБРАННЫЕ СОЧИНЕНИЯ

(Стихи и поэмы)

(На армянском языке)

Издательство «Советакан грох»

Ереван, 1987

Խմբագիր՝ Ա. Ս. Քիշոյան
Նկարիչ՝ Հ. Ա. Մաիլյան
Գեղ. խմբագիր՝ Հ. Ս. Մալխասյան
Տեխ. խմբագիր՝ Ա. Վ. Հովհաննիսյան
Վերստուգող սրբագրիչ՝ Մ. Գ. Ստեփանյան

ИБ 5550

Հանձնված է շարվածքի՝ 15.09.1986 թ.։ Ստորագրված է տպագրության՝ 14.05.1987 թ.։ Ֆորմատ՝ 84×108 1/32։ Թուղթ՝ տպագր. № 1։ Տառատեսակը՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն բարձր, 31,92 պայմ. տպ. մամ., 32,34 պայմ. ներկ. թերթ., 26,4 հրատ. մամ.+1 ներդիր։ Տպաքանակ՝ 10.000։ Պատվեր՝ 2151։ Գինը՝ 3 ռ. 10 կոպ., կազմը շտապելով՝ 3 ռ. 60 կոպ. (3000 օր)։

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Терьяна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли, Ереван-9, ул. Терьяна, 91.